

767


Uhrun

85V

U-52

1915

100



7-7 2003

U P S

U P S





## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Սիրտը մարդուս ամենէն փափուկ գործարանն է. եթէ անգամ մը վնասուեցաւ՝ անդարմանելի է: Վնասը կրկին է, նիւթական եւ բարոյական. եթէ նիւթականը չիբուժուիր, բարոյականն որչափ եւս: Ամէն հիւանդուածին իր յատուկ բժիշկն ունի. բարոյական արտի միակ բժիշկն է՝ համբաժանօժէտն Էտոննտոյ Տէ Ափիչիս, որ իր մտաւոր ու փորձառական գիտութիւնը խտացուցեր է իր մէկ գեղեցիկ հաստորին մէջ. — Սիրտ:

Տէ Ափիչիս՝ մտքի անսպառ գանձ մ'է ու իտալական գեղեցիկ գրականութեան ամենափայլուն գոհար մը. զինք իր լեզուին մէջ կարդացող մը, միշտ նոր նրբութիւններ պիտի գտնէ իր ամենապարզ տողերուն մէջ. օտար լեզուի փոխուած՝ դէմք մ'է՝ հայելիի մէջ տեսնուած:

Մինչեւ հիմայ հայերէն լեզուով լոյս տեսած թարգմանութիւնը գոնէ հայելիի մէջ տեսնուած ըլլային. գրեթէ առանց բացատրութեան պղտոր լճակի մը ցոլքը կարելի է կոչել զանոնք:

Բազմաթիւ լեզուներով թարգմանուած է գրքոյկս: Յարդ իտալերէն բնագիրը 699 տպագրութիւն ունեցեր է:

1888ին առաջին թարգմանութիւնն սկսաւ լոյս տեսնել Վանացոյ Բազմալէպ Հանդիսարանի էջերուն մէջ, ի Հ. Գաֆթանէ, որ կիսատ մնաց: 1889ին ամբողջական թարգ. մը հրատարակեց ի Թիֆլիս, Փիլիպպոս Վարդանեան, ռուսահայ լեզուով: Եւ 1899ին ի Կ. Պոլիս, Տիկին Եւփիմէ Օտեան, թրքահայ լեզուով հրատարակեց՝ Ազգ. Կեդրոն. Վարչ. Ուսում. Խորհրդոյն վաւերագրով մը հանդերձ:

Վերջին երկու թարգմանութեանց մէջ կան բաւական սխալներ բաց ի կրճատութիւններէ եւ խնամաներու աւելցողական աղաւտութիւններէ. գուցէ մաս մը գաղղիւրէն բնագրէն մոլորած, եւ աւելի հաւանօրէն՝ նիւթի անյարմար ընտրութենէն:

Ներկայս ամբողջ եւ հաւատարիմ թարգմանութիւնն է, զոր ի լոյս կ'ընծայեմ, համոզուած՝ թէ Սիրոր միակ գիրքն է որուն շատ պէտք ունի մեր ազգը, ինչ սեռի ու դասակարգի այլ պատկանի Հայ անհատ մը, դէռ նոր ըզու ելած մանուկէն սկսեալ մինչեւ իր արեւմուտքը խնամարիտ ծերունին, թէեւ հեղինակը «9-13 տարեկան տղայոց համար» կ'ըսէ: Նա մեր Սիրոր կը կրթէ, մեր ետը կ'ազնուականացնէ, մեր ընտրողութիւնը կը ճշդէ եւ մեր քայլերը կ'ուղղէ դէպ ի քաղաքակիրթ աշխարհ: Չկայ բան մ'որ մեր ազգէն այնչափ անտեսուած ըլլայ, որչափ *Գասախարակութիւնը*. եւ անա մեր ամէն թերութեանց եւ մասնաւորապէս *անտիարանութեանց* պատճառը: — *Մի խնամեր ծաղիկ մը, կը շորնայ. մի փոքեր դաշա մը, շպաղարերիւր. մի կրթեր սիրա մը, կը բրտանայ:*

Պահանջելու համար մեր զաւկէն գողտր զգացում մը, նախ սերմը ձգենք կանուխէն իր սրտին մէջ:

Ֆարգենք զինք, որ յարգէ զմեզ. սիրենք զինք, որ սիրէ զմեզ. կերակրենք զինք, որ կերակրէ զմեզ. սիրտ ցունենք իրեն, որ սիրտ ցոյց տայ մեզի:

Անա Սրտի յատուկ պաշտօնը, նպատակն ու վախճանը:

Հ. Ա. Յ.

## ՅԱՌԱՋԱԲԱՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Այս գիրքը մասնաւորապէս ձօնուած է Նախակրթական դպրոցներու՝ իննեկ միեկ տասներեք տարուան տղայոց, և կրեայ յորչորչորիւ. Գպրոցական տարիի մը պատմութիւն՝ Խտալիոյ թաղապետական դպրոցի մ' Յդ. շըրջանի աշակերտէ մը գրուած: — Երրորդ շրջանի աշակերտէ մը գրուած ըսելով, չեմ ուզեր ըսել թէ յատկապէս ինք գրած է՝ ոչնչպէս ինչպէս որ տպուած է: Նա հետզհետէ տեսարակի մը մէջ կը կշարժուի, գիտցած ին պէս, տեսածը, գգացածը, մտածածը՝ դպրոցին մէջ և դուրսը. և իր հայրը, տարույն վերջը, այն ծանօտը իննեկերուն վրայ գրեց այս էջերը, շատաւ իմաստը չայտնի ինքու, և պահեւ, կարելի եղած ին չափ, որոշույն խօսքերը: Որ յետոյ, շորս տարի վերջ, արդէն կրթարանին մէջ ըլլալով, կրկին կարդաց ձեռագիրը՝ և բաներ մ'այ իրմէն առեցող, օգտուելով՝ դեռ յիշողութեան մէջ բարձր աննրեկն ու դէպքերէն: Այդ կարդացէր այս գիրքը, տղա՛ք, ևս կը յուսամ որ անկէ գոն պիտի մնայ և ձեզի բարիք պիտի ընէ:



## Հ Ո Կ Տ Ե Մ Բ Ե Ր

### ԴՊՐՈՅԻ ԱՌԱՋԻՆ ՕՐԸ

17. Երկուշաբթի



Յ Ս Օ Ր դպրոցի առաջին օրն է: Երազի՛ պէս անցան գիւղի մէջ արձակուրդի այն երեք ամիսները: Այս առտու մայրս զիս Պառէթթիի Բաժնին մէջ տարաւ նախակրթարանի երրորդ շրջանին արձանագրել տալու համար. ես գիւղի վրայ կը մըտածէի և ակամայ կ'երթայի: Բոլոր ճամբայները մանուկներով կը վխտային. գրավաճառի երկու խանութները խոնուած էին հայրերով ու մայրերով որոնք մախաղներ, թղթապանակներ ու տետրակներ կը գնէին, և դպրոցին առջև այնչափ բազմութիւն լեցուած էր որ

դպրոցի դանապանն ու քաղաքապահ զինուորները դժուարութիւն կը քաշէին մուտքն ազատ բռնելու: Գրան մօտ՝ զգացի որ մէկն ուսիս դպաւ. երկրորդ բաժնի ուսուցիչս էր, միշտ զուարթ, շէկ ու գանգուր մազերով, որ ինծի ըսաւ. — Ուրեմն, Հենրիկոս, ընդ միշտ իրարմէ բաժնուեցանք: — Այս ես ալ գիտէի, և սակայն այն բառերն ինծի վիշտ պատճառեցին: Հազիւ կրցանք ներս մտնել: Տիկիններ, պարոններ, ստորին դասակարգի կիներ, գործաւորներ, պաշտօնատարներ, հայրեր, աղախիններ, ամէնքն ալ մէկ ձեռքով տղայ մը բռնած և միւսով դասագիրքը, մուտքի սենեակն ու սանդղակները կը լեցնէին աղմուկով մը՝ որ կարծես թատրոն մը կը մտնէս: Խնդութեամբ տեսայ այն գետնաշարկ մեծ սենեակը, եօթն դասարաններու դռներով, ուր ամբողջ երեք տարի գրեթէ ամէն օր անցուցի: Բազմութիւն կար, վարժուհիները կ'երթային ու կու գային: Նախորդ շրջանի վարժուհիս դասատան գոնէն զիս ողջունեց և ըսաւ. — Հենրիկոս, դու վերին յարկը կ'երթաս այս տարի. ասկից անցնիլդ այլ ևս պիտի չտեսնեմ, — և տխրութեամբ ինծի նայեցաւ: Վշտագնած կիներ շրջապատեր էին Տեսուչը՝ որովհետև իրենց որդւոց համար այլ ևս տեղ չկար, և կարծես թէ իր մօրուքն անցեալ տարուան վրայ քիչ մ'աւելի ձերմըկցած էր: Տղաքներ կային որ մեծցած, զիրցած էին: Գետնաշարկը, ուր բաժանումներն եղած էին, առաջին շրջանի տղաք կային, որ չէին ուզեր դասարան մտնել և զրաստներու պէս կը յամառէին. հարկ կ'ըլլար գանոնք բռնի ներս քաշել. և ոմանք զրասեղաններու առջևէն կը փախչէին. ուրիշներ, տեսնելով իրենց ծնողաց մեկնիլը, կը սկսէին լալ, որոնք կը

ստիպուէին ետ դառնալ գանոնք մխիթարելու կամ իրենց հետ տուն վերադարձնելու համար, և վարժուհիները կը յուսահատէին: Պզտիկ եղբայրս՝ Տէլքաղի վարժուհւոյն դասարանը դրուեցաւ. ես՝ Փէրպօնի ուսուցչին, վերին յարկը: Ժամը տասնին ամէնքնիս դասատունն էինք, յիսուն և չորս տղայք, հազիւ տասն և հինգ կամ տասն և վեց հոգի երկրորդ շրջանի իմ ընկերներէս, որոնց մէջ էր նաև Տէոսասի, այն՝ որ միշտ առաջին մրցանակը կը ստանար: Ինծի խիստ պզտիկ և տխուր ելքեցաւ դպրոցը՝ յիշելով անտառները, լեռները՝ ուր ամառն անցուցի: Միտքս կու գար նաև երկրորդ շրջանի ուսուցիչս, այնպէս ազնիւ՝ որ միշտ մեզի հետ կը խնդար, և փոքր՝ որ կարծես մեր ընկեր մ'էր, և կը վշտանայի որ զինք հոն չեմ տեսներ այլ ևս՝ իր շէկ ու գանգուր մազերով: Մեր ուսուցիչը բարձրահասակ է, անմօրուս, երկայն ու գորշ մազերով, և ճակտին վրայ ուղղագիծ խորշոմ մ'ունի. ձայնը խոշոր է, և սևեռած՝ կարգաւ զմեզ կը դիտէ՝ կարծես մեր ներքին զգացումը կարդալու համար. և բնաւ չծիծաղիր: Ես կ'ըսէի ինքն իրենս, — Ահաւասիկ առաջին օրը: Գեո ինն ամիս կայ: Ո՛րչափ աշխատութիւն, որչափ ամսօրեայ քննութիւն, որչափ տառապանք: — Անձկանօք կը սպասէի դուրսը մայրս տեսնելու, և վազեցի իր ձեռքը համբուրելու: Նա ինծի ըսաւ. — Քաջալերուէ՛, Հենրիկոս: Միտսին կը սովորինք: — Եւ գոնութեամբ տուն դարձայ: Բայց այլ ևս չունիմ իմ ուսուցիչս, իր այն ազնիւ ու զուարթ ժպտով, և առաջուան պէս ինծի գեղեցիկ չտեսնուիր դպրոցը:



## ՄԵՐ ՈՒՍՈՒՅԻՉԸ

18. Երեքշաբթի

Այս առաւօտէն վերջ, իմ նոր ուսուցիչս ալ կը սիրեմ: Դասարան մտնելու ժամուն, երբ ինք արդէն նրստած էր իր տեղ, մերթ անցեալ տարուան իր աշակերտներէն մին դասարանի դրան առջև կը կենար, զինքն ողջունելու համար. անցնելու ժամանակ կը կենային, և զինք կ'ողջունէին. — Բարի՛ լոյս, պարոն ուսուցիչ: — Բարի՛ լոյս, պարոն Փէրպօնի. — ոմանք ներս կը մտնէին ձեռք կը թօթվէին և կ'երթային: Կը տեսնուէր որ զինք կը սիրէին և կը փափաքէին իր քով դառնալու: Նա կը պատասխանէր. — Աստուծոյ բարին, — իրեն երկնցած ձեռքերը կը սեղմէր, առանց մէկու մ'երեսը նայելու. ամէն ողջոյնի լուրջ կը կենար՝ իր ուղղագիծ խորշոմով ճակատը դէպ ի պատուհան դարձուցած, և դիմացի տան տանիքը կը դիտէր. և փոխանակ այն ողջոյններուն վրայ ուրախանալու, կարծես աւելի կը նեղուէր: Յետոյ մեզի կը նայէր, կարգաւ, ուշադիր: Ուղղագրութեան դաս ընելով, իջաւ գրասեղանաց մէջտեղ շրջագայելու, և տեսնելով տղայ մը որուն բոլոր դէմքը պալարներով ծածկուած էր, թողուց ուղղագրութիւնը, անոր դէմքը իր ձեռքերուն մէջ բռնեց ու նայեցաւ. յետոյ հարցուց թէ ինչ ունէր և մէկ ձեռքն անոր ճակտին վրայ դրաւ տեսնելու համար թէ տա՛ր էր: Այն վայրկենին, տղայ մը՝ իր ետև



... գրասեղանին վրայ ելաւ, և սկսաւ խամաճիկ խաղալ. (էջ 14)

գրասեղանին վրայ ելաւ, և սկսաւ խամաճիկ խաղալ: Եւ յանկարծ ետ դարձաւ, տղան իսկոյն նստաւ և զըլուխը կտրի պատժոյն կը սպասէր: Ուսուցիչը մէկ ձեռքն անոր գլխուն վրայ դրաւ ու ըսաւ միայն. — Ուրիշ անգամ մ'ալ չընես: Գրասեղան դարձաւ և ուղղագրութիւնն աւարտեց: Ուղղագրութենէն վերջ, վայրկեան մը լուռ մեզի նայեցաւ. յետոյ իր խոշոր՝ բայց ազնիւ ձայնով ծանր ծանր ըսաւ. — Լսեցէ՛ք: Տարի մը միասին պիտի անցունենք: Զանանք լաւ անցունելու: Սովորեցէ՛ք ու բարի եղէ՛ք: Ես ընտանիք չունիմ: Իմ ընտանիքս դուք էք: Անցեալ տարի մայրս դեռ ողջ էր, մեռաւ: Միայնակ մնացի: Աշարհիս վրայ գձեզ միայն ունիմ, ձեզմէ՛զ գատ ուրիշ փափար, ուրիշ մտածութիւն չունիմ: Գուր իմ զաւակներս պիտի ըլլաք: Ես գձեզ կը սիրեմ, պէտք է որ դուք ալ զիս սիրէք: Չեմ ուզեր ոչ մէկերնիդ պատժել: Յուցէ՛ք ինձի որ սիրա ունեցող տղաք էք. մեր դպրոցն ընտանիք մը պիտի ըլլայ և դուք իմ մխիթարութիւնս ու պարծանքս: Չեզմէ՛ խօսքով խոստումն չեմ ուզեր. վստահ եմ, որ ձեր սրտին մէջ ինձի արգէն այո՛ ըսած էք: Եւ ես շնորհակալ եմ: Այն բոլորէն սպասուորը ներս մտաւ ու արձակուրդն աւետեց: Ամենքնիս լուռ ու մունջ գրասեղաններէն դուրս եկանք: Այն տղան որ գրասեղանին վրայ ելած էր, ուսուցչին մօտեցաւ, ու երկչոտ ձայնով ըսաւ. — Պարոն ուսուցիչ, ներէ՛: — Ուսուցիչն անոր ճակատը համբուրեց ու ըսաւ. — Քալէ՛, որդեակ իմ:

## ԳԺԲԱՂԳՈՒԹԻՒՆ ՄԸ

21. Ուրբաթ

Տարին դժբաղդութեամբ մը սկսաւ: Այս առտու, դպրոց երթալու ժամանակ, ուսուցչիս խօսքերը կը կրկնէի հօրս, երբ ճամբան լեցուած տեսանք բազմութիւն մը, որ դպրոցին դուռը կը ժողվէին: Հայրս ըսաւ իսկոյն. — Գժբաղդութիւն մը: Տարին գէ՛շ կը սկսի: — Մեծ դժուարութեամբ ներս մտանք: Ահագին սենեակը խրոնուած ծնողներով ու մանուկներով, զորս ուսուցիչները չէին կրնար դասարաններու մէջ ամփոփել, և ամէնը դէպ ի Տեսչին սենեակը դարձած էին, և կը լսուէր որ կ'ըսէին. — Խեղճ տղայ: Խեղճ Ռոպէթթի: — Գլուխներէն բարձր, բազմութեամբ լեցուած սենեկին խորը, ստրիկան զինուորի մը սաղաւարտն ու Տեսչին ճաղատ գլուխը կը տեսնուէր. յետոյ երկայն գլխարկով մարդ մը ներս մտաւ, և ամէնքն ըսին. — Բժիշկն է: — Հայրս ուսուցչի մը հարցուց. — Ի՞նչ պատահած է: — Անիւն ոտքին վրայէն անցեր է, — պատասխանեց: — Ոտքը կոտորած է, — ըսաւ ուրիշ մը: Երկրորդ դասարանի տղայ մ'էր, որ Տօռա կոստասի ճամբէն դպրոց գալով, և տեսնելով ստորին առաջին դասարանի մանկիկ մը, մօր ձեռքէն փախած, ճամբուն մէջտեղ իյնալը, հանրակառքէն քանի մը քայլ հեռու որ իր վրայ կու գար, աներկիւղ վազած, զայն գրկած ու ազատած էր. բայց չկրնալով իսկոյն իր ոտքը մէկզի

բաշխել, հանրակառքը վրայէն անցեր էր: Ռմբածիգ զօ-  
րապետի մ'որդին է: Երբ ասիկայ մեզ կը պատմէին,  
տիկին մը բազմութիւնը ճեղքելով սենեակը մտաւ. Ռո-  
պէթթիի մայրն էր, զոր կանչել տուած էին. ուրիշ տի-  
կին մ' անոր առջև վազեց ու վիզը փաթթուեցաւ,  
հեծկլտալով. ազատուած մանկան մայրն էր: Երկուքը  
միասին սենեկին մէջտեղ նետուեցան և յուսահատ ա-  
ղաղակ մը լսուեցաւ. — Ո՛վ իմ Յուլիոսս: Մանկի՛կս:  
— Այն վայրկեանին կառք մը կեցաւ դրան առջև և քիչ  
վերջ Տեսուչն երեցաւ տղան բազկաց մէջ, որ գլուխն  
իր ուսերուն վրայ հանգչեցուցած էր, ճերմակ դէմքով  
և աչքերը փակ: Ամէնքը լուռ կեցան, մօր հեծեծանք-  
ները կը լսուէին: Տեսուչը վայրկեան մը կանգ առաւ,  
տոժոռնած էր, և երկու բազուկներով տղան քիչ մը  
վեր բարձրացուց՝ բազմութեան ցուցնելու համար: Եւ  
այն ժամանակ ուսուցիչներ, ուսուցչուհիներ, ծնողք և  
աղայք միաշունչ փսփսացին. — Կեցցենս, Ռոպէթթի.  
— Կեցցենս, խեղճ տղայ — և անոր համբոյրներ կ'ուղ-  
ղէին. և այն շրջապատող ուսուցչուհիներն ու աղայք  
անոր ձեռներն ու թեքերը համբուրեցին: Եւ աչքերը  
բացաւ, և ըսաւ. — Թղթակա՛նլս: — Ազատուած տղուն  
մայրը լալազին զայն իրեն ցցուց ու ըսաւ. — Ես կը  
բերեմ, սիրուն հրեշտակ, ես կը բերեմ: — Եւ միան-  
գամայն կը մխիթարէր վիրաւոր տղուն մայրը, որ ձեռ-  
քով երեսը կը ծածկէր: Գուրս ելան, տղան կառքին  
մէջ զետեղեցին, կառքը մեկնեցաւ: Եւ այն ժամանակ  
ամէնքս ալ լուռթեամբ դասարան մտանք:

1001  
289

ԳԱԼԱՊՐԻԱՅԻ ՏՂԱՆ

22. Շաբաթ

Երէկ իրիկուն երբ ուսուցիչը մեզ տեղեկութիւն կու-  
տար խեղճ Ռոպէթթիի վրայ, թէ հարկադրուած էր ժա-  
մանակ մ'անթացուպերով քալելու, Տեսուչը ներս մտաւ  
նոր արձանագրուածի մը հետ, որ շատ թխադէմ, սե-  
ւահեր, սև մեծաչուի և ճակտին վրայ իրար միացած  
խիտ յօնքերով տղայ մ'էր. բողբոլվին սև հագուած, այժի  
կաշիէ սև գօտի մը մէջքը: Տեսուչը, ուսուցչին ական-  
ջէն խօսելէ վերջ, դուրս ելաւ՝ հոն թողլով տղան, որ  
մեծ ու սև աչքերով մեզի կը նայէր, կարծես սարսա-  
փահար: Այն ժամանակ ուսուցիչն անոր մէկ ձեռքը  
բռնեց ու ըսաւ դասարանին. — Գուր ուրախ պէտք  
էր ըլլալ: Այսօր, Գալապրիոյ գաւառին մէջ ծնած, որ  
ասկից հինգ հարիւր մղոնէն աւելի հեռի է, փոքր իտա-  
լացի մը դպրոց կը մտնէ: Սիրեցէք հետուէն եկած ձեր  
եղբայրը: Եւ ծնած է մեծահամբաւ երկրի մը մէջ, որ  
երևելի մարդիկ տուած է իտալիոյ, և ուժեղ աշխա-  
տաւորներ ու քաջ զինուորներ կու տայ դեռ. մեր հայ-  
րենիքի ամենէն գեղեցիկ երկիրներէն միոյն մէջ, ուր  
ընդարձակ անտառներ կան և բարձրաբերձ լեռներ,  
բնակուած խելացի ու քաջասիրտ ժողովրդէ մը: Սիրե-  
ցէք զինք այնպէս որ չզգայ թէ հեռի է իր ծննդավայ-  
րէն. ցոյց տուէր թէ իտալացի տղայ մը, իտալական  
ն և է դպրոցի մէջ ալ ոտք կոխելու ըլլայ, հոն իրեն

Սէր





... ոտքի ելաւ և խտալիոյ աշխարհացոյց տախտակին վրայ  
Գալապրիոյ գաւառին տեղը ցոյց տուաւ:

եզրայրներ կը գտնայ: — Այս ըսելով ոտքի ելաւ և խտալիոյ աշխարհացոյց տախտակին վրայ Գալապրիոյ գաւառին տեղը ցոյց տուաւ: Յետոյ բարձրաձայն կանչեց. — Էրնէստոյ Տէրօսի, — այն՝ որ միշտ առաջին մրցանակը կը ստանայ: Տէրօսի ոտքի ելաւ: — Հո՞ս եկու՞ք, — ըսաւ ուսուցիչը: Տէրօսի գրասեղանէն դուրս եկաւ և զնաց գալապրիացոյն ստուլին առջև կեցաւ: Իբրև դասազուրկ, — ըսաւ իրեն ուսուցիչը, — դասին կողմանէ ողջագուրէ նորեկ ընկերը. ողջագուրում, Փիէմօնթի որդիներուն՝ Գալապրիոյ որդւոյն հետ: — Տէրօսի գոռեց գալապրիացին, ըսելով իր յտակ ձայնով. — Բարձր երկար, — և սա՛ ուժգին անոր երկու այտերն համբուրեց: Ամէնքը ծափ զարկին: — Լուսթին, — գոչեց ուսուցիչը, — դպրոցի մէջ ծափ չեն զարներ: — Բայց կը տեսուէր թէ գոհ էր: Գալապրիացին ալ գոհ էր: Ուսուցիչն իր տեղը նշանակեց և գրասեղանին առջև տարաւ: Յետոյ ըսաւ դարձեալ. — Լաւ ուշ դրէք ըսածիս: Որպէս զի այս այսպէս ըլլայ, այսինքն գալապրիացի տղայ մը կարենայ թորինի մէջ իբրև իր տունը բնակիլ, և թորինցի մը Գալապրիոյ գաւառին մէջ իբրև իր հայրենի տունը, մեր երկիրը յիսուն տարի կուռեցաւ և երեսուն հազար իտալացի մեռան: Պէտք է դուք զիրար յարգէք, ու զիրար սիրէք. բայց ձեզմէ ո՛վ որ այս ընկերը վշտացնէ՝ մեր գաւառին մէջ ծնած չէ ըսելով, ինքզինք անարժան կ'ընէ աչքը գեանէն վեր բարձրացնելու՝ երբ և՛ ուսուցչու հարցը կ'անցնի: — Հազիւ Գալապրիացին տեղը նստաւ, բովի ընկերներն իրեն նուիրեցին զիրը ու զրիչներ, և վերջին գրասեղանէն տղայ մը՝ իրեն Շուէտի նամակագրոջմ մը զրկեց:

## ԳԱՍՐՆԿԵՐՆԵՐՍ

25. Երեքշաբթի

Այն տղան որ նամակադրոշմը դրկեց գալստուրիացւոյն, Կարրօնէ կը կոչուի, զոր ամենէն աւելի կը սիրեմ. մեծագոյնն է դասին, գրեթէ տասն և չորս տարուան, գլուխը մեծ, ուսերը լայն. բարի է, ժպտելու ժամանակ իսկ կ'երևայ. բայց կարծես թէ միշտ մարդու մը պէս կը խորհի: Հիմա իմ ընկերներէս շատերն արդէն կը ճանչնամ: Ուրիշ մ'ալ կը սիրեմ, որ Քօրէթթի կը կոչուի, սրճագոյն զգեստ մը կը հագուի ու կատուամագէ զլիարկ մ'ունի. միշտ զուարթ, փայտավաճառի մը որդին՝ որ ՅՅԻ պատերազմին Ումպերթոյ իշխանի գնդին զինուոր եղած է, և կ'ըսեն թէ երեք մետալ ունի: Կայ փոքրիկ Նէլլին, խեղճ սապատող մը, նիհար ու վտիտ դէմքով: Կայ ուրիշ մ'ալ շատ լաւ հագրւած որ միշտ իր չուխայէ զգեստին աղուամագերը կը ժողուէ, և Վօթինի կը կոչուի: Առջևի գրասեղանիս վրայ տղայ մը կայ՝ զոր փոքրիկ որմնաղիր կ'անուանեն, որովհետև հայրն որմնաղիր է. խնձորի պէս կ'ընէ և բնա մ'ունի, և գնդակի պէս քիթ մը, ինք մասնաւոր յարմարութիւն մ'ունի ընչպատուկ ընելու, և ամէնքը ընել կու տան ու կը ծիծաղին. աղտոտ գլխարկիկ մ'ունի զոր թաշկինակի մը պէս գրպանը կը խծկէ: Պզտիկ որմնաղրին քով կայ Կարօֆֆին, երկայն ու նիհար քան մը, բուր քթով և մանրաչուի, որ միշտ զըր-

չածայրերու, պատկերներու և լուցկիի տուփերու առուտուր կ'ընէ, և դասերը եղունգներուն վրայ կը գրէ՝ գաղտնի կարգալու համար: Կայ դարձեալ պարոնիկ մը, Քարլոյ Նօպիս, որ խիստ հպարտ կ'երևի, և ինձի սիրելի երկու տղոց մէջ կը կենայ, երկաթագործի մ'որդոյն՝ որ մինչև ծունկերը հասնող զգեստ մը կը հագնի, գունատ՝ որ կարծես հիւանդ է և միշտ երկչոտ կերպարանք մ'ունի ու չխնդար բնաւ. և կարմրահեր մէկուն՝ որ անդամալոյծ թե մ'ունի, զոր միշտ վզէն կախուած կը բռնէ, — իր հայրն Ամերիկա գացեր է, իսկ մայրը շրջուն բանջարավաճառ է: Չախակողմեանս ալ հետաքրքրական դէմք մ'ունի, — Սթարտին, — կարճ ու կ'ընէ, առանց վզի, երեսը կախ՝ որ մարդու հետ չխօսիր, և կարծես քիչ կը հասկնայ, սակայն առանց ակընթարթի՝ ճակատը կ'ընճոճ և ակոսները սեղմած միշտ ուշադիր է ուսուցչին, որուն խօսած ժամանակ երբ իրեն հարցունքն ընեն, առաջին և երկրորդ անգամ չպատասխաներ, երրորդին աքացի մը կը զարնէ: Իր քով կայ չար ու լիրբ մէկը, Ֆրանթի, որ ուրիշ Բաժնէ մ'արդէն վճռուած է: Երկու եղբարը ալ կան, նոյնպէս հագուած, իրարու նման, և երկուքն ալ գալստուրիացուց զլիարկ կը կրեն՝ փաստանի փետուրով մը: Բայց ամենէն գեղեցիկը, ամենէն խելացին, որ անշուշտ այս տարի ալ առաջինը պիտի ըլլայ՝ Տէրօսսին է. և ուսուցիչն որ այս ըմբոնած է, ստէպ իրեն կը հարցնէ: Սակայն ես Փրէքօսսին կը սիրեմ, երկաթագործին տղան, այն երկայնագգեստն որ հիւանդ կ'երևնայ. կ'ըսեն թէ հայրը զինք կը ծեծէ. շատ երկչոտ է, և ամէն անգամ որ բան մը հարցնէ կամ մէկու մը դպչի, կ'ըսէ. — Ներողութիւն, — և ազնիւ ու տխուր աչքով կը նայի: Բայց Կարրօնէն ամենէն մեծն ու ամենէն ազնիւն է:

## ԱԶՆՈՒԱԿԱՆ ՎԱՐՄՈՒՆՔ ՄԸ

26. Զորերշարի

Եւ այս առտու կարբօնէն ինքզինք ճաչցնել տուաւ: Երբ դպրոց մտայ, — ըիչ մ' ուշ, որովհետեւ իմ նախակրթարանիս վարժուհին զիս կեցուցած էր՝ հարցնելու համար թէ ո՞ր ժամուն կրնար մեր տունը գալ ու զիս գտնել, — ուսուցիչը դեռ եկած չէր, և երեք, չորս տղաք, խեղճ ֆրօսսին այն կարմրահերը՝ որուն մէկ թևն անդամալոյժ է և մայրը բանջարեղէն կը վաճառէ՝ կը չարչարէին: Քանոններով զայն կը խթէին, երեսին շագանակի կճեպներ կը նետէին, զինք խեղանդամ ու հրէշ կը կոչէին՝ իր վզէն կախուած թևը ձեւացնելով: Իսկ ինք գրասեղանին խորն առանձին մնացած, գունաթափ, այս ամէնը կը լսէր, պաղատագին աչքերով մերթ միոյն մերթ միւսին նայելով, որ զինք ազատ թողուն: Բայց անոնք միշտ աւելի կը ծաղրէին, և ինք սկսաւ զողողալ և բարկութենէն կարմրիլ: Յանկարծ Պրանթի, այն աներեսը, գրասեղանի մը վրայ ելաւ, և իրբև թէ երկու կողով թևերուն վրայ առած ըլլար՝ կապկի պէս ֆրօսսի մայրը ձեւացուց, երբ զրան առջև կու գար և իւր որդւոյն կը սպասէր. վասն զի հիմա հիւանդ է: Շատերն սկսան բարձրաձայն խնդալ: Այն ժամանակ ֆրօսսի զլուիւր դարձաւ, և կաղամար մ' առնելով՝ բոլոր ուժով անոր գլխուն նետեց, բայց Պրանթի վար ծոցեալ և կաղամարն ուսուցչին կուրծքին գարնուեցաւ՝ որ ներս կը մտնէր:

Ամէնը տեղերնին փախան, և սարսափած՝ լռեցին: Վարժապետը զունատած, գրասեղանին առջև կանգնեցաւ, և այլայլած ձայնով հարցուց.



— Ո՞վ էր:

Ոչ ոք պատասխանեց:  
Վարժապետն անգամ մ' ալ զոչեց, ձայնն աւելի բարձրացնելով. — Ո՞վ էր:

Այն ատեն Կարրօնէ գթալով խեղճ Քրօսսիին վրայ, իսկոյն ոտք ելաւ և ըսաւ անյողողզ. — Ե՛ս եմ:

Ուսուցիչն իրեն նայեցաւ, շուարած աշակերտներուն նայեցաւ, յետոյ հանդարտ ձայնով ըսաւ. — Գու չե՛ս:

Եւ վայրկեան մը վերջ. — Յանցաւորը պիտի չըպատժուի: Թող ո՛տք ելնէ:

Քրօսսի ոտք ելաւ, և լալով ըսաւ. — Ինծի կը զարնէին կը նախատէին, ուստի զլուխս դարձաւ և բռնելով...

— Նստէ՛, — ըսաւ ուսուցիչը: — Անոնք որ զինք զրգոած են, ոտք ելնեն:

Չորս հոգի ոտք ելան, զլուխնին կախած:

— Գո՛ւր, — ըսաւ ուսուցիչը, — նախատած էք ընկեր մը՝ որ ձեզի առիթ մը չէ տուած, ծաղրած էք թշուառ մը, չարչարած էք տկար մը՝ որ չկրնար ինքզինք պաշտպանել: Նուաստ և ամօթալի գործ մ'է ըրածնիդ, ուսկից աւելի անուանարկ բան չկրնար ըլլար: Վատեր:

Այս ըսելով գրասեղաններուն մէջ տեղ իջաւ, մէկ ձեռքը Կարրօնէի ծնօտին տակ դրաւ, որ զլուխը կախած կեցեր էր, և վեր առնել տալով զայն, աչքերուն նայեցաւ ու ըսաւ իրեն. — Գու ազնուասիրտ տղայ մ'ես:

Կարրօնէ, յարմար առիթը գտաւ, չեմ գիտեր ի՛նչ՝ բայց ուսուցչին ականջէն փափսաց, և սա չորս յանցաւորներուն դառնալով ըսաւ խստութեամբ. — Չեզի կը ներեմ:

## ՄԱՆԿԱՊԱՐՏԻՉԻ ՎԱՐՃՈՒՀԻՍ

— 27. Հիմզաբի

Վարժուհիս խոստումը պահեց, այսօր տուն եկաւ երբ մօրս հետ դուրս ելնելու վրայ էի՝ Օրսագրիկ մէջ յանձնարարուած աղքատ կնոջ մը ճերմակեղէն տանելու համար: Տարի մ'էր որ զինք մեր տան մէջ չէինք տեսած: Ամէնքս ալ ուրախացանք: Միշտ նոյնն է, փոքրահասակ, գլխարկին չորս բոլորը կանաչ քօղով մը, սովորական հագուած, ոչ այնչափ լաւ սանտրուած, որովհետեւ զարգարուելու ժամանակ չունի. բայց անցեալ տարուրնէ քիչ մ'աւելի գունաթափ, քանի մը ճերմակ մազերով ու յարատե կը հագայ: Մայրս իրեն ըսաւ. — Եւ առողջութի՞նդ, սիրելի վարժուհիս: Գու պէտք եղած զգուշութիւնը չե՛ս ըներ: — Է՛հ, փոյթ չէ, — պատասխանեց, իր ուրախ և միանգամայն մեղամաղձոտ ժպիտով: — Խիստ ուժով կը խօսիս, — աւելցուց մայրս, — աշակերտներուդ շատ շունչ կը սպառես: — Ստոյգ է. միշտ իր ձայնը կը լսուի. կը յիշեմ, երբ իր դպրոցը կ'երթայի, կը խօսի միշտ, կը խօսի որպէս զի տղաք չցրուին, և վայրկեան մը չնստիր: Ապահով էի թէ պիտի զար, վասն զի բնաւ չմոռնար իր աշակերտները. տարիներով անոնց անունը կը յիշէ. ամսօրեայ քննութեանց օրերը Տեսչին կ'երթայ հարցնելու թէ ի՛նչ նիշ ստացան, դրան առջև կը սպասէ և կը փափաքի տեսնել շարագրութիւնները՝ գիտնալու համար

Թէ յառաջագիմուծիւն ըրած են. կրթարանէն (Ginnasio) դեռ շատերը կու գան զինք գտնելու, որոնք այլ ևս երկայն տարատ ունին ու ժամացոյց կը գործածեն: Այսօր բոլորովին յոգնած՝ Պատկերաց Թանգարանէն (Pinacoteca) կը դառնար, ուր իր աշակերտները տարած էր՝ ինչպէս ուրիշ տարիներ, վասն զի ամէն հինգշաբթի զանոնք Թանգարան մը կ'առաջնորդէր ու ամէն բան կը բացատրէր: Խեղճ վարժուհի, աւելի ևս հիւժեր է: Սակայն միշտ աշխոյժ է, միշտ կը վառուի՝ երբ իր դպրոցին վրայ կը խօսի: Ուզեց տեսնել այն անկողինը ուր երկու տարի առաջ զիս ծանր հիւանդ տեսաւ, և որ այժմ եղբորս է. երկար ժամանակ անոր նայեցաւ և չէր կրնար խօսիլ: Ստիպուեցաւ շուտով մեկնիլ, իր դասարանի աշակերտի մ'այցելելու համար, որ թամբագործի մ'որդին էր, հարսանիքէ (rosolia) բռնուած. և դէպ մը սրբագրութիւն ունէր ընելիք բոլոր գիշերը, և զիշերուրնէ առաջ թուարանութեան առանձնական դաս մը՝ խանութպանուհիի մը: Ուրեմն, Հենրիկոս, — ըսաւ ինծի մեկնելու ժամուն, — կը սիրեմ դեռ վարժուհիդ՝ հիմա որ դժուար առաջարկութիւններ կը լուծես և երկար շարադրութիւններ կ'ընես: — Համբուրեց զիս, և սանդղղի վարի ծայրէն ըսաւ դարձեալ ինծի. — Մի՛ մոռնար զիս, հասկցա՛ր, Հենրիկոս: — Ո՛վ սիրելի վարժուհիս, երբե՛ք, երբե՛ք զքեզ պիտի չմոռնամ: Երբ մեծնալու ալ ըլլամ, միշտ զքեզ պիտի յիշեմ ու պիտի գամ քու աշակերտներուդ մէջ զքեզ գտնելու. և ամէն անգամ որ դպրոցի մը քովէն անցնիմ և ուսուցչուհիի մը ձայնը լսեմ, պիտի կարծեմ քու ձայնդ լսել, և պիտի յիշեմ այն երկու տարիները զոր անցուցի քու դպրոցիդ մէջ, ուր շատ բան սովորեցայ,

ուր այնչափ անգամ զքեզ հիւանդ ու յոգնած տեսայ, բայց միշտ փութկոտ, միշտ ներողամիտ, յուսակտուր՝ երբ մէկը հոգ չէր տաներ մատներուն՝ լաւ զրելու, զողահար՝ երբ վերաքննիչները (ispettore) զմեզ կը հարցաքննէին, երջանիկ՝ երբ երես կը ճերմկցնէինք, միշտ ազնիւ և խանդակաթ՝ մօր մը պէս: Երբե՛ք, զքեզ պիտի չմոռնամ, վարժուհի՛դ իմ:

## ՉԵՂՈՒՆԻ ՄԸ ՄԷՉ

28. Ուրբաթ

Երէկ երեկոյ մօրս ու Սիլվիա քրոջս հետ ճերմակեղէն կը տանէինք՝ օրագրէն յանձնարարուած աղքատ կնոջ. ես ծրարն առած էի, Սիլվիա օրագիրը՝ որուն մէջ նշանակուած էր կնոջ անուան նախատառերն ու հասցէն: Բարձր տան մը ձեղունն ելանք, երկայն սրահի մը մէջ, ուր բազմաթիւ դռներ կային: Մայրս վերջինը զարկաւ. դեռ երիտասարդ, խարտեաշ և հիւժած կին մը մեզի բացաւ, զոր իսկոյն յիշեցի ուրիշ անգամ արդէն տեսած ըլլալս՝ զլսոյն կապած այն մի և նոյն երկնագոյն թաշկինակով: — Դո՛ւք էք լրագրին մէջ այսպէս և այնպէս նկարագրուածը, — հարցուց մայրս: — Այո՛, տիկին, ես եմ: — Շատ լաւ, քիչ մը ճերմակեղէն բերինք քեզի համար: — Եւ նա անվերջ շնորհալ կ'ըլլար և կ'օրհնէր: Երբն պահուն մերկ ու մութ սենեկին անկիւնը տղայ մը տեսայ՝ ա-





... տղայ մը տեսայ՝ աթոռի մ'առջև ծնրաղիր, կռնակը մեզի դարձուցած, որ կարծես կը գրէր.

Թոռի մ'առջև ծնրաղիր, կռնակը մեզի դարձուցած, որ կարծես կը գրէր, և ստուգիւ կը գրէր, թուղթն աթոռին վրայ դրած և կաղամարը գետինը: Այնպիսի մութ տեղ մ'ի՛նչպէս կը գրէր: Մինչդեռ այս կ'ըսէի ինքն իրենս, և ահա իսկոյն ճանչցայ թէ՛ Քրօսսին էր՝ իր շէկ մազերով ու բամբակէ զգեստով, բանջարավաճառի որդին, այն կաթուածահար բազուկը: Ես մեղմով մօրս իմացուցի՝ երբ կինը իրեղէնները կը տեղաւորէր: — Լ'ուս կեցիր — պատասխանեց մայրս, — կրնայ ըլլալ ամէնայ՝ տեսնելով որ իր մօր ողորմութիւն կ'ընես. չըլլայ թէ կանչես: — Բայց այն վայրկենին դարձաւ Քրօսսին, ես շուարած մնացի, նա ժպտեցաւ, և այն ատեն մայրս զիս զրդեց որ երթամ ու զինք գգուեմ: Ես զինք գգուեցի, նա ոտքի ելաւ և ձեռքս բռնեց: — Ահաւասիկ, հոս, — կ'ըսէր այն վայրկենին իր մայրն իմ մօրս, — տղուս հետ մինակ մնացեր եմ, երեք տարիէ ի վեր ամուսինս Ամերիկա է, և ես՝ հիւանդութիւն մը վրաս գալով, չեմ կրնար այլ ևս բանջարեղէնով շրջիլ՝ կտոր մը դրամ շահելու համար: Եւ ոչ իսկ սեղանիկ մը մնաց Լուզովիկիս՝ վրան աշխատելու: Երբ մեծ դրան մէջ խոշոր սեղանը կար, գոնէ անոր վրայ կը գրէր, հիմա այն ալ վերուցեր են: Փոքր ճրարագ մ'ալ չկայ որ առանց աչքերը փրատելու աշխատի: Մեծ բաղդ է, որ կրնամ զինք դպրոց դրկել, ու ըովհետև քաղաքապետութիւնը կու տայ իր գրքերն ու տետրակները: Խեղճ Լուզովիկս, որքան փափար ունի սովորելու: Թշուա՞ն կին մ'եմ: — Մայրս քսակին մէջ ունեցածն անոր տուաւ, տղան համբուրեց, և գրեթէ կու լար՝ երբ դուրս ելանք: Եւ շատ իրաւունք ունէր ինձի ըսելու. — Տես այն աղքատ տղան, ի՛նչպէս

ստիպուած է աշխատելու. դու որ ամէն զիւրուժիւն ունիս, այնու հանդերձ քեզի խիստ կու գայ ուսումը: Մէ, Հենրիկոսս, անոր միօրեայ աշխատութեան մէջ աւելի արդիւնք կայ, քան ըսու միամեայ աշխատութեանդ մէջ: Այն տեսակներուն պէտք է առաջին մըր ցանակը տալ:

Գ Պ Ր Ո Յ Ը

28. ՌԵՐԲԱՅ

Այո՛, սիրելի՛ Հենրիկոս, ուսումը քեզի ծանր կու գայ. դեռ չեմ տեսներ որ հաստատամիտ և ժպտադիմ դպրոց կրրաս, ինչպէս կը փափարիմ: Գեռ կը դժկամակիս: Բայց յո՛ւ. մտածե՛քիչ մը ս՛րջտի ցաւայի ու խտակի պիտի ըլլայ քո օրդ երէ դպրոց չկրրաս: Ետքս մը վերջ, ձեռնամեծ պիտի ինդրես ո՛ւն վերադառնալ, ձանձորքեկ և անօրէ հայած մաշած, քո գրօսանքներդ ու ինքնիրմեդ զգաւ: Ամեկը, ամեկը ալ կը սովորի երիտ, Հենրիկո՛ս: Մտածե՛ աշխատանքները՝ որ գիշերը դպրոց կ'երրան ամբողջ օրը յոգնելէ վերջ. ստորին դասակարգի կիները, աղջիկները՝ որ կիրակի օր դպրոց կ'երրան, բարը շաբար աշխատելէ վերջ. զինուորները՝ որ ձեռքերն զիրք ու անար կ'առնուն, երբ զինուորական կրքոքեկ կը վերադառնան. մտածե՛ համր և կոյր տղարը որ իրեկ ալ կը սովորի. և նոյն իսկ բանտարկեալները՝ որ կարդալ ու գրել կը սովորին: Մտածե՛, որ ստանալ երբ դուստ

կ'եղես, նոյն այն վայրկեակն, քո բարաքիդ մէջ իսկ, ոչրիչ կրեսուն հագար տղար քեզի պէս կ'երրան փակուերոս սենեկի մը մէջ՝ սովորուո համար: Բայց ի՛նչ կ'ըսու: Մտածե՛ այն անրիւ տղարը՝ որ գրեթէ մի և նոյն ժամուռն դպրոց կ'երրան ամեկ երկրի մէջ. տես զանոնք երկակայութեամբդ, որ կ'երրան ու կ'երրան խաղաղ գիշերուո կրքոչիներեկ, աղկաւոր բարաքներու ձանքաներեկ, ծովերու ու շիճերու կեցրքեկ, մերր կիզիչ արեգակն մը կերքեկ, մերր մառախոչներու միջեկ, նաւակներով՝ ջրանցանաւ կրկիրներու միջեկ, ձիաւոր՝ մեծ դաշտագետիկներեկ, բայիտրով՝ ձեանց վրայեկ, ձորերե ու բուրներեկ, անասուններու և հեղեղատներու շրջակայքեկ, լեռներու մեկուոր սրտաններեկ, առանձիկն, բարձրեամբ, իմբովիկ, շաբան շարան, ամեկը՝ գրքերը բեկուռն տակ դրած, հագար ու մեկ ձե. զգեստներով, հագար ու մեկ լեզու խօսող, Ռուսաստանի ամենավերջիկ ծայրը գտնուող դպրոցներեկ, որ գրեթէ ստոյցներու մէջ կոյտուած են, միեկն Սբարիոյ արմառեկներու ստուերներով ծածկուած վերջիկ դպրոցները, միլիոնաւոր, ամեկը ալ՝ հարիւրաւոր գտնուակն ձեկերով՝ սովորուո համար մի և նոյն բաները. երեւակայի այս հարիւրաւոր ժողովուրդներու տղայոց ընդարձակ մըքնանման բարձրիւնը, այն անունն շարժումը որուն դո՛ւ ես մասն ես, և մտածե՛. — Երէ այս շարժումը դուրերու ըլլայ, մարդկութիւնը կրկին բարբարոսութեան մէջ կ'իյնայ. այս շարժումը՝ յառաւայիտութիւնն է, յոյսն ու փառքն աշխարհիկ: — Զօրացի՛ր ոչրեմն, անհուն բանակիկ փոքրիկ զինուոր: Քո գրքերդ՝ զեկերդ են, ու դասարանդ՝ քո գունդը է, պատերազմի դաշտը՝ բարը աշխարհն է, յարիւրիւնը՝ մարդկայիկ բարբարոսութիւնն է: Ծոյլ զինուոր մը ըլլաս, Հենրիկո՛ս:

### ՓՍՏՈՒԱՅԻ ՓՈՔՐԻԿ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԸ

(Ամսօրեայ պատմութիւն)

29. Շարաթ

Ո՞չ, ճոյզ զինուոր մը պիտի չըլլամ, այլ շատ աւելի սիրով դպրոց պիտի յաճախեմ, եթէ ուսուցիչը ամէն օր այս առտուան պէս պատմութիւն մը պատմէ: Ամէն ամիս, ըսաւ, մէկ հաս պիտի պատրաստէ, մեզի գրաւոր պիտի տայ, և միշտ տղու մը կատարած գեղեցիկ գերն ու ստոյգ պատմութիւնը պիտի ըլլայ: Այս անգամուան վերնագիրն է՝ Փատուացի փոքրիկ հայրենասէրը: Ահաւասիկ գէպը: Գաղղիական շոգենաւ մը՝ Սպանիոյ Պարչելլոնա քաղաքէն գէպ ի ճենովա մեկնեցաւ, որուն վրայ կային գաղղիացի, իտալացի, սպանիացի և զուլիցերացիներ: Անոնց մէջ, կար նաև միայնակ, ցնցոտի հագուած տասն և մէկ տարեկան տղայ մ'որ վայրի կենդանիի մը պէս միշտ մեկուսի կը կենար, խոժոռ աչքերով զամենը գիտելով: Երկու տարի առաջ, իր հայրն ու մայրը՝ Փատուայի շքրջակայ գիւղացիներէն՝ զինք հապիտներու գլխաւորի մը վաճառեր էին, որ յետ բռնցի ուժով, աքաղաղով և ծոմապահութեամբ իրեն խաղեր սովորեցնելու՝ զինք միտսին Գաղղիոյ և Սպանիոյ կողմերը տարած էր, միշտ ծեծելով ու անօթի պա-

հելով: Պարչելլոնա հասնելուն պէս, չկրնարով ա՛յլ ևս զխմանալ ծեծերուն ու անօթութեան, կարեկցելու վիճակի մէջ՝ փախած էր իր վերակացուէն, և իտալիոյ Հիւպատսին պաշտպանութեան դիմած, որ վրան զթալով զինք այն շոգենաւը դրած էր՝ յանձնարարագիր մը տարով իրեն ճենովայի Ոստիկանապետին համար, որ



զինք իր ծնողաց պիտի վերադարձնէր. իր ծնողաց՝ որոնք զինք անասնոյ մը պէս ծախեր էին: Խեղճ սղան՝ վրան դուխը պատուտած ու հիւանդագին էր: Երկրորդ կարգի օթեակ մը տուեր էին իրեն: Բոլոր զինք կը գիտէին, ոմանք հարցումներ կ'ընէին. բոյց պատասխան չէր տար և կարծես կ'ատէր ու կ'արհամարհէր զամէնը, այն աստիճան զրկանքն և ծեծը զինք վշտացուցեր ու դառնացուցեր էին: Երեք ճանապարհորդները, յարատև հարցապնդումներով՝ յաջողեցան իր լեզուն բանալ,

Սէր»

և քանի մը խառն վեներտիկեան, սպանիական և գաղղիական հասարակ բառերով պատմեց իր գըլ-խէն անցածը: Այն երեք ճանապարհորդներն իտալացի չէին. բայց հասկցան, և քիչ մը կարեկցելով, քիչ մը զինուոյ աղգեցութեամբ՝ իրեն գըրամներ տուին, կատակներ ընելով ու գրգռելով որպէս զի ուրիշ բաներ ևս պատմէ. և գահլիճին մէջ մտած ըլլալով այն վայրկենին քանի մը տիկիներ, երեքը՝ ցուցամնութեամբ գարձեալ գըրամ տուին իրեն՝ գոչելով, — Ա՛ռ ասիկայ. — Այս ալ ա՛ռ, — և գրամը սեղանին վրայ հնչեցնելով: Տղան ամէն բան գրպանը գրաւ, կէս բերան շնորհակալ ըլլալով իր գաժան գէմքով, բայց այս անգամ ժպիտով ու սիրալիր հայեացքով: Յետոյ մագլցելով իր օթեակին մէջ երաւ, վարագոյրը քաշեց, և հանդարտ սկսաւ իր ընելիքին վրայ մտածել: Այն գրամներով կրնար քանի մը շնորհքով պատառուտել շողենաւին վրայ, որ երկու տարիէ ի վեր հաղիւ հացը կը գտնէր. և ճինովա ի՞նչ ակէս կրնար զգեստ մը գնել, որ երկու տարիէ ի վեր ցնցոտիներով կը շրջէր. և գարձեալ զանոնք տուն տանելով կրնար իր հօրմէն ու մօրմէն քիչ մ'աւելի մարդասիրութեամբ ընդունուիլ որ զինք պիտի չընդունէին անշուշտ եթէ գրգռանները գատարկ հասնէր: Իրեն համար պղտիկ բաղդ մ'էին այն գրամները: Եւ ասոր վրայ ինք կը մտածէր՝ մխիթարուած՝ իր օթեակի վարագուրին ետեւ, մինչդեռ երեք ճանապարհորդներն՝ երկրորդ կարգի գահլիճին մէջ տեղ՝ ճաշի սեղանին առջև նստած կը խօսակցէին: Կը խմէին ու կը վիճէին իրեց ճանապարհորդու-

թեանց և տեսած երկիրներուն վրայ, և խօսքէ խօսք՝ սկսան իտալիոյ վրայ խորհրդածել: Մէկն սկսաւ պանդոկները պախարակել, ուրիշ մ'երկաթուղիները, և յետոյ ամէնը միասին տաքցած՝ սկսան ամէն ինչ վար զարնել: Մին կը նախադասէր լափոնիա ճամբորդել. ուրիշ մը կ'ըսէր՝ թէ իտալիոյ մէջ խորեբաներէ ու աւազակներէ զատ ուրիշ բան գտած չէր. երրորդը՝ իտալացի պաշտօնեաները կարգալ չեն գիտեր: — Տղէս ժողովուրդ մը, — կրկնեց առաջինը: — Աղտեղի, — աւելցուց երկրորդը: — Աւազ... — գոչեց երրորդը. և աւազակ կ'ուզէր ըսել, բայց զեռ բառը չաւարտած, գրամներու և կէս ֆրանքնոցներու տարափ մը տեղաց իրենց գլուխներուն և ուսերուն վրայ, և դժախային շառաչով սեղանին ու աղիւսէ յատակին վրայ թափեցաւ: Երեքն ալ կատղած սուքի ելան, գէպ ի վեր նայելով, և ամի մը գրամ՝ ևս երեսնուն վրայ ընդունեցան: — Առէք ձեր գրամները, — ըսաւ արհամարհանքով տղան, գլուխն օթեակի վարագուրէն գուրս կտրկառելով. — ևս սղորմութիւն չեմ՝ ընդունիր անկէ՝ որ հայրենիքս կը նախատէ:

## ՈՒՍԱՆ ՄԱՔՐՈՂԸ

## 1. Նոյեմբեր

Երէկ երեկոյ, մեր դպրոցին մօտ՝ աղջկանց Բաժինը գնացի, փատուացի տղուն պատմութիւնը՝ Սիլվիայի վարժուհւոյն տալու համար, զոր կ'ուզէր կարգաւ: Եօթնհարիւր աղջիկ կայ հո՛ն: Երբ հասայ՝ սկսեր էին զուրս ելնել, ամէնն ալ զուարթադէմ՝ Ամենայն Սրբոց և Մեռելոց արձակուրդին համար. և ահա զեղեցիկ բան մը տեսայ: Դպրոցի դրան զիմաց, ճամբուն միւս կողմը, ամենափոքր, բոլորովին սևադէմ ծխան մաքրող մը՝ մէկ թևով պատին յեցած և ճակատը թևին տուած՝ իր պարկով ու քերիչով կեցեր էր, և հեծկլտալով սաւաթիկ կու լար: Կրթարանի երկու կամ երեք աղջիկներ իրեն մօտեցան ու ըսին. — Ի՞նչ ունիս որ այդպէս կու լաս: — Բայց նա չպատասխանեց ու միշտ կու լար: — Բայց ի՞նչ կը զգաս, ինչո՞ւ կու լաս, — կրկնեցին աղջիկները: Այն ժամանակ դէմքը վեր առաւ թևին վրայէն, — տղու մը դէմք, — և լալով ըսաւ թէ քանի մը տուններ գնացեր էր մաքրելու, ուր երեսուն փող շահած էր, և զանոնք կորսնցուցեր էր, զրպանի մէկ ծակէն սահեր ինկեր էին, — պատուաճառը ցոյց կու տար, — և չէր համարձակեր այլ ևս առանց զրամի տուն վերադառնալու: — Տէրս զիս կը գանալո՞ծէ, — ըսաւ հեծկլտալով, և կրկին գլուխը թևին վրայ ձգեց՝ յուսակտուր: Աղջիկները լրջօրէն իրեն կը



նայէին : Այս ժամանակ, մեծ ու պզտիկ, աղքատ ու հարուստ ուրիշ աղջիկներ ալ մօտեցեր էին թղթակաշնին թեքնուն տակ, և մեծ օրիորդ մ'ալ, որ գըլխարկին վրայ կապոյտ փետուր մ'ունէր, գրպանէն երկու փող հանեց ու ըսաւ. — Ես միայն երկու փող ունիմ. հանգանակութիւն մ'ընենք : — Ես ալ երկու հատ ունիմ, — ըսաւ ուրիշ կարմրագեատ մը. — ամենէն՝ շուտով երեսուն փողը կը հաւաքենք : — Եւ այն ժամանակ սկսան զիրար կանչել. — Ամէլիւս, — Լուիսիւս, — Աննիւս, — Գրամ մը : Ո՞վ դրամ ունի : — Հո՞ս դրամները : — Շատերն ունէին՝ իրենց ծաղիկ կամ տետրակներ գնելու համար, և իրեն բերին. քանի մ'աւելի պզտիկ աղջիկներ ալ հարիւրորդներ տուին. այն կապտափետուրը բոլոր կը հաւաքէր և բարձրաձայն կը համբէր. — Ութ, տասն, տասնեակէն : — Բայց դեռ պէտք էր : Այն ժամանակ ամենէն մեծ մ'եւրեցաւ, որ կարծես փոքրիկ վարժուհի մ'էր և կէս ֆրանգ տուաւ ու ամէնքն ուրախացան : Դեռ հինգ փող կը պակսէր : — Հիմա չորրորդ դասարանը կու գայ, անոնք կ'ունենան, — ըսաւ մէկը : Չորրորդ դասարանն եկաւ և դրամները տեղացին : Ամէնքը կը խմբուէին : Եւ գեղեցիկ էր տեսնել այն խեղճ ծխան մաքրողը՝ բոլոր այն գոյնզգոյն զգեստներուն, փետուրներուն, ժապաւէններուն, խոպոպներուն ետեզեռին մէջ : Երեսուն փողը հաւաքուած էր արդէն, և դեռ կու տային, և ամենէն փոքրներն որ դրամ չունէին, մեծերը մէկ կողմ կը հրէին՝ իրենց ծաղիկփունջերն անոր նուիրելու՝ գոնէ բան մը տուած ըլլալու համար : Յանկարծ դանապանուհին եկաւ, գոչելով. — Տիկին Տեսչուհին : — Աղջիկներն ամէն կողմէն փախան՝ ճնճղուկներու երամի մը պէս :

Եւ այն ատեն տեսնուեցաւ փոքր ծխան մաքրողը, որ ծամբուն մէջ տեղ առանձին մնացած աչքերը կը չորցնէր, բոլորովին գոհ, ձեռքերը գրամով լի, և զգեստի լամբակներուն մէջ, գրպանը, գլխարկին մէջ շատ ծաղկեփունջեր ունէր, և ծաղիկներէն մաս մ'ալ գետինը, իր ոտքերուն առջև թափած էին :

## ՄԵՌԵԼՈՅ ՕՐԸ

2. Նոյեմբեր

Այս օրս մեռելոց յիշատակին նշիրուած է : Գիտե՞ս, Հեկտիկո՞ս, քե զո՞չք մանուկներոյ այսօրս ո՞ր մեռելոց վերայ խորհրդածութիւն մը պետք էր նշիրել : Անեց՝ որ մեռաւ ձեզի համար, սոսոյց և մանուկներու համար : Անեցմէ քսեիկները մեռան, և քսեիկներ կը մեռնին միշտ : Կը մտածես երբեք քե ո՞րչափ հայրեր՝ իրենց կեանքը մաշեցին աշխատութեամբ, ո՞րչափ մայրեր՝ ժամանակէն ստաւ զերգման իշակ, գրկամեծեր սպառած՝ որոնց եւ քարկռեցան իրենց որդիքը սնուցանելու համար : Գիտե՞ս ո՞րչափ մարդիկ դստակ մը մխեցին սրտերնուն մէջ՝ իրենց զաւակները քաշառտրեան մէջ տեսնելէն յառանառած, և ո՞րչափ կիներ խորհեցան կամ մեռան իրենց ցաւերուն մէջ կամ յիմարեցան զաւակ մը կորուսած ըլլալուն համար : Մտածե՛ այսօրուան մէջ այն բոլոր մեռածներուն վերայ, Հեկտիկո՞ս : Մտածե՛ այնչափ վարժուիկներու վրայ որ երիտասարդ մեռեր եւ, հիշած՝ դպրոցի աշխատու-

բիւններէն, տոյց սերին՝ որոնցմէ բաժնոջի չիսն ուզեր. մտածե՛լ թիչկներուն վրայ որ փոխադրական հիշանորոշ-



բիւններէ մնում՝ բազասիրտ ինքզինքնին նուիրելով տր-  
դաբը խնամելու. մտածե՛լ բոլոր անոնց վրայ որ նաւարե-  
կուշրեանց մէջ, հրդեհներու մէջ, սպիւի և ծակեր վտանգներու

մէջ իրենց մանկան բողբոջին հացի վերջին սրտաւար, փր-  
կուշրեան վերջին շատար, բոցերէն ազատուող համար վեր-  
ջին յուսեր, և հոգիներն աշակերտներ, զո՞ն իրենց բրած զո-  
նորուշրեանց վրայ որ սգոտիկ անմեղի մը կեանքը փր-  
կեցին: Անրիւ ևն, Հեկիկիս, այս մեռելացիները. ամեն  
գերեզմանատուն հարիւրաւորներ ունի այս սրբազան սրա-  
բաժներէն, որ երէ վայրկեան մը կարենային փոսն զորո  
զայ՝ տոյց մ'անուն սխտի տային՝ որուն զոնեցին իրենց  
երիտասարդութեան հաճոյքները, ծերութեան հանգիստը,  
գորովը, միտքն ու կեանքը. բաւանակայ հարսեր, զեռաստի  
սրտանիներ, ուրանակայ ծերեր, երիտասարդներ, —  
դիւցազնական մարտիրոսներ մանկութեան, — ա՛յնքան մեծ  
և ա՛յնչափ ազնուական՝ որոնց գերեզմանները ծածկելու հա-  
մար երկրիս ծաղիկները չեն բաւեր: Ա՛յնքան սիրուած էր,  
ն'ի մանուկներ: Մտածե՛լ այսօր երախտագիտութեամբ մե-  
ռերոց վրայ, և աւելի ազնիւ, աւելի կարողին սխտի բը-  
րսս այն ամենուն հետ՝ որ զքեզ կը սիրեն և քեզի հա-  
մար կ'աշխատին, ն'ի բարեբաղդ և սիրելի որդեակ իմ,  
որ մեռերոց օրը դեռ յարձ մեկը չունիս:

ՄԱՅՐԴ





Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր

ԿԱՐՐՕՆԷ ԲԱՐԵԿԱՄՍ

4. Ուրբաթ



Երկու օր միայն հանգիստ ունեցանք, և կարծես երկար ժամանակ է կարրօնէն չեմ տեսած: Ո՛րչափ զինք կը ճանչնամ, այնչափ աւելի կը սիրեմ, և այսպէս կ'ըլլայ ամենուեւ ալ, բաց ի բունագոյններէն՝ որ իրեն նկատմամբ այսպէս չեն ըսեր, վասն զի նա չթողուր որ բռնանան: Ամէն անգամ որ մեծ մը ձեռք կը վերցնէ փոքրի մը վրայ, փոքրը կը պոռայ. — կարրօնէ, — և մեծն անոր չի դպչիր այլ ևս: Իր հայրը երկաթուղոյ մեքենագործ է. ինք ուշ սկսաւ դպրոց յաճախել՝ որովհետեւ երկու տարի

հիւանդ եղաւ: Դասարանին ամենէն բարձրահասակն և ուժեղն է, մէկ ձեռքով գրասեղան մը կը վերցնէ, միշտ կ'ուտէ, բարի է: Ո՛ր և է բան մ'ուզեցէք իրմէ, մատիտ, խէժ, թուղթ, զմեկին, փոխ կու տայ, կամ բոլոր կու տայ: և չխօսիր ու չծիծաղիր դպրոցին մէջ. միշտ անշարժ կը կենայ գրասեղանին առջև՝ որ իրեն համար շատ նեղ է, կորարքամակ և մեծ գլուխը ուսերուն մէջ. և երբ իրեն կը նայիմ, կիսափակ աչքերով կը ժպտի ինձի՝ իրբև ըսել ուզէր. — Շատ լաւ, Հենրիկո՛ս, ուրեմն բարեկամ ենք: — Բայց ծիծաղ կը շարժէ, ինք մեծ ու խոշոր, զգեստը, տարատը, թեզանիքը, ամէն ինչ խիստ նեղ ու կարճ են, գլխարկ մ'որ գլխուն վրայ չկենար, գլուխն ամիլուած, մուճակները խոշոր, և փողկապ մը՝ չուանի մը պէս միշտ ոլորուած: Ազնիւ կարրօնէ, բաւական է անգամ մ'երեսը նայիլ՝ զինք սիրելու համար: Ամենէն փոքրները բոլոր կը փափաքին իր գրասեղանին բով ըլլալ: Քաջ թուարանագէտ է: Գրքերն աշտարակի պէս կը դիզէ՝ կարմիր կաշեփոկով մը կապուած: Սատափեայ կոթով զանակ մ'ունի զոր անցեալ տարի զինուց հրապարակին մէջ գտաւ, և օր մը մէկ մատը մինչև ոսկրը կտրեց, բայց դպրոցի մէջ ո՛չ որ իմացաւ և տո՛ւնն ալ ձայն չհանեց՝ ծնողը չի վախցնելու համար: Որ և իցէ կատակ կը վերցնէ, և երբեք չառնուիր. բայց վայ եթէ իրեն ըսն. — Սուտ է, — երբ բան մը կը հաստատէ. աչքերէն կրակ կը թափի և գրասեղանը կտորելու չափ բռնցիով կը զարնէ: Շարաթ առտու մանկապարտիզէն մէկու մը դրամ մը տուաւ, որ ճամբուն մէջ տեղ կու լար, որովհետեւ իրենն առեր էին, և չէր կրնար այլ ևս տետրակ գնել: Այժմ երեք օրէ ի վեր է որ ութիջեան՝ զարդարուն



լուսանցքներով նամակի մը վրայ կ'աշխատի՝ իր մօր անուան տօնին համար, որ ստէպ կու գայ զինք առնելու, և իրեն պէս բարձրահասակ է, խոշոր, և համա կրեղի: Ուսուցիչը միշտ իրեն կը նայի, և ամէն անգամ որ քովէն կ'անցնի իր ձեռքն անոր վզին կը զարնէ՝ իրրև հանդարտ հորթիկի մը: Ես զինք կը սիրեմ: Կ'ուրախանամ երբ իմինիս մէջ կը սեղմեմ իր խոշոր ձեռքերն, որ մարդու ձեռքի կը նմանի: Ապահով եմ որ իր կեանքը վտանգի կ'ենթարկէ՝ ընկեր մ'ազատելու համար, կը թողու որ զինք սպաննեն՝ զայն պաշտպանելու համար, այնչափ որոշ իր աչքերուն մէջ կը տեսնուի: Եւ թէպէտ կը կարծուի որ միշտ իր խոշոր ձայնով կը մրմռայ, կ'իմացուի սակայն, թէ ձայն մ'է՝ որ ազնիւ սրտէ մը յառաջ կու գայ:

**ԱՇԽԱՎԱՃԱՌՆ ՈՒ ՀԱՐՈՒՍՏ ՊԱՐՈՆԸ**

7. Նրկուշարթի

Կարրօնէն երբէք պիտի չըսէր, անտարակոյս, այն խօսքը՝ զոր երէկ Գարլոյ Նօպիս ըսաւ Պէթթիին: Գարլոյ Նօպիս հպարտ է՝ վասն զի հայրը հարուստ մարդ մ'է. մարդ մը՝ երկայնահասակ, սեւմօրուս, շատ լուրջ, որ գրեթէ ամէն օր իր որդին առնելու կու գայ: Երէկ, առտու Նօպիս գփտեցաւ Պէթթիին հետ, ամենէն պղզտիկներէն մին, անխաղաղութի մ'որդին, և չգիտնալով ինչ պատասխանել՝ որովհետև յանցաւոր էր, ուժգին

ըսաւ անոր. — Հայրդ ամենախեղճ մարդ մ'է: — Պէթթի մինչև մագերը շիկնեցաւ, ու բան մը չըսաւ, բայց աչքերն արցունքով լեցուեցան, և տուն դառնալով, իսկոյն այն բառը կրկնեց հօրը. և ահա անխաղաղութեամբ, սեւադէմ ու փոքրահասակ մարդ մը, կէսօրէն վերջի դասին ժամանակ՝ տղուն ձեռքէն բռնած՝ երեցաւ ուսուցչին զանգատելու համար: Մինչդեռ իր զանգատները կ'ընէր ուսուցչին, և ամէնըը լուռ կեցած էին, Նօպիսի հայրը, որ ըստ սովորութեան՝ դրան շեմին վրայ տղուն վերնագգեստը կը հանէր, լսելով իր անունը՝ ներս մտաւ, և մեկնութիւնն ուզեց:

— Այս աշխատաւորս է, — պատասխանեց ուսուցիչը, — որ զանգատելու եկած է՝ որովհետև քու որտիդ, Գարլօն, ըսած է իր որդւոյն. Հայրդ ամենախեղճ մարդ մ'է:

Նօպիսի հայրը ճակատը խորշովեցուց և քիչ մը կարմրեցաւ: Յետոյ հարցուց որդւոյն. — Ըսի՞ր այդ խօսքերը:

Որդին, — դպրոցի մէջ տեղ կանգուն, գլխակոր, պզտիկ Պէթթիին առջև կեցած, — չպատասխանեց:

Այն ժամանակ հայրը մէկ ձեռքէն բռնեց և զինք քիչ մ'աւելի դէպ ի Պէթթիին մղեց, որ գրեթէ իրարու կը դպչէին ու ըսաւ. — Թողութիւն խնդրէ՛ իրմէ:

Անխաղաղութեան ուզեց միջնորդել, ըսելով, ո՛չ, ո՛չ. բայց պարոնը մտիկ չըրաւ, և կրկնեց որդւոյն. — Թողութիւն խնդրէ: Կրկնէ՛ իմ խօսքերս: Քեզմէ թողութիւն կը խնդրեմ՝ նախատական, անմիտ, և անազնիւ բառերուն համար՝ զորս քու հօրդ դէմ ըսի, որուն ձեռքը սեղմելը՝ հայրս իրեն պատիւ կը համարի: —

Անխաղաղութեան իսկոյն շարժուճև մ'ըրաւ, իրրև ըսել

ուզէր. Չեմ ուզեր: Պարոնն ականջ չկախեց, և իր որդին՝ կրկնեց՝ ծանր, ցած ձայնով, աչքերն առանց գետնէն վեր առնելու. — Քեզմէ թողութիւն կը խնդրեմ. . . նախատական. . . անմիտ. . . և անազնիւ խօսերուն համար, գորս քու հօրդ դէմ ըսի, որուն ձեռքերը. . . սեղմելը. . . հայրս իրեն պատիւ կը համարի:

Այն ատեն պարոնը ձեռքն ածխավաճառին կարկանդակն՝ որ զայն ուժով սեղմեց, և յետոյ իսկոյն իր որդին Գարոյ Նօպիսի բազկաց մէջ մղեց:

— Խնդրեմ, հաճէիր զասոնք քովէ քով դնելու, — ըսաւ պարոնը՝ ուսուցչին: — Ուսուցիչը; Պէթթին՝ Նօպիսի գրասեղանին քով դրաւ: Երբ տեղերնին գնացին, Նօպիսի հայրը՝ ողջունեց և դուրս ելաւ:

Ածխավաճառը քանի մը վայրկեան մտածկոտ ֆնաց՝ երկու քովէ քով նստող տղաքներուն նայելով. յետոյ գրասեղանին մօտեցաւ, և սիրալիբ և ցաւակից դէմքով աչքերը Նօպիսի վրայ սեւեւեց՝ իրրե բան մ'ուզէր ըսել անոր. սակայն բան չըսաւ. ձեռքը կարկանդակէն զայն փայփայելու համար, բայց և ոչ իսկ համարձակեցաւ, և միայն իւր խոշոր մատով անոր ճակատը շփեց: Յետոյ դէպ ի դուռ դիմեց, և անգամ մ'ալ դարձաւ զայն դիտելու համար, և աներևոյթ եղաւ: — Աղէկ մտքերնիր պահեցէք, տղաք, ինչ որ տեսաք, — ըսաւ ուսուցիչը, — ասիկայ տարւոյն ամենէն գեղեցիկ դասն է:

## ԵՂՅԵՄԻԵՐ ՎԱՐՃՈՒՆԻՆ

10. Հիմնադրութի

Ածխավաճառի որդին՝ Տէլքաթի վարժուհոյն աշակերտն եղաւ, որ այսօր հիւանդագին եղբօրս այցելութեան եկած է, և զմեզ խնդացուց՝ պատմելով թէ այն տղուն մայրը, երկու տարի առաջ, գոգնոց մը լեցուն ածուխ բերաւ իր տունը՝ շնորհակալ ըլլալու համար որ իր տղուն մետալ տուեր էր. և կը պնդէր խեղճ կիներ, չէր ուզեր դարձեալ տուն վերադարձնել ածուխը, և գրեթէ կու լար՝ երբ հարկադրուեցաւ լեցուն գոգնոցով տուն դառնալ: Պատմեց դարձեալ, թէ ուրիշ կին մ'ալ շատ ծանր ծաղկեփունջ մը բերաւ իրեն, որուն մէջ կոյտ մը դրամ կար: Իրեն լսելով շատ զուարճացանք և այսպէս եղբայրս ալ դեղը խմեց՝ որ առաջ չէր ուզեր: Ո՛րչափ համբերութիւն պէտք է մանկապարտիզի տղոց հետ, որ ամէնքն ալ ծերու պէս ակռայ չունին, որ չեն կրնար « և » հնչել, և մէկը կը հազայ, մէկու մը բթէն արիւն կը վազէ, ուրիշ մը սանտալները գրասեղանին տակ կը կորսնցնէ, մէկը կը ճչէ՝ զըջածայրով վիրաւորուած ըլլալուն համար, և ոմն ալ կու լայ՝ առաջին թիւ տետրակին տեղ երկրորդ թիւը գնած ըլլալուն համար: Յիսուն տղայ՝ մէկ դասարանի մէջ, որ բնաւ բան չեն զիտեր, այն կարագի պէս փափուկ թաթիկներով՝ որոնց զրնէլ պէտք է սովորեցնել: Գրպաննուն մէջ ունին մատուտակի կտորներ, կոճակներ, շիշի խցաններ, ա-

ղիւսի կտորներ, ամէն տեսակ մանր-մունր բաներ, զորս վարժուհին պէտք է որոնէ. բայց այս առարկաները մինչև մուճակնուն մէջ կը պահեն: Եւ ուշադիր չեն կենար, պատուհանէն մեծ ճանճ մ'որ մտնէ, ամէնքը տակնուվրայ կ'ընէ, և ամառը դպրոց կը բերեն խոտեր, մայիսեան միջատիկներ, որոնք չորս կողմը կը թռչտին կամ կաղամարներուն մէջ կ'իյնան և ապա տեսարակները կը մեղանոտեն: Վարժուհին իրենց մայրութիւն պիտի ընէ, զգեստ հագնելուն պիտի օգնէ, վերաւոր մատներին պիտի կապէ, ինկած գլխարկները պիտի վերցնէ, ուշադիր պիտի ըլլայ որ զգեստները չփոփոխուին, ապա թէ ոչ կու լան, կը ճչան: Խեղճ վարժուհիներ: Եւ դեռ մայրերը կու գան գանգատելու. օրիորդ, ինչու տղաս գրիչը կորսնցուցեր է. ինչո՞ւ իմինս բնաւ բան չսովոր. ինչո՞ւ իմինիս նուէր չես տար, որ այնչափ բան գիտէ. ինչո՞ւ զբասեղանին գամը հանել չես տար, որ Պետրոսիկիս տարատը պատուեր է: Եղբորս վարժուհին երբեմն կը բարկանայ տղոց, բայց երբ չկրնար՝ մէկ մատը կը խածնէ, որպէս զի գոնէ չծեծէ. համբերութիւնը կը հասնի, բայց յետոյ կը զղջայ և յանդիմանած տղան կը փայփայէ. ստահակ մը դպրոցէն կը վանտէ, բայց շուտով անոր արցունքներուն կը հաւատայ, և կը գայրանայ ծնողաց՝ որ տղաքը պատժելու համար ծոմ բռնել կու տան: Երիտասարդ ու բարձրահասակ է Տէլքաթի վարժուհին և մաքուր հագուած, տխուր ու անհանդարտ, որ ամէն բան շուտով կ'ընէ, և ոչինչ բանի մը համար կը յուզուի, և այն ժամանակ մեծ գորովով կը խօսի: — Բայց գոնէ սիրով կը կապուին ձեզի հետ, — ըսաւ իրեն մայրս: — Այո, շատերը, — պատասխանեց. — սակայն յետոյ, փա-

ւրն լմնալուն, մեծ մասն հրեսնիս չնայիր: Երբ ուսուցիչներուն հետ են, կամչնան գրեթէ՝ որ վարժուհիի մը բով եղած են: Երկու տարուան խնամքէն վերջ, տղայ մ'այնչափ սիրուելէ վերջ, իրմէ բաժնուելնուս վրայ կը տիրինը, բայց կ'ըսենք. — Ո՛հ, անոր վրայ վրատահ եմ, թէ ան միշտ զիս պիտի սիրէ: — Բայց արձակուրդները կ'անցնին, դպրոցը կը վերաբացուի, և զինք կը դիմաւորենք, ըսելով. — Ո՛վ մանկիկ, մանկիկդ իմ: — Իսկ նա գլուխը կը շրջէ: — Հոս, վարժուհին խօսքը կարեց: — Սակայն դու, մանկիկ, այսպէս պիտի չ'ընես, — ըսաւ յետոյ, խոնաւ աչքերով ոտքի կանգնելով ու եղբորս համբոյր մը տալով, — դու գլուխդ պիտի չշրջես, այնպէս չէ՞, պիտի չուբանաս քու խեղճ բարեկամուհիդ:

## ՄԱՅՐՍ

10 Նոյեմբեր. հիմնադրութի

Եղբորդ վարժուհոյն և երկաշարքեան՝ մօրդ յարգանց մէջ արտակցար: Այս բան անգամ մ'ալ չպատահի, Հենրիկս, Երբեք: Անպատկառ խօսքդ սրածայր պողպատի մը պէս սրտիս մէջ մխուճար: Միտքս եկաւ, երբ մայրդ, տարիներ առաջ, զիչեր մ'աւերոյց պղտիկ անկողնոյդ վրայ ծածակնէ՞ քու շունչիդ տուրուտը չարիւր, աղեկտուր արցունք քափելով և տարտափէն սկուայները կափկափելով, վասն զի կը կարծէր զքեզ կորսնցնել, և ես կը վախէի

Սէր

րե խերագարի. և այս մտածոչքեան վրայ սարսուռ մը գգացի քեզի համար: Մայրոյ վշտուցնէլ, մայրո՛ր՝ որ պատուաւս է իր երջանկոչքեան տարի մը գոնէրոչ, ցաւերեղ ժամ մը կուսզեցնէրոչ համար, և մոչարոչ և իր կեանքը տարոչ՝ բոչ կեանքոյ փոխէրոչ համար: Լսե՛, Հենրիկո՛ւս: Լսե՛ տպաւոչքե՛ մտքիոյ մէջ այս մտածոչքիւնը: Երեսկայե՛, րե կեանքի մէջ քեզի համար շատ սուկալի օրեր վերապահուած ըլլան. ամենեկն աւելի սարսափելիին պիտի ըլլայ այն օրը՝ յորում մայրոյ պիտի կորսնցնես: Հագար ակգամ, Հենրիկո՛ւս, երբ արդեկն ջափահաս, ուժեղ, ամեկն պայքարի փորձ մարդ ալ ըլլաս, զիկը օգնոչքեան պիտի կանչես՝ ամենա մեծ փափաք մը գգարոյ վայրկեան մ'ալ իր անջը շեւոչ և իր րեկըր բաց տեսնէրոչ՝ ակտեր, և ակմխիւրար րշուստ տրոչ մը պես իր գիրկը կեստուէրոչ համար: Ի՛նչպես պիտի յիշես այն ժամանակ այն ամեկն դաւնոչքիւն որ պատմուտեր ևս իրեկ, և ի՛նչ խոճի խայրոյ պիտի փափաքիս հատուցոչ մ'ընէլ ամեկուն, երո՛ւմ: Կեանքիոյ մէջ գուարրոչքիւն մի՛ յուսար, երե տխրեցուցամ ևս մայրոչ: Պիտի գըջաս, կերուձն պիտի խեղրես, պիտի յարգես իր յիշատակը. — ի գո՛չր. — խոճմուտերոյ քեզի խաղաղոչքիւն պիտի ջատայ, այն բաղցր և ազելիչ դեմքը քեզի համար միշտ տխրոչքեան և յանդիմանոչքեան տափը մը պիտի ըլլայ որ հոգիոյ պիտի տակէ: Ո՛վ Հենրիկոս, գգոչ կոյր. մարդիկայիս ակերտուն մէջ ամենեկն կուչիրականն ասիկայ է. րշուսո՛ւն է՝ ո՛վ որ գայն ոտնակոխ կ'ընէ: Աչագակը՝ որ իր մայրը կը յարգե, դես համեստ ու ազելիչ բան մ'ունէի սրտին մէջ. մարդիկիկերեկն ամենեկն սրանչեկին որ գայն կը վշտուցնէ ու կ'ակնարգե, ոչրիշ բան չե՛ բայց երե կուսաստ սրարամ մը: Բերանեղ ակգամ մ'ալ խիստ խօսք չեղեկ հանդեպ ակոյր՝ որ քեզի կեանք տուսու:

Էշ ևրե դարձեալ կեան բաւ մը խուսափէրոչ ըլլայ, հօրոյ կրկիչոյը չըլլայ, այլ սրտիոյ մղուսը՝ որ գրեզ ակոյր ոտքը ձգե, պաղաւտերոչ՝ որ կերողանուոչքեան համբոյրոյ վե՛ճե՛ անկեղ ապերախտոչքեան արատը: Էս գրեզ կը սիրեկ, որդեսկ իմ. դոչ կեանքիս ամենեկն բաղցր յոյսն ևս. բայց աւելի կ'ուզեկ գրեզ մեուսմ ականկ բան ապերախտ՝ մօրոչ: Գե՛ս, և քիչ մը ժամանակ չե՛մ ուզեր բոչ գգուսնքիկերոյ. պիտի չկարեկամ գանկը սրտոյ փոխանակել:

ՀԱՅՐԻ

ՔՕՐԷԹԹԻ ԳՍԱՐՆԿԵՐՍ

18. սիրակի

Հայրս ինձի ներեց. բայց ևս թիչ մը տխրեցայ, և այն ատեն մայրս զիս դռնապանին մեծ որդւոյն հետ պողոտային վրայ պտոյտի մը զրկեց: Գրեթէ պողոտային կիսուն, իսանութի մ'առջև գանուող սայլի մը թով աննունս կը լսեմ, կը դառնամ. Քօրէթթին էր, դասընկերս, իր կողահատի գոյն շապիկով և կատուամագէ զլիսարկով, բոլոր ջրանամ և զուարթ, որ խուրճ մը փայտ ունէր ուսին վրայ: Մարդ մը սայլին վրայ կեցամ, ամէն անգամ գիրկ մը փայտ կու տար իրեն, զոր կ'առնէր ու իր հօր խանութը կը տանէր, ուր հապճեպով կը դիգէր:

— Ի՛նչ կ'ընես, Քօրէթթի, — հարցուցի իրեն: — Չե՛ս տեսներ, — պատասխանեց, թե՛ր կարկա-

ուելով բռն առնելու համար. — Գասս կը սերտեմ:

Ես ծիծաղեցայ: Բայց ինք ըջօրէն կը խօսէր, և փայտի խուրճն առնելով, սկսաւ ըսել, վագելով. —

Բայի պատանձուներ կը կոչուին... իր փոփոխութիւններն՝ ըստ բուռն... ըստ բուռն և դեմքին..

Եւ ապա, վար նետելով փայտերը և զիգելով. — ըստ ժամանակին... ըստ ժամանակին՝ որուն գործողութիւնը կը պատշաճի...:

Եւ դէպի կառք դառնալով՝ ուրիշ զիրկ մ' առնելու համար. — ըստ երանակին ու



րով գործողութիւնն արտայայտուած է:

Յաջորդ օրուան մեր քերականութեան դասն էր: — Ինչ կ'ուզես, — ըսաւ ինծի, — ժամանակէն կ'օգտուիմ: Հայրս աշկերտի մը հետ գործի գնաց: Մայրս հիւանդ է: Ես պէտք է որ պարպեմ: Մի և նոյն ժամանակ քերականութիւնս ալ կը սովորիմ: Գծուարին դաս մ' է այսօր: Չեմ կրնար գլխուս մէջ մտցնել: Հայրս

ըսաւ որ ժամը եօթին հոս կ'ըլլայ՝ դրամդ տալու համար, — աւելցուց յետոյ սայլապանին:

Սայլապանը մեկնեցաւ: — Վայրկեան մը խանութ եկո՛ւր, — ըսաւ ինծի Քօրէթթի: Ներս մտայ. մեծ սենեակ մ' էր լի փայտաղոյտերով ու խուրճերով, և մէկ կողմը կշիռք մը կար: Հաւատա՛ որ այսօր թեւը սօթթելու օր է, — աւելցուց Քօրէթթի. — պէտք է որ աշխատութիւնը կտոր պատանձնեմ: Նախադասութիւնները կը գրէի՝ յաճախորդ եկաւ: Գարձեալ սկսայ գրել, սայլն եկաւ: Այս առտու արդէն երկու անգամ Վենետիկ հրապարակին փայտի վաճառանոցը գացի, վերադարձայ: Ոտքերուս վրայ այլ ևս ոյժ չմնաց և ձեռքերս ալ ուռեր են: Վայ էր գլխուս եթէ գծագրութիւն ըլլար դասս: — Եւ մի և նոյն ժամանակ գետնի շիւղերուն ու չոր տերկներուն աւելի հարուած մը կու տար:

— Բայց ո՛ւր կ'ընես աշխատութիւնդ, Քօրէթթի, — հարցուցի իրեն:

— Անտարակոյս ո՛չ հո՛ս, — ըսաւ. — եկուր տես. — և զիս խանութին ետև փողբիկ սենեակ մը տարաւ, որ խոհանոցի և ճաշարանի կը ծառայէր, մէկ կողմը սեղանով մը՝ որուն վրայ իր գրքերն ու տետրակներն և սկսած աշխատութիւնը դրած էր: — Ստուգիւ, — ըսաւ, — երկրորդ պատասխանը կէս թողուցի. կաշիով կը շիկեն մոճակներ, փոկեր...: Հիմա կ'աւելցնեմ սրայուսակներ: — Եւ գրիչն առնելով, սկսաւ գրել իր գեղեցիկ գրութեամբ: — Մարդ կայ հոս, — լսուեցաւ այն վայրկեանին, խանութէն: Կին մ' էր որ խուրճեր գնելու եկած էր: — Հո՛ս եմ, — պատասխանեց Քօրէթթի. և հոն ցատկեց, խուրճերը կշռեց, դրամներն առաւ, անկիւն մը վագեց՝ ծախածը նշանակելու

համար հնոտի հաշուեմատենի մը մէջ, և իր աշխատութեան վերադարձաւ, ըսելով. — Նայինք պիտի կարենամ պարբերութիւնն աւարտել: Եւ գրեց. — ճաւարտնորդութեան քսակներ, զիւռարաց մախաղներ: — Այս, խեղճ սուրճս կը թափի, — գոչեց յանկարծ և զէպ ի կրակարան վազեց՝ սրճամանը կրակէն վերցնելու: Մօրս սուրճն է, — ըսաւ. — հարկ եղաւ որ սուրճ եփել սովորիմ: Քիչ մը սպասէ՛ որ իրեն տանինք. որով զքեզ ալ կը տեսնէ և իրեն հաճոյք մը կ'ըլլայ: Եօթն օր է որ անկողնոյ մէջ է . . . : Թշուառութեանս: Միշտ մատս կ'այրեմ այս սրճամանով: Ի՞նչ պիտի աւելցնեմ զինուորներու մախաղէն վերջ: Ուրիշ բաներ մ'ալ պէտք է, և չեմ գիտեր: Մօրս ըով եկուր:

Գուռ մը բացաւ, ուրիշ փոքր սենեակ մը մտանք. Քօրէթթի մայրը մեծ անկողնոյ մը մէջ էր, սպիտակ թաշկինակ մը գլուխը:

Ահաւասիկ սուրճը, մայրի՛կ, — ըսաւ Քօրէթթի գաւաթը տալով. — ասիկայ զպրոցի մէկ դասընկերս է: — Ո՛հ, ասլըի՛ս, պարոնի՛կ, — ըսաւ ինծի. — հիւանդաց այցելութիւն ընելու եկար, այնպէս չէ՛:

Նոյն ժամանակ Քօրէթթի բարձերն իր մօր կոնակը կը գետեղէր, անկողնոյն վերմակները կը յարդարէր, կրակը կ'արծարծէր, մեծ արկղէն կատուն կը վռնարէր: — Ուրիշ բանի պէտք ունի՞ս, մայրի՛կ, — հարցուց յետոյ, գաւաթն առնելով: — Առի՛ր երկու զգալիկ օշարակը: Երբ լմննալու ըլլայ, շուտով վայրկեան մը դեղարան կ'երթամ: Փայտերը պարպուեցան: Ժամը չորսին միսը կրակին վրայ կը դնեմ, ինչպէս որ ըսիր, և երբ կարագավաճառուհին անցնի՝ այն ութ ստակները կու տամ: Ամէն բան լաւ կ'երթայ, մի՛ մտածեր:

— Ծնորհակալ եմ, տղաս, — պատասխանեց. — սիրուն տղաս, գնա՛: Ամէն բան կը մտածէ:

Ուզեց որ կտոր մը շաքար առնեմ, և ապա Քօրէթթի պատկեր մը ցոյց տուաւ ինծի, իր հօր լուսանկարն էր, զինուորական զգեստով, պատուոյ մետալով՝ որ 66ին Ումպերթոյ իշխանի բանակին մէջ շահած է. ճիշտ տըղուն զէմըն էր, մի և նոյն վառվռուն աչքերով ու զուարթ զէմըով: Խոհանոց վերադարձանք: — Փընտուածս գտայ, — ըսաւ Քօրէթթի, և աւելցուց տետրակին վրայ. կը շինուի ևս. քիչրո՞ կազմածներ: — Մնացածն այս իրիկուն կ'ընեմ, ուշ կը պառկիմ: Երանի՛ քեզ որ շատ ժամանակ ունիս աշխատելու համար, և կրնաս շրջագայութիւն ալ ընել:

Եւ միշտ զուարթ ու աշխոյժ խանութ մտնելով, սկսաւ փայտի կտորներն նեցուկի մը վրայ դնել ու մէջտեղէն սղոցել, և կ'ըսէր. — Ասիկայ ալ մարմնակըրթանքս է: Ո՛ւր կը մնայ քեզի՞ն ևս. առաջ մղեր: Կ'ուզեմ որ երբ հայրս տուն դառնայ՝ բոլոր այս փայտերը սղոցուած տեսնէ. գոհ պիտի մնայ: Գէշն այն է որ սղոցելէս վերջ՝ այնպիսի կերպով կը գրեմ է և լ տառերը, որ օձի կը նմանին, ինչպէս կ'ըսէ ուսուսիչը: Բայց ի՞նչ ընեմ: Իրեն կ'ըսեմ որ թեքս յոգնեցան: Կարևորն այն է որ մայրս շուտով առողջանայ, այս, այո՛: Այսօր աւելի լաւ է, փա՛ռք Աստուծոյ: Քերականութիւնը վաղը հաւախօսին կը սովորիմ: Ո՛հ, անաւասիկ կոճղաբարձ սայլը: Աշխատի՛նք:

Կոճղերով բռնաւորուած սայլ մը խանութին առջև կանգ առաւ: Քօրէթթի դուրս վազեց մարդուն հետ խօսելու համար, յետոյ վերադարձաւ: Հիմա ս՛յլ ևս չեմ կրնար քեզի ընկերութիւն ընել, ըսաւ ինծի. — եր-

Թան Բարով, վաղը կը տեսնուինք: Շատ լաւ ըրիր որ եկար զիս գտնելու: Բարի գուարճութիւն: Երանի քեզ:

Եւ ձեռքս սեղմելով, վազեց առաջին կոճղն առնելու, և սկսաւ դարձեալ սայլին ու խանութիւն մէջ տեղ վազվզել՝ վարդի պէս կամիր ու կայտառ դէմքով՝ կատուամազէ զլիսարկին տակ՝ որ տեսնողին ուրախութիւն կը պատճառէր:

Երանի քեզ, ըսաւ ինծի: Ո՛հ, ո՛չ, Քօրէթթի, ո՛չ. դո՛ւ ես ամենէն երջանիկը, դո՛ւ վասն զի կ'աշխատիս և աւելի կը սովորիս, վասն զի աւելի օգտակար ես քու հօրդ ու մօրդ, վասն զի աւելի բարի ես, ինծմէ հարիւր անգամ աւելի ազնիւ և աւելի կտրիճ, սիրելի՛ դասընկերս:

## ՏԵՍՈՒՉԸ

### 18. Ուրբաթ

Քօրէթթի այս առաւօտ գոհ էր, որովհետեւ իր երկրորդ շրջանի ուսուցիչը, Քօթթին, եկաւ ամսօրեայ քննութեանց ներկայ ըլլալու. յաղթանդամ և երկայն գանգուրներով, խոշոր ու սև մօրուքով, երկու խոշոր և սև աչքերով և մեծաղոտրդ ձայնով մարդ մ'է, որ միշտ տղայոց կը սպաննայ զիրենք բզիկ բզիկ ընել և վզերնէն

բռնած Պահակատուն տանիլ, և ամէն տեսակ ահաբեկիչ ձևեր կ'ընէ. սակայն ո՛չ զոք կը պատժէ, մանաւանդ մեղմով միշտ մօրուքին տակէն կը խնդայ: Ուսուցիչները՝ Քօթթիով՝ ութ են, միանգամայն հաշուելով փոքր ու անմօրուս օգնական ուսուցիչ մ'ալ, որ կարծես պատանի մ'է: Չորրորդ դասարանի ուսուցիչ մ'ալ կայ, կաղ, բրդէ խոշոր վզնոցի մը մէջ ծածկուած, միշտ ամէն տեսակ ցաւերով լի. և այն ցաւերն ստացեր է երբ զիւղային ուսուցիչ մ'էր՝ խոնաւ ու պատերէն կաթկթող դպրոցի մը մէջ: Չորրորդի ուրիշ ուսուցիչ մ'ալ ծեր է, բոլորովին ձերմկցած և կոյրերուն վարժապետ եղած է: Ուրիշ մը կայ, մաքուր հագուած, ակնոցաւոր և երկու ղեղին ընչացքներով, գոր փաստարանիկ կը կոչեն, վասն զի ուսուցչութիւն ընելով՝ փաստարանութիւն սովորեցաւ և վկայական առաւ, ու նամակագրութեան զիրք մ'ալ շարադրեց: Իսկ այն որ մեզի մարմնամարզ կ'ընէ, զինուորական տիպար մ'է, կարիպալտի հետ եղած և վզին վրայ սուրի հարուածի սպի մը կայ՝ Միլացցոյի պատերազմին մէջ ստացած: Յետոյ կայ տեսուչը, բարձրահասակ, ճաղատ, ոսկի ակնոցով, գորշագոյն մօրուքով՝ որ մինչև կուրծքը կ'իջնէ, բոլորովին սև հագուած և միշտ վերէն վար կոճկուած. այնքան ազնիւ է տղոց հետ, որ երբ յանդիմանութեան մը համար տղաքը կանչուելով՝ ամէնքն ալ դողդալով Տեսչութեան սենեակը կը մտնեն, անոնց չնեղանար, այլ ձեռքերնէն կը բռնէ և խրատներով կը համոզէ որ այնպէս պէտք չէին ընել, և թէ պէտք են զղջալ և խոստանալ բարի ըլլալու, և այնպէս ազնուութեամբ և քաղցր ձայնով կը խօսի որ ամէնքը կարմրած աչքերով դուրս կ'ելնեն աւելի շփոթած՝

քան եթէ զիրենք պատժէր: Խեղճ Տեսուչ, առտու ա-  
մենէն առաջ իր տեղը կը գտնուի՝ տղայք ընդունելու  
և ծնողաց լսելու համար, և երբ ուսուցիչներն արդէն  
տուն մեկնած են, դեռ ինք դպրոցին չորս կողմը կը  
շրջի, որ մի՛ գուցէ տղայք կառքերուն տակ մտնեն կամ  
փողոցներու մէջ մնան՝ գլխազարձ խազալու համար,  
կամ մախաղնին աւազով կամ քարով լեցնեն. և ամէն  
անգամ որ անկեան մը ծայրը տեսնուի՝ իր բարձր հա-  
սակով ու սև դէմքով, տղոց երամն ամէն կողմանէ կը  
փախչի՝ հոն թողլով զրիչներու և գնդակներու խաղը,  
և ինք հեռուէն ցուցամատով անոնց կը սպաննայ իր  
սիրագորով ու տխուր դէմքով: Ոչ ոք տեսած է իր  
խնդալը, կ'ըսէ մայրս, իր որդւոյն մեռնելէն վերջ՝ որ  
կամաւոր զինուոր էր բանակի մը մէջ. և միշտ անոր  
պատկերն իր աչքին առջև ու իր Տեսչական սեղանին  
վրայ էր: Եւ այն դժբախտութենէն վերջ՝ դպրոցէն  
կ'ուզէր ելնել. Քաղաքապետութեան իր հրաժարագիրը  
պատրաստած էր, զոր ստուիւն վրայ կը պահէր, մէկ օրէն  
միւսը կը յետաձգէր անոր առաքումը, վասն զի կը ցա-  
ւէր տղաքը թողուլ: Բայց անցեալ օր որոշած կը թուէր,  
և հայրս որ իրեն հետ Տեսչութեան սենեակն էր, ը-  
սաւ. — Մեղք չէ որ կ'երթաս, պարո՛ն Տեսուչ, — երբ  
մարդ մ'եկաւ տղայ մ'արձանագրել տալու համար, որ  
ուրիշ բաժնէ մը մերինին մէջ կ'անցնէր, որովհետեւ  
տունը փոխած էր: Այն տղան տեսնելուն պէս, Տեսուչը  
զարմանքի շարժում մ'ըրաւ, — քիչ մը դիտեց զայն,  
ստուիւն վրայ ունեցած պատկերին նայեցաւ և դար-  
ձեալ տղան դիտեց՝ զայն իր գիրկը ծունգերուն վրայ  
դնելով: Տղան բոլորովին իր մեռած որդւոյն կը նմա-  
նէր: Տեսուչն ըսաւ. — Շատ լաւ. — արձանագրու-

թիւնն ըրաւ, հայր և որդի արձակեց և մտածկոտ մը-  
նաց: — Մեղք չէ որ կ'երթաս, — կրկնեց հայրս: Եւ  
այն ատեն Տեսուչն իր հրաժարագիրն առաւ, երկու  
կտոր ըրաւ ու ըսաւ. — Կը մնամ:

## ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ

22. Երեքշաբթի

Իր որդին կամաւոր զինուոր էր բանակին մէջ՝ երբ  
մեռաւ. ասոր համար, երբ դպրոցէն կ'ելնենք, Տեսուչը  
մեծ պողոտային վրայ կ'ելնէ զինուորաց անցնիլը տես-  
նելու համար: Երէկ հետեակ զօրաց վաշտ մը կ'անց-  
նէր, և յիսուն տղաք սկսան երաժշտական խմբին չորս  
կողմը ցատկաւ, երգելով ու տողաշարներով մախաղ-  
ներուն ու թղթակալներուն վրայ ամանակ զարնելով:  
Մենք խմբով սալարկին վրայ կեցած կը դիտէինք.  
Կարրօնէն, իր նեղ զգեստներուն մէջ պնդուած՝ հացի  
խոշոր կտոր մը կը կրծէր. Վօթինին, այն մաքուր հա-  
զուողը, որ միշտ զգեստին վրայէն աղուամագերը կը  
ժողվէ. Փրէքսսին, երկաթագործի որդին՝ իր հօր ըզ-  
գեստով, և գալապրիացին, և «փոքրիկ որմնագիրը»,  
և Քրօսսին՝ իր շիկահեր գլխով, և Պրանթին՝ իր լիբբ  
երեսով, միանգամայն Ռօպէթթին՝ ուրաճիզ սպայի որ-  
դին, այն՝ որ մանուկ մը փրկեց հանրակառքի տակէն



և հիմա ինք անթացսով կը շրջի: Պրանթին կաղացող զինուորի մ'երեսն ի վեր խնդաց: Բայց իսկոյն զգաց որ մէկն իր ուսերուն դպաւ. ետ դարձաւ, Տեսուչն էր: — Ուշադրութիւն դի՛ր, — ըսաւ իրեն Տեսուչը. — ծաղրել զինուոր մը՝ երբ կարգին մէջ կը գտնուի, որ չկրնար ո՛չ վրէժ առնել, ո՛չ պատասխանել, այնպէս է՝ իբրև կապուած մարդ մը նախատէիր. վատութիւն մ'է: — Պրանթին անյայտացաւ: — Զինուորները չորս չորս կ'անցնէին, քրտնած, փոշելից, և հրացաններն աւրեւն կը շողշողային: Տեսուչն ըսաւ. — Դո՛ւք տղաք, պէտք էք զինուորները սիրել: Անոնք մեր պաշտպաններն են, պատրաստ են մեզի համար մեռնելու՝ եթէ վաղն օտար բանակ մը սպառնայ մեր հայրենիքին: Անոնք ալ տղայ են, տարիքով ձեզմէ քիչ մը մեծ. իրենք ալ դպրոց կ'երթան. իրենց մէջ ալ ձեզի պէս հարուստներ ու աղքատներ կան, և խտալիոյ ամէն կողմերէն կու գան: Տեսէ՛ք, զրեթէ դէմքերնէն կը ճանչցուին. կ'անցնին Սիկիլիացիք, Սարտենիացիք, Նեապոլսեցիք, Լոմպարտացիք: Ասիկայ հին վաշտ մ'է, անոնցմէ՝ որ 1848ին պատերազմեցան: Զինուորներն այլ ևս նոյնքը չեն, բայց դրօշը միշտ նոյն է: Քանիսնք մեռած էին արդէն մեր հայրենիքին համար այդ դրօշին շուրջը՝ ձեր ծնանելէն քսան տարի առաջ: — Ահաւասիկ հոն է, — ըսաւ Կարբօնէ: Եւ յիրաւի քիչ հեռուն կը տեսնուէր դրօշը, որ յառաջ կու գար՝ զինուորաց զլուխներէն բարձր: Բան մ'ըրէ՛ք, որդեակք, — ըսաւ Տեսուչը, — ձեր դպրոցական ողջոյնը տուէ՛ք՝ ձեռքերնիդ ճակատնուդ դնելով, երբ եռագոյններն անցնին: — Դրօշը, զոր սպայ մը կը տանէր, մեր առջևէն անցաւ, բոլորովին պատահոտուն և գունատեալ:

մետաղները ձողէն կախուած: Ամենքնիս միասին ձեռքերնիս ճակտանիս տարինք: Սպան մեզի նայեցաւ, ժպտելով, և ձեռքով փոխադարձ ողջունեց զմեզ: Կեցցէ՛ք, տղաք, — ըսաւ մէկը մեր ետևէն: Գարձանք նայելու. ձեր մ'էր որ զգեստի կոճակին վրայ խրիմու պատերազմին կարմիր ժապաւէնն ունէր. հանգստեան կոչուած սպայ մը. — Կեցցէ՛ք, — ըսաւ, — գեղեցիկ բան մ'ըրիք: — Այն ժամանակ վաշտին երաժշտախումբը ճամբուն վերջին անկիւնը կը դառնար՝ տղոց ամբոխէ մը շրջապատուած, և հարիւրաւոր զուարթ ազգակիներ՝ փողերու ձայնին հետ կը միանային՝ իբր պատերազմական քայլերգ մը: — Ապրի՛ք, — կրկնեց հինաւուրց սպան՝ մեզի նայելով. — ո՛վ որ մանկութեան ժամանակ դրօշը կը յարգէ՝ մեծնալէն վերջ ալ պետի գիտնայ պաշտպանել զայն:

## ՆԷԼԼԻ ԳՍՇՏՊԱՆԸ

23. Զորհրշարթի

Երէկ Նէլլին ալ զինուորները կը դիտէր, խնդճ սապատողիկ, բայց այնպիսի գէմքով մը՝ որ կարծես կը մտածէր. — Ես երբեք զինուոր պիտի չկարենամ ըլլալ: — Նա բարի է, կը սովորի. բայց շատ նիհար ու տեղոյն է և դժուարաշունչ: Միշտ սև փայլուն կտակ գոգնոց մը կը կապէ: Իր մայրը կարճահասակ և խարտեաշ կին մ'է, սև կը հագնի, և միշտ վերջին վայր-

կենին կու գայ զինք աննելու, որպէս զի ուրիշներուն հետ խառնակութեան մէջ դուրս չե՛նէ. և զինք կը փայտայտէ: Առաջին օրերը, որովհետև կուզ ըլլալու դժբաղդութիւնն ունի, շատ տղաք զինք կը ծաղրէին և մատաղներով իր կոնակին կը զարնէին. բայց ինք բընաւ ետև չէր դառնար, ու բան մը չէր ըսեր իր մօր, ցաւ չպահածու համար, զիտնալով որ որդին ուրիշներուն խողալիկն է. զինք կը ծաղրէին, և կու լար ու կը լռէր՝ ճակատը գրասեղանին վրայ դրած: Սակայն, առաւօտ մը, Կարրօնէն վեր ելաւ ու ըսաւ. — Այն, որ առաջին անգամ կը դպչի Նէլլին՝ անոր այնպիսի հարուած մը կու տամ, որ ինքն իր վրայ երեք անգամ կը դառնայ: — Պրանթին մտիկ չըրաւ, հարուածը կերաւ, բարեկամը ինքն իր վրայ երեք անգամ շրջեցաւ: Եւ անկից վերջ ո՛չ որ Նէլլին դպաւ: Ուսուցիչը զինք Կարրօնէին քով մի և նոյն գրասեղանին մէջ դրաւ: Իրարու հետ բարեկամացան: Նէլլի շատ սիրեց Կարրօնէն: Հազիւ դպրոց կը մտնէ, իսկոյն կը նայի թէ արդեօք Կարրօնէն հո՛ն է: Բնաւ չի մեկնիր՝ առանց ըսելու. — Մնաս բարեաւ, Կարրօնէ: — Կարրօնէ ալ փոխադարձ իրեն կ'ընէ: Երբ Նէլլի զիրք կամ զբիջ մը ձգէ գրասեղանին ներքև, որպէս զի ծռելով չյոգնի ան, իսկոյն Կարրօնէ կը ծոփ և զիրքն ու գրիչն իրեն կու տայ. և յետոյ իրեն կ'օգնէ ունեցածները մատաղին մէջ դնելու և կրկնօրը կապելու ժամանակ: Ասոր համար Նէլլի զինք կը սիրէ, միշտ իրեն կը նայի, և երբ ուսուցիչը գայն կը գովէ՝ կ'ուրախանայ, իրրև թէ զինք գոված ըլլար: Հիմա պէտք է որ Նէլլի, վերջապէս, ամէն բան մօրը պատմած ըլլայ, առջի օրուան ծանականքն ու իրեն տրուած նեղութիւն.

ները, և յետոյ այն ընկերոջ զինք պաշտպանելը, և իր անոր վրայ կապած սէրը, վասն զի ահա ի՛նչ որ պատահեցաւ այս անտու: Ուսուցիչը զիս զրկեց որ դասացուցակը Տեսչին տանիմ, արձակուրդէն կէս ժամ առաջ, և ես գրասենեակն էի երբ սեազգեստ և խարտեաշ տիկին մը ներս մտաւ, Նէլլիին մայրը, որ ըսաւ. — Պարոն Տեսուչ, տղուս դասարանին մէջ Կարրօնէ անուամբ տղայ մը կայ: — Կայ, — պատասխանեց Տեսուչը: — Ծնորհք կ'ընէ՞ր վայրկեան մը հոս կանչել տալու, իրեն ըսելիք մ'ունիմ: — Տեսուչը կանչեց սպասաւորն ու դասարան զրկեց, և վայրկեան մը վերջ Կարրօնէն զրան առջև էր՝ իր խոշոր ու կունտ գըլխով, բոլորովին զարմացած: Հազիւ զինք տեսաւ տիկինը, իրեն ընդ առաջ վագեց, վիզը փաթթուեցաւ և գլուխը համբոյրներով ծածկեց, ըսելով. — Դո՛ւ ես, Կարրօնէ, որդւոյս բարեկամը, իմ խեղճ տղուս պաշտպանը, դո՛ւ ես, սիրելի՛, ազնի՛ւ տղայ, դո՛ւ ես: — Յետոյ արտօրնօք գրպաններն ու ըսակը պրպտեց, և բան մը չգտնելով, իր վզէն շղթայով փոքր խաչ մը փըրցուց ու զայն Կարրօնէի վիզը՝ փողկապին տակ կախեց, ու ըսաւ. — Ա՛ն ասիկայ, յիշատակ մը թող ըլլայ, ազնի՛ւ մանուկ, յիշատակ մը՝ Նէլլի մօր, որ քեզի շնորհակալ կ'ըլլայ ու զքեզ կ'օրհնէ:

## ԳՍՍԻՆ ԱՌԱՋԻՆԸ

25. Ուրբաթ

Կարթօնէն՝ ամենուն սիրտն իրեն կը քաշէ. իսկ Տէրօսսին՝ զարմանքը : Առաջին մետալն առած է, և միշտ առաջինը պիտի ըլլայ այս տարի ալ. ո՛չ որ կրնայ իրեն հետ չափուիլ, ամէնքն ալ իր առաջնութիւնը կը ճանչնան ամէն նիւթերու մէջ : Առաջին է՝ թուաբանութեան, քերականութեան, շարադրութեան և գծագրութեան մէջ, ամէն բան շուտով կ'ըմբռնէ, սքանչելի յիշողութիւն մ'ունի, առանց ձիգի ամէն բանի մէջ կը յաջողի, կարծես ուսումն իրեն համար խաղալիկ մ'ըլլար : Ուսուցիչն երէկ իրեն ըսաւ. — Աստուծոյ մեծամեծ ձիրքեր ընդունեալ ես. ուրիշ ընելիք չունիս՝ բայց միայն չվատնել զանոնք : — Ասոնցմէ զատ՝ բարձրահասակ և գեղեցիկ ալ է, խարտեաշ խոպոպներու մեծ պսակով մը, թեթևաշարժ, որ մէկ ձեռքը գրասեղանի մը կռթնցնելով վրայէն կը ցատկէ. և արդէն սրախաղութիւն ալ գիտէ : Տասն երկու տարեկան է, վաճառականի մ'որդին. միշտ ոսկեգօծ կոճակներով կապտորակ զգեստ մը կը հագնի, միշտ աշխոյժ, զբարթ, ամենուն հետ ազնիւ և կրցածին չափ քննութեանց կ'օգնէ, և ո՛չ որ համարձակած է իրեն կոպտութիւն մ'ընելու կամ տգեղ խօսք մ'ըսելու : Նօպիան ու Ֆրանթին միայն իրեն ծուռ աչքով կը նային, և վօթինիին աչքերէն նախանձ կը կաթէ. բայց նա և ոչ

իսկ կը նշմարէ : Ամէնքն իրեն կը ժպտին և մէկ ձեռքը կամ թևը կը բռնեն՝ երբ շրջան կ'ընէ աշխատութիւնները հաւաքելու՝ իր յատուկ շնորհալի կերպով : Տան մէջ ինչ որ իրեն կը նուիրեն, պատկերազարդ թերթեր, գծագրութիւններ, ինք ալ զանոնք ուրիշին կը նուիրէ . Գալապրիացւոյն համար՝ Գալապրիոյ աշխարհացոյց մը գծագրեց. և մեծ պարոնի մը պէս խնդալով, առանց ուշ դնելու և անխտիր ամէն բան կու տայ : Անհրնար է իրեն շնախանձիլ, ամէն բանի մէջ ինքզինք նուազ չզգալ : Ո՛հ, ես ալ վօթինիի պէս իրեն կը նախանձիմ : Եւ դառնութիւն մը՝ գրեթէ տեսակ մը արհամարհանք կը զգամ երբեմն իրեն դէմ, երբ դժուարութիւն կը քաշեմ տան մէջ դասերս պատրաստելու, և կը մտածեմ որ այն ժամուն ինք արդէն լաւագոյն կերպով և առանց յոգնութեան ըրած է զայն : Բայց յետոյ, երբ դպրոց կը վերադառնամ, ու կը տեսնեմ զինք այնպէս գեղեցիկ, ժպտուն, յաղթական, և կը լսեմ որ ուսուցչի հարցումներուն կը պատասխանէ համարձակ և վստահ կերպով, որ ի՛նչպէս քաղաքավար է, ի՛նչպէս ամէնքը զինք կը սիրեն, այն ատեն՝ ամէն դառնութիւն, ամէն արհամարհութիւն կ'երթայ սրտէս, և կ'ամչնամ այն զգացումներն ունեցած ըլլալուս վրայ : Այն ժամանակ միշտ կը փափաքիմ ըզմն ըլլալ. ամէն դասերս իր հետ կարենալ ընել . իր ներկայութիւնը, իր ձայնն ինձի սիրտ կու տայ, փափաքս կը բերէ աշխատելու, ուրախութիւն ու հաճոյք կը պատճառէ : Ուսուցիչն ամսօրեայ պատմութիւնն իրեն տուաւ օրինակելու, զոր վաղը պիտի կարդայ. « Լոմպարտացի փոքրիկ դէտը » . այս առտու կ'օրինակէր և զգածուած էր այն դիւցազնական գործէն, երեսը բոլոր կրակ-դարձած, աչքերը

Թրջած և բերանը դողդոջուն. և ես զինք կը դիտէի. ինչպէս գեղեցիկ ու ազնուական էր: Ո՛րքան հաճոյքով և անկեղծութեամբ կ'ուզէի ըսել իրեն. Տէրօսսի, ամէն բանով դու ինձմէ աւելի՛ կ'արժես: Բաղդատմամբ ինձի դու մարդ մ'ես: Չքեզ կը յարգեմ և վրադ կը սքանչանամ:



## ԼՈՄՊԱՐՏԱՅԻ ՓՈՒԲՐԻԿ ԴԷՏԸ

(Այնօրեայ պատմութիւն)



26. Շարաթ

**ԼՈՄՊԱՐՏԱՅԻՈՅ** ազատութեան պատերազմին ժամանակ, 1859ին, Սօլֆերինոյի և Սան Մարթինոյի ճակատամարտէն քիչ վերջ, Գազզիացիք և Խաալացիք՝ Աւսարիոյ յաղթելով, յունիսի ամսոյ գեղեցիկ առաւօտ մը, Սալուցցոյի հեծերազօրաց փոքրիկ վաշտ մը՝ ամայի ճանապարհէ մը գանդազ քայլերով դէպ ի թշնամին կը յառաջա-

Նար, ուշագրութեամբ լրատելով դաշար: Գունդին կ'առաջնորդէին սպայ մը և յիսնապետ մը, և ա՝ մէնքն աչքերնին սևեռած, բուռ ու մունջ, հեռուն իրենց դիմացը կը նայէին, վայրկենէ վայրկեան յուսարով ծառերու մէջ տեսնել թշնամեաց յառաջապահներու փայլիլը: Այսպէս, հացենիներով շրջապատուած գեղջկական տնակ մը հասան, ուրուն առջև՝ միայնակ՝ տառներկու տարեկանի մօտ տղայ մը կեցած էր, որ զմելինով սրբաիկ ճիւղ մը կը տաչէր՝ գաւազանիկ մը շինելու համար. արնակին մէկ պատուհանէն եռագունեան գրօշ մը կը ծածանէր. ներսը մարդ չկար. գիւղացիները գրօշը դուրս գնելով՝ փախած էին Աւստրիացուց երկիւղէն: Հազիւ հեծերազօրքը տեսաւ, տղան մէկդի նետեց գաւազանը՝ և գլխարկը բացաւ: Գեղեցիկ տղայ մ'էր, վառվառն գէմքով, մեծ ու կապոյտ աչքերով, խարտեաշ ու երկայն մազերով. թեզանաւոր շապիկ մը հագուած էր և կուրծքը բաց:

— Ի՞նչ կ'ընես հօս, — հարցուց անոր սպան, իր ձին կեցնելով: — Ինչո՞ւ ծնողացդ հետ չես փախած:

— Ես ծնողք չունիմ, — պատասխանեց տղան: — Ընկեցիկ մ'եմ: Քիչ մը կ'աշխատիմ ամէնուն համար: Հօս կեցայ որ պատերազմը տեսնեմ:

— Աւստրիացուց անցնիլը տեսնիր:

— Ո՛չ, երեք օրէ ի վեր:

Սպան քիչ մը մտածեց. յետոյ ձիէն իջաւ և զինուորները հոն թողլով՝ դէպ ի թշնամին դարձած, տունէն ներս մտաւ ու տանիքին վը-

րայ ելաւ...: Տեսկը ցած էր, տանիքէն դաշտին փոքր մաս մը կը տեսնուէր միայն: — Պէտք է ծառերուն վրայ ելնել, — ըսաւ սպան ու վար իջաւ: Ճիշդ կալին առջև բարձրաբերձ ու բարակ կաղնի մը կար, որուն զազաթը կապոյտին մէջ կը ծածանէր: Սպան քիչ մը մտածեց՝ դիտելով մերթ ծաւր մերթ զինուորները. յետոյ յանկարծ հարցուց տղան.

— Աչքդ սուր է, աշխոյժ տղաս:

— Ի՞մ, — պատասխանեց տղան: — Ես մղոն մը հեռաւոր ճնճղուկը կը տեսնեմ:

— Կրնաս այն ծառին գազաթն ելնել:

— Այն ծառին գազաթը, ես: Կէս վայրկենի մէջ կ'ելնեմ:

— Կրնաս ըսել ինձ ի՞նչ որ վերէն տեսնես. թէ արդեօք այն կողմն աւստրիացի զինուոր, փոշի ամպեր, փալվիղ հրացաններ, ձիեր կան:

— Յայտնի է թէ կրնամ:

— Ի՞նչ կ'ուզես ինձ ի այս ծառայութիւնն ընելու համար:

— Ի՞նչ կ'ուզեմ, — ըսաւ տղան ինդպարով: — Ո՛չ ինչ: Զարմանալի բան: Եւ յետոյ... եթէ գերակաւորացուց համար ըլլար, ո՛չ մէկ պայմանով բայց մերիններուն համար: Ես Լոմպարտոցի եմ:

— Լաւ: Վեր ել ուրեմն:

— Վայրկեան մը, որ կօշիկներս հանեմ:

Կօշիկները հանեց, տաբատին փոկը սեղմեց, գլխարկը խոտերուն մէջ նետեց և հացենիին բունին փաթթուեցաւ:

— Բայց ուշ գէր... — գոչեց սպան, նշա-

նայի զայն կեցնել ուզելով, կարծես յանկարծա-  
կան երկիրդէ մ'ահարեկամ:

Տղան իր գեղեցիկ ու կապոյտ աչքերով՝ հար-  
ցական կերպով մը դարձաւ իրեն նայելու:

— Ո՛չ ինչ, — ըսաւ սպան. — վեր ել:

Տղան կատուի մը պէս վեր ելաւ:

— Առջինիդ նայեցէ՛ք, — պառայ սպան զի-  
նուորայ:

Քանի մը վայրկենէն սպան ծառին դադաթն  
էր, բունին փաթթուած, սրունքները տերևներուն  
մէջ, բայց իրանն ազատ, և արեն իր խարտեաչ  
գլխուն վրայ կը դարնէր, որ կարծես սակի էր:  
Սպան հազիւ զանիկայ կը տեսնէր, հոն, այն բար-  
ձրութեան վրայ, սոյնքան փոքր էր:

— Ուղղակի և հեռուն նայէ՛, — գոչեց ըս-  
պան:

Տղան, բուսոյն տեսներու համար, աջ ձեռքը  
ծառէն բաժնեց և ճակախն գրաւ:

— Ի՞նչ կը տեսնես, — հարցուց սպան:

Տղան դէմքն անոր կողմը ծռեց, և ձեռքը ձայ-  
նատար ընելով, պատասխանեց. — Երկու ձիա-  
ւոր՝ սպիտակ ճամբուն վրայ:

— Ասկից որչափ հեռու:

— Կէս մղոն:

— Կը շարժին:

— Կեցեր են:

— Ուրիշ ի՞նչ կը տեսնես, — հարցուց սպան  
վայրկեան մը լուսթեռէ վերջ: — Աջակողմը  
նայէ՛:

Տղան աջակողմը նայեցաւ:



Յետոյ ըսաւ. — Գե-  
րեղմանատան մօտ,  
ծառերուն մէջ չողչու-  
ղացող բան մը կայ:  
Կարծեմ սուխններ  
են:

— Մարդ կը տես-  
նես:

— Ո՛չ, Յորեննե-  
րուն մէջ պահուը-  
տած պիտի ըլլան:

Այն ըսպէին գըն-  
դակի սուր շէխն  
մ'անցաւ  
բարձր օդին  
մէջէն և գնաց  
անակին ետև  
մարեցաւ:

— Ի՞՞նչ,  
տղայ, — գո-

չեց սպան: — Տեսած են զքեզ: Ուրիշ բան չեմ  
ուզեր: Վար ի՞նչ:

— Ես չեմ վախեր, — պատասխանեց տղան:

— Ի՞նչ... — կրկնեց սպան, — ուրիշ ի՞նչ  
կը տեսնես ձախակողմը:

— Չախակողմը:

— Այո, ձախակողմը:

Տղան գլուխը ձախակողմը դարձուց. այն կէ-  
տին ուրիշ աւելի սուր շէխն մը՝ աւելի ցածէն  
կտրեց օդը: — Տղան ցնցուեցաւ բոլոր: — Չար

սատանայ, — բացազանչեց: — Ինձի՛ կ'ուզղեն: — Գնդակը քովէն անցեր էր:

— Վար իջի՛ր, — ըստ սպան, ուժգին, և զայն ըղթով:

— Իսկոյն կ'իջնեմ, — պատասխանեց տղան: — Սակայն ծառը զիս կը պատսպարէ, մի՛ տարակուսիր: Չախակողմը կ'ուզե՞ս գիտնալ:

— Չախակողմը, — պատասխանեց սպան. — բայց իջի՛ր:

— Չախակողմը, — գոչեց տղան, իրանն այն կողմն երկնյնեղով, — մատրան մը բով, կարծես կը տես.....:

Երբորդ կատաղի շչին մը բարձրէն անցաւ, և գրեթէ նոյն բոպէին տեսան որ տղան վար կու գար, մերթ բունին մերթ ճիւղերուն զարնուելով, և յետոյ գլխիփայր և բազկաբաց գահավիժեցաւ:

— Անէ՛ծք, — գոչեց սպան, վազելով:

Տղան թիկունքին վրայ գետին ինկաւ, և թևերը բաց, յորսայս, տարածուած մնաց. արեան փտակ մը կը հոսէր ձախակողմեան կուրծքէն: Յիսնապետն ու երկու զինուոր ձիէն վար ցատկեցին. սպան ծռեցաւ և տղուն շապիկը բացաւ. գնդակը ձախ թռքին մէջ մտած էր: — Մեռած է, — բացազանչեց՝ սպան: — Ո՛չ, կ'ապրի, — պատասխանեց յիսնապետը: Ո՛հ, խեղճ տղայ, քաջ տղայ, — գոչեց սպան. — քաջասիրտ եղի՛ր, քաջասիրտ: — Սակայն, մինչդեռ քաջասիրտ կ'ըսէր և թաշկինակը վերքին վրայ կը սեղմէր, տղան աչքերը չորս կողմը շրջեց և գլուխը վար ձգեց:

մեռած էր: Սպան գոյնը նետեց, և վայրկեան մը սևեռած զայն գիտեց. — յետոյ անոր գլուխը գետնի վրայ հանգչեցուց. — սաք ելաւ, և կրկին գիտեց. — յիսնապետն ու երկու զինուորներն ալ անշարժ անոր կը նայէին. — իսկ միւսները գէպ ի թշնամին դարձած կեցեր էին:

— Խեղճ տղայ, — կրկնեց արբուժեամբ ըսպան: — Խեղճ և քաջ տղայ:

Յետոյ անակին մտեցաւ, եռագունեան գրօշք պատուհանէն հանեց և իբրև սոց պատմուճան՝ տարածեց զայն պղտիկ մեռեալին վրայ, երեսը միայն բաց թողլով: Յիսնապետը մեռելին քով հաւաքեց իր կօշիկները, գլխարկը, գաւազանիկն ու դանակը:

Վայրկեան մ' ևս լուս կեցան. յետոյ սպան յիսնապետին դարձաւ ու ըստ. — Մեռելակառքը զրկենք որ առնու. զինուորի մը պէս մեռաւ, զինուորները թո՛ղ թաղեն: — Այս ըսելով, ձեռքով համբոյր մ'ուզղեց մեռելոյն և գոչեց. — Աշտանակենք: — Ամէնքը հեծան, վաշար միացաւ ու ճամբայ ելաւ:

Եւ քանի մը ժամ՝ վերջ՝ պղտիկ մեռեալը պատերազմական շքով պատուուեցաւ:

Արևը մարը մտնելու մօտ, բոլոր իտարական յառաջապահ գիծը գէպ ի թշնամին կը յառաջանար, և մի և նոյն ճանապարհով ուակից առաւօտեան հեծերագորաց վաշան անցած էր՝ յառաջ կը քալէր երկու գծի վրայ՝ ստուար արձակամարտներու գումարտակ մը, որ քիչ օր առաջ, արիւթեամբ Սան Մարթինոյի բլուրն իր ա-

րեամբ ուղղամ էր: Պատանույն մահուան գոյժն արգէն տարածուած էր զինուորաց մէջ՝ իրենց բանակաշարժէն առաջ: Առուակով մ'եղերուած ճանապարհը, սունէն քանի մը քայլ միայն հեռուէն կ'անցնէր: Երբ գումարտակի առաջին սպաները՝ փոքրիկ դիակը հացենիին տակ տարածուած և եռագունեան գրօշով ծածկուած տեսան, սուիններով ողջունեցին զայն. և անոնցմէ մին ծուեցաւ առուակին եզերքը, որ բոլոր ծաղկած էր, երկու հաս քաղեց ու անոր վրայ նետեց: Այն



ատեն բոլոր արձակագորքերն որ հետզհետէ կ'անցնէին, ծաղիկներ քաղեցին և մեռելին վրայ նետեցին: Քանի մը վայրկենէն աղան ծաղիկներով ծածկուեցաւ, և սպայ ու զինուոր ամէնքն ալ անցներու ժամանակ կ'ողջունէին զայն. — կեցցես,

փոքրիկ Լոմպարտացի: — Մ'ան բարեաւ, պատանի: Առ քեզ, շիկահե'ր մանուկ: — կեցցես: — Փառք: — Մ'ան բարեաւ: — Սպայ մ'իր պատուոյ մետախն անոր նետեց, ուրիշ մը գնաց ճակատն համբուրելու: Եւ ծաղիկներն անձրևի պէս իր մերկ ոտքերուն, արիւնտտ կուրծքին, խարտեաչ գլխուն վրայ կը տեղային: Իսկ ինք, հոն խոտերուն մէջ կը ննջէր՝ իր գրօշին մէջ փաթթուած, սպիտակ ու գրեթէ ժպտուն գէմքով, խեղճ աղան, իբրև թէ այն ողջոյնները լսէր, և գոհ եղած ըլլար՝ իր կեանքն իր Լոմպարտիային նուիրած ըլլալուն համար:

## ԱՂՔԱՏՆԵՐԸ

29. Երեքշաբթի

Կեանքը տալ հայրենիքին համար, ինչպէս Լոմպարտացի պատանին, մեծ առաքիւնոչիւն մ'է. բայց դո՛ւ, որդեակ, փոքրիկ առաքիւնոչիւնները զանց չընես: Այս առաջուտ, առջևես քայելով, երբ դպրոցէն կը վերադառնայիք, աղքատ կենց մը քոյիկն անցար, որ ծռակերան վրայ տատապեալ ու տժգոյն մանուկ մ'ունէր, և քեզմէ որդրնոչիւն խնդրեց: Գոռ հայեցար և շան մը չտուիր անոր, րէ և գրպանդ դրամ ունէիր: Լսէ՛, որդեակ: Մի՛



վարժիր անտարբեր անցնիլ բշտառարեան առջեկն որ  
 ձեռքը կը կարկառե, ևս առաւել մօր մ' առջեկն որ իր  
 որդոյն համար դրամ կը խնդրէ: Մտածե՛ր թէ գոչե՛ այն  
 մանուկն անօրի էր, մտածե՛ այն կեղծ տանջանքը: Երևա-  
 կայե՛ մօրդ յոսանաւտ հեծեմանքը, ևրբ օր մը հարկա-  
 դրուելու ըլլայ թեզ ըսել. — Հներիկո՛ւ, այսօր թեզի և  
 ոչ իսկ հաց կրեամ տալ: — Երբ ևս մուշակիկի մը դրամ  
 կու տամ և ինք ինծի կ'ըսէ, — Աստուած գրեզ և քո  
 տղեկներդ ողջ պահէ, — դու չես կրնար ըմբռնել թէ  
 ի՛նչ քաղցրութիւն կը պատճառէն արտիս այն խօսքերը,  
 ի՛նչ երախտագիտութիւն կը զգամ հանդէպ այն աղքատիկ:  
 Իրաւջնէ, ինծի ա՛յնպէս կը բռնի թէ այն բարեմտադրու-  
 թիւնը՝ երկար ժամանակ գիրենք ողջ պիտի կարենայ պա-  
 հել, և ցո՛ւ տուն կը վերադառնամ ու կը մտածեմ .  
 Մհ, այն աղքատը՝ իրեն տոշածես աւելի՛ն ինծի հատոյց:  
 Ոչրեմն ըրե՛ որ ևս ալ երբեմն քո միջոցովդ, քո արժանի-  
 քովդ ստացուած այն բարեմտադրութիւնները ըսեմ. մերք ըր-  
 ամիկդ դրամ մը հանե՛ անկեցոյն ձերունեոյ մը, հացի կա-  
 րօտ մօր մը, անհայր մանկան մը ձեռքերուն մէջ դնելու  
 համար: Աղքատները տղոց ողորմութիւնը կը սիրեն, որով-  
 հետե գիրենք չնուստացներ, և որովհետե տղաք ալ ամեն  
 բանի պետք ունենալով՝ իրենց կը եմանին. կը տեսնես  
 որ միշտ դպրոցներու չորս կողմերը աղքատներ կ'ըլլան:  
 Մարդու մ'ողորմութիւնը՝ գրոշրեան գործ մ'է. սակայն  
 մանկան մ'ողորմութիւնը՝ միանգամայն է գործ գրոշրեան  
 և գործ սիրոյ. կը հասկնամ: Այնպէս է, իբրև թէ միան-  
 ցամայն ձեռքեղ դրամ մը և ծաղիկ մ'իյնար: Մտածե՛  
 թէ թեզի բան չպակտիր, իսկ իրենց ամեն բան կը պակ-  
 սի. միևնչեւ դու կ'ոչես երջանիկ ըլլալ, իրենց կը  
 բռնէ չմեռնիլ: Մտածե՛, ի՛նչ սուսկայի բան է, որ ա՛յն



չափ պարստներու  
 մեղանդ, ա՛յնչափ  
 ձանրաններու վրայ՝  
 ուսկից կուտքեր ու  
 բռնիչ հագած տղաք  
 կ'անցնին, գտնուի  
 նաև կիներ, մա-  
 նուկներ՝ որ ուտե-  
 լիք չունենան: Ու-  
 տելիք չունենալ,  
 Աստուած իմ: Քե-  
 զի պէս տղաք, թեզի  
 պէս բարի, թեզի  
 պէս խեղացի, որ  
 մեծ քաղաքի մը մէջ  
 ուտելիք չունին,  
 ինչպէս վայրի ա-  
 մէջ: Մհ, երբե՛ք,  
 Հներիկո՛ւ, երբե՛ք մուշակի մօր մը  
 քովէն ջանցնիս՝ ա-

մատուցներ՝ կորտուած անպատի մը  
 մէջ: Մհ, երբե՛ք,  
 Հներիկո՛ւ, երբե՛ք մուշակի մօր մը  
 քովէն ջանցնիս՝ ա-

ՄԱՅՐԴ





## Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր

### ԱՌՈՒՏՈՒՐ ԸՆՈՂԸ

10. Հիմզաբլի



ԱՅՐՍ կ'ուզէ որ ամէն արձակուրդի օր՝ դասընկերներէս մէկը տուն բերեմ, կամ ես անոր երթամ՝ կամաց կամաց ամենուն հետ բարեկամանալու համար: Կիրակի՝ Վօթինիի հետ շրջագայութեան պիտի երթամ, այն սպրիկին՝ որ միշտ վրան գլուխը կը շփէ և Տէրօսի մեծ նախանձորդն է: Այսօր տուն եկաւ արդէն կարօֆին, այն երկայնահասակ ու վտիտ, բուր քթով և մանր ու խորամանկ աչքերով տղան՝ որ կարծես ամէն բան կը գննէ: Դեղավաճառի մ'որդին է: Տարօրինակ մէկը: Միշտ գրպանի զրամները կը համբէ, շուտ

շուտ մատներուն վրայ կը հաշուէ, և ո՛ր և է բազմապատկութիւն առանց պիւթագորեան աղիւսակի կ'ընէ: Եւ կը դիզէ. արդէն դպրոցական խնայողական սրկի մ'ունի: Կը տարակուսիմ որ երբե՛ք զրամ մը ծախսէ, և եթէ ձեռքէն հարիւրորդ մը զրասեղանին տակ իյնայ, կարող է շարաթ մը փնտռելու զայն: Անձեղներու պէս կ'ընէ, կ'ըսէ Տէրօսի: Ինչ որ գտնէ, մաշած ծայրեր, գործածուած նամակաղրոշմներ, գնդասեղներ, մոմերու վազուք, բոլոր կը հաւաքէ: Արդէն երկու տարիէն աւելի է որ նամակաղրոշմ կը հաւաքէ, մեծ տետրի մը մէջ հարիւրաւորներ ունի, ամէն երկրէ, զորս յետոյ գրավաճառին պիտի վաճառէ, երբ բոլոր լեցուի: Հիմա գրավաճառն իրեն ճրի կու տայ տետրակները, որովհետեւ շատ տղաք կ'առաջնորդէ իր խանութը: Դպրոցի մէջ միշտ առուտուր կ'ընէ, ամէն օր առարկաներ կը ծախէ, վիճակահանութիւն, փոխանակութիւն կ'ընէ. յետոյ կը զոջայ ըրած փոխանակութեան վրայ և իր տուածն ետ կ'ուզէ. երկուքի կը գնէ, չորսի կը ծախէ. զրջախաղ կը խաղայ և բնաւ չկորսնցներ. հին օրա-



գիրներ կը ծախէ ծխալաճառին, և տետրակ մ'ունի՝ ուր իր առուտուրը կը նշանակէ՝ որ բոլոր զուամբնեւրով ու բարձուհներով լեցուն է: Գպրոցի մէջ միայն թուաբանութիւն կը սովորի, և եթէ մետալի փափաքի՝ ուրիշ բանի համար չէ՝ եթէ ոչ խամաճիկներու թատրոնին ձրի մուտք ունենալու նպատակաւ: Ես շատ կ'ախորժիմ, շատ կը զուարճանամ: Առուծախ խաղացիւնք ինք ասէն բանի ճիշտ գինը գիտէ, կշիռները կը ճանչնայ, և խանութպաններու պէս շուտով գեղեցիկ թղթէ եղջիւրներ կը շինէ: Կըսէ թէ՝ հագիւ դպրոցն աւարտէ, խանութի մը մէջ նոր ապրանք մը պիտի գնէ, զոր ինք հնարած է: Ետ ուրախացիւր է որ իրեն օտար նամակադրոշմներ տուի, և ինձի ըսաւ թէ՝ հաւաքածոներու համար անոնց իւրաքանչիւրին գինն ի՛նչ է: Հայրս, լրագիր կարդալ կեղծելով, ուշադրութիւն կը գնէր ու կը զուարճանար: Իր գրպանները միշտ ուռած են իր մանր—մունր ապրանքներով, զորս երկայն վերնազգեստով մը կը ծածկէ, և կարծես վաճառականի մը պէս միշտ մտածկոտ ու գործերով զբաղած է: Սակայն բան մը՝ որուն ամենէն աւելի սիրտը կապած է, իր նամակադրոշմի հաւաքածոյն է. անիկայ է իր գանձը, անոր վրայ կը խօսի միշտ, իբրև կարենար անկից մեծ հարստութիւն ձեռք բերել օր մը: Դասընկերները գինը ազահ և վաշխառու կ'անուանեն: Ես չեմ գիտեր: Ձինը շատ կը սիրեմ, ինձի շատ բան կը սովորեցնէ, կարծես մարդ մ'է: Քօրէթթին, փայտավաճառին որդին, կ'ըսէ թէ՝ նա իր մօր կեանքը փրկելու համար իսկ նամակադրոշմներու հաւաքածոյն չտար: Հայրս այս բանիս չհաւատար: — Դեռ զանիկայ մի՛ դատեր, — ըսաւ ինձի, — նա տյղ սաստիկ յարուսն ունի, բայց սիրտ ունի:

## ՄՆԱԳԱՐԾՈՒԹԻՒՆ

Ծ. Երկուշաբթի

Երէկ Վօթինիի և իր հօր հետ Ռիվօլիի ծառուղին շրջագայութեան զացի: Տօրա Կրօսսա ճամբէն անցնելու ժամանակ, Սթարտին տեսանք, այն՝ որ գինը նեղողները կ'աքացէ, որ գրավաճառի մ'ապակափեղկին առջև ցցուած կեցեր էր՝ աչքերն աշխարհազրական տախտակի մը վրայ սեւեռած. և ո՛վ գիտէ որչափ առտենէ ի վեր հոն էր, վասն զի նա ճամբուն մէջ ալ կը սովորի. — ակամայ որջունեց զմեզ, գեղջուկը: Վօթինին մարուր հագուած էր, չափազանց ալ. կարմիր ասղնեգործ մառոքինոյ մուճակներ ունէր, բանուած և մետաքսէ կոճակներով զգեստ մը, սպիտակ կուլքի զըլխարկ մը և ժամացոյց մը: Եւ սիրամարզի պէս կը հպարտանար: Սակայն իր սնապարծութիւնն այս անգամ պիտի չյաջողէր: Բաւական ժամանակ ծառուղւոյն վրայ ընթանալէ վերջ, իր հայրը՝ որ կամաց կը բալէր՝ մեզմէ շատ ետ մնալով, մենք քարէ նստարանի մը վրայ հանգչեցանք՝ համեստօրէն հագուած տղու մը ըով՝ որ յոգնած կը տեսնուէր, և զլուխը կախած կը մտածէր: Մարդ մը, որ իր հայրն ըլլալու էր, ծառերուն ներքև օրագիր կարդալով կ'երթեկէր: Նստանք: Վօթինին իմ և տղուն մէջ տեղ նստաւ: Եւ իսկոյն յիշեց որ մարուր հագուած էր, և ուզեց մերձաւորին զարմանքն ու նախանձն իր վրայ շարժել տալ:

Սէր

Մէկ ոտքը վերցուց ու ըսաւ ինծի. — Սպայի մուճակներս տեսա՞ր: — Այս հարցումն ըրաւ որ միւսն իրեն նայի: Բայց նա կարևորութիւն՝ չտուաւ:

Այն ատեն ոտքը վար առաւ, և ինծի կոճակաձև մետաքսէ ծոպերը ցցուց ու ըսաւ՝ աչքին տակէն տղուն նայելով, թէ այն մետաքսէ ծոպերը ինք չէր սիրեր և կ'ուզէր անոնց տեղ արծաթէ կոճակներ դնել տալ: Սակայն տղան և ոչ իսկ կոճակներուն նայեցաւ:



Այն ժամանակ Վօթինին սկսաւ իր սպիտակ կուղրի ամենագեղեցիկ գլխարկը ցուցամատին ծայրին վրայ դարձնել: Սակայն տղան, կարծես թէ մասնաւոր կ'ընէր, և ո՛չ իսկ գլխարկին ակնարկ մը տալու արժանի համարեցաւ:

Վօթինի որ սկսեր էր զայրանալ, ժամացոյցն հանեց, բացաւ, անիւններն ինծի ցցուց: Բայց միւսը գլուխը

չի դարձուց: — Ոսկեզօծ արծաթ է, հարցուցի իրեն: — Ո՛չ, — պատասխանեց, — ոսկի է: Բայց բոլոր ոսկի պիտի չըլլայ, — ըսի, — մամ մ'արծաթ պիտի ըլլայ: — Բայց ո՛չ, — կրկնեց. և տղան ստիպելու համար որ նայի, ժամացոյցն անոր առջև դրաւ ու ըսաւ. — Դո՛ւ ըսէ, նայէ՛, բոլոր ոսկի է, այնպէս չէ՞:

Տղան չոր ցամաք կերպով պատասխանեց. — Չեմ գիտեր:

— Ո՛հ, ո՛հ, — բացազանչեց Վօթինի, բարկութեամբ լեցուած: — Ի՛նչ հպարտութիւն:

Երբ այս կ'ըսէր, հայրը վրայ հասաւ, ու լսեց. վայրկեան մը սևեռած՝ այն տղուն նայեցաւ, յետոյ ըսաւ որդւոյն. — Լսէ՛. — և ականջին մօտենալով աւելցուց. — Կո՛յր է:

Վօթինի ոտքի ցատկեց սարսուռով մը, և տղուն եւ բերը նայեցաւ: Բիրերն ապակիէ էին, անզգայ և անլոյս:

Վօթինի սրտաբեկ եղաւ, լսեց՝ աչքերը վար առած: Յետոյ թոթովեց.

— Կը ցաւիմ... չէի գիտեր:

Բայց կոյրը, որ ամէն բան հասկցեր էր, բարի և մեղամաղձոտ շեշտով մ'ըսաւ.

— Ո՛հ, բան մը չէ:

Այո՛, անապարձ է. բայց չար սիրտ չունի Վօթինի: Բոլոր շրջագայութեան ժամանակ այլ ևս չծիծաղեցաւ:

## ԱՌԱՋԻՆ ԶԻՒՆԸ

10. Շարաթ

Մնա՞ք բարեաւ, Ռիփօլիի շրջագայութիւններ: Ահա տղոց բարեկամը: Ահա առաջին ձիւնը: Երէկ իրիկուընէ սկսեալ՝ յասմիկի ծաղիկներու պէս լայն լայն ու բարդ բարդ կ'իջնէ: Այս անուս հաճոյք մ'էր տեսնել դպրոցի ապակիներուն վրայ և լուսամտաներուն առջև դիզուելը. ուսուցիչն ալ կը նայէր ու ձեռքերը կը շփէր, և ամէնքն ալ գոհ՝ գնդակ շինելու, անոր յաջորդող սառին և տան կրակին վրայ կը մտածէին: Միայն Սթարտին էր որ կարեւորութիւն չէր տար, բոլորովին իր դասերուն մէջ ընկղմած՝ ձեռքերը քունքին սեղմած: Ինչ գեղեցիկ, ինչ ուրախութիւն եղաւ դուրս ելնելու պահուն: Ամէնքը թնորներն բացած սկսան պոռալով ճամբուն վրայ վազվզել, ափերով ձիւն առնել, և մէջը կոխկոտել, ինչպէս շուները ջուրին մէջ: Գուրսը սպասող ծնողաց հովանոցները ճերմկցիւր էին, նոյնպէս պահապան զինուորաց սաղաւարտները, քանի մը վայրկենէն մեր մախաղներն ալ ճերմկցան: Կարծես ամէնքն ալ ուրախութենէ իրենք իրենցմէ դուրս ելած էին, մինչև իսկ Փրէքօսսին, դարբինին ազան, այն տոգունիկը՝ որ բնաւ չխնդար. Ռօպէթթին, այն խեղճը՝ որ հանրակառքին տակէն մանկիկը փրկեց՝ իր անթացպերով կը ցատկոտէր: Գալապրիացին, որ բնաւ ձիւնի դպած չէր, գնդակ մը շինեց ու սկսաւ գեղձի մը պէս կրծել. Քրօս-

սին, բանջարավաճառի որդին, իր մախաղը լեցուց. և փոքրիկ որմնաղիւրը զմեզ խնդալէ ճաթեցուց՝ երբ հայրս զինք վաղուան համար մեր տունը հրաւիրեց. նա բերանը ձիւնով լեցուցած էր, և չհամարձակելով ո՛չ թընել, ո՛չ կլլել, հոն բերանալից կեցած մեզի կը նայէր ու չէր պատասխաներ: Վարժուհիներն ևս շտապով դուրս կու գային դպրոցէն, խնդալով. իմ նախակրթարանի վարժուհիս ալ, խեղճը, ձեան դէմ կը վազէր, երեսն իր կանաչ քողով պատսպարելով և կը հագար: Մի և նոյն պահուն մերձաւոր բաժնէն հարիւրաւոր աղջիկներ ճչելով քառատրոփ կը վազէին այն սպիտակ գորգի վրայէն, և ուսուցիչները, սպասաւորներն ու պահապան զինուորներն, — Տուներնի՞դ, Տուներնի՞դ, — կ'աղաղակէին՝ ձիւնի բարդեր կլլելով և ընչացքնին ու մօրուքնին ճերմկնալով: Սակայն իրենք ալ կը խնդային՝ աշակերտաց այն ուրախ վիճակին վրայ որ ձմեռը կը տօնախմբէին.....

Գուր ձմեռը կը տօնախմբէր..... Բայց ա՛յնչպիսի տղար կան որ ոչ զգեստ ունին, ո՛չ կօշիկ, ո՛չ կրակ: Հագարաւորներ կան, որոնք գիշերքեկ կ'իջնեն՝ երկայն ձաւքով մը, սառամակիրքեկ տրիշերոջ աճեքերուն մէջ կտոր մը փայտ բռնած՝ դպրոցը տարցնելու համար: Հարիւրաւոր դպրոցներ կան, գրեթէ ձիւներու տակ ծածկուած, սեճաւներու պէս մերկ ու խաւարչտիկ, ուր տղար ծռիւկն կը խորշիկն կամ ցրտէկն ախաւիկն կը կափկափեն, երկիշրայից դիտելով ձիւնիկն սեղեքսեւայի կերպով իչևոյ տարափներն, որ սեղեքսար կը դիզուի իրենց ձեռաւոր խոյիկներուն վրայ՝ հիշելով սպառնալից: Գուր ձմեռը կը տօնախմբէր, տրդա՛ք: Մտածեցէ՛ք հագարաւոր խեղճերու վրայ, որոնց՝ ձմեռը քշուաւորիւն և մահ կը բերէ:

## ՓՈՔՐԻԿ ՈՐՄՆԱԳԻՐԸ

## 11. Կիրակի

Այսօր « Փոքրիկ որմնաղիրը » եկաւ, որսորդի տա-  
րագով, բոլոր իր հօր ձգած՝ դեռ կրով ու գաճով ճեր-  
մակ՝ զգեստները հագուած : Հայրս ինձմէ աւելի կը  
փափաքէր որ նա գար : Ինչ հաճոյք պատճառեց : Հա-  
զիւ ներս մտաւ, ձիւնէն թրջած հնոտի գլխարկը հանեց  
և զրպանը խոթեց . յետոյ յառաջ եկաւ՝ այն իր գոր-  
ծաւորի յոգնած և անհոգ բայլերով՝ խնձորի պէս կլոր  
գլուխն այս ու այն կողմը դարձնելով և գունդ քթով .  
և երբ ճաշարան մտաւ, չորս կողմի կահ կարասեաց  
ակնարկ մը տուաւ ու աչքերն իւղաներկի մը վրայ  
սեւեռելով՝ որ Ռիկոլէթթոյ կուզ միմոսը կը ներկայաց-  
նէր, « ընչապտուկ » մ'ըբաւ : Անկարելի է խնդալը  
բռնել՝ երբ ընչապտուկ կ'ընէ : Սկսանք փայտի շիւ-  
ղերով խաղալ . ինք արտակարգ յարմարութիւն մ'ունի  
աշտարակիկներ ու կամուրջներ շինելու, որոնք կար-  
ծես հրաշքով կը կենան, և ամենայն լրջութեամբ կ'աշ-  
խատի, մարդու մը համբերութեամբ : Աշտարակիկները  
շինելու ժամանակ՝ իր ընտանեաց վրայ խօսեցաւ . ձե-  
զունի մը մէջ կը բնակին, իր հայրը գիշերային դպրոց-  
ներ կը յաճախէ՝ կարգալ սովորելու համար, մայրը  
պիէլլացի է : Անտարակոյս գինք շատ պէտք են սիրել,  
վասն զի թէ և աղքատին հագուած է, բայց ցրտէն  
լաւ պատսպարուած, զգեստը մաքուր կարկտնուած, և

փողկապը մօր ձեռքով կոկիկ հանգուցուած է : Իր հայ-  
րը, ըսաւ, յաղթանդամ մարդ մ'է, հսկայ մը, որ հազիւ  
դաներէն կ'անցնի . բայց բարի է և իր որդւոյն միշտ  
« ընչապտուկ » կ'ըսէ . որդին, ընդ հակառակն, փոքրիկ  
է : Ժամը չորսին մեզի հետ ճաշեց հացով ու չամիչով՝  
բազմոցին վրայ նստած, և երբ ելանք, չեմ գիտեր  
ինչու, հայրս չուզեց որ մաքրեմ բազմոցի թիկունքը  
զոր փոքրիկ որմնաղիրը ճերմկացուցեր էր իր զգեստով .  
ձեռքս արգիլեց, և յետոյ ծածուկ ինք մաքրեց : Զբօսելու  
ժամանակ, փոքրիկ որմնաղիրն որսորդի զգեստին մէկ կո-  
ճակը փրթաւ, և մայրս զայն կարեց, և ինք ամչցաւ և  
զարմացած ու շփոթած՝ շունչը բռնած կեցաւ անոր  
կարելուն նայելով : Յետոյ իրեն ծագրանկարներու պատ-  
կերատետրակներ ցոյց տուի, և ինք առանց զանոնք  
տեսած ըլլալու, այն դէմքերն այնպէս կը ձևացնէր, որ  
հայրս ալ կը ծիծաղէր : Երբ մեկնեցաւ, այնչափ գոհ  
էր որ մոտցաւ հնոտի գլխարկը գլուխը դնելու, և սան-  
դուխին գլուխը հասնելով, ինձի երախտագիտութիւնը  
յայտնելու համար՝ ընչապտուկ մ'ալ ըբաւ : Անունն Ան-  
թօնիոյ Ռապուէլըն է, ութ տարեկան և ութ ամ-  
սուան.....

Գիտե՛ս, որդե՛ս, ինչու՞ չուզեցի որ բազմոցը մաքրեւ :  
Որովհետեւ դատրեկերոջ առջև զայն մաքրելը, աշտոտած  
ըլլարուն հաւար գրեթէ զիկը յանդիմանել մ'էր : Եւ այս  
բաւ չէր ըլլար, ետի՛ որ ինք կամաւ չէր ըրած, երկրորդ՝  
որ իր հօր զգեստով ըրած էր, որ աշխատուեալ ժամա-  
նակ աշտոտեր էր . և ինչ որ աշխատելով կ'ըլլայ՝ աղտե-  
ղութիւն չէ, փոշի է, կիր է, շնարակ է, և որ ըստ կար-  
գի, բայց ո՛չ աղտեղութիւն : Աշխատութիւնը չաղտեղեր :

Երբե՛ք աշխատուրեկ դարձող գործատրի մը համար չըսես, — Այտառ է: — Պետք ես ըսել, — իր զգեստին վրայ աշխատուրեկս ելանկերը, հետքերը կան: Ասիկայ միտքդ պահէ՛: Սիրե՛ փոքրիկ որմնադիրը, ետի՛ որ դասընկերդ է, երկրորդ՝ որ գործատրի մ'որդիս է:

ՀԱՅՐԻ

## ՉԻՒՆԱԳՆԳԱԿ ՄԸ

16. Ուրբաթ

Միշտ կը ձիւնէ, ու կը ձիւնէ: Այս առառ դպրոցէն ելնելու ժամանակ՝ տխուր դէպք մը պատահեցաւ: Տղոց խումբ մը, հազիւ պողոտան ելան, սկսան ձիւնագնդակ խաղալ, այն ջրոտ ձիւնով՝ որ պինդ ու քարի պէս ծանր կ'ըլլայ: Մայթին վրայէն բազմութիւնը կ'անցնէր: Մարդ մ'աղաղակեց, — Դաղրեցուցէ՛ք, ստահակներ, — և ճիշտ այն կէտին ճամբուն միւս կողմէն սուր ճիչ մը լսուեցաւ, և տեսանք որ ծեր մը զլխարկը կորսնցուցած և ձեռքով երեսը գոցած էր ու կը տատանէր, և աղայ մ'իր բով կը գոչէր. — Օգնութիւն, Օգնութիւն: — Իսկոյն ամէն կողմանէ բազմութիւն վազեց: Չիւնագնդակի հարուած մ'առած էր աչքին. բոլոր աղայք նետի պէս սրարշաւ փախան: Ես զրավաձառի խանութին առջև կեցած էի, ուր հայրս մտած էր, և տեսայ որ դասընկերներէս շատերը վազելով եկան և բովս գտնուողներուն հետ խանութեցան և ա-

պակափեղկին նայիլ կեղծեցին: Կային Կարթունքն՝ իր սովորական հացը գրպանը դրած, Քորէթթին, փոքրիկ որմնադիրն ու Կարօֆֆին՝ այն նամակաղորշմներ հաւաքողը: Այս պահուս բազմութիւն մը լեցուած էր ծերունիին շուրջը, և պահապան զինուոր մը և ուրիշ շատեր սպաննալից և հարցնելով հոս ու հոն կը վազվզէին. — Ո՞վ էր, ո՞վ ըրաւ: Դ՞ո՞ւ ես: Ըսէ՛, թէ ո՞վ էր, — և աղոց ձեռքերը կը նայէին թէ ձիւնով թրջած էր: Կարօֆֆին բովս էր. տեսայ որ բոլորովին կը դողդղար, և գէմքը մեռելի պէս ճերմկեցեր էր: — Ո՞վ էր: Ո՞վ ըրաւ, — կ'աղաղակէր շարունակ ամբոխը: — Այն ատեն լսեցի որ Կարթունքն ըսաւ Կարօֆֆին. — Գնա՛, շուտ, ներկայացիր. վատութիւն է թողուլ որ ուրիշ մը բռնուի: — Բայց ես կամաւ չըրի, — պատասխանեց Կարօֆֆի, տերևի մը պէս դողդղալով: — Հոգ չէ՛, բու պարտքդ ըրէ՛, — կրկնեց Կարթունք: — Բայց ես սիրաչեմ ընեք: — Մի՛րտ ըրէ, ես հետդ կու գամ: — Եւ պահապան զինուորն ու միւսները կ'աղաղակէին աւելի ուժով. — Ո՞վ էր: Ո՞վ ըրաւ: Ակնոցին մէկը աչքը խոթեր են: Կուրցուցեր են: Սրիկաներ: — Կարծեցի թէ Կարօֆֆին գետին պիտի գլորէր: — Եկո՛ւր, — ըսաւ իրեն Կարթունք՝ կտրուկ կերպով, — ես զքեզ կը պաշտպանեմ, — և մէկ թեկն բռնելով առաջ մղեց, հիւանդի մը պէս վեր բռնելով: Բազմութիւնը տեսաւ և իսկոյն հասկեցաւ, և շատերը բռնցիարարձ մտեցան: Բայց Կարթունքն մէջ տեղ մտաւ՝ գոչելով. — Տասն հոգուով սղո՛ւ մը վրայ կու գաք: — Այն ատեն անոնք ետ կեցան, և պահապան զինուոր մը Կարօֆֆին ձեռքէն բռնեց, և բազմութիւնը ճեղքելով՝ անուշավաճառի մը խանութը մտցուց, ուր վիրաւորեալը պատսպարած էին:

Չայն տեսնելով, իսկոյն ճանչցայ ծեր պաշտօնեայն՝ որ մեր տան չորրորդ յարկը կը բնակի իր թոռնիկին հետ։ Աթոռին վրայ նստած էր՝ աչքին վրայ թաշկլինակ մը դրած։ — Կամաւ չըբի՛, — կ'ըսէր Կարօֆֆի հեծկլտալով և երկու ղէն կիսամեռ, — Կամաւ չըբի։ — Երկու երեք հոգի զինք ուժով խանութին մէջ հրեցին՝ գոչելով։ —



Գլուխդ վար ան։ Թողութիւն խընդրէ՛, — և զայն գետին փռեցին։ Մակայն իսկոյն երկու զօրաւոր բազուկներ զինք վեր բռնեցին, և վճռական ձայն մ'ըսաւ. — Ո՛չ, պարոններ։ — Տեսուչն էր, որ բոլորը տեսած էր։ — Քանի որ քաջասրտութիւն ունեցաւ ինքզինք յայտնելու, — աւելցուց, — ո՛չ որ

իրաւունք ունի զինք նուաստացնելու։ — Ամէնքը լռեցին։ — Թողութիւն ինդրէ՛, — ըսաւ Տեսուչը Կարօֆֆիին։ Կարօֆֆի, դառն արցունքով, ծերուն ծունկերը փաթթուեցաւ, և սա ձեռքերով անոր զլուխը խարխափելով, մազերը շոյեց։ Այն ժամանակ ամէնքն ըսին. — Գնա՛, տղայ, գնա՛, տո՛ւն դարձիր։ — Եւ հայրս զիս բազմութեան մէջէն դուրս քաշեց ու ձամբուն մէջ ըսաւ ինծի. — Հենրիկո՛ս, նման պարագայի մը մէջ պիտի համարձակի՛ս քու պարտականու-

թիւնդ կատարելու, երթալու և յանցանքդ խոստովանելու։ — Ես, այո՛, պատասխանեցի։ — Եւ ինք. — Սիրտ ու պատիւ ունեցող տղու մը խոստումը տո՛ւր ինծի թէ պիտի ընես։ — Խօսք կու տամ, հայր իմ։

## ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐԸ

17. Շարաթ

Կարօֆֆին այսօր երկիւղալից կը սպասէր որ ուսուցչէն մեծ յանդիմանութիւն մը լսէ. բայց ուսուցիչը չերեցաւ, և որովհետև փոխ ուսուցիչն ալ չկար, Գրօմի տիկինն եկած էր դաս տալու, որ վարժուհիներէն ամենէն տարեցն է և երկու մեծ զաւակներ ունի և շատ մ'օրիորդներու կարգալ ու զրեկ սովորեցուցեր է, որոնք հիմա Պարէթթիի դպրոցը կու գան իրենց որդիներն առնելու։ Տխուր էր, այսօր, որովհետև մէկ որդին հիւանդ էր։ Հազիւ զինք տեսան՝ սկսան աղմուկ հանել։ Քայց ինք ծանր ու հանդարտ ձայնով ըսաւ. — Յարգեցէ՛ք սպիտակ մազերս, ես միայն վարժուհի մը չեմ, մայր մ'եմ. — և այն ատեն ո՛չ որ համարձակեցաւ այլ ևս խօսելու, և ոչ իսկ այն պղնձերես Փրանթին, որ գոհ եղաւ՝ ծածկապէս զայն ծաղրելով։ Քրօմիի դասարանը զրկուեցաւ Տէլքաթին, երբօրս վարժուհին, իսկ Տէլքաթին տեղ՝ այն զոր «մարապետիկ» կը կոչեն,



որովհետև միշտ սև կը հագուի, սև կը ծկալ կը կապէ, և փոքր ու սպիտակ դէմք մ'ունի, մազերը միշտ յարդարուն, աչքերը փալփուն, և ձայնը նուրբ, որ կարծես միշտ կ'աղօթէ : Եւ չհասկցուի՛ր, կ'ըսէ մայրս, այնքան հեզ և երկչոտ է իր այն միապաղաղ ձայնով, որ հագիւ կը լսուի, և չպոտար, չբարկանար երբե՛ք. և սակայն տղաքը հանդարտ կը բռնէ՝ որ ձայներնին չլսուի, ամենէն աւելի չարերը գլուխ կը ծռեն՝ մատնանիշով մը միայն, եկեղեցի մ'է կարծես իր դպրոցը. և ասոր համար է ճիշտ որ զինք «մարապետիկ» կը կոչեն : Սակայն ուրիշ մ'ալ կայ զոր նոյնպէս կը սիրեմ. մանկապարտիզիս երրորդ վարժուհին, այն վարդերես օրիորդը, որ երկու խորշիկներ ունի այտերուն վրայ, և զլիսարկին վրայ մեծ կարմիր փետուր մը, և զեղին ապակիէ փոքր խաչ մը վիզը : Միշտ զուարթ է, դասարանը զուարթ կը բռնէ, միշտ կը ժպտի, իր արծաթափայլ ձայնով միշտ կը պոռայ, որ կարծես կ'երգէ՝ լուսիւն պահել տալու համար զաւազանիկը ստոլին բաղխելով և ձեռքերն իրարու զարնելով. յետոյ երբ կ'արձակուին, աղջկան մը պէս ասոր կամ անոր ետեէն կը վազէ զիբներ կարգի դնելու համար. և մէկուն օձիքը վեր կը բաշէ, միւսին կրկնօցը կը կոճկէ որ չմսին, և մինչև պողոտան միտսին կ'երթայ՝ որպէս զի իրարու մազ չփետեն, կ'աղաչէ ծնողաց որ զիբներ տունը չպատժեն, հազացողներուն անուշահոտ շաքարներ կը բերէ, և մտոյներուն իր ձեռնամուշտակը փոխ կու տայ. և միշտ ամենափոքրներէն կը կըէ՛ որոնք զինք կը սիրեն, իրմէ համբոյր կ'ուզեն՝ իր քօղն ու վերարկուն բաշելով. բայց ինք չարգելուր, զամէնքը կը համբուրէ խնդալով, և ամէն օր հերարձակ և մեր-

կապարանոց տուն կը վերադառնայ՝ հեքոտ ու զոհու թեամբ, իր գեղեցիկ խորշիկներով և կարմեր փետուրով : Աղջկանց զձագրութեան ուսուցիչ ալ է, և իր անձնական աշխատութեամբ մայրն ու եղբայրը կը պահէ :

## ՎԻՐԱՍՈՐԵԱՒԻՆ ՏՈՒՆԸ

18. Կիրակի

Կարմիր փետուր վարժուհւոյն քով է թոռնիկը այն ձերունի պաշտօնէին՝ որուն աչքը կարօֆֆիի ձինագնդակէն վնասուեցաւ. զինք այսօր իր քեռիին տունը տեսանք որ զինք իբրև որդի մը կը ինամէ : Եւ յաջորդ շարթուան ամսօրեայ պատմութիւնը Փրոյսկենացի փոքրիկ գրագիրը գրած աւարտած էի, զոր ուսուցիչն ինծի յանձնած էր օրինակելու, և հայրս ինծի ըսաւ. — Չորրորդ յարկն երթանք, տեսնենք թէ ինչպէս է պարոնին աչքը : — Գրեթէ մութ սենեակ մը մտանք, ուր ձերունին անկողնոյ մէջ էր՝ կոնակը շատ մը բարձեր դիզած. բարձին քով կինը նստած էր, և անկեան մը մէջ ալ թոռնիկն ինքն իրեն կը զուարճանար : Ծերունին աչքը կապած էր : Շատ ուրախ եղաւ հայրս տեսնելուն, զմեզ նստեցուց ու ըսաւ թէ լաւ էր, թէ ո՛չ միայն աչքը կորուսած չէր, այլ թէ քանի մ'օրէն կ'առողջանար : —

Գծրաղղութիւն մ'էր, — աւելցուց. — կը ցաւիմ որ շատ սարսափած պիտի ըլլայ այն խեղճ տղան: — Յետոյ ըսաւ մեզի, թէ այն ժամուն բժիշկը պիտի գար զինք տեսնելու: Ճիշդ այն վայրկենին գանգակը կը գարնէ: — Բժիշկն է, — կ'ըսէ տիկինը: Գուռը կը բացուի...: Եւ զձով կը տեսնեմ: Կարօֆֆին, իր երկայն զգեստով սեմին վրայ կանգնած, գլխիկոր, որ չէր համարձակեր ներս մտնելու: — Ո՞վ է, — կը հարցնէ հիւանդը: — Գնդակը նետող տղան է, — կ'ըսէ հայրս: — Եւ այն ատեն ձերունին. — Ո՞հ, խեղճ տղայ: Յառաջ եկո՛ւր. հիւանդին վրայ տեղեկութիւն հարցնելու եկար, այնպէս չէ: Բայց լա՛ւ է, հանգիստ եղիր, լաւ է, գրեթէ առողջացեր եմ: Հո՛ս եկո՛ւր: — Կարօֆֆի, որ այլալուծենէն զմեզ չէր տեսներ բնաւ, անկողնոյն մօտեցաւ՝ ջանալով որ չլայ, և ձերը զինք շոյեց, բայց ինք չէր կրնար խօսիլ: — Ծնորհակալ եմ, ըսաւ ձերունին, — գնա՛ և ըսէ՛ հօրդ ու մօրդ ալ թէ ամէն բան լաւ է, թո՛ղ այլ ևս չմտատանջուին: — Սակայն Կարօֆֆի տեղէն չէր շարժեր, կարծես բան մը պիտի ըսէր, բայց չէր համարձակեր: — Ի՞նչ պիտի ըսես ինձի, ի՞նչ կ'ուզես: — Ես... ո՛չինչ: — Ծատ լաւ, երթա՛ս բարեաւ, ցտեսութիւն, որդեակ. հանգիստ սրտով գնա՛: — Կարօֆֆին մինչև դուռը գնաց, բայց հո՛ն կանգ առաւ և ետ դէպ ի թոռնիկը դարձաւ, որ իրեն կը հետևէր և հետաքրքրութեամբ զինք կը դիտէր: Յանկարծ վերնազգեստին տակէն բան մը հանելով զայն տղուն ձեռքը կը դնէ, ըսելով իսկոյն. — Քեզի համար է, — և կայծակի պէս կը մեկնի: — Տղան՝ առարկան քեռուոյն կը բերէ, կը տեսնեն որ վրան գրուած է. Ասիկայ քեզի կը նուիրեմ. մէջը կը նային և զար-

մանքի բացագանչութիւն մը կ'ընեն: Իր նամակադրոշմներու հաւաքածոյին տետրակն էր, զոր խեղճ կարօֆֆին բերած էր. այն հաւաքածոյն՝ որուն վրայ միշտ կը խօսէր, որուն վրայ այնչափ յոյս դրած էր, և իրեն շատ քրտինք արժեր էր. իր գանձն էր, խեղճ տղայ, իր արեան կէսն էր, զոր թողութեան փոխարէն նա կը նուիրէր:



## ՓԼՈՐԵՆՏԱՅԻ ՓՈՔՐԻԿ ԳՐԱԳԻՐԸ

(Ամսօրեայ պատմութիւն)

**Մ**ԱՆԿԱՊԱՐՏԻՉԻ չորրորդ տարեշրջանը կը կատարէր: Տասներկու տարեկան շնորհալի փլորենտացի մ'էր, մագերը սե ու դէմքը ճերմակ, երկաթուղոյ պաշտօնէի մ'երէց որդին, որ բազմաթիւ ընտանիք և քիչ ամսաթոշակ ունենալով՝ նեղութեամբ կ'ապրէր: Հայրը զինք կը սիրէր և հետն ազնիւ ու ներողամիտ էր. ամէն բանի մէջ ներողամիտ՝ բայ ի անկէ որ դպրոցի հետ կապ ունէր, որուն նկատմամբ շատ խստապահանջ էր, վասն զի կ'ուզէր որ իր որդին շուտով պաշտօն մը ձեռք բերելու աստիճանին հասնի՝ ընտանեաց օգնելու համար, և շուտով արժանիք մ'ունենալու համար՝ քիչ ժամանակի մէջ շատ պէտք էր աշխատիլ: Թէպէտև սոցան կը սովորէր, սակայն հայրը զինք կը յորդորէր աւելի աշխատելու: Հայրը, արդէն տարիքն առած էր, և չափազանց աշխատութիւնը զինք ժամանակէն առաջ ալ ծերացուցեր էր: Բաւական չէր կարծես այն չափազանց աշխատութիւնը՝ ընտանեաց պիտոյքը հայթայթելու համար՝ զոր պաշտօնն իր վրայ կը ժանրաբեռնէր, սակից անկից դեռ օրինակութիւններ ալ կ'առնէր,

և գիշերուան մեծ մասը գրասեղանին առջև կ'անցնէր: Վերջին անգամ Տարագրատունէ մը, որ բաժնուելիք գրքեր ու օրագիրներ կը հրատարակէր, յանձն առած էր թղթէ երիզներու վրայ բաժանորդներու անուններն ու հասցէները գրելու, և երեք փրանք կը շահէր՝ կանոնաւոր ու խոշոր տառերով գրուած՝ ամէն հինգ հարիւր օրինակի վրայ: Բայց այս աշխատութիւնը զինք կը յոգնեցնէր, և ճաշի ժամանակ՝ ստէպ ասոր վրայ կը գանգատէր ընտանեաց: — Աչքերս կը տկարանան, — կ'ըսէր, — այս գիշերային աշխատութիւնը զիս կը տառապեցնէ: — Որդին օր մ'իւրեն ըսաւ. — Հայր, քու տեղը զիս աշխատցուր, գիտես որ ճիշտ քեզի նման կը գրեմ: — Բայց հայրն իրեն պատասխանեց. — Ո՛չ, որդեակ, դու պէտք ես սովորիլ. քու դպրոցը շատ աւելի կարևոր է քան իմ երիզներս. խիղճ կ'ընեմ՝ քեզմէ ժամ մ'իսկ դողնալու. շնորհակալ եմ, բայց չեմ ուզեր, և ուրիշ անգամ ասոր վրայ չխօսիս ինծի հետ:

Որդին գիտէր թէ իր հօր հետ այն բաներուն վրայ պնդելն աւերորդ էր, ու չպնդեց: Բայց ահա թէ ինչ ըրաւ: Գիտէր որ ճիշտ կէս գիշերին հայրը գրելը կը դադարեցնէր, և փոքրիկ գրասենեկէն կ'ելնէր՝ ննջանալու երթալու համար: Քանի մ'անգամ լսած էր, ճօճանակի տասներկու հարուածները իջնալուն պէս, լսած էր անմիջապէս աթոռին շարժման ձայնն ու հօր գանգաղ քայլերը: Գիշեր մը սպասեց որ նա քնանայ, և ինք զգուշութեամբ հագուեցաւ, խարխափելով գրասենեա-

կը գնաց, քարիւղէ կանթեղը վառեց, սեղանին առջև նստաւ ուր սպիտակ երիզներու դէզ մը և հասցէներու ցանկը կար, ու սկսաւ գրել, ջանալով ճիշտ անոր գրութեան նմանցնել: Եւ կը գրէր յօժարակամ, ուրախութեամբ, քիչ մը վախով, և երիզներն իրարու վրայ կը գիզուէին. և մերթ գրիչը վար կը գնէր՝ ձեռքերը շփելու համար, և յետոյ աւելի զուարթութեամբ կը սկսէր՝ ականջ դնելով, և կը ժպտէր: Հարիւր եօթանասուն հատ գրեց. մէկ ֆրանք: Այն ատեն կեցաւ, գրիչն առած տեղը գրաւ, լոյսը մարեց և սօքի մասնէրուն վրայ անկողին գնաց:

Նոյն կէս օրը, հայրը զուարթ սեղանի նստաւ: Բնաւ բան մը նշմարած չէր: Աշխատութիւնը մեքենաբար կը շարունակէր՝ ժամերու վրայ չափելով և ուրիշ բանի վրայ չմտածելով, ու գրուած երիզները յաջորդ օրը միայն կը համրէր: Ուրախ զուարթ սեղանի նստաւ, ձեռքը ազուն ուսին զարնելով. — Ա՛հ, ձիուլիո՛յ, — ըսաւ, — դեռ ժիր աշխատող մ'է հայրդ, ի՛նչ կը կարծես: Երէկ իրիկուն երկու ժամուան մէջ սովորական աշխատութեան երրորդ մաս մ'աւելի ըրի: Չեռքս դեռ աշխոյժ է, և աչքերս դեռ իրենց պարտաւ կանութիւնը կ'ընեն: — Եւ ձիուլիոյ, գոհ, լուռ, կ'ըսէր ինքն իրեն. «Խեղճ հայրիկ, բաց ի շահէ, իրեն այս սրտի գոհութիւնն ալ կը պատճառեմ, որ կը կարծէ երիտասարդացած ըլլալ: Լաւ ուրեմն, քաջասրտութիւն»:

Ձիուլիոյ յաջորդութեան վրայ քաջալերուած, յաջորդ գիշերը, տասներկու-քը զարնելուն պէս,

գարձեալ ելաւ ու սկսաւ աշխատիլ: Այսպէս ըրաւ շատ մը գիշերներ: Եւ հայրը բնաւ բան մը չէր անդրադարձնար: Մեղամ մը միայն, ճաշի ատեն այսպէս բացազանչեց. — Տարօրինակ բան, քիչ



մը ժամանակէ ի վեր սրչափ քարիւղ կը սպառէ այս տան մէջ: — Ձիուլիոյ ցնցուեցաւ. բայց խօսակցութիւնը յառաջ չգնաց: Եւ գիշերային աշխատութիւնը շարունակուեցաւ:

Միայն թէ, այսպէս ամէն գիշեր քունն ընդհա-

տերով, ճիւղիոյ բաւականապէս չէր հանգչեր, առտու յոգնած կ'երնէր, և երեկոյ դպրոցական աշխատութիւններն ընելով՝ գժուարութիւն կը կրէր աչքերը բաց բռնելու: Գիշեր մը, — կեանքին մէջ առաջին անգամ, — տետրակին վրայ քնացաւ: — Սրթուն, արթուն, — ըսաւ իրեն հայրը, — աշխատէ: — Նա ցնցուեցաւ և սկսաւ աշխատիլ: Բայց յաջորդ իրիկունն ու հետևեալ օրը՝ մի և նոյն բանն եղաւ, և չարագոյնը, գրքերուն վրայ կը մրափէր, սովորականէն ուշ կ'ելնէր, դասերը յոգնած կերպով կ'ընէր, կարծես ուսումէն ձանձրացած էր: Հայրը սկսաւ ուշադրութիւն դարձնել, յետոյ մտառանջիլ, ի վերջոյ յանդիմանել զինք: Այսպիսի բան մը պէտք չէր ընել երբեք, — ճիւղիոյ, — ըսաւ առտու մը, — դու յոյս ի դերև կը հանես, դու այլ ևս այն չես ինչ որ էիր երբեմն: Ասոր չեմ հաւնիր: Նայէ, ընտանեաց բոլոր յոյսը քու վրայ է: Ես տժգոհ եմ, կը հասկնան: — Այս յանդիմանութեան վրայ, որ առաջին անգամ այսպիսի խիստ կերպով կ'ընէր, տղան խռովեցաւ: Եւ «այո՛», — ըսաւ ինքն իրեն, — ստոյգ է. այսպէս յառաջ չերթցուիր. պէտք է որ խաբէութիւնը վերջանայ»: Բայց նոյն իրիկունն իսկ, ճաշի վրայ, հայրը դարձեալ մեծ ուրախութեամբ ըսաւ. — Գիտնա՞ք որ, այս ամիս եւրիզներ գրելով՝ նախորդ ամսէն երեսուներկու ֆր. աւելի շահեր եմ, — և այս ըսելով, սեղանին տաւ կէն ծրար մ'անուշեղէն հանեց, զոր գնած էր՝ իր սրբուոյ հետ աւելցած շահը տօնախմբելու համար, և զոր ամէնքը ծափահարութեամբ ընդունեցան:

Այն ժամանակ ճիւղիոյ սիրտ առաւ, և ըսաւ մըտքին մէջ. «Ո՛չ, խեղճ հայրիկ, զքեզ խաբելէ պիտի չգագրիմ. մեծ ջանքեր պիտի ընեմ՝ օրուան մէջ սովրելու համար, բայց պիտի շարունակեմ գիշերային աշխատութիւնս՝ քեզի և բոլոր միւսներուն համար»: Եւ հայրն աւելցուց: — Երեսուն և երկու ֆրանք աւելի: Գոհ եմ...: Բայց անիկայ է, — և ճիւղիոն ցոյց տուաւ, — որ ինծի տհաճութիւն կը պատճառէ: — Եւ ճիւղիոյ, յանդիմանութիւնը լուծեամբ ընդունեցաւ՝ ներսէն երկու արցունք կլլելով՝ որոնք դուրս կ'ուզէին թափիլ, բայց միանգամայն սրտին մէջ մեծ քաղցրութիւն մը զգարով:

Եւ կորովով շարունակեց աշխատիլ: Սակայն աշխատութիւն աշխատութեան վրայ գալով՝ միշտ աւելի կը գժուարանար իրեն դիմադրել: Գործը երկու ամիսէ ի վեր էր տեղի կ'ունենար: Հայրը միշտ կը կշտամբէր իր որդին և խոժստ աչքով կը նայէր անոր: Օր մը գնաց ուսուցչէն տեղեկութիւն առնելու, որ ըսաւ իրեն. — Այո՛, կ'ընէ, կ'ընէ, վասն զի խելք ունի: Սակայն այլ ևս առաջուան եռանդը կը պակսի: Կը մրափէ, կը յօրանջէ, ցրուած է: Շարագրութիւնները համառօտ կ'ընէ, աճապարանքով, գէշ գեղագրութեամբ: Ո՛հ, կրնայ շատ ընել, շատ աւելի: — Այն իրիկունը հայրն առանձին կանչեց տղան և շատ ծանր խօսքեր զուրցեց, որոնց նման երբեք ուրիշ անգամ ըսած չէր: — ճիւղիոյ, կը տեսնես որ ես կ'աշխատիմ, որ կեանքս կը մոշեմ ընտանեաց համար: Դու ինծի չես օգներ: Դու սիրտ չու-

նիս, ոչ իմ, ոչ եղբայրներուդ, ոչ մօրդ վրայ: — Ո՛հ ո՛չ, այդ մի՛ ըսեր, հայրիկ, — գոչեց տղան յորդ արցունք թափելով, և բերանը բացաւ ամէն բան խոստովանելու համար: Սակայն հայրը զինք ընդհատեց, ըսելով. — Դու բնտանեաց վիճակը կը ճանչնաս. գիտես թէ ամենուս կողմանէ յօժար կամք և զոհողութիւններ պէտք են: Ես ալ, կը տեսնես որ, ստիպուած եմ իմ աշխատութիւնս կրկնապատկելու: Յոյս ունէի թէ այս ամիս երկաթուղոյն կողմանէ հարիւր ֆրանք ձրի պարզեւ մ'ունենամ, և այս առտու իմացայ թէ բան մը պիտի չտան: — Այն լուրին վրայ, ձիուլիոյ ետ կեցաւ խոստովանութենէն, զոր բերնէն հանելու վրայ էր, և հաստատակամ կրկնեց ինքն իրեն. — Ո՛չ, հայրիկ, ես քեզի բան պիտի չըսեմ. գաղտնիքը պիտի պահեմ որ կարենամ քեզի համար աշխատիլ. քեզի պատճառած վիշտս ուրիշ միջոցով կը փոխարինեմ. դպրոցին համար միշտ այնչափ պիտի աշխատիմ որ կարենամ միայն ետ չմնալ. կարեօրն է՝ քեզի օգնել ապրուստ ճարելու համար և զքեզ սպառող աշխատութիւնը թեթեւցնել: —

Եւ շարունակեց, ուրիշ երկու ամիսներ ևս սահեցան գիշերային աշխատութեամբ և ցերեկուան յոգնածութեամբ, որդւոյն յուսահատ ճիգերով և հօր դառն յանդիմանութիւններով: Սակայն գէշն այն էր որ հայրը հետզհետէ որդիէն կը պաղէր, քիչ անգամ հեռը կը խօսէր, իբրև փճացած տըզայ մը՝ ուսկից կարելի չէր այլ ևս յուսալ, և դրեթէ կը զգուշանար որ աչքին չհանդիպի: Եւ

ձիուլիոյ այս բանս կը տեսնէր, ու կը կրէր, և երբ հայրն իրմէ երեսը կը դարձնէր, ինքն անոր ծածուկ համբոյր մը կ'ուզէր՝ գլխալիւր և տխուր զգացումով շրթներն երկարելով, և տառապանաց և ցաւոց մէջ կը վատուժնար ու կը գունատէր, և միշտ աւելի ստիպուած էր ուսումները զանց ընելու: Եւ լաւ կ'ըմբռնէր թէ օր մը պէտք էր վերջ գնել ստոր, և ամէն երեկոյ կ'ըսէր ինքն իրեն. — Այս գիշեր այլ ևս պիտի չեղնեմ. — բայց տասներկու զարնելուն պէս, փոխանակ իր առաջադրութեան վրայ հաստատուն մնալու, կարծես խղճի խայթ մը կը զգար՝ անկողին մնալով, պարտականութեան մը մէջ կը պակսէր, ֆրանք մը կը գողնար իր հօրմէն ու ընտանիքէն: Եւ անկողնէն կ'եղնէր՝ մտածելով թէ գիշեր մը հայրը կրնար արթննալ և զինք բռնել, կամ թէ գուցէ դիպուածով խաբէութիւնը կ'իմանար՝ աշխատութիւնը կրկնապատիկ գտնելով, և այն ատեն ամէն բան ընական ստքով կը վերջանար, առանց իր կամքի ներգործութեան, որ սիրտ չէր ըներ յայտնելու: Եւ այսպէս կը շարունակէր:

Բայց երեկոյ մը, ընթրիքի ժամանակ, հայրը խօսք մ'ըսաւ որ իրեն համար վճռական եղաւ: Մայրն իրեն նայեցաւ, և սովորականէն աւելի գէշ ու սոճոյն տեսնելով զինք, ըսաւ. — ձիուլիոյ, դու հիւանդ ես: — Եւ յետոյ, անձկանօք խօսքը հօրն ուզելով. — ձիուլիոն հիւանդ է: Տե՛ս, ինչպէս սոճոյն է: ձիուլիոն, ինչ կը զգաս: — Հայրը թեթեւ ակնարկ մը տուաւ իրեն, ու ըսաւ. — Անմաքուր խղճմտանքն է որ վատառողջ կ'ընէ

ինք այսպէս չէր, երբ ուսումնասէր աշակերտ ու սրտով ազայ մ'էր: — Բայց հիւանդ է, — բացաւ գանչեց մայրը: — Ալ փոյթս չէ, — պատասխանեց հայրը:

Այն խօսքը դանակի հարուած մ'եղաւ խեղճ ազուն սրտին: Ո՛հ, ալ իրեն փոյթը չէր: Հայրը՝ որ երբեմն միայն իր հազարը լսելով կը գողար: Չինք ալ չէր սիրեր ուրեմն, այժմ տարակոյս չէր վերցնէր բնաւ, ինք մեռած էր իր հօր սրտին մէջ...: Ո՛հ, ո՛չ, հայր իմ, — ըսաւ ազան ինքն իրեն, անձկալից սրտով, — հիմայ իրաւցնէ լմնցաւ, ես առանց քու սիրոյդ չեմ կրնար ազրիլ, գայն ամբողջ կ'ուզեմ, ամէն բան պիտի յայտնեմ քեզի, ալ գրեզ պիտի չխաբեմ, առաջուան պէս պիտի սովորիմ: Ինչ կ'ուզէ թո՛ղ ըլլայ, բաւական է որ դու գարձեայ զիս սիրես, խեղճ հայրս: Ո՛հ, այս անգամ բոլորովին վստահ եմ առաջագրութեանս վրայ:

Սակայն, այն գիշերն ալ ելաւ, աւելի սովորութիւն ըրած ըլլալուն՝ քան ուրիշ բանի համար: Եւ երբ ելաւ, գիշերուան լուսութեան մէջ՝ վերջին անգամ մ'ալ ուզեց ողջունել ու տեսնել քանի մը վայրկեան այն սենեակը՝ ուր ծածուկ այնչափ աշխատեր էր՝ գորովալիբ ու սրտի գոհութեամբ: Եւ երբ գրասեղանին առջև հասաւ վառուած կանթեղով, և տեսաւ սպիտակ երիզներն որոնց վրայ այլ ևս պիտի չկարենար գրել այն քաղաքներուն ու անձանց անունները, զորս արդէն գոց ըրած էր, մեծապէս ախրեցաւ, և թափով մը գրիչը ձեռքն առաւ՝ իր սովորական աշխատութիւնն սկը-

սելու համար: Սակայն ձեռքն երկնցներու ժամանակ՝ գրքի մը զարկաւ, և գիւրքը վար ինկաւ: Արիւնը գլուխը զարկաւ: Եթէ հայրն արթննար՝ իրաւցնէ գէշ գործի մը վրայ զինք պիտի չբռնէր, արդէն ինք միտքը դրած էր ամէն բան յայտնելու և սակայն... մթութեան մէջ լսել այն քայլերուն իրեն մօտենալը. — յանկարծակիի գալն այն ժամուն, այն լուսութեան մէջ. — մայրը՝ որ կրնար արթնցած ու սարսափած ըլլալ, և մտածելը թէ հայրն առաջին անգամ իր առջև պզտիկ պիտի մնար ամէն բան յայտնուելով... այս ամէնը գրեթէ զինք կը ջլատէր: Շունչը բռնած՝ ահանջ գրաւ...: Չայն չլսեց: Կռնակը գտնուած դրան փակահարէն ահանջ գրաւ, ձայն չկար: Բոլոր տունը կը ննջէր: Հայրը լսած չէր: Եւ սկսաւ գարձեայ գրել: Եւ երիզ երիզի վրայ կը գրուէին: Սմայի ճամբուն մէջ պահապան զինուորաց ընդհատ ոտնաձայնը լսեց. յետոյ կառքի ազմուկ մը՝ որ յանկարծ դադրեցաւ. ապա, քիչ վերջ, շատ մը կառքերու գզրոգոցը՝ որ դանդաղաբար կ'անցնէին. յետոյ խոր լուսութիւն մը՝ զոր մերթ ընդ մերթ կ'ընդհատէր հեռաւոր շան մը հաջիւնը: Եւ կը գրէր ու կը գրէր: Այն պահուն հայրն իր ետև կեցած էր. նա իյնող գրքի ձայնէն ելած և յարմար կէտի մը սպասած էր. կառքերուն գզրոգոցներն իր ոտնաձայնն ու դրանց ճոնչիւնը խափանած էին. և հո՛ն էր, — իր սպիտակ գլխով՝ ձիուլիոյի սև գլխուն վրայ, — և տեսեր էր երիզներուն վրայ գրչին սրարչաւ ընթացքը, — և վայրկեանի մը մէջ բոլոր վերջիչած,

բոլոր գուշակած, բոլոր ըմբռնած էր, և յուսահատ զղջումք մը, անհուն գործով մ'իր հոգին լե-



ցուցած, և զինք չնշահեղձ, գամուած՝ իր սրգույն ետև կը բռնէր: Յանկարծ ճիւղից սուր ճիչ մ'արձակեց, — երկու գողգոջուն ձեռքեր իր

գլուխը սեղմած էին: — Ո՛վ հայրիկ, հայրիկ, ներէ՛ ինձի, ներէ՛ ինձի, — գոչեց լալազին հայրը տեսներով: — Գո՛ւ, ինձի ներէ՛, — պատասխանեց հայրը, հեծկտալով և իր ճակատը համբոյրներով ծածկելով, — բոլոր հասկցայ, ամէն բան գիտեմ, ես եմ, ես՝ որ քեզմէ թողութիւն կը խընդրեմ, ո՛վ իմ սրբազան զուակս: Եկու՛ր, ինձի հետ եկու՛ր: — Եւ մղեց զինք, մանաւանդ թէ տարաւ իր արթնցած մօր անկողնոյն քով, և անոր բազկաց մէջ ձգելով, ըստ. — Համբուրէ՛ այս հրեշտականման սրգիդ, որ երեք ամիսէ ի վեր չքնանար և ինձի համար կ'աշխատի, ու ես իրեն սիրտը կը ցաւցնեմ՝, իրեն՝ որ մեզի հաց կը փաստի: — Մայրը զինք գգուեց և սրտին վերայ սեղմեց՝ առանց ձայնը բռնել կարենալու. յետոյ ըստ, — Գնա՛ քնացիր շուտով, սրգեակ իմ, քնացիր և հանգչէ: Մնկողին տար զինք: — Հայրը գրկեց զայն, իր սենակը տարաւ, անկողնոյ մէջ դրաւ, միշտ հեւարով ու փայփայելով և բարձերն ու վերմակը շակեց: — Շնորհակալ եմ, հայրիկ, — կը կրկնէր տղան, — շնորհակալ եմ. բայց հիմայ դու ալ անկողին գնա՛, ես հանգիստ եմ. անկողին գնա՛, հայրիկ: — Բայց հայրը կուզէր զինք քնացած տեսնել, անկողնոյն քով նըստաւ, ձեռքը բռնեց ու ըստ իրեն. — Ննջէ՛, սրգեակ իմ, ննջէ՛: — Եւ ձիւլից, յոգնած, քնացաւ վերջապէս, և երկար ժամանակ՝ ամիսներէ վերջ՝ առաջին անգամ՝ փայլելով հանգիստ քուն մը՝ ժպտուն երազներով զուարթացած, և երբ աչքերը բացաւ, որ արեգակն արդէն շատ ժամա-



նակէ ի վեր կը փայլէր, զգաց նախ և ապա տեսաւ իր լանջքին քով՝ անկողնոյն եղբրքը՝ իր հօր սպիտակ գլուխը, որ գիշերն ի բուն հոն անցուցած էր, և կը քնանար դեռ՝ ճակատն իր սրտին վրայ հանդէսցուցած:

## ԿԱՄԻՐ,

28. Զորհրշարթի

Իմ դասարանիս մէջ Սթարտին կայ, որ կրնայ այն ընել՝ ինչ որ պզտիկ Փլորենտացին ըրաւ: Այս առտու երկու դէպք պատահեցաւ դպրոցին մէջ. Կարօֆֆի ուրախութենէն ինքն իրմէ դուրս ելած էր, որովհետեւ իր հաւաքածոյն իրեն վերադարձուցեր էին՝ վրան աւելցնելով Կուսթէմալայի հասարակապետութեան երեք նամակադրոշմներ ևս, զորս երեք ամիսէ ի վեր ինք կը փնտռէր. և Սթարտին որ երկրորդ շքադրամն ստացաւ: Սթարտին՝ Տէրօսսիէն վերջ դասին առաջինն է: Ամենքը վրան գարմացան: Ո՞վ կը կարծէր երբեք, երբ հայրը հոկտեմբերի մէջ զինք դպրոց բերաւ՝ փաթթուած իր այն կանաչ կրկնոցին մէջ, և ամենուն առջև ըսաւ ուսուցչին. — Շատ համբերութեան կարօտ է, վասն զի ըմբռնողութիւնը շատ տկար է: — Ի սկզբան զինք փայտէ գլուխ կը կարծէին ամէնքը: Բայց ինք ըսաւ. — Կամ կը պայթիմ կամ կը յաջողիմ, — և սկսաւ չարաչար աշխատիլ, գիշեր, ցորեկ, տան մէջ, դպրո-

ցը, շրջագոյութեան ժամանակ, ակռայներն ու բուռը սեղմած, եզան մը համբերատարութեամբ, ջորիի մը յամառութեամբ, և այսպէս միշտ գլոխը ձեծելով, ծաղրածութիւններն արհամարհելով, զինք նեղողներն աքացելով, այն պինդ գլուխը յառաջադիմեց քան զամէնը: Թուարանութենէ բան չէր հասկնար, շարագրութիւնը սխալներով կը լեցնէր, չէր կրնար պարբերութիւն մը միտքը պահել, և այժմ առաջարկութիւններ կը լուծէ, անսխալ կը գրէ, և դասերն եղանակի մը պէս կ'ըսէ երազաբար: Եւ իր երկաթէ կամքը՝ մարմնական կազմէն կը գուշակուի արդէն, այնպէս անհեթեթ, գլուխը քառակուսի և առանց վզի, ձեռքերը կարճ ու խոշոր և ձայնը տգեղ: Նոյն իսկ օրագրի կրտորներէն և թատրոնի ազդերէն բան կը սովորի, և ամէն անգամ որ տամնոց մ'ունենայ՝ գիրք մը կը գնէ, արդէն փոքր գրատուն մը կազմած է, և իր մէկ գուարթ վաւրկենին բերնէն փախուց թէ՛ զիս իր տունը պիտի տանի որ տեսնեմ: Մարդու հետ չխօսիր, մէկուն հետ չխաղար, միշտ հոն գրասեղանին առջև, ձեռքերը բունքին դրած, ապառաժի մը պէս անշարժ, ուսուցչին մտիկ կ'ընէ: Ո՞րչափ աշխատած պիտի ըլլայ, խեղճ Սթարտին: Ուսուցիչն այս առտու իրեն ըսաւ՝ թէ և անհանգիստ էր և մաղձոտ՝ երբ շքադրամը տուաւ. — Կեցցես, Սթարտի. ո՞վ որ կը յարատե՛ կը յաղթէ: — Բայց ինք բնաւ չհպարտացաւ, չժպտեցաւ, և հազիւ շքադրամն առած՝ իր ստոլին առջև գնաց, դարձեալ ձեռքերը բունքերուն դրաւ և առաջինէն աւելի անշարժ և ուշադիր կեցաւ: Սակայն ամենէն գեղեցիկը դրան առջև էր, ուր հայրն իրեն կը սպասէր, — երակահատ մը, — իրեն պէս կոշտ ու կլոր, տգեղ դէմքով ու ձայնով

մարդ մը: Նա չէր սպասեր այդ շքադրամին, և չէր ուզեր հաւատալ, հարկ եղաւ որ ուսուցիչը զինք համոզէ, և այն ատեն սկսաւ ատորժակով խնդալ, և որդւոյն ծոծրակը շօշափեց՝ բարձրաձայն ըսելով. — Բայց կեցցես, սիրելի՛ դուստ, ապրի՛ս, լաւ է, — և ապշած ու ժպտելով երեսը կը նայէր: Եւ շուրջը տղաք կը ծիծաղէին, բաց ի Սթարտիէն: Իսկ ինք, Սթարտին, արգէն երկրորդ օրուան դասերը կ'որոճար խելապատակին մէջ:

### ԵՐԱՒՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

31. Շարաթ

Սրարտի դասընկերոյ իր ուսուցչին վրայ չցանկատիր բնաւ, ասոր վրայ վատան եւ: — Ուսուցիչը դժկամակ էր, անհամբեր էր, — կ'ըսես դու բարկացած շէշտով: Մտածե՛քիչ մը թէ դու ո՛րչափ անհամբերութեան աբարքներ կ'ընես, և որո՞չ դեմ, քո հօրոյ ու մօրոյ դեմ, որոնց նկատմամբ քո անհամբերութեան ոճիր մ'է: Շատ իրաւունք ունի ուսուցիչն երբեմն անհամբեր ըլլալու: Մտածե՛ք թէ այնչափ տարիներ ի վեր տղոց վրայ կ'աշխատի, և երէ անոնց մէջ շատ սիրուն ու սպիւններ ունեցաւ, ամիայն բազմաթիւ սպերախտներ աչ գտաւ, որոնք իր բարեւարտութենէն զեղծան և իր արդիւնքը չձանչցան. և թէ դժբաղդարար մեծաւ մասամբ իրեն աւելի դաւնոտիան քան միխարտութեան կը պատճառէր: Մտածե՛ք, երէ աշխարհիս ամենեւնի աւելի ստոր մարդը՝ իր տեղն

ըլլար, երբեմն կիրք պիտի ելնէր: Եւ յետոյ, երէ գիտնայիր թէ ուսուցիչը քանի՞ցս հիշանդ վիճակով դաս տալու կ'երթայ, միայն՝ որովհետեւ բաւական ծանր հիշանդութիւն մը չէ ինքզինք դասատուութենէ ազատ կոտորեցանք: համար, և անհամբեր է՝ վասն զի կը կրէ, և մեծ ցաւ է իրեն տեսնել՝ որ դուք չէք նկատեր զայն կամ անով կը զեղծանէք: Յարգե՛ք, սիրե՛ք՝ ուսուցիչոյ, որչես'կ: Սիրե՛ք զայն, որովհետեւ հայրոյ զայն կը սիրէ ու կը յարգէ. վասն զի նա իր կեանքը կը գոնէ այնչափ տղոց համար, որոնք զինք պիտի մոռնան. սիրե՛ք, որովհետեւ միտքը կը բաւայ ու կը յաւատարմէ և սիրտը կը կրքէ. վասն զի օր մը, երբ կատարեալ մարդ ըլլաս, և աշխարհի մէջ չցանկանիր ո՛չ եւ, ո՛չ ինք, իր դեմքն իմիկիս նետ յաճախ մտքիդ ստչել պիտի ներկայանայ, և այն ատեն, տե՛ս, իր սիրուն դեմքին ցաւոց և յոգեածութեանց մի քանի արտայայտութիւններ՝ որոնց այժմ ոչ չես դարձներ, պիտի յիշես՝ և քեզի ցաւ պիտի պատճառեն երեսուն տարի վերջն ալ. և պիտի սմչնաս, պիտի տխրիս որ զինք չես սիրած, որ իրեն նետ գեշ վարուներ եւ: Սիրե՛ք ուսուցիչոյ, վասն զի կը պատկանի մանկապարտիգի այն յիսուն հազար ուսուցիչներուն մեծ ընտանիքին, որ բոլոր Խոսալիս ցրտած են, որոնք միջոնաւոր տղոց՝ իբրև մասնաբաժնի հայրեր են, որոնք քեզի հետ կը մեծնան. վաստակաւորներ՝ որոնց յարգը գեշ ձանչցուած և գեշ վարձատրուած են, որոնք մեր ներկայ հայրենիքին յաւազոյն ժողովարդ մը կը պատրաստեն: Ես գոն չեմ այն սիրոյն համար գոր կը տա՞նք իմ վրայ, երէ երբ շուրջ շուրջ այն ամենուն նկատմամբ ալ, որ քեզի բարիք կ'ընեն և որոնց մէջ առաջինն է քո ուսուցիչո՞յ՝ յետ ծնողացոյ: Սիրե՛ք զայն, ինչպէս պիտի սիրէիր իմ մէկ եղբայրս. սիրե՛ք, երբ գրեզ կը գգոն ու երբ

գրեց կը յանդիմանէ, երբ արդար է և երբ քեզի անիրաւ  
կը բռնի, սիրէ՛, երբ սնուչ ու գոշարբ է, և աւելի ևս  
սիրէ՛, երբ գիւնք տխուր կը տեսնու: Սիրէ՛ միշտ գիւնք:  
Եւ միշտ յարգանքով հնչէ այս — ուսուցիչ — սնունդ,  
որ հօր սնունդն յերջ՝ ամենեւն աւելի ազնուական է, աւ  
մենեւն քաղցր՝ զոր կրնայ մարդ ուրիշի մը տալ:

ՀԱՅՐԻ



## Յ Ո Ւ Ն Ո Ւ Ա Ր

## ՓՈՒՍՈՒՍՈՒՅԻԶԸ

4. Զորեքշարթի

**Մ** Ո Ւ Ո Ւ Ն Ք ունէր հայրս. ուսուցիչը սրտնեղ  
էր, վասն զի լաւ չէր. և իրաւցնէ երեք օրէ  
ի վեր իր տեղ փոխ-ուսուցիչը կու գայ,  
այն պզտիկ ու անմօրուան՝ որ կարծես պա-  
տանի մ'է: Այս առտու անախորժ բան մը պատահե-  
ցաւ: Արդէն առաջին և երկրորդ օրն աղմուկ հանած  
էին տղաք դասարանին մէջ, որովհետև փոխ-ուսուցիչը  
մեծ համբերող մ'է, և կ'ըսէ միայն. — Լուս կեցէ՛ք,  
լռեցէ՛ք, խնդրեմ: Բայց այս առտու չափն անցաւ:  
Բզզիւն մը տիրեր էր, որ իր խօսքերն այլ ևս չէին  
լսուեր, և ինք կ'ազդարարէր, կ'աղաչէր. սակայն ա-  
ւելորդ շունչ կը սպառէր: Երկու անգամ Տեսուչը  
դրան առջև տեսնուեցաւ ու դիտեց: Սակայն ինք մեկ-  
նելուն պէս շշնկոցը կ'աճէր՝ վաճառանոցի մը պէս:

Սէր

Կարրօնէ և Տէրօսսի անուշ կերպով իրենց ընկերաց դառնալով կ'ակնարկէին որ հանդարտ կենան, թէ ամօթ էր: Ո՛չ որ մտիկ կ'ընէր: Սթարտի միայն հանդարտ կեցաւ, արմուկը սեղանին վրայ և բռունցքը քունքին դրած, մտածելով գուցէ իր նշանաւոր գրատան վրայ, և Կարօֆֆին՝ այն կտուցաւոր քիթովն ու նամակադրողներ հաւարողը, որ բոլորովին զբաղած էր՝ զբուսանի կազմարի մը վիճակահանութեան համար երկու հարիւրորդով ստորագրուողներուն ցուցակ մը շինելու: Միւսները կը շաղկրատէին ու կը ծիծաղէին, գրասեղաններուն վրայ խոթուած գրչածայրեր կը հնչեցնէին և գուրպաներու առածգական կապերով՝ ծամուած թըղթեր կը նետէին: Փոխ-ուսուցիչը, մերթ մէկուն մերթ միւսին թեէն կը բռնէր ու կը ցնցէր, և անոնցմէ մէկն ալ պատին քով կեցուց. — Ժամանակի կորուստ: Չէր գիտեր այլ ևս ո՛ր սուրբին դիմել, կ'աղաչէր ըսելով. — Բայց ինչո՞ւ այդպէս կ'ընէք, կ'ուզէք որ բռնի յանդիմանութիւն լսեմ: — Յետոյ բռունցքը ստուին կը զարնէր, և բարկութեամբ ու արցունքով կը գոչէր. — Լուսթիւն: Լուսթիւն: Լուսթիւն: — Մարդ կը ցաւէր լսելով զինք: Բայց աղմուկը միշտկ' աճէր: Ֆրանթին թղթէ նետ մ'արձակեց վրան, ոմանք կատուի ձայներ կը հանէին, ուրիշներ կը ծեծկուէին. աննկարագրելի տակնուվրայութիւն մ' էր. երբ յանկարծ սպասաւորը ներս մտաւ ու ըսաւ. — Պարո՛ն ուսուցիչ, Տեսուչն զքեզ կ'ուզէ: — Եւ ուսուցիչն ոտք ելաւ և յուսահատութեան ձև մ'ընելով՝ փութով գնաց: Այն ատեն աղմուկն աւելի ևս սաստկացաւ: Սակայն, յանկարծ Կարրօնէն այլայլած դէմքով ու բռունցքը սեղմած վեր ցատկեց, և բարկութենէն խղղուած ձայնով աղաղակեց. —

Կը բաւէ: Անբաններ: Կը զեղծանիք՝ որովհետև բարի է: Եթէ ոսկրնիդ ջախջախելու ըլլար՝ շուներու պէս սմբած կը կենայիր: Վատերու երամակ մ'էք: Առաջինն



որ դարձեալ անարգանք մ'ընէ իրեն, դուրսն անոր կը սպասեմ և ակռաները կը փշրեմ, կ'երդնում, նոյն իսկ իր հօր աչքին առջև: — Ամէնքը լռեցին: Ո՛հ, ինչ գեղեցիկ էր տեսնել Կարրօնէն, իր բոցավառ աչքերով: Կարծես կատաղի կորին մ'էր: Մէկիկ մէկիկ դիտեց ամենէն յանդուգները, և բոլոր գլուխնին խոնարհեցուցին: Երբ փոխ-ուսուցիչը ներս մտաւ կարմրած աչքերով, շունչ մ'անգամ չէր լսուեր: — Ապշած մնաց: — Բայց յետոյ, տեսնելով Կարրօնէն դեռ բոցավառ և խռովեալ, հասկցաւ, և սիրագեղ շեշտով մ'ըսաւ անոր՝ ինչպէս պիտի ըսէր եղբոր մը, — Ծնորհակալ եմ, Կարրօնէ՛:

## ՍԹԱՐՏԻ ԳՐԱՏՈՒՆԸ

Սթարտին գացի, որ դպրոցի դիմացի տունը կը բնակի, և նախանձեցայ իրաւցնէ՝ տեսնելով իր գրատունը: Հարուստ չէ, չկրնար շատ գիրք գնել. սակայն մեծ խնամքով կը պահէ դասագրքերն ու զանոնք որ ծնողքն իրեն կը նուիրեն, և իրեն տրուած բոլոր գրամները մէկդի կը դնէ ու գրավաճառին քով կը ծախսէ. այս կե պով արդէն փոքր գրատուն մը կազմեր է, և երբ հայրը նշմարեց իր այդ ձգտումը, կանաչ վարագոյրով ընկոյզէ դարան մը գնեց, և բոլոր հատորները գրեթէ իր ախորժած գոյներով կազմել տուաւ: Այսպէս, հիմա ինք չուան մը կը քաշէ, կանաչ վարագոյրը կը բացուի, և երեք կարգ գոյնզգոյն գրքեր կը տեսնուին, բոլոր կարգի դրուած, փայլուն, կողքերուն վրայ ոսկեգօծ վերնագրերով, պատմութեան գրքեր, ճանապարհորդութեան և բանաստեղծութեան հատորներ, նաև պատկերագրող գրքեր: Եւ ինք գոյները շատ լաւ կը դասաւորէ, սպիտակ հատորները՝ կարմիրներուն քով կը դնէ, դեղինները՝ սևերուն քով, կապոյտները՝ սպիտակներուն քով, այնպէս որ հեռուէն տեսնուին ու զեզեցիկ երևնան. և կը զուարճանայ դարձեալ՝ զանոնք տեղափոխելով: Կարծես գրասփետ մ'է: Միշտ իր գրքերուն շուրջն է, անոնց փոշին կը մաքրէ, զանոնք կը թրջթատէ, կազմերը կը դիտէ. տեսնելու բան է թէ ինչպէս զանոնք կը բանայ իր կարճ ու կոշտ ձեւերով,

էջերուն մէջ փչելով. դեռ բոլոր նոր կը տեսնուին: Մինչդեռ ես իմիններս փճացուցեր եմ: Իրեն համար՝ ամէն նոր գիրք որ կը գնէ՝ ուրախութիւն մ'է զայն շտկել, տեղաւորել, և կրկին վար առնել՝ զայն ամէն կողմէն դիտելու և գանձի մը պէս պահելու համար: Ժամուան մը մէջ ալ ուրիշ բան ինծի չցցուց: Շատ կարողալէն՝ աչքերը կը ցուէր: Վայրկեան մը հայրն իր սենեակը մտաւ, որ իրեն պէս կոշտ ու կլոր մէկն է, իրեն պէս մեծագլուխ, և երկու կամ երեք անգամ իր ծոճրակը շօշափեց ու ըսաւ ինծի այն խոշոր ձայնով. — Էհ, ինչ կ'ըսես այս պղնձէ գլխին համար: Զքեզ կը վստահացնեմ թէ ասիկայ գլուխ մ'է՝ որ բան մը պիտի ըլլայ: — Եւ Սթարտի աչքերը կէս մը կը փակէր այն կոպիտ փայփայումին տակ՝ իբրև խոշոր որսական շուն մը: Ես չեմ գիտեր, չէի համարձակեր իր հետ կատակ ընելու. չէի հաւատար թէ ինձմէ տարի մը միայն մեծ ըլլար. և երբ ըսաւ ինծի. — Յտե՛սութիւն, — սեմին վրայ, այն զէմքով որ կարծես միշտ զայրացած է, քիչ մնաց որ իրեն ըսէի. — Յարգանքներս — իբրև մարդու մը: Ասիկայ յետոյ տունը հօրս պատմեցի. — Չեմ հասկնար. Սթարտին հանճար չունի, շարժումները տգեղ են, գրեթէ միմոսի կերպարանք մ'է, և սակայն վրաս տպաւորութիւն կ'ընէ: — Եւ հայրս պատասխանեց. — Որովհետև հաստատամտութիւն ունի: — Իսկ ես աւելցուցի. — Ժամ մ'է որ իր քով կը գտնուիմ, յիսուն իսօք չըսաւ, խաղալիկ մ'ինծի չցցուց, անգամ մը չծիծաղեցաւ. այսու հանդերձ յօժարակամ կեցայ: — Եւ հայրս պատասխանեց. — վասն զի զինք կը յարգես:

## ԳԱՐԲԵՆԻՆ ՈՐԳԻՆ

Այո՛, բայց Փրէքօստին ալ կը յարգեմ, և չափազանց քիչ է ըսել միայն թէ կը յարգեմ. Փրէքօստին, դարբինին որդին, այն փոքրիկ տժգոյնը՝ որ բարի և տխուր աչքեր ունի, և շուարածի դէմը մը. այնչափ երկչոտ՝ որ ամենուն կ'ըսէ. ներողութիւն. միշտ հիւանդագին է և սակայն ուսման շատ կ'աշխատի : Հայրը՝ օղիով հարբած տուն կու գայ և առանց պատճառի զինք կը ծեծէ, զրքերն ու տետրակներն օղը կը նետէ ձեռքի հարուածով մը. և ինք կապուտցած դէմքով դպրոց կու գայ, երբեմն երեսը բոլորովին ուռած և սաստիկ լալէն աչքերը կարմրած : Սակայն բնաւ, երբէ՛ք չէ կարելի իրեն ըսել տալ թէ հայրը զինք ծեծեր է : — Հայրդ զրեզ ծեծե՛ր է, — կ'ըսեն իրեն դասընկերները : Իսկ ինք իսկոյն կ'աղաղակէ. — Սո՛ւտ է : Սո՛ւտ է. — իր հայրը չանպատուելու համար : — Այս թուղթը դու չես այրած, — կ'ըսէ իրեն ուսուցիչը, ցուցնելով իր կիսովին այրած աշխատութիւնը : — Այո՛, — կը պատասխանէ ինք, դողդղացող ձայնով. — ես կրակը ձգեցի : — Եւ սակայն մենք որոշ գիտենք թէ իր գինով հայրն է որ ոտքի հարուածով մը ստոլն ու լոյսը տապալած է՝ մինչդեռ ինք իր դասերը կ'ընէր : Անիկայ մեր տան սանդուղի կողմի վերնայարկի մը մէջ կը կենայ. դռնապանուհին ամէն բան մօրս կը պատմէ : Սիւվիա քոյրս օր մը պատշգամէն իր պոռալը լսեց երբ՝

հայրը զինք սանդուղներէն վար զլորեց՝ որովհետև Քեւրականութիւն գնելու դրամ ուզեր էր : Հայրը կը խմէ, չաշխատիր, և ընտանիքն անօթութենէ կը տառապի : Քանի՛ անգամ է խեղճ Փրէքօստին անօթի կու գայ դպրոց, և ծածուկ հացիկ մը կը կրծէ, զոր կարծօնէ իրեն կու տայ, կամ խնձոր մը՝ զոր կարմիր փետրաւոր վարժուհին՝ իր նախորդ շրջանի ուսուցչուհին իրեն կը բերէ : Սակայն ինք բնա՛ւ չըսեր. — Անօթի եմ, հայրս ինծի ուտելիք չտար : — Հայրը կու գայ երբեմն զինք առնելու. հրը դպրոցի առջևէն կ'անցնի՝ գու՛նատ է, ծունկերը դողողուն, դէմքը դաժան, մազերն աչքերուն վրայ և զլխարկը կողմնակի. և խեղճ տղան բոլոր կը դողզոյցայ երբ ճամբան տեսնէ զայն. սակայն՝ դարձեալ ժպտելով առջևը կը վազէ, իսկ հայրը կարծես զինք չտեսներ և ուրիշ բանի վրայ կը խորհի : Խեղճ Փրէքօստի : Քակուած տետրակները կը կարէ, զրքերը փոխ կ'առնէ դասը սովորելու համար, շապկին պատտած մասերը գնդասեղով կը միացնէ, և կարեկցութիւնը կը շարժէ իր մարմնամարզը տեսնողին՝ այն խոշոր կօշիկներով՝ որոնց մէջ կը լողան ոտները, այն տաբատով՝ որ գետինը կը քսուի, և այն չափազանց լայն զգեստով՝ որուն թեզանիքը մինչև արմուկները կը հասնին : Եւ կ'աշխատի, կը սովորի. առաջիններէն մին կ'ըլլար, եթէ կարենար տան մէջ հանգիստ աշխատիլ : Այս ատու դպրոց եկա՛ւ մէկ այտին վրայ եղունգի նշանով մը, և երբ ամէնքն իրեն կ'ըսէին. — Հայրդ ըրած է, այս անգամ չես կրնար ժխտել, ատիկայ հայրդ ըրած է : Տեսչին իմացու՛ր, որ զինք ոստիկանատուն կանչել տայ : — Բայց ինք, բոլորովին կարմրած ոտք ելաւ և բարկութենէն դողդոցացող ձայն-

նով. — Սո՛ւտ է: Սո՛ւտ է: Հայրս գիս չձեռնէր բնաւ: — Սակայն յետոյ, դասի ժամանակ, իր արցունքները գրասեղանին վրայ կը թափէին, և երբ ո՛ր և է մէկն իրեն կը նայէր՝ կը ջանար ծիծաղիլ որ չանդրադառնան: Խեղճ Փրէքոսսի: Վաղն իմ տունս պիտի գան Տէրօսսին, Քօրէթթին և Նէլլին. կ'ուզեմ իրեն ալ ըսել որ գայ: Եւ կ'ուզեմ նախաճաշն ինծի հետ ընել տալ, իրեն գրքեր ընծայել, տունը տակնուվրայ ընել՝ զինք զուարճացընելու համար, և գրպանը պտուղներով լեցնել՝ անգամ մը գոհ տեսնելու համար զինք, խեղճ Փրէքոսսին, որ այնչափ բարի է և այնչափ արիասիրտ:

## ԳԵՂԵՅԻԿ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ

12. չինգշարթի

Ահաւասիկ ինծի համար տարւոյն ամենէն գեղեցիկ հինգշարթիներէն մին: Ճիշտ ժամը երկուքին Տէրօսսին ու Քօրէթթին տուն եկան՝ սապատող Նէլլին հետ. Փրէքոսսին՝ հայրը չթողուց որ գայ: Տէրօսսին և Քօրէթթին կը ծիծաղէին դեռ, վասն զի ճամբան Քրօսսին՝ բանջարավաճառի որդւոյն հանդիպած էին, — այն մեռեալ բազուկով ու կարմրահեր տղուն, — որ խոշոր կաղամբ մը կը տանէր ծախելու, որուն զրամով յետոյ պիտի երթար գրիչ մը գնելու համար. և բոլորովին ուրախ էր, որովհետև հայրն Ամերիկայէն գրած էր թէ օրէ օր թող իր գալստեան սպասեն: Ո՛հ, ինչ գեղեցիկ



տանայ մ'է, որ միշտ կ'ուզէ ընել, խառնել, գործել: Արդէն առտու կանուխ ուսերուն վրայ կէս սայլ փայտ կըրած էր. սակայն, դարձեալ բոլոր տունը վազվզեց, դիտելով ու միշտ խօսելով, սկիւռի մը պէս աշխոյժ ու

արագ, և խոհանոց գնաց և խոհակերուհիին հարցուց՝  
 թէ բիրազրամ փայտին ինչ կը վճարուի, վասն զի  
 իր հայրը քառասուն և հինգ հարիւրորդի կու տայ:  
 Միշտ իր հօր վրայ կը խօսի, թէ ե՛րբ զինուոր եղաւ  
 49րդ վաշտին՝ Քուսթօզայի պատերազմին ժամանակ՝  
 Ումպերթոյ իշխանի գնդին մէջ, և շատ ազնիւ կերպեր  
 ունի: Հոգ չէ թէ փայտեղէններու մէջ ծնած ու մեծ-  
 ցած ըլլայ. նա իր արեան մէջ՝ սրտին մէջ ունի ազ-  
 նուականութիւնը, ինչպէս կ'ըսէ հայրս: Իսկ Տէրօսսին  
 զմեզ շատ զուարճացուց. նա աշխարհագրութիւնն ու  
 սուցչի մը պէս գիտէ. աչքերը կը փակէր ու կ'ըսէր.  
 Ահաւասիկ ես կը տեսնեմ բոլոր Իտալիան, Ապենի-  
 նեաներն որ մինչև Յոնիական ծովը կ'երկարին, գե-  
 տերն որ ասկից ու անկից կը վազեն, չնշանակուած  
 քաղաքներն ալ, ծովախորշերը, կապոյտ ծոցերը, կա-  
 նաչ կղզիները. և յատուկ անուները կու տար. և  
 տեսնելով զինք՝ այն բարձր գլխով, խարտեաշ գան-  
 զուրներով, փակ աչքերով, բոլորովին կապոյտ հա-  
 զուած՝ ոսկեզօծ կոճակներով, արձանի մը պէս շիտակ  
 և գեղեցիկ, ամէնքը կը զմայլէին վրան: Մէկ ժամուան  
 մէջ գրեթէ երեք էջ գոց ըրած էր, զոր միւս օրը պի-  
 տի արտասանէր՝ Վիթթօրիոյ թագաւորին յուզարկա-  
 ւորութեան տարեդարձին հանդիսին առթիւ: Նէլլին  
 ալ հիացած և գորովալիբ գայն կը դիտէր՝ իր սև կը-  
 տաւէ զոգնոցին քղանցքը շփելով, և ժպտելով իր այն  
 վառվռուն ու տխուր աչքերով: Մեծ հաճոյք պատճա-  
 ռեց ինձի այն այցելութիւնը, մտքիս ու սրտիս մէջ  
 կայծերու պէս բան՝ մը թողուց: Ախորժեցայ դարձեալ,  
 երբ մեկնեցան, տեսնելով Նէլլին այն մեծ և ուժեղ  
 երկուքին մէջ տեղ՝ որ իր թևէն բռնած տուն կը տանէին՝

սաստիկ խնդացնելով զինք, որուն նման իր խնդալն  
 երբեք տեսած չեմ: Ճաշարան վերադառնալով՝ նշմա-  
 րեցի որ Ռիկուէթթոյ կուզ միմոսին իւղաներկը չկար:  
 Հայրս վերուցեր էր, որպէս զի Նելլին չտեսնէր:

## ՎԻԹԹՕՐԻՈՅ ԷՄՄԱՆՈՒԷԼԷԻՆ

### ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԷՍԸ

17. Յունուար

Այսօր, ժամն երկուքին հազիւ դպրոց մտած, ուսու-  
 ցիչը Տէրօսսին կանչեց, որ գնաց և գրասեղանին մօտ  
 մեր առջև կեցաւ, և սկսաւ իր թրթռուն շեշտով ար-  
 տասանել, հետզհետէ իր յստակ ձայնը բարձրացնելով  
 և երեսը գունաւորուելով:

— Չորս տարի առաջ, այսօր, այս ժամուս, Հոովմի  
 մէջ՝ Փանթէօնի առջև կը հասնէր մահակաօքը՝ որ  
 Վիթթօրիոյ Էմմանուէլէ Բ. Իտալիոյ առաջին թագա-  
 ւորին մարմինը կը բերէր, որ մեռած էր՝ քսան և ինչ  
 տարի թագաւորելէ վերջ, որոյ ժամանակամիջոցին՝  
 եօթն նահանգներու բաժնուած և օտարներէ ու բռնա-  
 ւորներէ ընկճուած Իտալական մեծ հայրենիքը՝ անկախ  
 և ազատ Միապետութեան մը վերածուեր էր. քսան և  
 ինն տարի թագաւորութենէ մը վերջ՝ զոր նա երևելի և բա-  
 րերար հանդիսացուց քաջութեամբ, ուղղամտութեամբ,  
 վտանգներու մէջ՝ անյողողողութեամբ, յաղթանակներու



մէջ՝ խոհեմութեամբ, ձախորդութիւններու մէջ՝ հաստատամտութեամբ: Մեռելակառքը, բոլոր Հոովմ շրջելէ վերջ՝ ծաղկանց անձրևի մը տակ, պսակներով բեռնաւորուած՝ կը հասնէր ցաւագին անհուն բազմութեան մը լռութեան մէջ, Իտալիոյ ամէն կողմերէն լեցուած, իր առջև ունենալով սպաներու լեզէոն մը և նախարարներու ու իշխաններու խումբ մը, իսկ իր ետեւէն խեղանդամներու թափօր մը, էրեքհարիւր քաղաքներու ներկայացուցիչներ, զրօշակներու անտառ մը, այն ամէն բան՝ որ ժողովրդեան մը կարողութիւնն ու փառքը կը ներկայացնէ, կը հասնէր շքեղ տաճարին առջև, ուր տապանն իրեն կը սպասէր: Այն վայրկենին տասներկու զրահաւոր զինուորներ դազազը կառքէն հանեցին: Այն բոպէին, Իտալիա, յետին ողջոյնը կու տար իր հանգուցեալ թագաւորին, իր ձերունի թագաւորին՝ զոր այնչափ սիրած էր, հրաժեշտի ողջոյնը՝ իր զինուորին, իր հօր, իր պատմութեան ամենէն աւելի բարեբաղդ և ամենէն աւելի օրհնեալ քսան և ինն տարիներուն: Մեծ և հանդիսաւոր վայրկեան մ'եղաւ: Ամենուն աչքը, ամենուն սիրտը կը բարախէր՝ դազազին և Իտալիոյ բանակին ութսուն վաշտերու սգաւոր զրօշներուն մէջ տեղ, զորս ութսուն սպաներ բռնած էին իր անցքին վրայ շարուած, որովհետև հոն էր Իտալիան, այն ութսուն նշանակներուն մէջ՝ որոնք կը յիշեցնէին այն հազարաւոր մեռեալները՝ արեան հեղեղները, մեր ամենէն աւելի սրբազան փառքերը, ամենէն աւելի նուիրական զոհերը, մեր ամենէն աւելի սոսկալի ցաւերը: Չրահաւոր զինուորներէ տարուած դազազն անցաւ, և այն ատեն ամենքը միասին խոնարհեցան՝ ի նշան ողջոյնի, նոր վաշտերու զրօշները, Կօթիոյ, Փասթրէնկոյի, Սանթա

Լուչիայի, Կոփարայի, Խրիմու, Փալէսթրոյի, Սան Մարթինոյի, Քասթէլֆիտարտոյի, հինաւուրց և պատառոտուն զրօշները, ութսուն սև քողերն ինկան, հարիւր մետալներ արկղին զարնուեցան, և այն հնչիւն ու այլաշփոթ ազմուկը՝ որ ամենուն արիւնը յուզեց, կարծես մարդկային հազարաւոր ձայներու գոչումն եղաւ՝ որ միարբան կ'ըսէին. — Երթան բարեաւ, ազնիւ թագաւոր, քաջ արքայ, հաւատարիմ արքայ: Դու ժողովրդեան սրտին մէջ պիտի ապրիս՝ քանի Իտալիոյ վրայ արեգակը պիտի փայլի: — Յետոյ, դարձեալ զրօշները զէպ ի երկինք բարձրացան, և Վիթթօրիոյ թագաւորը մտաւ շիրմի անմահական փառքին մէջ:

## ՅԲԱՆԹԻ ԴՊՐՈՅԷՆ ԱՐՏԱՔՍՈՒԱԾ

21. Շարաթ

Մէկը միայն կարող էր ծիծաղել՝ երբ Տէրօսի թագաւորին յուղարկաւորութեան ձառը կ'արտասանէր, և Ֆրանթի ծիծաղեցաւ: Ես կ'ատեմ զինք: Չար է: Երբ հայր մը դպրոց կու գայ որդին ամբաստանելու, ինք կ'ուրախանայ. երբ մէկը կու լայ, ինք կը խնդայ: Կարծեսի առջև կը դողայ, և փոքրիկ որմնաղբը կը ձեծէ՝ վասն զի պզտիկ է. Բրօսսին կը չարչարէ՝ վասն զի թեւը կաթուածահար է. Փրէքօսսին կը ծաղրէ՝ զոր ամէնքը կը յարգեն. նոյնպէս կը ծաղրէ Ռօպէթթին, այն երկրորդ դասարանինը՝ որ մանկիկ մ'ազատելուն

համար անթացպերով կը քալէ: Իրմէ տկարագոյնները կը զայրացնէ, և երբ բռնցիկ կու գայ՝ կը կատողի ու կը ջանայ վնասել: Բան մը կայ այն նեղ ճակտին վըրայ, այն պղտոր աչքերուն մէջ՝ զոր գրեթէ միշտ կը ծածկէ իր մոմշորէ գլխարկին տակ՝ որ զմարդ կը քստմնեցնէ: Բանէ մը չվախեր բնաւ, ուսուցչին երեսն ի վեր կը ծիծաղի, եթէ կարենայ՝ կը գողնայ, աներեսաբար կը ժխտէ, միշտ մէկու մը հետ կոռւի մէջ է, զընդասեղներ կը տանի դպրոց՝ քովիններուն խոթելու համար, իր և ուրիշի զգեստներուն կոճակները կը փրցնէ ու անոնցմով կը խաղայ, և իր թղթապանակները, տետրակները, զրքերը բոլոր եզծուած, պատուուած, աղտոտած, քանոնը՝ ատամնաւորուած, զրիչը կերուած, եղունգները կրծուած, զգեստները բծաւից և ըրած կոխներէն բոլոր պատուտած են: Կ'ըսեն թէ մայրը հիւանդ է՝ իրմէ կրած նեղութիւններէն, և թէ հայրը զինք երեք անգամ տնէն դուրս վճռտեր է: Իր մայրը ստէպ տեղեկութիւն հարցնելու կու գայ և միշտ լալով կը մեկնի: Նա կ'ատէ դպրոցը, կ'ատէ դասընկերները, կ'ատէ ուսուցիչը: Ուսուցիչն երբեմն չտեսնել կը կեղծէ իր սրիկայութիւնները, և ինք չարագոյնը կ'ընէ: Փորձեց զինք անուշութեամբ շահիլ, բայց ինք ծաղրի առաւ: Իրեն ամենածանր խօսքեր ըսաւ, և ինք ձեռքերով երեսը գոցեց, իրբև թէ լար, և կը խնդար: Երեք օրուան համար դպրոցէն հեռացուեցաւ, և առաջինէն աւելի տխուր ու լիբը վերադարձաւ: Տէրօսին օր մ'իրեն ըսաւ. — Ա՛յլ ևս կը բաւէ, կը տեսնես որ ուսուցիչը չափազանց կը նեղուի, — իսկ նա սպառնացաւ՝ թէ փորը գամ մը կը մխէ: Բայց այս առտու, վերջապէս, շան մը պէս վճռտուեցաւ: Մինչդեռ ուսու-

ցիչը՝ Սարսեկիացի բմբկահարին՝ յունուարի ամսօրեայ պատմութեան առաջին ձեռքը կարրօնէի կու տար օրինակելու համար, ինք պայթուցիկ մը նետեց յատակին վրայ՝ որ պայթեցաւ և հրացանի հարուածի մը պէս դպրոցը զզրեցուց: Բոլոր դասարանի տղաք խռովեցան: Ուսուցիչն ոտքի ցատկեց և գոչեց. — Պրանթի՛, դուրս ե՛լ դպրոցէն: — Ինք պատասխանեց. — Ես չե՛մ: — Բայց կը ծիծաղէր: Ուսուցիչը կրկնեց. — Դուրս ել: — Չեմ ելներ, — պատասխանեց: Այն ատեն ուսուցիչը զայրացաւ, վրան յարձակեցաւ, թեւէն բրունց՝ սեղանէն դուրս քաշեց: Նա կը տապալակէր, ակուանները կը կրճտէր. սաստիկ բռնութեամբ դուրս հանուեցաւ: Ուսուցիչը գրեթէ անօր ծանրութիւնը գրկած Տեսչին տարաւ, յետոյ մինակ դասարան դարձաւ և գրասեղանին առջև նստաւ՝ գլուխը ձեռքերուն մէջ առած, շնչասպառ, այնպիսի յոգնած ու վշտացած դէմքով մը՝ որ տեսնողին գութը կը շարժէր: — Երեսնամեայ դասախօսութենէս վերջ, — բացազանչեց տխրութեամբ՝ գլուխը շարժելով: Ո՛չ որ կը շնչէր: Զայրութէն ձեռքերը կը դողդոջային, և ճակտի ուղիղ խորշոմնայնպէս խորցեր էր, որ կարծես վէրք մ'էր: Խեղճ ուսուցիչ: Ամէնքը կը կարեկցէին: Տէրօսին ոտք ելաւ ու ըսաւ. — Պարո՛ն ուսուցիչ, մի՛ վշտանար: Մենք զքեզ կը սիրենք: — Եւ այն ժամանակ նա քիչ մը զուարթացաւ և ըսաւ. — Դասը շարունակենք, տղաք:

### ՍԱՐՏԵՆԻԱՅԻ ԹՄԲԿԱՀԱՐԸ

(Ամսօրեայ պատմութիւն)

ՔՈՒՍԹՕԶԱՅԻ ճակատամարտին առաջին օրը, 1848 յուլիսի 25 ին, մեր բանակին հետեակազօր փաշաի մը փաթտունի չափ զինուորներ՝ զրկուած ըլլալով բարձունքի մը վրայ գտնուող միայնակ տուն մը գրաւելու համար, յանկարծակի յարձակում մը կրեցին աւստրիացի զօրաց երկու խումբերէ, որոնք զանազան կողմերէ կարկասհար հըրացանաձգութեան մը բռներով, հազիւ ժամանակ տուին իրենց՝ տան մը մէջ ապաւինելով փութով գոները փակելու՝ յետ քանի մը մտեայ գաշտերուն մէջ թողլու։ Գոները փակելէ վերջ, մերինները ստորին և առաջին յարկերուն լուսամուտները գիծեցին ու սկսան սաստիկ կրակել յարձակողները, որոնք քիչ քիչ մօտենալով կիսաբոլոր շրջանակ մը կազմած՝ քաջութեամբ իրենց կը պատասխանէին։ Խտալացի փաթտուն զինուորներուն կը հրամայէին երկու ենթասպաներ և գնդապետ մը՝ բարձրահասակ, փոխտ, և խիստ ծերունի մը, ճերակ մազերով ու պերևեշաներով, և իրենց հետ կար սարտենիացի թմբկահար մը, տանն և չորս տարեկանէն գրեթէ քիչ աւելի պատանի մը՝

որ հազիւ տաներկու տարեկան ցոյց կու տար, փոքրահասակ, ձիթադոյն, երկու սև խոշոր փայլուն աչքերով։ Գնդապետը՝ պաշտպանութեան կ'առաջնորդէր առաջին յարկի սենեկէ մը, որ հըրամանները հրացանի հարուածներու պէս կ'արձկէր, և իր երկաթէ դէմքին վրայ յու-



զումի ոչ մէկ նշան ցոյց չէր տար։ Թըմբկահարը՝ քիչ մը գունատ՝ բայց սրունքներուն վրայ հաստատուն, ստոյի մը վրայ երած՝ վեղը կ'երկարէր պատին կռթներով՝ լուսամուտէն դուրս նայելու համար. և ծուխերուն ու գաշտերուն մէջէն կը տեսնէր սպիտակ համազգեստներն Աւստրիացոց որ գանդազ յառաջ կու գային։ Տեսակը գահավէժի մը ծայրը շինուած էր, և գառիվայրին վրայ միայն բարձրագիւր լուսամուտ մ'ունէր՝ ձեղունի սենեկի մը համապատասխանող. անոր համար տանայն կողմանէ Աւստրիացիք չէին կրնար բան մ'ընել, և գառիվայրն ազատ էր, կրակը միայն ճակատն ու երկու կողմերը կը հարուածէր։

Սակայն, գոխային կրակ մ'էր, կապարէ գընդակներու կարկուտ մը՝ որ՝ գըսէն սրմբը կը

խրամատէր ու կզմինտրները կը փշրէր, և ներսը՝ ձեղունները, կարասիները, դռներու և պատուհաններու տախտակամածները կը ջախջախէր, օդին մէջ ցրուելով փայտի կտորներ, կիրէ ամպեր, խեցեղէն անօթներու և ապակեղէններու կտորներ, շառաչելով, ոստատելով, ամէն բան խորտակելով դզրգիւնով մը՝ որ գլուխ կը տանէր: Մերթ ընդ մերթ լուսամուտէն նշանառու զինուորներէն մին ետեւը յատակին վրայ կը տապալէր, զոր մէկդի կը քաշէին: Ոմանք ձեռքերնին վերքերնուն վրայ գնելով սենեկէ սենեակ կը փազվեղէին: Խոհանոցին մէջ արդէն մեռեալ մը կար՝ ճակատը ճեղքուած: Թշնամեաց կիսաբոլորը կը սեղմուէր հետզհետէ:

Վայրկեան մը գնդապետը՝ որ մինչև այն ատեն անդրդուելի էր՝ անհանգստութեան նշան մը ցոյց տուաւ, և խոշոր քայլերով դուրս եկաւ սենեկէն՝ յիսնապետի մը հետ: Երեք վայրկենէն յիսնապետն եկաւ և թմրկահարը կանչեց, նշանացի ընելով որ իրեն հետեւի: Տղան փազելով փայտէ սանդուղէ մ'իրեն հետեւեցաւ և միտին մերկ ձեղուն մը մտաւ, ուր տեսաւ որ գնդապետը լուսամուտին յեցած՝ մատիտով թղթի մը վրայ կը գրէր, և իր ոտքերուն տակ՝ յատակին վրայ՝ ջրհորի չուան մը կար:

Գնդապետը ծալեց թուղթը, և սղուն աչքերուն մէջ սեւեւելով իր գորշ ու ցուրտ բիբերը, որուն առջև բոլոր զինուորները կը դողային, ըսաւ խիստ կերպով.

— Թմրկահար:

Թմրկահարը ձեռքը ճակտին տարաւ:

Գնդապետն ըսաւ. — Դու արխատիրա ես:

Տղուն աչքերը կը փայրտակէին:

— Այո, պարոն գնդապետ, — պատասխանեց:

— Հոն, փար նայէ, — ըսաւ գնդապետը, զինք դէպ ի լուսամուտ մղելով, — գաշտին մէջ, վիլլաֆրանքայի տներուն քով սուխններ կը շողան: Հոն մերիններն անշարժ կեցեր են: Առ այս պիտակը, փաթթուէ՛ չուանին, ի՞նչի՞ր լուսամուտէն, կորէ՛ զառիվայրը, գաշտերու մէջէն հասիր մերիններուն քով, և պիտակն առաջին տեսած հարիւրապետիդ տա՛ր: Մէկդի նետէ՛ կամարդ ու մախազդ:

Թմրկահարը կամարն ու մախազը հանեց և պիտակը ծոցը դրաւ. յիսնապետը չուանը դուրս նետեց և երկու ձեռքով մէկ ծայրէն բռնեց, գընդապետն օգնեց սղուն որ լուսամուտէն դուրս ելնէ՝ կոնակը դէպ ի դաշտ դարձուցած:

— Նայէ, — ըսաւ իրեն, — մեր գնդին փրկուած իւրեր քու քաջութենէդ ու սրունքներէդ կը կախուի:

— Վստահ եղի՛ր վրաս, պարոն գնդապետ, — պատասխանեց թմրկահարը, դուրս կախուելով:

— Ծռէ՛, փար ի՞նչո՞ւ ատենդ, — ըսաւ դարձեալ գնդապետը՝ յիսնապետին հետ չուանը բռնելով:

— Մի՛ տարակուսիր:

— Աստուած հետդ ըլլայ:

Քանի մը վայրկենէն թմրկահարը գետինն էր. յիսնապետը վեր քաշեց չուանն ու աներեւոյթ եւ դաւ գնդապետը թափով մը լուսամուտին մօ-

տեցաւ և տեսաւ որ տղան դարեանդէն վար կը սլանար:

Մինչդեռ կը յուսար թէ առանց տեսնուելու պիտի կարենար փախչիլ, երբ հինգ կամ վեց փոքր ամպեր տղուն առջեկէն ու ետեկէն գետնէն վեր բարձրացան, հասկցուեցաւ որ Աւարիացիներէն տեսնուած էր, որոնք բարձունքի գագաթէն անոր կռնակին կ'ուզէին. այն փոքր ամպերը՝ գնդակներու հարուածէն օդ բարձրացած գետնի փոշիներն էին: Սակայն, թմբկահարը վիզը ծռած կը շարունակէր վազել: Յանկարժ՝ գետին սապալեցաւ: — Սպաննուեցաւ, — գոչեց գնդապետը, բուռը խածնելով: Բայց դեռ խօսքը չաւարտած, տեսաւ որ թմբկահարն ոտք ելաւ: — Ո՛հ, պարզ անկում մ'է, — ըսաւ ինքն իրեն, և շունչ առաւ: Այն պահուն, թմբկահարն սկսաւ գարձեալ բոլոր ուժով վազել. բայց կը կազար: — Ոտքի գալարում մը, — մտածեց հարիւրապետը: Քանի մը փոքր ամպեր ևս բարձրացան հոս, հոն տղուն չորս կողմը, սակայն միշտ իրմէ աւելի հեռու: Տղան ազատած էր: Գնդապետը յայթանակի բացազանչութիւն մ'ըրաւ: Սակայն աչքերով սրբտաղօղ անոր հետեւեցաւ, որովհետեւ վայրկեանի մը խնդիր էր, եթէ կարելի եղածին չափ շուտ չի հասնէր հոն, պիտակով, որով անմիջական օգնութիւն կը խնդրէր, կամ բոլոր իր զինուորները կը սպաննուէին, կամ անձնատուր պէտք էր ըլլալ և անանց հետ բանտարկուիլ: Տղան քիչ մը տեղ ուժով կը վազէր, յետոյ կազարով քայլերը կը գանդաղէր, սպա գարձեալ կը սկսէր վազել, բայց

միշտ աւելի յոգնած, և ստէպ կը գլծէր, կանգ կ'առնէր: — Թերեւս սուրացող գնդակ մ'ընդունած է, — մտածեց գնդապետը, և անոր բոլոր շարժումները կը գիտէր դողդաղով, և դայն կը յորդորէր, հետը կը խօսէր, իբրև թէ կարենար լսել, փառվառն աչքերով կը չափչփէր անդադար միջանկեալ տարածութիւնը՝ սրացող տղուն ու շողացող գէնքերուն՝ զորս վարը արեկէն ոսկեղծ ցորենի դաշտերուն մէջ կը տեսնէր: Մի և նոյն ժամանակ կը լսէր ստորին սենեկին գնդակներուն շառաչն ու շշխներ, սպանելու և յիմնապետնելու սաստիկ ու կատաղի աղաղակը, վիրաւորաց սուր սղբը, կահ կարասիներու և պատերու կործանումը: — Օ՛ն, արիացի՛ր, — կը գոչէր, գիտելով թմբկահարը, — յառաջ, վազէ: Կը կենայ անիծուածը: Ո՛հ, գարձեալ կը քայլէ: Սպայ մը հեւարով եկաւ իրեն ըսելու որ թշնամիները սուանց կրակն ընդհատելու, սպիտակ գրօջ մը կը ծածանէին՝ անձնատուր ըլլալ ստիպելու համար: — Պատասխան մի տաք, — գոչեց, առանց ակնարկը տղէն բաժնելու, որ արդէն դաշտին մէջ էր, սակայն, այլ ևս չէր վազեր և կարծես հալիւ կը քաշքշէր ինքզինք: — Բայց քայլէ, վազէ, — կ'ըսէր գնդապետը՝ բուռնցքն ու ակամները սեղմելով. — սասիկէ, մեռի՛ր թշուառական, բայց քայլէ: — Յետոյ սակալի անէծք մը կարդաց: — Ո՛հ, խայտառակ ծոյլ, նստաւ: — Նոյն պահուն, տղան՝ որուն զլուխը մինչև այն տան կը տեսնուէր ցորենի դաշտէն վեր, անյայտացեր էր, իբրև թէ ինկած ըլլար: Բայց վայրկեանէ մը վերջ,

դարձեալ գլուխը դուրս երաւ, ի վերջոյ մացառ-  
ներուն ետև ծածկուեցաւ և գնդապետն այլ ևս  
դայն չտեսաւ :

Այն ատեն վար իջաւ թափով, գնդակները  
կարկուտի պէս կը տեղային. սենեակները վերա-  
ւորներով լեցուած էր, սրանցմէ ոմանք գինովի  
պէս իրենք իրենց վրայ կը դառնային՝ կահ կա-  
րասիներուն մագլցելով. պատերն ու յատակը ա-  
րիւնով ներկուած էին. դռներուն առջև դիակներ  
փռուած էին. տեղակալին աջ բազուկը գնդակէ մը  
ջախջախուած էր. ծուխն ու փոշին ամէն բան կը  
պարուրէին : — Արիւթիւն, — գոչեց գնդապե-  
տը : — Տեղերնիդ պինդ կեցէք, օգնութեան կը  
հասնին : Քիչ մ'ալ արիւթիւն : — Աւտորիացիք  
դեռ աւելի մօտեցեր էին. վարը, ծուխերու մէջ  
անոնց այլափոխուած գէմքերը կը տեսնուէին,  
հրացանաձգութեանց շառաչին մէջ անոնց վայ-  
րենի ազդակները կը լսուէին, որ թշնամիներէն  
անձնատրութիւն կը պահանջէին, կոտորած կը  
սպառնային : Քանի մը զինուոր, սարսափահար,  
լուսամուտներէն ետև կը քաշուէին. յիսնապետ-  
ները զիրենք յառաջ կը մղէին : Սակայն պաշա-  
պանութեան կրակը կը նուազէր, միջատութիւնը  
բոլոր գէմքերուն վրայ կը տեսնուէր, այլ ևս ան-  
կարելի էր դիմադրութիւնը շարունակել : Քանի  
մը վայրկեան Աւտորիացուց հարուածները դա-  
դրեցան, և սրտաացող ձայն մը՝ նախ գերմանե-  
րէն՝ ապա իտալերէն ազդակեց. — Անձնատուր  
եղէք : — Ո՛չ, սրտաց գնդապետը լուսամու-  
տէ մը : Եւ կրակը երկուստեք աւելի խիտ ու ա-

ւելի սաստիկ սկսաւ : Ուրիշ զինուորներ ալ ին-  
կան : Արդէն մէկէ աւելի լուսամուտներ անպաշա-  
պան էին : Աղետաւոր վայրկեանը մօտ էր : Գըն-  
դապետը ակռաներուն մէջ հատկեալ ձայնով կը  
գոչէր. — Չեն հասնիր, — և կատաղօրէն չորս  
դին կը շրջէր, ջղաձիգ ձեռքերով սուրը թեքե-  
լով, մեռներու համակամ : Երբ յիսնապետ մը ձե-  
զունէն իջնելով, գոչեց բարձրաձայն. — Կը հաս-  
նին. — Կը հասնին, — կրկնեց գնդապետն  
ուրախութեամբ : — Այս ազդակին վրայ, ա-  
մէնքը, առողջ, վիրաւոր, յիսնապետ, սպայ՝  
դէպ ի լուսամուտները վազեցին, և դիմադրու-  
թիւնն անգամ մ'ևս սաստկացաւ : Եւ քանի մը  
վայրկենէն՝ վարանում մը և խառնակութեան  
սկզբնաւորութիւն մը տեսնուեցաւ թշնամեաց մէջ :  
Խակոյն, ձեպով, գնդապետը գունդ մը կազմեց  
ստորերկրեաց սենեկին մէջ, սուխները հրացաննե-  
րուն անցուցին՝ դէպ ի դուրս թշնամուցն վրայ  
խոյանարու համար : — Յետոյ, դարձեալ վեր թռաւ :  
Հազիւ թէ հասած էր, շտապող ոտքի դարձին  
մը լսեցին՝ ահաւոր կեցցէով մը խառն, և լու-  
սամուտներէն տեսան որ խապացի կրկնածայր  
գլխարկով հրացանակիր զօրաց ահադին վաշտ  
մը ծուխերու մէջէն յառաջ կու գար՝ փորերնուն  
վրայ սողալով, և գլուխներու, ուսերու, կռնակ-  
ներու վրայ դրուած սուսերաց փայլակնանման  
չողիւն մ'օդոյ մէջ. — այն ատեն գունդը գունէն  
դուրս խուժեց՝ սուխները ցած բռնած. — թըշ-  
նամիները վարանեցան, խառնակեցան, փախուստ  
սուին. երկիրը դատարկացաւ, սունն ազատ մը-

նաց, և քիչ յետոյ խտալական երկու հեռակազորաց վաշտեր և երկու թնդանօթներ բարձրավանդակին կ'իջխէին:

Գնդապետը, մնացած զօրքն իր գնդին հետ խառնելով դեռ կուռեցաւ, և վերջին սուինաւոր կուռին մէջ իր ձախ ձեռքը սատաստոյ գնդակէ մը վիրաւորուեցաւ:

Օրը մերիններուն յաղթանակով վերջացաւ:

Սակայն յաջորդ օրը, ճակատամարտը կրկին սկսած ըլլալով, խտալացիք Աւստրիացւոց անհամար բազմութենէն յաղթուեցան, հակառակ քաջարի դիմադրութեան, և քսան և վեցի առտուն ստիպուեցան տխուր կերպով դէպ ի Մինչիոյ նահանջել:

Գնդապետը, թէև վիրաւոր, սակայն իր յոգնած ու լռիկ զօրաց հետ հետիտան քալեց, և երեկոյեան դէմ կօխթոյ հասնելով, Մինչիոյի վրայ, իսկոյն իր տեղակալը փնտուեց, որ թեաքեկ վիճակի մէջ՝ մեր բանակի Անկելանոցը տարուած էր և իրմէ առաջ հոն հասած պէտք էր ըլլար: Եկեղեցի մը ցոյց արուեցաւ իրեն, ուր շուտով պատերազմի հիւանդանոց մը կազմած էին: Ներս մտաւ: Եկեղեցին վիրաւորներով լի էր, որոնք յատակին վրայ երկու կարգ անկողիններու վրայ հանգչեցուցած էին. երկու բժիշկ և բազմաթիւ սպասաւորներ շնչաստառ կ'երթեկէին. և խզուկ աղաղակներ ու հեծութիւններ կը լսուէին:

Հազիւ ներս մտած, գնդապետը կանգ առաւ, և աչքը չորս կողմը շրջեց իր սպան փնտուելու:

Այն բազէին լսեց որ մեկը մօտէն նուազիտ ձայնով գինք կը կանչէր. — Պարոն գնդապետ:

Պարձաւ. թմրկահարն էր:

Մահճակալէ անկողնոյ մը վրայ տարածուած էր, — մինչև կուրծքը պատուհանի կարմիր ու ձերմակ քառակուսիներով վարագուրէ մը ծածկուած էր, — ձեռքերը գուրս. տժգոյն և նիհարցած, սակայն միշտ իր երկու սև գոհարանման բոցափայլ աչքերով:

— Հո՞ս ես, դո՞ւ. — հարցուց իրեն գնդապետը, ապշած, բայց խիստ դէմքով: — Ապրիս, պարտքը կատարեցիր:

— Չեռքէս եկածն ըրի, — պատասխանեց թմրկահարը:

— Վիրաւորուեր ես, — ըսաւ գնդապետը, մերձաւոր անկողիններուն մէջ իր սպան փնտուելով:

— Ի՞նչ կ'ուզես, — ըսաւ տղան, խօսելու քաջաբերուած՝ առաջին անգամ վիրաւորուած ըլլալուն մեծ հաճոյքէն, առանց որուն պիտի չկարենար համարձակիլ բերանը բանալու այն գնդապետին առջև. — բաւական վիզս ծռած վագեցի, սակայն, իսկոյն զիս տեսան: Քսան վայրկեան առաջ կը հասնէի եթէ չիմանային: Բարեբաղդութիւն եղաւ որ իսկոյն պիտակը յանձնելու՝ վերին Հրամանատարութեան գնդապետ մը գտայ: Բայց այն դուռանքէն վերջ՝ տղեկ վայրէջք մ'ունեցայ: Ծարաւէս կը մեռնէի, կը վախնայի որ ալ հասնիմ, բարկութենէս կու լայի, մտածելով որ ամէն մէկ ուշացած վայրկեան՝ մէկ հոգի դէպ ի վեր՝ միւս աշխարհը կ'երթար: Բաւական է, ձեռքէս եկածն

բրի: Գոհ եմ: Սակայն ներեցէք, խնդրեմ, պարոն գնդապետ, արիւն կը կորսնցնէք:

Իրաւցնէ, գնդապետին անխնամ կապուած ձեռքի մատերէն քանի մը կաթիլ արիւն կը հոսէր:

— Կ'ուզե՞ս որ երիզը քիչ մը պնդեմ, պարոն գնդապետ: Մօտեցո՛ւր քիչ մը:

Գնդապետը ձախ ձեռքը տուաւ, իսկ աջն երկընցուց որ տղուն օգնէ հանդոյցը քակելու և կապելու համար. բայց տղան հազիւ բարձէն վեր կեցաւ, գոյնը նետեց և ստիպուեցաւ գլուխը կըրկին հանգչեցնել:

— Կը բաւէ՛, կը բաւէ՛, — ըսաւ գնդապետը զինք գիտելով և երիզապինդ ձեռքն ետ քաշելով, զոր կ'ուզէր նա բռնել. — գու քեզի նայէ՛, փոխանակ ուրիշները մտածելու, որովհետեւ թե՛ թե բաներն ալ անհոյութեամբ կրնան ծանրանալ:

Թմրկահարը գլուխը ցնցեց:

— Բայց դո՛ւ — ըսաւ գնդապետը, ուշադրութեամբ գիտելով, — շատ արիւն կորսնցուցած պիտի ըլլաս, այդչափ տկարանարու համար:

— Շատ արիւն կորսնցուցած, — պատասխանեց տղան՝ ժպտալով մը: — Ի՞նչ արիւն: Նայէ՛:

Եւ մէկ հարուածով ծածկոցը մէկդի նետեց:

Գնդապետը սարսափած քայլ մ'ընկրկեցաւ:

Տղան միայն մէկ սրունք ունէր. ձախը ծունկին վերէն կորուած էր. ազգին արիւնստ լաթերով կապուած էր:

Այն վայրկեանին՝ շապկանց կարծ ու գիրուկ զինուորական բժիշկ մ'անցաւ: — Ո՛հ, պարոն գըն-

դապետ, — ըսաւ, թմրկահարն ակնարկելով, — ահա գժբաղդ գէպք մը. մէկ սրունքը կրնար ու չինչով բժշկուիլ եթէ յիմար կերպով մը բռնադատած չըլլար զայն. սաստիկ բորբոքում մը. հարկ եղաւ իսկ և իսկ կտրել: Ո՛հ, բայց քաջ ... տղայ մ'է, ես կը վկայեմ. արցունք մը չթա-



փեց, ճիկ մը չհանեց: Երբ կ'անգամատէի, կ'երգնում որ խտարացի տղայ մ'ըլլալուն վրայ կը պարծէի: Աստուած վկայ, սքանչելի ցեղ մ'է:

Եւ երագաքայլ մեկնեցաւ:

Գնդապետը խոշոր սպիտակ յոնքերը կնճուտեց, և սկեռած թմրկահարին նայեցաւ՝ վրայի ծածկոցը շտկելով. ապա, գանդադարար, առանց անգրագանարու և միշտ վրան սկեռած՝ ձեռքը տարաւ ու գլխարկը բացաւ:

— Պարոն գնդապետ, — բացազանչեց տղան գարմացած: — Ի՞նչ կ'ընես, պարոն գնդապետ: Ինձի համար:



Եւ այն ատեն՝ խիստ զինուորը՝ որ բնաւ անուշ խօսք մ'ըսած չէր իր հպատակներէն մէկուն, անհուն գորովով լի և քաղցր ձայնով մը պատասխանեց: — Ես ուրիշ բան չեմ, բայց միայն գընդապետ մը. գո՛ւ գիւցազ մ'ես:

Յետոյ գրկաբաց նետուեցաւ թմբկահարին վրայ և երեք անգամ՝ ճակատը համբուրեց:

### ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԷՐԸ

24. Երեքշաբթի

Քանի որ թմբկահարի պատմութիւնը սրտից դպար, դիւրին պէտք էր ըլլայ բեզի, այս առտու, ըստ ընկուշարադրութիւնց. — Իտալիան ինչո՞ւ կը սիրէք: Իտալիան ինչո՞ւ կը սիրեմ: Իսկոյն հարիւրաւոր պատասխաններ միտքդ չեկան: Ես իտալիան կը սիրեմ՝ մասն գի մայրս իտալացի է, մասն գի այն արիւնն որ իմ երակներուս մէջ շրջան կ'ընէ՝ իտալական է, մասն գի իտալական է հողը՝ ուր քաղաքացան մեռեալներ՝ զորս մայրս կու ըսէ և հայրս կը յարգէ, որովհետեւ քաղաքը՝ ուր ծնած եմ, ըզուն՝ զոր կը խօսիմ, գրքերը՝ որոնք զիս կը դաստիարակեն, մասն գի եղբայրս, քոյրս, դասընկերներս, և այն մեծ ժողովուրդը՝ որուն մէջ կ'սպրիմ, և գեղեցիկ բնութիւնը որ զիս կը շրջապատէ, և այն ամեն ինչ զոր կը սիրեմ, կը տեսնեմ, կը սովորիմ, որուն վրայ կը հիսուսեմ՝ իտալական է: Ո՛հ, դու չես կրնար դեռ զգայ այս

սէրը բոլոր: Պիտի զգաս, երբ յարբունս հասնիս, երբ երկար ձամբարդութենէ մը վերադառնարս՝ յետ երկար քաջակայքեան, և առաջու մը շոգեմաշին եզերքը կեցած՝ հորիզոնին վրայ տեսնես հայրենիքիդ մեծ կայքոյտ շեշերը. պիտի զգաս ա՛յն ատեն՝ արցունքի գորովայի և բուռն աշխերուն մէջ՝ որ աչքերդ պիտի ըզնէ և սրտեդ սարսափ մը պիտի կորգէ: Պիտի զգաս ո՛ր և է հեռաւոր քաղաքի մը մէջ, հոգոյ զոյգումով մը՝ որ զբեզ պիտի մղէ դեպ ի անծանօթ գործաւոր մը, որուն քովէն անցած պահուշ ըսած պիտի ըլլաս քու ըզունիդ բառ մը: Պիտի զգաս՝ ցաւայի ու հպարտ ցատումով մը՝ որ առիւնց գրուից պիտի շրջէ, երբ ըսես օտարի մը բերնէն քու հայրենիքիդ նախատուիք: Աշկի սաստիկ պիտի զգաս և աշկի հպարտ այն օրը՝ յորում բշտամի ժողովրդեան մը ս գաւառայիքը հրոյ մրրիկ պիտի յարուցանէ հայրենիքիդ վրայ, և պիտի տեսնես ամեն կողմանէ գեկերու շաշիւնը, ըզնեկներով երիտասարդներու վագրը, հայրերու՝ իրենց որդիները համբուրելը, ըսելով. — Քաջասիրտ եղիք — և մայրերուն՝ առ երիտասարդները հրամեշտի ողջոյնը, գոչելով. — Յաղրեցէք: — Պիտի զգաս զայս իբրեւ երկնային ցեծութիւն մը՝ երբ բարոյն ունենաս տեսնելու քու քաղաքիդ մէջ՝ ցանցառ, յոգեմ, պատառուտուն վաշտերու մուտքը, յարսանակի փայլն աչքերուն մէջ, և գեղակներէն ծռէն ծռէն երած դրօշներով, որոնց հետ տեղորդ՝ անսպառ զօրախումբ մը քաշերու, որոնք ձեռնառ և երիզապիկց գրոշխիկ վեր պիտի բարձրացնեն մոլեցիկ ամբոխի մը մէջ որ գիւրներ ծաղիկներով, օրնուրիւններով և համբոյրներով պիտի ծածկեն: Դո՛ւ այն ատեն պիտի ըմբռնես հայրենիքի սէրը, պիտի ըմբռնես հայրենիքը, Հեկրիկո՛ւ: Ես այնպիսի մեծ և եռիքական

բան մ'է, որ երե օր մ'անոր համար կռուած պատերազմէ մ'ողջամբ վերադարձող տեսնեմ, ողջ տեսնեմ գրեզ, որ իմ հոգիս ու մարմինս եւ, և գիտեամ քե կեանքդ ազատեր եւ՝ որովհետեւ մանուշակ խոշափեր եւ, ևս, բու հայրդ, որ ոչխարեան աղաղակով մը գրեզ կ'ընդունիմ երբ դպրոցէն կը վերադառնաս, եւ գրեզ պիտի ընդունիմ սրտակեզ հեծկրտուչով մը, և այլ ևս պիտի չկարենամ գրեզ սիրել, ու պիտի մեռնիմ այն դաշոյնը սրտիս մէջ:

ՀԱՅՐԿ

## ՆԱԽԱՆՁ

25. Զորեքշարթի

Հայրենիքի շարագրութեան մէջ ալ ամենէն լաւը Տէրօսսիինն էր: Եւ Վօթինին վստահ էր առաջին մետաղն առնելու: Ես կը սիրեմ Վօթինին, թէև քիչ մը սնապարծ ու չափազանց սպրկիկ է. բայց հիմա որ իրեն քովն եմ, կը զայրանամ տեսնելով ինչպէս կը նախանձի Տէրօսսիին վրայ: Եւ կ'ուզէ անոր հետ մըրցիլ, կ'աշխատի. բայց չկրնար, ո՛չ մէկ կերպով, ուրովհետև միւսը զինք տասն անգամ ծախու կ'առնու, ամէն նիւթի մէջ. և Վօթինին մատները կը խածնէ: Գարլոյ Նօպիս ալ անոր վրայ կը նախանձի. սակայն մորթին տակ այնչափ հպարտութիւն ունի, որ նոյն իսկ հպարտութեան համար ցոյց չտար: Վօթինին ընդհակառակն՝ ինքզինք կը մատնէ, տան մէջ թուանիշ-

ներուն վրայ կը զանգաթի, և կ'ըսէ թէ ուսուցիչն աւերաւութիւն կ'ընէ. և երբ Տէրօսսիին անմիջապէս պատրաստ և լաւ պատասխաններ կու տայ հարցումներուն, ինչպէս միշտ, ինք կ'ամպոտի, գլուխը կը կախէ, չլսելու կը զարնէ, կամ կը ջանայ ծիծաղիլ, բայց բռնի ծիծաղ:

Եւ որովհետև այս բանս ամէնքը գիտեն, ուստի, երբ ուսուցիչը Տէրօսսիին կը գովէ, ամէնքը կը դառնան Վօթինիին նայելու, որ թոյն կը կլէ, և փոքրիկ որմնազիրն իրեն ընչապտուկ կ'ընէ:

Այս առտու, օրինակի համար, խայտառակ մնաց: Ուսուցիչը դասարան կը մտնէ և ըննութեան արդիւնքը կ'իմացնէ. — Տէրօսսի տասը տասներորդ և առաջին մետաղ: — Վօթինին ուժով մը փոնգտաց: Ուսուցիչն անոր նայեցաւ. կը հասկցուէր: — Վօթինի, — բաւ իրեն, — մի՛ թողուր որ նախանձու օձը մարմնոյդ մէջ մտնէ. օձ մը՝ որ ըզեզը կը կրծէ և սիրտը կ'ապականէ: Ամէնքն իրեն կը նային, բաց ի Տէրօսսիին. Վօթինի ուզեց պատասխան տալ, չկրցաւ. քար կտրեցաւ, և գոյնը նետեց: Յետոյ, մինչդեռ ուսուցիչը դաս կ'ընէր, թերթի մը վրայ խոշոր տառերով սկսաւ գրել. — Ես չեմ կախաճիր սևոնց վրայ որ պուշտպուտըսամբ և անարդարութեամբ առաջին մետաղը կ'առնու: — Պիտակ մ'էր՝ զոր կ'ուզէր Տէրօսսիին զրկել: Սակայն նոյն պահուն կը տեսնէի որ Տէրօսսիի քովիններն իրենց մէջ բան մը կը նիւթէին՝ ակամջէ ալ կանջ խօսելով, և մէկը զմեզինով թղթէ խոշոր մետաղ մը կը կտրէր, որուն վրայ սև օձ մը գծագրուած էր: Եւ Վօթինին ալ զայն տեսաւ: Ուսուցիչը քանի մը վայրկենէն դուրս ելաւ: Իսկոյն Տէրօսսիի քովիններն

ոտք ելան՝ զրասեղանէն դուրս գալու և թղթէ մետալը հանդիսաւոր կերպով Վօթինի ներկայացնելու համար: Բոլոր դասարանը տեսարանի մը կը պատրաստուէր: Վօթինի բոլոր կը դողար արդէն: Տէրօսի գոչեց. — Ինձի տուէ՛ք ատիկայ: — Այո՛, լաւագոյն է, — պատասխանեցին անոնք, — դու պէտք ես տանիլ: — Տէրօսի մետալն առաւ և կտոր կտոր ըրաւ: Այն բուպէին ուսուցիչը ներս մտաւ, և դասը սկսաւ: Իմ աչքս Վօթինի վրայ էր. — հրաշէկ երկաթ դարձեր էր. կամաց կամաց թերթն առաւ՝ իբրև ցրուածութիւն կեղծելով, ծածուկ գայն բոլորեց, բերանը դրաւ, ծամեց թիչ մը, և յետոյ գայն զրասեղանին տակ թքաւ...: Դպրոցէն ելնելու ժամանակ, Տէրօսի առջևէն անցնելով Վօթինի որ թիչ մ'այլայլած էր, ծծուն թուղթը վար ձգեց: Տէրօսին, ազնիւ, գայն վերցուց և անոր մախաղին մէջ դրաւ, և օգնեց որ փոկը կոճկէ: Վօթինի չհամարձակեցաւ ճակատը վեր առնելու:

## ՅԻՄՆԹԻԻ ՄԱՅԻՐ

28. Շարաթ

Բայց Վօթինի անուղղայ է: Երէկ կրօնագիտութեան դասի ժամանակ, Տեսչին ներկայութեան, ուսուցիչը Տէրօսիին հարցուց թէ գոց գիտէ՞ր ընթերցարանի այն երկու տող ոտանաւորիկը. Ո՞ր որ աչքերս դարձնեմ, Աստուածդ ակբաւ կը տեսնեմ: — Ո՛հ, պատասխանեց

Տէրօսի, և Վօթինին խեղոյն. — Ես գիտեմ, — ժրպտով մը, ի հեճուկս Տէրօսիին: Սակայն, ընդհակառակն ինք ամօթով մնաց՝ որ չկրցաւ ոտանաւորն արտասանել, վասն զի յանկարծ Ֆրանթիի մայրը հեւալով և գորշ ու խառնակ մագերով, ձիւնաթաթախ դասարան մտաւ, յառաջ մղելով որդին՝ որ ութ օրուան համար զըզրոցէն վոնտուած էր: Ինչ տխուր տեսարանի ներկայ եղանք: Խեղճ կինը գրեթէ Տեսչին առջև ծունկի եկած, ձեռնամած կ'աղաչէր. — Ո՛հ, պարո՛ն Տեսուչ, շնորհք մ'ըրէ ինձի, տղաս դարձեալ զպրոց ընդունէ: Երեք օր է որ տունն է, զինք պահեցի, բայց Աստուած իրեն խնայէ, եթէ հայրն եղածն իմանայ՝ զինք կը սպաննէ. զթա՛, այլ ևս ինչ ընելիքս չեմ գիտեր, բոլոր հոգովս կը խնդրեմ: — Տեսուչը ջանաց զինք դուրս հանել. բայց նա աղաչելով ու լալով զիմադրեց: — Ո՛հ, եթէ գիտնայիր ինչ վիշտ կը պատճառէ ինձի այս տղան, կը կարեկցէիր: Շնորհք ըրէ՛ ինձի: Յոսամ թէ կը փոխուի: Ես արդէն պիտի չապրիմ այլ ևս երկար ժամանակ



Սէր»


պարոն՝ Տեսուչ, հո՛ս մօտ է ինձի մահը. բայց մեռնե-  
լէս առաջ կ'ուզէի զինք փոխուած տեսնել, վասն զի...  
— և սկսաւ սաստիկ լալ, — զաւակս է, զինք կը  
սիրեմ, յուսահատութենէս պիտի մեռնիմ. բայց անգամ  
մ'ալ ընդունէ՛ զինք, պարոն՝ Տեսուչ, որպէս զի ըն-  
տանեաց մէջ զժբաղգութիւն մը չճաննի, զթա՛ թշուառ  
կնոջ մը վրայ: — Եւ հեծկլտալով, ձեռքերով երեսը  
ծածկեց: Ֆրանթի զլուխը կախած էր, անզգայ: Տեսուչն  
իրեն նայեցաւ, քիչ մը մտածեց ու ըսաւ. — Ֆրան-  
թի, տեղդ գնա՛: — Այն ատեն կինը բլրլորովին մխի-  
թարուած, ձեռքերն երեսէն վար առաւ, և սկսաւ շնոր-  
հակալ եմ, շնորհակալ եմ, ըսել, առանց թողլու որ  
Տեսուչը խօսի, և աչքերը սրբելով դէպ ի դուռ գնաց  
ու ըսաւ հրապարակաւ. — Որդեակ իմ, կը յանձնա-  
րարեմ: Ամենքնիդ համբերութիւն ունեցի՛ր: Շնորհակալ  
եմ, պարոն՝ Տեսուչ, որ բարեգործութիւն մ'ըրիր: Բա-  
րի ըլլաս, հասկցա՛ր տղաս: Մնաք բարեաւ, տղա՛ր:  
Շնորհակալ եմ, ցտեսութիւն, պարոն ուսուցիչ: Եւ նե-  
րողամիտ եղիք խեղճ մօր մը: — Եւ սեմին վրայէն  
պաղատագին ակնարկ մ'ես տալով որդւոյն, մեկնեցաւ,  
վեր առնելով շալը որ գետին կը քսուէր, գոյնը նետած,  
ծռած, զլուխը զողողուն, և սանդուղէն իջած ժա-  
մանակ դեռ հագալը կը լսէինք: Տեսուչը պիշ նայեցաւ  
Ֆրանթիին՝ դասարանի լուսթեան մէջ, և անհարկիչ  
շեշտով մ'ըսաւ իրեն. — Ֆրանթի, դո՛ւ մայրդ կը  
մեռցնես: — Ամէնքը Ֆրանթիի նայեցան: Եւ այն  
անզգամը ժպտեցաւ:

## ՅՈՅՍ

29. սիրակի

Հեկրիկո՛ս, գեղեցիկ կերպով մօրոյ սրտին յարեցար՝  
կրօնագիտութեան դասեղ վերադառնալով: Այո՛, ուսուցիչը  
քեզի մեծ և մխիթարական խօսքեր ըսաւ: Աստուած որ  
զմեզ իրարոք բազկաց մէջ ձգած է, պիտի չքամեկ ետե-  
լնդ միշտ. երբ ես մեռնիմ, երբ հայրոյ մեռնի, պիտի  
չըսենք այն սեւաւոր և յուսահատական խօսքերը. —  
մնայր, հայր, Հեկրիկո՛ս, այլ ես գրեզ պիտի ջտեսնեմ:  
— Մեկը ոչիչ աշխարհի մը մէջ գիրար պիտի տեսնենք,  
ոչ՝ ո՛վ շատ կրած է հոս՝ պիտի վարձատրուի, ո՛վ շատ  
սիրած է՝ իր սիրած հոգիները դարձեալ պիտի գտնէ,  
աշխարհի մը մէջ՝ ոչ մեղք կայ, ո՛չ լաց և ո՛չ  
մահ: Սակայն ամենքեկս պետք ենք զմեզ այն կեանքի  
արժանի ընել: Լսէ՛, որդեակ, քո ամէն բարի գործերդ,  
ամէն սիրոյ զգացումներդ՝ հանդեպ գրեզ սիրողներուն, ա-  
մէն կիրք շարժումներդ՝ հանդեպ դասընկերներուդ, ամէն  
սգեղանական մտածոչրիւններդ՝ դեպ ի վեր ա՛յն աշխարհը  
ձկտում մ'է: Եոյնդ դեպ ի այն աշխարհը կը բար-  
ձրացնէ գրեզ ամէն դժբաղդոչիւն, ամէն վիշտ, վասն զի  
ամէնն ալ մեղքի մը քառոչիւն են, ամէն սրցուք՝ արատ  
մը կը սրբէ: Առաւայրէ՛ ամէն օր ետքերուց օրին ա-  
շուի բարի և սիրելի ըլլալ: Ըսէ՛ ամէն առտու. այսօր  
կ'ուզեմ բան մ'ընել, որ խղճմտանքս զիս գովէ և հայրս  
ոչրախանայ. բան մը՝ որուն համար ա՛յս կամ ա՛յն ընկերես,

առաջիկե, երբօրևս կամ սրիշներէն սիրոշխմ: Եւ խնդրէ  
Աստուծմէ որ ոյժ տայ քեզ առաջադրուշիւնդ ի գործ դր-



Յոյս



Փոքրիկ Աղօթաւորը

նկու: Տէ՛ր, կ'ազնւմ քարի, ազնիւ, քաջասիրտ, համեստ  
ու անկեղծ ըրար. օգնէ՛ ինձի. այնպէս ըրէ՛ որ ամէն ի-

րիկունն երբ մայրս ինձի վերջին նողոյնը տայ՝ կարենամ ըսել. դու այս իրիկունն երկերունն աւելի համեստ, աւելի սրժանաւոր որդի մը կը համբոշրես: Հենրիկո՛ս, միշտ մըտքիդ մէջ այն գերանարդիւային և երջանիկ և պատասին ունեցիր, ինչ որ պիտի ըլլաս այս կեանքէն վերջ: Եւ աղօթե՛: Գուշու կրնար երեսկայել ի՛նչ քաղցրութիւն, ի՛նչ մխիթարութիւն կը զգայ մայր մը՝ երբ իր որդին ձեռնամուտ տեսնէ: Երբ ևս տեսնեմ որ դու կ'աղօթես, ինձի անկարելի կը թոշի որ մեկը չտեսնէ զքեզ և չսէ քեզի: Ես այն ատեն աւելի հաստատապէս կը հաշտուամ քե գերագոյն բարութիւն մը և անհուն սեր մը կայ, զքեզ աւելի ևս կը սիրեմ, աւելի եռանդով կ'աշխատիմ, աւելի ուժով վիշտերուն կը համբերեմ, բոլոր հոգեովս կը ներեմ և ոչսխտութեամբ մահուան վրայ կը մտածեմ: Ո՛վ մեծդ և բարի Աստուած: Մահուորեն վերջ բնէ մօրս ձայնը, գտնել իմ զաւակներս, տեսնել իմ Հենրիկո՛սս, իմ օրհնեալ և անմահ Հենրիկոսս, և քեզոյս մէջ սեղմել՝ որ պիտի չքանուի ա՛յլ ևս, երբե՛ք, երբե՛ք միևնչե յաշխտեան: Ո՛հ, աղօթե՛, աղօթե՛ք, զիրար սիրեք, բարի ըլլանք, այն երկնաւոր յոյսը մեր հոգեոյն մէջ ունենանք, պաշտելի որդեան՝ իմ:

ՄԱՅՐԻ



Փ Ե Տ Ր Ո Ւ Ա Ր

ԼԱՒ ՏՐՈՒԱԾ ԾՔԱԴՐԱՄ ՄԸ

4. Շարաթ



ՅՍ առտու դպրոցի վերատեսուչը՝ սպիտակ մօրուքով և սևազգեստ պարոն մը՝ եկաւ շքադրամները բաշխելու համար: Արձակուրդէն թիչ առաջ՝ Տեսչին հետ ներս մտաւ, և ուսուցչին քով նստաւ: Եստեքը հարցաքննեց, յետոյ առաջին մետաղը Տէրօսսիին տուաւ, իսկ երկրորդը տալէ առաջ՝ քանի մը վայրկեան ուսուցչին և Տեսչին լսեց որ ցած ձայնով իրեն կը խօսէին: Ս.մէնքը կը հաբցնէին. — Որո՞ւ պիտի տայ երկրորդը: — Վերատեսուչն ըսաւ բարձրաձայն. — Այս շարաթ երկրորդ մետաղին արժանացեր է Պե-

տրոս Փրէքոսսի աշակերտը. արժանացեր է՝ իր անական աշխատութեանց, դասերուն, գեղագրութեան, բարի վարքին՝ և ամէն բանի համար: Ամէնքը դարձան Փրէքոսսիին նայելու, կը տեսնուէր թէ ամէնքն ալ ուրախացեր էին: Փրէքոսսին ոտը ելաւ, շփոթած, ո՛ւր ըլլալը չէր գիտեր: — Հո՛ս եկուր — ըսաւ Վերատեսուչը: Փրէքոսսի սեղանէն վար ցատկեց և ուսուցչին սեղանին ըով գնաց: Վերատեսուչն ուշադրութեամբ դիտեց այն մոմի գոյնով դէմքը, այն անյարմար ու լայն զգեստին մէջ ծածկուած փոքր մարմինը, այն բարի ու տխուր աչքերը՝ որ կը խուսափէին իրեններէն՝ բայց տառապանքներու պատմութիւն մը գուշակել կու տային. յետոյ գորովալից ձայն մ'անոր ըսաւ՝ մետալն ուսին վրայ կախելով. — Փրէքոսսի, մետալը քեզ կու տամ: Քեզմէ աւելի ո՛չ ոք անոր արժանի է: Միայն քու իմաստութեանդ և բարի կամքիդ համար չէ որ կու տամ, այլ նաև քու սրտիդ, քու քաջասրտութեանդ, քու առաքինի և բարի որդւոյ մը բնաւորութեանդ համար: — Այնպէս չէ՞, — աւելցուց, դասարանին դռնալով, — թէ ասոնց համար ալ արժանաւոր է: — Այո՛, այո՛, — պատասխանեցին ամէնքը միաբերան: Փրէքոսսի վզի շարժում մ'ըրաւ՝ բան մը կ'ըլլելու պէս, և անուշ ակնարկ մը դարձուց գրասեղաններուն վրայ՝ որ անհուն երախտագիտութիւն մը կ'արտայայտէր: — Գնա՛, ուրեմն, — ըսաւ իրեն Վերատեսուչը, — սիրելի տղաս: Աստուած հետդ ըլլայ: — Եւ արձակուրդի ժամն էր: Մեր դասարանը միւսներէն առաջ դուրս ելաւ: Հագիւ ելանք... զո՛վ տեսնենք հո՛ն՝ մեծ սենեկին մէջ, ճիշտ դրան սեմին վրայ: Փրէքոսսիին հայրը, դարբինը, սովորականին պէս տժգոյն, դաժան դէմքով, մազերն

աչքերուն վրայ կախ, գլխարկը ծուռ, սրունքները դողողուն: Ուսուցիչն իսկոյն նշմարեց և Վերատեսուչին ականջէն խօսեցաւ, որ փութով փնտոնց Փրէքոսսին և ձեռքէն բռնած իր հօր ըով տարաւ: — Դո՛ւ ես այս տը-



ղուն հայրը, այնպէս չէ՞. — հարցուց Վերատեսուչը դարբինին, ուրախ դէմքով՝ իբրև բարեկամ մ'ըլլային: Եւ առանց պատասխանի սպասելու. — Ուրախակից եմ քեզի: Տե՛ս, երկրորդ մետալը տղադ շահեցաւ՝ յետուն և չորս դասընկերաց մէջ. անոր արժանացաւ՝ շա-

բարբոթեանց, թուարանութեան և ամէն բանի մէջ: Խելացի և բարի կամբի տէր տղայ մ'է, որ շատ պիտի յառաջադիմէ. կտրին տղայ մ'է, որ ամենուն սէրն ու յարգանքը կը վայելէ. զքեզ կը վստահացնեմ որ կրնաս վրան պարծենալ: — Գարբինը, որ բերանաբաց մտիկ կ'ընէր, սեեռած՝ վերատեսչին ու Տեսչին նայեցաւ, յետոյ տղուն՝ որ աչքերը վար առած, դողզղալով իր առջև կեցած էր. և իբրև թէ այն բոպէին առաջին արգամ յիշէր ու ըմբռնէր այն ամէնը՝ զոր կրել տուեր էր այն խեղճ պզտիկին, և՛ բոլոր բարութիւնը, բոլոր դիւցազնական հաստատամտութիւնը՝ որով նա տարած էր ամէն վշտաց, յանկարծ դէմքին վրայ տեսակ մը հիացումի զգացում մը ցոյց տուաւ, ապա մեծ ցաւի, յետոյ սաստիկ ու տխուր գորով մը, և երազ շարժումով մը տղուն զլուխը բռնեց ու իր կուրծքին վրայ սեղմեց: Ամենքն իրենց առջևէն անցանք. ես գանիկայ հինգշաբթի օր մեր տունը հրաւրեցի՝ կարբօնէի և Քրօսսիի հետ. ուրիշները զինք ողջունեցին, ոմն զինք կը գգուէր, ուրիշ մ'իւր մետալը կը շօշափէր, ամէնքն ալ իրեն բան մ'ըսին: Եւ հայրն ապշահար մեզի կը նայէր, որդւոյն զլուխը կուրծքին սեղմած՝ որ կը հեծկտար:

## ԲԱՐԻ ԱՌԱՋԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

5. Նիրակի

Փրէքօսսիին տրուած այն մետալն ինծի խղճի խայթ պատճառեց: Ես որ դեռ և ո՛չ իսկ հատ մ'առած եմ անկէ: Ես ժամանակէ մ'ի վեր չեմ աշխատիր, և ինձմէ տոգոհ եմ, և ուսուցիչս, հայրս ու մայրս ալ տոգոհ են: Ա՛լ առաջին փափաքս չմնաց գուարճանալու, երբ սիրով կ'աշխատէի ու ապա զբասեղանէն դուրս կը ցատկէի և ուրախութեամբ իմ խաղերուս կը վազէի, իբրև թէ ամիսէ մ'ի վեր խաղացած չըլլայի: Եւ ոչ իսկ առաջուան պէս գոհութեամբ սեղանի կը նստիմ իմիններուս հետ: Սրտիս մէջ միշտ ստուերի պէս բան մ'ունիմ, ներքին ձայն մը՝ որ յարասե կ'ըսէ ինծի. — լաւ չէ՛, լաւ չէ՛: — Իրիկունը կը տեսնեմ որ այնչափ տղար աշխատութենէ վերադառնալով՝ հրապարակէն կ'անցնին, խումբ խումբ գործաւորներ՝ ամէնքն ալ յոգնած՝ բայց գուարթ, որոնք խոշոր քայլեր կ'առնեն, անհամբեր՝ տուն հասնելու և ճաշելու համար, և բարձրաձայն կը խօսին, ծիծաղելով և անխտած սեցած կամ կրով ճերմկցած ձեռքերնին իրարու ուսի զարնելով. և կը մտածեմ թէ արշալոյսէն սկսեալ մինչև այն ժամն աշխատած են. և անոնց հետ միասին այնչափ ուրիշ փոքրիկներ, որ բոլոր օրը տանիքներու վրայ, հնոցներու առջև, մերձնաներու քով, ջրոյ մէջ, հողին տակ կը կենան՝ պատառ մը հաց



միայն ուտելով. և գրեթէ կ'ամչնամ ես, որ բոլոր այդ ժամանակի մէջ ուրիշ բան ըրած չեմ, բայց միայն չորս փոքր էջեր սկսուցած: — Ո՛հ, տոգոհ եմ, տըժգո՛հ: Որոշ կը տեսնեմ որ հայրս դժկամակ է, և կ'ուզէ ըսել ինձի, բայց կը ցաւի, և դեռ կը սպասէ. սիրելի հայրս, որ այնչափ կ'աշխատիս: Բոլոր քուկդ է, բոլոր ինչ որ տան մէջ կը տեսնեմ, ինչ որ կը շօշափեմ, ինչ որ կը հագուեմ և կ'ուտեմ, ինչ որ զիս կը դաստիարակէ ու կը զուարճացնէ, բոլոր բու վաստակոցդ պտուղն է, իսկ ես չեմ աշխատիր. բոլոր քեզի մտածութեան, զրկանքի, տհաճութեան, աշխատութեան զին եղած է, և ես չեմ աշխատիր: Ո՛հ, ո՛չ, չափազանց անարդար է, և ինձի մեծ վիշտ կը պատճառէ Այսօրուրն է կ'ուզեմ սկսիլ, այսօրուրն է աշխատիլ Սթարտիին պէս՝ բռունցքս ու ակումներս սեղմած, կամքիս ու սրտիս բոլոր ոյժովը. կ'ուզեմ գիշերուան քունիս յաղթել, առտուն կանուխ վեր ցատկել, անդադար ըզեզս ձեծել, անողորմաբար ծուլութիւնս պատուհասել, յոգնիլ, կրել և հիւանդանալ. բայց վերջ դնել միանգամ ընդ միշտ այս կ'թոտ ու տաղտկացեալ կեանքին՝ որ զիս կը քայքայէ և ուրիշները կը տխրեցնէ: Օ՛ն, յաշխատութիւն: Յաշխատութիւն բոլոր հոգով ու բոլոր ոյժով: Յաշխատութիւն՝ որ ինձի քաղցր հանգիստ պիտի պարգևէ, ախորժելի զրօսանք և զուարթ ճաշ. յաշխատութիւն՝ որ ինձի ուսուցչիս քաղցր ժպիտն ու հօրս օրհնեալ համբոյրը պիտի տայ:

## ՓՈՒՐԻԿ ՇՈՒԵՇԱՐԺԸ

10: Ուրբաթ

Փրէքօսսի երէկ տուն եկաւ Կարրօնէին հետ: Կարծեմ եթէ երկու իշխաններու զաւակներ ըլլային, անկէ աւելի ուրախութեամբ պիտի չընդունուէին: Առաջին անգամ էր որ Կարրօնէն կու գար, վասն զի քիչ մ'արջու պէս է, և յետոյ կ'ամչնայ մէջտեղ տեսնուելու՝ որ այնչափ մեծ է ու դեռ առաջին շրջանը կ'ընէ: Երբ դուրը զարկին, ամէնքնիս վագեցինք բանալու: Քրօսսին չեկաւ, որովհետեւ հայրը վերջապէս Ամերիկայէն տուն հասած էր վեց տարի վերջ: Մայրս իսկոյն համբուրեց Փրէքօսսին, հայրս Կարրօնէն անոր ներկայացուց ըսելով. — Ահաւասիկ, ասիկայ միայն բարի տղայ մը չէ. ասիկայ միանգամայն պատուաւոր ու ազնուական մարդ մ'է: — Եւ նա իր գերծուած խոշոր գլուխը կախեց՝ ծածուկ ինձի հետ խնդալով: Փրէքօսսի իր շքադրամը միասին բերած էր, և զոհ էր, որովհետեւ հայրը սկսեք էր աշխատիլ և հինգ օրէ ի վեր այլ ևս չիմեր, զինք միշտ իր արհեստանոցին մէջ ընկեր կ'ուզէ, և կարծես բոլորովին փոխուած է, ուրիշ մ'է: Մենք ռկսանք խաղալ, ես իմ ամէն ունեցածներս մէջտեղ հանեցի. Փրէքօսսին հիացած մնաց երկաթուղոյն առջև, որուն չուանը քաշելով մերենան ինքնաշարժ կը քալէր. բնաւ տեսած չէր. այն կարմիր ու դեղին փոքրիկ

կառքերն աչքերով կը լափէր: Բանալին իրեն տուի որ խաղայ, նա ծուռկի վրայ եկաւ խաղալու համար և գլուխը բնաւ վեր չառաւ: Երբէք զինք այնպէս գոհ տեսած չէի: Միշտ, — Ներողութիւն, ներողութիւն, — կ'ըսէր ամէն բանի, և ձեռքով մէկզի կը հրէր գմեզ որ մեքենան չկեցնենք, և դարձեալ հազար ու մէկ ըզգուշութիւններով փոքրիկ կառքերը ձեռքին մէջ կ'աննէր և վար կը դնէր, կարծես ապակիէ ըլլային, կը վախէր որ շունչովն անոնց թափանցկութիւնն աւրուի, ուստի կրկին ու կրկին կը մաքրէր՝ տակն ու վրան նայելով և ինքն իրեն ժպտելով: Մենք, ամէնքս ալ ոտքի վրայ՝ զինք կը դիտէինք. իր այն նուրբ վիզը, իր այն խեղճ աղանջները կը նայէինք, որոնց արիւնիլը տեսեր էի օր մը, իր այն երկայն թևերով խոշոր զգեստը՝ որուն մէջէն իր հիւանդի պէս երկու բազուկները դուրս ելած էին, որոնք այնչափ անգամ վեր բարձրացած էին՝ երեսն ապտակներէ պատասպարելու համար. . . . : Ո՛հ, այն վայրկենին կ'ուզէի բոլոր խաղալիկներս ու զրքերս իր ոտքերուն առջև փռել, բերնէս հացին վերջին պատառը խլել՝ իրեն տալու համար, զգեստներս հանել ու իրեն հագուեցնել, ոտքն իյնալ ու ձեռքերը համբուրել: — Գոնէ շոգեկառքը կրնամ իրեն տալ, — մտածեցի. սակայն պէտք էի հօրս հարցնել: Այն բոպէին զգացի որ ձեռքս թղթի կտոր մը զրուեցաւ. նայեցայ, հայրս մատիտով գրած էր. կ'ըսէր. — Փրէքոսսին շոքեկառքը կը սիրէ: Ինք բնաւ խաղալիկ չունի: Սիրտը քեզի բան մը չի՛ րեղադրեր: — Իսկոյն երկու ձեռքով մեքենան ու փոքրիկ կառքերը բռնեցի և բոլոր անոր թևերուն վրայ դրի, ըսելով. — Ա՛ռ ասիկայ, բո՛ւկդ է: — Նա ինծի նայեցաւ, չէր հասկնար: —

Քուկդ է, — ըսի, — քեզի կը պարգևեմ: — Այն ատեն նա հօրս ու մօրս նայեցաւ, դեռ աւելի ապշահար, և հարցուց ինձի. — Բայց ինչո՞ւ: — Հայրս պատասխանեց. — Ասիկայ Հենրիկոսը քեզի կու տայ, որովհետև բարեկամդ է, որովհետև կը սիրէ գրեզ. . . . քու շքադրամդ տօնախմբելու համար: — Փրէքոսսին հարցուց երկչոտութեամբ. — Հե՛տա. . . . տո՞ւն պիտի տանիմ: — Անտարակո՛յս, — պատասխանեցինք մենք: Արդէն սեմին վրայ էր, բայց դեռ չէր համարձակեր երթալու: Երջանի՛կ էր: Ներողութիւն կը խնդրէր դողդոջուն շրթներով ու կը խնդար: Կարծօնէն օգնեց շոգեկառքը թաշկինակին մէջ փաթթելու, և ծոած ժամանակ՝ զրպանը լեցուցած զաւազանածև հացերուն խշրտոցը լսուեցաւ: Օր մը, — ըսաւ ինձի Փրէքոսսի, — կը փափաքէի որ մեր աշխատանոցը գայիք հօրս աշխատիլը տեսնելու համար: Քեզի շատ գամ կու տամ: — Մայրս, Կարրօնէի զգեստին փոքր զրպանը թաշկինակ մը դրաւ՝ որպէս զի իր կողմանէ մօրը տանի: Կարրօնէ իր խոշոր ձայնով ըսաւ. — Շնորհակալ եմ, — առանց գլուխը վեր առնելու: Բայց հոգւոյն բոլոր ազնուութիւնն ու բարութիւնն աչքերուն մէջ կը փայլէր:

### ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ

#### 11. Շարաթ



Եւ ըսել թէ Գարլոյ Նօպիս իր թիւր կը մաքրէ արուեստակութեամբ՝ երբ Փրէքօսի բովէն անցնելու ժամանակ իրեն կը դպչի: Այդ տղան մարմնացած հպարտութիւնն է, որովհետեւ հայրը ամենամեծ հարուստ մ'է: Բայց Տէրօսի հայրն ալ հարուստ է: Անիկայ կ'ուզէ առանձին գրասեղան մ'ունենալ, կը վախնայ որ ամէնքը զինք կ'աղտոտեն, զամէնքը ոտքէն գլուխը կը դիտէ, միշտ արհամարհոտ ժպիտ մ'ունի շրթներուն վըրայ. վայ է եթէ զոյգ զոյգ դուրս ելնելու ժամանակ մէկն ակամայ ոտքին զարնուի: Ոչինչ բանի համար նախատական խօսք մը կ'ըսէ երեսիդ կամ կը սպառնայ թէ հայրը դպրոց կը բերէ: Թէև հայրն իրեն լաւ դաս մը տուաւ երբ ամխավաճառի որդւոյն հետ հասարակ խօսքերով վարուեցաւ: Նման հպարտութիւն մը տեսած չեմ երբեք: Ո՛չ որ հետը կը խօսի, ո՛չ որ մնաս բարեաւ կ'ըսէ մեկնելու պահուն, շուն մը չկայ որ դասը չգիտցած ժամանակ ականջին փսփսայ: Ինք ալ ոչ մէկուն չկրնար տանիլ, և արհամարհութիւն կը կեղծէ՝

զխաւորապէս Տէրօսիի, վասն զի առաջինն է, և Գարլօն էի՝ վասն զի ամէնքը զինք կը սիրեն: Սակայն Տէրօսին և ոչ իսկ իրեն կը նայի թէ ո՛րչափ երկայն է, իսկ կարծնէն՝ երբ եկան իրեն ըսին թէ Նօպիս իր վրայ գէշ կը խօսի, պատասխանեց. — Այնպիսի յիմար հնարատութիւն մ'ունի, որ և ոչ իսկ հարուստներուս արժանի է: — Քօրէթթին ալ, որ մ'երբ նա իր կատուամազէ զխարկին վրայ արհամարհանօք կը խօսէր, ըսաւ անոր. — Քիչ մը Տէրօսիին զնա՛ պարոնութիւն ծախել սովորելու համար: — Երէկ ուսուցչին զանգատեցաւ, վասն զի զաւապրիացին ոտքով իր մէկ սրունքին դպած էր: — Ուսուցիչը հարցուց զաւապրիացիին. — Կամա՛ւ ըրիր: — Ո՛չ, — պարոն, պատասխանեց անկեղծօրէն: Եւ ուսուցիչը. — Շատ դիւրագրգիւ ես, Նօպիս: — Եւ Նօպիս, իր այն դէմքով. — Հօրս պիտի իմացնեմ: — Այն ատեն ուսուցիչը զայրացաւ. — Հայրդ զքեզ յանցաւոր պիտի նկատէ՛ ինչպէս ուրիշ անգամ ըրաւ: Եւ յետոյ դպրոցին մէջ միայն ուսուցիչն է որ կը դատէ ու կը պատժէ: — Եւ յետոյ աւելցուց քաղցրութեամբ. — Մի՛ ըներ, Նօպիս, կերպերդ փոխէ՛, բարի և քաղաքավար եղիւր դասընկերացոյ հետ: Տե՛ս, հոս գործաւորներու և պարոններու, աղքատներու և հարուստներու տղաք կան, և ամէնքը զիրար կը սիրեն, եղբոր պէս կը վարուին, ինչպէս որ են: Ինչո՞ւ համար դու ալ ուրիշներուն պէս չես ըներ: Ոչինչով կրնաս ինքզինքդ ամենուն սիրելի ընել տալ, և դու ալ աւելի երջանիկ կ'ըլլաս...: Լաւ ուրեմն, ինձի պատասխանելիք մ'ունիս: — Նօպիս որ իր սովորական արհամարհոտ ժպտով մտիկ կ'ընէր, պաղ կերպով պատասխանեց. — Ո՛չ, պարոն: — Նստէ՛, — ըսաւ իրեն

ուսուցիչը: — Կը ցաւիմ վրադ: Անսիրտ տղայ մ'ես: — Այսպէս ամէն բան լմնցած կը թուէր. բայց փոքրիկ որմնաղիւրը՝ որ առաջին գրասեղանին մէջ է, իր կէտը դէմքը Նօպիսի դարձուց՝ որ վերջինին մէջ է, և իրեն այնպիսի գեղեցիկ ու ծաղրածական ընչապտուկ մ'ըրաւ, որ բոլոր դասարանն աղմուկով խնդաց: Ուսուցիչն անոր նայեցաւ, սակայն ստիպուեցաւ միայն մէկ ձեռքը բերնին վրայ դնել՝ ժպտաբ ծածկելու համար: Նօպիս ալ ժպտա մ'ըրաւ. բայց այնպիսի ժպտա մը՝ որ չեփեր:

## ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ԶՈՂԵՐԸ

### 13. Երկուշարթի

Նօպիս՝ Պրանթիի գոյզը կրնայ ըլլալ. ո՛չ մէկուն ո՛չ միւսին գութը չշարժեցաւ այս առտու՝ մեր աչքերուն տակ կատարուած սոսկալի տեսարանին առջև: Դպրոցէն ելնելով, հօրս հետ կեցած երկրորդ դասարանի քանի մը ստահակներ կը զիտէինք, որոնք գետին ծնրաղրած՝ իրենց վերարկուներով ու գլխարկներով սառը կը շփէին աւելի սահուն ընելու համար, երբ տեսանք որ ճամբուն խորէն բազմութիւն մը կու գար, երագաքայլ, ամէնքը լուռ ու սարսափահար դէմքով, և ցած ձայնով կը խօսէին: Մէջ տեղ երեք ոստիկան զինուորներ կային. անոնց ետեւէն երկու մարդ՝ որ պատգարակ մը կը բերէին: Ամէն կողմանէ տղաք վազեցին:

Բազմութիւնը դէպ ի մեզ կու գար: Պատգարակին վրայ մարդ մը տարածուած էր, զիտակի մը պէս ճերմակ, գլուխը մէկ ուսին վրայ ծռած, մագեքը խառնակ ու արիւնտտ, որ բերնէն ու ականջէն արիւն կը հոսէր, և պատգարակին ըովէն կին մը՝ մանուկ մը գրկը՝ կը քալէր, որ խենթ կը թուէր, և մերթ կ'աղաղակէր, — Մեռած է: Մեռած է: — Կնոջ ետեւէն տղայ մը կու գար, որ թղթապանակը թեկն տակ զրած էր և կը հեծկտար: — Ինչ պատահած է, — հարցուց հայրս: Բերձաւոր մը պատասխանեց, թէ որմնաղիւր մը՝ աշխատելու ժամանակ չորրորդ դատիկոնէ մ'ինկած էր: Պատգարակը տանողները վայրկեան մը կանգ առին: Շատերն ահարեկ՝ դէմքերնին կնճոցեցին: Կարմիր փետրաւոր փոքր ուսուցչուհին տեսայ որ նախորդ դասարանի վարժուհի թեք մտած էր, գրեթէ մարելու մօտ: Մի և նոյն ժամանակ զգացի որ մէկը արմունկիս դպաւ, փոքրիկ որմնաղիւրն էր, սժգոյն, որ ոտքէն մինչև գլուխը կը զողզուար: Անտարակոյս իր հօր վրայ կը մտածէր: Ես ալ մտածեցի: Իմ սիրտս հանգիստ է գոնէ, երբ դպրոցն եմ, զիտեմ թէ հայրս տունն է, սեղանին առջև նստած, ամէն վտանգէ հեռի. բայց իմ ընկերներէս քանինները կը մտածեն թէ իրենց հայրերն ամենաբարձր կամուրջի մը վրայ կ'աշխատին կամ մեքենայի մ'անիւններուն մօտ, և թէ շարժում մը, սխալ քայլ մը՝ իրենց կեանքին զինն է: Զինուորներու զաւակներուն պէս են, որոնց հայրերը պատերազմի մէջ կը գտնուին: Փոքրիկ որմնաղիւրը կը նայէր ու կը նայէր, և միշտ աւելի կը սաստկանար զողը, զոր հայրս նշմարեց ու ըսաւ իրեն. — Տուն գնա՛, տղաս, շուտով հօրդ քով գնա՛, զոր առողջ ու հանգիստ պիտի գտնես:

գնահ: — Փորըրիկ որմնադիրը մեկնեցաւ, ամէն քայլափոխի ետե դառնալով: Եւ այս պահուս բազմութիւնն սկսաւ շարժիլ, և կիներ տառապագին կ'աղաղակէր. — Մեռած է: Մեռած է: — Ո՛չ, ո՛չ, մեռած չէ, — կ'ըսէին իրեն ամէն կողմանէ: Բայց նա մտիկ չէր ըններ, և իր մագերը կը փետէր: Երբ լսեցի՝ որ գայրացած ձայն մը կ'ըսէր. — Դու կը խնդաս, — և մի և նոյն ժամանակ տեսայ որ թաւամօրուս մէկը Ֆրանցիսկին երեսը կը նայէր, որ դեռ կը խնդար: Այն ժամանակ, մարդն անոր գլխարկը գետին զարկաւ խոժոռագէմ, ըսելով. — Գլուխդ բաց, չարածնո՛ւնդ, երբ աշխատութեան զոհ մը կ'անցնի: — Ամբոխն արդէն բոլոր անցած էր, և ճամբուն մէջ տեղ երկայն գիծ մ'արիւն կը տեսնուէր:

## ԲԱՆՏԱՐԿԵԱԼԸ

27. Ուրբաթ

Ո՛հ, անտարակոյս ասիկայ տարւոյն ամենէն աւելի տարօրինակ դիպուածն է: Երէկ առտու, հայրս զիս Մօնրալիէրիի շրջակայքը տարաւ, յառաջիկայ ամսոյն մէջ վարձելիք ամարանոց մը տեսնելու համար, որովհետեւ այս տարի այլ ևս Բիէրի չենք երթար. դէպքը բերաւ որ բանալին պահողն ուսուցիչ մ'էր, որ տանտիրոջ գրագրութիւն կ'ընէ: Նա տունը մեզի ցոյց տըւաւ, և յետոյ իր սենեակն առաջնորդեց, ուր ըմպելի էրաճցուց: Ստոլին վրայ՝ գաւաթներուն մէջ տեղ փայ-

տէ կաղամար մը կար, կոնաձև, նորօրինակ ոճով մը քանդակուած: Հայրս տեսնելով զայն կը դիտէր, ուսուցիչն ըսաւ իրեն. — Այդ կաղամարն ինձի համար շատ թանկագին է, եթէ զխոնայի՛ր, պարո՛ն, այդ կաղամարին պատմութիւնը: — Եւ պատմեց. Տարիներ առաջ նա թօրինոյի մէջ ուսուցիչ էր, և ամբողջ ձմեռ մը բանտարկելոց դաս տալու գնաց Դատաստանական բանտերու մէջ: Դասախօսութիւնը բանտերու եկեղեցւոյն մէջ կ'ընէր, որ կլոր շէնք մ'է, շրջապատուած մերկ ու բարձր պատերով, ուր շատ մը քառակուսի լուսամուտներ կան, երկձող խաչաձև երկաթներով փակուած, որոնց իւրաքանչիւրին ետև կայ ամենափոքր խըղիկ մը: Ինք դաս կ'ընէր ցուրտ ու մութ եկեղեցւոյն մէջ շրջագայելով, և իր աշակերտներն այն ծակերուն առջև կը կենային՝ տետրակները երկաթէ վանդակին առջև դրած, ուրիշ բան ցոյց չտալով՝ բայց միայն դէմքերին՝ ստուերին մէջ, դէմքեր՝ տխուր ու ծիւրեալ, մօրուաներ՝ խառնակ ու գորշ, աչքեր՝ մարդասպանի և աւազակի յատուկ: Ի միջի այլոց, կար մէկը, 78 թուոյն մէջ, որ ամենէն աւելի ուշադիր էր, և շատ կ'աշխատէր, և յարգալից ու երախտագէտ աչքով կը նայէր ուսուցչին: Աւամօրուս երիտասարդ մ'էր, աւելի դժբաղդ քան չարագործ, կահագործ մը, որ սաստիկ բարկութեան մը ժամանակ՝ դուր մը նետած էր իր տիրոջ, որ բաւական ատենէ ի վեր զինք կը հալածէր, որուն զլուխը ծանր կերպով վերաւորած էր. և ասոր համար բաւական տարուան բանտարկութեան դատապարտուած էր: Երեք ամսուան մէջ նա կարդալ ու գրել սովորած էր, և յարատև կ'աշխատէր, և ո՛րչափ կը սովորէր այնչափ աւելի կարծես բարի կ'ըլլար, և ըրած ոճիւրին

վրայ զղջացած կը թուէր: Օր մը, դասն աւարտելու մօտ, նա նշան ըրաւ ուսուցչին որ լուսամտաին մօտենայ, և արտութեամբ խմացուց թէ յաջորդ առտու թօրինոյն պիտի մեկնի, իր պատիժը վենեակոյ բանտերուն



մէջ երթալ քաւելու համար, և իրեն մնաս բարեաւ ըսելով, խոնարհ և սրտաշարժ ձայնով ձեռքը խնդրեց որ շօշափէ: Եւ ուսուցիչը ձեռքը տուաւ, զոր նա համբուրեց, յետոյ ըսաւ. — Ծնորհակալ եմ, — և աներևոյթ եղաւ: Ուսուցիչը ձեռքը քաշեց, արցունքով թրջած էր: Այն օրէն վերջ ան-

գամ մ'ալ չտեսաւ զայն: Վեց տարիներ անցան: — « Ես բաց ի այն թշուառէն ամէն բանի վրայ կը մըտածէի, — ըսաւ ուսուցիչը, — երբ յաջորդ առտու, յանկարծ տանս մէջ անձանօթ մը տեսայ, որ խեղճ հագուած էր, երկայն սև մօրուքով, քիչ մ'արգէն ճերմկցած, որ ըսաւ ինձի. — Դո՞ւ ես, պարո՞ն, այս ինչ, այն ինչ վարժապետը: — Ո՞վ ես դու, — կը

« հարցնեմ իրեն: — 78 թիւ բանտարկեալը, — կը պատասխանէ ինձի. — դու գրել ու կարդալ սուս վրեցուցիր ինձի վեց տարի առաջ. եթէ կը յիշես, « վերջին դասին ձեռքդ ինձի տուիր. հիմա պատիժս « քաւեցի և հո՞ս եկայ... խնդրելու քեզմէ որ հաճիս « իմ մէկ յիշատակս ընդունիլ, փոքր բան մը՝ զոր ես « բանտին մէջ պատրաստած եմ: Կ'ընդունի՞ս, ի յիշատակ ինձի, պարո՞ն ուսուցիչ: — Ես հոն պապան « ձած մնացի: Ես կարծեց թէ չեմ ուզեր ընդունիլ, « և ինձի նայեցաւ, իրբև ըսել ուզէր. — Վեց տա « բուան շարչարանըներս բաւական չեղան միթէ ձեռ « քերս մաքրելու. — բայց այնպիսի ցաւի վառ ար « տայտտութեամբ մ'երեսս նայեցաւ, որ իսկոյն ձեռքս « կարկտեցի և նուէրն ընդունեցայ: Ահա այս է»: Ուշադրութեամբ կաղամարը դիտեցինք. գամի մը ծայրով աշխատուած կը տեսնուէր, երկայն համբերատարութեամբ. վրան քանդակուած էր տետրակ մը՝ որուն վրայ առիշեղ գրուած գրիչ մը, և շուրջն արձանագրուած. « Իմ ուսուցչիս: — Յիշատակ 78 բռնույն: Վեց տարիներ». — Եւ ստորև՝ փոքր տառերով. — «Ուսումն և յոյս...»: Ուսուցիչն ուրիշ բան չըսաւ. մեկնեցանք: Սակայն Մօնրալիէրիէն մինչև թօրինոյ չէի կրնար մտքէս հանել՝ պատուհանին առջև կանգնած այն բանտարկեալը, առ ուսուցիչն՝ այն մնաս բարեալը, բանտին մէջ աշխատուած այն խեղճ կաղամարը, որ շատ բաներ կ'ըսէր. գիշերն ալ նոյնն երազեցի, և դեռ այս առտու ալ կը մտածէի... բոլորովին հեռի գուշակելէ այն անակընկալը՝ որ դպրոցի մէջ ինձի կը ըսպասէր: Հագիւ իմ նոր գրասեղանիս մէջ մտայ, Տէրօսսիի մօտ, և ամսօրեայ քնութեան թուարանական

առաջարկութիւնը գրեցի, ընկերոջս պատմեցի՝ բանտարկելոյն, և կաղամարին բոլոր պատմութիւնը, և թէ ինչպէս կաղամարը շինուած էր, վրան տետրակ մը քանդակուած, և անոր վրան ալ առիշեղ գրիչ մը, և շուրջն արձանագրութեամբ. — Վեց տարիներ: — Տէրօսսի ցնցուեցաւ այն բառերուն վրայ, և սկսաւ մերթ ինծի, մերթ բանջարավաճառի որդւոյն Քրօսսիին նայիլ, որ առջևի գրասեղանին մէջ էր, կոնակը մեզի շրջած, բոլորովին իր առաջարկութեան մէջ ընկղմած: — Լո՛ւ՛, — ըսաւ յետոյ, ցած ձայնով, մէկ թեւ բռնելով: — Չե՛ս գիտեր: Քրօսսին առջի իրիկուն ինծի ըսաւ թէ Ամերիկայէն դարձող իր հօր ձեռքը փայտէ կաղամար մը տեսած էր՝ վերիվերանց կերպով. նոնաձև, ձեռագործ կաղամար մը, վրան տետրակ մը և գրիչ մը քանդակուած. — անիկայ է. — Վեց տարիներ: — Ես կըսէր թէ իր Հայրն Ամերիկա էր. — ընդհակառակն բանտի մէջ էր. — Քրօսսին ոճիբի ժամանակ փոքր էր, չյիշեր, մայրը զինք խաբեց, ինք բնաւ տեղեկութիւն չունի, ասոր մասին մեր բերնէն խօսք մը չհանենք: — Ես բերանս փակեցի՝ աչքերս Քրօսսի վրայ յառած: Եւ այն ատեն Տէրօսսի առաջարկութիւնը լուծեց և զայն գրասեղանին տակէն Քրօսսի անցուց. անոր թերթ մը թուղթ տուաւ, և ձեռքէն «Թարայի հիշանդաստիւնը» ամսօրեայ պատմութիւնն առաւ, զոր ուսուցիչը տուած էր՝ անոր տեղ օրինակելու համար: Քրօսսիի գրչածայրեր պարզեց, ուսը շոյեց, պատույս վրայ ինծմէ խօսք առաւ որ ո՛չ մէկուն բան մը չըսեմ. և երբ դպրոցէն ելանք, շտապով ըսաւ ինծի: — Երէկ իր հայրն եկաւ զինք առնելու համար, այս առտու ալ պիտի գայ. դու ևս ինծի պէս ըրէ՛: — Պողոտան եւ

լանք, Քրօսսիի հայրը հո՛ն էր, քիչ մը մէկ կողմ քաշուած. արդէն քիչ մը ձերմկիլ սկսած՝ սև մօրուքով մարդ մը, խեղճ հագուած, և երեսը տփգոյն ու մըտածկոտ: Տէրօսսի, Քրօսսիի ձեռքը սեղմեց, այնպիսի կերպով՝ որ նա իրեն նայի. և ըսաւ բարձրաձայն. — Յտեսութիւն, Քրօսսի, — և ձեռքով անոր կզակը շոյեց. ես ալ նոյնպէս ըրի: Բայց այն ընկուժամանակ՝ Տէրօսսի ծիրանիի պէս կարմրեցաւ, նոյնպէս ես. և Քրօսսիի հայրն ուշադրութեամբ մեզի նայեցաւ, անուշ դէմքով մը. բայց մէջը կասկածի և անհանգստութեան արտայայտութիւն մը կը շողար, որ մեր սիրտը ստոնցուց:



## ԹԱԹԱՅԻՆ ՀԻՒԱՆԳԱՊԱՀԸ

(Անտրեայ պատմութիւն)

**Մ**ԱՐՏԻ անձրևոտ առաւօտ մը, գիւղացիի զգեստով տղայ մը, անձրևէն բոբրովին խխմած և ցեխոտած, թեին տակ լաթեղէններու ծրարով մը, Նափոյի Ռախտաւորաց Հիւանդանոցին դռնապանին կը ներկայանար, և նամակ մը յանձնելով իր հայրը կը հարցնէր: Տժգոյն, թուխ, հակթածն գեղեցիկ գէմք մ'ունէր, աչքերը մըտածկոտ, և երկու խոշոր շրթները կիսաբաց, որոնց մէջէն ամենապիտակ ակաւոյները կը տեսնուէին: Նափոյի շրջակայ գիւղերէն մէկէն կու գար: Իր հայրը, տարիներ առաջ տունէն Գաղղիա մեկնած ըլլարով գործ փնտռելու համար, իտալիա վերադարձած էր և քիչ առաջ նաեւ Նափոյի իջած էր, ուր յանկարծակի հիւանդանարով, հազիւ ժամանակ ունեցած էր ընտանեաց տող մը գրելով իր հասնիլն իմացնելու և ըսելու թէ հիւանդանոց կը մտնէր: Իր կիներն այն լուրին վերայ տրամնած, չկրնարով ինք անէն շարժիլ՝ որովհետեւ պզտիկ մանկիկ մ'ունէր և փոքր աղջիկն ալ հիւանդ էր, մեծ տղան Նափոյի զրկած էր՝ քիչ մը գրամով, որ երթաց հայրը խնամէ, իր քա-

քան, ինչպէս ինք կը կոչէր. տղան տասն մընն համբայ ըրած էր:

Գննապանը նամակին աչք մը տարով, հիւանդապահ մը կանչեց և ըսաւ որ տղան հօր քով առաջնորդէ:

— Ի՞նչ հայր, հարցուց հիւանդապահը:

Տղան կը դողդոզար, վախնալով որ տխուր լուր մ'առնէ, ա՛նուն ըսաւ:

Հիւանդապահը չէր յիշեր այդ անունը:

— Գրտէն եկած ձեր գործաւոր մը, — հարցուց:

— Գործաւոր մը, այո՛, — պատասխանեց արդան, միշտ աւելի տագնապալից. — ոչ այնչափ ձեր: Գրտէն եկած, այո՛:

— Ե՞րբ հիւանդանոց մտած, — հարցուց հիւանդապահը:

Տղան ակնարկ մը սուաւ նամակին: — Հինգ օր կ'ընէ, կարծեմ:

Հիւանդապահը քիչ մը մտածեց. յետոյ իբրև





թէ յանկարծ յիշէր. — Ո՛հ, — բաւ, — չոր-  
րորդ սրահը, վերջին անկողինը:

— Ծանր հիւանդ է: Ի՞նչպէս է, — հարցուց  
տղան անձկալից:

Հիւանդապահն իրեն նայեցաւ, առանց պա-  
տասխանելու: Յետոյ բաւ. — Ինձի հետե՛է:

Երկու կարգ սանուզներէ երան, լայն սրահի  
մը խորը գացին, և մեծ սենեկի մը դրան առջև  
հասան, ուր երկու կարգ անկողիններ շարուած  
էին: — Եկու՛ր, — կրկնեց հիւանդապահը, ներս  
մտնելով: Տղան սիրտ ըրաւ, և անոր հետեցաւ՝  
աջ ու ձախ երկիւղալից ակնարկներ նետելով հի-  
ւանդներու սպիտակ ու վախ դէմքերուն վրայ,  
որոնցմէ ոմանք աչքերնին դոցած էին, և մեռած  
կը թուէին, ուրիշներ մեծ ու սեռուռն աչքերով  
օդը կը նայէին՝ կարծես սարսափահար: Շատերը  
աղու պէս կը հեծէին: Սենեակը մութ էր և օդը  
գեղերու սաստիկ հոտով լեցուած էր: Երկու զը-  
քոչքեսան քոյրեր ձեռքերնին շիշերով կը պտը-  
տէին:

Մեծ սենեկին խորը համներով, հիւանդապահը  
կանգ առաւ անկողնի մը մօտ, բացաւ վարագոյ-  
րըն ու բաւ. — Ահա հայրդ:

Տղան սկսաւ սաստիկ լալ, և գետին ձգելով ծրա-  
րը, գլուխը հիւանդին ուսին վրայ դրաւ, ձեռ-  
քով բռնելով անոր բազուկը՝ որ անշարժ տարա-  
ծուած էր վերմակին վրայ: Հիւանդը չշարժեցաւ:

Տղան սոք երաւ և հօրը նայեցաւ, ու դարձեալ  
սկսաւ լալ: Այն ատեն հիւանդն իրեն երկայն ակ-  
նարկ մը տուաւ, կարծես զինք կը ճանչնար:

Սակայն չրթունքները չէին շարժեր: Խեղճ բարս,  
սրչափ փոխուած էր: Տղան զինք բնու ճանչցած  
չէր: Մազերը ձերմկցած էին, մօրուան երկնցած,  
դէմքն ուռած ու սաստիկ կարմրած, մութը ձիգ-  
ցած ու փայլունցած, աչքերը փոքրցած, չրթունքը  
խոշորցած, գլխագլիժը բոլորովին այլափոխուած՝  
միայն ճակատն ու արտանուռնքը նոյն մնացեր  
էին: Հարով կը շնչէր:

— Թաթա՛. թաթա՛ն, — կանչեց տղան: —  
Ես եմ, զիս չե՛ս ճանչնար: Չիչիլո՞ղ եմ, քու Չի-  
չիլո՞ղ, հայրենիքէն եկած եմ, զիս մայրիկս զըր-  
կեց: Լաւ նայէ ինձի, չե՛ս ճանչնար զիս: Խօսք  
մ՛ըտէ:

Բայց հիւանդը, զինք ուշադրութեամբ գիտե-  
լէ վերջ, աչքերը փակեց:

— Թաթա՛. Թաթա՛ն ի՞նչ ունիս: Քու որդի՞-  
եմ, քու Չիչիլո՞ղ:

Հիւանդն այլ ևս չշարժեցաւ և շարունակեց հե-  
ւարով շնչել:

Այն ժամանակ, լարով, տղան աթոռ մ՛առաւ,  
նստաւ և սպասեց, առանց աչքերը հօր վրայէն  
բաժնելու: — Երանի՛ թէ բժիշկ մ՛անցնէր այցե-  
լութիւն մ՛ընելու, — կը մտածէր: Անիկայ ին-  
ձի բան մը կ՛ըտէր: — Եւ տխուր մտածութիւն-  
ներու մէջ ընկզմեցաւ՝ իր բարի հօր շատ մը յի-  
շատակները միտքը բերելով, մեկնելու օրը՝ երբ  
իրեն հրաժեշտի ողջոյնը տուած էր չողենաւին  
վրայ, յոյսը՝ զոր ընտանիքն իր այն ճամբորդու-  
թեան վրայ դրած էր, մօր տագնապը՝ նամակը  
հասնելու պահուն. և մահուան վրայ կը մտածէր,

իր հայրը մեռած տեսաւ, մայրը սուգ հազուած, ընտանիքը թշուառութեան մէջ: Եւ երկար ժամանակ այսպէս մնաց: Երբ թեթիւ ձեռք մ'իր ուսին դպաւ, և ինք ցնցուեցաւ. մարապետ մ'էր: — Ինչ ունի հայրս, — հարցուց խնայն անոր: — Քու հայրդ է, — ըսաւ քոյրը, անուշ կերպով: — Այո՛, իմ հայրս է, եկայ: Ինչ ունի: — Քաջասիրտ եղի՛ր, տղան, — պատասխանեց քոյրը. — հիմա բժիշկը պիտի դայ: — Եւ հեռացաւ, առանց ուրիշ բան ըսելու:

Կէս ժամէն, զանգակի ձայն մը լսեց, և տեսաւ որ բժիշկը սենեակ կը մտնէր՝ օգնականի մը հետ: Քոյրն ու հիւանդապահն անոր կը հեռակէին: Այցելու թիւնն սկսան՝ ամէն անկողնոյ քով կենարով: Այն սպասումը յաւիտենական կը թուէր իրեն, և բժշկի ամէն քայլին իր սրտին տաղնապը կ'աճէր: Վերջապէս մերձաւոր անկողինն հասան: Բժիշկը բարձրահասակ և ծանրաբարոյ ծերունի մ'էր: Գեռ քովի անկողնէն չբաժնուած՝ տղան սաք ելաւ, և երբ իրեն մօտեցաւ, սկսաւ լալ:

Բժիշկին իրեն նայեցաւ: — Հիւանդին որդին է, — ըսաւ քոյրը. — այս առտու իր երկրէն հասաւ:

Բժիշկը մէկ ձեռքը տղուն ուսին վրայ դրաւ, յետոյ հիւանդին վրայ ծռեցաւ, բազկերակը շոշափեց, ճակատին դպաւ, և քանի մը հարցումներ ըրաւ քրոջ, որ պատասխանեց. — ո՛չինչ նորութիւն: — Քիչ մը մտածեց, յետոյ ըսաւ. — Առաջուան պէս շարունակեցէք:

Այն առեւն տղան սիրտ առաւ և արցունքոտ ձայնով հարցուց. — Ինչ ունի հայրս:

— Քաջասիրտ եղի՛ր, տղան, — պատասխանեց բժիշկը, դարձեալ մէկ ձեռքը ուսին վրայ դնելով: — Երեսային օձացաւ մ'է: Ծրանր է, բայց դեռ յոյս կայ: Քովը կեցի՛ր: Քու ներկայութիւնդ կրնայ լաւ ազդել:

— Բայց զիս չճանչնար, — բացազանչեց տղան՝ յուսահատ շեշտով:

— Թերեւս... վաղը ճանչնայ չքեզ: Շատ կը յուսամ՝, քաջասիրտ եղի՛ր:

Տղան կը փափաքէր ուրիշ բաներ ալ հարցնել. սակայն չհամարձակեցաւ: Բժիշկը յաջորդին անցաւ: Եւ այն առեւն ինքն իր հիւանդապահս թիւնն սկսաւ: Չկրնարով ուրիշ բան ընել, հիւանդին վերամակները կը շտկէր, երբեմն ձեռքը կը բռնէր, ճանճերը կը վանէր, անոր ամէն հեծեծանքին վրան կը ծռէր, և երբ քոյրն բնակելի մը բերէր՝ գաւաթը, դգալը կ'առնէր և անոր տեղ ինք կը խմցնէր: Երբեմն հիւանդն իրեն կը նայէր, բայց զինք ճանչնարու նշան մը չէր ցոյց տար: Բայց միայն անոր ակնարկը միշտ աւելի երկար իրեն վրայ յառած կը մնար, մասնաւորապէս երբ թաշկինակն անոր աչքերուն վրայ կը դնէր: Եւ այսպէս անցուց առաջին օրը: Գիշերը, տղան, սենեկին մէկ անկիւնը՝ երկու աթուակներու վրայ քնացաւ, և առտու դարձեալ ձեռք առաւ իր գլխի վրայ պաշտօնը: Այն օրը կարծես հիւանդին աչքերը ճանչնարու պզտիկ նշան մը ցոյց տուին: Տղուն փաղաքուշ ձայնէն կարծես թէ վայրկեան մ'երախտագիտական անորոշ արտայայտութիւն մը փայլեցաւ բերբերուն մէջ, և անգամ մը քիչ

մը շրթները շարժեց, իբրև թէ բան մ'ուզէր քսել: Սմէն փոքր մը արտաբերեց վերջ, աչքերը բանալով՝ կարծես իր պզտիկ հիւանդապահը կը փրկուէր: Քժիշկը՝ կրկին անգամ անցնելով, փոքր բարեբաւութիւն մը նշմարեց: Երեկոյեան գէմ, գաւաթն անոր շրթանց մտեցնելու պահուն, տղան կարծեց հիւանդին ուռած շրթներուն վրայ տեսնել թեթեւ ժպտի մը փայլիլը: Եւ այն ատեն սկըսաւ մխիթարուիլ, և յուսալ: Եւ ճանչցուած ըլլալու յուսով, գոնէ չփոխ կերպով, կը խօսէր անոր հետ, երկար կը խօսէր՝ իր մօր, փոքր քոյրերուն, ատեն վերադառնալուն վրայօք և ջերմ ու սիրալիւ խօսքերով զինք կը յորդորէր որ քաջալերուի: Եւ թէպէտ կը տարակուսէր յաճախ՝ թէ նա հասկցած չըլլայ, սակայն կը խօսէր, վասն զի իրեն կը թուէր թէ չհասկնարով իսկ՝ հիւանդը հաճոյքով մը կը նար լսել իր ձայնը, իր այն ախուր ու սիրակաթ անտոխոր շեշտը: Եւ այնպէս անցուց երկրորդ, երրորդ և չորրորդ օրերը, երբեմն յանկարծ վիճակը լաւանարով՝ երբեմն գէշնարով, և տղան այնպէս ընկզմած էր իր խնամքներուն մէջ՝ որ հազիւ օրը քիչ մը հաց ու պանիր բերանը կը գնէր, զոր մայրապետն իրեն կը բերէր, և գրեթէ իր շուրջն անցած գարձածը չէր տեսներ, մահամերձ հիւանդները, գիշեր ատեն գթութեան քերց յանկարծական վազկները, այցելուներուն լացն ու կոծը՝ որ անյոյս դուրս կ'ելնէին, հիւանդանոցի կեանքի մը բոլոր այն ցաւալի և ախուր տեսարանները՝ որոնք ուրիշ ո՛ր և է պարագայի մէջ զինք պիտի զարհուրեցնէին ու

ահաբեկէին: Ժամերը, օրերը կանցնէին, և ինք միշտ հոն իր քարային հետ էր, ուշադիր, պատրաստ, սրտաբարբախ՝ անոր ամէն հառաչին ու ամէն նայուածքին, անընդհատ խօսվայոյզ ամէն յոյսի՝ որ սիրտը կ'ընդլայնէր և ամէն անցուած թեան որ իր սիրտը կը սառեցնէր:

Հինգերորդ օրը, յանկարծ, հիւանդը ծանրացաւ:

Քժիշկին հարցուցին, գլուխը շարժեց՝ իբրև լսել ուզէր՝ լմնցած է, և տղան աթոռակին վրայ ինկաւ սաստիկ արցունքով: Սակայն բան մը զինք կը մխիթարէր: Հակառակ հիւանդութեան ծանրանալուն, իրեն կը թուէր թէ հետզհետէ, կամաց կամաց, հիւանդին խելքը քիչ մը գլուխը կու գար: Նա միշտ աւելի սեռուն և աւելի քաղցր արտայայտութեամբ մը կը նայէր տղուն, չէր ուզէր այլ ևս ըմպելի կամ գեղ ընդունիլ՝ բայց միայն իր ձեռքով, և միշտ աւելի յաճախ կ'ընէր շրթունքի այն բռնազբօս շարժումները՝ իբրև թէ ուզէր խօսք մ'արտաբերել, և ասիկայ երբեմն այնպիսի որոշ կերպով կ'ընէր, որ տղան թափով մ'իւր թեւերը կը սեղմէր՝ անակընկալ յոյսէ մ'ողորուած, և գրեթէ ուրախութեամբ մը կ'ըսէր. — Քաջալերուէ, սիրտ առ քարս, պիտի առողջանաս, պիտի երթանք տուն, մայրիկինքով պիտի երթանք, քիչ մը քաջասրտութիւն:

Երեկոյեան ժամը չորսն էր ճիշտ, յորում տղան յոյսի ու գորովի մը թափին մէջ ընկզմած էր, երբ սենեկի ամենամօտ գոնէն ոտնաձայն մը լրեսեց, յետոյ ուժով ձայն մը և երկու խօսք միայն.

— Յտեաութիւն, քոյր, — որ զինք ոտքի ցատկել տուին՝ խղճուակ ազատակով մը:

Մի և նոյն վայրկենին, գթութեան քրոջ հետ մարդ մը սենեակ մտաւ՝ մեծ ծրար մը ձեռքը: Տղան սուր ճիչ մ'արձակեց և տեղը դամուսած մնաց:

Մարդը դարձաւ, զինք վայրկեան մը դիտեց, ինք ևս ազատակ մը փրցուց. — Չիչիլլոյ, — և անոր վրայ նետուեցաւ:



Տղան վզձկամ, հօր բազկաց մէջ ինկաւ:

Քայրերը, հիւանդագողահները, բժիշկին օգնականը վազեցին, և հոն ապշահար մնացին:

Տղան չէր կրնար ձայնը բռնել:

— Ո՛վ իմ Չիչիլլոս, — բացաւ գանչեց հայրը, յետ ուշադիր ակնարկ մը տարու հիւանդին, կրկին համբուրելով ազան: —

Չիչիլլոյ, որդեակս, այս ինչպէս կ'ըլլայ: Զքեզ ուբիչի մ'անկողնոյն քով բերած են: Եւ ես կը յուսահատէի որ գքեզ շտեմնեմ՝ մօրդ գրեղէն վերջ, անոր պատասխանը զրկեցի: Խեղճ Չիչիլլոս: Քանի որ կ'ընէ որ հոս ես: Ինչպէս եղաւ այս շփոթութիւն:

նը: Ես քիչով ասկից դուրս ելայ: Ոտքերս լաւ են, գիտե՛ս: Եւ մայրդ, Քօնչէթթէլլան, որորանի մանկիկին ինչպէս են: Ես հիւանդանոցէն դուրս կ'եղնեմ: Երթանք ուրեմն: Ո՛վ Տէ՛ր Աստուած: Որո՞ւ մտքէ կ'անցնէր:

Տղան հագիւ կրցաւ չորս բառ զուրցել ընտանեաց վրայ տեղեկութիւն տարու համար: Ո՛հ, ինչպէս գոհ եմ, — թոթովեց: — Ո՛րչափ ուրախ եմ: Ինչ տխուր օրեր անցուցի: — Եւ հայրը համբուրելէ չէր յազենար:

Քայց տեղէն չէր շարժեր:

— Եկուր ուրեմն, — ըսաւ իրեն հայրը: — Այս իրիկուն ալ տուն կրնանք հասնիլ: Երթանք: — Եւ զինք իրեն քաշեց:

Տղան դարձաւ իր հիւանդին նայելու:

— Քայց . . . կու գաս թէ ո՛չ, — հարցուց հայրը, զարմացած:

Տղան ակնարկ մ'ալ տուաւ հիւանդին, որ այն վայրկենին աչքերը բացաւ և սևեռուն իրեն նայեցաւ:

Այն ատեն իր ներսէն բառերու հեղեղ մը դուրս թափեցաւ: — Ո՛չ, քարս, սպասէ՛. . . . ահա. . . . չեմ կրնար: Այն ծերունին կայ: Հինգ օրէ ի վեր հոս եմ: Միշտ ինծի կը նայի: Զքեզ կը կարծէի: Զինք կը սիրէի: Ինծի կը նայի, ես կը խնամեմ զինք, միշտ քովը կ'ուզէ զիս, հիմա շատ գէշ է, համբերէ՛, սիրտ չեմ ըներ, չեմ գիտեր, շատ կը ցաւիմ, վաղը տուն կու գամ, զիս քիչ մ'ալ հոս ձգէ, լաւ չըլլար որ զինք թողում, միայնակ կը մեռնի, թո՛ղ որ հոս մնամ, սիրելի թարաւ:

— Ապրինս, փոքրիկ, — գոչեց օգնականը:  
 Հայրը վարանած մնաց՝ տղան դիտելով, յետոյ  
 հիւանդին նայեցաւ: — Ո՞վ է, — հարցուց:  
 — Քեզի պէս գիւղացի մը, — պատասխանեց  
 օգնականը, — գրեէն եկած, ճիշտ քու մտած օրդ  
 հիւանդանոց մտած: Ձինք զգայազուրկ հո՞ս բե-  
 րին, և բան մը չկրցաւ ըսել: Գուցէ ընտանիք,  
 տղաքներ ունենայ՝ հեռուն: Քու սրբիդ իրեննե-  
 րէն մէկը կարծած պիտի ըլլայ:

Հիւանդը միշտ տղուն կը նայէր:

Հայրն ըսաւ Չիչիլոյին. — Կեցի՛ր:

— Քիչ ժամանակ միայն պիտի մնայ, — փրս-  
 փսայ օգնականը:

— Կեցի՛ր, — կրկնեց հայրը: — Դու սիրա-  
 ունիս: Ես շուտով տուն կ'երթամ՝ մօրդ սիրաբը  
 հանգստացնելու համար: Ահա քեզի սկստ մը՝  
 պէտքերուդ համար: Մնաս բարեաւ, ազնիւ տը-  
 դաս: Յետեւեւ թիւն:

Ձինք գրկեց, լաւ մը դիտեց, ճակատը համ-  
 բուրեց և մեկնեցաւ:

Տղան անկողնոյն քով վերադարձաւ, և հիւան-  
 դը մխիթարուած տեսնուեցաւ: Եւ Չիչիլոյն այլ  
 ևս առանց բարւ սկսաւ դարձեալ հիւանդապահու-  
 թիւն ընել, բայց մի և նոյն խնամքով, մի և նոյն  
 համբերութեամբ. սկսաւ դարձեալ ինք խմցնել և  
 վերմակները շակել, ձեռքը շոյել, հետն անուշու-  
 թեամբ խօսիլ՝ սիրա տալու համար: Բոլոր գիշերը  
 քովը հակեց, յաջորդ օրն ալ դեռ հետը կեցաւ:  
 Սակայն հիւանդութիւնն երթարով կը ծանրանար.  
 Դէմքը մանուշակի գոյն կ'առնէր, անկապ խօսքեր

կը հանէր բերնէն, և ուռեցքը կ'այլանդակուէր:  
 Երեկոցեան այցելութեան՝ բժիշկն ըսաւ թէ գի-  
 շերը չէր անցուններ: Եւ այն ատեն Չիչիլոյ իր  
 խնամքը կրկնապատկեց և վայրկեան մ'իսկ աչքը  
 վրայէն չհեռացուց: Եւ հիւանդը կը նայէր ու կը  
 նայէր իրեն, և դեռ մերթ շրթները կը շարժէր  
 մեծ ճիգով մը, իբրև թէ բան մ'ուզէր ըսել, և  
 տարօրինակ քաղցր արտայայտութիւն մը կ'անցը-  
 նէր երբեմն աչքերուն մէջէն, որոնք միշտ կը փո-  
 քրրկանային ու կը քողաւորուէին: Եւ այն գի-  
 շերը տղան հակեց՝ մինչև արշալոյսին բացուելը,  
 մինչև օրուան առաջին շուր, և գթութեան քրոջ  
 երկնալը: Քոյրն անկողինին մօտեցաւ, ալնարկ  
 մը տուաւ հիւանդին, և երազ քայլերով մեկնե-  
 ցաւ: Քիչ վայրկեան վերջ դարձեալ երեցաւ օգ-  
 նական բժիշկին և հիւանդապահի մը հետ՝ որ  
 կանթեղ մ'ունէր ձեռքը:

— Վերջին վայրկեանն է, — ըսաւ բժիշկը:

Տղան հիւանդին ձեռքը սեղմեց: Սա աչքը  
 բացաւ, պիչ նայեցաւ ու փակեց:

Այն ըսպէին տղան զգաց՝ որ իր ձեռքը սեղ-  
 մուեցաւ: — Չեռքս սեղմեց, — բացազանչեց:

Բժիշկը վայրկեան մը ծռած մնաց հիւանդին  
 վրայ, յետոյ երաւ: Գթութեան քոյրը խաչելու-  
 թիւն մը վար առաւ պատէն:

— Մեռաւ, — գոչեց տղան:

— Գնա՛, որդեակ, — ըսաւ բժիշկը: — Քու  
 սրբազան ծառայութիւնդ լրացաւ: Գնա՛ և յաջու-  
 զութիւնը հետդ ըլլայ, որուն տրժանի ես: Աս-  
 տուած զքեզ պիտի պաշտպանէ: Երթա՛ս բարեաւ:

Քոյրը, որ վայրկեան մը հեռացած էր, վերագարձաւ մանուշակի փունջով մը, զոր լուսամուտի վրայի գաւաթի մը մէջէն առած էր, և զայն արդուն առաւ, ըսելով. — Ուրիշ բան չունիմ՝ քեզի տալիք: Ա՛ռ ասիկայ ի յիշատակ հիւանդանոցին:

— Շնորհակալ եմ, — պատասխանեց տղան, մէկ ձեռքով փունջն առնելով, միւսով աչքերը սրբելով. — բայց շատ ճամբայ ունիմ՝ հետիտան ընելիք... կը փճացնեմ: — Եւ փունջը քակելով՝ մանուշակներն անկողինին վրայ ցանեց, ըսելով. — դասնք յիշատակ կը թողում խեղճ մեռելիս: Շնորհակալ եմ, քոյր: Շնորհակալ եմ, պարոն բժիշկ: — Յետոյ մեռելին դառնալով. — Մնաս բարեաւ...: — Եւ մինչդեռ անուն մը կը փրնտուէր անոր տարւ, սրտէն՝ շրթունքին անցաւ այն քաղցր անունը՝ զոր հինգ օր առած էր անոր. — Մնաս բարեաւ, խեղճ քարս:

Այս ըսելով, թևին ներքեւ դրաւ լաթեղինաց ծրարը, և յողնութենէ ծնգած, դանդաղ քայլելով մեկնեցաւ: Արշարոյսը կը ծագէր:

## ԱՐՈՒԵՍՏԱՆՈՅԸ

### 18. Շաբաթ

Փրէքօսի երէկ երեկոյ ինձի եկաւ յիշեցուց՝ իր արուեստանոցը երթալ տեսնելու համար, որ ճամբուն ստորոտն է, և այս առտու հօրս հետ դուրս ելնելով՝ վայրկեան մը հոն գացինք միասին: Մինչդեռ մենք

արուեստանոցին կը մօտենայիք, կարօֆֆի ձեռքը ծըրար մը բռնած՝ վազելով անկից դուրս կ'ելնէր՝ հովին տուած իր մեծ վերնազգեստը՝ որով իր վաճառելի նիւթերը կը ծածկէր: Ո՛հ, հիմա գիտեմ թէ ո՛ւր կ'երթայ նա ժողվելու երկաթէ խարտոցուկները, զոր հին օրագիրներով կը վաճառէ այն մեծ շահավաճառ կարօֆֆին: Դրան առջևէն տեսանք որ Փրէքօսին զիբքը ծունկերուն վրայ դրած՝ աղիւններու կոյտի մը վրայ նստած՝ գասը կը սովրէր: Իսկոյն ելաւ և ներս հրաւիրեց զմեզ, մեծ սենեակ մ'էր ածուխի փոշիով լեցուն, որմբը՝ բոլոր մուրճերով, արքաններով, երկաթէ՝ գօտիներով, ամէն ձև երկաթներով ծածկուած. և անկիւն մը՝ տղու մը քաշած փուքսով կրակարանը կ'արծարծէր: Փրէքօսի հայրը սալին բռնէր էր, և աշկերտ մը երկաթէ գօտի մը կրակը դրած էր: — Ո՛հ, ահաւասիկ, — ըսաւ դարբինը զմեզ տեսնելուն պէս գլխարկը հանելով, — եկաւ բարի տղան՝ որ շոգեկառքը կը պարգևէ: Եկար որ քիչ մ'աշխատիլս տեսնես, այնպէս չէ: Այժմ, իսկոյն կը սկսիմ: — Եւ այս ըսելով կը ժպտէր, ա՛յլ ևս այն դաժան դէմքը, այն արուեստէն այլափոխուած աչքերը չունէր: Աշկերտը, ծայրը հրաշէկ եղած երկաթէ գօտի մը դրաւ անոր առջև, և դարբինն ալ զայն սալին վրայ դրաւ: Պատշգամի երկաթէ վանդակներու համար բոլորակ զարդ մը կը շինէր: Խոշոր մուրճ մը վեր առաւ, և սկսաւ ձեծել, հրաշէկ ծայրը մերթ այս մերթ այն կողմը՝ սալին մէջ տեղն ու ծայրը մղելով, և հազար ու մէկ կողմ դարձնելով. և զարմանալի էր տեսնել թէ ի՛նչպէս մուրճին այն երագ ու ճիշտ հարուածներուն տակ՝ երկաթը կը ծոկէր, կը գալարէր, հետըզհետէ ծաղկի մը ցցուած թերթիկին ձևը կ'առ-

ներ, իրբև խմորէ եղէզ մ'ըլլար զոր նա ձեի կը դնէր: Եւ այս պահուս իր որդին այնպիսի հպարտ կերպով մեզ կը նայէր, որ կարծես ըսել ուզէր. — Տեսէ՞ք, ինչպէս կ'աշխատի հայրս: — Տեսա՞ր, պարոնի՛կ, ինչպէս կը շինուի, — հարցուց ինծի դարբինը՝ աւարտած զարդն առջևս դնելով, որ եպիսկոպոսի մը հովուական գաւազանին կը նմանէր: Յետոյ զայն մէկդի դրաւ և ուրիշ մը կրակը մխեց: — Իրաւցնէ լաւ եղած է, — ըսաւ իրեն հայրս: Եւ աւելցուց. — Ուրեմն... կ'աշխատի՛ս, հէ՛: Փափաքդ եկաւ զարձեալ: — Այո՛, եկաւ,



— պատասխանեց զործաւորը՝ քրտինքը սրբելով, և քիչ մը խպնեցով: — Եւ գիտե՞ս թէ ո՞վ փափաքս բերաւ: — Հայրս չհասկնալ ձեռացուց: — Այն սիրուն տղան, — ըսաւ դարբինը, տղան մատնանշելով, — հո՛ն, այն սիրուն տղան, որ կը սովորէր ու իր հօր պատիւ կը բերէր, մինչդեռ հայրը... ինչքե կը վատնէր և հետն

անբանի մը պէս կը վարուէր: Երբ այն մետալը տեսայ... Ո՛հ, սիրուն ձագուկս, հոգուդ մեռնիմ, եկու՛ր

որ քիչ մը սիրուն դունչդ տեսնեմ: — Տղան խակոյն վազեց, դարբինը զինք ուղղակի սալին վրայ դրաւ՝ անութէն բռնելով և ըսաւ իրեն. — Քիչ մը սա սե սատանայ հօրդ ճակատը մաքրէ: — Եւ այն ժամանակ Փրէքօսսի իր հօր սևուկ երեսներն այնչափ համբուրեց որ ինքն ալ բոլոր սեցաւ: — Այսպէս լաւ է, — ըսաւ դարբինը, և զայն դարձեալ վար առաւ: — Իրաւցնէ՛ այսպէս լաւ է, Փրէքօսսի՛, — բացագանչեց հայրս, գոհ: Եւ դարբինին ու որդւոյն մնաց բարեաւ ըսելով զիս դուրս հանեց: Ելնելու պահուս, Փրէքօսսին ըսաւ ինծի. — Նեւրէ՛, — և գրպանս ծրար մը զամ դրաւ. ես զինք հրաւիրեցի որ գայ և իմ տունէս բարեկենդանը դիտէ: — Դու իրեն քու երկաթուղիդ պարգևեցիր, — ըսաւ հայրս ինծի ճամբուն մէջ, — բայց եթէ ոսկիէ ըլլար և մարգարիտներով լեցուն, դեռ փոքր պարգև մ'եղած պիտի ըլլար՝ այն սուրբ զաւկին համար՝ որ իր հօր սիրտը շինած էր:

## ՓՈՒՔՐԻԿ ՀՏՊԻՏԸ

20. Երկուշաբթի

Բոլոր քաղաքն եռուզեոի մէջ է բարեկենդանի համար, որ լմննալու մօտ է. ամէն հրապարակի մէջ անպարարներու տաղաւարներ և ձիախաղեր կը կանգնուին. և մենք պատուհաններուն տակ կտաւէ կրկէս մ'ունինք, ուր վննետիկեան փոքր ընկերութիւն մը՝ հինգ ձիերով խաղեր կը ձեռացնէ: Կրկէսը հրապարակին մէջ

տեղ է, և անկիւն մ'երեք խոշոր կառքեր կան, ուր անպարարները կը քնանան և զգեստ կը փոխեն. անուաւոր երեք տնակներ՝ իրենց փոքր լուսամուտներով և իւրաքանչիւրը մէկ ծխնելոյցով, որ միշտ կը միայն և ամէն լուսամուտի մէջէն խուճը մը տղաք դուրս կար. կառած են: Կին մը կայ որ մանկիկի մը ծիծ կու տայ, կերակուր կը պատրաստէ և լարի վրայ կը խողայ: Խեղճ մարդիկ: Անպարար կ'ըսուին՝ իբրև նախատինք մը. և սակայն պարկեշտօրէն իրենց օրապահիկը կը շահին՝ ամէնքը զուարճացնելով. և ինչպէս կը յոգնին: Բոլոր օրը ասուեակով կրկէսին և կառքերուն մէջ կը վազեն այս ցուրտերուն. ներկայացումներու միջանկեալ պահուն՝ ոտքի վրայ, շտապով երկու պատառ կ'ուտեն. և շատ անգամ երբ արդէն կրկէսը լեցուած է, քամի մը կ'ելնէ որ կտանները կը քանդէ և լոյսերը կը մարէ, և մնաս բարեան հանդէս, պէտք են դրամ. ներն ետ դարձնել և բոլոր գիշերն աշխատիլ՝ տաղաւարը կարգի դնելու համար: Երկու տղաք ունին որ կ'աշխատին. և հայրս ամենէն պզտիկը ճանչցաւ՝ երբ հրապարակէն կ'անցնէր. տիրոջ որդին էր, այն՝ որուն ձիախաղը տեսանք անցեալ տարի, Վիթթորիոյ Էմմանուէլէ հրապարակի կրկէսին մէջ: Օեծցեք է, ութ տարեկան պիտի ըլլայ, գեղեցիկ տղայ մ'է, կ'ուր ու թըխաղէմ չարածնիկ մը՝ առատ և սև գանգուրներով՝ որոնք իր կոնաձև զլխարկէն դուրս կը թափին: Հտպիտի զգեստ հագուած է, սևի վրայ սպիտակ ասղնեգործ՝ տեսակ մը թեւաւոր պարկի մէջ միտուած, և լաթէ կօշիկով: Սատանեկիկ մ'է: Ամենուն սիրելի: Զինք առտու կանուխ շալի մէջ փաթթուած կը տեսնենք՝ որ իր փայտեայ սնակը կաթ կը տանի. յետոյ կ'երթայ Պերթօ-

լայի ճամբուն կառատունէն ձիերն առնելու համար. մանկիկը կը գրկէ, կրակը կը վառէ, և հանգստեան ժամերուն միշտ մօրմէն անբաժան է: Հայրս պատուհանէն միշտ զինք կը դիտէ, և միայն իրեն ու իրեններուն վրայ կը խօսի, թէ բարի մարդիկ են և զաւակին կը սիրեն: Երեկոյ մը՝ կրկէս գացինք. ցուրտ կ'ընէր, գրեթէ մարդ չկար. սակայն հտպիտիկը մեծամեծ շարժումներ կ'ընէր, այն քիչ մը ներկաները զուարթ բուռնելու համար. վտանգաւոր ոստումներ կ'ընէր, ձիերուն պոչէն կը կախուէր, գլխի վրայ կը քալէր, բոլորովին մինակ, և կ'երգէր, միշտ ժպտելով՝ իր գեղեցիկ ու թուխ դէմքով. և իր հայրը՝ կարմիր զգեստ, սպիտակ գուրպակ և բարձր մուճակներ հագուած և մտրակը ձեռք զինք կը դիտէր. բայց տխուր էր: Հայրս կարեկցեցաւ, և յաջորդ օրը Տէլիս նկարչին հետ՝ որ եկաւ զմեզ գտնելու՝ անոր վրայ խօսեցաւ: Այն խեղճ մարդիկը չարաչար կ'աշխատին և հասարակ գործեր կ'ընեն: Այն փոքրիկ տղան ինք շատ կը սիրէր: Ինչ կարելի էր ընել անոնց համար: Նկարիչը զաղափար մը յղացաւ: — Գեղեցիկ յօդուած մը գրէ՛ Կածէր-րայիւն մէջ, — ըսաւ իրեն, — դու որ գրել գիտես, պզտիկ հտպիտին հրաշքները պատմէ, ես ալ դէմքը կը նկարեմ. Կածէրրաւն ամէնքը կը կարդան, և գոնէ անգամ մը մարդ կու գայ: — Եւ այնպէս ըրին: Հայրս գեղեցիկ ու զուարճալի յօդուած մը գրեց, որ այն կը պատմէր՝ ինչ որ մենք լուսամուտէն կը տեսնենք, և փոքրիկ դերասանիկը տեսնելու և զգուշելու փափաքը կը բերէր. նկարիչն ալ շնորհալի և ճիշտ նման դէմք կը բերէր. նկարիչն ալ շնորհալի և ճիշտ նման դէմք մը նկարեց, որ շարաթ երեկոյ հրատարակուեցաւ: Եւ մը նկարեց, որ շարաթ երեկոյ հրատարակուեցաւ: Եւ ահա, կիրակուան ներկայացումին ժամանակ հո՞՞ բազ-



մութիւն մը կրկէսը դիմեց: Ազդն էր. Ներկայացում ի նպաստ փոքրիկ նուսիտիւն. փոքրիկ հտպիտին՝ ինչպէս ըսուած էր Կածձերբային մէջ: Հայրս զիս առաջին կարգերուն մէջ տարաւ: Իրան քով փակցուցած էին Կածձերբան: Կրկէսը խռնուած էր. ներկաներէն շատերը ձեռքերնուն Կածձերբան հտպիտին ցոյց կու տային, որ կը ծիծաղէր, և բողբոջին երջանիկ՝ մերթ մէկուն մերթ միւսին քով կը վազէր: Տէրն ալ գոհ էր: Երեւակայէ՛: Ոչ մէկ օրագիր իրեն այնչափ պատիւ ըրած էր, և դրամարկղիկը լեցուած էր: Հայրս քովս նստաւ: Ներկաներուն մէջ ծանօթներ ալ գտանք: Զիարանի մուտքին քով, ոտքի վրայ Մարմնամարզի ուսուցիչը կար, այն՝ որ Կարիպալտիի հետ եղած է. և մեր դիմաց՝ երկրորդ կարգերուն մէջ՝ փոքրիկ որմնագիրը, իր կլոր երեսիկով, իր հսկայ հօր քով նստած... և հազիւ զիս տեսաւ, ինծի ընչապատուկ ըրաւ: Քիչ մ'աւելի անդին՝ Կարօֆֆին տեսայ, որ հանդիսատէսները կը համբէր, մատներուն վրայ հաշուելով՝ որչափ կրնար ժողված ըլլալ Ռնկերութիւնը: Առաջին կարգի նստարաններուն մէջ, մեզմէ քիչ հեռու, կար նաև խեղճ Ռօպէթթին, այն՝ որ մանկիկը հանրակառքի տակէն փրկեց, իր անթացուպերն ոտքերուն մէջ առած, հօր կողին սեղմուած՝ որ թնդանթածիգներու գնդապետ էր, և մէկ ձեռքն անոր ուսերուն վրայ դրած էր: Ներկայացումս սկսաւ: Հտպիտիկը՝ ձիուն, տրապէզին և չուանին վրայ զարմանալի բաներ ըրաւ, և ամէն անգամ որ վար կը ցատկէր, ամէնքը կը ծափահարէին և շատերն իր խոսուպներէն կը քաշէին: Յետոյ ուրիշ շատ մը զանազան մարմնակրթանքներ ըրին, լարախաղացութիւն, ձեռնածուութիւն՝ ցնցոտի և արծաթէ շողուն զգեստներով: Բայց

երբ տղան չըլլար, կարծես ամէնքը կը ձանձրանային: Բոպէ մը՝ մարմնամարզի ուսուցիչը տեսայ՝ ձիերու մուտքին առջև կեցած, որ կրկէսի տիրոջ ականջին խօսեցաւ, և վերջինս իսկոյն ակնարկ մը տուաւ հանդիսատէսներուն՝ իբրև թէ մէկը փնտռէր: Ակնարկը մեր վրայ կեցաւ: Հայրս նշմարեց, հասկցաւ իսկոյն որ ուսուցիչն ըսած էր թէ յօդուածագիրն ինք էր, և շնորհակալութիւն շնորհունելու համար՝ ելաւ մեկնեցաւ, ըսելով ինծի. — Դու կեցիր, Հենրիկոս, ես դուրսը քեզի



կը սպասեմ: — Հտպիտիկը յետ քանի մը խօսք փոխանակելու հօր հետ, ուրիշ մարմնակրթանք մ'ալ ըրաւ, ձիուն վրայ կանգուն՝ որ քառասորով կ'արշաւէր, չորս անգամ ըզգեստ փոխեց, ճանապարհորդի, նաւաստիի, զինուորի, լարախաղացի, և ամէն անգամ որ քովէս կ'անցնէր՝ ինծի կը նայէր: Յետոյ, երբ իջաւ, հտպիտի գլխարկը ձեռքերուն մէջ՝ սկսաւ կրկէսի շրջանն ընել, ամէնքն անոր մէջ դրամ և անուշեղէն կը նետէին: Ես երկու դրամ պատրաստեցի. բայց երբ իմ առջևս եկաւ, փոխանակ գլխարկը կարկանդակու, զայն ետ քաշեց, ինծի նայեցաւ ու առաջ քաշեց: Ես մահացայ: Ինչո՞ւ այդ կոպտութիւնն ըրաւ ինծի: Ներկայացումը վերջացաւ, հայրը շնորհակալ եղաւ հա-

սարակութեան, և բոլոր բազմութիւնն ոտք ելաւ՝ դէպ ի դուռը խոնուելով: Եւ ամբոխին մէջ շփոթած էի, և արդէն դուրս ելնելու վրայ էի, երբ զգացի որ մէկը ձեռքիս դպաւ: Գարձայ. հտպիտիկն էր, իր գեղեցիկ թուփս երեսոյն ու սև գանգուրներով, որ ինձի կը ժպտէր. ձեռքն անուշեղէններով լեցուն էր: Այն ատեն հասկցայ: — Կ'ոզղես, — ըսաւ ինձի, — համոտեսդ հոպիտիկին աւնաշներն: — Ես, այո՛, նշան ըրի, և անոնցմէ երեք չորս հատ առի: — Այն ատեն, — աւելցուց, — պաշկի մ'ալ ա՛ռ: — Երկու հատ տո՛ւր, — պատասխանեցի, և երեսս իրեն տուի: Եւ թևով ալիւրոտ երեսը մաքրեց, մէկ ձեռքը վիզս փաթթեց, և երկու համբոյր զրոշմեց այտերուս, ըսելով. — Թո՛ւ, մէկ հատն ալ հօրդ տար:

## ԲԱՐԵԿԵՆԴՍՆԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԸ

21. Նրեքշարթի

Ինչ տխուր տեսարան մ'ունեցանք, այսօր, դիմակաւորաց պողոտային վրայ: Լաւ վերջացաւ. սակայն կրնար մեծ դժբաղդութիւն մը յառաջ գալ: Սան Քարլոյ հրապարակին մէջ, բոլոր՝ դեղին, կարմիր և ճերմակ զրասանգներով զարդարուած, հոծ բազմութիւն մը կը դիզուէր. ամէն գոյներով դիմակաւորներ չորս կողմը կը շրջէին, ոսկեգօծ և զրօշազարդ՝ վրանի, թատրոնի և մակոյկի ձևերով կառքեր կ'անցնէին, խայտարղէտ հոպիտներով, պատերազմիկներով, խոհարարներով, նա-

ւաստիներով և հովուուհիներով լեցուած. խառնաշփոթութիւն մը՝ որ մարդ չէր գիտեր ո՛ւր նայիլ. փողերու, եղջերափողերու, ծնծղաներու ժխոր մը՝ որ ականջ կը տանէին. և կառքերուն դիմակաւորները կը կոնծէին ու կ'երգէին՝ ոտքի վրայ կեցող ամբոխին և լուսամուտները գանուղներուն ուղղելով, որոնք կոկորդիին պատռելու չափ կը պոռային, և կատաղօրէն անոնց նարինջ ու անուշեղէն կը նետէին. և խառնիճադանճէն ու կառքերէն բարձր՝ մինչև աչք կտրած տեղ մը՝ դրօշակներու ծածանումը, խոյրերու փայլը, փետրափունջերու շարժիլը, թղթախիւսէ մեծ գլուխներու իրարանցումը, հսկայածև գլխարկները կանանց, ահագին խողովակներ, անհեթեթ զէնքեր, թմբկիկներ, ճակգարաններ, կարմիր գլխարկիկներ և շիշեր կը տեսնուէին. ամէնքը յիմարած կը տեսնուէին: Երբ մեր կառքը հրապարակ մտաւ, մեր աջևէն քառածի ոսկեհիւս տապալակներով ծածկուած և բոլոր կեղծ վարդերով շրջապատուած հրաշալի կառք մը կ'երթար, որուն վրայ տասնուչորս կամ տասնուհինգ պարոններ կային՝ Գաղղիոյ արքունեաց ազնուականներուն պէս դիմակաւորուած, ամէնքը մետաքսով փաղփոն, սպիտակ խոշոր կեղծամներով, փետրաւոր գլխարկ մը թևերուն տակ և կարճ սուրով, և կուրծքերուն վրայ ժապաւէններու ու ժանեակներու խառնակութիւն մը. շքեղ բան: Ամէնքը միասին գաղղիական եղանակ մը կ'երգէին և անուշներ կը նետէին բազմութեան, որոնք կը ծափահարէին ու կը պոռային: Երբ յանկարծ, մեր ձախակողմը մարդ մը տեսանք որ հինգ կամ վեց տարեկան աղջիկ մը գլուխներէն վեր բռնած էր, խեղճ պղտիկ մը՝ որ սաստիկ կու լար՝ յուզուած՝ ձեռքերը շարժելով: Մարդը դէպ ի այն պարոններուն

կառքը ճամբայ բացաւ, որոնցմէ մին ծռեցաւ, և միւսն ըսաւ բարձրաձայն. — Ա՛ռ այս փոքրիկը, ամբոխին մէջ մայրը կորսնցուցեր է, գրկէ՛ գինքը. մայրը հեռու չլինար ըլլալ, ու կը տեսնէ. ուրիշ միջոց չըկայ: — Պարոնը գրկեց փոքրիկ աղջիկը. ամէնքը երգելը դադրեցուցին. աղջիկը կը ճչէր ու կը շարժուէր. պարոնը դիմակը հանեց. կառքը դանդաղարար շարունակեց իր ընթացքը: Այն բոլորին, ինչպէս ըսին յետոյ մեզի, հրապարակի միւս ծայրէն, գրեթէ խենթեցած խեղճ կին մը՝ արմուկներով ու հրմշտկելով խառնիճաղանճը կը կտրէր, ճչելով. — Մարիամ: Մարիամ: Մարիամ: Աղջիկս կորսնցուցի: Աղջիկս գողցան: Պատիկ աղջիկս խղզեցին: — Եւ քառորդէ մ'ի վեր կը խելագարէր, կը յուսահատէր՝ այնպէս ասդիս անդին շրջելով՝ բազմութենէն ճնշուած, որ հազիւ քայլ մը յառաջ կ'տանէր: Կառքին տէրը, այս պահուս, փոքրիկ աղջիկն իր կուրծքի ժապաւէններուն ու ժանեակներուն սեղմած էր, աչքը բոլոր հրապարակին վրայ շրջեցնելով, և ջանալով խեղճ պզտիկն հանգարտեցնել, որ ձեռքերով երեսը կը ծածկէր՝ ուր ըլլալը չգիտնալով, և սիրտը ճաթելու չափ կը հեծկտար: Պարոնը յուզուած էր, կը տեսնուէր որ այն աղաղակներն իր հոգին կը գալարէին. բոլոր միւսներն աղջկան նարինջ և անուշեղէններ կը նուիրէին. բայց նա բոլոր կը մերժէր՝ միշտ աւելի յուզուած և ահաբեկ: — Մայրը փնտռեցէք, — կը գոչէր պարոնը՝ բազմութեան, — մայրը փնտռեցէք: — Եւ ամէնքն ան ու ձախ կը դառնային. բայց մայրը չէր գտնուեր: Վերջապէս, Հոովմ ճամբուն ծայրէն քանի մը քայլ հեռու՝ կին մը տեսնուեցաւ որ դէպ ի կառքը կը վազէր...: Ո՛հ, այն երբեք պիտի

չմոռնամ: Մարդկային արարածի չէր նմաներ այլ ևս, հերարձակ, այլադէմ և զգեստները պատուած, յառաջ նետուեցաւ հոնչիւնով մը՝ որ չհասկցուեցաւ թէ ուրախութեան, անձկութեան թէ կատաղութեան էր, և երկու ճիրաններու պէս ձեռքերը նետեց աղջիկը սեղմելու համար: Կառքը կեցաւ: — Ահաւասի՛կ, — ըսաւ պարոնը, աղջիկը համբուրելէ վերջ՝ իր մօր թևերուն վրայ դնելով, զոր նա կատաղութեամբ կուրծքին վրայ սեղմեց...: Սակայն երկու փոքրիկ ձեռքերէն մին՝ մանրերկրորդ մը պարոնի ձեռքին մէջ մնաց, որ իր ձախ մատէն խոշոր աղամանդով ոսկիէ մատանի մը հանելով և երազարար փոքրիկ աղջկան մէկ մատն անցընելով, — Ա՛ռ, — ըսաւ, — հարսնութեանդ օժիտը թող ըլլայ: — Մայրը հիացած մնաց հոն, ամբոխը սաստիկ ծափահարեց, պարոնը դարձեալ դիմակը դրաւ, ընկերներն երզը սկսան, և կառքը բուն ծափահարութիւններու և կեցցէներու մէջ դանդաղօրէն մեկնեցաւ:

## ԿՈՅՐ ՏՂԱՒԸ

24. չիմզարթի

Ուսուցիչը ծանր հիւանդ է և իր տեղ չորրորդ դասարանինը զրկեցին, այն՝ որ կոյրերու Գպրոցին ուսուցիչ եղած է. ամենէն աւելի ծերը, այնպէս սպիտակ՝ որ կարծես բամբակէ կեղծամ դրած ըլլայ գլուխը. և այնպիսի կերպով մը կը խօսի, որ կարծես մեղամաղճոտ երգ մը կ'եղանակէ. բայց լաւ և շատ հմուտ է: Հա-

գիւ դպրոց մտած, տղու մը մէկ աչքը կապուած տեսնելով՝ գրասեղանին մօտեցաւ և հարցոց թէ ի՞նչ ունէր: — Ուշադրութիւն դիւր աչքերուդ, տղա՛, — ըսաւ: Եւ այն ատեն Տէրօսսի հարցոց իրեն. — Ստո՞յգ է, պարո՞ն ուսուցիչ, որ կոյրերուն դասատու եղած ես: — Այո՛, շատ տարիներ, — պատասխանեց: Եւ Տէրօսսի ցած ձայնով ըսաւ. — Մեզի բաներ մը պատմէ: Ուսուցիչը գնաց գրասեղանին առջև նստելու: Քօրէթթին ըսաւ բարձրաձայն. — Կոյրերուն Գըպրոցը Նիցցա ճամբուն մէջ է:

— Գուք՝ կոյրեր, կոյրեր կ'ըսէք, — ըսաւ ուսուցիչը, — այնպէս, ինչպէս կ'ըսէք հիւանդներ և աղքատներ կամ չեմ գիտեր ի՞նչեր: Բայց այդ խօսքին իմաստը լաւ կ'ըմբռնէք: Մտածեցէ՛ք քիչ մը: Կոյրեր: Բնաւ բան մը չտեսնե՛լ: Յերեկը գիշերէն չորոշել, չտեսնել՝ ո՛չ երկինքն, ո՛չ արևն և ոչ իսկ ծնողըը, ոչ մէկ բան որ շուրջը կը գտնուի և կը շօշափուի. մշտընջենաւոր խաւարի մը մէջ ընկղմած ըլլալ, և իբրև երկրի խո՞րը թաղուած ըլլալ: Փորձեցէք քիչ մ'աչքերնիդ փակել և մտածել՝ թէ միշտ այդպէս պիտի մնաք. իսկոյն սրտնեղութիւն մը, սարսափ մը կը տիրէ վրանիդ, կը կարծէք թէ անկարելի պիտի ըլլայ ձեզի դիմանալ, թէ պիտի սկսիք պոռալ, թէ պիտի խենթենաք կամ պիտի մեռնիք: Եւ սակայն... խեղճ տղաք, երբ առաջին անգամ մարդ կոյրերուն Գպրոցը կը մտնէ, գրօսանքի ժամանակ, և ամէն կողմէն կը լսէ ջութակներու և սրինգներու ձայները, անոնց բարձրաձայն խօսիլն ու խնդալը, աշխոյժ քայլերով սանդուղներէն ելնել ու իջնելը, և ազատ համարձակ սրահներուն ու ննջարաններուն մէջ վազվզելը, երբեք մտքէն չանցնիր

ըսելու՝ թէ անոնք դժբաղդներ են: Լաւ պէտք է գիտնալ, թէ տասնուվեցէն տասնևութ տարեկան զուարթ և առոյգ պատանիներ կան, որոնք տեսակ մը աշխուժութեամբ կամ գրեթէ համարձակութեամբ կը համբերեն կուրութեան, բայց իրենց դէմքերուն խրոխտ ու ցասկոտ արտայայտութենէն կը հասկցուի, թէ այդ դժբաղդութեան համակամած ըլլալէ առաջ՝ սարսափելի կրած պէտք են ըլլալ: Ուրիշներ կան, տժգոյն ու անուշ դէմքերով, որոնց մէջ մեծ համակամութիւն մը կը տեսնուի, բայց տխուր, և կը հասկցուի թէ դեռ մերթ գաղտնի պէտք են լալ: Ո՛հ, սիրելի՛ որդեակք: Մտածեցէք թէ անոնցմէ ոմանք քանի մ'օր կ'ընէ որ իրենց տեսութիւնը կորսնցուցեր են, թէ ոմանք ալ շատ մը մարտիրոսական տարիներէ և շատ մը սոսկալի վիրաբուժական գործողութիւններէ վերջ, և թէ շատերն այդպէս ծնած են, ծնած՝ գիշերուան մը մէջ՝ որ իրենց համար բնաւ արշալոյս չէ ունեցած, աշխարհ մտած՝ իբրև անհուն գերեզմանի մը մէջ, և թէ չեն գիտեր ի՞նչպէս շինուած է մարդուս դէմքը: Երևակայեցէ՛ք, ո՛րչափ կրած պէտք են ըլլալ և ո՛րչափ ալ պիտի կրեն՝ երբ այսպէս շփոթ կերպով, ահաւոր տարբերութեան վրայ կը մտածեն որ կայ իրենց և տեսնողներուն մէջ, և իրենք իրենց իսկ կը հարցնեն. — Ինչո՞ւ այս տարբերութիւնը՝ եթէ ո՛ր և է յանցանք չունինք: — Ես որ այնչափ տարի իրենց մէջ գտնուած եմ, երբ կը յիշեմ այն դասարանը, բոլոր այն աչքերը՝ ընդ միշտ կնքուած, բոլոր այն բիբերը՝ անլոյս ու անկենդան, և յետոյ ձեզի կը նայիմ... Ինծի անկարելի կը թուի որ դուք երջանիկ չըլլաք: Մտածեցէ՛ք, Իտալիոյ մէջ քսան և վեց հազարի չափ կոյրեր կան:

Քսան և վեց հազար մարդիկ՝ որ լոյս չեն տեսներ, կը հասկնա՞ք. բանակ մը՝ որ չորս ժամ պէտք պիտի ըլլար մեր լուսամուտներուն տակ քովէ քով շարելու համար:

Ուսուցիչը լռեց. ճիկ չէր լսուեր դարոցին մէջ: Տէրօսսի հարցուց թէ ստո՞յգ էր որ կոյրերուն շօշափողութիւնն աւելի զօրաւոր է:

Ուսուցիչն ըսաւ. — Ստոյգ է: Բոլոր միւս զգայաբանքներն իրենց մէջ աւելի կը զօրանան, որովհետեւ ամէնուն մէջ ալ՝ տեսութեան թերին լրացնելու համար՝ անոնք աւելի և լաւագոյն կերպով կը գործածուին, քան անոնց մէջ՝ որ կը տեսնեն: Առտուն, ննջարաններուն մէջ կը հարցնեն իրարու. — Արեգակ կայ. — և ո՞վ որ աշխուժութեամբ կը հագուի՝ իսկոյն բակը կ'իջնէ ձեռքերն օդոյ մէջ շարժելու, զգալու համար թէ արևու ջերմութիւն կայ. և կը վազէ ուրախալի լուրը տալու. — Արեգակ կայ: — Անձի մը ձայնէն՝ անոր հասակին գաղափար մը կը կազմեն. մենք մարդու մը հոգին՝ իւր աչքերէն կը դատենք, իրենք՝ ձայնէն. տարիներով շեշտն ու ձայնին աստիճանը միտքերնին կը պահեն: Կ'իմանան թէ սենեկի մը մէջ մէկէն աւելի անձինք կան, եթէ նոյն իսկ մէկ հոգի մ'ալ խօսելու ըլլայ և միւսներն անշարժ կենան: Շօշափելով կ'իմանան՝ թէ դգալ մը՝ աւելի կամ նուազ մաքուր է: Պզտիկ աղջիկները՝ գունաւորուած և բնական գոյնով բուրդն իրարմէ կը զանազանեն: Զոյգ զոյգ ճամբէն անցնելու ժամանակ՝ գրեթէ ամէն խանութ իր հոտէն կը ճանչնան, նոյն իսկ անոնք՝ որոնց մէջ մենք հոտ չենք առներ: Շոնչանք կը դարձնեն, և դառնալու ժամանակ անոր հանած բրզգիւնէն՝ առանց սխալելու ուղիղ կ'երթան զանիկայ կը

բռնեն: Շրջանակը կը զլորեն, կոնախաղ կը զրօնուեն, չուանիկով կը ցատկեն, քարերով տնակիկներ կը շինեն, մանուշակներ կը ժողվեն իրրև թէ տեսնէին, փսխաթներ և կողովներ կը շինեն՝ երազ և լաւ կերպով գոյնզգոյն յարդեր իրարու հետ հիւսելով. այնչափ ձեռքերնին վարժեցուցեր են: Շօշափելիքը՝ իրենց տեսանելիքն է. իրենց ամենէն մեծ հաճոյքներէն մին է շօշափել, սեղմել, և շօշափելով իրաց ձեռքը գուշակել: Սրտաշարժ բան է տեսնել, երբ զիրենք արուեստից թանգարանը տանին, ուր կը թողուն որ ուզած բաներնուն դպչին, տեսնես ի՞նչ ուրախութեամբ երկրաչափական մարմնոց վրայ, տուներու նախատիպ օրինակներու վրայ, գործիներու վրայ կը նետուին, ի՞նչ ուրախութեամբ կը շօշափեն, կը շփեն, ամէն բան ձեռքերնուն մէջ կը դարձնեն, տեսնելու համար թէ ի՞նչպէս շինուած են: Իրենք տեսնել կ'ըսեն:

Կարօֆֆին ընդմիջեց ուսուցիչը՝ հարցնելու համար թէ ստո՞յգ էր որ կոյր տղաք ուրիշներէն աւելի լաւ հաշիւ ընել կը սովորին:



Ուսուցիչը պատասխանեց. — Ստոյգ է: Թէ հաշիւ ընել և թէ կարգալ կը սովորին: Մասնաւոր շինուած գրքեր ունին, ցցուած տառերով. մատերնին վրան կը շփեն, գրերը կը ճանչնան, և բառերը կ'ըսեն. գրավարժութեամբ կը կարգան: Եւ տեսնելու բան է թէ, խեղճերը, ինչպէս կը կարմրին երբ սխալ մը կ'ընեն: Եւ կը գրեն ալ՝ առանց մելանի: Հաստ ու պինդ թղթի վրայ՝ մետաղէ հերիւնով մը կը գրեն որ շատ մը խոր ու խումբ կէտեր կ'ընէ՝ յատուկ այբուբէնի մը համեմատ, որոնք թղթին հակառակ կողմը կը ցցուին, այնպէս որ թուղթը դարձնելով և մասներով այն ցցուած գրերը շօշափելով՝ անոնք իրենց և այլոց գրածները կրնան կարգալ. և այսպէս շարագրութիւններ կ'ընեն, իրարու նամակներ կը գրեն: Մի և նոյն կերպով թուանշանները կը գրեն ու կը հաշուեն: Էւ մօքով հաշիւ կ'ընեն, անհաւատալի դիւրութեամբ մը, մքերնին ցրուած չըլլալով արտաքին իրերու տեսութեամբ, ինչպէս մենք: Եւ տեսնելու բան է, ինչպէս կը սիրեն ընթերցում լսել, ինչպէս ուշադրութիւն կը դնեն, ինչպէս ամէն բան կը յիշեն, ինչպէս իրարու հետ կը վիճեն՝ նոյն խակ պատիկներն ալ՝ պատմական և լեզուական բաներու վրայ՝ չորս կամ հինգ հոգի մի և նոյն գրասեղանն վրայ նստած, առանց մէկը միւսին կողմը դառնալու, և առաջինը երրորդին հետ խօսակցելով, և երկրորդը չորրորդին հետ, բարձրաձայն և ամէնքը միասին, առանց խօսք մ'իսկ շփոթելու, այնչափ պատրաստ ու սուր լսողութիւն ունին: Եւ ձեզմէ աւելի քննութեան կարևորութիւն կու տան, զիտնաք, և աւելի կը կապուին իրենց ուսուցիչներուն հետ: Ուսուցիչին քայլերն ու հոտը կը ճանչնան. անոր

մէկ բառի հնչումէն կը հասկնան թէ բարի կամ գէշ տրամադրութեան մէջ է, առողջ է կամ հիւանդ. կ'ուզեն որ ուսուցիչն իրենց դպչի՝ երբ զիրենց կը քաջալերէ կամ կը գովէ, և իրենց երախտագիտութիւնն անոր յայտնելու համար՝ ձեռքերն ու թեկերը կը շօշափեն: Եւ զիրար ալ շատ կը սիրեն, ու լաւ ընկեր են: Հանգստեան ժամանակ ևս գրեթէ մի և նոյն ընկերները միշտ իրարու քով են: Աղջկանց մասին մէջ, օրինակի համար, շատ խումբեր կը բաժնուին՝ ըստ իրենց նուագած գործիներուն, ջութակահարները, դաշնակահարներ ու սրնգահարները, և երբեք իրարմէ չեն գատուիր: Երբ մէկու մը վրայ սէր տածեր են, դժուար է որ անկից բաժնուին: Մեծ միսիթարութիւն կը գտնեն բարեկամութեանց մէջ: Իրարու մէջ միշտ իրաւախօս են: Բարւոյն ու չարին որոշ և խոր գաղափար ունին: Ո՛չ մէկը անոնց պէս կը խանդավառուի վեհանձն արարք մը կամ մեծ գործ մը լսելով:

Վթիւնին հարցուց՝ թէ լաւ կը նուագեն:

— Սաստիկ կը սիրեն երաժշտութիւնը, — պատասխանեց ուսուցիչը: — Երաժշտութիւնն իրենց զուարճութիւնն ու իրենց կեանքն է: Կոյր տղաք հագիւ Ուսումնարան կը մտնեն, կարող են երեք ժամ ոտքի վրայ անշարժ կենալ և նուագ լսել: Դիւրութեամբ կը սովորին, զգացումով կը նուագեն: Երբ ուսուցիչը մէկու մը կ'ըսէ թէ երաժշտութեան յարմարութիւն չունիս, նա մեծ ցաւ կը զգայ, և կը սկսի ամենայն ջանքով աշխատել: Ո՛հ, եթէ լսես, հո՛ն ներսը, երաժշտութիւնը, եթէ զիրենց տեսնես երբ ճակատնին վեր բռնած կը նուագեն, ժպիտը շրթներուն վրայ, դէմքերնին կարմրած, յուզումէն դողդոջուն, գրեթէ իրենց իրենցմէ զուրս

Ելած՝ լսելու համար այն ներդաշնակութիւնը՝ որ զիրենք շրջապատող անհուն խաւարին մէջ կը տարածուի, ինչպէս պիտի զգաս՝ թէ երաժշտութիւնը աստուածային միտթարութիւն մ'է : Եւ կ'ուրախանան, երջան-



կութեամբ կը ցնծան երբ ուսուցիչ մ'իրենց ըսէ. — Դու երաժշտագէտ մը պիտի ըլլաս : — Իրենց համար երաժշտութեան մէջ առաջինը, այն՝ որ ամենէն աւելի կը յաջողի դաշնակի և ջութակի մէջ, իրրև թագաւոր մ'է. զայն կը սիրեն, կը յարգեն : Երբ իրենցմէ

երկու հոգւոյ մէջ կոխ մը ծագի, անոր կը դիմեն. եթէ երկու բարեկամներ զժտուին, անիկայ զիրենք կը հաշտեցնէ : Ամենէն պզտիկները՝ որոնց նա նուագել կը սովորեցնէ, զանիկայ իրրև հայր կը համարին : Պառկելու մեկնելէ առաջ, ամէնքը կ'երթան անոր զիշեր բարի մաղթելու : Եւ միշտ երաժշտութեան վրայ կը խօսին : Արդէն անկողին գացած, ուշ զիշերով, ուսումէն ու աշխատութենէն զրեթէ ամէնքը յոգնած, և կէս քուն կէս արթուն, տակաւին ցած ձայնով երգի, ուսուցիչներուն, գործիքներուն, և երաժշտախմբերու վրայ կը խօսին : Եւ իրենց համար՝ ընթերցումէ և երաժշտութեան դասէ զրկուելը՝ մեծ պատիժ մ'է, սաստիկ ցաւ կը զգան, որ երբեք կարելի չէ սիրտ ընել զիրենք այն կերպով պատժելու : Լոյսը՝ ինչ որ է մեր աչքերուն համար, երաժշտութիւնն ալ՝ իրենց սրտին համար է :

Տէրօսի հարցուց՝ թէ կարելի չէ՞ր զիրենք տեսնելու երթալ :

— Կարելի է, — պատասխանեց ուսուցիչը. — բայց դուք, տղա՛ք, պէտք չէք առ այժմ երթալ : Վերջը կ'երթաք, երբ այն դժբաղդութեան բոլոր մեծութիւնն ըմբռնելու աստիճանին հասնիք, և զգաք թէ ինչ գուժ հարկաւոր է անոր համար : Տխուր տեսարան մ'է, որդեակք : Դուք երբեմն հո՛ն տղաք կը տեսնէք, բաց լուսամուտի մ'առջև նստած՝ թարմ օդը ծծելու համար, դէմքերնին անշարժ, որ կարծես թէ ընդարձակ դաշտագետինն ու գեղեցիկ կապոյտ լեռները կը դիտեն զոր դուք կը տեսնէք . . . և մտածել թէ բնաւ բան չեն տեսներ, թէ բնաւ բան մը պիտի չտեսնեն այն անհուն գեղեցկութենէն, ձեր հոգին կը ճնշուի իրրև թէ այն վայրկեանին դուք ալ կոյր եղած ըլլայիք : Եւ ի ծնէ

կոյրերն ալ, որ աշխահր բնաւ տեսած չըլլալով, ոչ մէկ բանի վրայ չեն ցաւիր՝ վասն զի ոչ մէկ բանի գաղափարը չունին, կարեկցութիւն չեն շարժեր: Բայց քանի մ'ամսուան կոյր տղաք կան, որ դեռ ամէն բան կը յիշեն, որ բոլոր կորսնցուցածնին լաւ կ'ըմբռնեն, և ասոնք աւելի կը ցաւին՝ զգալով իրենց մտքին մթազնիլը, ամէն օր քիչ քիչ մոռնալով՝ իրենց ամենէն աւելի սիրելի դէմքերը, զգալով՝ իրենց յիշուութեանց մէջ մեռնիլը՝ ամենէն սիրելի անձինքը: Ասոնցմէ մէկը՝ օր մ'անբացատրելի տխրութեամբ մ'ըսաւ ինծի. — Կ'ուզէի անգամ մ'ալ իմ առաջին աչքս ունենալ, գոնէ վայրկեան մը մօրս դէմքը տեսնելու համար, զոր այլ ևս չեմ յիշեր: — Եւ երբ մայրը կ'երթայ զիրենք տեսնելու, ձեռքերնին անոր երեսին վրայ կը դնեն, անոր ճակատը, կզակն ու ականջները կը շօշափեն՝ զիտնալու համար թէ ի՞նչ ձև ունի, և զրեթէ չեն համոզուիր զանիկայ չտեսնելնուն վրայ, և շատ անգամ զայն իր անուշովը կը կանչեն իրրեւ ազգելու համար որ թոյլ տայ, որ ինքզինք ցուցնել տայ անգամ մը: Որչափնէր անկից լալով դուրս կ'ելնեն, նոյն իսկ խստասիրտ մարդիկ: Եւ երբ դուրս կ'ելնենք, կարծես մերինը բացառութիւն մ'է, զրեթէ անարժան նախաշնորհ մը՝ մարդիկ, տներ, և երկինքը տեսնելը: Ո՛հ, ձեզմէ մէկը չկայ, ապահով եմ, որ անկից ելնելով տրամադիր չըլլայ քիչ մ'իր տեսութենէն կորսնցնելու՝ գոնէ շող մը տալու համար այն բոլոր թշուառ տղայոց՝ որոնց համար արեգակը լոյս չունի և մայրը դէմք:

## ՀԻՒԱՆԳ ՈՒՍՈՒՅԻԶԸ

25. Շարաթ

Երէկ երեկոյ, դպրոցէն ելնելով՝ հիւանդ ուսուցչիս այցելութեան գնացի: Չափազանց աշխատելէն հիւանդացած է: Օրական հինգ դաս, յետոյ ժամ մը մարմնամարզ, յետոյ ուրիշ երկու ժամ զիշերային դասախօսութիւն, որ է ըսել քիչ քնանալ, շտապով ուտել և առտուընէ իրիկուն շունչ սպառել. առողջութիւնը խանգարուած է: Այսպէս կ'ըսէ մայրս: Մայրս մեծ դրան տակ ինծի սպասեց, ևս մինակ վեր ելայ, և սանդուղներուն վրայ սև անհեթեթ մօրուքով ուսուցչին, — Քօաթթիի, — հանդիպեցայ, այն՝ որ ամէնքը կը սարսափեցնէ և ո՛չ զոք կը պատժէ, նա աչքերը լայն բացած ինծի նայեցաւ և կատակով՝ առիւծի ձայն հանեց, բայց առանց ծիծաղելու: Ես կրկին տեսայ զինք՝ չորրորդ յարկին զանգակը քաշելուս ժամանակ, բայց անմիջապէս գէշ եղայ, երբ ազախինը զիս խեղճուկ սենեակ մը մտցուց, կէս մութ, ուր ուսուցչիս պառկած էր: Երկաթէ փոքր անկողին մ'էր. մօրուքն երկընցած էր: Մէկ ձեռքը ճակատը դրաւ՝ լաւ տեսնելու համար, և իր սիրագորով ձայնով բացազանչեց. — Օ՛հ, Հենրիկո՛ս: — Ես անկողնոյն մօտեցայ, նա մէկ ձեռքն ուսիս վրայ դրաւ, և ըսաւ. — Ապրի՛ս, որդեակ: Լաւ ըրիր որ եկար քու խեղճ ուսուցիչդ գտնելու: Գէշ վիճակի մէջ եմ, ինչպէս կը տեսնես, սիրելի



Հենրիկո՛ս: Եւ ի՞նչպէս կ'երթայ դպրոցը, ի՞նչպէս են ընկերներդ: Ամէնքը լաւ, է՛հ, առանց ինծի ալ: Պէտք չունիք, այնպէս չէ՞, ձեր ձեր ուսուցչին: — Ես կ'ուզէի, ո՛չ, ըսել. նա զիս ընդմիջեց. — Գնա՛, գնա՛, ես գիտեմ որ զիս կը սիրէք: — Եւ հառաչեց: Ես պատէն կախուած բանի մը լուսանկարներ կը դիտէի: — Կը տեսնե՞ս, — ըսաւ ինծի: — Բոլոր տղաքներն են որ իրենց լուսանկարն ինծի նուէր դրկած են, քսան և աւելի տարիներէ ի վեր: Ազնիւ տղաքներ: Ատոնք են իմ յիշատակներս: Երբ մեանիմ, վերջին ակնարկս հո՛տ իրենց պիտի դարձնեմ, բոլոր այդ չարածճիկներուն՝ որոնց մէջ անցուցեր եմ կեանքս: Դո՛ւ ալ լուսանկարդ ինծի պիտի տաս, այնպէս չէ՞, երբ նախակրթարանդ աւարտես: — Յետոյ քովի ստուլիկին վրայէն նարինջ մ'առաւ և ձեռքս դրաւ: — Ուրիշ բան չունիմ քեզի տալու, — ըսաւ, — հիւանդի նուէր մ'է: — Ես իրեն կը նայէի, և սիրտս տխուր էր, չեմ գիտեր ինչ չո՛ւ: — Ուշ դի՛ր, է՛հ... — սկսաւ ըսել դարձեալ — ես կը յուսամ ասկից ելնել. բայց եթէ այլ ևս չառողջանամ ալ... ջանա՛ թուարանութեան մէջ զքեզ զօրացնելու, որ քու տկար մասդ է, ճիգ մ'ըրէ՛. միայն առաջին ճիգ մը բաւական է, վասն զի շատ անգամ յարմարութեան պակասութիւնը չէ, այլ նախապաշարում մ'է, կամ ինչպէս կ'ըսեն՝ սեւուում մը: — Սակայն այս պահուս ուժով կը շնչէր, կը տեսնուէր թէ կը կրէր: — Գէշ տենդ մ'ունիմ, — հառաչեց, — կէս մը լմնցեր եմ: Կը յանձնարարեմ, ուրեմն: Թուարանութեան և խնդիրներուն վրայ ոյժ տուր: Առաջին անգամ չե՞ս յաջողիր: Քիչ մը հանգիստ առ և յետոյ կրկին փորձէ: Դարձեալ չյաջողեցար: Քիչ մ'ալ հանգչէ՛

և յետոյ նորէն սկսէ: Եւ յառաջ, բայց հանդարտ կերպով, առանց յոգնելու, առանց զուլսդ ճաթեցնելու: Գնա՛: Բարև տար մօրդ: Այս սանդուղները մէկ մ'ալ չընես, դպրոցի մէջ կը տեսնուինք: Եւ եթէ չտեսնուինք, երբեմն յիշէ երրորդ դասարանիդ ուսուցիչը, որ զքեզ սիրած է: — Այս խօսքերուն վրայ՝ լալս եկաւ: — Գլուխդ ծռէ՛, — ըսաւ ինծի: Ես զուլսս բարձին վրայ ձեցի. նա մազերս համբուրեց: Յետոյ ըսաւ ինծի. — Գնա՛, — և երեսը պատին դարձուց: Եւ ես սանդուղներէն վար թռայ, որովհետև մայրս զըրկելու պէտք կը զգայի:

## ՃԱՆԱՊԱՐՉԸ

25. Շաբաթ

Այս երեկոյ լուսանուտեկ զքեզ կը դիտէի՝ երբ ուսուցիչի տունեկ կը դառնայիր. դու կնոջ մը գարնուցար: Ոչչադրոչքիւն դիբ քե ի՛նչպէս կը քաշես ձաւրուն մէջ: Հո՛ւ ալ պարտակաւորքիւնեկ կաւ: Երէ առակնիւ տակ մը մէջ քու քայլերդ ու շարժումներդ կը շարիւս, ինչո՞ւնոյնը պիտի լինես ձաւրուն մէջ ալ, որ ամենուն տունեկ է: Միտքդ պահէ՛, Հեկրիկո՛ս: Ամեն ակզամ որ դողդոջուն ձերունիի մը, աղքատի մը, տղայ մը գրկած կնոջ մը, ակրացոչներով հաշմանկամի մը, բնուս տակ ծած մարդու մը, սուզեր հագուած ընտանիքի մը հակոյսիս, յարգակրով ձաւրայ տուր ակունց. մեկը պետք եկք ձերոչքիւնը,



ԳԹՈՒԹԻՆՆ.

բշտատուրիները, մայրենի սերը, հիշանդուրիները, յոգևածուրիները, և մանր յարգել : Ամեն անգամ որ կը տեսնես մարդ մը՝ որուն ետևեկ կատր մը՝ կու գայ, մեկրի բաշէ գայն՝ երէ տղայ մ'է, իմացուր՝ երէ մարդ մ'է. հարցուր միշտ միայնակ տղու մը թէ ինչո՞ւ կու լայ, վեր սո ծերու մը գաւազանը՝ գոր գետին ձգած է : Երէ երկու տղար կը կռռին՝ իրարմէ բամեկ. երէ երկու մարդիկ են՝ նեւացի, և երկայ մի գտնուիր թիրտ բռնուրեան՝ որ կը վնասէ և սիրտը կը պերպցնէ : Եւ երբ կապուած մարդ մը կ'անցնի՝ երկու պանսպաններու մէջ, ամբոխիս անգուր հետաքրքրուրեան մի մասնակցի, ևս կրնայ անեկ մ'ըջիլ : Մի՛ խօսիր բովի ընկերուց նետ և մի՛ ծիծաղիր՝ երբ հիշանդանցի պատգարակի մը կը հանդիպի՝ որ գուցէ մանամերձ մը կը տանի, կամ մեռնախաւքի, վասն զի կրնայ մտնել աչ անկից մեկ հաստ քո տունեղ կշնէ : Գարգուրեամբ ևայէ բոբոր ուսումնարաններուն տղոց որոնք գոյց գոյց կ'անցնին. կոյրերուն, համրերուն, ողևրեքերուն, որբերուն, ընկեցիկ մանկանց. մտածէ թէ մարդկային դժբաղդուրիներն ու խեղձութիւնն է որ կ'անցնի : Չտեսնել ձևացուր միշտ խորշնի կամ ծաղրելի անուրիներ մը : Բայրերուդ հանդիպած ամեն վառուած լուցիկ մարթ, որ կրնայ մեկու մը կեանքին վնասել : Միշտ ազնուութեամբ պատասխանէ անցորդի մը՝ որ քեզի ձամբան կը հարցնէ : Ո՛չ մեկու ծիծաղելով վնայիս, առանց հարկի մի՛ վազեր, մի՛ պոռար : Գարգե՛ ձանապարհը : Ժողովրդեան մ'ազնուութիւնը կը ձանցուրի ամենեկն առաջ ձամբուն մէջ ցոյց տրուած վարմունքին : Ուր ձամբու մէջ անկրքութիւն կը գտնես, տուներու մէջ աչ ևոյնը պիտի գտնես : Եւ ուսումնասիրե՛ ձամբաները. ուսումնասիրե՛ քարաքը՝ ուր կ'ապրիս. երէ վաղը դու անկից հեռանաս՝ ուրախ պիտի

ըլլաս երբ կարենաս զանհիւայ յիշորշրեանոյ մէջ ըստ տոգորուած ունենայ, մտքովդ անոր ամէն կողմը շրջի, — քոք քաղաքդ, — քոք պգտիկ հայրենիքդ, — այն՝ որ այնչափ տարի քոք աշխարհոյ կղած է, — ոչր առաջին քայլերդ ըրած եւ մօրդ կողքին, առաջին յազումներդ ունեցած, միտքդ առաջին զարափարիւն ըսցած, առաջին բարեկամներդ ունեցած եւ: Անհիւայ քեզի նաւնար մայր մ'եղած է, գրեզ կրքած, սնուցած, պաշտպանած է: Ու առանձնափրե գայն՝ իր ձաւքանկերուն և ժողովրդեան մէջ, — և սիրե՛ գայն, — և երբ անոր նախատուիլը ըսես, պաշտպանե՛:

ՀԱՅՐԳ



Մ Ա Ր Տ

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԳՊՐՈՅՆԵՐԸ

2. Հինգշաբթի



Ր է կ հայրս զիս մեր Պարէթթի բաժնին Գիշերային Դպրոցները տարաւ տեսնելու, որոնք բոլոր լուսաւորուած էին, և գործաւորները կը սկսէին ներս մտնել: Հասնելով, Տեսուչն ու ուսուցիչները սաստիկ զայրացած գտանք, վասն զի քիչ առաջ քարով մը լուսամուտի ապակի մը կոտորուած էր. դռնապանը, դուրս ցատկելով, անցնող տղու մը մագերէն բռնած էր. բայց այն ժամանակ Սթարտին ներկայանալով, որուն տունը դպրոցի դիմաց կը գտ-

Սէր

նուի, ըսած էր . — Ատիկայ չէ . աչքովս տեսայ .  
 Պրանթին էր նետողը . և ինձի ըսաւ . — վայ եթէ  
 ըսես . — բայց ես չեմ վախնար : — Եւ Տեսուչն ը-  
 սաւ, թէ Պրանթի վերջնական կերպով պիտի արտաը-



Գիշերային Դպրոցներ

սուի : Այս պահուս ուշադրութիւն կը դնէի գործաւոր-  
 ներուն որոնք զոյգ զոյգ և երեք երեք ներս կը մըտ-  
 նէին, և գրեթէ երկուհարիւրէն աւելի մտած էին : Ի-  
 րաւցնէ գիշերային դպրոցի գեղեցկութեան բնաւ գաղա-  
 փար չունէի : Տասներկու տարեկան տղաքներէն սկսեալ

մինչև մօրուքաւոր մարդիկ կային, որոնք աշխատու-  
 թիւնէն կը դառնային՝ գրքերով ու տետրակներով միա-  
 սին . հիւսեր, հնոցպաններ՝ սեցած դէմքերով, որմնա-  
 դիրներ՝ կրաթաթախ ձեռքերով, փուռի աշկերտներ՝ ա-  
 լիւրոտ մագերով, և ջնարակի, կաշեղէններու, ձիւթի,  
 ձէթի, և ամէն արուեստի հոտեր կը բուրէին : Հրետա-  
 նիի գործաւորներու վաշտ մ'ալ ներս մտաւ, զինուու-  
 ըական զգեստով՝ տասնապետի մ'առաջնորդութեամբ :  
 Ամէնքն աշխուժով կը շարուէին գրասեղաններուն մէջ,  
 որոնց ստորին պատուանդանը հանելով՝ ուր մենք ոտ-  
 քերնիս կը դնէինք, իսկոյն գլուխին ծոած կ'աշխա-  
 տէին : Ոմանք տետրակին բացած ուսուցիչներուն ըով  
 կ'երթային բացատրութիւն խնդրելու համար : Այն երի-  
 տասարդ ու լաւ հագուած ուսուցիչը — « փաստաբա-  
 նիկը » — տեսայ՝ որ ստուիւն շուրջն երեք կամ չորս  
 գործաւորներ ունէր, և գրչով սրբագրութիւններ կ'ընէր .  
 և այն կաղն ալ՝ որ ներկարարի մը հետ կը խնդար՝  
 որ իրեն կարմիր ու կապոյտ գոյներով զարդարուած  
 տետրակ մը բերած էր : Իմ ուսուցիչս ալ կար, առող-  
 ջացած, որ վաղը դպրոց պիտի գայ : Դասարաններուն  
 դռները բաց էին : Զարմացած մնացի, երբ դասերն  
 սկսան, տեսնելով՝ ինչպէս ամէնքն ուշադրութիւն կը  
 դնէին՝ աչքերնին սեւեռած : Եւ սակայն մեծամասնու-  
 թիւնը, կ'ըսէր Տեսուչը, ուշ չմնալու համար՝ և ոչ իսկ  
 տուն գացեր էին պատաս մը բան ուտելու, և անթի  
 էին : Սակայն, կէս ժամ դասախօսութենէ վերջ, պըզ-  
 տիկներուն ըունները կու գար : ոմանք նոյն իսկ գլուխ-  
 նին ստուիւն վրայ դրած կը քնանային, և ուսուցիչը  
 գանոնք կ'արթնցնէր՝ գրչածայրով ականջնին խթելով :  
 Բայց մեծերը ո՛չ, արթուն կը կենային, բերանաբաց



Կէս ժամ դաստիարակութեան ձեռնարկը՝ ազգակիցներու քուսիկներու կողմէն

դասին մտիկ ընելով՝ առանց աչք թարթելու. և ինծի զարմանք կ'ազդէր, գրասեղանին վրայ տեսնելով բոլոր այն մօրուքաւորները: Վերին յարկն ալ ելանք, և ես իմ դասարանիս դուռը վազեցի և տեսայ որ խոշոր պերեկշաներով և ձեռքերը կապուած մարդ մը նստած էր, հաւանօրէն մեքենայի մը տակ փնասուած. և սա. կայն կը ջանար կամաց կամաց գրել: Բայց ամենէն աւելի գուարճալին եղաւ, տեսնելով փոքրիկ որմնաղբին տեղը, ճիշտ նոյն գրասեղանին ու նոյն անկիւնիկին մէջ՝ իր հայրը, այն հսկայի պէս խոշոր որմնաղբիւրը, որ հոն կծկուած կեցած էր՝ կզակը ձեռքերուն կոթնցուցած և աչքերը գրքին վրայ, ուշադիր՝ առանց շունչ առնելու: Եւ ասիկայ դիպուած մը չէր, ինքն անձամբ դպրոց եկաւ առաջին իրիկունն ու ըսաւ Տեսչին. — Պարոն Տեսուչ, հաճեցէք՝ զիս իմ ընդհատուելիս տեղը դնելու. — վասն զի միշտ այդպէս կը կոչէր իր որդին...: Հայրս մինչև վերջը զիս հոն բռնեց, և ճամբուն մէջ շատ կիներ տեսանք՝ որ մանուկներն զրկած իրենց ամուսիններուն կը սպասէին, և դուրս ելնելու ժամանակ՝ կը փոխանակէին, գործաւորները՝ մանուկներն իրենց գիրկը կ'առնէին, իսկ կանայք՝ անոնց գրքերն ու տետրակները կ'ուզէին և այնպէս տուն կ'երթային: Փողոցը քանի մը վայրկեան մարդիկներով ու աղմուկով լեցուեցաւ: Յետոյ լուսթիւն պատեց և ուրիշ բան չտեսանք բայց միայն երկայն ու յոգնած դէմքը Տեսչին՝ որ կը հեռանար:

## ԿՈՒԻՒՐ

Կիրակի. 5

Յայտնի էր ըլլալիքը. Ֆրանթի՛ Տեսչէն վռնտուելով՝ ուզեց վրէժը լուծել, և դպրոցէն ելնելէն վերջ անկին մը Սթարտիին սպասեց, երբ նա իր քրոջ հետ կ'անցնէր՝ որ ամէն օր կ'երթայ զայն Տօրա-Կրօսսա ճամբուն Աւսումնարանէ մ'ընդունելու: Սիւլվիա քոյրս, իր Բաթնէն դուրս ելնելով, տեսաւ բոլոր՝ և սարսափած տուն դարձաւ: Ահաւասիկ ինչ որ պատահեցաւ: Ֆրանթի, իր մոմշորէ գլխարկը մէկ աչքին վրայ ծռած, ոտքի մատներուն վրայ՝ Սթարտիի ետեէն վազեց, և զանիկայ զրգռելու համար՝ անոր քրոջ հիւսուած մազերը քաշեց, և այնպէս ուժով քաշեց որ զայն գետին տապալեց: Փոքրիկ աղջիկը ճիչ մ'արձակեց, իր եղբայրն ետև դարձաւ: Ֆրանթի, որ Սթարտիէն շատ աւելի բարձրահասակ և ուժեղ է, կը մտածէր. — Կամ ճիկ պիտի չհանէ, կամ իրեն դասը կու տամ: — Բայց Սթարտի չմտածեց բնաւ, և իր կարճ ու կլոր հասակով՝ ոստու մով մը յարձակեցաւ այն հսկային վրայ, և սկսաւ բռնցիկ հարուածներ տալ անոր: Սակայն չէր կրնար, և հարուածներուն մեծ մասը պարապի կ'երթային: Ճամբուն մէջ միայն աղջիկներ կային, ոչ ոք կրնար զանոնք բաժնել: Ֆրանթի զայն գետին տապալեց. բայց նա վեր ելաւ ու կրկին յարձակեցաւ, և Ֆրանթի դրան մը պէս կը ձեծէր զայն, վայրկեան մ'եղաւ որ անոր

ականջին կէսը փրցուց և մէկ աչքը ճզմեց և քթէն արիւն բերաւ: Բայց Սթարտի յամա՛ն կը մոնչէր. — Չիս պիտի սպաննես, բայց քեզմէ վրէժս պիտի լուծեմ: — Եւ Ֆրանթի աքացի և ուժով ապտակներ կու տար, իսկ Սթարտի՛ տակէն՝ գլխու և ոտքի հարուածներ կու տար: Կին մը լուսամուտէն պոռաց. — Ապրի՛ս, պըզտի՛կ: — Ուրիշ կիներ կ'ըսէին. — Տղայ մ'է որ քոյրը կը պաշտպանէ: — Քաջասիրտ եղի՛ր: — Ուժով զարկ: — Եւ Ֆրանթի կը պոռային. — Բռնաւոր, վատ: — Ֆրանթին ալ կատգած էր, ոտնախաղ մ'ըրաւ, Սթարտին ինկաւ, և ինք անոր վրայ յարձակեցաւ. — Անձնատուր եղիր: — Ո՛չ: — Անձնատուր եղիր: — Ո՛չ. — և ոստիւնով մը Սթարտի ոտքի ելաւ, Ֆրանթիի մէջքին փաթթուեցաւ, և բուն ճիգով մը զայն քարայտակին վրայ տապալեց և մէկ ծունկն անոր կուրծքին վրայ դրաւ: — Ո՛հ, անամօթը դանակ ունի, — գոչեց մարդ մը վազելով՝ Ֆրանթիին զէնընկէց ընելու համար: Բայց արդէն Սթարտին ինք զինք կորսնցուցած՝ երկու ձեռքով անոր թևը բռնած ու այնպէս մը խածեր էր ձեռքը, որ դանակը վար ինկած ու ձեռքն արիւններ էր: Այս պահուս ուրիշներ ալ հասած էին, զիրենք բաժնեցին և վեր հանեցին. Ֆրանթի, ձեծը կերած՝ կծիկը դրաւ. և Սթարտի՛ երեսը ճանկոտուած, աչքը ճզմուած, — բայց յաղթական, — հոն քրոջ քով մնաց, մինչդեռ քանի մ'աղջիկներ՝ ճամբուն մէջ ցրուած զրքերն ու տետրակները կը ժողվէին: — Ապրի՛ս, պզտի՛կ, — կ'ըսէին շուրջը, — որ քոյրդ պաշտպանեցիր: — Սակայն Սթարտի, որ իր յաղթութենէն աւելի իր պայուսակին վրայ կը մըտածէր, սկսաւ խկոյն մի առ մի զրքերն ու տետրակ-

ները քննել թէ պակաս կամ վնասուած բան մը կ'ար, թեով զանոնք մաքրեց, գրիչը զննեց, ամէն բան տեղաւորեց, և յետոյ, հանդարտ ու լուրջ՝ ինչպէս միշտ, ըսաւ իր բրոջը. — Ծո՛ւտ երթանք, խառն գործողութեան խնդիր մ'ունիմ լուծելիք:

## ՏՂՈՅ ԾՆՈՂՔԸ

Նրկուշարթի. 6

Այս առտու խոշոր Սթարտի հայրն իր որդւոյն կը սպասէր, վախնալով որ մի՛ գուցէ դարձեալ Ֆրանթիի հանդիպի. բայց կ'ըսեն թէ Ֆրանթիին այլ ևս պիտի չգայ, վասն զի Արգելարան պիտի դնեն զինք: Այս առտու շատ ծնողներ եկած էին: Ի միջի այլոց կային նաև փայտավաճառը, Քօրէթթիի հայրը՝ յար և նման իր որդւոյն, աշխոյժ, զուարթ, իր սրածայր պերեշտներով և երկզոյն ժապաւէն մը զգեստի կոճակին ծակերէն անցուցած: Տղոց բոլոր ծնողքը հո՛ն տեսնելով միշտ՝ արդէն զրեթէ բոլոր կը ճանչնամ: Կորաքամակ պառաւ մը կայ ապիտակ քօղով, որ եթէ անձրևէ կամ ձիւնէ կամ փոթորիկ ալ ըլլայ՝ օրը չորս անգամ կու գայ նակալըրթարանէն իր մէկ թոռնիկն առնելու, և անոր կրկնօցը կը հանէ՝ իր վրայ կ'առնու, անոր փողկապը կը հաստատէ, փոշին կը մաքրէ, կը շտկէ, տետրակները կը նայի. կը տեսնուի որ ուրիշ մտածութիւն չունի, աշխարհի մէջ անկէ աւելի լաւագոյն բան մը չտեսներ:

Հրետանիի գնդապետը՝ Ռօպէթթի ալ յաճախ կու գայ, հայրը՝ այն անթացալուրին որ տղայ մը հանրակառքին տակէն փրկեց. և որովհետև իր որդւոյն բոլոր ընկերներն առջևէն անցնելու ժամանակ անոր զգուանք մը կ'ընեն, ինք ալ փոխադարձ անոնց զգուանք և ողջոյն կու տայ, ոչ գոք զանց կ'ընէ, ամենուն կը ծոփ, և որչափ աւելի աղքատ են և խեղճուկ հագուած՝ այնչափ աւելի զոհ կը թուի և անոնց շնորհակալ կ'ըլլայ: Սակայն, երբեմն, տխուր բաներ կը տեսնուին. պարոն մը՝ որ ամիսէ մ'ի վեր չէր գար՝ որովհետև իր մէկ որդին մեռած էր, և աղախինը կու գար միւս որդին առնելու, երէկ դարձեալ առաջին անգամ ինք գալով և իր փոքրիկ մեռած զաւկին ընկերները տեսնելով, անկիւն մը քաշուեցաւ և երկու ձեռքերն երեսին դրած սկսաւ սաստիկ լալ, և Տեսուչն անոր մէկ թևէն բռնեց ու իր գրասենեակը տարաւ: Հայրեր ու մայրեր կան՝ որ բոլոր իրենց որդւոց ընկերները՝ անունով կը ճանչնան: Մերձաւոր դպրոցին աղջիկներ կան, կըրթարանին աշակերտներ՝ որ կու գան իրենց եղբայրներուն սպասելու: Ծեր պարոն մը կայ, որ գնդապետ էր, և որ երբ տղայ մը զիրք կամ զրիչ մը վար ձգէ՝ զայն կը վերցնէ ու անոր կու տայ: Մաքուր հագուած տիկիներն ալ կը տեսնուին՝ որ դպրոցական իրաց վրայ կը վիճեն ու բիշներուն հետ, և թաշկինակը զլուխին դրած և կողովը թևերնին անցուցած՝ կ'ըսեն. — Այս անգամ թուարանական առաջարկութիւնը սոսկալի՛ էր: — Քերականութեան դաս մը կար՝ որ բնաւ չէր վերջանար այս առտու: — Եւ երբ դասարանի մը մէջ հիւանդ մը կայ՝ ամէնքը գիտեն, երբ հիւանդ մը լաւ է՝ ամէնքը կ'ուրախանան: Եւ իրաւցնէ՛ այս առտու

ութէն տասնի չափ տիկիներն ու գործաւորուհիներ կ'ա-  
յին, որ Քրօսսիին մայրը, բանջարավաճառուհին, շրջա-  
պատած էին՝ եղբօրս դասարանէն խեղճ պզտիկի մը վրայ  
տեղեկութիւն հարցնելու համար՝ որ իր գաւթին տան  
մէջ կը բնակի, և մեռնելու վտանգի մէջ է: Կարծես  
դպրոցը՝ ամէնքը հաւասար և ամէնքը բարեկամ կ'ընէ:

## 78 ԹԻՒԸ

### 8. Զորեքշարթի

Սրտաշարժ տեսարանի մը ներկայ եղայ երէկ երե-  
կոյ: Բաւական օրէ ի վեր էր՝ որ բանջարավաճառ կ'իւնը  
Տէրօսսի կը նայէր՝ ամէն անգամ որ քովէն կ'անցնէր,  
և մեծ գորով մը ցոյց կու տար. վասն զի, Տէրօս-  
սի, այն կաղամարի և 78 թիւ բանտարկելոյն յայտ-  
նութիւնն ընելէ վերջ, սկսած է սաստիկ սէր մը տածել  
իր որդւոյն Քրօսսիի՝ այն կարմրահեր և կաթուածաթեւ  
տղուն վրայ, և դպրոցին մէջ անոր դասերուն կ'օգնէ,  
պատասխանները կը թելադրէ, իրեն թուղթ, գրչա-  
ծայր, մատիտ կու տայ. միով բանիւ եղբօր մը պէս  
կը նայի անոր, գրեթէ վարձատրելու համար գրկանքը՝  
որ իր հօր այն դժբաղդութեան պատճառաւ իր գլխուն  
եկած է, և զոր նա չգիտեր: Շատ օրէ ի վեր էր որ  
բանջարավաճառուհին Տէրօսսի կը նայէր, և կարծես  
աչքն ետևը կը մնար, վասն զի բարի տիկին մ'է որ  
միայն իր որդւոյն համար կ'ապրի. և Տէրօսսին՝ որ  
անոր կ'օգնէ և երես ձերմկցնել կու տայ, Տէրօսսին՝ որ

պարոն մ'է և դպրոցին մէջ առաջինը՝ իրեն թագաւոր  
մը, սուրբ մը կը թուի: Միշտ անոր կը նայէր և կար-  
ծես թէ բան մ'ըսել կ'ուզէր, ու կ'ամչնար: Բայց երէկ  
առտու, սիրտ ըրաւ և զայն խոշոր դրան մ'առջև կե-  
ցուց ու ըսաւ. — Ներէ՛ ինձի, պարոնիկ, դու որ այն-  
չափ բարի ես, և այնչափ իմ որդիս կը սիրես, հաճէ՛  
աղքատ կնոջ մ'այս փոքր յիշատակն ընդունելու. —  
և բանջարեղինաց կողովէն սպիտակ ոսկեգօծ ստուա-  
րաքարտէ տփիկ մը հանեց: Տէրօսսի կարմրեցաւ, և  
մերժեց բացարձակապէս ըսելով. — Այդ որդւոյդ տո՛ւր.  
ես բան չեմ ուզեր: — Կի՛նը մահացաւ և ներողութիւն  
խնդրեց, թոթովելով. — Բնաւ դիտաւորութիւն չունէի  
զքեզ վշտացնելու... քանի մը շաքարեղէններ են: —  
Բայց Տէրօսսի գլուխը շարժելով՝ դարձեալ պատասխա-  
նեց թէ՛ ո՛չ: — Եւ այն ժամանակ տիկիներ երկչոտու-  
թեամբ խուրճ մը բողկ հանեց կողովէն և ըսաւ. —  
Գոնէ ասոնք ընդունէ՛, որ թարմ են, ու մօրդ տար:  
— Տէրօսսի ժպտեցաւ, և պատասխանեց. — Ո՛չ, շնոր-  
հակալ եմ. Քրօսսիի համար միշտ ձեռքէս եկածը պիտի  
ընեմ, բայց չեմ կրնար բան մ'ընդունիլ, առածի պէս  
շնորհակալ եմ: — Բայց բնաւ չվշտացանք, — հար-  
ցուց տիկինն անձկանօք: Տէրօսսի ժպտելով պատաս-  
խանեց, թէ՛ ո՛չ, և մեկնեցաւ՝ մինչդեռ տիկինը բոլո-  
րովին գոհ կը բացազանչէր. — Ո՛հ, ի՛նչ բարի տղայ:  
Երբեք այսպիսի բարի և գեղեցիկ տղայ մը տեսած  
չեմ: — Եւ կարծես ամէն բան վերջացած էր: Բայց  
ահա, երեկոյ, ժամը չորսին, Քրօսսիի մօր տեղ հայրը  
կը մօտենայ իր այն գունամթափ և մեխամաղձոտ դէմ-  
քով: Տէրօսսին կեցուց, և անոր նայելու կերպէն հաս-  
կցայ իսկոյն՝ որ նա կը կասկածէր թէ Տէրօսսի իր



գաղտնիքը զիտէր. սեեռած նայեցաւ և տխուր ու սիրակաթ շեշտով մ'ըսաւ անոր. — Դո՛ւ իմ որդիս կը սիրես...: Ինչո՞ւ այնչափ կը սիրես: — Տէրօսսիի դէմքը սաստիկ կարմրեցաւ: Նա կ'ուզէր պատասխանել. — Զանիկայ կը սիրեմ, որովհետև դժբաղդ եղած է. վասն զի դուք ալ, որ իրեն հայրն էք, աւելի դժբաղդ գտնուած էք քան յանցաւոր, և ձեր ոճիրն ազնուարար քաւած էք, և սիրտ ունեցող մարդ մ'էք: — Բայց սիրտ չըրաւ ըսելու, վասն զի ի բնէ դեռ վախ և սարսուռ կը զգար այն մարդուն առջև՝ որ ուրիշի մ'արիւնը թափած էր, և վեց տարի բանտ կեցած: Բայց անիկայ ամէն բան գուշակեց, և ձայնը մեղմելով՝ Տէրօսսիի ականջէն ըսաւ, գրեթէ դողողալով. — Տղաս կը սիրես. բայց բնաւ չարիք չես ուզեր... հայրը չես ատեր, այնպէս չէ: — Ո՛հ, ո՛չ, ո՛չ. ընդհակառակն. — բացագանչեց Տէրօսսի սրտի եռանդով մը: Եւ այն ժամանակ մարդը բուն շարժում մ'ըրաւ մէկ թևն անոր վիզը փաթթելու պէս, սակայն չհամարձակեցաւ, և անոր փոխան՝ երկու մատներով Տէրօսսիի խարտեաշ զանգուրներէն մին բռնեց, զայն երկարեց և թողուց. յետոյ ձեռքը բերնին վրայ դրաւ և ինքն իր ափը համբուրեց՝ խոնաւ աչքերով Տէրօսսիի նայելով, իբրև ըսել ուզէր թէ այն համբոյրն իրեն համար էր: Յետոյ տղուն ձեռքէն բռնեց և արագ քայլերով մեկնեցաւ:

## ՓՈՔՐԻԿ ՄԵՌԵԱՆ ՄԸ

13. Երկուշաբթի

Այն մանկիկն որ բանջարավաճառուհւոյն բակին մէջ կը բնակի, այն նախակըրթարանի պատիկը՝ եղբորս դասընկերը, մեռած է: Տէլքաթի վարժուհին շարաթ իրիկուն եկաւ բոլորովին վշտացած, լուրը ուսուցչին գուժելու համար. և իսկոյն կարրօնէ և Քօրէթթի իրենց զիրենք առաջարկեցին արկղիկը տանելու: Բաջ մանկիկ մ'էր, անցեալ շարաթ շքադրամը ստացաւ. եղբայրս զանիկայ շատ կը սիրէր և անոր կոտրած զանձանակ մը նուէր տուած էր, մայրս միշտ զայն կը գգուէր՝ երբ կը հանդիպէր: Երկու կարմիր երիզներով գլխարկ մը կը դնէր գլուխը: Իր հայրը երկաթուղւոյ բեռնակիր է: Երէկ, կիրակի իրիկուն,



ժամը չորս ու կիսուն իր տունը գացինք՝ դէպ ի եկեղեցի ընկերելու համար : Գետնայարկը կը բնակին : Բակին մէջ արդէն նախակրթարանի շատ տղաք կային՝ իրենց մայրերուն հետ և ձեռքերնին մոմ բռնած. հինգ կամ վեց ուսուցիչներ, քանի մը դըրացիք: Կարմիր փետրաւոր վարժուհին և Տէլքաթի ուսուցչուհին ներս մտած էին, զորս բաց լուսամուտէ մը կը տեսնէինք որ կու լային. մանկան մօր ձայնը կը լսուէր որ բարձրաձայն կը հեծկլտար : Երկու տիկիններ, մեռելին դպրոցական ընկերաց երկու մայրեր, երկու ծաղկէպսակներ բերած էին : Ճիշտ ժամն երկուքին ճամբայ ելանք : Առջևէն տղայ մը խաչը բռնած կ'երթար, յետոյ քահանայ մը, ապա դագաղիկը, ամենափոքր դագաղ մը, խեղճ մանկիկ, սև չուխայով մը ծածկուած, որուն շուրջը երկու տիկնանց ծաղկէ պսակները քովէ քով դրուած էին : Սև չուխային մէկ կողմէն շքադրամը կախած էին, և երեք պատուանշանները՝ զորս տղան տարեշրջանին մէջ շահած էր : Դագաղիկը կը տանէին Կարբօնէն, Քօրէթթին և բակին երկու տղաք : Դագաղիկին ետևէն կու գային նախ Տէլքաթի ուսուցչուհին, որ կու լար իբրև իր մեռելիկն ըլլար, անոր ետևէն՝ միւս վարժուհիները. և վարժուհիներուն ետևէն՝ տղաքը, որոնցմէ ոմանք շատ փոքր, որ մէկ ձեռքերնին մանուշակի փունջեր ունէին և ապշահար դագաղին կը նայէին, միւս ձեռքերնին մօրերուն տուած՝ որոնք իրենց սեղ մոմերնին բռնած էին : Լսեցի որ մէկը կ'ըսէր. — Եւ հիմայ դպրոց պիտի չգայ այլ ևս : — Երբ դագաղիկը բակէն դուրս ելաւ, լուսամուտէն յուսահատ աղաղակ մը լսուեցաւ. մանկան մայրն էր. բայց իսկոյն զանիկայ ներս՝ սենեակներուն մէջ տարին : Երբ ճամ-

բուն մէջ հասանք, դպրոցի մը տղոց հանդիպեցանք, որոնք զոյգ գծով կ'անցնէին, և տեսնելով դագաղիկը՝ մետալով և ուսուցիչներով, ամէնքը գլխարկնին բացին : Խեղճ պզտիկ, ինք գնաց ընդ միշտ ննջելու իր մետալին հետ : Այլ ևս պիտի չտեսնենք բնաւ իր կարմիր գլխարկիկը : Առողջ էր. չորս օրուան մէջ մեռաւ : Վերջին օրը ջանաց դեռ դարձեալ ելնել և իր փոքրիկ անուանակոչութեան դասն ընել, և ուզեց իր մետալն անկողնոյն վրայ ունենալ՝ վախնալով որ մի՛ գուցէ առնուն, խեղճ տղայ : Երթաս բարեաւ, երթաս բարեաւ : Չքեզ միշտ պիտի յիշենք Պառէթթիի Բաժնին մէջ : Հանգի՛ր ի խաղաղութեան, մանկիկ՝ դու :



## ՄԱՐՏ 14ԻՆ ՆԱԽՕՐԵՍԱԿԸ

Այսօր երէկուրնէ աւելի զուարթ օր մ'եղաւ: Մարտ տասներեք: Վիթթօրիոյ Էմմանուէլէի Թատրոնին մէջ մրցանակարաշխութեան նախորդ օրը, բոլոր տարիններուն մեծ և գեղեցիկ հանդէսը: Բայց այս անգամ դուպուաձով առնուած չեն այն տղաքը՝ որ Թատրոնին վրայ պիտի ելնեն մրցանակներու վկայականները ներկայացնելու համար այն պարոններուն՝ որ զանոնք պիտի բաշխեն: Այս առտու վերջին պահուն Տեսուչն եկաւ, և ըսաւ. — Քօրաչի՛, — քալապրիացի: Քալապրիացին ոտը ելաւ. — Կ'ուզէ՞ս վաղը Թատրոնին մէջ մրցանակներուն վկայականները Իշխանութեան ներկայացնողներու թիւէն ըլլալ: Քալապրիացին այո՛ պատասխանեց: — Շատ լաւ, — ըսաւ Տեսուչը, — ասով Քալապրիոյ ներկայացուցիչ մ'ալ կ'ըլլայ: Եւ գեղեցիկ բան մը պիտի ըլլայ: Քաղաքապետութիւնը, այս տարի, ուզեց որ մրցանակները ներկայացնող տասն կամ տասներկու տղաքը՝ Խտալիոյ ամէն կողմերէն ըլլան՝ հասարակաց դպրոցներու զանազան բաժիններէն առնուած: Քասն բաժիններ ունինք՝ հինգ օժանդակ դպրոցներով. եօթն հազար աշակերտ. այսչափ մեծ թուոյ մը մէջ շատ դժուար չեղաւ գտնել տղայ մը Խտալական իւրաքանչիւր գաւառներէն: Թօրգուաթոյ Թասսոյի բաժնէն գտնուեցան կղզիներու երկու ներկայացուցիչներ. սարտենիացի մը ու սիկիլիացի մը. Պօնքօմիայնի դպրոցը փոքրիկ Փլորենտացի մը տուաւ, փայտի քան-

դակագործի մ'որդին. հոովմայեցի մը կայ Թօվմազէոյի բաժնին մէջ՝ Հոովմ ծնած. վենետացի, լոմպարտացի և ումանեացի շատեր կը գտնուին. Մոնվիզոյ բաժինը՝ նէպոլտեցի մը կու տայ, զօրավարի մ'որդին. մենք ձենովացի մ'ու քալապրիացի մը կու տանք, զքեզ, Քօրաչի՛: Փիէմոնթէցիով միասին տասներկու կ'ըլլան: Գեղեցիկ է, այնպէս չէ: Խտալիոյ ամէն կողմերէն ձեր եղբայրները պիտի ըլլան մրցանակները ձեզի տուողները: Ուշադրութիւն դրէք. տասներկուքը միասին Թատրոնին վրայ պիտի տեսնուին: Մեծ ծափահարութեամբ ընդունեցէք զիրենք: Տղաք են, բայց իւրաքանչիւրն իր երկիրը կը ներկայացնէ՛ իբրև թէ մարդիկ ըլլային. եռագունեան փոքր դրօշ մը՝ Խտալիոյ նշանակն է՝ ինչպէս մեծ դրօշ մը, այնպէս չէ: Ուրեմն եռանդով ծափահարեցէք զիրենք: Յցուցէք որ ձեր պատիկ սրբտեքն ալ կը վառուին, որ տասն տարեկան հոգիներն ալ կը խայտան հայրենիքի սրբազան պատկերին առջև: — Այս ըսելով՝ մեկնեցաւ, և ուսուցիչն ըսաւ



ժպտելով. — Ուրեմն, Քորաչի', դու Քալապրիոյ երեսփոխանն ես: — Եւ այն ատեն ամէնքը ծափ զարկին՝ խնդալով, և երբ ճամբան եղանք՝ Քորաչին շըրջապատեցին, սրունքներէն բռնած վեր բարձրացուցին, և սկսան յաղթանակով տանիլ զինք, գոչելով. — Կեցցէ՛ Քալապրիոյ երեսփոխանը, — այսպէս ըրին կատակով անտարակոյս, ո՛չ թէ ծաղրածութեան համար, ընդհակառակն մանաւանդ, սրտանց ցոյց մ'ընելու համար իրեն, վասն զի տղայ մ'է զոր ամէնքը կը սիրեն. և ինք կը ժպտէր: Եւ այսպէս զայն մինչև անկիւնը տարին՝ ուր սևամօրուս պարոնի մը հանդիպեցան, որ սկսաւ ծիծաղել: Քալապրիացին ըսաւ, — Հայրս է: — Եւ այն ժամանակ տղաք զինք հօր գիրկը դրին և ամէն կողմանէ փախան:

## ՄՐՅԱՆԱԿՆԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄԸ

### 14. Մարտ

Ժամն երկուքի ատեններն ամենէն մեծ թատրոնը խոնուած էր. գետնայարկը, պատշգամբ, օթեակները, թատերաբեմը, բոլոր լեցուն էր հազարաւոր դէմքերով, տիկիներով, վարժապետներով, գործաւորներով, ստորին դասակարգի կիներով, մանուկներով. գլուխներու և ձեռքերու եռուզեռ մ'էր, փետուրներու, ժապաւէններու և զանգուրներու երերում մը, խիտ ու զուարթ մըրմունջ մը՝ որ ուրախութիւն կը պատճառէր: Թատրոնը բոլոր կարմիր, ճերմակ և կանաչ կերպասէ ղրասանգ-

ներով զարդարուած էր: Գետնայարկին վրայ երկու սանդուղներ շինած էին. մէկը աջակողմը, ուսկից մըրջանակ ընդունողները թատերաբեմին վրայ պիտի ելնէին. միւսը ձախակողմը, ուսկից պիտի իջնէին՝ մրցանակն ընդունելէ վերջ: Բեմին առջև կարգ մը կարմիր թիկնաթոռներ կային, որոնց մէջտեղիներն յենարանէն զափնիէ պսակիկ մը կախուած էր. բեմին խորը՝ հանդիսաւոր դրօշներու խումբ մը. մէկ կողմէն կանաչ ստուլիկ մը՝ որուն վրայ մրցանակի վկայականները կային եռագունեան երիզներով կապուած: Երաժշտական նուագախումբը՝ բեմին ստորոտը գետնայարկին վրայ էր. ուսուցիչներն և ուսուցչուհիներն առաջին պատշգամբին կէսը բռնած էին՝ որ իրենց վերապահուած էր. գետնայարկին երկայն նստարաններուն վրայ ու անցքերուն մէջ հարիւրաւոր տղաք խոնուած էին, որոնք պիտի երգէին, և ձեռքերնին բռնած էին զրուած երգերը: Խորը և չորս կողմը կը տեսնուէր ուսուցիչներուն և վարժուհիներուն երթևեկը, որոնք մրցանակ ընդունող տղաքը կարգի կը դնէին, և ծնողները վերջին սանտրը կը զարնէին անոնց մագերուն և վերջին ձեռք մը կուտային փողպատներուն:

Հագիւ իմիներուս հետ օթեակին մէջ մտայ, դիմացի օթեակին մէջ տեսայ կարմիր փետրաւոր վարժուհին, որ կը ծիծաղէր՝ իր այտերուն գեղեցիկ խորշիկներով, և անոր քով եղբորս վարժուհին, և « մայրապետիկը » բոլորովին սևազգեստ, և նախակրթարանի բարի վարժուհիս. բայց այնպէս գունատ, խեղճը, և այնչափ ուժով կը հազար՝ որ թատրոնին մէկ ծայրէն միւսը կը լսուէր: Գետնայարկին վրայ իսկոյն գտայ կարբօնէի այն սիրուն խոշոր երեսը և նէլլիի փոքր

գորշ գլուխը, որ անոր ուսին կցուած կեցեր էր: Քիչ մ'անողին կարօֆֆին տեսայ՝ իր բուրի ունեզով, որ մըրջ ցանակելի տղայոց տպուած ցուցակները ժողվելու մեծ շարժման մէջ էր, և արդէն անոնցմէ մեծ ծրար մ'ըրած էր՝ իր մէկ շահավաճառին համար... զոր վաղը պիտի իմանանք: Իրան ըով փայտավաճառը՝ կար՝ իր կնոջ հետ, տօնական զգեստով, իրենց տղուն հետ միասին, որ երկրորդ դասարանի երրորդ մրցանակ մ'ունի. զարմացած մնացի չտեսնելով այլ ևս կատուամազէ զլխարկով և գորշագոյն ասուիովը. այն անգամ պարոնիկի մը պէս հագուած էր: Սրահի մը մէջ վայրէկան մը վլօթինին տեսայ՝ ծոպաւոր մեծ փողկապով մը, յետոյ աներևոյթ եղաւ: Նախաբեմին բազմութեամբ լեցուած օթեակի մը մէջ կար թնդանօթածիզ զօրաց գնդապետը, Ռօպէթթիին հայրը, անոր՝ որ անթացուպերով կը քալէ և տղայ մը հանրակառքէն փրկից:

Ժամն երկու հնչելուն պէս երաժշտախումբն սկսաւ, և մի և նոյն ժամանակ աջակողման սանդղէն վեր ելան քաղաքապետը, գաւառապետը, քաղաքապետին օգնականը, ուսմանց տնօրէնը, և ուրիշ բազմաթիւ պարոններ, ամէնքն ալ սևագգեստ, որ գացին թատերաբեմին առջև կարմիր թիկնաթոռներուն վրայ բազմելու: Երաժշտախումբը լռեց: Երաժշտութեան դպրոցներու տեսուչը յառաջ եկաւ՝ ձեռքը գաւազանիկ մը: Իր մէկ նշանին, գետնայարկին բոլոր տղաք ոտք ելան. ուրիշ նշանով մը՝ սկսան երգել: Եթնհարիւր հոգի էին որ ամենազեղեցիկ երգ մը կը նուագէին, եթնհարիւր տղոց ձայներ՝ որ միասին կ'երգեն, ինչ զեղեցիկ է: Ամէնքն ալ անշարժ մտիկ կ'ընէին. անուշ, վճիտ, դանդաղ եղանակ մ'էր, որ եկեղեցւոյ երգի մը կը նմանէր:

Երբ լռեցին, ամէնքը ծափ զարկին. յետոյ լռութիւն: Մրցանակաբաշխութիւնը պիտի սկսէր: Արդէն բեմին վրայ յառաջացեր էր իմ երկրորդ դասարանի փոքրիկ ուսուցիչս՝ իր կարմիր գլխով և աշխոյժ աչքերով, որ մրցանակ առնողներուն անունները պիտի կարդար: Կը սպասուէր որ տասներկու տղաքը ներս մտնեն վկայականները ներկայացնելու համար: Օրագիրներն արդէն ըսած էին թէ իտալիոյ ամէն գաւառաց տղաքներէն պիտի ըլլան: Ասիկայ ամէնքը զիտէին ու կը սպասէին, նայելով հետաքրքրութեամբ այն կողմն ուսկից ներս պիտի մտնէին, քաղաքապետն ու միւս պարոններն, և բոլոր թատրոնը լուռ էր...:

Յանկարծ երագ քայլերով հասան մինչև նախաբեմին վրայ, և հոն շարուեցան տասներկուքը միասին, ժողտաղէմ: Բոլոր թատրոնը, երեքհազար հոգի, վեր ցատկեցին իսկոյն, այնպիսի ծափահարութեամբ մ'որ ուրտման ճայթում մ'էր կարծես: Տղաքը վայրկեան մ'այլալեցան: — Ահաւասիկ իտալիան, — ըսաւ ձայն մը բեմին վրայէն: Իսկոյն ճանչցայ Քօրաչի քալապրիացին, սովորականին պէս սև հագուած: Քաղաքապետաբանին պաշտօնեայ պարոն մը, որ մեզի հետ էր և զամէնքը կը ճանչնար, մի առ մի մօրս ցոյց կու տար: Այն փոքր մանկիկը՝ վենետիկոյ ներկայացուցիչն է: Հռովմայեցին՝ այն բարձրահասակ և գանգրահներն է: — Երկու երեք հատ կային որ ճոխ զգեստներ հագուած էին, միւսները գործաւորի տղաք էին, սակայն ամէնքն ալ կոկիկ և մաքուր հագուած: Փլորենտացին որ ամենէն պզտիկն էր, մէջքը կապոյտ լայնակամար մ'ունէր: Ամէնքը քաղաքապետին առջևէն անցան, որ մի առ մի ամենուն ճակատը համբուրեց, մինչդեռ իր

քովէն պարոն մը ցած ձայնով և ժպտելով քաղաքնե-  
րուն անունները կու տար. — Ֆիրէնցէ, Նափուլի, Պո-  
լոնեա, Փալէրմոյ . . . — և իւրաքանչիւր անցնողին  
բոլոր թատրոնը ծափ կը զարնէր: Յետոյ ամէնքը կա-  
նաչ ստովին քով վագեցին վկայականներն ընդունելու  
համար, ուսուցիչը սկսաւ ցուցակը կարդալ. բաժիննե-  
րը, դասարաններն և անուններն ըսելով, և որոնք մըր-  
ցանակ պիտի առնէին՝ սկսան վեր ելնել և կարգաւ շա-  
րուիլ:

Հազիւ առաջինները վեր ելած էին, երբ բեմին ե-  
տեկն լսուեցաւ ջութակներու ամենամեղմ երաժշտու-  
թիւն մը, որ տեւեց մինչև բոլոր շարուեցան, ազնուա-  
կան և միապաղաղ եղանակ մը, որ բազմաթիւ դաշն  
ձայներու մրմունջ մ'էր կարծես, բոլոր մայրերու և  
բոլոր ուսուցիչներու և վարժուհիներու ձայներ, որ  
միասին խորհուրդներ կու տան, կ'աղաչեն ու սիրազու-  
րով յանդիմանութիւններ կ'ուղղեն: Եւ այս պահուս  
մըցանակաւորները մէկը միւսին ետեկն կ'անցնէին այն  
նստող հանդիսատէսներուն առջևէն՝ որոնք վկայական-  
ները կու տային, և իւրաքանչիւրին խօսք մը կ'ըսէին  
կամ զգուանք մը կ'ընէին: Գետնայարկէն և սրահներէն  
տղաք կը ծափահարէին՝ ամէն անգամ որ շատ փոքրիկ  
մը կ'անցնէր, կամ մէկը՝ որ զգեստէն աղքատ կը  
թուէր, նաև զանոնք որ երկայն գանգուրներ ունէին և  
կամ կարմիր կամ ճերմակ հագուած էին: Նախակըր-  
թարանի մանուկներէն կ'անցնէին, որ հոն հասնելով  
կը շփոթէին և չէին գիտեր այլ ևս ո՞ր կողմը դառ-  
նալ, և բոլոր թատրոնը կը ծիծաղէր: Անցաւ երեք  
թիզնոց մ'ալ՝ կռնակը վարդագոյն ժապաւէնի խոշոր  
հանգոյցով մը, որ հազիւ կը քալէր, և գորգին մէջ

ոտքը բռնուելով՝ ինկաւ, Գաւառապետը զայն ոտքի  
հանեց, և ամէնքը ծիծաղեցան ու ծափ զարկին: Ու-  
րիշ մը սանդղիկէն վար գլորեցաւ՝ գետնայարկն իջնե-  
լու պահուն. աղաղակներ լսուեցան, բայց փնաս մը չէր  
եղած: Ամէն տեսակէ անցան, չարաճճի դէմքեր, սար-  
սափահար երեսներ, կեռասի պէս կարմիր դէմքեր, փոքր  
խեղկատակներ՝ որ ամենուն երեսին կը խնդային, և  
հազիւ գետնայարկն իջած՝ հօրերնէն ու մօրերնէն կը  
զրկուէին ու մէկդի կը տարուէին: Երբ մեր բաժնին  
կարգն եկաւ, այն ժամանակ, այո՛, ես զուարճացայ:  
Բազմաթիւ ծանօթներէս կ'անցնէին: Քօրէթթիւն անցաւ,  
ոտքէն գլուխը նոր հագուած, իր զուարթ գեղեցիկ ժը-  
պիտով, որ բոլոր սպիտակ ակոսները ցոյց կու տար.  
և սակայն ո՞վ գիտէ արդէն ո՞րչափ հազարակրամ փայտ  
տարած էր առտուն: Քաղաքապետն իր վկայագիրը  
տուած ժամանակ հարցուց թէ ի՞նչ էր ճակտին վրայ  
ունեցած այն կարմիր նշանը, և մէկ ձեռքը անոր ու-  
սին վրայ դրած էր. ես գետնայարկին մէջ իր հայրն  
ու մայրը փնտոցի և տեսայ որ կը ծիծաղէին՝ մէկ  
ձեռքով բերանին զոցած: Յետոյ Տէրօսսին անցաւ,  
բոլոր երկնազոյն հագուած, շողշողուն կոճակներով,  
բոլոր այն ոսկեգոյն խոպոպներով, բաց ու հերարձակ,  
ճակատը բարձր, այնպէս գեղեցիկ, այնպէս համակրելի,  
որ ուզեցի համբոյր մ'ուղղել իրեն, և բոլոր հանդի-  
սատեսներն ուզեցին իր հետ խօսիլ ու ձեռքը սեղմել:  
Յետոյ ուսուցիչը գոչեց. — Ճիւղիոյ Ռօպէթթի՛, —  
և թնդանօթածիգ գնդապետին որդւոյն անթացապետով  
առաջ գալը տեսնուեցաւ: Հարիւրաւոր տղաք եղելու-  
թիւնը գիտէին, բոպէի մը մէջ ձայնը տարածուեցաւ,  
ծափերու և աղաղակներու շառաչ մը պայթեցաւ՝ որ

Թատրոնը թնդացուց, մարդիկ ոտք ելան, տիկնայք սկսան թաշկինակ շարժել, և խեղճ տղան թատերաբեմին մէջ տեղ կանգ առաւ՝ ապշած ու զողողուն...: Քաղաքապետը զայն իրեն քաշեց, մրցանակն ու համբոյր մը տուաւ, և թիկնաթոռի յենարանին կախուած դափնիէ պսակն առնելով իր անթացպերէն միոյն քովէն կախեց...: Յետոյ զայն մինչև նախաբեմին օթեակը տարաւ, ուր իր գնդապետ հայրը կար, որ զինք գրկեց ու ներս դրաւ՝ ապրի՛սներու և կեցցե՛ներու աննկարագրելի աղաղակի մը մէջ: Եւ այս պահուս ջութակներու մեղմ ու ազնուական երաժշտութիւնը կը շարունակէր, և տղաք կը շարունակէին անցնիլ, Քոնսուլթայի Բաժնին աշակերտները՝ գրեթէ բոլոր շուկայի մարդկան որդիներ. Վանքիլիայի Բաժնիները՝ գործաւորաց որդիներ. Պոնքոմփայնի Բաժնիները՝ որոնց մեծամասնութիւնը գիւղացուց զաւակներ են. Ռայնէրի դպրոցիները՝ որ վերջինն եղաւ: Հազիւ աւարտած, գետնայարկի եօթնհարիւր տղաք ուրիշ ամենագեղեցիկ երգ մ'ալ երգեցին. յետոյ Քաղաքապետը խօսեցաւ, և վերջն օգնականը, որ իր ճառախօսութիւնը լմնցուց ըսելով տղոց. — ... Բայց ասկից մի՛ մեկնիք առանց ողջոյն մ'ուղղելու անոնց՝ որ ձեզի համար այնչափ կը յոգնին, որ ձեզի զոհած են իրենց մտքին ու սրտին բոլոր ոյժերը, որ կ'ապրին ու կը մեռնին ձեզի համար: Ահա հո՛ն: — Եւ ուսուցչաց պատշգամը ցոյց տուաւ: Եւ այն ատեն պատշգամներէն, օթեակներէն, գետնայարկէն բոլոր տղաք ոտք ելան և թեւերնին երկարեցին գոչելով դէպ ի ուսուցիչներն ու վարժուհիները, որոնք պատասխանեցին՝ ձեռքերնին, գլխարկնին, թաշկինակնին շարժելով՝ ամէնքն ալ յոտնկայս և յուզուած: Ուսկից վերջ երաժշտախումբն

անգամ մ'ալ նուագեց և հասարակութիւնը վերջին մեծաշառաչ ողջոյն մ'աւ ուղղեց Խաւիլոյ բոլոր գաւառաց տասներկու մանկանց, որոնք ձեռնամած նախաբեմին վրայ շարուեցան՝ ծաղկէփունջերու տարափի մը տակ:

## ՎԷՃԸ

20. Նրկուշաբթի

Եւ սակայն, ո՛չ, նախանձու համար չէր որ նա մըրցանակ ստացաւ և ես ո՛չ, որ այս ատու Քօրէթթի հետ կոտեցայ: Նախանձու համար չէր: Այլ յանցաւոր էի: Ուսուցիչը զինք քովս դրած էր, ես գեղագրութեան տետրիս վրայ կը գրէի. նա արմուկով ինձի զարնուեցաւ և զիս թանաքոտեց, և աղտոտեց նաև ամսօրեայ պատմութիւնը, Ռօմանկացի արխեր, զոր փոքրիկ որմնաղբին տեղ պիտի օրինակէի, որ հիւանդ է: Ես զայրացայ և տգեղ խօսք մ'ըսի իրեն: Նա ինձի պատասխանեց ժպտելով. — Կամաւ չըրի: — Պէտք էի խօսքին հաւատալ, վասն զի զինք կը ճանչնամ. բայց ծիծաղիւ չախորժեցայ, և մտածեցի. — Ո՛հ, հիմա որ մրցանակ առաւ, հպարտացած պիտի ըլլայ, — և քիչ յետոյ, վրէժս լուծելու համար իրեն այնպէս մը զարնուեցայ՝ որ ամբողջ էջը փճացաւ: Այն ժամանակ զայնուեցայ՝ որ ամբողջ էջը փճացաւ: Տե՛ս, զու կամաւ ըրիք, ըսաւ ինձի, և ձեռքը բարձրացուց, — ուսուցիչը տեսաւ,

— զայն վար առաւ: Բայց աւելցուց. — Դուրսը կը տեսնուինք: Ես գէշ եղայ, բարկութիւնս մարեցաւ, զըզջացի: Ո՛չ, Քօրէթթի չէր կրնար կամաւ ըրած ըլլալ: Բարի է, մտածեցի: Յիշեցի երբ զինք իր տան մէջ տեսայ, ինչպէս կ'աշխատէր, ինչպէս իր հիւանդ մայրը կը խնամէր, և յետոյ ինչ ուրախութիւն պատճառեցի իրեն իմ տանս մէջ, և ինչպէս հայրս ախորժեք էր: Ամէն բան կու տայի՝ իրեն այն խօսքն ըսած չըլլալու համար, իրեն այն տմարդութիւնն ըրած չըլլալու համար: Եւ հօրս տալիք խորհուրդին վրայ կը մտածէի: — Յանցաւոր ես: — Այո՛: — Եւ այն ժամանակ իրմէ թողութիւն խնդրէ՛: — Բայց ասիկայ ես չէի համարձակիր ընել, խոնարհելէն կ'ամչնայի: Աչքիս տակէն իրեն կը նայէի, իր ուսերուն վրայ քակուած ասուին կը տեսնէի, գուցէ վասն զի չափազանց փայտ կրած էր, և կը զգայի թէ զինք կը սիրէի, և կ'ըսէի ինծի. — Սիրտ ըրէ՛, — բայց՝ — ներէ՛ ինծի — բառը կոկորդիս վրայ կը մնար: Նա մերթ խոտոր ինծի կը նայէր, և ինծի կ'երևար որ աւելի վշտացեր էր քան զայրացած: Բայց այն ատեն ես ալ իրեն գէշ աչքով կը նայէի, ցուցնելու համար որ իրմէն չեմ վախեր: Նա ինձ կրկնեց. — Դուրսը կը տեսնուինք: — Եւ ես. — կը տեսնուինք դուրսը: — Բայց բանի մը վրայ կը մտածէի՝ զոր հայրս ինծի ըսած էր անգամ մը. — Եթէ յանցաւոր ես, ինքզինքդ պաշտօնանէ. բայց մի՛ զարնե: — Եւ ես կ'ըսէի ինքն իրենս. — Ինքզինքս կը պաշտօնանեմ, բայց չեմ զարնե: — Սակայն տփոհ էի, տխուր էի, այլ ևս ուսուցչին ըսածները չէի լսեր: Վերջապէս դուրս ելնելու վայրկեանը հասաւ: Երբ ճամբուն մէջ մինակ մնացի, տեսայ

որ նա ետէս կու գար: Կեցայ, և տողաշարը ձեռքս իրեն սպասեցի: Նա մօտեցաւ, ես տողաշարը վեր վերցուցի: — Ո՛չ, Հենրիկո՛ս, — ըսաւ նա, իր անուշ ժպտով՝ ձեռքով տողաշարը մէկզի հրելով, — առաջուան պէս բարեկամ ըլլանք: — Ես վայրկեան մ'ապշած մնացի, և յետոյ զգացի կարծես որ ձեռք մ'ուսերէս կը մղէր, և ինքզինքս իր բազկաց մէջ գտայ: Նա զիս համբուրեց ու ըսաւ. — Ա՛յլ ևս երբե՛ք գփտութիւն պիտի չըլլայ մեր մէջ, այնպէս չէ՛: — Բնա՛ւ, երբե՛ք, — պատասխանեցի: Եւ գոհ իրարմէ բաժնուեցանք: Բայց երբ տուն հասայ և հօրս պատմեցի բոլոր, կարծելով իրեն հաճոյք մ'ընել, նա խոժոռեցաւ ու ըսաւ. — Դու պէտք էիր առաջին ձեռք երկարողն ըլլալ, քանի որ յանցաւոր էիր: — Յետոյ աւելցուց. — Պէտք չէիր քեզմէ լաւագոյն ընկերոջ մը՝ զինուորի՛ մ'որդւոյն վրայ տողաշար բարձրացնել: — Եւ ձեռքէս կորզելով տողաշարը, երկու կտոր ըրաւ և պատին զարկաւ:

## ՔՈՅՐՍ

24. Ուրբաթ

Ինչո՞ւ, Հենրիկո՛ս, Քօրեքքիի հետ գէշ վարուերուդ համար մեր հայրը զքեզ յանդիմանելէն վերջ, դարձեալ ինծի այն կոպտութիւնն ըրի: Չես կրնար երեսկայեղ րե ի՛նչ ցաւ զգացի: Չե՛ս գիտեր որ երբ մանուկ էիր, ժամերով ոտքս ինչ քով կը կենայի՝ փոխանակ իմ ընկերուհիներուս





Չե՛ս գիտեր որ երբ մանուկ էիր, ժամերով ուրբանիդ քով կը կենայի

հետ գուարձանարու, և երբ հիշանց էիր՝ ամեն զիշեր անկողնես կ'իջնէի նայելու համար քե ձակատոյ տա՛ք էր: Չե՛ս գիտեր ասիկայ, դո՛ւք որ քոյրոյ կը վշտացնես. քե երբ տակաւի դժբաղդոտրիւն մը մեզի հանդիպի, ևս քեզի մայրոտրիւն պիտի ընեն, և գաշկի մը պես պիտի սիրեն զքեզ: Չե՛ս գիտեր որ երբ մեր հայրն ու մայրը չըլլան այլ ևս, ևս պիտի ըլլան քո՛ւ լաւագոյն թարեկամութիոյ, միակը՝ որուն հետ պիտի կարենաս խօսիլ մեր մեռեալներուն ու մեր մանկութեան վրայ, և քե՛ երբ հարկ ըլլայ՝ քեզի համար պիտի աշխատիմ, Հներիկո՛ս, քո՛ւ օրս պատիկոյ մտածելու և քեզի ուսում սովորեցնելու համար, և քե՛ միշտ զքեզ պիտի սիրեն երբ մեծնաս, ու մտքովս քեզի պիտի հետեիմ երբ հեռու երթաս, միշտ, վասն զի միասին մեծցեր ենք և մի և նոյն արիւնն ունինք: Ո՛վ Հներիկոս, ապահով եղիր, որ երբ մեծնաս, երբ քեզի դժբաղդոտրիւն մը հանդիպի, երբ միեակ մնաս, գիտցիր որ զիս պիտի փնտռես, ու ինձի պիտի գաս՝ ըսելու. — Սիրվիս, քոյր իմ, քո՛ղ որ քեզի հետ մնամ, մեր անցեալ երջանկութեան վրայ խօսիմք, կը յիշե՛ս, մեր մօր, մեր տան վրայ, անցած գեղեցիկ օրերուն վրայ խօսիմք: Ո՛վ Հներիկոս, միշտ քոյրոյ գրկարաց պիտի գտնես: Այո՛, սիրելի՛ Հներիկոս, և ներքե՛ նստ. այս յանդիմանութեան գոր հիմա քեզի կու տամ: Էս քո՛ւ ն՛չ մէկ յանցանքոյ պիտի չյիշեն, և երբ ոտրիչ տնամտրիւններ այ տաս ինձի, ի՛նչ հոգս է, դարձեալ դո՛ւ միշտ իմ եղբայրս պիտի ըլլաս, ևս ընտ ոտրիչ բան պիտի չյիշեն բայց քե զքեզ րեւորուս մէջ գրկած ըլլարս, այնչափ տարիներ քո՛ւ ամենեկն աշուի հուշատարիմ ընկերոյ եղած ըլլարս: Բայց դո՛ւ այս մի և նոյն տետրակին վրայ բարի խօսք մը գրե՛ և ևս իրիկուն չեղած կրկին պիտի դառնամ զայն կարողարու: Առ

այժմ, ցուցնելու համար թե քեզի չեմ բարկացած, տեսնելով թե յոգևած էիր, քոռ տեղի՝ Ռոմանեացի արիւն ամսօրեայ պատուոքիւնն օրինակեցի, զոր դու հիշանդ որ մնադրիկիև տեղ պիտի օրինակիր. գրասեղանիդ անխափան կողմեան դարանիև մէջ եայի՛. բոլոր այս գիշեր օրինակեցի՝ քո դու կը քնանայիր: Լառ խօսք մը գրե՛ ինձի, Հենրիկո՛ւս, կը խնդրեմ:

ՔՈՅՐԴ ՍԻՆՎԻՍ

Արժանի չեմ անքերդ հավերջրերու:

ՀԵՆՐԻԿՈՍ



### ՌՕՄԱՆԵԱՅԻ ԱՐԻՒՆ

(Ամսօրեայ պատմութիւն)



**Ա**ՅՆ երեկոյ, Ֆէրբուչիոյի տունը սովորականէն աւելի հանգարտ էր: Հայրը, որ շրջուն փերեզակի փոքր խանութ մ'ուներ՝ Ֆօրլի՛ գացեր էր գնումներ ընելու, և իր կինն իրեն ընկերացած էր Լուիճինայի հետ, փոքր ազջիկը բժշկի մը տանելու համար, որ անոր մէկ հիւանդ աչքը վերաբուժական գործողութեան մը պիտի ենթարկէր. և յաջորդ առտու պիտի վերագառնային: Կէս գիշերին քիչ կը պակսէր: Կինը՝ որ կու գար օրուան ժառայութիւններն ընելու՝ միթնելու ժամանակ մեկնած էր: Տան մէջ միայն մամիկը կը մնար՝ կաթուածահար ոտքով, և Ֆէրբուչիոն՝ տասներեք տարեկան ազայ մը: Միայն գեանայարկով սնակ մ'էր, մայր ճամբուն վրայ շինուած, գիւղէ մը հրացանընկէց մը բաժնուած, Ռոմանեայի Ֆօրլի

քաղքէն քիչ հեռու. և մտալ՝ միայն անբնակ երկու ամիս առաջ հրդեհէ մը կործանած տուն մը կար, որուն վրայ գեռ պանդակի մը նշանը կը տեսնուէր: Տնակին ետև փոքր բանջարանոց մը կար, որուն վրայ գեղջկական դռնակ մը կը բացուէր. խանութին դուռը՝ ուսկից նաև տունը կը մտցուէր՝ մայր ճամբուն վրայ կը բացուէր: Շուրջն ամայի դաշտագետինը կը տարածուէր, ընդարձակ մշակուած դաշտեր, թթենիներով լի:

Քիչ կը պակսէր կէս գիշերուան, կ'անձրեւէր, քամին կը փչէր: Ֆէրրուչիոն և մամիկը՝ գեռ արթուն՝ ճաշարահին մէջ էին, որուն և բանջարանոցին մէջ տեղ հին կարասիներով լեցուն սենեակ մը կար: Ֆէրրուչիոյ ժամը տասնումէկին տուն մտած էր, յետ շատ մը ժամեր դուրս մընալուն, և մամիկն աչքերը բաց, անձկալից իրեն սպասած էր՝ լայն թիկնաթուռի մը վրայ դամուած, որուն վրայ սովոր էր բոլոր օրն անցունելու, և յաճախ նաև ամբողջ գիշերը, որովհետև չնչարգելութիւն մը չէր թողուր իրեն որ պառկի:

Կ'անձրեւէր և քամին անձրեն սպակիկներուն կը զարնէր. գիշերն ամենամութ էր: Ֆէրրուչիոյ յողնած, ցեխտտած և զգեստը պատուտած և ճակատը քարի հարուածներէ կտալուտցած վերադարձած էր. ընկերներուն հետ քարածղութիւն ըրած էր, սովորականին պէս ձեռք ձեռքի եկած էին. և ասկէ զատ խաղացած ու բոլոր դրամները կորուսած էր և գլխարկը փոսի մէջ ձգած:

Թէև խոհանոցը լուսաւորուած էր միայն իւզի կանթեղիկով մը, որ սեղանի մ'անկիւնը դրուած

էր, թիկնաթուռն մօտ, սակայն, մամիկն իսկոյն տեսած էր թէ ի՞նչ խղճալի վիճակի մէջ կը գըտնուէր թոռնիկը, և մասամբ գուշակած էր, մասամբ ալ խոստովանցուցած էր անոր անառակութիւնները:

Ինք բոլոր սրտով կը սիրէր այն տղան: Երբ ամէն բան իմացաւ, սկսաւ լալ:

— Ո՛հ, ո՛չ, — ըսաւ վերջը, յետ երկար լուսթեան մը. — դու սիրա չունիս բնաւ խեղճ մամիկիդ վրայ: Սիրա չունիս՝ որ այդ կերպով կ'օգտուիս հօրդ ու մօրդ բացակայութենէն՝ ինծի վիշտ պատճառելու համար: Բոլոր օրը զիս մինակ ձգեցիր: Պզտիկ կարեկցութիւն մը չունեցար: Նայէ՛, Ֆէրրուչիոյ: Դու գէշ ճամբայ մը կը բըռնես, որ զքեզ ախուր վախճանի մը պիտի առաջնորդէ: Ուրիշներու ալ այդ ճամբով գնալը տեսած եմ, և գէշ վերջացուցեր են: Կը սկսի տունէն փախչիլ, ուրիշ տղոց հետ կուռի բռնուիլ, դրամները կորսնցնել, յետոյ քիչ քիչ քարածղութենէն՝ դանակ քաշելու կ'անցնի, խաղէն՝ ուրիշ ախտերու, և ախտերէն... զողութեան:

Ֆէրրուչիոյ մտիկ կ'ընէր, երեք քայլ անդին կեցած, պահարանի մը կռթնած, կզակը կուրծքին վրայ, յօնքերը կնճած, և կուռի զայրութէն բուրովին տաք: Իր շագանակագոյն գեղեցիկ խոպոպները ճակտին շուրջը կախուած էին և կապոյտ աչքերն անշարժ:

— Խաղէն՝ զողութեան, — կրկնեց մամիկը, շարունակելով լալ: — Մտածէ՛, Ֆէրրուչիոյ: Մըտածէ՛ գիւղին այն դժբախտութեան վրայ, այն

վիժոյ Մօծծօնիին վրայ՝ որ այժմ՝ քաղքին մէջ թափառական կը շրջի. որ քսան և չորս տարեկան՝ երկու անգամ՝ բանտ մտած է, և սրտացաւէ մեռուցեր է այն խեղճ կինը՝ իր մայրը, զոր ես կը ճանչնայի, և իր հայրը՝ Զուխերի փախած է յուսահատութենէն: Մտածէ՛ այն տխուր օրինակին վրայ, որուն հայրդ բարև տայու կ'ամչնայ, միշտ իրմէ աւելի գէշ եղեռնագործներու հետ կը շրջի՝ մինչև այն օրը յորում պատժաւորաց բանտը պիտի լինայ: Լաւ ուրեմն, ես զինք սողայ ճանչցեր եմ, քեզի պէս սկսած է: Մտածէ՛ թէ քու հօրդ ու մօրդ վախճանն ալ իրեններուն վիճակին պիտի հասցնես:

Ֆէրրուչչիոյ լուռ կեցած էր: Նա բնաւ սրտով չար չէր, ընդհակառակն. իր անկարգութիւններն աւելի առաջ կու գային տաքարիւնութենէ և յանդգնութենէ քան չարասրտութենէ, և հայրը զինք գէշ վարժեցուցած էր ճիշտ ասոր համար, որ ի բնէ զայն ընդունակ համարելով ամենէն աւելի գեղեցիկ զգացումներուն, և նոյն իսկ վեհանձն ու զօրաւոր գործողութեան մը՝ երբ փորձանք մը պատահէր, սանձարձակ կը թողուր և կը սպասէր որ ինքն իրեն զգաստանայ և ուղղուի: Աւելի բարի էր, քան չար. սակայն յամառ, և շատ դժուար էր, երբ զվշումէն սիրտը ճնշուէր իսկ, բերնէն այն բարի բառերը հանել տալ՝ որոնցմով ներումն կը գտնենք. — Այո, յանցաւոր եմ, ուրիշ անգամ չեմ՝ ըներ, կը խոստանամ՝ քեզի, ներէ՛ ինձի: — Մերթ սիրտը գորովով կը լեցուէր բայց հպարտութիւնը չէր թողուր իրեն բացատրել այն զգացումը:

— Ո՛հ, Ֆէրրուչչիոյ, — շարունակեց մամիկը, զինք այնպէս լուռ տեսնելով: — Զղջման խօսք մ'ալ չունին ինձի: Կը տեսնես ինչ վիճակի մէջ կը գտնուիմ, որ կրնայ զիս գերեզման իջեցնել: Պէտք չէ՛ր զիս չարչարել, մօրդ մայրը լացնել, որ այսպէս պառուած՝ իր օրերը կը համրէ. քու խեղճ մամիկդ, որ միշտ քեզ շատ սիրած է, որ գիշերներով գքեզ կ'սրորէր՝ երբ քանի մ'ամառան մանուկ էիր, և չէր ուտեր՝ գքեզ զբաղցնելու համար, դու չես գիտեր: Ես միշտ կ'ըսէի. — Այս պիտի ըլլայ մտիթարութիւնս: — Եւ հիմա դու զիս կը մեռցնես: Սիրով այս քիչ մը կեանքս ալ կու տայի՝ քու բարի և հնազանդ ըլլալդ տեսնելու համար այն օրերուն պէս... երբ գքեզ Մատուռ կը տանէի, կը յիշե՞ս, Ֆէրրուչչիոյ, որ իմ գըրպաններս խիճեր և խոտեր կը լեցնէիր, և ես գքեզ առած տուն կը բերէի՝ թեկերուս վրայ քնացած: Այն ատեն շատ կը սիրէիր խեղճ մամիկդ: Եւ հիմա որ անգամալոյց եմ և քու սիրոյդ պէտք կը զգամ՝ ինչպէս օղին՝ շնչելու համար, վասն զի աշխարհի վրայ այլ ևս ուրիշ մարդ չունիմ, կիսամեռ խեղճ մ'եմ: Աստուած իմ...:

Ֆէրրուչչիոյ զգացումը մամիկին գիրկը նետուելու վրայ էր, երբ կարծեց քովի սենեկէն թեթև ազմուկ մը, ձռինչ մը լսել, այն սենեկէն՝ որ բանջարանոցին վրայ էր: Բայց չհասկցաւ թէ փեղկերը հովէն շարժեցան, թէ ուրիշ բան էր:

Ականջ գրաւ:

Մնձրեը սաստիկ կը տեղար:

Ազմուկը կրկնուեցաւ: Մամիկն ալ լսեց:

— Ի՞նչ կայ, — հարցուց մամը վայրկեան մը վերջ, խոտոված:

— Մնձրեն է, — մրմնչեց տղան:

— Ուտտի, Ֆէրրուչչիոյ, — ըսաւ պառաւը, աչքերը սրբելով, — ինձի խոտացիր որ բարե պիտի ըլլաս, այլ ևս խեղճ մամիկդ պիտի չսպընեւս....:

Ուրիշ թեթեւ աղմուկ մը զայն ընդհատեց:

— Բայց անձրեր չեմ կարծեր, — բացազանչեց, գունտթափ — .... դնա՛, նայէ՛:

Բայց աւելցուց խօսյն. — Ո՛չ, հոս կեցի՛ր, — և Ֆէրրուչչիոյի ձեռքը բռնեց:

Երկուքն ալ շունչերնին բռնած կեցան: Ուրիշ բան չէին բեր բայց միայն ջուրին ձայնը:

Յետոյ երկուքն ալ սարսուռ մը զգացին:

Երկուքին ալ երեցեր էր թէ սենեկին մէջ սոսնաձայն մը կը լսուէր:

— Ո՞վ է, — հարցուց տղան, շնչասպառ:

Ո՛չ ոք պատասխանեց:

— Ո՞վ է, — կրկնեց Ֆէրրուչչիոյ, երկիւղէն սառ կարած:

Բայց հազիւ այն խօսքերն արտասանած էր, երկուքը միասին տարտափի աղաղակ մ'արձակեցին: Երկու մարդիկ սենեկին մէջ ցատկեր էին. մէկը տղան բռնեց և ձեռքը բերնին վրայ դրաւ. միւսը պառաւին կոկորդը սեղմեց. սոսնայինն ըսաւ. — Լո՛ւս, եթէ չես ուզեր մեռնիլ, — երկրորդը. — Լո՛ւէ՛, — և դանակ մը հանեց: Երկուքն ալ սե թաշկինակ մ'ունէին երեսնուն վըրայ, աչքերնուն առջև երկու ծակով:

վայրկեան մ'ուրիշ բան չտեսցաւ բայց միայն շորսին հեքոտ շնչառութիւնն ու անձրեկն տարափը. պառաւն երազաբար կը հռչար և աչքերն ակնակապիճէն դուրս ինկած էին:

Այն որ տղան բռնած էր, ականջէն ըսաւ. — Հայրդ ո՞ւր կը պահէ դրամները:

Տղան բարակ ձայնով մը պատասխանեց՝ ակունները կափկափելով. — Հո՞ն.... այն դարանին մէջ:

— Ինձի հետ եկո՛ւր, — ըսաւ մարդը:

Եւ զայն քաշելով սենեակը տարաւ՝ կոկորդէն բռնած: Հո՞ն, յատակին վրայ դողական լապտեր մը կար:

— Ո՞ւր է դարանը, — հարցուց:

Տղան, խղճուկ, դարանը ցոյց տուաւ:

Այն ժամանակ տղէն ապահով ըլլալու համար, մարդը զայն դարանին առջև ծնրադրել տուաւ և վիզն իր սրունքներուն մէջ ուժով մը սեղմելով, այնպէս որ եթէ պառաւը ըլլար՝ պիտի կարենար խղբել, և դանակն ակուններուն մէջ բռնելով և մէկ ձեռքով լապտերը, և միւս ձեռքով սրածայր երկաթ մը հանելով գրպանէն, փականքին մէջ մխեց, խառնեց, կտորեց, դանակները բացաւ, շտապով ամէն ինչ խառնեց, գրպանները լեցուց, դարձեալ փակեց, նորէն բացաւ, պրպտեց. յետոյ կրկին տղուն կոկորդէն բռնեց, հո՞ն քշեց՝ ուր միւսը դեռ ուժով մը բռնած էր պառաւը, շփոթած, գլուխը տապալած ու բերանը բաց:

Միւսը հարցուց ցած ձայնով. — Գտա՞ր:

Ընկերը պատասխանեց. — Գտայ:

Էւ աւելցուց. — Գուռը նայէ՛ :

Այն որ պառաւը բռնած էր, դէպ ի բանջաբանոցի գուռը վազեց՝ տեսներու թէ մարդ կ'սր, և փոքրիկ սենեկէն սուբելու նման ձայնով մ'ըսաւ. — Եկու՛ր :

Անիկայ որ ներս մնացեր էր, և Ֆէրրուչչիոն բռնած էր, գանակը տղուն և պառաւին ցոյց տուաւ՝ որ աչքերը կը բանար ու ըսաւ. — Ոչ մէկ ճիկ, ապա թէ ոչ կու գամ՝ ու զձեզ կը ըսպաննեմ :

Էւ վայրկեան մ'երկուքին վրայ սեւեռեց աչքերը :

Այն կէտին, մայր ճամբուն խորէն բազմաթիւ ձայներու երգ մը լսուեցաւ :

Գոզն արագութեամբ դէպ ի դուռ դարձաւ, և այն բունն շարժման ժամանակ՝ թաշկինակն և բեռէն վար ինկաւ :

Պառաւը ճիչ մ'արձակեց. — Մօծծօնի՛ :

— Անիծուած պառաւ, — մենչեց ճանչցուած գողը : — Պէտք ես մեռնիլ :

Էւ գանակը բարձրացուցած պառաւին վրայ յարձկեցաւ որ իսկոյն մարեցաւ :

Մարգասպանը հարուածը տուաւ :

Սակայն երոզ շարժումով մը, Ֆէրրուչչիոյ յուսահատ ազգազակ մ'արձկելով՝ նետուած էր մաս մուն վրայ, և իր մարմնով գայն ծածկած : Մարգասպանը փախաւ՝ սեղանի մը զարնուելով և ըյսը տապալելով՝ որ մարեցաւ :

Տղան մամիկին վրայէն սահեցաւ դանդաղ կերպով, և ծնգան վրայ ինկաւ, և այն ձեով մնաց՝ ձեռքն անոր մէջքը փաթթած և գլուխը կուրծքին վրայ :

Քանի մը վայրկեան անցաւ. սաստիկ մութ էր. գիւղացուց երգը հեռոջհեռէ գաշտին մէջ կը հեռանար : Պառաւը սթափեցաւ :

— Ֆէրրուչչիոյ, — կանչեց հազիւ լսելի ձայնով, ահաաները կափկափելով :

— Մամիկ, — պատասխանեց սոգան :

Պառաւը ճիգ մ'ըրաւ խօսելու, բայց երկիւղը լեզուն կ'անդամալուծէր :

Ժամանակ մ'ալ լուռ մնաց, սաստիկ գողգղալով :

Յետոյ յաջողեցաւ հարցնել.

— Ալ հոս չե՞ն :

— Ոչ :

— Զիս չսպաննեցին, — մրմնջեց պառաւը խղճուկ ձայնով :

— Ոչ... անվնաս էք, — ըսաւ Ֆէրրուչչիոյ նուազ ձայնով : — Անվնաս էք, սիրելի մեծ մայրս : Դրամները տարին : Բայց հայրեկը... գրեթէ բոլոր հեռն առած էր :

Մամիկը շունչ մ'առաւ :

— Մամիկ, — ըսաւ Ֆէրրուչչիոյ, միշտ ծնրաւ գիր, անոր մէջքը փաթթուած, — սիրելի՛ մեծ մայր... զիս կը սիրես, այնպէս չե՞ :

— Ո՛հ Ֆէրրուչչիոյ, խեղճ դաւակա, — պատասխանեց նա, ձեռքերն անոր գլխուն վրայ դրնելով. — Ինչպէս վախցած պիտի ըլլաս : Ո՛վ սորմած Աստուած : Քիչ մը ճրագը վառէ... : Ո՛չ, մութին մէջ մնանք, դեռ կը վախեմ :

— Մամիկ, — ըսաւ դարձեալ սոգան, — ես միշտ քեզի տհաճութիւն պատճառեր եմ... :

— Ո՛չ, Ֆերրուչչիոյ, այդպէս մի՛ ըսեր. ես ա՛յ չեմ մտածեր, բոլոր մտոցեր եմ, շատ կը սիրեմ գրեզ:



— Միշտ քեզի տհաճութիւն տուեր եմ, — շարունակեց Ֆերրուչչիոյ, հասկեալ և դողդոջուն

ձայնով. — բայց... միշտ գրեզ սիրեր եմ: Կը ներքն ինձի...: Ներէ՛ ինձի, մամիկ:

— Այո, որդեակ, կը ներեմ քեզի, բոլոր սըրտով կը ներեմ: Մի՛ տարակուսիր թէ քեզի չեմ ներեր: Ոտք ելի՛ր, զաւակս: Այլ ևս բնաւ քեզի պիտի չգայրանամ: Բարի ես, շատ բարի ես: Լոյսը վառենք: Քիչ մը զօրանանք: Ե՛լ Ֆերրուչչիոյ:

— Շնորհակալ եմ, մամիկ, — ըսաւ տղան, միշտ աւելի տկար ձայնով: — Հիմա .... գոհ եմ: Ձիս պիտի յիշես, մամիկ .... այնպէս չէ՛, միշտ պիտի յիշես .... քու Ֆերրուչչիոյ:

— Սիրելի Ֆերրուչչիոս, — բացագանչեց մամը, ապշած ու անհանգիստ, ձեռքերն անոր ուսերուն վրայ դնելով և գլուխը ծռելով, իբրև երեսը նայելու համար:

— Յիշէ՛ զիս, — մրմնջեց դարձեալ տղան ձայնով մը՝ որ կարծես վերջին շունչ մ'էր: — Համբոյր մը տուր մօրս ... հօրս ... Լուիճիային ... : Մ'նսն բարեաւ, մամիկ .... :

— Տէր Աստուած, ի՛նչ ունիս, — գոչեց պառան անձկութեամբ՝ շօշափելով տղուն գլուխը զոր իր ծնդան վրայ ձգած էր. և յետոյ որչափ ձայն ունէր կոկորդին մէջ, յուսահատաբար. — Ֆերրուչչիոյ, Ֆերրուչչիոյ, Ֆերրուչչիոյ: Որդեակ իմ: Մէր իմ: Արքայութեան հրեշտակներ, օգնեցէք ինձի:

Բայց Ֆերրուչչիոյ այլ ևս չպատասխանեց: Պրզտիկ գիւցագնը, իր մօր մայրը փրկողը, դանակի հարուած մ'առած քամակէն՝ գեղեցիկ ու յանդուզն հոգին Աստուծոյ աւանգած էր:

### ՓՈՒՔՐԻԿ ՈՐՄՆԱԴԻՐԸ՝ ՕՐՀԱՍԱԿԱՆ

18. Երեքշարթի



Փոքրիկ որմնաղիրը ծանր հիւանդ է. ուսուցիչը մեզի ըսաւ որ անոր տեսութեան երթանք, և յարմարցուցինք որ կարծեն, Տէրութին և ես միասին երթանք: Սթարտին ալ կու գար, բայց որովհետև ուսուցիչը մեզի շարադրութեան նիւթ տուաւ Գալուստի Յուշարձանին նկարագրութիւնը, ան մեզի ըսաւ թէ պիտի երթար յուշարձանը տեսնելու՝ նկարագրութիւնն աւելի ճիշտ ընելու համար: Նոյնպէս կէս բերնով այն ուսած Նօպիսն ալ հրաւիրեցինք, որ պատասխանեց. — Ո՛չ, — պաղ կերպով: Վօթինի

ալ յանձն չառաւ գալու, վախնալով որ գուցէ զգեստը կ'աղտոտէր կիրով: Ժամը չորսի արձակուրդէն վերջը գացինք: Հեղեղօրէն կ'անձրեկէր: Ճամբուն մէջ կարծենէն կեցաւ և բերանը հացով լեցուն՝ ըսաւ. — Ի՞նչ զրնենք, — և զրպանին մէջ դրամներ կը հնչեցնէր: Իւրաքանչիւրս երկու դրամ դրինք և երեք խոշոր նարինջներ գնեցինք: Չեղունն ելանք: Մուտքին առջև Տէրօսսի մետաղը հանեց ու զրպանը դրաւ. իրեն հարցու-

ցի ինչո՞ւ. — Չեմ գիտեր, — պատասխանեց, — հըպարտութեան երեւոյթ մը չտալու համար... աւելի պատշաճ կը թուի ինծի առանց մետաղի երթալ: — Գուռը զարկինք, հայրը բացաւ, այն մարդը՝ որ հսկայ մ'է կարծես. դէմքն այլափոխուած էր, սարսափած կը թըւէր: — Ո՛վ էք, — հարցուց: — Կարծենէն պատասխանեց. — Անտոնին դպրոցական ընկերներն ենք, իրեն երեք նարինջ բերինք: — Ո՛հ, խեղճ Անտոնիկ, — բացազանչեց որմնաղիրը զլուխը ցուցնելով, — կը վախեմ որ այլ ևս չկարենայ ուտել ձեր նարինջները, — և ափին հակառակ կողմով աչքերը սրբեց: Չմեզ ներս հրաւիրեց, տանիքով սենեակ մը մտանք, ուր « որմնաղիրիկը » տեսանք՝ որ երկաթէ անկողինիկի մը վրայ կը ընանար. իր մայրն երեսը ձեռքերուն մէջ առած անկողնոյն վրայ ինկած էր, և հագիւ գարձաւ մեզի նայելու. մէկ կողմը վրձինները, մուրճ մը և կրի մաղ մը կախուած էին. հիւանդին օտքին վրայ որմնաղիրն կրոտ զգեստը փռուած էր: Խեղճ տղան նիհարեցր էր, ճերմկցած, քիթը բարակցած, և կարճ շնչառութիւն մ'ուսնէր: Ո՛վ սիրուն Անտոնիկ, այնչափ բարի ու զուարթ՝ փոքրիկ ընկերս, ինչպէս ցաւեցայ, ամէն բան կու տայի ընչապատուկ մ'ընել տալու համար, խեղճ որմնաղիրիկ: Կարծենէն նարինջ մը դրաւ բարձին վրայ, զլիսուն ըով. հոտը զինք արթնցուց, խկոյն առաւ, բայց յետոյ վարձեց, և սեւեռած կարծենէն նայեցաւ: — Ես եմ, — ըսաւ սա, — կարծենէն եմ. կը ճանչնաս զիս: — Նա թեթև մը ժպտեցաւ՝ որ հազիւ տեսնուեցաւ, և իր կարճ ձեռքը դժուարութեամբ հանելով անկողնէն՝ կարծենի կարկառեց՝ որ զայն իրեններուն մէջ առաւ և այտելուն վրայ դրաւ ըսելով. — Վաջ եղի՛ր, արիացի՛ր, որ-



մնադրիկս. դու շուտ պիտի առողջանաս և դպրոց վերադառնաս և ուսուցիչը զքեզ քովս պիտի դնէ, գոհ ես: — Բայց որմնադրիկը չպատասխանեց: Մայրը սաստիկ հեծկլտաց. — Ո՛հ, խեղճ Անտոնիկս, խեղճ Անտոնիկս: Այնպէս քաջ և բարի, և Աստուած կ'ուզէ ձեռքէս առնել: — Հանդարտէ՛, — գոչեց իրեն որմնադիրը, յուսակտուր, — հանդատէ՛ ի սէր Աստուծոյ, կամ կը խենթենամ: — Յետոյ ըսաւ մեզի տառապազին. — Գնացէ՛ք, գնացէ՛ք, տղաք. շնորհակալ եմ. գնացէ՛ք. հոս ի՛նչ պիտի ընէք: Շնորհակալ եմ. ձեր տունը գնացէ՛ք: — Տղան աչքերը փակեր էր և մեռած կը թուէր: — Ո՛ և է ծառայութեան պէտք ունիս, — հարցուց Կարրօնէ: — Ո՛չ, բարի զաւակս շնորհակալ եմ, — պատասխանեց որմնադիրը. — տուն գնացէ՛ք: — Եւ այսպէս ըսելով զմեզ սանդուղին գլուխը տարաւ և դուռը փակեց: Բայց դեռ սանդուղին կէսը չէինք, անոր պոռալը լսեցինք. — Կարրօնէ՛, Կարրօնէ՛: — Ետապով երեքս ալ վեր ելանք: — Կարրօնէ՛, — գոչեց որմնադիրն այլայլած դէմքով, — քու անունդ տուաւ, երկու օր է որ չէր խօսեր, երկու անգամ անունովդ կանչեց, զքեզ կ'ուզէ, շուտ եկո՛ւր: Ո՛հ, Տէր Աստուած, իցի՛ւ թէ լաւ նշան մ'ըլլար: — Յտեսու թիւն, — ըսաւ Կարրօնէն մեզի, — ես կը մնամ, — և հօր հետ տունէն ներս սրացաւ: Տէրօսսիի աչքերն արցունքով լեցուած էին: Ես իրեն ըսի. — Որմնադրիկին համար կու լաս: Անիկայ խօսած է, անպատճառ կ'առողջանայ: — Կը հաւատամ, — պատասխանեց Տէրօսսի. — բայց անոր վրայ չեմ մտածեր...: Կը մտածէի թէ ի՛նչպէս բարի է, ի՛նչ գեղեցիկ հոգի է Կարրօնէն:

## ՔԱՎՈՒՐ ԿՈՄՍԸ

29. Ձորեքշաբթի

Քավոր կուսի յաշարձանիկն նկարագրութիւնն է գորպիտի ընես: Կրեաս ընես: Սակայն ո՛վ եղած է Քավոր կուսը, դեռ ի՛նչս չես կրեար ըմբռնել: Առ այժմ միայն գիտցիր. շատ տարիներ փիեմներէի ետխարարապետ եղաւ. ինքն է որ փիեմներէի բանակը դէպ ի խրիմ դրկեց՝ Չերեմիայի յարողքեանը վերակնեցեկոս համար՝ Նովարայի պարտութեանը ինկած մեր գիւնդարական փառքը. ինքն է որ հարիւրյիտուննուգար Պրանսացիներ Արկաններէն իջեցոց՝ Աւստրիացիները Լոմպարտիայէն վտնեկոս համար. ինքն է որ Խոսայիսն կառավարեց՝ մեր յերախոխութեան ամենեկն հանդիսաւոր շրջանիկն, որ այն տարիներուն մէջ ամենեկն զօրաւոր մղումը տուաւ հայրենիքի միտքեան սրբազան անուարիկն, ինք՝ յուսաւոր հանձարով, անպարտելի հաստատամտութեանը, գերեւարդիայիկն գործունեութեանը: Ետտ զօրավարներ սակայն ժամեր անցոցիկն մարտի դաշտիկն վրայ. յայց ինք ամենեկն սարսափելիներն ակցոց իր գրասենեկիկն մէջ, երբ վայրկեկն վայրկեան կրեար տապալի իր մեծոյ գործը՝ իրբն խարխուռ չէրք մը՝ երկրաշարժի ցեցումն մը. կոռէ և անձկութեան ժամեր՝ ոսկից կարող էր դուրս գալ խեղացեոր կամ մանր սրտիկն մէջ: Եւ սակայն հակայական և փորորկայից աշխատութիւն մ'եղաւ, որ քսան տարի իր կեանքը կարձեցոց: Եւ սակայն, սակեկն տակնում՝ որ գիկը գերեզ

ման պիտի ձգեր, ինք ղեռ յռասնասարսար հիշանդաշրեան հետ կը մարտակը՝ իր հայրենիքին ի նկատս ո՛ր և է բան մ'ընեռոշ համար: — Տարօրինակ է, կ'ըսեր ցառով՝ իր մահուան անկողնոյն մէջէն, — այլ ևս կարգալ չեմ գիտեր, այլ ևս չեմ կրնար կարգալ: — Միևչիտ իրմէ արիւն կ'առնէին, և տենող կ'առնէար, ինք հայրենիքի վրայ կը մտածեր, կ'ըսեր իշխանարար. — Առողջացուցէ՛ք զիս, միտքս կը խաւարի, իմ բուրբ կարողութիւններուս պէտք ունիմ՝ ծանրակշիռ գործերու մասին բանակցելու համար: — Երբ արդէն գրեթէ հոգեվարք էր, և բոլոր քաղաքը յուզման մէջ էր, բազաւորն իր բարձիկն ընդ կեցած էր, ևս կ'ըսեր անկողնուս. — Շատ բաներ ունիմ ճեղք ըսելիք, Տէ՛ր արքայ, շատ բաներ ունիմ ցուցնելիք. բայց հիւանդ եմ, չեմ կրնար, չեմ կրնար. — և սաստիկ կը վշտանար: Եւ միշտ իր տենորտ միտքը կը սառնակեր ղեպ ի Տերութիւնը, իտարական ղեպ ի Լո՛ր գառանները՝ արտեր մեր հայրենիքին հետ կը ցուեր էին, կը մտածեր այն բոլոր գործերուն վրայ՝ որ պետք էին ըլլալի: Երբ սկսաւ գառակցել. — Մանկութիւնը կը թեցէ՛ք, — կը բացագանչէր հետոյ, — մանկութիւնն ու երիտասարդութիւնը դաստիարակեցէ՛ք... ազատութեամբ կառավարեցէ՛ք: — Յետքը կ'աճեր, մանր վերանս էր, և ինք եռանդուն խօսքերով Կարիպարտի գործ վարը կը յիշէր՝ որուն հետ աննախնայնորիւններ ունեցած էր, և վիճակիսն ու Հոռովը՝ որտեղ ղեռ ազատ չէին. ընդարձակ անտարբիւններ ունէր իտայիոյ և Եւրոպիոյ սպագայիս վրայ. օտար սաստակորտիւն մը կ'երագեր, կը հարցներ ո՛ր և և բանակիսն վաշտերն ու գորավարները, ղեռ մեզի համար, իր ժողովորդիս համար կը բարախէր իր սիրտը: Իր մեծ վիշտը, կը հասկնան, այն չէր թէ, կեանքը կը

կորսնցներ, այլ կը տեսներ թէ հայրենիքէն կը հեռանար՝ որ ղեռ իրեն պետք ունէր, և որուն համար թիչ տարիներու մէջ իր մարմնակիսն հրաշալի կազմին այնչափ ոյժերը վատներ էր: Մտաւ՝ պատերազմի արարակը կոկորդիս մէջ, և իր մանր մեծ եղաւ՝ ինչպէս իր կեանքը: Արդ, մտածէ՛ թիչ մը, Հեկրիկո՛ս, ի՛նչ է մեր աշխատութիւնը, որ սակաւն զմեզ այնչափ կը ձեռնէ, ի՛նչ և և մեր վիշտերը, ևոյն իսկ մեր մանր՝ քաղաքամանք այն մարդոց աշխատութեանց, անաւոր անկորտեանց, սարսափելի ձգնամաւերուն, որոնց սրտին վրայ աշխարհ մը կը ձեռնէ: Մտածէ՛ ստոր վրայ, որդեակ, երբ այն մարմարէ պատկերիս սալեկէն անցնիս, և ըսէ՛ անոր՝ սրտիդ մէջ, — Փառք քեզի:

ՀԱՅՐԴ





## Ա Պ Ր Ի Լ

## ԳԱՐՈՒՆ



## 1. Շարաթ

**Ա**ՊՐԻԼԻ մէկ: Դեռ երեք ամիս ևս: Ասիկայ տարւոյն ամենէն գեղեցիկ առաւօտներէն մին եղաւ: Ես ուրախ էի դպրոցին մէջ, վասն զի Քօրէթթի ինծի ըսած էր՝ վաղը չէ միւս օր երթալ թագաւորին գալուստը տեսնելու՝ իր հօր հետ՝ որ դայն կը ձակնայ. և վասն զի մայրս խոստացեր էր զիս մի և նոյն օրը Քօրսոյ Վալբօքքոյի Մանկանց Պատասպանան այցելութեան տանելու: Գոհ էի դարձեալ վասն զի «որմնադրիկը» լաւագոյն էր, և վասն զի երէկ իրիկուն, անցնելու ժամանակ, ուսուցիչը հօրս ըսաւ. — Լաւ է, լաւ է: — Եւ յետոյ գարնան գեղեցիկ առաւօտ



Գարուն

խնդիր մը կը բացատրէր: Եւ կը տեսնուէր որ հաճոյք կը զգար պարտիզին օդը ծծելով, որ բաց պատուհաններէն կու գար հողոյ և տերեւներու անուշ, թարմ հոտով լի, և մտածել կու տար զիւղին շրջագայութիւնները: Մինչդեռ նա կը բացատրէր, մերձաւոր ճամբու մը մէջ կը լսուէր որ երկաթագործ մը սալին վրայ կը զարնէր, և դիմացի տան մէջ կին մը կ'երգէր մանկիկը քնացնելու համար, հեռուն, Չէրնախայի զօրանոցին փողերը կը նուագէին: Ամէնքն ալ ուրախ կը տեսնուէին, մինչև իսկ Սթարտին: Վայրկեան մը երկաթագործը

սկսաւ աւելի ուժով հարուածել, կինն աւելի բարձրա-  
 ձայն երգել: Ուսուցիչն ընդհատեց ու ահանջ դրաւ:  
 Յետոյ ըսաւ դանդաղօրէն՝ լուսամուտէն նայելով. —  
 Երկինքը՝ որ կը ժպտի, մայր մը՝ որ կ'երգէ, պարկեշտ  
 մարդ մը՝ որ կ'աշխատի, տղաք՝ որ կը սովորին... ա-  
 հաւաստիկ գեղեցիկ բաներ: — Երբ դասարանէն ելանք,  
 տեսանք որ բոլորն ալ զուարթ էին. ամէնքը կարգաւ  
 կը քալէին՝ ոտքերնին ուժով զարնելով և ցած ձայնով  
 երգելով՝ իբրև քառօրեայ արձակուրդի մը նախօրեակը.  
 վարժուհիները կը կատակէին. այն կարմիր փետրաւորը՝



իբրև դպրո-  
 ցական աղ-  
 ջնակ մը՝ իր  
 մանուկնե-  
 ըուն ետեէն  
 կը ցատ-  
 կտէր. տղոց  
 ծնողքն ի-  
 րենց մէջ

կը խօսէին ծիծաղելով, և Վրօստի մայրը, բանջարա-  
 վաճառուհին, կողովներուն մէջ այնչափ մանուշակի  
 փունջեր ունէր՝ որ բոյրերով բոլոր սրահը կը լեցնէին:  
 Ես երբեք այնչափ ուրախութիւն չզգացի՝ որչափ այս  
 առտու՝ տեսնելով մայրս որ ճամբուն մէջ ինծի կը  
 սպասէր: Եւ իրեն վազելով ըսի. — Ուրախ եմ. սակայն  
 ի՞նչ կայ որ այս առտու ինծի այնչափ գոհութիւն կը  
 պատճառէ: — Եւ մայրս պատասխանեց ժպտելով, թէ  
 գեղեցիկ եղանակն ու բարի խղճմտանքն էր:

ՈՒՄՊԵՐԹՈՅ ԹԱԳԱՒՈՐԸ

Յ. ԵՐԿՈՂԱՅԵՐԹԻ

Ճիշտ ժամը տասնին հայրս պատուհանէն Քօրէթթին  
 տեսաւ, փայտավաճառն ու որդին՝ որ հրապարակին  
 վրայ ինծի կը սպասէին, և ըսաւ ինծի. — Ահա հոն,  
 Հենրիկո՛ս, գնա՛ քու թագաւորդ տեսնելու:

Ես, տղու մ'աշխուժով վար իջայ: Հայր և որդի ևս  
 սովորականէն աւելի աշխոյժ էին, և բնաւ չերեցաւ  
 ինծի թէ այնպէս իրարու կը նմանէին՝ ինչպէս այս  
 առտու. հայրն իր զգեստին վրայ կախած էր քաջու-  
 թեան շքադրամը՝ ուրիշ երկու յուշարար մետաղներու  
 մէջտեղ, և պերեւշտներն երկու գնդասեղներու պէս սրա-  
 ծայր ու ցցուած էին:

Անմիջապէս սկսանք դէպ ի երկաթուղոյ կայարանն  
 երթալ, ուր տասն ու կիսուն թագաւորը պիտի հաս-  
 նէր: Քօրէթթի հայրը ծխափողով կը ծխէր և ձեռքերը  
 կը շփէր: — Գիտէ՞ք, — կ'ըսէր, — թէ վաթսուն և  
 վեցի պատերազմէն ասդին բնաւ զինքը տեսած չեմ:  
 Տասն և հինգ տարի և վեց ամիս: Նախ՝ երեք տարի  
 Գաղղիոյ մէջ, յետոյ՝ Մօնղոլիի մէջ. և հո՛ս՝ որ կրնայի  
 տեսնել զինք, երբե՛ք անիծուած առիթը չէ հանդի-  
 պած՝ որ քաղաքը գտնուիմ երբ նա կու գար: Ի՞նչ  
 ըսել է զուգադիպութիւն:

Նա թագաւորին կ'ըսէր, — Ումպերթոյ, — իբրև  
 ընկեր մը: — Ումպերթոյ՝ 16<sup>րդ</sup> զօրաբաժնին կը հրա-

մայէր, Ումպերթոյ՝ քսան և երկու տարեկան և այսչափ օրուան էր, Ումպերթոյ՝ ձի մը՝ այսպէս ու այնպէս կը հեծնէր:

— Տասն և հինգ տարիներ, — կ'ըսէր բարձրաձայն, քայլերն երկարելով: — Բուն կը փափաքիմ զինք տեսնել: Գահաժառանգ թողուցեր եմ զինք, հիմա թագաւոր կը տեսնեմ: Ես ալ փոխուած եմ. զինուորութենէ՝ փայտավաճառութեան անցեր եմ: — Եւ կը ծիծաղէր:

Որդին իրեն կ'ըսէր. — Եթէ զքեզ տեսնէ, պիտի ճանչնայ:

Կա սկսաւ ծիծաղել:

— Խենթ ես դու, — պատասխանեց: — Այդ պակաս էր: Ինք, Ումպերթոյ, մէկ հատ էր. մինք ճանճերու պէս էինք: Եւ յետոյ ստոյգ է որ կեցաւ մեզ մէկիկ մէկիկ նայելու:

Վիթթօրիոյ Էմմանուէլէի պողոտան ելանք. շատ մարդ կար որ դէպ ի կայարան կ'երթար: Աւպեան զինուորներու գունդ մը կ'անցնէր նուագախումբով: Երկու ձիաւոր հրացանակիրներ քառասմբակ անցան: Պայծառ օդ մ'էր որ կը փայլէր:

— Այո՛, — բացազանչեց Քօրէթթի հայրը, ոգևորուելով. — Ինծի մեծ հաճոյք պիտի պատճառէ տեսնել իմ զօրաբաժնիս զօրավարը: Ո՛հ, ինչպէս շուտով ծերացեր եմ: Անցեալ օր ինծի թուեցաւ թէ մախազը կռնակս էր և հրացանը ձեռքս՝ այն խառնակութեան մէջ, յունիս 24ի առաւօտը, երբ սուր սուրի պիտի գայինք: Ումպերթոյ իր սպաներուն հետ կ'երթար կու գար, մինչդեռ թնդանօթը կ'որոտար, հեռուն. և ամէնքն իրեն կը նայէին ու կ'ըսէին. — Միայն թէ

զնդակ մ'ալ իրեն չգայ: — Հազար փարսախ հեռի էի մտածելէ՝ թէ քիչ ատենէն այնչափ իր մօտը պիտի գտնուիմ, աւստրիացի ուլաններու նիզակներուն առջև. բայց ձիշտ իրարմէ չորս քայլ հեռու, որդեակը: Գեղեցիկ օր մ'էր, երկինքը հայելի մ'էր կարծես, սակայն տանք մը: Տեսնենք, կարելի՞ է ներս մտնել:

Կայարան հասած էինք. մեծ բազմութիւն մը կար, կառեր, պահապաններ, հրացանակիրներ, դրօշակաւոր խումբեր: Վաշտի մը նուագախումբը կը հնչէր: Քօրէթթի հայրը փորձեց ծածքին տակը մտնել. բայց զինք արգիլեցին: Այն ատեն մտածեց ամբոխի առաջին գծին մէջ մտնել որ դրան առջև շարուած կեցած էր, և արմուկներով անցը մը բանալով՝ յաջողեցաւ զմեզ ալ առաջ մղել: Բայց ամբոխը տատանուելով՝ զմեզ քիչ մը հո՛ս քիչ մը հո՛ն կը տարուբերէր: Փայտավաճառը ծածքին առաջին սեան ըով կ'ուզէր երթալ, ուր պահապաններն ո՛չ զոր կը ձգէին մնալ: — Ինծի հետ եւ կէ՛ք, — ըսաւ յանկարծ, և մեր ձեռքերէն քաշելով, երկու ռստիւնով դատարկ միջոցը կտրեց անցաւ, և հո՛ն կռնակը պատին տուած կեցաւ:

Իսկոյն Ոստիկանութեան տասնապետ մը վազեց և ըսաւ իրեն. — Հո՛ս չես կրնար կենալ:

— 49ի չորրորդ գումարտակէն եմ, — պատասխանեց Քօրէթթի, շքազրամը ցոյց տալով:

Տասնապետն իրեն նայեցաւ ու ըսաւ. — Կեցէ՛ք:

— Բայց ես չըսի միթէ, — բացազանչեց Քօրէթթի յաղթական. — մոզական բառ մ'է այդ քառասուն և իննի չորրորդ գումարտակը: Իրաւունք չունիմ քիչ մը հանգստեամբ իմ զօրավարս տեսնելու, ես որ իր գունդին մէջ եղած եմ: Եթէ այն ատեն զինք մօտէն տեսայ,

աւելի ճիշտ է որ հիմա ևս մօտէն տեսնեմ: Եւ զօրաւ վար կ'ըսեմ: Իմ գունդիս հրամանատարն եղաւ ամբողջ կէս ժամ մը, վասն զի այն վայրկեաններուն ինքն էր որ գումարտակին կը հրամայէր, երբ մէջտեղն էր, և ոչ թէ Ուպրիս գնդապետը:

Այս պահուս կայարանի սրահին ներսն ու դուրսը պարոններու և սպաներու մեծ իրարանցում մը կար, և դրան առջև կառքերը կը շարուէին, կարմրատարազ սպասաւորներով:

Քօրէթթի հարցուց հօրը, թէ Ումպերթոյ գահաժառանգը ձեռքին մէջ թուր ունէ՞ր երբ գունդին մէջ կը գտնուէր:

— Անպատճառ թուր ունեցած պիտի ըլլայ ձեռքին մէջ, — պատասխանեց, — նիզակի հարուած մը խափանելու համար, որ կրնար իրեն ալ դպչիլ՝ ինչպէս ուրիշի մը: Ո՛հ, կատաղի դեմքը: Աստուծոյ բարկու թեան պէս վրանիս յարձակեցան: Խումբերուն, քառագունդին, թնդանօթներուն մէջ կը շրջէին, որ կարծես մըրկէ մը մոլեգնած էին, ամէն բան խորտակելով: Աղեքսանդրիոյ հեծելազօրաց, Ֆօճճիայի նիզակաւորաց, հետեակազօրաց, ուլաններու, արձակամարտներու շիւթովի մ'էր, դժոխք մը՝ որ բնաւ բան չէր հասկըցուեր: Եւ լսեցի որ կը պոռան. — Արքայա՛զն տէ՛ր, արքայա՛զն տէ՛ր, — տեսայ որ նիզակները վար խոնարհեցան, հրացաններն արձակեցինք, փոշոյ ամպ մ'ամէն բան ծածկեց...: Յետոյ ամպը ցրուեցաւ...: Գետինը վիրաւոր ու մեռեալ ուլաններով ու ձիերով ծածկուած էր: Ետե դարձայ, և մեր մէջ Ումպերթոն տեսայ՝ ձիու վրայ, որ հանդարտ շուրջը կը նայէր հարցական դէմքով մը. — Տղաքներէս ո՛ր և է մէկը ճան-

կըստուեցաւ: — Եւ մենք երեսին՝ խենթի պէս, — կեցցէ, — պոռացինք: Տէ՛ր Աստուած, ի՛նչ վայրկեան...: Ահաւասիկ շոգեկառքը կը հասնի:

Երաժշտախումբը հնչեց, սպաները վազեցին, ամբոխն ոտքերուն ծայրերուն վրայ ելաւ:

— Ի՛հ, խկոյն դուրս չեղներ, — ըսաւ, պահապան մը. — հիմայ իրեն ճառախօսութիւն մը կ'ընեն:

Քօրէթթի հայրն իր մորթին մէջ ա՛յլ ևս չէր կրնար կենալ: — Ո՛հ երբ կը մտածեմ. — ըսաւ, — միշտ զինք հո՛ն կը տեսնեմ: Ստոյգ է, քօլերայի, երկրաշարժներու և ուրիշ դեռ չեմ գիտեր ի՛նչ աղէտներու մէջ ալ քաջ հանդիսացեր է. բայց ես զինք կը յիշեմ միշտ՝ ինչպէս մեր մէջ տեսայ այն ժամանակ, իր այն հանդարտ դէմքով: Եւ ապահով եմ որ ինք ևս պիտի յիշէ 49ին չորրորդ գումարտակը, հիմա որ թագաւոր է, և պիտի փափաքի անգամ մը միասին սեղանի վրայ տեսնել ամէնքը, զորս այն վայրկեաններուն իր շուրջը տեսած է: Հիմա զօրավարներու, մեծ պարոններու և աստիճանաւորներու մէջ կը գտնուի. այն ատեն միայն մեզի պէս խեղճ զինուորներ ունէր: Իցի՛ւ թէ կարենայի չորս բառ փոխանակել իրեն հետ առանձին: Մեր քսան և երկու տարեկան զօրավարին՝ մեր իշխանին հետ, որ մեր սուիներուն յանձնուած էր...: Տասն և հինգ տարի է որ զինք չեմ տեսներ...: Մեր Ումպերթոն: Ո՛հ, այս երաժշտութիւնն իրաւցնէ արիւնս վեր վար կ'ընէ:

Բարձրաձայն աղաղակ մը զինք ընդհատեց, հազարաւոր զլխարկներ օդ բարձրացան, չորս սևազգեստ պարոններ առաջին կառքին մէջ նստան:

— Ի՛նքն է, — գոչեց Քօրէթթի, և զմայլած մնաց:

Յետոյ մեղմ ձայնով ըսաւ. — Սուրբ Աստուածա-  
ծին, ինչպէս ճերմկիւ սկսեր է:

Երեքս ալ զլուսնիս բացինք. կառքը դանդաղօրէն  
առաջ կու գար բազմութեան մը մէջ՝ որ կը գոչէր ու  
զլիսարկ կը շարժէր: Ես ֆօրէթթի հօր նայեցայ: Կար-  
ձեա բոլորովին ուրիշ մարդ դարձեր էր, լուրջ, քիչ մը  
գունատ, և քառակուսի սեան կոթնած կեցած էր:

Կառքը մեր առջև հասաւ, սինէն քայլ մը հետու:  
— Կեցցէ, — գոչեցին բազմութիւն մը ձայներու:

— Կեցցէ, — գոչեց ֆօրէթթի, անոնցմէ վերջ:  
Թագաւորն իր երեսը նայեցաւ և վայրկեան մ'ակ-  
նարկն երեք մետաղներուն վրայ կեցուց:

Այն ժամանակ ֆօրէթթի ինքն իրմէ դուրս ելած՝ ճը-  
չեց. — քառասուն և իննին չորրորդ գումարտակը:

Թագաւորը, որ արդէն միւս կողմը դարձած էր, մեզի  
դարձաւ և ֆօրէթթիի աչքերուն մէջ սևեռելով՝ ձեռքը  
կառքէն դուրս կարկանեց:

Ֆօրէթթի քայլ մ'առաջ ցատկեց ու զայն սեղմեց:  
Կառքն անցաւ, ամրոխը ցրուեցաւ ու զմեզ բաժնեց, ֆօ-  
րէթթի հայրն աչքէ կորսնցուցինք: Բայց վայրկեան մը  
միայն: Իսկոյն զինք գտանք, հեքոտ, աչքերը խոնաւ,  
որ իր տղան կը կանչէր՝ ձեռքը վեր բարձրացուցած:  
Տղան իրեն մօտ վազեց, և նա գոչեց. — Հոս, պըզ-  
տիկս, քանի որ դեռ ձեռքս տաք է, — և ձեռքով ա-  
նոր երեսը շոյեց, ըսելով. — Ասիկայ թագաւորին մէկ  
զգուանքն է:

Եւ հոն իբրև երազկոտ մնաց, աչքերը հեռաւոր կառ-  
քին վրայ սևեռած, ժպտուն, ծխափողը ձեռքին մէջ,  
հետաքրքիրներու խումբէ մը շրջապատուած՝ որ իրեն  
կը նայէին: — 49ի գումարտակէն մէկն է, — կ'ըսէին:

Չինուոր մ'է որ թագաւորը կը ճաչնայ: — Թագաւո-  
րը զինք ճանչցաւ: — Ինքն էր որ ձեռքն անոր եր-  
կնցուց: — Խնդրագիր մը տուաւ թագաւորին. — ը-  
սաւ մէկն աւելի բարձրածայն:

— Ո՛չ, — պատասխանեց ֆօրէթթի, խստութեամբ  
ետև դառնալով. — ոչ մէկ խնդրագիր չտուի ես: Ու-  
րիշ բան մը պիտի տայի, եթէ ինձմէ ուզէր.... —

Ամէնքն իրեն նայեցան:

Եւ նա ըսաւ պարզապէս. — Արիւնս:

## ՄԱՆԿԱՆՅ ՊԱՏՊԱՐԱՆԸ

### 4. Երեքշաբթի

Մայրս ինչպէս խոստացեր էր, երէկ զիս ճաշէն վերջ  
ֆօրսոյ վալտօքքոյի մանկանց պատասխարանը տարաւ,  
Փրէքօսսի մէկ փոքրիկ քոյրը տեսչուհւոյն յանձնարա-  
րելու համար: Ես բնաւ տղոց պատասխարան մը տեսած  
չէի: Ո՛րչափ զիս զուարճացուցին: Աղջիկ, տղայ, խա-  
ռըն երկուհարիւր էին, այնպէս պզտիկ՝ որ մեր նախա-  
կըթարանիններն անոնց հետ բաղդատելով մարդիկ են:  
Ճիշդ այն պահուն հասանք՝ երբ կարգաւ սեղանատուն  
կը մտնէին, ուր երկու երկայն սեղաններ կային՝ բազ-  
մաթիւ կլոր ծակերով, որոնց իւրաքանչիւրին մէջ մէկ  
մէկ սև սկաւառակներ կային՝ բրինձով և լուբիայով լի,  
և քովն ալ անագազօծ դգալ մը: Մտնելու ժամանակ՝  
ոմանք յետոյքնուն վրայ կ'իյնային և հոն յատակին վը-

բայ կը մնային, մինչև որ վարժուհիները գային զիրենք վեր հանելու : Շատերը սկաւառակի մ'առջև կը կենային, և անիկայ իրենց տեղը կարծելով՝ խսկոյն դըզալ մը կը կլէին, երբ վարժուհի մը կու գար և կ'ըսէր. — Յառաջ, — և անոնք երեք կամ չորս քայլ յառաջ կ'երթային և ուրիշ դգալ մ'ալ, և դարձեալ յառաջ, մինչև որ ճիշտ իրենց տեղերը կը հասնէին՝ յետ կտոր բրդուճ գոգութեամբ կէս պնակ ապուր ուտելու : Վերջապէս, յետ հրմշտկելու և պոռալու. — Քալեցէք, շո՛ւտ քալեցէք. — զամէնքը կարգի դրին, և աղօթքը սկսան : Բայց ներքին կարգերուն այն բոլոր փոքրիկներն՝ որ աղօթելու համար կոնակնին սկաւառակներուն պիտի տային, զլուսնին ետև կը դարձնէին՝ նայելու համար՝ որ մէկն իրենց սկաւառակին չդպչի. և յետոյ այսպէս կ'աղօթէին, ձեռնամած և աչքերնին երկինք վերցուցած, սակայն սրտերնին խիւսին հետ : Յետոյ սկսան ուտել : Ո՛հ, ի՛նչ սիրուն տեսարան : Մէկն երկու դգալով կ'ուտէր, միւսը ձեռքերով կը լափէր. շատեր լուբիաները մի առ մի կը հանէին ու գրպաննին կը լեցնէին. ուրիշներ ընդհակառակն իրենց կրծկալներուն մէջ կը փաթթէին ու վրայէն կը զարնէին՝ տեսակ մը խիւս շինելու համար : Կային ալ որ չէին ուտեր՝ ճանձերուն թռչիլը տեսնելու համար, և ոմանք կը հազային ու բրնձի տարափ մը կը ցրուէին շուրջը : Հաւնոց մը կը թուէր : Բայց շնորհալի էր : Գեղեցիկ երևոյթ մը կ'ընծայէին փոքրիկ աղջկանց երկու շարքերը, ամէնուն մագերն ալ կարմիր, կանաչ, կապոյտ երիզներով գազաթնուն վրայ կապուած : Վարժուհի մը, մէկ գծի վրայ ութ աղջիկներու հարցուց. — Ո՛ր կը բուսնի բրինձը : — Ութը միասին բրնձալից բերաննին բացին և եր-



Աղօթք անուտեան



գելով պատասխանեցին. — Չուրին մէջ կը բուսնի: — Յետոյ վարժուհին հրամայեց. — Չեռքերնիդ դէպ ի վեր: — Եւ այն ժամանակ գեղեցիկ էր տեսնել փոքրիկ թևերուն դէպ ի վեր արձակուիլը, որոնք ամիսներ առաջ դեռ երիզապինդ էին, և թաթիկներուն շարժիլը՝ որոնք կարծես սպիտակ և վարդագոյն թիթեռներ էին:

Յետոյ զրօսանքի գնացին. բայց նախ ամէնքն ալ իրենց նախաճաշի կողովիկներն առին որ պատերէն կախուած էին: Պարտէզ ելան և ցրուեցան՝ դուրս հանելով իրենց պաշարը, հաց, եփած սալոր, պանրի կտորիկ մը, խաշած հաւկիթ մը, մանր խնձորներ, ափ մը խաշած սիսեռ, հաւու թև մը: Վայրկենի մը մէջ բոլոր պարտէզը փշրանքներով ծածկուեցաւ, իբրև թէ թռչնոց երամի մը կէր սփռուած ըլլար: Ամէն տարօրինակ կերպերով կ'ուտէն, ճագարներու, առնէտներու, կատուններու պէս կրծելով, լիզելով, ծծելով: Մանկիկ մ'ալ կար՝ որ կուրծքին վրայ հացի գաւազանիկ մը կռթընցուցած էր, զոր զղեարով մը կը թրջէր, իբրև թէ սուր մը փայլեցնէր: Շատ մ'աղջիկներ բուռներնուն մէջ տեսակ մը պանիրներ կը ճմլէին, որ մատներէն վար կը ծորէին կաթի պէս և թևերնուն մէջ կը վազէին, և իրենք բնաւ չէին նշմարեր: Շուներու պէս՝ խնձորներն ու հացի կտորներն ափռանուն մէջ բռնած՝ իրարու ետևէ կը վազէին: Երեք հատ տեսայ՝ որ շիւղով մը կարծր հաւկիթ մը կը փորէին՝ կարծելով մէջէն գանձեր գտնել, և կէսը գետին կը թափէին, յետոյ մեծ համբերութեամբ զայն փշուր փշուր կը ժողվէին, իբրև մարգարիտներ ըլլային: Եւ անոնց չորս կողմը՝ որ կարգէ դուրս ուտելիք մ'ունէին, կեցած էին ութ՝ տասն փոքրիկներ, որոնք գլուխին ծոած կողովին մէջ կը նայէին, ինչ-



Մայրական փայփայանք

պէս պիտի նայէին լուսնին ջրհորին մէջ: Քսան հատի չափ ալ կային՝ գիրուկ բարձրահասակի մը ըով, որ ձեռքին մէջ շաքարով լեցուն թուղթ մ'ունէր, բոլորն ալ անոր աղաչական ձևեր կ'ընէին՝ որ հրաման տար

հացերնին շաքարին մէջ թաթխելու, և ինք ոմանց գայն կու տար, և այլոց՝ շատ մ'աղաչանքէ վերջ՝ մատը կու տար ծծելու:

Այս պահուս մայրս պարտէզ եկած էր և մերթ մէկը մերթ միւսը կը փայփայէր: Շատերն անոր չորս կողմը կը ժողուէին, մանաւանդ թէ ետեւէն կ'երթային, դէմքերնին վեր՝ իբրև թէ երբորդ յարկը նայէին՝ համարյո մ'ուզելու համար, բերաննին բանալով գոցելով՝ իբրև թէ ծիծ ուզէին: Մին՝ իրեն խածուած նարնջի կտոր մը տուաւ, ուրիշ մը՝ հացի կեղևիկ մը, աղջնակ մը՝ տերև մը. ուրիշ աղջնակ մ'ալ մեծ լըջութեամբ՝ ցուցամատին ծայրը ցոյց տուաւ իրեն, ուր՝ ուշադրութեամբ նայելով՝ ամենափոքր ուռեցք մը կը տեսնուէր, որ նախորդ օրը մոմի մը բոցին դպչելէն եղած էր: Իր աչքին առջև կը դնէին՝ իբրև մեծ հրաշալիքներ, ամենամանր միջատներ, որ չեմ գիտեր ինչպէս զանոնք կը տեսնէին կամ կը ժողվէին, սնկենիի կէս խցաններ, շապկի կոճակիկներ, աղկրներու մէջէն կորզուած ծաղիկներ: Երիզապինդ զլխով աղեկ մը, որ անպատճառ կ'ուզէր որ իրեն մտիկ ընեն, վար իյնալու պատմութիւն մը թոթովեց, ուսկից բան մը չհասկցուեցաւ. — ուրիշ մ'ուզեց որ մայրս ծոխ և աղանջէն ըսաւ. Հայրս աւելներ կը շինէ: — Եւ այդ բոպէին հագարումէկ դժբաղդութիւններ կը պատահէին, որ վարժուհիները վազցնել կու տային, աղջնակներ՝ որ կու լային վասն զի չէին կրնար թաշկինակի մը հանգոյցը քակել. ուրիշներ՝ խնձորի երկու կուտերու համար եղունգներով ու ճիչերով կը կոռուէին. մանկիկ մը՝ որ աթոռակի մը վրայ երեսի վրայ ինկած էր և չկարենալով ոտքի ելնել՝ կը հեծկտար:

Մեկնելէ առաջ մայրս անոնցմէ երեք կամ չորս հատ գրկեց, և այն ատեն ամէն կողմէն վազեցին՝ հաւկթի դեղնուցով և նարնջի հիւթով ներկուած երեսներով՝ որ իրենք ալ գրկուին, և մէկն իր ձեռքը կը բռնէր, ուրիշ մը մատը՝ մատանին տեսնելու համար, միւսը ժամացոյցի շղթայիկը կը քաշէր, ուրիշ մը կ'ուզէր մազերէն բռնել: — Ուշ դի՛ր, — կ'ըսէին իրեն վարժուհիները, — որ բոլոր զգեստդ կ'աղտեղեն: — Բայց մայրս զգեստին հոգ չէր ընէր, և շարունակեց համբուրել զիրենք, և անոնք աւելի ևս իր ետեւէն կը կրպչէին, առաջինները թեւերնին երկարած՝ կար-



ծես իր վրայ մագլցելու համար, հեռաւորները՝ կը ջանային բազմութեան մէջէն առաջ գալ, և ամէնքը կը պոռային. — Երթան բարեաւ. Երթան բարեաւ. Երթան բարեաւ: — Վերջապէս յաջողեցաւ պարտիզէն փախչիլ: Եւ այն ժամանակ ամէնքը վազեցին դէմքերնին երկաթէ վանդակներուն մէջ դնելու՝ իր անցնիլը տեսնելու և թեկինին դուրս կարկառելու՝ զինք ողջունելու համար, նուիրելով դարձեալ հացի պատառներ, զղեարի կտորներ, և պանրի կեղևներ, և ամէնքը միասին պոռալով. — Երթան բարեաւ. Երթան բարեաւ: Երթան բարեաւ: Վաղը վերադարձի՛ր: Ուրիշ անգամ մ'ալ եկո՛ւր: — Մայրս փախչելով, դարձեալ մէկ ձեռքն

անոնց կարկառուն հարիւրաւոր թաթիկներուն վրայէն անցուց, իբրև թարմ վարդերու պսակի մը վրայէն և վերջապէս ազատ ճամբուն վրայ ելաւ, բոլոր աղտեղութեամբ և փշրանքներով ծածկուած, ճմրտթրուած ու կարմրած, մէկ ձեռքը ծաղիկներով լեցուն և աչքերն արցունքէն ուռած, գոհ, իբրև տօնախմբութենէ մ'ելած ըլլար: Եւ դեռ ներսէն փափոցը կը լսուէր, նման թռչնոց մեծ ճլվլոցին, որ կ'ըսէին. — Երթա՛ս բաւրեալ: Երթա՛ս բարեալ: Դարձեա՛լ եկուր, տիկի՛ն:

## ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

### 5. Զորերշարթի

Շարունակելով օղբ գեղեցիկ ընել, զմեզ սրահի մարմնամարզէն՝ գործիքներու մարմնամարզին անցուցին, պարտիզին մէջ: Կարրօնէն երէկ Տեսչին գրասենեակն էր երբ Նէլլիի մայրն եկաւ, այն խարտեաշ և սեազգեստ տիկինը, իր որդին մարմնամարզի նոր կրթանքներէն ազատ ընել տալու համար: Ամէն խօսք բերնէն կշռելով կը հանէր, և մէկ ձեռքը տղուն զլսուն վրայ դրած կը խօսէր: — Անիկայ չկրնար... — ըսաւ Տեսչին: Բայց Նէլլի շատ վշտացաւ գործիքներէն զինք ազատ ընելուն համար, որով իր վրայ ուրիշ նուաստացում մը կ'աւելնար... — Պիտի տեսնես, մայրի՛կ, — կ'ըսէր, — որ ուրիշներուն հաւասար պիտի ընեմ: — Մայրն իրեն կը նայէր, լուռ, սիրոյ և կա-

րեկցութեան դէմքով մը: Յետոյ զգուշութեամբ դիտողութիւն ըրաւ. — Ընկերներէդ կը վախնամ... — կ'ուզէի ըսել. — Կը վախնամ որ զքեզ ծաղրեն: — Սակայն Նէլլի պատասխանեց. — Հոգ չէ... և յետոյ կարրօնէն կայ: Ինծի կը բաւէ որ ինքը միայն չծիծաղի: — Եւ այն ժամանակ զինք թողուցին որ գայ: Կարիպալտիի հետ եղած այն ուսուցիչը, որուն վիզը վիրաւոր է, զմեզ գազաթնահայեաց ձողերուն տարաւ, որ շատ բարձր են, և պէտք էր մինչև ծայրը մագլցել և հորիզոնական առանցքին վրայ շիտակ կենալ: Տէրօսսի և Քօրէթթի երկու կապիկներու պէս վեր բարձրացան. փոքր Փրէքօսսին ալ աշխուժութեամբ ելաւ՝ թէև իր այն զգեստով՝ որ ծունկերուն արգելք կ'ըլլար, և զինք խնդացնելու համար՝ ելնելու ժամանակ իր միշտ գործածած խօսքը կը կրկնէին. — Ներէ՛, ներէ՛. — Սթարտի դժուարաւ շունչ կ'աննէր, հնդիկ արագադի մը պէս կարմրած, ակոսները կը սեղմէր որ կարծես կատղած շուն մ'էր. սակայն եթէ պայթելու ալ ըլլար՝ գազաթը պիտի հասնէր, և վերջապէս հասաւ. նմանապէս Նօպիս, և երբ ծայրը բարձրացաւ՝ կայսերական կեցուածք մ'առաւ. բայց վօթինին երկու անգամ սահեցաւ՝ չնայելով որ իր կապոյտ գծերով գեղեցիկ նոր զգեստը յատուկ մարմնամարզի համար շինուած էր: Աւելի դիտութեամբ ելնելու համար՝ ամէնք ալ ձեռքերնին յունական խէժով օծած էին, կօլօփոնիայով, ինչպէս կը կոչեն. և յայտնի է թէ անոր փոշին շահասէր կարօֆին հայթայթած էր ամենուն համար, մէկ ստակի ծախելով անոր եղջերաթուղթը՝ և բան մը վրան շահելով: Յետոյ կարգը կարրօնէին եկաւ, որ հացը ծամելով վեր ելաւ, իբրև ոչինչ բան մ'ըլլար, և կարծեմ թէ կարող

էր մեզմէ մէկն ալ ուսերուն վրայ առած վեր հանել, այնչափ յազմանդամ և ուժով է այն ցուլիլը: Յետոյ Կարբօնէն, ահա Նէլլին: Հազիւ իր այն երկար ու բարակ ձեռքերով ձողին փարիլը տեսան, շատերն սկսան խընդալ ու ծաղրել. բայց Կարբօնէ իր ձեռքը խաչածե կուրծքին վրայ դրաւ, և չորս կողմն այնպիսի արթուն ակնարկ մը նետեց, որ որոշ հասկցուց թէ շուտով իրենց դասը կու տար նոյն խկ ուսուցչին ներկայութեան, և ամէնքը վայրկենաբար խնդալին դաղրեցուցին: Նէլլի սկսաւ մագցիլ, դժուարութիւն կը քաշէր խեղճը, դէմքը կը կապոյտնար, ուժով կը շնչէր, քրտինքը ճակտէն վար կը թափէր: Ուսուցիչն ըսաւ. — Վար եկ՛ուր: — Բայց նա ո՛չ, ոյժ կու տար, յամառութեամբ կը շարունակէր, ես վայրկենէ վայրկեան իր կիսամեռ թաւալգորը իյնալուն կը սպասէի: Խեղճ Նէլլի: Ես կը մտածէի՝ որ եթէ իրեն պէս եղած ըլլայի ու մայրս զիս տեսնէր, ո՛րչափ պիտի վշտանար, խեղճ մայրս. և այս մտածելով, այնչափ գուլթս կը շարժէր Նէլլիին վրայ, որ ձեռքէս եկածը պիտի ընէի, առանց տեսնուելու, վարէն զինքը մղել կարենալու համար, որպէս զի յաջողի վեր ելնել: Այս պահուս Կարբօնէն, Տէրօսին, Քօրէթիին կ'ըսէին. — Հայպա, օ՛ն, վեր, Նէլլի, ո՛յժ, քիչ մնաց, քաջութիւն: — Եւ Նէլլի սաստիկ ոյժ մ'ալ տուաւ՝ ճչելով, և երկու թիզ տեղ մնաց առանցքին: — Ապրիս, — գոչեցին միւսները: — Քաջութիւն: Ոյժ մ'ալ տո՛ւր: — Եւ ահա Նէլլի առանցքին փարեցաւ: Ամէնքը ծափ զարկին: — Ապրիս, — ըսաւ ուսուցիչը, — բայց հիմա կը բաւէ. վար իջի՛ր: — Սակայն Նէլլի ուրիշներուն պէս ուզեց մինչև գագաթն ելնել, և քիչ մը տագնապէ վերջ յաջողեցաւ

արմուկները առանցքին վրայ դնել, յետոյ ծունկերը, ապա ոտքերը, ի վերջոյ վրան շիտակ կանգնեցաւ, և հեալով ու ժպտելով մեզի նայեցաւ: Մենք կրկին ծափահարեցինք, և այն ատեն նա դէպ ի ճամբան նայեցաւ: Ես ալ այն կողմը դարձայ, և բոյսերուն մէջէն որ պարտիզին երկաթէ վանդակները կը ծածկեն, իր մայրը տեսայ՝ որ մայթին վրայ կը շրջագայէր, առանց նայիլ համարձակելու: Նէլլի իջաւ և ամէնքն ուրախացան. յուզուած էր, վարդագոյն, աչքերը կը փայլէին, այլ ևս ինք չէր: Յետոյ, դուրս ելնելու ատեն, երբ մայրն իրեն ընդառաջ ելաւ և քիչ մ'անհանգիստ իրեն հարցուց զինք գրկելով. — Լաւ ուրեմն, որդեակ իմ, ի՞նչպէս գնաց, ի՞նչպէս գնաց, — բոլոր ընկերները, միտքերան պատասխանեցին. — Լաւ ըրաւ: — Մեզի հաւասար վեր ելաւ: — Ուժով է, գիտես: — Աշխո՛յժ է: — Ի՞նչ որ ուրիշները կ'ընեն՝ ինքն ալ կ'ընէ: Տեսնելու բան էր այն ժամանակ այն տիկնոջ ուրախութիւնը: Ուզեց մեզի շնորհակալ ըլլալ և չկրցաւ, երեք կամ չորս հոգոյ ձեռք սեղմեց, Կարբօնէն շոյեց, տղան առաւ տարաւ, և տեսանք որ բաւական տեղ մը աճապարանքով քալեցին, իրենց մէջ շարժուածներով խօսելով, երկուքն ալ գոհ, որուն նման ոչ ոք զիրենք տեսած էր:

## ՀՕՐՍ ՈՒՍՈՒՅԻՉԸ

11. Երեքշարթի

Ինչ գեղեցիկ պտոյտ ըրի երէկ հօրս հետ: Ահա ինչպէս: Երէկ չէ առջի օր, ճաշի ժամանակ օրագիրը կարգաւորով, հայրս յանկարծակի բացագանչութիւն մ'ըրաւ: Յետոյ ըսաւ. — Եւ ես քսան տարիէ ի վեր մեռած կը կարծէի զինք: Գիտէ՞ք, թէ նախակրթարանի ուսուցիչս, Վինչէնցոյ Գրօզէթթի, որ ութսուն և չորս տարեկան է, դեռ կ'ապրի: Կը տեսնեմ հո՞ս՝ որ Նախարարն իր վաթսուն տարուան ուսուցչութեան համար արժանիքի մետալ տուած է իրեն: Վաթսուն տարի, կը հասկնամք: Եւ միայն երկու տարի է որ դասախօսութիւնը ձգեր է: Խեղճ Գրօզէթթի: Ասկից մինչև Քօնստովէ, Քիէրինբերու ամարանոցին՝ մեր հին պարտիզպանուհիին երկիրը, մէկ ժամուան ճամբայ է: — Եւ աւելցուց. — Հենրիկո՞ս, զինք տեսնելու պիտի երթանք: — Եւ բոլոր իրիկունը միայն անոր վրայ խօսեցաւ: Իր նախակրթարանի ուսուցչին անունը՝ իր մանկութեան ժամանակի, իր առաջին ընկերներուն, իր ուղորմածնոցի մօր հազար ու մէկ յիշատակները միտքը կը բերէր: — Գրօզէթթի՛, — կը բացագանչէր: — Քառասուն տարեկան էր երբ իր հետ էի: Կարծես դեռ զինք կը տեսնեմ: Արդէն քիչ մը ծոած փոքր մարդ մ'էր, պայծառ աչքերով, միշտ անօրուս դէմքով: Խիստ, բայց անուշ կերպերով, որ հօր մը պէս զմեզ կը սիրէր

և բնաւ բան մը չէր ներեր: Գիւղացութենէ առաջ եկեր էր՝ սաստիկ ուսմամբ և չքաւորութիւն քաշելով: Համեստ մարդ մը: Մայրս իրեն յարեալ էր, իսկ հայրս բարեկամի մը պէս կը վարուէր հետը: Ինչպէս եղեր է՝ որ թօրինոյէն Քօնստովէ գացեր է: Այլ ևս զիս պիտի չճանչնայ անշուշտ: — Հոգ չէ, ես զինք պիտի ճանչնամ: Քառասուն և չորս տարինէր սահեք են: Քառասուն և չորս տարինէր, Հենրիկո՞ս, վաղը պիտի երթանք ու զինք տեսնենք: —

Եւ երէկ առտու ժամն իննին Սուգայի երկաթուղոյ կայարանն էինք: Ես կ'ուզէի որ կարծեն ալ զայբայց չկրցաւ՝ վասն զի մայրը հիւանդ է: Գարնան գեղեցիկ օր մ'էր: Շոգեկառքը կանաչ մարգագետիններու և ծաղկած մացառներու մէջէն կը սուրար և բուրումնաւէտ օդ մը կը զգացուէր: Հայրս գոհ էր, և ստէպ մէկ թեւ վիզս կ'անցընէր, և հետս բարեկամի մը պէս կը խօսէր՝ դաշտը դիտելով: — Խեղճ Գրօզէթթի, — կ'ըսէր: — Հօրմէս վերջ ինք եղաւ առաջինը՝ որ զիս սիրեց ու ինձի բարիք ըրաւ: Իր քանի մը բարի խորհուրդներն ու նոյն իսկ յանդիմանութիւններն երբեք պիտի չմոռնամ, որոնցմով սաստիկ յուզուած տուն կը դառնայի: Կարճ ու կոշտ ձեռքեր ունէր: Դեռ կը տեսնեմ զինք՝ երբ դպրոց կը մտնէր, զաւագանն անկիւն մը կը դնէր և զգեստը հանդերձակալէն կը կախէր, միշտ մի և նոյն շարժուձևով: Եւ ամէն օր մի և նոյն տրամադրութեան մէջ կը գտնուէր, միշտ խղճմտանքաւոր, միշտ բարեմիտ և ուշադիր, իբրև թէ ամէն օր առաջին անգամ դասախօսութիւն սկսէր: Զինք կը յիշեմ իբրև թէ հիմա լսէի անոր ձայնը՝ երբ ինձ կը նայէր. — Պօթթիինի՛, էհ Պօթթիինի՛: Այն գրչի վրայի ցուցամասն

ու միջնամատը: Շատ փոխուած պիտի ըլլայ՝ քառասուն և չորս տարի վերջ: —

Հազիւ Քոնտովէ հասանք, գացինք Քիէրի մեր հին պարտիզպանուհին փնտռելու, սր նեղ փողոցի մը մէջ փոքր կրպակ մ'ունի: Զինք իր տղոց հետ գտանք, մեզի շատ ուրախութիւն ցոյց տուաւ, ամուսնոյն վրայ տեղեկութիւններ հաղորդեց, թէ Յունաստանէն պիտի վերադառնայ, ուր երեք տարիէ ի վեր կ'աշխատի, և իր առաջին դստեր վրայ՝ թէ թօրինոյի մէջ խուլ-համերց Ուսուսնարանին մէջ է: Յետոյ հանրաձայնօթ ուսուցչին երթալու ճամբան սովորեցուց մեզի:

Դուրս ելանք գեղէն, և ծագկած մացաններով եզերուած գառիվեր նրբուղի մը բռնեցինք:

Հայրս այլ ևս չէր խօսեր, կարծես բոլորովին իր յիշատակներուն մէջ ընկղմած էր, և մերթ կը ժպտէր ու յետոյ գլուխը կը շարժէր:

Յանկարծ կեցաւ, և ըսաւ. — Ահաւասիկ: Կ'երդնում որ ինքն է:

Կարճահասակ ծերունի մը՝ գաւազանի մ'օգնութեամբ, լայն գլխարկով, սպիտակ մօրուքով, նրբուղիէն դէպ ի մեզ կ'իջնէր, ոտքերը կը քսքստէր և ձեռքերը կը դողային:

— Ինքն է, — կրկնեց հայրս, քայլերն երագելով: Երբ մօտեցանք, կանգ առինք: Ծերունին ալ կեցաւ և հօրս նայեցաւ: Դեռ երեսը թարմ էր, և աչքերը պայծառ ու վառվռուն:

— Դուք էք, — հարցուց հայրս, գլխարկը հանելով, — Վինչէնցոյ Քրօզէթի ուսուցիչը:

Ծերունին ալ գլխարկը բացաւ և պատասխանեց. — Ես եմ, — քիչ մը դողդացող՝ բայց լեցուն ձայնով:

— Շատ լաւ, — ըսաւ հայրս անոր մէկ ձեռքը բռնելով, — թոյլ տուէք, որ ձեր մէկ հին աշակերտը ձեռքերնիդ սեղմէ և որպիսութիւննիդ հարցնէ: Ես թօրինոյն եկայ զձեզ տեսնելու համար:

Ծերունին, ապշած, իրեն նայեցաւ: Յետոյ ըսաւ. — Չափազանց կը պատուէք զիս... չեմ գիտեր...: Ե՛րբ իմ աշակերտս, կը ներէք: Անուննի՛դ, խնդրեմ:

Հայրս իր անունն ըսաւ, Ալպէրթոյ Պօթթինի, և տարին՝ յորում իր ըով դպրոց գնացեր էր, և ո՛ւր. և աւելցուց, — Բնական է, դուք զիս պիտի չյիշէք: Բայց ես զձեզ շատ լաւ կը յիշեմ:

Ուսուցիչը գլուխը ծռեց ու գետին նայեցաւ՝ մտածելով, և երկու կամ երեք անգամ հօրս անունը մըրմնջեց. որ այս պահուս, ժպտուն ու սևեռեալ աչքով զինք կը դիտէր:

Յանկարծ ծերունին աչքերը բաց՝ գլուխը վեր առաւ, ու ըսաւ դանդաղ կերպով. — Ալպէրթոյ Պօթթինի, ճարտարագետ Պօթթինի որդի՛ն, այն՝ որ Քօնստալթայի հրապարակը կը կենար:

— Այն, — պատասխանեց հայրս, ձեռքերը կարկանդակով:

— Այն ժամանակ... — ըսաւ ծերունին, — կը ներէք ինձի, սիրելի՛ պարոն, կը ներէք ինձի, — և յառաջ գալով հօրս փաթթուեցաւ. իր սպիտակ գլուխը հազիւ հօրս ուսերը կը հասնէր: Հայրս այտն անոր ճակտին կցեց:

— Հաճեցէք ինձի հետ զալու, — ըսաւ ուսուցիչը:

Եւ առանց խօսելու, դարձաւ ու իր տան ճամբան բռնեց: Քիչ վայրկենէն՝ փոքր տան մ'առջև գտնուած կալի մէջ հասանք, որուն երկու դռներէն միուն շուրջի պատը ձերմկցուած էր:

Ուսուցիչը, երկրորդ դուռը բացաւ և զմեզ սենեակ մը տարաւ: Չորս սպիտակ պատեր էին. անկեան մը մէջ մահճակալով անկողին մը՝ ձերմակ ու կապոյտ քառակուսիներով վերմակով մը, ուրիշ անկիւն մը՝ ստուրիկ մը՝ փոքր գրատունով մը. չորս աթոռակներ, և մէկ պատին վրայ գամուած հին աշխարհացոյց քարտէս մը. խնձորի անուշ հոտ մը կը բուրէր:

Երեքս ալ նստանք: Հայրս և ուսուցիչը քանի մը վայրկեան լռութեամբ իրարու նայեցան:

— Պօթթինի՛, — բացագանչեց յետոյ ուսուցիչը, աղիւսաշէն յատակին վրայ սեեռելով աչքերը, ուր աւրեակը ճատրակարան մը կը ձևացնէր: — Ո՛հ, շատ լաւ կը յիշեմ: Չեր տիկին մայրը շատ ազնիւ տիկին մ'էր: Դուք առաջին տարին բաւական ատեն պատուհանի ձախակողմեան առաջին զրասեղանին վրայ կեցար: Տեսէ՛ք թէ ի՞նչպէս կը յիշեմ: Դեռ գանգրահեր գլուխնիդ միտքս է: — Յետոյ քիչ մը մտածութեան մէջ ընկզմեցաւ: — Շատ վառվռուն տղայ մ'էիք, է՛հ: Երկրորդ տարին քրոշի հիւանդութիւնն ունեցար: Կը յիշեմ երբ զձեզ նիհարցած և ցփախի մը մէջ պատած դպրոց բերին: Քառասուն տարիներ սահեցան, այնպէս չէ՛: Շատ բարի էք որ ձեր խեղճ ուսուցիչը յիշեր էք: Կրտէ՛ք, քանի մը տարի առաջ ուրիշներ ալ եկան հո՞ս զիս գտնելու, իմ հին աշակերտներէս. գնդապետ մը, քահանաներ, զանազան պարոններ: — Հարցուց հօրս թէ ի՞նչ պաշտօն ունէր: Յետոյ ըսաւ. — Ուրախ եմ, ի սրտէ ուրախ եմ: Շնորհակալ եմ: Սակայն բաւական ժամանակ էր որ այլ ևս մարդ չէի տեսներ: Եւ շատ կը վախնամ որ դո՛ւք, սիրելի՛ պարոն, վերջինն ըլլար:

— Ի՛նչ կ'ըսէք, — բացագանչեց հայրս: — Առողջութիւննիդ լաւ է և դեռ կայտառ էք: Այդպէս մի՛ ըսէք:

— Ո՛հ, ո՛չ, — պատասխանեց ուսուցիչը. — կը տեսնէ՞ք այս դողը, — և ձեռքերը ցոյց տուաւ: — Ստիկայ գէշ նշան է: Երեք տարի առաջ վրաս եկաւ երբ դեռ դասախօսութիւն կ'ընէի: Ի սկզբան բանի տեղ չղրի. կարծեցի թէ կ'անցնի: Բայց ընդհակառակն, մնաց, և հետզհետէ աւելցաւ: Օր մ'եկաւ որ այլ ևս չէի կրնար գրել: Ո՛հ, այն օրը, այն առաջին անգամն որ աշակերտներէս միոյն տետրակը թանաքով արատաւրեցի, ինծի համար սրտի հարուած մ'եղաւ, սիրելի՛ պարոն: Քիչ մ'ատեն ալ դեռ յառաջ քաշքշեցի. բայց յետոյ այլ ևս չկրցայ: Վաթսուն տարի ուսուցչութենէս վերջ՝ ստիպուեցայ մնաս բարեաւ ըսել դպրոցին, աշակերտաց և աշխատութեան: Եւ դառն եղաւ, գիտէ՛ք, դառն եղաւ: Վերջին դասախօսութիւնը գոր ըրի՛ ամէնքն ինծի դէպ ի տուն ընկերեցին և ուրախութիւն ըրին. բայց ես տխուր էի, կը հասկնայի թէ իմ կեանքս լինցած էր: Արդէն նախորդ տարին կինս ու միակ որդիս կորուսի: Երկու գեղջուկ թոռներուս հետ մնացի: Այժմ քանի մը հարիւր ֆրանք հանգստաթոշակով կ'ապրիմ: Ուրիշ գործ բնաւ չեմ ըներ. կարծես օրերն իրիկուն չեն ըլլար: Տեսէ՛ք, իմ միակ զբաղանքս՝ իմ դպրոցական հին գրքերս, դպրոցական օրագիրներու հաւաքածոյներս, և ինծի նուէր տրուած գրքերը խառնելու է: Ահա հո՞ն, — ըսաւ մատնանշելով փոքր գրատունը. — հո՞ն են իմ յիշատակներս, բոլոր իմ անցեալս...: Աշխարհի վրայ այլ ևս ուրիշ բան չունիմ:

Յետոյ յանկարծակի զուարթ շեշտով. — Ես կ'ու-

զեմ ձեզի անակընկալ մ'ընել, սիրելի՛ պարոն Պօթթիհի: —

Ոտքի ելաւ, և գրասեղանին մօտենալով, երկայն գզրոց մը բացաւ, որուն մէջ շատ մը մանր ծրարներ կային, ամէնքն ալ երիզով մը կապուած, և իւրաքանչիւրին վրայ չորս թուանշաններով թուական մը գրուած էր: Քիչ մը փնտռելէ վերջ, հատ մը բացաւ, շատ թըղթեր խառնեց, զեղնած թերթ մը հանեց և հօրս առջև բացաւ: Քառասուն տարի առաջ իր դպրոցի մէկ աշխատութիւնն էր: Անոր վրայ գրուած էր: Արկերրոյ Պօրթիհի, Ողղագրութիւն, 3 ասորի 1838: — Հայրս խկոյն ճանչցաւ իր տղայութեան հաստ զեղագրութիւնը, և սկսաւ ծիծաղելով կարդալ: Բայց յանկարծ աչքերը թրջեցան: Ես ոտք ելայ՝ հարցնելով թէ ի՞նչ ունէր:

Նա մէկ թերթ մէջքս փաթթելով և իր կողին սեղմելով, ըսաւ ինծի. — Այս թերթը նայէ: Կը տեսնես: Ասոնք խեղճ մօրս սրբագրութիւններն են: Նա միշտ իմ էր և թի գրերուս վրայէն կ'անցնէր՝ կ'ուժովցնէր: Եւ վերջին տողերը բոլոր իրենն են: Իմ զեղագրութիւնս սովորած էր և երբ ես յոգնած էի և քուն ունէի, իմ տեղս աշխատութիւնը կ'աւարտէր: Ո՛վ սրբուհի մայրս:

Ու էջը համբուրեց:

— Ահաւասիկ, — ըսաւ ուսուցիչը, միւս ծրարները ցոյց տալով, — իմ յիշատակներս: Ամէն տարի իմ աշակերտներէս իւրաքանչիւրին աշխատութիւն մը մէկդի դրած եմ, և բոլոր հոս կարգի դրուած ու նշանակուած են: Երբեմն այսպէս կը խառնեմ, և տող մը ասկից տող մ'անկից կը կարդամ, և մտքիս մէջ հազար ու մէկ բաներ կը նորոգուին, կարծես կրկին անցելոյն մէջ

կ'ապրիմ: Ի՞նչ ժամանակներ անցան, սիրելի՛ պարոն: Աչքերս կը փակեմ, և զէմը զէմքի վրայ կը տեսնեմ, դաս դասի ետև, հարիւրաւոր տղաք, որ ո՛վ գիտէ քանիններ արդէն մեռեր են: Շատերը կը յիշեմ: Ամենէն աւելի բարիներն ու ամենէն աւելի չարերը կը յիշեմ, անոնք՝ որ ինծի շատ մխիթարութիւն պատճառեցին, և անոնք՝ որ ինծի շատ տխուր վայրկեաններ անցունել տուին. վասն զի օձեր ալ ունեցեր եմ այսչափ բազմութեան մէջ: Սակայն այժմ, կ'ըմբռնէք դուք, այնպէս եմ իբրև թէ արդէն միւս աշխարհն ըլլայի, և հաւասարապէս գամէնքը կը սիրեմ:

Նստաւ և մէկ ձեռքս իրեններուն մէջ առաւ:

— Չէք յիշեր բնաւ, — հարցուց հայրս ժպտելով, — իմ ո՛ր և է մէկ ստահակութիւնս:

— Չեր մասին, պարոն, — պատասխանեց ձերուսին, ինք ևս ծիծաղելով: — Ո՛չ, ներկայապէս: Բայց ասիկայ ըսել չէ թէ բնաւ բան մ'ըրած չէք: Սակայն դուք խոհեմ էիք, ձեր տարիքին համեմատութեամբ լուրջ էիք: Չեր տիկին մօրը վրանիդ ունեցած մեծ սէրը կը յիշեմ...: Բայց շատ բարի, շատ ազնիւ էր. կու գար զիս գտնելու: Ի՞նչպէս կրցաք ձեր զբաղումները թողուլ՝ ձերունի ուսուցչի մը քով գալու համար:

— Լսեցէք, պարոն Քրօզէթթի, — պատասխանեց հայրս եռանդեամբ: — Կը յիշեմ երբ խեղճ մայրս զիս առաջին անգամ ձեր դպրոցը բերաւ: Առաջին անգամն էր որ ինծմէ երկու ժամու չափ պիտի բաժնուէր, ու զիս առնէն դուրս պիտի թողուր՝ հօրս ձեռքերէն ուրիշ ձեռքերու մէջ. վերջապէս անձանթ անձի մը ձեռքերուն մէջ: Այն բարի էակին համար՝ իմ դպրոց մտնելս այնպէս էր իբրև աշխարհ մտնէի, առաջինը՝ կարևոր



ու ցաւալի կարգ մը բաժանումներուն. ընկերութիւնն էր որ առաջին անգամ որդին իրմէ կը յափշտակէր, այլ ևս զայն իրեն չվերադարձնելու համար: Յուզուած էր, նմանապէս ես: Ձիս ձեզի յանձնեց դողդաղացող դարձեալ զիս ողջունեց՝ աչքերն արցունքով լի: Եւ ճիշտ այն կէտին դուք ձեռքի շարժում մ'ըրէք միւս ձեռքերնիդ ձեր կուրծքին վրայ գնելով, իրբև անոր ըսել ուզէիք. — Տիկին, վստահ եղիք վրաս: — Ուստի, ձեր այն շարժումներ, այն ակնարկը՝ ուսկից նշմարեցի թէ մօրս ամէն զգացում, ամէն մտածութիւն ըմբռնած էիք, այն ակնարկը՝ որ ըսել կ'ուզէր. — Քանջ եղիր, — այն շարժումներ՝ համեստ խոստում մ'էր պաշտպանութեան, սիրոյ, և ներողամտութեան, — ես բնաւ չեմ մոռցած զայն, ընդ միշտ սրտիս մէջ քանդակուեր է. և այն յիշատակն է որ զիս Թօրինոյէն ճամբայ հանել տուաւ: Եւ անհա հո՛ս եկայ բառասուն և չորս տարիներ վերջ՝ ձեզի ըսելու. Շնորհակալ եմ, սիրելի՛ ուսուցիչս:

Ուսուցիչը չպատասխանեց. ձեռքով մազերս կը շոյէր, և ձեռքն այնչափ կը դողար՝ որ գլխէս՝ ճակտիս վրայ կը ցատկէր, ճակտէս՝ ուսիս վրայ:

Այս պահուս հայրս կը դիտէր այն մերկ որմերը, խեղճ անկողինը, կտոր մը հացն ու իւղամանն որ պատուհանին վրայ էին, և կարծես կ'ուզէր ըսել. — Խեղճ ուսուցիչ, վաթսուն տարի աշխատութենէ վերջ, այս է բոլոր վարձատրութիւնդ:

Բայց բարի ձերունին գոհ էր և սկսաւ դարձեալ եռանդով մեր ընտանեաց վրայ, այն ժամանակի ուրիշ ուսուցիչներուն, և հօրս դպրոցական ընկերաց վրայ

խօսիլ. և հայրս անոնցմէ մաս մը կը յիշէր, մաս մը ոչ, և փոխադարձ իրարու ասոր կամ անոր վրայ տեղեկութիւններ կը հաղորդէին, երբ հայրս խօսակցութիւնն ընդհատեց՝ ուսուցչէն խնդրելու համար որ գիւղ իջնէ մեզի հետ ճաշելու: Նա սրտի զեղումով պատասխանեց, — Շնորհակալ եմ, շնորհակալ եմ. — բայց անորոշ կը տեսնուէր: Հայրս անոր երկու ձեռքերէն բռնելով կրկին աղաչեց. — Բայց ի՞նչպէս պիտի կարենամ, — ըսաւ ուսուցիչը, — այս խեղճ ձեռքերովս ուսել՝ որ այսպէս կը դողդաղան: Ուրիշներուն համար ալ նեղութիւն մ'է: — Մենք ձեզի կ'օգնենք, պարոն՝ ուսուցիչ, — ըսաւ հայրս: Եւ այն ժամանակ ընդունեցաւ, գլուխն երերցնելով ու ժպտելով:

— Գեղեցիկ օր մ'է ասիկայ, — ըսաւ դուրը դրսէն գոցելով, — շատ գեղեցիկ, սիրելի՛ պարոն Պօթթինի: Վստահ եղի՛ր որ ասիկայ մինչև կեանքիս վերջը պիտի յիշեմ:

Հայրս թե՛ն ուսուցչին տուաւ, սա ալ իմ ձեռքէս բռնած՝ նեղ ճամբէն վար իջանք: Երկու բոկոտն փոքր աղջիկներու հանդիպեցանք՝ որ կովերը կը տանէին, և տղու մը՝ որ վազելով անցաւ՝ կռնակին վրայ խոշոր բեռ մը յարդ շալկած: Ուսուցիչը մեզի ըսաւ՝ թէ դպրոցական երկու աշակերտուհիներ և երկրորդ դասարանի աշակերտ մ'էին, որոնք առտուն կենդանիներն արածելու կը տանէին և արտերու մէջ բոկոտն կ'աշխատէին, իսկ երեկոյ կօշիկներն հագուելով՝ դպրոց կ'երթային: Գրեթէ կէս օր էր: Ուրիշ մարդու չհանդիպեցանք: Քիչ վայրկենէն պանդոկ հասանք, մեծ սեղանի մ'առջև նստանք, մէջ տեղ ուսուցիչը գնելով, և իսկոյն սկսանք ճաշել: Պանդոկը վանքի մը պէս լուռ էր:

Ուսուցիչը շատ զուարթ էր, և յուզումն իր դողը կ'ա-  
 ձեցնէր. գրեթէ չէր կրնար ուտել: Սակայն հայրս իրեն  
 միտը կը կտրէր, հացը կը փշրէր և սնակին մէջ աղ  
 կը դնէր: Խմելու համար երկու ձեռքով կը բռնէր գա-  
 ւաթը, և դարձեալ զայն ակռաներուն կը զարնէր:  
 Բայց շարունակ ու եռանդով կը խօսէր իր ընթերցման  
 գրքերուն վրայ՝ երբ երիտասարդ էր, այն ատենի դա-  
 սացուցակներու մասին, մեծաւորներու իրեն ըրած գո-  
 վեստներուն և վերջին տարիներուն կանոնադրութեանց  
 վրայ, միշտ մի և նոյն զուարթ դէմքով՝ առաջինէն քիչ  
 մ'աւելի կարմիր, և ուրախ ձայնով մ'ու երիտասարդի  
 մը ժպտով: Եւ հայրս անոր կը նայէր ու նայէր մի և  
 նոյն արտայայտութեամբ՝ որով երբեմն ինծի կը նայի  
 տունը, ինչպէս կ'անդրադառնամ, երբ ինքն իրեն կը  
 մտածէ ու կը ժպտի՝ երեսը մէկդի դարձուցած: Ու-  
 սուցիչը գինին կուրծքին վրայ թափեց. հայրս ելաւ ու  
 անձեռոցով մաքրեց: — Բայց ո՛չ, պարո՛ն, չե՛մ թո-  
 դուր, — ըսաւ նա, ու կը խնդար: Լատիներէն բառեր  
 կ'ըսէր: Եւ ի վերջոյ գաւաթը վեր բարձրացուց որ  
 ձեռքին մէջ կը պարէր, և ամենալուրջ կերպով ըսաւ.  
 — Ձեր կենաց, ուրեմն, սիրելի պարոն ճարտարապետ,  
 ձեր որդւոց ու ձեր բարի մօրը յիշատակին: — Ձեր  
 կենդանութեան, բարի ուսուցիչս, — պատասխանեց  
 հայրս, անոր ձեռքը սեղմելով: Եւ սենեկին խորը պան-  
 դոկապետն և ուրիշներ կային որ կը նայէին, և այն-  
 պիտի կերպով մը կը ժպտէին՝ որ գոհ կը տեսնուէին  
 այն ուրախութեան վրայ՝ որ իրենց գիւղի ուսուցչին  
 կ'ըլլար:

Ժամն երկուքն անցած դուրս ելանք և ուսուցիչն  
 ուզեց մեզի մինչև կայարան ընկերել: Հայրս դարձեալ

թե՛ն անոր տուաւ, այն ալ իմ ձեռքս բռնեց, ես իր  
 գաւազանն առի: Մարդիկ կեցած կը նայէին, վասն զի  
 ամէնքն ալ զինք կը ճանչնային. ոմանք ալ կ'ողջու-  
 նէին: Երբ ճամբուն կէտ մը հասանք՝ պատուհանէ մը  
 բազմաթիւ տղոց ձայներ լսեցինք, որ միասին հեզելով  
 կը կարդային: Ծերունին կանգ առաւ և կարծես տըխ-  
 րեցաւ:

— Սհաւասիկ, սիրելի՛ պարոն Պօթթինի, — ըսաւ,  
 — ասիկայ է որ սրտիս ցաւ կը պատճառէ: Լսել տղոց  
 ձայները դպրոցին մէջ՝ և հոն չըլլալ ա՛յլ ևս, մտածել՝  
 թէ հո՛ն ուրիշ մը կայ: Վաթսուն տարի այս երաժշտու-  
 թիւնը լսեցի և սիրտս կապած էի...: Հիմա առանց  
 ընտանիքի եմ: Ա՛յլ ևս զաւակներ չունիմ:

— Ո՛չ, ուսուցի՛չս, — ըսաւ իրեն հայրս, դարձեալ  
 քաշելով, — դուք դեռ շատ որդիներ ունիք, բոլոր աշ-  
 խարհ ցրուած, որ զձեզ կը յիշեն, ինչպէս ես զձեզ  
 միշտ յիշեր եմ:

— Ո՛չ, ո՛չ, — պատասխանեց ուսուցիչը՝ տխրու-  
 թեամբ. — ա՛յլ ևս ոչ դպրոց ունիմ և ոչ որդիներ:  
 Եւ առանց որդւոց՝ երկար պիտի չկարենամ ապրիլ: Իմ  
 ժամս շուտով պիտի հնչէ:

— Ա՛յդ մի՛ ըսէք, ուսուցի՛չ, այդպէս մի՛ մտածէք,  
 — ըսաւ հայրս: — Յամենայն դէպս, դուք այնչափ  
 բարիք ըրած էք: Կեանքերնիդ շատ արդիւնաւոր ան-  
 ցուցած էք:

Ծերունի ուսուցիչը վայրկեան մը սպիտակ գլուխը  
 հօրս ուսին վրայ ծոցեց, և իմ ձեռքս սեղմեց:

Կայարան մտած էինք: Ծոցեկաւորը մեկնելու վրայ էր:

— Մնա՛ք բարեա՛ւ, ուսուցի՛չ, — ըսաւ հայրս, ա-  
 նոր երկու այտերը համբուրելով:

— Երթա՛ք բարեաւ, շնորհակալ եմ, երթա՛ք բարեաւ,  
— պատասխանեց ուսուցիչը, իր զոզոջուն ձեռքերով  
հօրս մէկ ձեռքը բռնելով և սրտին վրայ սեղմելով:

Յետոյ ես ալ զայն համբուրեցի, և զգացի որ երեսը  
թրջած էր: Հայրս զիս կառուղւոյն մէջ հրեց, և ինք  
եղնելու պահուն՝ ուսուցչին ձեռքէն այն կոշտ գաւա-  
զանն առաւ և իր անուան նշանատառով արծաթակոթ  
գեղեցիկ գաւազանն անոր տուաւ, ըսելով: — Առէ՛ք,  
իմ մէկ յիշատակս թող ըլլայ:

Ծերունին ջանաց ետ տալ ու իրենն առնել. բայց  
հայրս արդէն ներս մտեր ու դռնակը փակեր էր:

— Մնա՛ք բարեաւ, բարի՛ ուսուցիչս:

— Երթա՛ք բարեաւ, որդեա՛կ, — ըսաւ ուսուցիչը,  
մինչդեռ շոգեկառքը կը շարժէր, — և Աստուած զձեզ  
օրհնէ այն մխիթարութեան համար զոր խեղճ ծերունւոյ  
մը պատճառեցիք:

— Յտեսութիւն, — գոչեց հայրս, յուզուած շեշ-  
տով:

Սակայն ուսուցիչը գլուխը ցնցեց իրրև ըսէր. —  
Այլ ևս պիտի չտեսնուինք:

— Այո՛, այո՛, — կրկնեց հայրս, — ցտեսութիւն:  
Եւ նա զոզոջուն ձեռքերն երկինք վերցնելով պա-  
տասխանեց, — Հո՛ն, վերը:

Եւ այնպէս ձեռքերը վեր՝ մեր աչքէն աներևոյթ ե-  
ղաւ:

## ԱՊՐԻԼՈՒՄ

20. Հինգշաբթի

Ո՛վ կը կարծէր, երբ այնպէս ուրախ այն գեղեցիկ  
շրջագայութենէն կը դառնայի, թէ տասն օր այլ ևս  
ոչ դաշտ և ո՛չ երկինք պիտի տեսնեմ: Ծանր հիւան-  
դացայ, մեռնելու աստիճան: Լսեցի մօրս հեծեծանքը,  
տեսայ որ հայրս գունատեր էր, և յառած ինձի կը  
նայէր, և Սիլվիա քոյրս ու եղբայրս՝ որ ցած ձայնով  
կը խօսակցէին, և ակնոցաւոր բժիշկն որ ամէն վայր-  
կեան հո՛ն էր, և ինձի բաներ մը կ'ըսէր զոր ես չէի  
հասկնար: Իրօք, այնպիսի կէտի մը հասայ՝ որ քիչ  
մնաց ամենուն մնացէ՛ք բարեաւ ըսէի: Ո՛հ, խեղճ մայրս:  
Առնուազն երեք կամ չորս օրեր անցան և գրեթէ ոչինչ  
չեմ յիշեր. իրրև թէ շփոթ ու ազօտ երազ մը տեսած  
ըլլամ: Կարծես անկողնոյս քով նախակրթարանի բարի  
վարժուհիս տեսայ, որ կը ջանար թաշկինակով հազը  
բռնել՝ զիս անհամբարտ չընելու համար. այսպէս խառ-  
նիխուռն կը յիշեմ ուսուցիչս՝ որ ծոցեցաւ զիս համբու-  
րելու և մօրուքով քիչ մ'երեսս կծեց. և տեսայ որ  
մշուշի մը պէս անցան՝ ֆրօսսիի կարմիր գլուխը, Տէ-  
րօսսիի գորշ գանգուրները, գալապրիացին՝ սև հագուած,  
և Կարրօնէն՝ որ ինձի տերեւաւոր մանտարին մը բերաւ  
և խկոյն փախաւ գնաց, վասն զի իր մայրը հիւանդ  
էր: Յետոյ իրրև երկար քունէ մ'արթնցայ, և հասկցայ  
որ աւելի լաւ էի՝ տեսնելով հայրս ու մայրս որ կը

ժպտէին, և լսելով՝ որ Սիլվիան ցած ձայնով կ'երգէր: Ո՛հ, ի՛նչ տխուր երազ եղաւ: Յետոյ սկսայ ամէն օր բարուքիլ: « Փոքրիկ որմնագիրն » եկաւ՝ որ առաջին անգամ դարձեալ զիս խնդացուց իր ընչապտուկով. և ի՛նչպէս լաւ կ'ընէ հիմա՝ որ հիւանդութենէն խեղճին երեսն երկնցեր է: Քօրէթթին եկաւ, Կարօֆֆին եկաւ ինչ




ծի ընծայելու իր նոր վիճակահանութեան երկու պիտակները « զմեւի մը՝ հինգ անակընկալներով », զորս գնած է Պէրթօլայ ճամբուն հնավաճառէ մը: Յետոյ երէկ, մինչդեռ կը քնանայի, Փրէքօսին եկեր է՝ և այտերն իմ ձեռքիս վրայ դրեր է, առանց զիս արթնցնելու, և որովհետեւ իր հօր աշխատանոցէն կու գար՝ երեսն ած

խափոշիով, թեւոցիս վրայ նշանը թողուցած է, և երբ արթնցայ՝ զայն տեսնելով մեծապէս ուրախացայ: Ի՛նչպէս դաւարացեր են ծառերն այն քիչ օրերուն մէջ: Եւ որչափ նայանձս կը շարժեն տղաք՝ որոնց դպրոց վագելը կը տեսնեմ իրենց գրքերով՝ երբ հայրս զիս պատուհանին առջև կը տանի: Սակայն քիչ ատենէն ես ալ պիտի երթամ: Շատ անճամբեր եմ նորէն տեսնելու բոլոր այն տղաքը, իմ գրասեղանս, պարտէզը, այն ճամբաները. գիտնալ բոլոր՝ ի՛նչ որ հանդիպած է այս ժամանակին մէջ. իմ գրքերովս ու տետրակներովս զբաղիլ, որ ինձի կը թուի թէ տարիէ մ'ի վեր այլ ևս զանոնք չեմ տեսներ: Խեղճ մայրս, ի՛նչպէս նիհարցիւր ու սոգուններ է: Խեղճ հայրս, ի՛նչպէս յոգնած կը տեսնուի: Եւ իմ ընկերներս՝ որ եկած են զիս գրտնելու և ոտքերուն ծայրերուն վրայ կը քալէին ու իմ ճակատս կը համբուրէին: Հիմա զիս կը տխրեցնէ՝ մտածելով որ օր մ'իրարմէ պիտի բաժնուինք: Տէքօսսին հետ, ուրիշ քանի մը հոգւոյ հետ պիտի շարունակենք գուցէ միասին ուսումներն ընել, բայց միւս բոլորը: Անգամ մ'որ չորրորդ շրջանը լրանայ, մնաս բարեաւ, այլ ևս պիտի չտեսնուինք. այլ ևս անկողնոյս քով պիտի չտեսնեմ զիրենք՝ երբ հիւանդ ըլլամ. Կարրօնէն, Փրէքօսսին, Քօրէթթին՝ այնչափ քաջ տղաքներ, այնչափ բարի և սիրելի ընկերներս, այլ ևս բնաւ:

### ԲԱՐԵԿԱՄ ԳՈՐԾԱՒՈՐՆԵՐԸ

Հիմնադարժի. 20

Ինչո՞ւ Հներիկո՞ւ, ա՛յլ ևս թևա: Ասիկայ թեզմե կը կա-  
խոշի: Երբ չորրորդը յրացնես, դու կըրարան պիտի եր-  
բաս և անոնք գործաւոր պիտի ըլլան. բայց մի և նոյն  
քաղաքին մէջ պիտի մնար, և գոչե շատ տարիներ: Եւ ին-  
չո՞ւ այն ժամանակ ա՛յլ ևս զիրար պիտի չտեսնէք: Երբ  
Համալսարան կա՞մ Լիկիոն գտնուի՞ իրենց խաւոչներուն  
կա՞մ արուեստասնոցներուն մէջ պիտի երբաս զիւրեք փըն-  
տաւոր, և մեծ հաճոյք պիտի ըլլայ թեզի՝ դու մտնու-  
րեան ընկերներդ, — մարդիկ եղած, — աշխատորեան  
մէջ տեսնելով: Կ'ոչգի տեսնել թե դու չերբաս փնտուրու  
Քօրեքիսն ու Փրեքօսիսն ո՛չք ալ գտնուի: Անպատճառ պի-  
տի երբաս և իրենց ընկերորեան մէջ ժամեր պիտի ան-  
ցունես. և կեանքն ու աշխարհն ուսումնասիրելով, պիտի  
տեսնես թե ո՛րչափ բան պիտի կարենաս սովորիլ իրենցմե,  
գոր ոչիչ ո՛չ որ կրնայ թեզի սովորեցնել, թե՛ իրենց ա-  
րուեստներուն, թե՛ իրենց ընկերորեան և թե՛ դու հաշրե-  
նիքիդ վրայօր: Եւ գիտցի՞ր որ երե այս բարեկամորիսնե-  
րը չտնոցանես, սպազայիս շատ դժուարին պիտի ըլլայ  
թեզի ատոնց նմանները գտնել՝ աշխիթն այդ բարեկամու-  
րեանց, կ'ոչգե՞մ ըսել՝ այն շրջանակին դուրս՝ որուն կը  
փերաբերիս. և այսպիս մեկ դասակարգի մէջ պիտի սպ-  
րիս, և մարդ մը՝ որ ընկերայիս մեկ դասակարգի մը մէջ  
կը մտնէ կ'եղնէ, այն ուսումնասիրին կը նմանի՝ որ մեկ  
գիրք միայն կը կարդայ: Ուստի ստաշտոյրե՛ այժմեկ սկը-



... երկաթուղու կայարանէ մ'անցնելով... Ծանցման քառ սկզբնով կարծեմ...

սեւոյ քեզի բարեկամ սրահոյ եոյն իսկ իրարմէ բաժնուելի վերջ, և այժմեկն նախապատուութեամբ շարգէ՛ գիրեկը, և նոր համար՝ որ գործաւորի որդիներ են: Տե՛ս, բարձրագոյն դասակարգի մարդիկ՝ սպաներն են, և գործաւորները՝ աշխատութեան զինուորներն են. սակայն ինչպէս ընկերութեան մէջ՝ այսպէս բանակին մէջ՝ ո՛չ միայն զինուորը նուազ սզնուական չէ սպայեկն, մասն զի սզնուականութիւնն աշխատութեան մէջ կը կայանայ ո՛չ թէ շահին մէջ, քաջագործութեան՝ ո՛չ թէ սատիճանին մէջ. քայց երբ արժանիքի սուսեւորութիւն մը կայ, այն ալ զինուորին և գործաւորին կողմն է, որոնք իրենց անձնական գործին նուազ շահ կը ստանան: Սիրէ՛ ուրեմն, ընկերներուդ մէջ աւելի շարգէ՛ աշխատութեան զինուորներուն որդիները. անոնց մէջ պատռէ՛ իրենց ձեռքաց վաստակներն ու զոնորութիւնները. արհամարհէ՛ քաղցի և դասակարգի տարբերութիւնները, որոնց վրայ միայն մատերն իրենց զգացնուելքն ու կրքութիւնը կը կանոնաւորեն. մտածէ՛ թէ գրեթէ բոլոր արուեստանոցներու և դաշտային գործաւորներու կրակեկրէն քափեցաւ այն օրհնեալ արիւնը՝ որ մեր հայրենիքը փրկեց. սիրէ՛ Կարօնեկն, սիրէ՛ Փրեքոսիկն, սիրէ՛ Քօրեքրիկն, սիրէ՛ քո՛ւ «որմնադրիկը», որ իրենց փոքր գործաւորի կոչութիւնն տակ՝ իշխաններու արտեր կը կրեն, և քո՛ւ քեզի կրդուի՛ր՝ որ քաղցի ո՛չ մէկ փոփոխութիւն պիտի կարենայ կրքեք քո՛ւ արտեղ կողով այս մանկական սուրբ բարեկամութիւնը: Երդուի՛ր որ երէ քառասուն տարի վերջ, կրկնաւորուող կայարանէ մ՝ անցնելով, մերենագործի մը զգեստներուն մէջ ձանձնաս քո՛ւ սե. դեմքով Կարօնեղ... ո՛ն հարկ չկայ որ կրդնու, մտան եւ թէ մերենային վրայ պիտի ցատկես ու թեղ անոր վիզը պիտի փարթես, երէ եոյն իսկ Տերութեան Ծերակոյտի անդամ ալ կդած ըլլաս:

ՀԱՅՐԳ

## ԿԱՐՐՕՆԷԻ ՄԱՅՐԸ

29. Շաբաթ

Հազիւ Դպրոց վերադարձած, իսկոյն տխուր լուր մը: Բաւական օրէ ի վեր Կարօնէն ա՛յլ ևս դպրոց չէր գար, վասն զի մայրը ծանր հիւանդ էր: Շաբաթ իրիկուն մեռած է: Երէկ առտու, հազիւ դպրոց մտած, ուսուցիչն ըսաւ մեզի. — Խեղճ Կարօնէին ամենէն մեծ դժբաղդութիւնը պատահած է՝ որ կրնայ տղու մը զլիսուն գալ: Իր մայրը մեռած է: Վաղը դպրոց պիտի գայ: Հիմակուրնէ կը խնդրեմ, տղա՛ք, յարգեցէ՛ք սոսկալի ցաւը՝ որ իր հոգին կը կեղեքէ: Երբ ներս մտնէ՛ սիրով և լրջութեամբ ողջունեցէ՛ք զինք. ո՛չ որ կատակ ընէ, ո՛չ որ ծեծաղի իրեն հետ, կը յանձնարարեմ: — Էւ այս առտու, ուրիշներէն ընչ մը վերջ, խեղճ Կարօնէն ներս մտաւ: Ձինք տեսնելով՝ սրտիս մէջ հարուած մը զգացի: Դէմքը նիհարցած էր, աչքերը կարմրած, և հազիւ ոտքի վրայ կը կենար. կարծես թէ ամիս մը հիւանդ պառկած էր. գրեթէ չէր ճանչցուեր. բոլոր սև հագուած էր. մարդուս գութը կը շարժէր: Ո՛չ որ ճիկ հանեց. ամէնքն անոր նայեցան: Հազիւ ներս մտած, տեսնելով այն դպրոցը՝ ուր գրեթէ ամէն օր իր մայրն եկած էր զինք առնելու, այն գրասեղանը՝ որուն վրայ նա այնչափ անգամներ ծոած էր քննութեանց օրերուն՝ իրեն վերջին յանձնարարութիւններն ընելու համար, և ուր ինք այնչափ անգամ մտածեր էր անոր



վրայ՝ անհամբեր  
դուրս ելնելու՝  
զայն զիմաւորե-  
լու համար, յու-  
սահատ յորդ ար-  
ցունք մը սկսաւ  
թափել: Ուսու-  
ցիչը զայն իր մօտ  
բաշեց, իր կուրծ-  
քին սեղմեց ու  
ըսաւ. — Լաց,  
լաց կ'ըսեմ, խեղճ  
տղայ, բայց քա-  
ջասիրտ եղի՛ր:  
Մայրդ այլ ևս  
հոս չէ, բայց  
կը տեսնէ զքեզ,  
կը սիրէ զքեզ  
դեռ, քու մօտդ  
կ'ապրի դեռ, և  
օր մը դու պիտի  
տեսնես զինք,  
վասն զի մօրդ  
պէս բարի ու հա-  
մեստ ոգի մ'ես:  
Քաջասիրտ ե-  
ղի՛ր: — Այս ը-  
սելով, զինք դէպ  
ի գրասեղան՝ իմ  
ըովս առաջնոր-

դեց: Ես չէի համարձակեր իրեն նայելու: Ես դուրս  
հանեց իր տետրակներն ու գրքերը, զորս շատ օրերէ  
ի վեր բացած չէր. և ընթերցման զիրքը բանալով՝ ուր  
պատկեր մը կայ՝ մայր մ'իւր որդւոյն ձեռքէն բռնած,  
դարձեալ սկսաւ լալ և զլուխը թևին վրայ խոնարհե-  
ցուց: Ուսուցիչը մեզի նշան ըրաւ զինք այնպէս թու-  
ղուլ, և դասախօսութիւնը սկսաւ: Ես կ'ուզէի իրեն բան  
մ'ըսել, բայց չէի կրնար: Մէկ ձեռքս իր թևին վրայ  
դրի ու ախանջէն ըսի. — Մի՛ լար, Կարրօնէ՛: —  
Ես չպատասխանեց, և առանց զլուխը գրասեղանէն վեր  
առնելու՝ իր ձեռքն իմինիս մէջ դրաւ և քիչ մը ժա-  
մանակ այնպէս թողուց: Դուրս ելնելու ժամանակ ոչ  
ոք հետը խօսեցաւ, ամէնքը զինք շրջապատեցին՝ յար-  
գանքով և լուսթեամբ: Ես տեսայ որ մայրս ինծի կը  
սպասէր, և վազեցի որ զինք գրկեմ. բայց նա մերժեց,  
և Կարրօնէին կը նայէր: Անմիջապէս չհասկցայ թէ ին-  
չո՛ւ. և նշմարեցի որ Կարրօնէն միայնակ մէկ կողմ  
բաշուած ինծի կը նայէր. և այնպիսի անբացատրելի  
տխուր ակնարկով մ'ինծի կը նայէր՝ որ կ'ուզէր ըսել.  
— Դու քու մայրդ կը գրկես, և ես այլ ևս իմս պիտի  
չգրկեմ: Դու դեռ քու մայրդ ունիս, և իմս մեռած է:  
— Եւ այն ատեն ըմբռնեցի թէ ինչո՞ւ մայրս մերժած  
էր զիս, և դուրս ելայ առանց անոր ձեռք տալու:

## ՅՈՎԱԼՖ ՄԱՐԾԻՆԻ

29. Շաբաթ

Այս առաու ալ Կարրօնէն տժգոյն ու աչքերն արցունքէն ուռած դպրոց եկաւ. և հազիւ ակնարկ մը տուաւ փոքր նուէրներուն՝ զորս գրասեղանին վրայ դրած էինք զինք զինք մխիթարելու համար: Բայց ուսուցիչը գրքի էջ մը բերած էր իրեն կարդալու՝ քիչ մը սիրտ տալու համար: Նախ մեզի իմացուց որ վաղը ժամը մէկին ամենքնիս Քաղաքապետարան երթանք՝ տեսնելու համար քաղաքական քաջութեան շքադրամ տրուիլը աղու մը՝ որ փոյէն մանկիկ մ'ազատած է, և թէ երկուշաբթի՝ փոխանակ ամսօրեայ պատմութեան՝ այդ հանդիսին նկարագրութիւնը մեզի գրել պիտի տայ: Յետոյ Կարրօնէին դառնալով, որ զլուխը կախած կեցեր էր, ըսաւ. — Կարրօնէ՛, սիրտ ըրէ՛, ըսածս դու ալ գրէ՛: — Ամենքնիս գրիչ առինք: Ուսուցիչն սկսաւ:

«Յովսէփ Մաճճինի, ծնած է Ճենովայի մէջ 1805ին, մեռած Փիզայի մէջ 1872ին, մեծ հայրենասէր ոգի, մեծ գրագէտ հանճար, ներշնչող և առաջին գործիչ և ծաւալող իտալական յեղափոխութեան. որ հայրենիքի սիրոյն համար՝ քառասուն տարի ազքատ, տարազիր, հալածական, թափառական ապրեցաւ՝ զիւցազնօրէն անզրդուելի իր սկզբունքներուն ու իր առաջադրութեանց մէջ. Յովսէփ Մաճճինի, որ իր մայրը կը պաշտէր, ուսկից ծծած էր՝ ինչ որ աւելի բարձր և աւելի մա-

քուր բան կար իր զօրաւոր և ազնուական հոգւոյն մէջ, այսպէս կը գրէր իր մէկ սրտակից բարեկամին, զինք մխիթարելու համար ամենէն մեծ զժբախտութեան մէջ: Գրեթէ իր խօսքերն են. « Բարեկամ, դու այլ ևս այս աշխարհիս վրայ մայրդ պիտի չտեսնես: Այս ահաւոր ճշմարտութիւն մ'է: Ես չեմ գար զքեզ տեսնելու, վասն զի քուկդ այն հանդիսաւոր ու սուրբ ցաւերէն մէկն է՝ զոր պէտք ես ինքնիրենդ կրել ու յազթել: Կը հասկնամ ինչ որ այս խօսքերով կ'ուզեմ քեզի ըսել. — Պէտք է յաղթել ցաւին. — Յազթել ցաւին այն մասին՝ որ նուազ սուրբ է, նուազ մաքրագործող է. անոր՝ որ փոխանակ հոգին ազնուացնելու, զայն կը տկարացնէ ու կը ստորնացնէ: Բայց ցաւին միւս կողմը, ազնուական մասը, այն՝ որ կը մեծցնէ ու կը բարձացնէ հոգին, այն պէտք է քու հետդ մնայ, պէտք է քու հետանայ քեզմէ: Այս աշխարհիս վրայ ո՛չ մէկ բան բարի մօր մը տեղը կը բռնէ: Վիշտերու մէջ, մխիթարութիւններու մէջ՝ զորս կեանքը կրնայ դեռ քեզի տալ, դու զանկակայ երբեք պիտի չմոռնաս: Սակայն դու պէտք ես զայն յիշելի, սիրելի, իր մահուան վրայ տխրիլ՝ անոր արժանաւոր եղանակով մը: Ո՛վ բարեկամ, լսէ՛ ինձի: Մահը գոյութիւն չունի, ոչինչ է: Եւ ոչ իսկ կարելի է ըմբռնել: Կեանքը՝ կեանք է, և իր օրէնքին կը հետեի, յառաջադիմութեան: Դու երէկ մայր մ'ունէիր երկրիս վրայ, այսօր հրեշտակ մ'ունիս ուրիշ տեղ: Այն ամէն բան որ բարի է՝ կ'ապրի երկրաւոր կեանքէն վեր, աճելով իր կարողութեան մէջ: Ուստի, նաև քու մօրդ սէրը: Նա զքեզ աւելի կը սիրէ քան երբեք: Եւ դու առաջինէն աւելի պատասխանատու ես անոր նկատմամբ ունեցած գործերուդ մէջ: Քեզմէ կը կախուի, քու գոր-



ծերէդ կախումն ունի անոր հանդիպելը, ուրիշ գոյու-  
թեան մը մէջ զանիկայ տեսնելը: Ուրեմն դու պէտք ես  
մօրդ սիրոյն և յարգանաց համար՝ լաւագոյն ըլլալ և  
քեզմով ուրախութիւն պատճառել իրեն: Ասկից վերջ  
դու պէտք ես, ամէն գործերուդ մէջ, ինքնիրենդ ըսել՝  
— Մայրս պիտի հաւանէ՞ր արդեօք: — Իր կերպարա-  
նափոխութիւնը՝ քեզի համար աշխարհի մէջ պահապան  
հրեշտակ մը դրաւ՝ որուն պէտք ես ըու ամէն գործերդ  
իմացնել: Հօր և բարի եղիբ. յուսահատ և հասարակ  
ցաւերուն դիմադրէ. մեծամեծ տառապանքներու մէջ՝  
մեծամեծ հոգիներու հանգարտութիւնն ունեցիր, այս է  
անոր կամքը»:

— Կարրօնէ՛, — աւելցուց ուսուցիչը. — Հօր և  
հանդարտ եղիբ, այս է անոր փափաքը: Կը հասկնաս:

Կարրօնէ գլխով ակնարկեց թէ, այո՛, և այս պա-  
հուս խոշոր ու յորդ արցունքներ իր գրասեղանին ու  
տետրակին վրայ կը թափէին:



## ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՐԺԱՆԻՔ

(Ամսօրեայ պատմութիւն)

**Ժ**ԱՄԸ մէկին ուսուցչին հետ Քաղաքապե-  
տարանին առջև էինք՝ տեսնելու համար քաղա-  
քային արժանիքի շքադրամ տրուելը՝ այն սղուն՝  
որ իր մէկ ընկերը փոյէն ազատեց:

Ճակատի պատշգամին վրայ եռագունեան մեծ  
դրօշ մը կը ծածանէր:

Պալատին բակը մտանք:

Արդէն բազմութեամբ լեցուն էր: Խորը կար-  
միր օթոցով սեղան մը կը տեսնուէր և վրան  
թղթեր, և ետևը շարք մ'ուսկեղօծ թիկնաթու-  
ներ՝ Քաղաքապետին և Թաղականներուն համար.  
Հօն էին Քաղաքապետարանի բարապանները՝ կա-  
պոյտ ներքնեակներով ու սպիտակ գուրպաններով:  
Գաւթին աջակողմը քաղաքապահ զօրաց վաչա մը  
չարուած էր, որ մետախներ ունէին, և անոնց քով  
մաքսային պահապաններու խումբ մը. միւս կողմը  
ջրհանկիրները՝ տօնական տարազով, և շատ մը  
խառն զինուորներ՝ հեծեղազօրաց, արձակամարտ-  
ներու, գնդաձիգներու որոնք հոն եկած էին տեսնե-  
լու համար: Յետոյ բոլոր շուրջն ազնուական և ժողո-  
վըրդական մարդիկ, քանի մը սպաներ, կիներ ու

տղաք լեցուած էին: Մենք անկեան մը մէջ կը ծկուեցանք, ուր արգէն ուրիշ գպրոցներու բազմաթիւ աշակերտներ իրենց ուսուցիչներով խոնուած էին, և մեր քով խումբ մը ժողովրդեան տղաք կային՝ տասէն տասն և ութ տարեկան, որ բարձրաձայն կը խօսէին ու կը խնդային, և կը հասկցուէր թէ ամէնքն ալ փոյի Արուարձանէն էին, անշուշտ մետալ ստացող տղուն ընկերները կամ ծանօթները: Վերը, բոլոր պատուհաններուն առջև կեցած էին Քաղաքապետարանի պաշտօնեաները. գրատան օթեակն ևս բազմութեամբ լեցուն էր, որոնք վանդակապատին մօտ խոնած կեցած էին. և անոր գլխացի օթեակին մէջ, մուտքի մեծ դրան վրայ, թաղային գպրոցներու բազմաթիւ աղջիկներ կուսուած էին, և շատ Զինուորակներու աղջիկներ՝ իրենց գեղեցիկ կապոյտ քղերով: Թատարն մը կը թուէր: Ամէնքը զուարթ կը խօսակցէին, ստէպ կարմիր սեղանին կողմը նայելով թէ մէկը կ'երևար արդեօք: Երաժշտական խումբը մեղմով կը նուագէր դաւթին խորը: Արևը բարձր պատերուն վրայ զարկած էր: Գեղեցիկ էր:

Յանկարծ գաւթէն, օթեակներէն, պատուհաններէն ամէնքը սկսան ծափահարել:

Ես ոտքիս ծայրերուն վրայ ելայ տեսնելու համար:

Ամբոխը, որ կարմիր սեղանին ետև կեցած էր, երկուքի ձեգքուած էր, և մարդ մ'ու կին մը յառաջ եկած էին: Մարդը տղու մը ձեռքէն բռնած էր:

Ընկերն աղատողն էր:

Մարդը, իր հայրն էր, որմնադիր մը, տօնական զգեստ հագուած: Կինը, — իր մայրը, — կարճահասակ ու խարտեաշ, սև զգեստ մ'ունէր: Տղան, նոյնպէս խարտեաշ ու փոքր, գորշ զգեստ մ'ունէր:

Բոլոր այն բազմութիւնն ու բոլոր այն ծափահարութեանց աղմուկը լսելով, երեքն ալ հոն կեցան, և չէին համարձակեր ոչ նայիլ և ոչ շարժիլ: Քարապան մը զիրենք դէպ ի աջակողմեան ստոյը մկեց:

Ամէնքը լուռ կեցան վայրկեան մը, յետոյ գարձեալ ամէն կողմանէ ուժգին ծափահարութիւնն սկսան: Տղան դէպ ի վեր պատուհաններուն նաշեցաւ, և յետոյ Զինուորակներու աղջիկներուն, գլխարկը ձեռքին մէջ բռնած էր, և կը տեսնուէր որ ուր ըլլալը չէր գիտեր: Սակայն կարծես քիչ մը դէմքով Քօնէթթիի կը նմանէր. բայց աւելի կարմիր: Իր հայրն ու մայրը սևեռած ստոյին կը նայէին:

Այս պահուս փոյի Արուարձանին բոլոր տղաք, որ մեր մօտն էին, կը կարկառէին, շարժուձեւեր կ'ընէին դէպ ի իրենց ընկերը, որ իրենց նայիլ, ցած ձայնով կանչելով. — Փի՛ն: Փի՛ն: Փի՛նօթ: — Յարատև կանչելով, լսել տուին: Տղան իրենց նայեցաւ, և ժպիտը գլխարկին ետև ծածկեց:

Որոշուած վայրկեանին պահակազօրքերը պարտաւոր կեցան:

Քաղաքապետը ներս մտաւ՝ բազմաթիւ պարոններու հետ:

Քաղաքապետը, բոլորովին սպիտակ, եռագոյն

լայնակամարը մէջքը՝ ստույն առջև ոտքի վրայ կեցաւ, իսկ միւս բոլորը՝ ետևն ու կողմնակի:

Նուագախումբը դադարեցուց երգը, Քաղաքապետը նշան մ'ըրաւ, ամէնքը լռեցին:

Սկսաւ խօսիլ: Իր առաջին խօսքերը լաւ չլսեցի. բայց հասկցայ որ ազուն քաջագործութիւնը կը պատմէր: Յետոյ իր ձայնը բարձրացաւ, և այնպէս որոշ ու հնչուն տարածուեցաւ բոլոր գաւթին մէջ, որ այլ ևս ո՛չ մէկ բառ չկորսնցուցի: — ... Երբ եղբրքէն տեսաւ իր ընկերը՝ որ գետին մէջ թալ-



թալ կը խաղար, արդէն մահուան վտանգի մէջ, իսկոյն հանեց զգետններն ու առանց վայրկեան մը տառամսելու վազեց: Իրեն պուռացին. — կը խղզուիս, — չը պատասխանեց. զինք բռնեցին, ձեռքերէն փախաւ. անուռովը կանչեցին, ինք

արդէն ջրոյ մէջ էր: Գետն ուռած էր, ձեռնարկը սոսկալի, նոյն իսկ մարդու մը համար: Բայց ինք մահուան դիմադրաւեց՝ իր փոքր մարմնոյն՝ բայց մեծ սրտին բոլոր թափով. հասաւ, բռնեց դըժ-

բազդն այն ժամանակին՝ երբ արդէն ջրոյ տակն էր, և զայն վեր քաշեց. կռուեցաւ կատաղորէն ալիքին հետ՝ որ զինք կ'ուզէր քշել տանիլ իր ընկերով հետ, որ կը ջանար իրեն փաթթուել. և շատ անգամներ ընկղմեցաւ ու դարձեալ դուրս եկաւ յուսահատ ջանքով մը. յամառ, անպարտելի իր սուրբ առաջագրութեան մէջ, ո՛չ իբրև աղայ մը՝ որ ուզէ ուրիշ աղայ մ'աղատել, այլ իբրև մարդ մը, իբրև հայր մը՝ որ կը մտքառի իր որդին փրկելու որ իր յոյսն ու իր կեանքն է: Վերջապէս, Աստուած չթողուց որ այսպիսի վեհանձն արիւթիւն մ'ապարդիւն մնայ: Լողացող տղան հսկայ գետէն խլեց զոհն ու ցամաք բերաւ, և ուրիշներուն հետ նաև անոր առաջին դարմանները մատոյց, անկից վերջ միայնակ և հանգիստ տուն վերադարձաւ, պարզամիտ կերպով իր քաջութիւնը պատմելու: Պարոններ: Գեղեցիկ, յարգելի է մարդուն գիւցազնութիւնը: Սակայն արզուն մէջ, ուր գեռ ո՛չ մէկ վառասիրութեան կամ շահասիրութեան նպատակ կարելի է ըլլայ. տղուն մէջ՝ որ պէտք է այնչափ աւելի յանդուգն ըլլայ՝ որչափ որ նուազ ոյժ ունի. տղուն մէջ՝ ուսկից ոչինչ չենք պահանջեր, որ ոչ մէկ բանի պարտաւան է, որ մեզի արդէն այնչափ ազնիւ և սիրելի կ'երևայ, ո՛չ թէ երբ կատարէ, այլ նոյն իսկ երբ ըմբռնէ և ձանձնայ միայն ուրիշին զոհողութիւնը. գիւցազնութիւնը՝ տղուն մէջ՝ աստուածային է: Ուրիշ բան պիտի չըսեմ պարոններ: Չեմ ուզեր աւերարդ գովեստներ շուայել այսպիսի պարզ մեծութեան մը վրայ: Ահաւասիկ հո՛ս ձեր առջև կը

գտնուի քաջասիրտ ու ազնիւ ազատարարը: Զօրականք, ողջունեցէք զինք իբրև եղբայր մը. մայրեր, օրհնեցէք զինք իբրև որդի մը. տղաք, մի մտնաք իր անունը, ձեր մտքին մէջ գրոշմեցէք իր դէմքը, որ չնջուի երբեք նա ձեր յիշողութեանէն ու սրտէն: Յառաջ քայլէ՛, տղայ: Յանուն իտալիոյ թագաւորին՝ կու տամ՝ քեզի քաղաքային արժանեաց մետալը:

Բարձրաձայն կեցցէ՛ մը՝ միանգամայն ժայթքած բազմաթիւ բերաններէ՝ պալատն արձագանգել սուաւ: Քաղաքապետը, մետալը ստոյլին վրայէն առաւ և տղուն կուրծքը կախեց: Յետոյ գրկեց զայն ու համբուրեց:

Մայրը մէկ ձեռքն աչքերուն վրայ դրաւ, և հայրը գլուխը կախած էր:


Քաղաքապետն երկուքին ձեռքն ալ սեղմեց, և շքանշանին հրամանագիրն առաւ, որ ժապաւէնով մը կապուած էր, կնոջ յանձնեց:

Յետոյ տղուն դարձաւ ու ըսաւ. — Քեզի համար փառաւոր և քու հօրդ ու մօրդ համար երջանիկ օրուանս յիշատակը թող բոլոր կեանքիդ մէջ զքեզ առաքինութեան և պատուոյ ճամբուն վրայ պահէ: Երթան բարեաւ:

Քաղաքապետը դուրս ելաւ, երաժշտախումբը նուագել սկսաւ և կարծես ամէն բան լմնցած էր, երբ ջրհանկիրներու վաշտը ճեղքուեցաւ, և ութէն ինն սարեկան տղայ մը՝ յառաջ մղուելով կնոջմէ՛ մը՝ որ իսկոյն ծածկուեցաւ, սրացաւ դէպ ի շքանշանով վարձատրուած տղան ու բազուկներուն մէջ ինկաւ:

Ուրիշ կեցցէ՛ի և ծափահարութեանց ազազակ մը կրկին թնդացուց դաւիթը. ամէնքը հասկցած էին իսկոյն՝ թէ անիկայ փոյէն փրկուած տղան էր, որ կու գար շնորհակալ ըլլալու իր ազատարարին: Յետ զայն համբուրելու, մէկ թևը մտաւ՝ մինչև դուրս ընկերելու համար: Իրենք երկուքն առջևէն, և հայրն ու մայրն ետևէն դէպ ի դուռն ուղղուեցան, դժուարութեամբ անցնելով դարձեալ միացած պահապանաց, տղոց, զօրաց, կիներու բազմութեան մէջէն, որ իրենց անցքին ճամբայ կու տային: Ամէնքը յառաջ կը մղուէին և ոտքի ծայրերուն վրայ կը բարձրանային՝ տղան տեսնելու համար: Անոնք որ անցքին վրայ էին՝ անոր ձեռքերուն կը դպչէին: Երբ դպրոցական տղոց առջևէն անցաւ, ամէնքը գլխարկնին օդին մէջ շարժեցին: Իսկ փոյի Այլուարձանինները մեծ աղմուկ մը հանեցին, անոր թևէն ու զգեստէն քաշելով և գոչելով. — Փի՛ն, կեցցե՛ս փի՛ն: Ապրի՛ս փի՛նօք: — Ճիշտ իմ՝ առջևէս անցաւ: Երեսը բուրովին կարմրած էր, և գոհ. մետալին ժապաւէնը՝ սպիտակ, կարմիր ու կանաչ էր: Իր մայրը կու լար ու կը ժպտէր. հայրը պերեկշար կ'ոլորէր մէկ ձեռքով, որ սաստիկ կը դողդղար, իբրև թէ յերմ՝ մ'ունենար: Եւ պատուհաններէն ու օթեակներէն միշտ դուրս կը կարկառէին ու կը ծափահարէին: Յանկարծ, երբ դաւիթին տակ պիտի մանէին, Զիկոշոյրակսևուց աղջիկներուն օթեակէն՝ խորհրդածաղիկներու, մանուշակի և մարգարտածաղիկի փունջերու տարափ մը տեղաց՝ տղուն, հօրը, մօրը գլուխներուն վրայ, և գետին թափե-

ցաւ: Շատերը սկսան հապճեպով ժողովել զանոնք  
և մօրը տալ: Եւ երաժշտախումբը՝ գաւթին խո-  
րը՝ հանգարտ ու ամենագեղեցիկ եղանակ մը կը  
նսւագէր, որ կը նմանէր երգն այն անթիւ ար-  
ժաթեղէն ձայներուն՝ որ կը հեռանան զանգաղ  
զեռեզերքէ մը վար:



## Մ Ա Յ Ի Ս

### ՈՂՆԱԹԵՔԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Հիմնադրութի. 5



ՅՍՕՐ հանգիստ ըրի, վասն զի առող-  
ջութիւնս լաւ չէր, և մայրս զիս իրեն  
հետ ողնաթեք մանուկներուն զպրօցը  
տարաւ, ուր զնաց զանապանին մէկ  
փօքը ազջիկը յանձնարարելու. բայց չթողուց որ ես  
ալ ներս մտնեմ....:

«Չնակցա՞ր քե ինչո՞ւ, Հներիկո՛ս, չրոյոջի որ դու  
ներս մտնես: Որպէս զի այն դժբաղդներուն առջև, հոն  
դպրոցին մէջ տեղ, զքեզ իբր առողջ և քաջակազմ մանուկ  
մը ցոյց դրած չըլլամ. արդիև շախագանց աչ առիթներ ունին  
իրենց հետ ցաւագին համեմատութիւններ ընկերու: Ի՛նչ ար-  
խոշր քան: Ներս մտնելուս պէս չիրցայ արցունքս քանկը:

Վարսառնի ջափ էին, ընդ մէջ աղջիկներու և աղոց....: Խնդձ տանջուած ոսկրներ: Խնդձ ձեռքեր, կարկամած և գարարուած ոտքեր: Խնդձ տղեղ իրաններ: Խսկոյն բազմարիւ շնորհայի դեմքեր, բարեմոյն և խելացի աչքեր եշմարեցի. նորք քրոյ ու սուր կզակոյ վտիտ փոքր աղջիկ մը կար, որ կարծես պառաւ մ'եր. բայց երկնային քաղցրութեամբ ժպտաւ մ'ուններ: Ոմանք, առջեկեկ նայելով, գեղեցիկ են, և անբերի կը տեսնուին. բայց երբ կը շըրջին... տեսնողին սիրտը կը ձեշեն: Բժիշկը կար, որ իրենց կ'այցելէր: Գրաստեղաններուն վրայ կը կանգնեցներ զիրենք, և անոնց զգեստները կը վերցնէր՝ ոռած փոքրն և հասացած յօրոշմները շօշափելու համար. բայց ընտ չէին ամչնար խեղձ փոքրիկները. կը տեսնուէր որ մերկացուէրու, քննուէրու, ամէկ կողմերը դարձուէրու վարժուած մանուշկներ էին: Էշ մտածել՝ քե այժմ իրենց հիշատարութեան ընտացոյն պայմանին մէջ են, վասն զի այժմ ա՛յլ ևս չեն կրեր: Բայց ո՛վ կրնայ ըսել ինչն էր զիրենց մարմնոյն առաջին անգամ խեղարիւրուած ժամանակ, երբ ա՛նքոյ իրենց հիշատարութեան, կը տեսնէին զիրենք շրջապատողներուն սիրոյն նուագիլը, խեղձ մանուշկներ, ժամերով սենեկի մը կամ գառի մ'անկիւնը միևնաջ բողոքած, գեշ կերակրուած, և շատ անգամ ալ ծաղրուած, կամ ամիսներով կապերու մէջ յիշուած կամ անօգուտ ուղղիչ գործիկներու մէջ պրկուած: Այժմ սակայն, շնորհիւ խնամքներու, մարտը անեղես և մարմնակրքանքի՝ շատերը կը ընտան: Վարժուիլն մարմնամարդ ընել տուաւ: Անոր տուած քակի մը հրամաններուն՝ ցաւայի էր տեսնել գրաստեղաններուն տակ երկնայն այն բոլոր կապուած, փայտի շերտերու մէջ պրկուած, վարակաւոր, աճն սրունքներուն, սրունքներ՝ որոնք համբոյրներով պետք էին ծածկուիլ:

Շատերը գրաստեղանէն չէին կրնայ ելնել, և հոն կը մնային՝ գրոշխին քեներուն վրայ ծած, ձեռքով անբաց պերը շոյելով. ուրիշներ քեներին շարժելով, շունչերին կը սպանէր, և գռնարափ՝ դարձնայ տեղերին կը նստէին. բայց կը ժպտէին՝ իրենց հեքը ծածկելու համար: Ո՛հ, Հեղիկո՛ւս, դո՛ւք ամենեկից որ չէր գնահատեր առողջութիւնը, և ձեզի փոքր բան մը կը բռնի առողջ ըլլալը: Ես կը մտածէի այն ուժեղ և քաջակազմ տղայոց վրայ, զորս մայրերը՝ հարստ անոնց գեղեցկութեան վրայ՝ յարարանակով կը շրջեցնէն. և ևս յօժարութեամբ պիտի բռնէի բոլոր այն խեղձուկ գրոշխները, պիտի սեղմէի բոլոր սրտիս վրայ՝ յաւանատ կերպով. և պիտի ըսէի երբ միևնաջ ըլլայի, քե ա՛յլ ևս սակից չեմ հետանար, կ'ոզեմ կեանքս ձեզի նշիրել, ձեզի ծառայել, ձեզ ամենուն մայրութիւն ընել միևնաջ վերջին շունչս....: Էշ այս պահուս կ'երգէին. կ'երգէին տեսակ մը նորք, քաղցր, տխուր ձայնով, որ սրտի կը դոյզէին, և վարժուիլն զիրենք գոված ըլլալով՝ շատ ուրախ կը տեսնուէին. և երբ ևս գրաստեղաններուն մէջտեղէն կ'անցնէր, անոր ձեռքերն ու քեները կը համբոյրէին, վասն զի շատ կրախտագիտութիւն կը զգան իրենց բարիք ընողներուն, և շատ գորովայից են: Էշ այն հրեշտակիկները խելացի ալ են ու կը սովորին, ըստ ինծի վարժուիլն: Երիտասարդ և ազնիւ վարժուի մը, որուն բարեկից դեմքին վրայ կայ տեսակ մը տխուրութեան արտայայտութիւն, իրեն ցորացում մը դժբաղդութեանց՝ զոր ինք կը զգուշ ու կը մխիթարէ: Սիրուն աղջիկ: Բոլոր մարդկեղէն արարածոց մէջ՝ որոնք աշխատութեամբ կը շահին իրենց հացը, չկայ մէկը որ քեզմէ աւելի սրբութեամբ շահի գայն, սիրելի՛ աղջիկս:

## ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆ

## 9. Երեքշարթի

Մայրս բարի է, նոյնպէս Սիլվիա քոյրս, և մի և նոյն մեծ ու ազնիւ սիրտն ունի: Երէկ իրիկունս ես «Ապենինեաններէն մինչև Անդեանները» ամսօրեայ պատմութեան մէկ մասն օրինակելու հետ էի, զոր ուսուցիչը տուած էր որ ամենքնիս մաս մաս օրինակենք, այնչափ երկայն է, երբ Սիլվիա ոտքի մտնեբուն վրայ ներս մտաւ և շտապով ու ցած ձայնով ըսաւ ինծի. — Մայրիկին քով երթանք: Այս առտու լսեցի որ իրենք կը խօսէին, հայրիկին մէկ գործն անյաջող գացեր է, վըշտացեր էր, մայրիկը զինք կը քաջալերէր. անձկութեան մէջ ենք, կը հասկնաս, բնաւ զբամ չունինք: Հայրիկը կ'ըսէր թէ փնասը լեցնելու համար զոհողութիւն պէտք է ընել: Արդ պէտք է որ մենք ալ զոհողութիւն ընենք, այնպէս չէ: Պատրաստ ես: Լաւ, մայրիկին հետ կը խօսիմ, դու ալ հաւանութեան նշան ըրէ և պատուոյդ վրայ իրեն խոստացիր թէ ինչ որ ես քեզի ըսեմ պիտի ընես: — Այս ըսելով, ձեռքէս բռնեց, և զիս մեր մօր քով տարաւ, որ բոլորովին մտածկոտ՝ կար կ'ընէր. ես բազմօցին մէկ կողմը նստայ, Սիլվիան միւս կողմը նստաւ, և ըսաւ իսկոյն. — Լսէ՛, մայրիկ, քեզի բան մը պիտի ըսեմ: Երկուքս ալ քեզի բան մը պիտի ըսենք: — Մայրերնիս զարմացած մեզի նայեցաւ: Եւ Սիլվիա սկսաւ. — Հայրիկն առանց զբամի է, այն-

պէս չէ: — Ինչ կ'ըսես, — պատասխանեց մայրիկը կարմրելով. — Սխալ է: Ուսկից գիտես: Քեզի ո՞վ ըսաւ: — Ես գիտեմ, — ըսաւ Սիլվիա վստահարար. — Լաւ ուրեմն, լսէ՛, մայրիկ, մենք ալ զոհողութիւն պէտք ենք ընել: Դու ինծի հովաւհար մը խոստացեր էիր զնել մայրիսին վերջը, և Հենրիկոս իր ներկատփին կը սպասէր. այլ ևս բնաւ բան չենք ուզեր. չենք ու-



զեր որ զբամները վատնուին. նոյնպէս գոհ կ'ըլլանք, հասկցամք: — Մայրիկը ջանաց խօսիլ. բայց ըսաւ Սիլվիա. — Ո՛չ, այնպէս պիտի ըլլայ: Որոշած ենք: Եւ մինչև հայրիկը զբամ չունենայ, ո՛չ պտուղ կ'ուզենք և ո՛չ ուրիշ բան. մեզի ապուրը կը բաւէ, և առտուան նախաճաշին ալ հաց կ'ուտենք. ասով սեղանի բիշ կը ծախսուի, վասն զի արդէն շատ կը ծախսենք, և քեզի կը խոստանանք որ զմեզ հաւասարապէս միշտ գոհ պիտի տեսնես: Այնպէս չէ՞, Հենրիկո՛ս: — Ես, այո՛,

պատասխանեցի : — Հաւասարապէս միշտ գոհ, — կրկնեց Սիւվիա, մէկ ձեռքով մօր բերանը փակելով. — և եթէ ուրիշ զոհողութիւն ալ կայ ընելիք, կամ հագուելու, կամ ուրիշ բանի մէջ, մենք յօժարութեամբ կ'ընենք, և մեր նուէրներն ալ կը վաճառենք. ես իմ բոլոր բաներս կու տամ, ես քու սպասուհիդ կ'ըլլամ, տունէն բնաւ բան մը դուրս չենք հաներ, քեզի հետ բոլոր օրը կ'աշխատիմ, ուզածդ կ'ընեմ, ամէն բանի պատրաստ եմ: Ամէն բանի, — բացազանչեց թեւերը մօրս վիզը փաթթելով. — բաւ է որ հայրս ու մայրս բնաւ տհաճութիւն չունենան, բաւական է որ երկուքդ ալ դարձեալ հանգիստ տեսնեմ, առաջինին պէս ուրախ զուարթ՝ ձեր Սիւվիային ու Հենրիկոսին՝ մէջտեղ, որ զձեզ շատ կը սիրեն ու ձեզի համար իրենց կեանքը կու տան: — Ո՛հ, ես մայրս այնչափ գոհ տեսած չէի որչափ երբ այն խօսքերը լսեց. երբեք այնպէս երեսնիս համբուրած չէր, արցունքով ու ծիծաղով, առանց խօսիլ կարենալու: Եւ յետոյ համոզեց Սիւվիան՝ թէ սխալ հասկցեր էր, թէ իր կարծածին չափ կորուստ չունէինք, և հարիւր անգամ մեզի շնորհակալ եղաւ, և մինչև իրիկուն ուրախ զուարթ մնաց, մինչև որ հայրս տուն վերադարձաւ, որուն ամէն բան պատմեց: Նա բերան չբացաւ, խեղճ հայրս: Սակայն այս առտու սեղանի նստելով... միանգամայն մեծ հաճոյք ու մեծ տիրութիւն մը զգացի. ես անձեռոցին տակ իմ ներկի տուփս գտայ, իսկ Սիւվիան իր հովահարը:

ՀՐԳԵՀԸ<sup>1</sup>

11. Տիեզերքի

Այս առտու ես «Ապենինեաններէն մինչև Անդեանները» պատմութեան իմ բաժինս օրինակեր էի, և նիւթ մը կը փնտռէի՝ ազատ շարադրութեանս համար, զոր ուսուցիչը մեզի տուաւ ընելու, երբ սանդղակներէն երկայն ձայն մը լսուեցաւ, և քիչ յետոյ երկու հրշէջներ ներս մտան, որոնք հրաման կը խնդրէին հօրմէս՝ բոլոր վառարաններուն և ծխնելոյզներուն աչք մը տալու, որովհետեւ տանիքներուն վրայ հեծան մը կ'այրէք, և որուն ըլլալը չէր հասկցուեր: Հայրս ըսաւ, — թո՛ղ նային, — և թէպէտ ոչ մէկ կողմ կրակ վառած չէինք, սակայն անոնք սկսան սենեակները շրջիլ և որմերուն ապակի ղնել, իմանալու համար թէ կրակի ձայն կը լսուէր այն խողովակներուն մէջ՝ որոնք տան միւս յարկերն ալ կը բարձրանան:

Եւ հայրս ըսաւ ինձի, մինչդեռ սենեակները կը շրջէին. — Հենրիկո՛ս, ահաւասիկ շարադրութեանդ նիւթ մը. հրշէջները: Քեզի պատմեմ, փորձէ՛ գրել: Երկու տարի առաջ, ես զանոնք գործի վրայ տեսայ, երկիւյ ժը՝ երբ ուշ գիշերով Պալտոյ թատրոնէն դուրս կ'ելնէի: Հոովմ փողոցը մտնելու ժամանակ, անսովոր լոյս մը տեսայ, և բազմութիւն մ'որ կը վազէր. տուն մը

1. Գեպրը պատահեցաւ 1880, յունուար 27ի գիշերը:



կրակ առեր էր. բոցեղէն լեզուներ և ծուխի ամպեր պատուհաններէն ու տանիքէն դուրս կը ժայթքէին. մարդիկ և կիներ պատշգամներուն վրայ կը տեսնուէին ու կ'աներևութանային, յուսահատ աղաղակներ ձգելով. մեծ իրարանցում կար մեծ դրան առջև. ամբոխը կը



գոչէր. — Ո՞ղջ ո՞ղջ կ'այրին: Օգնութիւն: Զրհանկիրներ: — Այն վայրկենին կառք մը հասաւ. չորս հըրշէջներ դուրս ցատկեցին անկից, առաջինները՝ որ Գաղաքապետարանին մէջ գտնուած էին, և տան մէջ նետուեցան: Հազիւ ներս մտած էին, ահաւոր բան մը տեսնուեցաւ. կին մը գոռալով երրորդ յարկի պատուհանին առջև երեցաւ, վանդակին ձողերը բռնելով՝ միւս կողմն անցաւ, և այնպէս բռնած մնաց՝ զրեթէ դատարկութեան մէջ կախուած, կռնակը դէպ ի դուրս, մուխին ու բոցին տակ ծռած՝ որ պատուհանէն դուրս

վիժելով զրեթէ իր գլխուն կը քսուէին: Ամբոխը սարսափահար ազաղակեց: Հըշէջները, սխալմամբ երկըրորդ յարկի սարսափահար վարձուորներէն բռնուած, արդէն պատ մը ծակած և սենեակ մը մտած էին, երբ հարիւրաւոր ազաղակներ իրենց իմացուցին. — Երրորդ յարկը: Երրորդ յարկը: — Երրորդ յարկը թռան: Հո՛ն դժոխային աւերում մը կար. ձեզունի գերաններ՝ որ կը տատանէին, սրահները՝ բոցերով լի, մուխ մը՝ որ կը խղզէր: Այն սենեակները համեմու համար՝ ուր փակուած մնացեր էին վարձուորները, ուրիշ ճամբայ չկար բայց միայն տանիքէն մտնել: Իսկոյն վեր սլացան, և վայրկեան մը վերջ՝ ծուխերու մէջ իրբև սև ուրուական մը՝ կղմինտրներուն վրայ մէկը տեսնուեցաւ: Տասնապետն էր, ամենէն առաջ համողը: Բայց կրակէն սլաշարուած յարկին համապատասխանող տանիքին կողմը երթալու համար՝ պէտք էր երդիքին և ջրորդանին մէջտեղ գտնուած ամենէն նեղ անցքէ մ'անցնիլ. բոլոր միւս մասերը բոցերու մէջ էին, և այն փոքր անցքն ալ ձիւնով ու սառով պատած էր, և ձեռք բռնելու տեղ չկար: — Անկարելի է որ անցնի, — կը զոչէր ամբոխը վարէն: Տասնապետը դէպ ի ցուիքը մօտեցաւ. — ամէնքը սարսափեցան, և շունչերնին բռնած նայեցան. — անցաւ. — անհամար կեցցէներ երկինք բարձրացան: Տասնապետը վազեց և վտանգալից կէտին համեմուով, սկսաւ կատաղօրէն տապարի հարուածներով փշրել կղմինտրները, հեծանները, ջրորդանները, մէջն իջնելու ծակ մը բանալու համար: Դեռ կինը պատուհանէն դուրս կախուած կեցեր էր, կրակը գլխուն վրայ կը սաստկանար, և վայրկենէ մը ճամբուն մէջ գահաւիժելու վրայ էր: Ծակը բացուեցաւ. տեսանք որ տաս-

նապետն ուսընդանուրն հանեց և վար իջաւ, նորահաս հրշէջներն ալ իրեն հետեւեցան: Մի և նոյն վայրկենին փօրքա կոչուած ամենաբարձր սանդուղ մը հասնելով, պատուհանաց առջևի տան ցուիքին կոթնցուեցաւ՝ ուսկից բոցերն ու ահուելի ճիւղերը կ'ելնէին: Բայց ուշ կը կարծուէր: — Ո՛չ որ կ'ազատի ա՛յլ ևս, — կը գոչէին: — Հրշէջները կ'այրին: — Լմեցած է: — Մեռած են: — Յանկարծ վանդակաւոր պատուհանին առջև տեսնուեցաւ տասնապետին սև դէմքը՝ վերէն վար բոցերու ալիքներէն լուսաւորուած. — կինն անոր վիզը փաթթուեցաւ. — նա ասոր մէջքէն բռնեց երկու թււերով, վեր քաշեց, և սենեկին մէջ դրաւ: Ամբոխը հազարումէկ ձայներով գոչեց, որոնք հրդեհին ճայթուռները խափանեցին: Բայց միւսները, և իջնելու համար: Սանդուղը, որ ուրիշ պատուհանի մ'առջևի տանիքին յեցուած էր, պատուհանի սեմէն բաւական հեռու էր: Ինչպէս պիտի կարենային անոր կառչիլ: Մինչդեռ վարն այս բաները կ'ըսէին, հրշէջներէն մին պատուհանէն դուրս ելաւ, աջ ոտը սեմին վրայ դրաւ և ձախը սանդուղին վրայ, և այսպէս օդոյ մէջ առկախ՝ վարձուորները մի առ մի գրկեց, զորս միւսները ներսէն իրեն կու տային, զանոնք ուրիշ ընկերոջ մը կը յանձնէր՝ որ ճամբէն վեր ելած էր, և զանոնք առնելով և սանդղամատին վրայ հանգչեցնելով՝ մէկը միւսին հտեկն վար իջեցնել տուաւ՝ վարը կեցող ուրիշ ջրհանկիրներու օգնութեամբ: Նախ վանդակէն կախուած կինն անցաւ, յետոյ փոքր աղջիկ մը, ուրիշ կին մը, ծերունի մը: Ամենքն ազատած էին: Ծերունիէն վերջ՝ ներսը մնացող հրշէջներն իջան. ամենէն վերջ իջնողը պատնապետն եղաւ, որ առաջին վագոդն եղած էր:

Ամբոխը բուռն ծափահարութեամբ ընդունեցաւ զամէնքը. բայց երբ վերջին՝ ազատարարներու յառաջապահն երևցաւ, այն՝ որ ամենէն առաջ անդունդին վրայ կանգնեցաւ, այն՝ որ մեռած պիտի ըլլար, եթէ մէկը պիտի մեռնէր, ամբոխը զայն իբրև յաղթական մ'ընդունեցաւ՝ գոչելով և զարմանքի ու երախտագիտութեան սիրակաթ գեղումով մը թեւերնին կարկառելով, և քիչ վայրկենէն անոր անձանօթ անունը — ձիուզէփփէ Ռօպպինոյ — հազարաւոր բերաններէ հնչեց...: Հասկցա՛ր: Այն է քաջասրտութիւնը, սրտի քաջութիւնը, որ չպատճառարաններ, որ չտարուբերիր, որ ուղղակի, կուրօրէն, կայծակի պէս կը սլանայ՝ ուր մեռնողի մ'աղաղակը կը լսէ: Օր մը զքեզ ջրհանկիրներու կրթանքին պիտի տանիմ, և Ռօպպինոյ տասնապետը պիտի ցուցնեմ. վասն զի շատ գոհ պիտի ըլլաս զանիկայ ճանչնալու, այնպէս չէ՞:

Այո՛, պատասխանեցի:

— Ահա՛, հո՛ս է, — ըսաւ հայրս:

Իսկոյն դարձայ: Երկու հրշէջները, այցելութիւնը վերջացուցած սենեակներէն դուրս կու գային:

Հայրս ամենէն կարճահասակը ցցուց ինծի, որ արծաթահիւս ժապաւէններ ունէր, և ըսաւ ինծի. — Ռօպպինոյ տասնապետին ձեռքը սեղմէ՛:

Տասնապետը ժպտելով կանգ առաւ և ձեռք տուաւ ինծի, զոր ևս սեղմեցի. նա ինծի ողջոյն մը տուաւ ու մեկնեցաւ:

— Չմոռնաս, — ըսաւ ինծի հայրս, — վասն զի հազարաւոր ձեռքերու մէջ՝ զորս կեանքիդ մէջ պիտի սեղմես՝ գուցէ տասն հատ չգտնուին որ անոր չափ արժեն:

# ԱՊԵՆԻՆԵԱՆՆԵՐԷՆ

## ՄԻՆՁԵՒ ԱՆԳԵԱՆՆԵՐԸ

(Ս. Բարսեղյ պատմութիւն)



**Շ**ԱՍ տարի առաջ տասներեք տարեկան ճենոփայի աղայ մը, գործաւորի մ'որդին, ճենոփայէն Ամե-

րիկա գնաց, — մինակ, — իր մայրը փնտռելու համար:

Իր մայրն երկու տարի առաջ Պուէնսո Ս. յրէս գացած էր, Արձէնթինայի Հասարակապետութեան մայրաքաղաքը, հարուստ տան մը մէջ ծառայութեան մտնելու, և այս կերպով քիչ ժամանակի մէջ այնչափ շահելու համար՝ որ կարենար ընտանիքը վերա-

կանգնել, որ այլ և այլ գժբազդութեանց պատճառաւ ազբատութեան մէջ և պարտքերու տակ ինկած էր: Շատ քաջասիրտ կիներ կան՝ որոնք

այդ նպատակով երկար ճանապարհորդութիւններ կ'ընեն, և շնորհիւ գործաւոր դասակարգին հոն գտած առատ վճարումներուն, քիչ տարի վերջ հայրենիք կը վերադառնան քանի մը հազար ֆրանսքով: Խեղճ մայրն արիւն արցունք թափած էր որդիներէն բաժնուելու ժամանակ, մին տասն և ութ և միւսը տասն և մէկ տարեկան. բայց քաջասրտութեամբ և յուսալից մեկնած էր: Ճամբորդութիւնն յաջող եղած էր. հազիւ Պուէնսո Ս. յրէս հասած, ճենոփայի խանութպանի մը միջոցով, որ իր ամուսնոյն հօրեղբորորդին էր և շատ ժամանակէ ի վեր հոն հաստատուած, արձէնթինայի բարի ընտանիք մը գտաւ, որ իրեն առատօրէն կը վճարէր և ազնուութեամբ կը վարուէր հետը: Եւ քիչ մը ժամանակ իրեններուն հետ կանոնաւոր թղթակցութիւն ունեցեր էր: Ինչպէս մէջերնին յարմարացեր էին, ամուսինն՝ իր նամակները հօրեղբորորդւոյն կ'ուղարկէր, որ զանոնք կնոջ կը յանձնէր, և կինն ալ պատասխաններն անոր կու տար, որ զանոնք ճենոփա կ'ուղարկէր՝ վրան քանի մը տող աւելցնելով: Ամիսն ութսուն ֆրանք շահելով և իրեն համար ծախս մը չընելով, ամէն երեք ամիսն անգամ մը բաւական մեծ գումար մը տուն կ'ուղարկէր, որով ամուսինը, որ համեստ մարդ մ'էր, հեռզհեռէ ամենէն ստիպողական պարտքերը կը վճարէր, և այսպէս իր բարի համբաւը կը վերականգնէր: Եւ մի և նոյն ժամանակ կ'աշխատէր և գոհ էր իր գործերէն, յուսով միանգամայն թէ քիչ ատենէն կինն ալ պիտի վերադառնար, վասն զի առանց անոր տունը

դատարկ կ'երևէր, և մասնաւորապէս կրօսքեր որդին, որ չափազանց իր մայրը կը սիրէր՝ կը արբէր, չէր կրնար անոր բացակայութեան համակամել:

Սակայն մեկնելէն տարի մը վերջ, համառօտ նամակ մ'ընդունեցան՝ որուն մէջ կ'ըսէր նա թէ քիչ մը տկար էր, յետոյ այլ ևս ուրիշ չընդունեցան: Երկու անգամ հօրեղբօրորդւոյն գրեցին, որ չպատասխանեց: Արձէնթինացի ընտանեաց գրեցին, ուր կինը կը ծառայէր. սակայն գուցէ նամակը հասած չէր, որովհետև հասցէին վրայ անունը սխալ գրած էին, պատասխան մը չընդունեցան: Գժբաղդութենէ մը վախնալով, Պուէնօս Այրէսի խաղաղական Հիւպատոսին գրեցին, որ փրնտուել տայ. և երեք ամիս վերջ Հիւպատոսն իրենց պատասխանեց, թէ հակառակ ազգ մը հրատարակելուն լրագիրներուն մէջ, ո՛չ ոք ներկայացած էր, և ոչ իսկ տեղեկութիւն տարու համար անոր մասին: Եւ կարելի չէր ուրիշ կերպով պատահիլ, բայց ի ուրիշ պատճառներէ, նաև ասոր համար՝ որ իրեններուն պատիւը փրկելու մտքով, վասն զի ազախնութիւն ընելով զայն արատաւորել կը կարծէր, բարի կիներ իր ճիշդ անունը սուած չէր արձէնթինացի ընտանեաց: Ուրիշ ամիսներ ալ անցան, և ո՛չ մէկ լուր: Հայր և որդիք վհատած էին. ամենէն կրտսերը տխրութենէ մը ճնշուած էր՝ որուն չէր կրնար յաղթել: Ի՞նչ ընել: Որո՞ւ դիմել: Հօր միակ գաղափարն եղած էր Ամերիկա երթալ ու կինը փնտուել: Սակայն իր աշխատութիւնը, ո՞վ պիտի պահէր իր զաւակները: Եւ ո՛չ

իսկ կրնար երէց որդին մեկնիլ, որ արդէն դեռ նոր սկսած էր բան մը շահիլ. և ընտանեաց հարկաւոր էր: Այս տագնապով կ'ապրէին, ամէն օր մի և նոյն ցաւալի խօսակցութիւնը կը կրկնէին, կամ լուռ ու մունջ իրարու կը նայէին: Երբ վերջապէս երեկոյ մը, Մարկոս, ամենէն կրտսերը, վճռաբար ըսաւ. — Ես կ'երթամ Ամերիկա մայրըս փնտուելու: — Հայրը գլուխը ցնցեց տխրութեամբ, և պատասխան չտուաւ: Գորովալից մտածութիւն մ'էր, բայց անկարելի բան: Տասներեք տարեկան սղայ մը, մինակ, Ամերիկա ճանապարհորդել, ուր երթալու համար ամիս մը պէտք էր: Սակայն տղան պնդեց՝ համբերութեամբ: Պնդեց նոյն օրը, յաջորդ օրը, ամէն օր, մեծ հանգարտութեամբ և մտրդու մը պէս պատճառաբանելով: — Ուրիշներ գացեր են, — կ'ըսէր, — և ինձմէ աւելի փոքրներ: Անգամ մ'որ շողենաւին վրայ ըլլամ, ուրիշներուն պէս ես ալ կը հասնիմ: Հոն հասնելուս պէս, ուրիշ բան չունիմ՝ ընելիք, բայց եթէ հօրեղբօրորդւոյս խանութը փնտուել: Այնչափ խտրացիներ կան, անչուշտ մէկն ինձի ճամբան կը սովորեցնէ: Հօրեղբօրորդիս որ գտնեմ, մայրս գտնուած է. իսկ եթէ զանիկայ չգտնեմ, Հիւպատոսին կ'երթամ, և արձենթինացի ընտանիքը կը փնտուեմ: Եթէ ո՛ր և է բան պատահի, հոն ամենուն համար գործ կայ. ես աշխատութիւն մը կը գտնեմ, գտնէ տուն դառնալու գրամն շահելու չափ: — Եւ այս կերպով, կամաց կամաց, յաջողեցաւ գրեթէ իր հայրը համոզելու: Հայրը զինք շատ կը յարգէր, գիտէր թէ խելք ու քաջասրտութիւն

ունէր, թէ նեղութեանց ու զրկանքներու վարժուած էր, և թէ բոլոր այս բարի յատկութիւնները կրկին ոյժ պիտի աւնէին անոր սրտին մէջ՝ իր պաշտելի մայրը գտնելու սրբազան նպատակին համար: Սակէ զատ շոգենաւի հրամանատար մ'ալ, որ իր մէկ ծանօթին բարեկամն էր, այս բանիս վրայ խօսուելը լսած ըլլալով, յանձն առած էր իրեն երբորդ կարգի տոմսակ մը ճարել Արճենի թիւնայի համար: Եւ այն ժամանակ, քիչ մ'ալ տատանելէ վերջ, հայրը հաւանեցաւ և ճանապարհորդութիւնն որոշուեցաւ: Իրեն պարկ մը զգեստ լեցուցին, գրպանը քիչ մը գրամ գրին, հօրեղբօրորդւոյն հասցէն տուին, և ապրելի գեղեցիկ իրիկուն մը զինք շոգենաւ գրին: — Որդեակ իմ՝ Մարկոս, — ըսաւ իրեն հայրը վերջին համբոյրը տալով, աչքերն արցունքով լի, շոգենաւին սանդուղին վրայ՝ որ շուտով պիտի մեկնէր. — քաջ եղիր: Սրբազան նպատակի մը համար մեկնէ՛ և Աստուած քեզի պիտի օգնէ:

Խեղճ Մարկոս: Եւ զօրաւոր սիրտ ունէր այն ճամբորդութեան համար ամենախիստ նեղութեանց ալ պատրաստուած. բայց երբ իր գեղեցիկ ձենովային աներևութանալը տեսաւ հորիզոնին վրայ, և ինքզինք ըսնատարած ծովին մէջ գտաւ, գեղացի գաղթականներով խոնուած այն մեծ շոգենաւին վրայ, միայնակ, անծանօթ ամենուն, այն փոքրիկ պարկով, որուն մէջ էր իր բոլոր հարստութիւնը, անակընկալ վհատութիւն մ'եկաւ վրան: Երկու օր շարունակ ցուակին կողմը շան մը պէս

կծկած մնայ, գրեթէ առանց ուտելու, լալու ամենամեծ պէտքէ ճնշուած: Սմէն տեսակ տխուր մտածութիւններ մտքէն կ'անցնէին, և ամենէն արխուրը, ամենէն սոսկալին էր այն յամառ սեւեռումը մտքին, թէ իր մայրը մեռած ըլլայ: Իր ընդհատ ու չարասանջ քուներուն մէջ միշտ անծանօթի մ'երեսը կը տեսնէր, որ իրեն կարեկցական դէմքով մը կը նայէր և յետոյ ականջէն կ'ըսէր. — Մայրդ մեռած է: — Եւ այն ժամանակ խզուկ աղաղակով մը կ'արթննար: Սակայն և այնպէս, ճիպրալթարայի նեղուցն անցնելով, առաջին անգամ՝ Ատրանտեան Ովկիանոսը տեսնելով գարձեալ քիչ մը սիրտ ու յոյս առաւ: Սակայն կարճ տիտիանք մ'եղաւ: Այն միշտ միապագաղ անհուն ծովը, աճող ջերմութիւնը, զինք չընկալաւ այն բոլոր աղքատ մարդկան տխրութիւնը, բացարձակ միայնութեան զգացումը՝ կրկին զինք յուսալից ըրին: Օրերը, որոնք անգործ ու միօրինակ իրարու կը յաջորդէին, իր յիշողութեան մէջ կը չփոթուէն, ինչպէս կը պատահի հիւանդներուն: Տարիէ մ'ի վեր ծովուն վրայ ըլլալ կը թուէր իրեն: Եւ ամէն առտու, արթննալով, նոր երկիւղ մը կը զգար հոն միայնակ ըլլալուն վրայ, ջրոյ այն անհունութեան մէջ, դէպ ի Ամբրիկա ճամբորդութեան մէջ: Թուշոյ գեղեցիկ ձկները, որոնք կու գային մերթ շոգենաւին վրայ ինչպէս, այն հրաշալի արեաղարձային մայրամուտները՝ ահագին հրաշէկ և արիւնամերկ ամպերով, և այն գիշերային փոստորականութիւններն, որոնք լաւայի ծովու մը պէս բոլոր ովկիանոսը բռնկած

ցոյց կու տան, իր վրայ իրականի անպատուութիւն չէին ընէր, այլ իբր երազի մէջ տեսած հրաշալիքներու: Գէշ օգով օրեր ունեցաւ, որոնց տեղութեանց ժամանակ ննջարանին մէջ շարունակ փակուած մնաց, ուր ամէն բան կը պարէր ու կը տապալէր, սոսկալի ողբերու և անէծքներու խմբերգի մը մէջ. և իր վերջին ժամը հասած կարծեց: Ապա կրկին հանդարտ ու գեղնորակ ծով մը, անասանելի տաքեր, անսպառ ձանձրութեան օրեր ունեցաւ. անվերջանալի և ձախող ժամեր, որոնց մէջ ճանապարհորդները յոգնած, անշարժ տարածուած ստոյներուն վրայ, ամէնքը մեռած կը կարծուէին: Եւ ճամբորդութիւնը բնաւ չէր վերջանար. ծով և երկինք, երկինք և ծով, այսօր՝ ինչպէս երէկ, վաղն՝ ինչպէս այսօր, — դարձեալ, — միշտ, — յաւիտենապէս: Երբ նա երկար ժամերով շոգենաւի եզերքին կռթնած կը կենար՝ գիտելու համար այն անծայր ծովը, ընդարմացած, անորոշ կերպով մտածելով իր մօր վրայ, մինչև որ աչքերը կը փակուէին և քունէն գլուխը վար կ'իյնար, և այն ատեն նորէն կը տեսնէր այն անծանօթ գէժքը, որ գլխութեան աչքով մ'իրեն կը նայէր և սկանջէն կը կրկնէր. — Քու մայրդ մեռած է, — և այն ձայնէն սարսուռով կ'արթննար՝ դարձեալ սկսելու համար աչքաբաց երազել և անփութիս հորիզոնը գիտել:

Քսան և եօթն օր տեղց ճամբորդութիւնը: Բայց վերջին օրերը լաւագոյն եղան: Օգը գեղեցիկ էր և զով: Ինք լամպարտացի ծերունիի մը հետ

ծանօթութիւն հաստատած էր, որ Ամերիկա կ'երթար գտնելու իր որդին, Ռօզարիոյ քաղաքին քով մշակ մը. ինք բոլոր իր տան բաներն անոր պատմած էր, և ծերունին ստէպ կը կրկնէր՝ մէկ ձեռքով իր ծոճրակին զարնելով. — Քաջասիրտ եղիւր, սրդեակ, դու մայրդ առողջ և գոհ պիտի գտնես: — Այն ընկերութիւնը զինք կը մխիթարէր, իր ախօժը նախազգացումները՝ զուարթութեան փոխուած էին: Նաուեն առաջակողմը նըստած, գիւղացի ծերունիին քով՝ որ ծխափողը կը քաշէր, աստղազարդ գեղեցիկ երկնքի մը տակ, զաղթականներու խումբի մը մէջ՝ որոնք կ'երգէին, ինք հարիւր անգամ իր մտքին առջև կը բերէր իր Պուէնօս Այրէս հասնիլը, ինքզինք այնչինչ ճամբուն մէջ կը տեսնէր, խանութը գաած՝ հօրեղբօրորդւոյն առջևը կը վազէր. — Ինչպէս է մայրս: Ո՞ւր է: Շ՞ուտ երթանք: — Շ՞ուտ երթանք. — միասին կը վազէին, սանդուղ մը կ'ելնէին, դուռ մը կը բացուէր... Եւ հո՞ս իր համբմենախօսութիւնը կը դադրէր, իր երեակայուած թիւնն անբացատրելի խանդաղատիչ զգացումի մը մէջ կը կորսուէր, որ իրեն ծածուկ դուրս հանել կու տար մետաղ մը՝ զոր փիղէն կախած էր, և զայն համբուրելով իր աղօթքները կը մրմնջէր:

Մեկնելէն քսան և եօթն օր վերջ հասան: Մայիսի գեղեցիկ կարմիր արշալոյս մ'էր, երբ շոգենաւր խարխախ կը ձգէր Փլաթայի լայնատարած գետին մէջ, որուն մէկ եզերքին վրայ կը տարածուէր Պուէնօս Այրէս քաղաքին տեսարանը, Արձէնթինա Հասարակապետութեան մայրաքաղաքը:

Այն հրաշալի օգը՝ իրեն բարեմաղթութիւն մը թուեցաւ: Անհամբերութենէն և ուրախութենէն ինքնիրմէ դուրս ելած էր: Իր մայրը քանի մը մղոն միայն հեռի էր իրմէ: Քիչ ատենէն զանկապ պիտի կարենար տեսնել: Եւ ինք կը գրտնուէր Սմերիկա, նոր աշխարհին մէջ, և քաջութիւնն ունեցեր էր հոն մինակ գալու: Բոլոր այն երկար ճամբորդութիւնը՝ իրեն կը թուէր թէ ոչինչ ժամանակի մը մէջ անցած էր: Կը կարծէր՝ երազի մէջ թռած ըլլալ և այն տեղ արթնցած: Եւ այնպէս երջանիկ էր, որ ո՛չ զարմացաւ, ո՛չ վշտացաւ, երբ գրպաններուն մէջ պրփոտեց ու բնաւ չգտաւ այն երկու կոյտերէն մէկը՝ որոնց մէջ բաժնած էր իր փոքրիկ գանձը, բոլորը միասին չկորսնցնելու աւելի ապահովութիւն ունենալու համար: Չանտէք իր քովէն գողցած էին, և քանի մը ֆրանք միայն ունէր գրպանը. բայց ի՞նչ հոգն էր, հիմա որ իր մօր մօտեցեր էր: Իր պարկը ձեռքը, ուրիշ բազմաթիւ խտաբայիններու հետ շոգեմակոյկի մը մէջ իջաւ, որ զիրենք տարաւ և գետեղերքէն քիչ մը հեռու կեցուց, շոգեմակոյկէն նաւակի մը մէջ իջաւ, որ Անգրէա Տօրիա կը կուչուէր, նաւամատոյցին վրայ դուրս ելաւ, իր լուսպարտացի ծերունի բարեկամն ողջունեց, և խոշոր քայլերով դէպ ի քաղաք ուղղուեցաւ:

Սուսլին ճանապարհադարձը հասնելուն՝ մարդ մը կեցուց որ կ'անցնէր և աղաչեց որ ցոյց տայ թէ որ կողմէն կրնար լուս Արքիս փողոցն երթալ: Բարեբախտաբար կեցուցածն իտալացի գործաւոր

ւոր մ'էր: Ասիկայ հետաքրքրութեամբ իր երեսը նայեցաւ և հարցուց թէ կարդալ գիտէր: Տղան նշանացի ըրաւ թէ, այո՛: — Շատ լաւ, — ըսաւ գործաւորը՝ իրեն այն ճամբան ցոյց տալով ուսկից ինք դուրս կ'ելնէր, — միշտ ուղղակի վեր գնա՛, ամէն անկիւն փողոցներուն անունները կարգալով, վերջապէս փնտաւածդ պիտի գտնես: — Տղան շնորհակալ եղաւ և իր առջև բացուող ճամբան բռնեց:

Ուղիղ ու անվերջանալի ճամբայ մ'էր, սակայն նեղ, երկու կողմը ցած ու սպիտակ տուներով, որոնք կարծես փոքր ամարանոցներ էին. մարդիկ ներով, կառքերով, խոշոր սայլերով լի, որ խրացուցիչ ազմուկ մը կը հանէին. և հոս ու հոն գոյնզգոյն ահագին դրօշներ կը ծածանէին, որոնց վրայ խոշոր տառերով դէպ ի անձանթ քաղաքներ մեկնող շոգենաւներու ազգերը գըրուած էին:

Սմէն քանի մը քայլափոխին, աջ ու ձախ դառնալով, նա ուրիշ երկու ճամբաներ ալ կը տեսնէր՝ որ ուղիղ կ'ելեկնային աչք կտրելու չափ, անտէք ևս ցած ու սպիտակ տուներով եղերուած, և բազմութեամբ ու կառքերով լի, և խորը՝ ամերիկեան անձայր դաշտագետնին ուղիղ գծէն կտրուած, նման ծովու հորիզոնին: Քաղաքն իրեն անվերջանալի կը թուէր. կը կարծէր թէ կրնար օրեր ու շաբաթներ քալել՝ հոս ու հոն ուրիշ նման ճամբաներ տեսնելով, և թէ բոլոր Սմերիկան այդպիսի փողոցներով լի էր: Ուշադրութեամբ ճամբաներուն անունները կը նայէր, տարօրինակ

անուններ՝ զորս դժուարութիւն կը կրէր կարգալու։ Ամէն նոր ճամբու, սիրտը բարախել կը սկսէր, մտածելով թէ իր փնտռածը պիտի ըլլար։ Բոլոր կիներուն կը նայէր՝ իր մայրը տեսնելու գաղափարով։ Իր առջև հաս մը տեսաւ՝ որ իր արիւնն եռացուց, քովը վազեց ու նայեցաւ, սեամբր թ կին մ'էր։ Եւ կ'երթար ու կ'երթար, քայլերն երազելով։ Զանազան ճամբաներու կից մը հասաւ. կարգաց, և կարծես մայրին վրայ գամուած մնաց. Արուեստներու փողոցն էր։ Ետև դարձաւ, տեսաւ 117 թիւը, հօրեղբորդուցն խանութը՝ 175 թիւն էր։ Գեռ աւելի երազեց քայլը, գրեթէ կը վազէր. 171 թիւին առջև հարկադրուեցաւ կենտրոն շունչ առնելու համար։ Եւ ըստ ինքն իրեն. — Ո՛վ մայր իմ, մայր իմ։ Արդեօք ստոյգ է թէ քանի մը վայրկեանէն դքեղ պիտի տեսնեմ։ — Յառաջ վազեց, փերեզակի փոքր խանութ մը հասաւ։ Անիկայ էր։ Գլուխը ներս երկնցուց։ Գորշ մազերով ու ակնոցաւոր կին մը տեսաւ։

- Ի՞նչ կ'ուզես տղայ, — հարցուց նա սպանիական լեզուով։
- Ասիկայ չէ՞, — ըստ տղան, դժուարելով ձայնը դուրս հանել, — Ֆրանչէսքոյ Մէրէլի խանութը։
- Ֆրանչէսքոյ Մէրէլի մեռաւ, — ըստ կինն իտալերէն լեզուով։
- Տղան սաստիկ ցնցում մը զգաց ներսը։
- Ե՞րբ մեռաւ։
- Ո՛հ, բաւական ժամանակէ ի վեր, — պա-

տասխանեց կինը. — ամիսներ առաջ։ Գործերը գէշ գնաց, փախաւ։ Կ'ըսեն թէ Պահիա Պրանքա գացած ըլլայ, ասկից շատ հեռու։ Եւ հոն հասնելուն պէս մեռաւ։ Խանութն իմն է։

Տղան գոյնը նետեց։  
 Յետոյ ըստ խոյն. — Մէրէլի իմ մայրս կը ճանչնար, մայրս հո՛ս պարոն Մէքուինէցի քով կը ծառայէր։ Այն միայն կրնար ըսել ինծի մօրս ո՛ւր ըլլալը։ Ես Ամերիկա եկայ մայրս փնտռելու համար։ Մէրէլի իր նամակները կ'ուղարկէր։ Ես մայրս գտնելու պէտք ունիմ։

— Խեղճ տղայ, — պատասխանեց կինը, — ես չեմ գիտեր։ Գաւթի տղուն կրնամ հարցնել։ Նա կը ճանչնար այն երիտասարդը՝ որ Մէրէլիին գործակատարութիւն կ'ընէր։ Կրնայ ըլլալ որ տեղեկութիւն մ'ունենայ։

Խանութին խորը գնաց և տղան կանչեց, որ խոյն եկաւ. — Ըսէ՛, ինծի, — հարցուց իրեն խանութպան կինը, — կը յիշե՞ս որ Մէրէլի երիտասարդը, երբեմն նամակ տանելու կ'երթար աղախինի մը՝ որ Ռայրենիքի գաւախներ կոչուած տան մէջ էր։

— Պարոն Մէքուինէցի քով, — պատասխանեց տղան, — այո՛ տիկին, քանի մ'անգամներ։ Արուեստներու փողոցին խորը։

— Ո՛հ, տիկին, չնորհակալ եմ, — գոչեց Մարկոս։ — Թիւն ըսէ՛ ինծի... չե՞ս գիտեր։ Առաջնորդէ ինծի, — շուտով առաջնորդէ, տղայ. — ես գեռ գրամ ունիմ։

Եւ այս այնպիսի եռանդով մ'ըստ, որ առանց



կնոջ խնդրանքին սպասելու, տղան պատասխանեց.  
— Երթանք. — և առաջին անգամ ինք աշխուժ  
քայլերով դուրս ելաւ:

Գրեթէ վազերով, առանց խօսք մ'ըսելու, մինչև  
երկար ճամբուն խորը գացին, սպիտակ տնակի  
մը նեղ անցքը մտան, և գեղեցիկ երկաթէ վան-  
դակի մ'առջև կանգ առին, ուսկից փոքր գուլթի  
մը կը տեսնուէր՝ ծաղկամաններով լեցուն: Մար-  
կոս զանգակիկին վրայ յարձակեցաւ:

Օրիորդ մ'երեցաւ:

— Հո՞ս կը կենայ Մէքուլինէց ընտանիքը. այն-  
պէս չէ՞ — հարցուց անձկանօք տղան:

— Հոս կը կենար, — պատասխանեց օրիորդը,  
սպանիացւոյ պէս հնչելով խաղերէնը: — Հիմա  
մենք կը կենանք, Ծէպալլոս ընտանիքը:

— Ո՞ւր գնացին Մէքուլինէցները, — հարցուց  
Մարկոս, սրտատրոփ:

— Քօրտովա մեկնեցան:

— Քօրտովա, — բացագանչեց Մարկոս: —  
Ո՞ւր է Քօրտովա: Եւ այն իրենց ունեցած ա-  
զախի՞նը, կի՞նը, իմ մայրս: Սպասուհին իմ մայրս  
էր: Մայրս ալ միասին տարին:

Օրիորդն իրեն նայեցաւ և ըսաւ. — Չեմ գի-  
տեր: Թերևս հայրս գիտնայ, որ զիրենք ճանչցաւ  
մեկնելու ժամանակնին: Սպասեցէք վայրկեան մը:

Շտապեց, և քիչ յետոյ հօր հետ վերագարձաւ.  
բարձրահասակ պարսն մ'էր՝ գորշ մօրուքով: Նա  
վայրկեան մը սեւեռած նայեցաւ այն ճենովացի  
գորշագէս և արծուեռունգ փոքրիկ նաւաստիի հա-  
մակրելի գէմքին և խեղճ խաղերէնով մը հարցուց  
իրեն. — Մայրդ ճենովացի՞ էր:

Մարկոս պատասխանեց թէ, այո՛:

— Շատ լաւ, ճենովացի սպասուհին ալ միա-  
սին գնաց, ստոյգ գիտեմ:

— Ո՞ւր գնացին:

— Քօրտովա, քաղաք մը:

Տղան հառաչանք մ'արձակեց. յետոյ ըսաւ հա-  
մակամած. — Այն ժամանակ... պէտք է Քօրտովա  
երթամ:

— Ո՞հ, խեղճ փոքրիկ, — բացագանչեց պա-  
րոնը, գլծութեամբ մ'իրեն նայելով: — Խեղճ  
տղայ: Ասկից հարիւրաւոր մըն հեռու է Քօրտու-  
վա:

Մարկոս մեռելի մը պէս գունաթափ եղաւ, և  
մէկ ձեռքով վանդակազրան կռթնեցաւ:

— Նայինք, նայինք, — ըսաւ այն ժամանակ  
պարոնը, կարեկցութիւնը շարժած, գուռը բա-  
նալով, — ներս եկու՛ր վայրկեան մը, նայինք քիչ  
մը թէ կարելի՞ է բան մ'ընել: — Նստաւ, զինք  
ալ նստեցուց, իր պատմութիւնն ընել տուաւ,  
մեծ ուշադրութեամբ լսեց, քիչ մը մտածեց, յե-  
տոյ վճռական կերպով ըսաւ. — Դու գրամ՝ չու-  
նիս, այնպէս չէ՞:

— Դեռ ունիմ... քիչ մը, — պատասխանեց  
Մարկոս:

Պարոնը հինգ վայրկեան ևս մտածեց, յետոյ  
գրասեղանի մ'առջև նստաւ, նամակ մը գրեց,  
փակեց, և տղուն յանձնելով, ըսաւ. — Լսէ՛, փո-  
քրիկ խաղացի: Այս նամակով Պօքոս գնա՛: Կէս  
ճենովական փոքր քաղաք մ'է, ասկից երկու ժա-  
մուան ճամբայ: Ամէն մարդ կրնայ ճամբան քեզի

ցուցնել: Գնահ հոն և այս պարոնը փնտռէ, որուն նամակս ուղղուած է, և որ ամենուն ծանօթ է: Իրեն յանձնէ ասիկայ: Նա վաղը զքեզ գէպ ի Ռօզարիոյ ճամբայ կը գնէ, և հոն զքեզ մէկու մը կը յանձնարարէ, որ քեզի մինչև Քօրտովա կ'առաջնորդէ, ուր Մէքուինէց ընտանիքն ու մայրդ պիտի գտնես: Այս այժմ, սու ասիկայ: — Եւ քանի մը ֆրանք ձեռքը դրաւ: — Գնահ, և քաջասիրտ եղիւր. հոս ամէն կողմ հայրենակիցներ ունիս, երեսի վրայ չես մնար: Երթան բարեաւ:

Տղան, — Շնորհակալ եմ, — ըսաւ անոր, առանց ուրիշ բառեր գտնելու, դուրս ելաւ իր պարկով, և բաժնուելով իր փոքրիկ առաջնորդէն, դանդաղաքայլ գէպ ի Պօքա ճամբայ ելաւ, տխրութեամբ ու զարմանքով լի, ազմկալից մեծ քաղաքին մէջէն անցնելով:

Այն վայրկենէն սկսեալ մինչև յաջորդ աւուր իրիկունն ինչ որ իրեն պատահեցաւ, յետոյ իր յիշողութեան մէջ չփոթ ու անորոշ մնաց՝ իբրև ջերմէ բռնուածի մը ցնորքները, այնչափ նա յոգնած, խռոված, վհատած էր: Եւ յաջորդ օրը, մի ըննարու մօտ, յետ գիշերը քնանարու Պօքայի անակներէն միոյն մէջ, նաւահանգստի բեռնակիրներէն մէկուն քով, — գրեթէ բոլոր օրը գերաններու կոյտի մը վրայ նստած անցընելէն վերջ, և հազարաւոր նաւերու, բեռան նաւակներու և շոգեմակոյկներու առջև գրեթէ ցնորած, — պըտզարած առազաստաւոր խոշոր նաւակի մ'ետևի կողմը կը գտնուէր, որ գէպ ի Ռօզարիոյ քա-

ղաքը կը մեկնէր, արեւն պղնձի գոյն առած երեք քաջակազմ՝ ձեռովացիներու առաջնորդութեամբ. որոնց ձայներն և իրեն սիրած գաւառական լեզուն զոր կը խօսէին՝ քիչ մ'իւր սրտին մէջ մխիթարութիւն ներշնչեց:

Մեկնեցան, և ճանապարհորդութիւնն երեք օր և չորս գիշեր տեւեց, և փոքր ճանապարհորդին համար յարատե զարմանք մ'եղաւ: Երեք օր և չորս գիշեր՝ այն հրաշալի փարանա գետին վրայէն, որու բազդատմամբ մեր Փոն ուրիշ բան չէ՛ բայց եթէ առուակ մը, և իտալիոյ չորս անգամ երկայնութիւնը դեռ անոր ընթացքին չհաւասարիր: Առազաստանաւը՝ դանդաղ, մանուածապատ յառաջ կը սուրար այն անասման ջրոյն վրայէն: Օձերու և վագրերու բնակարան, նարնջենիներով և ուռենիներով ծածկուած, տատանող անտառներու նման երկայն կղզիներու մէջտեղէն կ'անցնէր. և մերթ նեղ ջրանցքներու մէջ կը մտնէր, ուսկից կը կարծուէր թէ պիտի չկարենար դուրս գալ. մերթ բայնածաւալ ջուրերու վրայ կ'եղնէր՝ որ մեծ ու հանդարտ լճերու երևոյթն ունէին. յետոյ դարձեալ կղզիներուն մէջ, արշիպեղազոսի մը ծամածուռ ջրանցքներէ անցնելով, բուսականութեան վիթխարի կոյտերու մէջտեղ: Խոր լուծիւն մը կը տիրէր: Շատ անգամներ, ափունքներն և ամայի ու ընդարձակ ջրերուն տարածութիւնը՝ անծանօթ գետի մը պատկերը կու տային. որուն մէջ այն խեղճ առազաստանաւը՝ կարծես աշխարհի մէջ առաջինն էր՝ որ ինքզինք վտանգի մէջ կը գնէր: Որչափ աւելի կը յառաջէին, այն-

չափ աւելի հրէշային դետը զինք կը սարսափեցնէր: Նա կ'երևակայէր թէ իր մայրն անոր բոլոր անգերը կը գտնուի, և թէ նաւարկութիւնը տարիներ պիտի տևէր: Օրն երկու անգամ քիչ մը հաց և աղած միս կ'ուտէր նաւապարներուն հետ, որոնք զինք տխուր տեսնելով, բնաւ խօսք մը չէին ուզէր: Գիշերը նախն վրայ բացօթեայ կը քնանար, և ստէպ կ'արթննար յանկարծակի, զարմացած լուսնի պայծառ լոյսին վրայ՝ որ անհուն ջրերն ու հեռաւոր ավտանքը կը սպիտակցնէր. և այն ժամանակ իր սիրտը կը սեղմուէր: — Քօրտովա՛: — Նա կը կրկնէր այդ անունը. — Քօրտովա՛, — իբրև այն խորհրդաւոր քաղաքներէն միոյն անունը՝ որոնց վրայ լսած էր խօսուիլը՝ առասպելներու մէջ: Բայց յետոյ կը մտածէր. — Մայրս ասկից անցեր է, այս կողմներն ու այս ավտանքը տեսած է, — և այն ատեն իրեն այլ ևս այնքան տարօրինակ ու ամայի չէին տեսնուեր այն տեղերն, ուր իր մօր ակնարկները հանդիպեր էին...: Գիշերը, նաւապարներէն մին կ'երգէր: Այն ձայնը՝ մօր երգերը կը յիշեցնէր իրեն, երբ իր մանկութիւնը կը քնացնէր: Վերջին գիշերը, այդ երգը լսելով, հեծեծեց: Նաւապարն ընդհատեց: Յետոյ իրեն պոռայ. — Քա՛յ, քա՛յ եղիբ, աղայ: Ամօթ բան: Ճենովացի մ'որ կու լայ՝ տունէն հեռու ըլլարուն համար: Ճենովացիներն աշխարհի շրջանը կ'ընեն փառապանծ ու յողթական: — Եւ այն խօսքերուն վրայ նա ցնցուեցաւ, զգաց ճենովական արեան ձայնը, և խրոխտաբար ճակատը վեր բարձրացուց՝ բռունցքը զեկին վրայ

զարներով: — Լաւ ուրեմն, այո՛, — ըսաւ ինքն իրեն, — եթէ պէտք ըլլայ բոլոր աշխարհ շրջել, դեռ տարիներով ճամբորդել, և հետիոտն հարիւրաւոր մղաններ կտրել, այո՛, պիտի երթամ՝ մինչև որ մայրս գտնեմ: Եթէ նոյն իսկ պէտք ըլլայ մահամերձ հասնիլ կամ մեռած իյնալ իր ոտքերուն տակ: Սակայն թո՛ղ անգամ մը զինք տեսնեմ: Քա՛յութիւն: — Եւ այս ոգւով քաջաբերուած, վարդագոյն և ցուրտ առաւօտեան մը ծագելուն՝ հասաւ Ռօզարիոյ քաղաքին առջև, կառուցուած փարանայի բարձր ավանց վրայ, ուր ջրերու մէջ կը ցոլանային ամէն ազգաց հարիւրաւոր նաւերու դրօշակիր կայմերը:

Նաւէն ելնելէն քիչ յետոյ, իր պարկը ձեռքը դէպ ի քաղաք բարձրացաւ՝ արձենթինացի պարոն մը փնտռելու, որուն համար իր Պոքացի պաշտպանն իրեն պիտակ մը յանձնած էր, քանի մը սող յանձնարարականով: Ռօզարիոյ մտած ժամանակ, իրեն երևցաւ թէ ծանօթ քաղաք մը կը մըրտնէր: Մի և նոյն անծայր ճամբաներն էին, ուղիղ, ցած ու սպիտակ տուներով եղերուած, ամէն ուղղութեամբ տարածուած, տանիքներէն վեր՝ հեռագրական և հեռախօսական մեծախուրձ թեղեր, որոնք կարծես անթիւ սարդիոսայիններ էին. և մարդկանց, ձիերու, կառքերու ժխոր մը: Իր միտքը կը շփոթէր. դրեթէ կարծեց թէ կրկին Պուէնսոս Այրէս կը մտնէր, և անգամ մ'ևս իր հօրեղբորորդին պիտի փնտռէր: Գրեթէ ժամ մը շրջեցաւ՝ այս ու այն կողմը դառնալով, և իրեն կը

Թուէր թէ միշտ մի և նոյն տեղը կը դառնար, և սաէպ հարցնելով իր նոր պաշտարանին տունը գըտաւ: Զանգակիկը հնչեցուց: Խարտեաշ, գաժան և խոշոր մարդ մը ներկայացաւ, որ գործակատարի մը կերպն ունէր, և որ օտարահնչիւն և ամարդի կերպով հարցուց իրեն.

— Զո՞վ կ'ուզես:

Տղան աիրով անունը տուաւ:

— Տէրը, — պատասխանեց գործակատարը, — երէկ երեկոյ Պուէնտս Այրէս մեկնեցաւ բոլոր ընտանիքով:

Տղան պապանձեցաւ:

Յետոյ թոթովեց. — Բայց ես... մարդ չունիմ հոս: Մինակ եմ: — Եւ պիտակը յանձնեց:

Գործակատարը զայն առաւ, կարգաց և ըսաւ նեղըրտութեամբ. — Զեմ գիտեր ինչ ընել: Ամեն մ'երբ վերադառնան կը յանձնեմ:

— Բայց ես, ես մինակ եմ, պէ՛տք ունիմ, — բացազանչեց տղան պաղատագին:

— Է՛հ, գնա՛ բանդ, — ըսաւ միւսը. — կարծես թէ հոս Ռօզարիոյի մէջ գանուող քու հայրենիքիդ սիգարոյսերը բաւական չեն: Գնա՛, իտալիոյ մէջ քիչ մը մուրացկանութիւն ըրէ:

Եւ վանդակադուռն իր երեսին գոցեց:

Տղան հոն քարացած մնաց:

Յետոյ գանդաղ կերպով իր պարկն առաւ և դուրս ելաւ վշտացեալ սրտով, միտքը խռովայոյզ, բոպէապէս հազարաւոր տառապեցուցիչ մտածութիւններով պաշարուած: Ի՞նչ ընել, ո՞ւր երթալ: Ռօզարիոյէն մինչև Քօրտովա երկաթուղով օրուան

մը ճամբայ էր: Ինք քիչ մը դրամ միայն ունէր: Օրուան ընելիք ծախսը մէջէն հանելով՝ քովը գրեթէ ոչինչ կը մնար: Ճամբորդութեան ծախսն ուսկի՛ց գանէր: Կրնար աշխատիլ: Սակայն ինչպէս, ուսկի՛ց աշխատութիւն ուզել: Ողորմութիւն խընդրել: Մ՛հ, ո՛չ, լաւ էր մեռնիլ քան մերժուիլ, նախատուիլ, արհամարհուիլ ինչպէս քիչ առաջ. ո՛չ, երբեք, բնաւ: Եւ այս մտածութեան վրայ, և միանգամայն տեսնելով իր առջև այն ամենաերկայն ճամբան որ հեռուն անասման դաշտագետնին մէջ կ'երթար կը կորսուէր, անգամ մ'իս զգաց՝ որ քաջասրտութիւնն իրմէ խոյս կու տար, պարկը մայթին վրայ նետեց, վրան նստաւ՝ ուսերը պատին տուած, և երեսը ձեռքերով ծածկեց, առանց լարու, յուսահատ դիրքի մէջ:

Բազմութիւնն անցնելու ժամանակ սոքերով իրեն կը զարնէին. կառքերն ազմուկով ճամբան կը լեցնէին. քանի մը ազաք կեցան իրեն նայելու: Ինք ժամանակ մ'այսպէս մնաց:

Յանկարծ ձայնէ մը ցնցուեցաւ՝ որ կէս խաւերէն՝ կէս լոճպարտերէն ըսաւ իրեն. — Ի՞նչ ունիս, տղայ:

Գլուխը վեր առաւ այն խօսքերուն վրայ, և իսկոյն սոքի ցատկեց զարմանքի բացազանչութիւն մ'ընելով. — Գո՛ւք հոս:

Լոճպարտացի ձերունի գիւղացին էր, որուն հետ բարեկամութիւն հաստատած էր ճանապարհորդութեան մէջ:

Ոչ նուազ եղաւ նաև գիւղացւոյն զարմանքը: Բայց տղան ժամանակ չձգեց, որ նա իրեն հարցը-

նէ, և արագութեամբ իր գլխէն անցածները պատմեց անոր: — Ահա առիկ, հիմա առանց դըրամի եմ. պէտք եմ աշխատիլ. ինծի գործ մը գտէք որ կարենամ քանի մը ֆրանք շահիլ. որ և իցէ աշխատութիւն կ'ընեմ. բեռնակրութիւն կ'ընեմ, ճամբաները կը մտքբեմ, յանձնարարութիւններ կը կատարեմ, գաշտի մէջ ալ կ'աշխատիմ. սե հաց մը շահելով գոհ կ'ըլլամ. բաւական է որ կարենամ շատ մեկնիլ, կարենամ անգամ մը մայրս գտնել, այս շնորհքն ըրէք ինծի, աշխատութիւն մը գտէք, ի սէր Աստուծոյ, որ այլ ևս չեմ կրնար դիմանալ:

— Զարմանալի բան, զարմանալի բան, — ըսաւ գիւղացին չորս կողմը նայելով և կզակը քերելով: — Ինչ պատմութիւն է ասիկայ...: Աշխատիլ... գիւրբին կ'ըսուի: Տեսնենք քիչ մը: Արդեօք կարելի չէ երեսուն ֆրանք գտնել այնչափ հայրենակիցներոջ մէջ:

Տղան անոր կը նայէր, յոյսի նշուրով մը մխիթարուած:

— Ինծի հեռ եկուր, — ըսաւ իրեն գիւղացին:

— Ո՛ւր, — հարցուց աղան, պարկն առնելով:

— Ինծի հեռ եկուր:

Գիւղացին շարժեցաւ. Մարկոս անոր հետեւեցաւ, միասին բաւական տեղ քաղցին՝ առանց խօսելու: Գիւղացին ճաշարանի մը դրան առջև կանգ առաւ, որ աստղանիչ նշանակ մ'ունէր՝ այս արձանագրութեամբ. — Ասող իտալիոյ. — գըլուխը ներս երկնցուց և գէպ ի սղան գառնարով

ըսաւ ուրախութեամբ. — Ճիշդ ժամանակին հասանք: — Մեծ սենեակ մը մտան, ուր զանազան ստոլներ կային, և բազմութիւն մը նստած՝ կը խըմէին՝ բարձրաձայն խօսելով: Լոմպարտացի ծերունին առաջին ստոլին մօտեցաւ, և ողջունելու կերպէն՝ վեց յաճախորդներն որ շուրջը բոլորած էին՝ կը հասկցուէր թէ արդէն քիչ մ'առաջ իրենց ընկերութեան մէջ գտնուէր էր: Գէմքերնին կարմրած էր, և պոռալով ու խնդալով գաւաթները կը հնչեցնէին:

— Ընկերներ, — ըսաւ լոմպարտացին առանց այլեայլի, ոտքի վրայ մնալով և Մարկոսը ներկայացնելով. — Հո՛ս մեզ հայրենակից աղքատ աղայ մը կայ, որ միայնակ ճ'ենովայէն Պուէնոս Այրէս եկած է իր մայրը փնտռելու: Պուէնոս Այրէսի մէջ իրեն կ'ըսեն. — Հո՛ս չէ. Քօրտովա կը գտնուի: — Նաւով Ռօզարիոյ կու գայ, երեք օր երեք գիշեր ձամբորդելով, երկու տող յանձնարարութեամբ. թուղթը կը ներկայացնէ, իրեն գէշ երես մը ցոյց կու տան: Հարիւրորդ մ'իսկ չունի: Հո՛ս մինակ է յուսահատի մը պէս: Բարեսիրտ տղեկ մ'է: Զձեզ տեսնեմ: Այնչափ դրամ պիտի չգտնայ՝ որ կարենայ տոմս մը վճարել և Քօրտովա երթալ իր մայրը գտնելու համար: Արդեօք պէտք ենք շան մը պէս հոս թողո՞ւլ գինք:

— Կարելի բան չէ, քան լիցի: — Ասիկայ ըսելու խօսք է, — գոչեցին միաբերան, բառնցքնին ստոլին վրայ զարնելով: — Մեր հայրենակից մը: — Հոս եկուր, պզտիկ: — Հո՛ս ենք, մենք գաղթականներս: — Նայէ՛ ինչ գեղեցիկ լաճ է: Դրամ

հանեցէք ընկերներ: — Կեցցէ: Մինակ եկած: Քաջասիրտ տղայ: — Խո՛մէ՛ ումպ մը, նայրենաւ կից: — Մի՛ մտածեր, գրեզ մօրդ կը գրկենք: — Եւ մէկն իրեն այտերուն կամիթ մը կու տար, ուրիշ մը ձեռքն ուտերուն կը զարնէր, երրորդ մը կանակին պարկը վար կ'առնէր, ուրիշ գողթաւ կաններ մտակայ ստոյներէն կ'եղնէին ու կը մօտենային. տղուն պատմութիւնը պանդոկին մէջ տարածուեցաւ. մօտի սենեկէն երեք արձէնթիւնացի յաճատորդներ վազեցին. և տօսն վայրկեան չանցած՝ լոմպարտացի ծերունին որ զլսարկը բռններ էր, քառասուն և երկու ֆրանք հաւաքեց: — Տեսա՞ր, — ըսաւ այն ատեն, տղուն գառնարով, — ինչպէս շատով կ'ըլլայ Ամերիկայի մէջ: — Խո՛մէ՛, — պոռաց իրեն ուրիշ մը, գաւաթ մը գինի հրամցնելով. — Քու մօրդ կենացը: — Ամէնքը գաւաթնին բարձրացուցին: — Եւ Մարկոս կրկնեց. — Ի՞մ մօրս... կե...: — Բայց ուրախութեան հեծկրտուք մը կսկորդը փակեց, և գաւաթը ստոյլին վրայ դնելով՝ իր ծերունիին վիզը փաթթուեցաւ:

Յաջորդ առաւօտ, արևմազին, նա արգէն գէպ ի Ֆօրտոպա մեկնած էր, համարձակ և ժպտուն, երջանիկ նախազգացումներով լի: Բայց չկայ ուրախութիւն՝ որ բնութեան ինչ ինչ ձախորդ պարագաներուն առջև երկար գիմանայ: Օդը մնայլ էր ու ամպոտ. կառախումբը կարծես գրեթէ դատարկ՝ կը վազէր անհուն գաշտագեանի մը մէջէն, ուր բնակութեան հետքն անգամ չկար: Ինք

մինակ էր ամենաերկայն կառքի մը մէջ, որ վերաուորեալներու կառախումբներուն կը նմանէր: Աջակողմը կը նայէր, ձախակողմը կը նայէր, և անվերջ ամայութիւն մը միայն կը տեսնէր, բուներէն ու ճիւղերէն ծոմուկած տձև փոքր ծառեր այս ու այն կողմը ցրուած, գրեթէ զայրութի ու անձկութեան բոլորովին անսովոր կեցուածքով մը. մթազոյն, ցանցառ և ախուր բուսականութիւն մը, որ դաշտագեանին՝ անծայր գերեզմաննոցի մ'երևոյթը կու տար: Կէս ժամ կը մրափէր, դարձեալ կը գիտէր, միշտ մի և նոյն տեսարանն էր: Երկաթուղոյն կայարարաններն ամայի էին, ճգնաւորներու տուներու պէս. և երբ շոգեկառքը կը կենար՝ ձայն մը չէր բուեր. իրեն կը թուէր թէ անապատի մը մէջ անխնամ թողուած, մոլորած կառախումբի մը մէջ մինակ կը գտնուէր: Կը կարծէր թէ ամէն կայարան վերջինը պիտի ըլլար, և անկից վերջ՝ վայրենիներու երկիւղալից և խորհրդաւոր երկիրներու մէջ պիտի մտնէր: Պազ հով մ'իր երեսը կը կծէր: Ապրիլին վերջերը Ճենովայի մէջ զինք ձամբայ դնելով, իրենները մտածած չէին թէ ինք Ամերիկայի մէջ ձմեռ պիտի գտնէր, և ամրան զգեստ հագուեցուցեր էին իրեն: Քանի մը ժամ վերջ, սկսաւ ցուրաբ զգալ, և ցուրտին հետ՝ անցած օրերուն յոգնածութիւնը՝ լի սաստիկ յուզումներով և անքուն ու տառապալից գիշերներով: Քնացաւ, երկայն առտեն քնացաւ, ցուրտէն փայտացած արթնցաւ. գէշ կը զգար: Եւ այն ժամանակ տարտամ երկիւղ մը զինք բռնեց, թէ մի գուցէ հիւանդաւ

նայ և կէս ճամբան մեռնի, և հոն անապատ դաշտագետնին մէջ նետուի, ուր շուներէն և յափըշտակիչ թռչուններէն գիշատուի, ինչպէս ձիերու և կովերու գիակները՝ զորս մերթ ճամբուն մօտերը կը տեսնէր և անոնցմէ նողկանքով աչքը կը դարձունէր: Այն անհանգիստ վատառողջ վիճակին մէջ, բնութեան այն տխուր լուծեան մէջ, իր երեսկայութիւնը կը գրգռուէր և կը մագձոտէր: Յետոյ բոլորովին ապահով էր թէ Քորտովայի մէջ մայրը պիտի գանէր: Եւ եթէ հոն գացած չըլլար՝ էթէ այն Արուեստից ճամբուն պարօնը սխալած ըլլար: Եւ եթէ մեռած ըլլար: Այս մտածութիւններուն մէջ քնացաւ, երազեց գիշերը Քորտովա հասած ըլլալ, ուր կը լսէր ամէն կողմանէ, ամէն պատահաններէ՝ որ իրեն կը պոռային. — Չկայ: Չկայ: Հոս չէ. — քունէն վեր ցատկեց, դարհուրած, և իր կառաբաժնին խորն երեք թաւամօրուս մարդիկ տեսաւ, գոյնզգոյն ցփսիներու մէջ փաթթուած, որ իրարու մէջ ցած ձայնով խօսելով իրեն կը նայէին. և կասկածեցաւ թէ աւազակներ ըլլային և ուզէին զինք սպաննել՝ իր պաշտակը գողնալու համար: Յուրտէն, վատառողջ վիճակէն՝ իր երկիւզն աւելցաւ. արդէն խռոված ցնորքը՝ զինք տակնուվրայ ըրաւ. — երեք մարդիկը միշտ իրեն կը նայէին, — անոնցմէ մէկը սկսաւ դէպ ի իրեն գալ. — այն ատեն ինք խելքը կորսնցուց, և բազկատարած անոնց առջև վազերով, գոչեց. — Բան չունիմ: Աղքատ տղայ մ'եմ: Իտալիայէն կու գամ, մայրս փնտախու կ'երթամ: մինակ եմ. ինձի մի վնասէք: — Մնոնք խելոյն հաս-

կցան, վրան գլխային, զինք շոյեցին ու հանգարտեցուցին շատ խօսքերով՝ զորս բնաւ չէր լսեր ինք. և տեսնելով որ ցրտէն ակռաները կը կափկափէր, իրենց ցփսիներէն մին կռնակը տուին, և կրկին նստեցուցին զինք որպէս զի քնանայ: Եւ երեկոյեան դէմ քնացաւ: Երբ զինք արթնցուցին՝ Քորտովա հասած էր:

Ո՛հ, ի՛նչ անուշ շնչեց, և ի՛նչ թափով կառախրմբէն դուրս նետուեցաւ: Կայարանի պաշտօնէի մը հարցուց թէ ո՛ւր էր Մէքուինէց ճարտարապետին տունը. անիկայ եկեղեցւոյ մ'անունը տուաւ. — տունը՝ եկեղեցւոյ մօտն էր. — տղան չուտով վազեց: Գիշեր էր: Քաղաք մտաւ: Եւ իրեն թուեցաւ թէ երկրորդ անգամ մ'ալ Ռօզաբիոյ կը մտնէր, տեսնելով այն ուղիղ ճամբաները՝ երկու կողմը փոքրիկ սպիտակ տուներով, և ուրիշ ամենաերկայն և ուղիղ ճամբաներէ կտրուած: Բայց քիչ մարդ կար, և սակաւթիւ կանթեղներու լոյսերէն՝ սև ու կանաչախառն անծանօթ գոյներով տարօրինակ դէմքերու կը հանդիպէր, և մերթ գրուխը վեր առնելով՝ անսովոր ճարտարապետութեամբ եկեղեցիներ կը տեսնէր, որոնք երկնակամարին վրայ անհետեթ ու սև կը դժաբրուէին: Քաղաքը մութ ու լուռ էր. բայց այն անհուն անապատը կտրել անցնելէն վերջ, իրեն զուարթ կը թուէր: Քահանայի մը հարցուց, չուտով եկեղեցին ու տունը գտաւ, դողդօշուն ձեռքով զանգակիկը քաշեց, իսկ միւս ձեռքը կուրծքին վրայ սեղմեց՝ սրտին բաբախումը զսպելու համար, որ մինչև կոկորդը՝ վեր կը ցատկէր:

Պառաւ մը, ձեռքը լոյս մը բռնած եկաւ բահարու:

Տղան չկրցաւ իսկոյն խօսիլ:

— Զո՞վ կը փնտռես, — հարցուց նա, սպանիւրէն:

— Մէքուինէց ճարտարագետը, — ըսաւ Մարկոս:

Պառաւը թեւերը կուրծքին վրայ խաչածնեց, և գլուխը շարժելով պատասխանեց: — Դո՞ւ ալ, ուրեմն, Մէքուինէց ճարտարագետին հետ գործ ունիս: Եւ կարծեմ՝ թէ այլ ևս չափն անցաւ: Երեք ամիս է որ զիս կը ձանձրացնեն: Բաւական չէ՞ր որ լրագիրները հրատարակեցին: Պէտք էր անկիւններուն վրայ կալցնել՝ թէ պարոն Մէքուինէց թուրքման գնացեր է:

Տղան յուսահատութեան շարժումն մ'ըրաւ: Յետոյ սաստիկ զայրոյթ մը զգաց: — Մնէ՞ծք մը կայ ուրեմն: Ես առանց մայրս գտնելու՝ ճամբուն մէջ պիտի մեռնիմ: Ես կը խենթեմ, անձնասպան կ'ըլլամ: Աստուած իմ: Ի՞նչ կը կոչուի այն երկիրը: Ո՞ւր է: Ո՞րչափ հեռու:

— Ո՛հ, խեղճ տղայ, — պատասխանեց պառաւը, կարեկցութիւնը շարժած, — չնչին բան: Սոնտագն չորս հարիւրէն հինգհարիւր փարսախ պիտի ըլլայ:

Տղան ձեռքերով երեսը ծածկեց. յետոյ հարցուց լաղազին. — Ուրեմն հիմա... ի՞նչպէս ընեմ:

— Ի՞նչ կ'ուզես որ ըսեմ քեզի, խեղճ տղայ, — պատասխանեց կինը, — ես չեմ գիտեր:

Սակայն իսկոյն միտքը բան մ'եկաւ և շտապով աւելցուց. — Մտիկ ըրէ՛ թէ ի՞նչ կը մտածեմ: Բան մ'ըրէ: Գարձիւր այս ճամբան, ձախակողմեան երրորդ գրան առջև գաւիթ մը պիտի տեսնես, քաղաքաց մը կայ, վաճառական մը՝ որ վազն առաւ թուրքման կը մեկնի իր կառքերով ու եղներով. գնա՛ նայելու թէ զքեզ ալ միտսին կ'առնէ՞, փոխարէն իրեն ծառայութիւն ընելով. գուցէ քեզի տեղ մը տայ կառքի մը վրայ. շուտ գնա:

Տղան պարկը շարակեց, շնորհակալ եղաւ, և երկու վայրկենէն կանթեղով լուսաւորուած ընդարձակ գաւթի մը մէջ գտաւ ինքզինքը, ուր մէկէ աւելի մարդիկ ցորենի պարկեր կը բեռցնէին մեծղի կառքերու վրայ, լարախաղացներուն շարժական սուներուն նման, կլոր տանիքով և բարձր անիւներով. և բարձրահասակ ու թաւամբուս մարդ մը, սև ու սպիտակ քառակուսիներով տեսակ մը վերակուի մէջ փաթթութեամբ, ոտքն երկու խոշոր մուճակներով՝ աշխատութեան վրայ կը հակէր: Տղան վերջնոյս մտտեցաւ, և երկչոտութեամբ իր խնդիրքն ըրաւ, ըսելով որ իտալիայէն կու գար և թէ իր մայրը փնտռելու կ'երթար:

Քաղաքացը, որ կը նշանակէ՝ գլխաւոր, (այն կարաւանին գլխաւոր առաջնորդը), անոր ոտքէն մինչև գլուխը աչք մը տուաւ, և չոր կերպով պատասխանեց: Տեղ չունիմ:

— Ես տասն և հինգ ֆրանք ունիմ, — պատասխանեց տղան՝ պաղատագին. — քեզի կու տամ տասն և հինգ ֆրանքս: Ղամբուն մէջ ալ կ'աշխատիմ: Կենդանիներուն ջուր ու փարսակ կը



բերեմ, ամէն ծառայութիւն կ'ընեմ: Քիչ մը հաց ինծի կը բաւէ: Ինծի ալ քիչ մը տեղ տո՛ւր, պարո՛ն:

Քափաքսացը կրկին նայեցաւ, և սուելի քաղաքավար կերպով պատասխանեց. — Տեղ չկայ... և յետոյ... մենք թուրքուման չենք երթար, ուրիշ քաղաք մը կ'երթանք, Սանթիակոյ տէլլ'իսթէրոյ: Տեղ մը պիտի գայ՝ որ զքեզ պիտի թողունք, և դեռ անկից անդին շատ միջոց կը մնայ սաքով քալելիք:

— Ո՛հ, ես կրկինն ալ կրնամ ընել, — բացազանչեց Մարկոս. — ես կը քալեմ, մի մտածեք. ամէն կերպով կը հասնիմ. ինծի պզտիկ տեղ մը չնորհք ըրէ՛, պարո՛ն, կ'աղաչեմ, կ'աղաչեմ՝ զիս հո՛ս մինակ մի՛ ձգեր:

— Գիտնաս որ քսան օրուան ճամբայ մ'է:

— Հոգ չէ:

— Դժուար ճամբորդութիւն մ'է:

— Ամէն բանի կը տոկամ:

— Մինակ պիտի ճամբորդես:

— Բանէ մը չեմ վախեր: Բաւական է որ մայրս գտնեմ: Գթն վրաս:

Քափաքսացը կանթեղ մը մօտեցուց իր դէմքին ու նայեցաւ: Յետոյ ըսաւ. — Ետա լաւ:

Տղան անոր ձեռքը համբուրեց:

— Այո գիշեր կառքի մը մէջ կը քնանաս, — աւելցուց քափաքսացը, զինք թողլով. — վաղն առտու ժամը չորսին զքեզ կ'արթնցնեմ. Պառկուսուսիս, (գիշեր բարի):

Առաւօտեան ժամը չորսին, աստղերու լուսով, երկայն կարաւանը մեծ աղմուկով ճամբայ ելաւ, իւրաքանչիւր կառքի վեց եզներ լծուած էին, ուրոնց կը հետեւէին բազմաթիւ կենդանիներ՝ փոխանակութեան համար: Տղան, արթնցուցին և կառքերէն մէկուն մէջ պարկերուն վրայ դրին որ խփոյն խոր քուն մտաւ: Երբ արթնցաւ, կարաւանը, ամայի տեղւոյ մը մէջ, արեւուն տակ կանգ առած էր, և բոլոր սղակորները — փեփեկները — քառորդ հօրթի մը շուրջը բոլորած էին, որ բացօթեայ կը խորովէր, գետնի մէջ մխուած տեսակ մը խոշոր սուրի վրայ շամփրուած, հովէն արծաձուղ մեծ խարոյկի մը մօտ: Ամէնը միասին կերան. քնացան և դարձեալ մեկնեցան. և այսպէս ճամբորդութիւնը զինուորական արշաւանքի մը պէս կանոնաւոր շարունակուեցաւ: Ամէն առաւօտ ժամը հինգին ճամբայ կ'եղնէին, ժամն իննին կը հանդէսէին, երեկոյեան հինգին կը մեկնէին և տասնին դարձեալ կանգ կ'առնէին: Փեփեկները ձիով կ'երթային և երկայն եղէգներով եզները կը խրթէին: Տղան խորովածին կրակը կը վառէր, կենդանիներուն կերակուր կու տար, կանթեղները կը մաքրէր, խմելու ջուրը կը բերէր: Այն երկիրն իր առջևէն անորոշ տեսիլքի մը պէս կ'անցնէր. մանր ու գորշ ծառերով ընդարձակ անտառներ, ցանուցիր տուներով գիւղեր՝ կարմիր ու առամհնաձև ճակատներով. ամենաընդարձակ միջոցներ, գուցէ մեծ աղի լճերու հին անկողիններ, որոնք ազով ձերմկցած են մինչև աչքը կտրած տեղը. և ամէն կողմ միշտ դաշտագետին, միայ-

նութիւն և լուսթիւն: Շատ քիչ կը պատահէին ձիաւոր երկու կամ երեք ճանապարհորդներ՝ իրենց հեռուորդ արձակ ձիերու երամակով մը, որ մըրկի մը նման քառատրոփ կ'արշաւէին: Օրերը բոլոր հաւասար էին, ինչպէս ծովու վրայ, ճանձրանալի ու անվերջ: Բայց օդը գեղեցիկ էր: Միայն թէ փեօկաները, իբրև թէ տղան իրենց պարտաւոր սպասուորն ըլլար, օրէ օր աւելի պահանջող կ'ըլլային. սմանք իր հեռ անասնաբար, սպառնալիքներով կը վարուէին. ամէնքը զինք անխնայ կը ծառայեցնէին. խոտի ծանր բեռներ կրել կու տային. հեռաւոր տեղերէ ջուր բերելու կը զրկէին. խոկ ինք, սաստիկ յոգնած, և ոչ խոկ կրնար գիշերը քնանալ, անխներուն ու փայտէ սենեակներուն անընդհատ խլացուցիչ ճռնչիւններէն և կառքի սաստիկ շարժումներէն ցնցուած: Ասկէ դուրս, քամի ելած ըլլալով, նուրբ կարմրութակ և պարարտ հող մը, որ ամէն բան կը պարուրէր, կառքին մէջ կը թափանցէր, իր զգեստներուն տակ կը մտնէր, իր աչքերն ու բերանը կը լեցուէր, տեսութիւնն ու շունչը կ'արգելուր յարատև, ճնշող, և անտանելի կերպով: Յոգնութիւններէն և անքնութենէն սպառած, պատուտած և կեղտոտած, առաւօտէն իրիկուն յանդիմանուած ու չարչրկուած, խեղճ տղան օրէ օր աւելի կը վատուծնար, և բոլորովին կեանքն ալ կը կորսնցունէր, եթէ երբեմն քաղաքացը քանի մը քաջալերիչ խօսքեր չըսեր իրեն: Սպէս, կառքի մ'անկիւնը քաջուած կու լար՝ երեսը պարկով ծածկած որ այլ ևս ուրիշ բան չէր պարունակեր բայց եթէ

ցնցողներ: Ամէն առտու աւելի տկարացած և աւելի վատուած կ'եղնէր, և դաշտը գիտելով, տեսներով միշտ այն հողէ ովկիանոսի մը պէս անողոք ու անսահման դաշտափայրը, կ'ըսէր ինքնիրեն. — Ո՛հ, մինչև այս իրիկուն չեմ հասնիր, մինչև այս իրիկուն չեմ հասնիր: Այսօր ճամբուն մէջ կը մեռնիմ: — Եւ յոգնութիւնները կ'աճէին, գէշ վարմունքները կը կրկնապատկուէին: Առտու մը, վասն զի ջուր բերելու ուշացած էր, քաղաքացին բացակայ եղած ատեն, մարդիկներէն մին զինք ձեռնէր: Եւ այն ատեն սկսան զինք զուարճութեան նիւթ բնել, երբ իրեն հրաման մը կու տային, գլխուն հարուած մ'իջեցնելով ու ըսելով. — Գրգանդ գիր ասիկայ, թափառաչը՛րկ: — Մօրդ տար ասիկայ: — Իր սիրտը կը ճաթէր. — հիւանդացաւ. — երեք օր կառքին մէջ մնաց, վրան ծածկոց մ'առած, ջերմէ բռնուած. և ոչ զոք տեսնելով բաց ի քաղաքացէն, որ կու գար իրեն խմելիք տալու և բազկերակը շօշափելու: Եւ այն ժամանակ ինքզինք կորսուած կարծեց, և յուսահատօրէն իր մայրն օգնութեան կը կանչէր՝ հարիւր անգամ անունը տալով. — Ո՛վ մայրիկ, մայրիկ: Օգնէ ինձի: Քոյս եկուր, կը մեռնիմ: Ո՛վ թշուառ մայր իմ, որ զքեզ մէկ մ'ալ պիտի չտեսնեմ: Խեղճ մայրիկ, որ զիս ճամբուն մէջ մեռած պիտի գտնես: — Եւ ձեռքերը կուրծքին կը դնէր ու կ'աղօթէր: Յետոյ լալցաւ՝ շնորհիւ քաղաքացի խնամքներուն, և առողջացաւ. սակայն առողջութեան հեռ՝ վրայ հասաւ իր ճանապարհորդութեան ամենէն սարսափելի օրը, յորում՝

մինակ պիտի մնար: Երկու շաբաթէն աւելի էր ճամբայ կ'ընէին: Երբ այն կէտը հասան՝ ուր թուրուսանի ճամբան կը բաժնուի անկից որ գէպի Սանթիակոյ տէլլէթէրոյ կ'երթայ, քաղաքացն իրեն իմացուց թէ պիտի բաժնուէր: Քանի մը տեղեկութիւններ տուաւ ճամբուն վրայօք, պարկն իր ուսերուն վրայ կապեց՝ այնպիսի կերպով՝ որ քաղերուն արգելք չըլլայ, և համառօտ կապելով, իբր թէ յուզուելէ վախնար, զինք ողջունեց: Տըզան հազիւ ժամանակ ունեցաւ անոր ձեռքը համբուրելու: Միւս մարդիկն ալ, որ իրեն հետ այնպէս խիստ ու գէշ վարուէր էին, կարծես քիչ մը գուժ զգացին անոր մինակ մնալը տեսնելով, և իրեն մնաս բարեաւի նշան մ'ըրին՝ հեռանալով: Ինք ևս ձեռքով փոխադարձ զիրենք ողջունեց, և կեցաւ նայելու կարաւանը՝ մինչև որ դաշտին կարմիր փոշիներուն մէջ կորսուեցաւ, և յետոյ ախուր՝ ճամբայ ելաւ:

Քան մը, սակայն, առաջին վայրկենէն զինք քիչ մը մխիթարեց: Յետ այնչափ օր այն անծայր և միապաղաղ դաշտագետնին մէջ ճամբորդելու, նա իր առջև ամենաբարձր և կապոյտ լեռնաշղթայ մը կը տեսնէր, սպիտակ գագաթներով, որ իրեն Ալպեանները կը յիշեցնէին, և կարծես իր երկրին մօտենալու գաղափարը կու տային իրեն: Անդեաններն էին, Ամերիկեան ցամաքին սննաշարը, այն անհուն շղթան՝ որ Հրոյ Երկրէն մինչև հիւսիսային բևեռին սառուցեալ ծովը՝ հարիւր տասն աստիճան լայնութեան տակ կը տարածուէր: Եւ

դարձեալ կը մխիթարուէր՝ զգալով որ օգը հետըզհետէ աւելի կը տաքնար. և ասիկայ կը պատահէր՝ որովհետև գէպի հիւսիս ելնելով՝ նա միշտ արեազարձային երկիրներուն կը մօտենար: Իրարմէ հեռու փոքր տուներու խումբեր կը գտնէր՝ փոքրիկ խանութով մը, ուր ս' և է ուտելիք մը կը գնէր: Չիաւորներու կը հանդիպէր. ստէպ կիներ ու տղաք կը տեսնէր գետնի վրայ նստած, անշարժ ու լուրջ, իրեն համար բոլորովին նոր գէմքերով, հողագոյն, ծուռ աչքերով, գուրս ցցուած այտոսկրներով, սրնք պիշ իրեն կը նայէին, և աչքով իրեն կը հետևէին՝ ինքնաշարժներու պէս հանդարտ գլուխնին դարձնելով: Հնդիկներ էին: Առաջին օրը՝ ոյժը ներածին չափ քաղեց, և ծառի մը տակ քնացաւ: Երկրորդ օրը՝ աւելի քիչ քաղեց, և նուազ արիութեամբ: Կօշիկները պատուտած էին, սուքերուն մորթն ելած, ստամոքսը գէշ սընունդէն տկարացած: Երեկոյեան գէմ կը սկսէր վախնալ: Իտալիոյ մէջ լսած էր թէ այն երկիրներուն մէջ օձեր կան. կը կարծէր անոնց սողալը լսել, կանգ կ'առնէր, դարձեալ կը վազէր, ոսկրներուն մէջ սարսուռ մը կը շրջէր: Երբեմն ինք իր վրայ մեծ կարեկցութիւն կը զգար, և լուսութեան մէջ կու լար, քաղելով: Յետոյ կը մտածէր. — Ո՛հ, սրչափ պիտի վշտանար մայրս եթէ գիտնար թէ ես շատ կը վախեմ, — և այս մտածութիւնն իրեն ոյժ կու տար: Յետոյ, վախը փարատելու համար, մօր այնչափ բաներուն վրայ կը մտածէր, միտքը կը բերէր անոր ձենովայէն մեկնած ժամանակ ըսած խօսքերը, և երբ ինք ան-

կողմոյ մէջ էր՝ ինչպէս իր կղակին տակ ծածկոյը կը շակէր, և երբ մանուկ էր՝ երբեմն զինք գիբկը կ'առնուր՝ ըսելով. — Քիչ մը հո՛ս քովս կեցի՛ր, — և այնպէս երկայն ժամանակ կը կենար գլուխն իրենին վրայ կռթնցուցած, միշտ մտածելով: Եւ ինքնիբնէն կ'ըսէր անոր. — Գարձեալ օր մը ըզքեզ պիտի տեսնե՛մ, մայրի՛կ: Ճամբորդութեանս վերջը պիտի հասնի՛մ, մայրի՛կ: — Եւ կը քալէր ու կը քալէր անձանօթ ծառերու մէջէն, ընդարձակած աւալ շարարեղէգներու մէջէն, անպերջ մարգագետիններէ, միշտ այն մեծ կապոյտ լեռներն առջևը, որոնք իրենց ամենաբարձր գագաթներով կապոյտ երկինքը կը կարէին: Չորս օր — հինգ — շաբաթ մը սահեցաւ: Չգալի կերպով իր ոյժերը կը նուազէին, ոտքերը կ'արխնտտէին: Վերջապէս, երեկոյ մը, արևը մոնելու ժամանակ, ըսին իրեն. — Թուքուման ասկից հինգ մղոն միայն հեռու է: — Նա ուրախութեան աղաղակ մ'արձակեց, և քայլերն երազեց, իբրև թէ մէկ րոպէի մէջ իր բոլոր ոյժերը կրկին ստացած ըլլար: Բայց կարճ պատրանք մ'եղաւ: Յանկարծ ոյժերը սպառեցան, և նուազած փոսի մ'եղերքն ինկաւ: Սակայն գոհութենէն սիրտը կը բաբախէր: Հրաշալի աստղազարդ գիշերը՝ իբրեք երեն այնպէս գեղեցիկ երևցած չէր: Քնանալու համար խոտին վրայ պառկած զանոնք կը գիտէր, և կը մտածէր թէ գուցէ մի և նոյն ժամանակ մայրն ալ զանոնք կը գիտէր: Եւ կ'ըսէր. — Ո՛վ մայր իմ, ո՛ւր ես: Ի՞նչ կ'ընես այս վայրկենիս: Կը մտածե՛ս որդւոյդ վրայ: Կը մտածե՛ս Մարկոսիդ վրայ, որ քեզի այնչափ մօտ է:

Խեղճ Մարկոս, եթէ կարենար տեսնել թէ ի՞նչ վիճակի մէջ կը գտնուէր այն վայրկենին իր մայրը, գերմարգկային ոյժ մը կու տար զեռ քալելու և քանի մը վայրկեան առաջ անոր քով հասնելու համար: Հիւանդ՝ անկողին պառկած էր, ազնուականի մը տան ստորին յարկի սենեկի մը մէջ, ուր Մէքուլինէցի բոլոր ընտանիքը կը բնակէր, որ իրեն վրայ մեծ սէր ցոյց տուած էր և մեծ խնամք ունէր: Խեղճ կինն արդէն հիւանդկեկ էր երբ Մէքուլինէց ճարտարապետը հարկադրուեցաւ յանկարծ Գուէնոս Այրէսէն մեկնիլ, և Քօրտովայի մաքուր օդով ընաւ վրայ գրած չէր: Բայց յետոյ, պատասխան չընդունելով այլ ևս իր նամակներուն՝ ոչ ամուսինէն և ո՛չ հօրեղբօրորդիէն, ո՛ր և է մեծ գժբազդութեան մը սաստիկ նախազգացումը, յարատե անձկութիւնը՝ որուն մէջ սպրած էր, կենալուն և մեկնելուն մէջ անորոյ, և ամէն օր տխուր լուրի մը սպասումը, իր վիճակը չափէ դուրս գէշցուցեր էին: Վերջերը՝ իր վրայ ամենամանր հիւանդութիւն մ'եկած էր. կուրագեթափութիւն մը: Տասն և հինգ օրէ ի վեր անկողնէն չէր ելներ: Վիրաբուժական գործողութիւն մը հարկաւոր էր կեանքը վրկելու համար: Եւ ճիշդ այն վայրկենին, յորում իր Մարկոսը զինք օգնութեան կը կանչէր, իր անկողնոյն քով էին տանտէրն ու աիկինը՝ ամենայն քաղցրութեամբ զինք համոզելու՝ որպէս զի յանձն առնէ վիրաբուժական գործողութիւնը կատարել տալ, իսկ անիկայ լալով կը յամառէր մերժելու: Թուքումանցի քաջ բժիշկ մ'անօգուտ տեղ եկած էր ար-

դէն նախորդ շաբաթը: — Ո՛չ, սիրելի՛ պարոններ, — կ'ըսէր նա, — անօգուտ է. այլ ևս դիմանալու կարողութիւն չունիմ. վիրաբուժին երկաթներուն տակ կը մեռնիմ: Լաւագոյն է թողուք զիս որ այսպէս մեռնիմ: Ա՛յլ ևս բնաւ կեանքը բանի տեղ չեմ՝ դնէր: Ինծի համար ամէն բան լինցեր է: Լաւագոյն է որ դեռ ընտանեացս ինչ պատահած ըլլալը չսամ մեռնիմ: — Եւ տէրերն իրեն կ'ըսէին թէ, ո՛չ, քաջասիրտ եղիր, թէ ուղղակի ճնշովս զրկուած վերջին նամակներուն պատասխանները կրնար ընդունիլ, թէ թո՛ղ վիրահատումը կատարուի, իր որդւոց սիրոյն համար զիջանի: Բայց իր զաւակներուն այն մտածութիւնը՝ ուրիշ բան չէր ընէր՝ բայց եթէ մեծ անձկութեամբ խոր վհատութիւնը ծանրացնել, որ զինք երկար ժամանակէ ի վեր կը ջրատէր: Այն խօսքերուն վրայ սաստիկ լալ կը սկսէր: — Ո՛վ որդեակներս, որդեակներս, — կը բացագանչէր՝ ձեռքերը միացնելով, — գուցէ չըլլան այլ ևս: Լաւագոյն է որ ես ալ մեռնիմ: Շնորհակալ եմ՝ ձեզի, ազնիւ պարոններ, ի սրտէ շնորհակալ եմ: Բայց լաւագոյն է որ մեռնիմ: Ապահով եմ՝ թէ վիրահատութեամբ ալ պիտի չառողջանամ: Շնորհակալ եմ՝ այնչափ իննամիջներուն համար, ազնիւ տէրերս: Աւերորդ է որ միւս օր դարձեալ բժիշկը դայ: Կ'ուզեմ՝ մեռնիլ: Ճակատագիրս է որ ես հո՛ս մեռնիմ: Վճռեր եմ: — Եւ անոնք դեռ զինք կը մխիթարէին ու կը կրկնէին. — Ո՛չ, այդ մի՛ ըսեր. — և ձեռքէն կը բռնէին և կ'ազատէին: Իսկ նա այն ատեն նուազած աչ-

քերը կը փակէր, և թմրութեան մէջ կ'իյնար, որ մեռած կը թուէր: Եւ տանուտէրերը քիչ մ'ատեն հո՛ն կը կենային, փոքրիկ ճրագի մը տկար լոյսին առջև, մեծ գթով նայելու այն զմայլելի մօր, որ իր ընտանիքը կանգնելու համար եկած էր մեռնելու իր հայրենիքէն վեց հազար մղոն հեռու, մեռնելու՝ յետ այնչափ կրելու, խեղճ կին, այնպէս համեստ, այնպէս բարի և այնպէս դժբաղդ:

Յաջորդ օրը, առտուն կանուխ, իր պարկը չալկած, ծուռ ու կաղալով, բայց քաջասիրտ, Մարկոս թուրուման կը մտնէր, Արճէնթիւնայի հասարակապետութեան ամենանոր և ամենածաղկեալ քաղաքը: Իրեն թուեցաւ թէ դարձեալ Քօրտովա, Ռօզարիոյ, Պուէնոս Այրէս կը տեսնէր. այն մի և նոյն ուղիղ ու ամենաերկայն ճամբաներն էին, և այն ցած ու սպիտակ տուները, բայց ամէն կողմ՝ նոր և հրաշալի բուսականութիւն մը, քողցրաբոյր օդ մը, հրաշալի լոյս մը, խոր ու պայծառ երկինք մը, որուն նմանը տեսած չէր երբեք, ո՛չ իսկ Խաալիոյ մէջ: Ճամբաներէն յառաջ քալելով, կրկին ջերմը բռնեց՝ զոր Պուէնոս Այրէսի մէջ ունեցեր էր. ամէն տան դռներն ու պատուհանները կը դիտէր. անցնող բոլոր կիներուն կը նայէր՝ իր մօր հանդիպելու անձկալից յուսով մը. կ'ուզէր ամենուն հարցնել և չէր համարձակեր մէկը կեցնելու: Ամէնքը, դրան սեմերուն վրայէն կը դառնային այն պատուտած ու փոշոտ խեղճ տղուն նայելու՝ որ կ'իմացուէր թէ հեռու տեղէ

կու գար: Եւ նա բազմութեան մէջ դէմք մը կը փնտռէր որ իրեն վատահում ինն ներշնչէր՝ անոր այն ահաւոր հարցումն ուղղելու համար, երբ աչքին խանութի մը նշանակն հանդիպեցաւ, որուն վրայ խտաբերէն անուն մը գրուած էր: Ներսը ակնոցաւոր մարդ մ'ու երկու կիներ կային: Նա մեղմով գրան մօտեցաւ, և սիրա ընելով հարցուց. — Կարելի՞ է ըսել ինձի, պարոն, ուր կը կենայ Մէքուինէյ ընտանիքը:

— Մէքուինէյ ճարտարագետը, — հարցուց խանութպանը:

— Այո՛, Մէքուինէյ ճարտարագետը, — պատասխանեց տղան, բարակ ձայնով մը:

— Մէքուինէյ ընտանիքը, — ըսաւ խանութպանը, — Թուքուման չգտնուիր:

Յուսակաւոր ցաւի ազդակ մը, իբրև դաշունահար եղած մարդու մը ճիշդ, արձագանգ տուաւ այն խօսքերուն:

Խանութպանն ու կիներն ստի շէն, քանի մը դրացիներ վաղեցին: — Ի՞նչ կայ, ի՞նչ ունիս, տղայ, — ըսաւ խանութպանը, ներա քաշելով և նստեցնելով. — յուսահատելու բան չկայ, ի՞նչ կ'ընես: Մէքուինէյները հոս չեն, սակայն քիչ հետու են, Թուքումանէն քանի մը ժամ:

— Ո՛ւր, ո՛ւր, — գոչեց Մարկոս, յարութիւն առնողի մը պէս վեր ցատկելով:

— Ասկից տասն և հինգ մղոնի չափ հեռու, — շարունակեց մարդը, — կը գտնուի Մէքուինէյի տունը՝ Մարտիլլոյ գետին եզերքը, տեղ մը՝ ուր չաքարի մեծ գործարան մ'ու խումբ մը տուներ

կը շինեն, ստիկայ ամէնքը գիտեն, քիչ ժամէն կը հասնիս:

— Ես ամիս մ'առաջ հոն գացի, — ըսաւ երիտասարդ մը, որ ազգակէն վաղեր եկեր էր:

Մարկոս խոշոր աչքերով անոր նայեցաւ և գունաթափ եղած խօսքն հարցուց. — Պարոն Մէքուինէյի խտաբայի ազախինը տեսա՞ր:

— Ճենովացի կի՞նը: Տեսայ: —

Մարկոս շղաձգական հեծկտուք մը փրցուց, կէս լաց կէս ծիծաղ:

Յետոյ ստասիկ հաստատակամ թափով մը. — Ուսկի՞ց կ'երթցուի, շո՛ւտ, ճամբան, խօսքն կը մեկնիմ, ճամբան ցցուցէք ինձի:

— Բայց օրուան մը ճամբայ է, — ըսին իրեն ամէնը միասին, — յոգնած ես, պէտք ես հանգչիլ, վաղն առտու կը մեկնիս:

— Անկարելի է: Անկարելի է, — պատասխանեց տղան: — Ըսէք ինձի ուսկի՞ց կ'երթցուի, վայրկեան մ'իսկ չեմ սպասեր, խօսքն կը մեկնիմ, եթէ նոյն իսկ ճամբուն մէջ պիտի մեռնիմ:

Անդրդուելի տեսնելով զինք, այլ ես չգիմադրեցին: — Աստուած հեռոք ըլլայ, — ըսին իրեն:

— Ուշագիւր եղի՛ր անտառի ճամբուն մէջ: — Բարի ճանապարհ, փոքրիկ խոտաբայի: — Մարդ մը զինք մինչև քաղքէն դուրս հանեց, ճամբան ցցուց, իրեն քանի մը խորհուրդներ տուաւ և կեցաւ անոր մեկնելը տեսնելու:

Քանի մը վայրկենէն, տղան անհետացաւ՝ կաղաղով, իր պարկը կոնակը՝ խիտ ծառերուն ետև, որոնք ճամբան կ'եզերէին:

Այն գիշերն ահաւոր եղաւ խեղճ հիւանդ կնոջ համար: Գառն ցաւեր ունեցաւ, որոնք երակները պատռելու շտի ճիշեր արձկել կու տային իրեն և ցնորքներ կը պատճառէին: Իր քով հսկող կիները կը խելագարէին: Մերթ տանտիկիներ սարսափահար եղած կը վազէր: Ամէնքը սկսան վախնալ, որ եթէ նոյն խկ զիջանելու ըլլայ վիրաբուժական գործողութիւնն ընելու, բժիշկը որ յաջորդ առաւուն պիտի գար, շատ ուշ պիտի հասնէր: Չցնորած վայրկեաններուն, սակայն, կը հասկցուէր որ ստակալի տանջանքն իր մարմնաւոր ցաւերը չէին, այլ հեռաւոր ընտանեաց մտածութիւնը: Ծիրամ, ծնգած, գիմագիծը փոխուած, աղէկոտոր յուսահատութեամբ ձեռքերը մաղերուն մէջ կը միէր և կը գոչէր. — Աստուած իմ: Աստուած իմ: Մեռնի՛լ այնչափ հեռու, մեռնի՛լ առանց զիրենք տեսնելու: Իմ խեղճ զաւակներս, որ անմայր կը մնան, իմ սիրուն էակներս, խեղճ արիւնս: Իմ Մարկոս, որ դեռ այնչափ փոքր է, բարձրահասակ, այնչափ բարի ու սիրուն: Դուք չէք գիտեր ինչ աղայ էր: Տիկին, եթէ գիտնայիր: Չէի կրնար զայն վզէս բաժնել երբ մեկնեցայ, կարեկցելու չափ կը հեծկրտար ու կը հեծկրտար. կարծես գիտէր թէ մէկ մ'ալ իր մայրը պիտի շտանէր, խեղճ Մարկոս, խեղճ տղաս: Կը կարծէի թէ սիրտս պիտի պայթէր: Ո՛հ, իցիւ թէ այն ատեն մեռնէի երբ հրաժեշտի ողջոյնս կու տայի, կայծակնահար ըլլայի: Առանց մօր, խեղճ տղայ, ինք որ զիս շատ կը սիրէր, որ ինձի շատ պէտք ունէր, անմայր, թշուառութեան մէջ, մուրանալու

պիտի ստիպուի: Մարկոս, ո՛վ իմ Մարկոս, որ անօթի ձեռք պիտի կարկառէ: Ո՛հ, երկնաւոր Տէ՛ր: Ո՛չ: Չեմ ուզեր մեռնիլ: Բժիշկը: Կանչեցէք շուտով: Թո՛ղ գայ, կտրէ՛, կուրծքս պատռէ՛, զիս յիմարեցնէ՛, բայց կեանքս փրկէ՛: Կ'ուզեմ առողջանալ, կ'ուզեմ ապրիլ, մեկնիլ, փախչիլ, վազը, խկոյն: Բժիշկը: Օգնութիւն: Օգնութիւն: — Եւ կանայք ձեռքերը կը բռնէին, զանիկայ կը շոշափէին, կաղաչէին, կամաց կամաց խելքը վերան կ'ուզէին բերել տալ, Աստուծոյ և յոյսի վրայ կը խօսէին: Եւ այն ատեն նա մահացու լքումի մէջ կ'ընկղմէր, կու լար, ձեռքերն իր գորշ մաղերուն մէջ աղջկան մը պէս կը հեծէր, սխերով երկայն ողբ մը և երբեմն երբեմն մրմնջելով. — Ո՛վ իմ ճիւղտիս: Իմ սու՛նս: Բոլոր այն ծո՛վը...: Ո՛վ իմ Մարկոս, իմ խեղճ Մարկոս: Ո՛ւր է արդեօք հիմա, իմ թշուառ զաւակս:

Կէս գիշեր էր. և իր խեղճ Մարկոսը, յետ երկար ժամեր փոսի մ'եզերքն անցունելու, ուժասպառ եղած, այն ժամուն՝ ամենամեծ հսկայ ծառերով անտառի մը մէջէն կ'անցնէր, որուն բուսականութիւնը հրէշներ էին, մայր եկեղեցիներու սիւներուն պէս հաստարուն, որոնք հրաշալի բարձրութեան մը վրայ՝ բուննէն արծաթազօծ իրենց ահագին ճիւղերն իրարու հետ կը հիւսէին: Մնորոշ կերպով, այն կէս մթութեան մէջ կը տեսնէր ամէն տեսակ բուներ՝ շիտակ, ծուռ, գալարուն, խաչաձև, սպառնալիքի և կռիւի տարօրինակ գիրքերով. ոմանք գետին տապալած, սակայն բոլոր

միակտուր աշտարակներու պէս ինկած, և խիտ ու խառնակ բուսականութենէ մը ծածկուած, որ մութեզին ամբոխի մը կը նմանէին, որոնք թիզ առ թիզ կը մաքառէին իրարու դէմ: Եւրիշներ՝ մեծ խումբեր կազմած, զագաթնահայեաց և տիտանեան նիզակներու խութներու պէս սեղմուած, որոնց զագաթը ամպերը կը հասնէր. վսեմ՝ մեծ դիտութիւն մը, հոյակապ ձևերու հրաշալի անկարգութիւն մը, ամենավեհօրէն սոսկալի տեսարան՝ զոր իրեն ընծայած ըլլար երբեք բուսական բնութիւնը: Յանկարծ իր վրայ մեծ սարսափ մը կու գար: Սակայն իսկոյն իր միտքը կրկին դէպ ի մայրը կը սաւառնէր: Եւ ուժասպառ էր, սաքերն արիւննացայտ, միայնակ այն արհաւիրտ անտառին մէջ, ուր իրարմէ շատ ցանցաւ մարդկային փոքր բնակարաններ կը տեսնէր, որոնք այն ծառերուն ոտքին տակ մըջնոց բոյներու կը նմանէին, և մէկ քանի գոմէշներ՝ ճամբուն վրայ պառկած. վատուցներ էր, սակայն յոգնութիւն չէր զգար. մինակ էր ու չէր վախնար: Անտառին մեծութիւնը՝ իր հոգին ալ կը մեծցնէր. մօրը մերձաւորութիւնը՝ իրեն ոյժ և մարդու մը կորովը կու տար. ովկիանոսի յիշատակը, սարսափները, կրած ու յաղթած ցաւերը, երկայն յոգնութիւնները, ի գործ դրած երկաթային կամքը՝ իր ճակատը բարձր բռնել կու տար. բոլոր իր զօրաւոր և ազնուական ճեւղոտացի արիւնը խրոխտ և համարձակ ջերմ՝ հոսանքով մ'իւր սիրտը կը հոսէր: Եւ նոր բան մը կ'աւելնար իր մէջ. որ մինչդեռ այն երկու տարուան բացակայութեան ժամանակ մօր դէմքն իր

մտքին մէջ փոքր ինչ մ'իշներ ու նսեմացեր էր, այն վայրկեաններուն՝ անոր պատկերն իր առջև կը պայծառանար. անոր դէմքն ամբողջական ու մաքուր կը տեսնէր, որուն պէս վազուց ի վեր տեսած չէր բնաւ. զանիկայ իր մօտ կը տեսնէր, լուսաւոր և խոհուն. կը տեսնէր անոր աչքերուն ու շրթունքներուն դիւրասահ շարժուածքները, բոլոր մարմնաւոր կազմը, բոլոր շարժուածքները, իր մտածութեանց բոլոր երանգները. և այն հեռագնդող յիշատակներէն մըրուած՝ քայլերը կ'երագէր. և նոր զգացում մը, անպատում գորով մ'իւր մէջ կ'աճէր, կ'աւելնար սրտին մէջ՝ քաղցր ու անգործ արցունքներ քամելով աչքերէն. և ստուերին մէջ յառաջ գնալով, անոր հետ կը խօսէր, և այն խօսքերը կ'ըսէր զորս ի մօտոյ անոր ակունջին պիտի մըմնջէր. — Հոս եմ, մայրիկ, ահա հոս եմ, — մէկ մ'ալ գրեզ պիտի չ'իտղում. միտսին սուն պիտի դառնանք, և ես շողենաւին մէջ միշտ քովդ պիտի կենամ, քեզի սեղմուած, և ոչ ոք այլ ևս զիս քեզմէ պիտի բաժնէ, ոչ ոք, երբեք, քանի որ կ'ապրիս: — Եւ այս պահուս չէր նշմարեր թէ հսկայ ծառերուն զագաթներուն վրայ՝ լուսնոյ արծաթափայլ լոյսը հեռզհեռէ կը մեռնէր՝ արշալոյսին փափուկ սպիտակութեան մէջ:

Այն առաւօտեան ժամն ութին, թուրումանի բժիշկը, — արձէնթինացի երիտասարդ մը, — արդէն հիւանդի անկողնոյն քով էր՝ օգնականի մը հետ, վերջին անգամ մ'ալ ջանալու զինք համոզել՝ որ գործողութեան հաւանի. և Մէքուրինէյ



ճարտարապետն ու իր արհիվներ՝ ամենաձերմ թա-  
խանձանքները կը կրկնէին իրեն: Բայց բոլոր  
անօգուտ էր: Կինն ինքզինք ուժասպառ զգալով,  
այլ ևս յոյս չունէր վերաբուժական գործողութեան  
վրայ. ապահով էր կամ գործողութեան ժամա-  
նակ մեռնիլ կամ անոր վրայ քանի մը ժամ միայն  
ապրիլ: յետ դուր տեղ այն ամենատուր ցաւերը  
կրերու, որոնք բնականապէս զինք պիտի մեռցնէին:  
Քժիշկը կը ջանար միշտ կրկնելու իրեն. — Բայց  
գործողութիւնն ապահով է, ստուգիւ պիտի ազա-  
տիս, բաւական է որ քիչ մը քաջարտութիւն  
ունենաս: Եւ հաւատարապէս ստոյգ է մահգ եթէ  
մերժես: — Չուր ջանքեր էին: — Ոչ, — կը  
պատասխանէր նա, նուազ ձայնով, — դեռ մեռ-  
նելու քաջութիւն ունիմ. բայց աւելորդ տեղը կրե-  
լու համար՝ ոչ: Շնորհակալ եմ, պարոն բժիշկ:  
Այսպէս սահմանուած է: Չգէ որ հանգիստ մեռ-  
նիմ: — Քժիշկը վհատած կեցաւ: Ուրիշ ոչ ոք  
խօսեցաւ: Այն ժամանակ կինն երեսը դէպ ի  
տանտիկինը դարձուց, և օրհասական ձայնով իր  
վերջին խնդիրքներն ըրաւ: — Սիրելի, ազնիւ  
տիկին, — ըսաւ մեծ դժուարութեամբ, հեծկըլ-  
տալով, — դու այն քիչ մը դրամն ու իմ զգես-  
տեղէններս ընտանեացս զրկէ ... պարոն Հիւսպա-  
տտին միջոցաւ: Ես կը յուսամ թէ ամէնքն ալ  
ողջ են: Այս վերջին վայրկեաններուս մէջ սիրտս  
ինձի այսպէս կը թելադրէ: Շնորհք ըրէ՛ դրե-  
լու... թէ միշտ իրենց վրայ մտածեր եմ, թէ միշտ  
իրենց համար աշխատեր եմ... իմ զաւակներուս  
համար... և թէ իմ ամենամեծ ցաւս զիրենք կրկին

չտեսներս եղաւ... բայց թէ քաջարտութեամբ...  
համակամեալ... զիրենք օրհնելով մեռայ. և կը  
յանձնարարեմ ամուսնոյս... և իմ մեծ որդւոյս...  
ամենէն պզտիկս, իմ խեղճ Մարկոսս... զոր միշտ  
սրտիս մէջ ունեցայ մինչև վերջին վայրկեանը... —  
Եւ յանկարծ վեր ցատկելով, ձեռքերը միացնե-  
լով գոչեց. — Մարկոսս. պտըտիկս: իմ կեանքս...  
— Բայց արտասուալից աչքերը դարձնելով տե-  
սաւ որ այլ ևս տանտիկինը չկար. ծածուկ զայն  
կանչած էին: Տանտէրը փնտռեց, աներևոյթ եղած  
էր: Միայն երկու հիւանդապահուիներն ու օգ-  
նականները մնացեր էին: Քովի սենեկին մէջ երազ  
քայլերու ազմուկ մը, ցած ու արագախօս ձայնե-  
լու փափոց մը, և զգուշաւոր բացազանչութիւն-  
ներ կը լսուէին: Հիւանդն իր աղօտ նայուածքը  
դրան վրայ սկեռեց, ազատելով: Քանի մը վայր-  
կեան վերջ բժշկին անսովոր գէմքով ներս մտնելը  
տեսաւ. յետոյ տանտիկինն ու տանտէրը, անտեք  
ալ այլայլած գէմքով: Երեքն ալ յատուկ կերպով  
մ'իրեն նայեցան, և ցած ձայնով իրարու մէջ  
քանի մը խօսք փոխանակեցին: Իրեն երեցաւ թէ  
բժիշկը տիկնոջ կ'ըսէր. — Լաւագոյն է իսկոյն: —  
Հիւանդը չէր հասկնար:

— Եօզէֆն, — ըսաւ տանտիկինը գողգղացող  
ձայնով: — Ուրախալի լուր մը պիտի տամ՝ քեզի:  
Սիրող պատրաստէ լաւ լուր մը լսելու:

Կինն ուշագրութեամբ տիկնոջ նայեցաւ:

— Նոր աւետիս մը, — շարունակեց տիկինը,  
ևս աւելի յուզուած, — որ քեզի մեծ ուրախու-  
թիւն պիտի պատճառէ:

Հիւանդն աչքերը լայն բացաւ:

— Պատրաստուէ՛, — շարունակեց տիկինը, — մէկը տեսնելու... զոր շատ կը սիրես:

Կինը բուն շարժումով մը գլուխը բարձրացուց, և սկսաւ երազաբար մերթ տիկնոջ մերթ գրան նայիլ փայլակնայայտ աչքերով:



— Մէկը, — աւելցուց տիկինը, գունատուելով, — որ այս բոսքէիս, անսկընկալ կերպով... հասաւ:

— Ո՞վ է, — գուշեց հիւանդը խղճուկ ու անհեթեթ ձայնով մը, սարսափահար եղած մտրդու մը պէս:

Վայրկեան մը վերջ նա ամենատուր ճիչ մ'արձակեց, վեր ցատկելով անկողնոյն վը-

րայ նստելու համար, և անշարժ մնաց, աչքերը բաց և ձեռքերը քունքերուն դրած, իբրև գերմարդկային տեսիլքի մ'առջև:

Մարկոս, պատառտուն ու փոշոտ, հոն սեմին վրայ կանգներ էր, մէկ ձեռքէն բժիշկը բռնած:

Հիւանդն երեք անգամ ճիչ արձակեց. — Աստուած, Աստուած, Աստուած իմ:

Մարկոս յառաջ նետուեցաւ, մայրը նիհար բազումները բացաւ, և զանիկայ կուրծքին վրայ սեղմելով վագրի մ'ուժով, ահաւոր ծիծաղ մը փրցուց, անարատուր հեծեծանքով մը, որ զինք շնահեղձ կրկին բարձին վրայ ձգեց:

Բայց իսկոյն ուշաթափ եղաւ և ուրախութենէն խենթեցած՝ աղաղակեց գլուխը համբոյրներով ուղղելով: — Ի՞նչպէս հո՞ս եկար: Ինչո՞ւ: Դո՞ւ ես: Ի՞նչպէս մեծցեր ես: Ո՞վ զքեզ բերաւ: Մինանկ ես: Հիւանդ չե՞ս: Դու ես, Մարկոս: Երազ մը չէ: Աստուած իմ: Խօսէ՛: — Յետոյ յանկարծ շեշար փոխելով. — Ո՞չ: Լուէ՛: Սպասէ՛: — Եւ արագ բժշկին դառնարով. — Շո՞ւտ, իսկոյն, բըժիշկ: Կ'ուզեմ՝ բժշկուիլ: Պատրաստ եմ: Մի՛ կորսնցներ վայրկեան մը: Մարկոսը հեռացուցէք որ չիմանայ: Սիրելի Մարկոսս, բան չկայ: Յետոյ ինծի կը պատմես: Համբոյր մ'ալ տուր: Գնա՛: Ահա պատրաստ եմ, ո՞վ բժիշկ:

Մարկոսը գուրս տարին: Տանուտէրերն ու կիները ձեպով հեռացան. վիրաբուժն ու օգնականը մնացին, որ գուռը փակեցին:

Պարոն Մէքուլինէց ջանաց Մարկոսը հեռաւոր սենեակ մը տանիլ. բայց անկարելի եղաւ. կարծես յատակին վրայ դամուած ըլլար:

— Ի՞նչ կայ, — հարցուց: — Ի՞նչ ունի մայրս: Ի՞նչ կ'ընեն իրեն:

Եւ այն ատեն Մէքուլինէց, մեղմ կերպով, ջանարով միշտ զինք հեռու տանիլ. — Ահաւասիկ: Լսէ՛: Հիմա պիտի ըսեմ քեզի: Մայրդ հիւանդ է, վիրաբուժական փոքր գործողութիւն մը պէտք

է ընել, ամէն ինչ քեզի պիտի բացատրեմ, հետո եկուր:

— Ո՛չ, — պատասխանեց տղան, տեղէն չչարժեցով, — հոս կ'ուզեմ մնալ: Ինձի հոս բացատրէ:

Ճարտարագետը բառ բառի վրայ կը կուտակէր, զինք քաշելով. տղան կը սկսէր սարսափել ու գողալ:

Յանկարծ ի մահ վիրաւորուածի պէս ամենասուր ճիչ մը բողբոտան մէջ հնչեց:

Տղան փոխադարձ յուսահատ ճիչով մը պատասխանեց. — Մայրս մեռաւ:

Բժիշկը սեմին վրայ երևցաւ ու ըսաւ. — Մայրդ ազատեցաւ:

Տղան անոր նայեցաւ վայրկեան մը և յետոյ հեծկլտարով ոտքերն ինկաւ. — Շնորհակալ եմ, ո՛վ բժիշկ:

Բայց բժիշկն իսկոյն զինք վերցուց, ըսելով. — վեր կանգնէ՛...: Դո՛ւ ես, գիւցա՞ղն մանուկ, որ մայրդ փրկեցիր:

## ԱՄԱՌՆ

24. Չորեքշաբթի

Ճենովացի Մարկոսը վերջընթեր փոքրիկ դիւցազն է սրուն վրայ ծանօթութիւն կ'ունենանք այս տարի. մէկ հատ միայն կը մնայ յունիս ամսուան համար: Ա՛յլ ևս միայն երկու ամսօրեայ ըննութիւններ մնացին, քսան և վեց օր դասախօսութիւն, վեց հինգշաբթի և հինգ կիրակի: Արդէն տարեվերջի օրերը կը զգացուին: Պարտիզի ծառերը տերեւալից և ծաղկած՝ մարմնամարզի գործիքներուն վրայ գեղեցիկ ստուեր մը կը ձգեն: Աշակերտներն արդէն ամրան զգեստ հագուեր են: Գեղեցիկ է այժմ տեսնել դասարաններուն ելքը, ինչպէս բոլորովին տարբեր են անցեալ ամիսներէն: Ուսերէն վար թափուող զանգուրները չկան ա՛յլ ևս, ամէն զուլս գերծուած է. մերկ սրունքներ և մերկ պարանոցներ կը տեսնուին. ամէն ձեռով յարդէ զլիարկներ՝ մինչև կոնակները կախուող ժապաւէններով. ամէն գոյներով շապիկներ ու փողկապներ. ամենէն պզտիկներուն կոնակներուն վրայ կայ որ և իցէ կարմիր կամ կապոյտ բան մը, ժապաւէն մը, զգեստի դարձուածք մը, ծոպ մը, դուրս ցայտող գոյնով լաթի կտոր մը՝ անշուշտ մօրմէն կախուած՝ որպէս զի գեղեցիկ ձև մ'առնեն, նոյն իսկ ամենէն անգրասները. և շատերն առանց զլիարկի դպրոց կու գան, տունէն փախածի պէս: Ոմանք մարմնամարզի ձերմակ զգեստ հագուած են: Տէլքաթի վարժուհիին

բաժնին մէջ տղայ մը կայ, որ գլխէն մինչև ոտըը կարմիր է եփուած խեչափառի մը նման: Շատերը նաևատիրի պէս հագուած են: Բայց ամենէն գեղեցիկը փոքրիկ որմնաղիւրն է, փսիաթէ խոշոր գլխարկ մը դրած, որ լուսարգելով ծածկուած կէս մոմի մ'երևոյթը կուտայ իրեն, և մարդու խնդալը կու գայ երբ անոր տակէն ընչապատուկ ընելը տեսնէ: Քօրէթթին ալ իր կատուամագէ գլխարկը հանած՝ և ճանապարհորդի գորշ մետաքսէ հին գլխարկ մը դրած է: Վօթինին տեսակ մը սկովտական տարագ հագուեր է բոլոր վայելչագարդ֊Քրօսսին մերկ կուրծքը ցոյց կու տայ. Փրէքօսսին երկաթագործի կապոյտ բաճկոնակի մը մէջ կը լողայ: Իսկ կարօֆֆին: Հիմայ որ հարկադրուած է մեծ վերնագգեստը թողուլ, որ իր վաճառքի նիւթերը կը ծածկէր, բոլորովին բացը կը մնան իր փերեգակի ամէն տեսակ մանր մուկեր բաներով ուռած գրպանները, և վիճակահանութեան ցուցակները դուրս կը ցցուին: Հիմա ամենուն ունեցածն ալ կը տեսնուի. կէս լրագրով մը շինուած հովահարներ, եղէգի ծնկամէջեր, թուշուն գարնելու նետեր, խոտեր, մայիսամիջատներ՝ որ գրպաններէն դուրս կ'ելնեն և կամաց կամաց զգեստին վրայէն վեր կը բարձրանան: Այն պզտիկներէն շատերը ծաղկեփունջեր կը տանին իրենց վարժուհիներուն: Վարժուհիներն ալ բոլոր թեթև հագուած են, զուարթ գոյներով. բաց ի «մարապետիկ» էն որ միշտ սև է. և կարմրափետուր վարժուհիէն՝ որ միշտ իր կարմիր փետուրն ունի, և վարդագոյն ժապաւէնի հանգոյց մը վզին վրայ, ճմրութեւնով իր բոլոր աշակերտաց թաթիկներէն. որոնք միշտ գինք կը խնդացնեն ու կը վազեցնեն: Կեռասներու, թիթեռնիկներու, ծառուղիներու վրայ երաժշտութիւններու

և դաշտի մէջ շրջագայութեանց եղանակն է. չորրորդ դասարանէն շատերը կը փախչին արդէն Փոյլի մէջ լուացուելու. ամենուն խելքը միտքը արձակուրդին վրայ է. ամէն օր դպրոցէն միշտ աւելի անհամբեր դուրս կու գան՝ բայց զո՞ն նախորդ օրէն: Միայն ինծի ցաւ կը պատճառէ կարրօնէն սգազգեստ տեսնելով, և իմ առաջին դասարանիս խեղճ վարժուհին որ միշտ աւելի չորջրուկ ու տժգոյն է, և միշտ աւելի ուժով կը հագայ: Այժմ մէջքը ծուռ կը քալէ, և շատ տրտում տրխուր կ'ողջունէ զիս:

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

26. Ուրբաթ

Դուրս կը սկսիս, Հներիկո՛ս, դպրոցի բանաստեղծարիւնե ըմբռնել. ապա՛յն դպրոցը, առ այժմ, միայն ներսէ կը տեսնու. շատ աւելի գեղեցիկ և բանաստեղծական պիտի երևնայ քեզի երեսուն տարի վերջ, երբ ցաւ քու որդիներդ առաջնորդերու, և զանկիայ դրսէ պիտի տեսնու, ինչպէս ես կը տեսնեմ: Արձակուրդի պատուէրու տուն, լուռ ձամբաներուն մէջ կը շրջիմ, Հներիկն շորս բորբոք, և գետնայարկի վանդակափեղկերով զոցուած պատուհաններուն ախաւջ կը դնեմ: Մեկ պատուհանէ վարժուհիի մը ձայնը կը շեւտ որ կ'ըսէ. — Ո՛հ, այդ ի՞նչ տեսակ թ (t) է: Լաւ է, որդեակ իմ: Ի՞նչ պիտի ըսէ ասոր հայրը...: — Մերձաւոր պատուհանէ ուսուցչի մը հաստ

ձայնն է որ ծանր ծանր կ'ըսէ. — Յիսուսն մետք կերպաս  
 ցնեց, մետքը չորս ֆրանք և յիսուսն հարիւրորդի... և  
 ծախեց...: — Քիչ մ'աչ անդին, կարմրափետուր վար-  
 ժոռնին է որ բարձրաձայն կը կարդայ. — Այն ատեն  
 Պետրոս Միքքա՛ վառուած պատրոյցով...: — Մօտի դա-  
 ւարանեն կարծես հարիւրաւոր բռնեց ձռուողիւն մը կը  
 շտռի, որ կը եղանակէ քէ ուսուցիչը վայրկեան մը դռնս  
 ելն է: Յառաջ կ'երբամ, և անկիւնադարձին կը շնեմ՝ որ  
 աշակերտ մը կու յայ, և վարժոռնիին ձայնը՝ որ զայն կը  
 յանդիմանէ և կամ կը մխիթարէ: Ուրիշ պատուհաններէ  
 կը շտռին ոտանաւորներ, մեծ ու բարի մարդկանց անուն-  
 ներ, աւարիւնոքեան, հայրենասիրոքեան և քաջասրտոք-  
 քեան յորդորակներ: Յետոյ շտռեան վայրկեաններ կը  
 յաջորդեն, յորում կը կարծուի քէ չեկքը դատարկ է. և  
 անկարելի կը կարծուի՝ քէ ներսը եօթն հարիւր տղաք ըլ-  
 շան. յետոյ քաղցր գոշարոքեան աղմուկներ կը շտռին,  
 ուրսիս ուսուցչի մը կատակէն յառաջ եկած...: Եւ ան-  
 ցորդները կը կենան մտիկ ընելու, և ամենքը համակրա-  
 կան անկարկ մը կը դարձնեն այն ազնուական շէնքին վը-  
 ռայ, որ այնչափ երիտասարդոքիւն և այնչափ յոյսեր  
 կը ներշնչէ: Յետոյ անակրկեալ խոշ աղմուկ մը կը  
 շտռի, քղրասպանակներ և գրքեր փակելու ձայն մը, ու-  
 ճատորտի մը, և բզզոց մը՝ որ դատարանէ դատարան, վա-  
 ղէն վեր կը տարածուի, իբրև յանկարծակի ուրսիսայի  
 շոք մը տրուած ըլլար. սպասուտրն է որ կը շրջի արձա-  
 կուրդն իմացներու: Եւ այն աղմուկէն՝ կիներու, մարդկանց,  
 օրիորդներու և երիտասարդներու ամբոխ մը կը խոնուի  
 զրան երկու կողմերը՝ իրենց որդուց, եղբայրներուն, բունե-  
 շուն սպասելու համար. միևչուր դատարաններու դներդէն՝  
 փոքրիկ տղաքը դռնս դեպ ի մեծ սենեակը կը վազեն,

իրենց վերնագգեստներն ու գլխարկներն աւելուք համար,  
 յատակին վրայ իրարանցում մ'ընելով, և չորս կողմը  
 ցատկուտելով, մինչև որ սպասուտրը գիրենք մեկիկ մեկիկ  
 ներս կը բշէ: Եւ վերջապէս ոտքերնին զարկելով կարգաւ  
 դռնս կ'եղնեն: Եւ այն ատեն շոքոր ծնողներէն կը մխի  
 հարցուններու տարափը, — Դասոյ գիտցուք: Ո՞րչափ աշ-  
 խատուքիւն տուաւ: Վարուան համար ի՞նչ ունիք: Ե՞րբ է  
 ամաօրեայ քննուքիւնը: — Երկուսն այն խեղձ մայրերն  
 որոնք կարդայ չեն գիտեր, տետրակները կը բանան, առա-  
 ջարկուքիւնները կը նային, բունակիչը կը հարցնեն. —  
 Միայն ո՞չքը: — Պատուանիշ տա՛ւր: — Ի՞նչ դասի հա-  
 մար: — Եւ անհանգիստ կ'ըլլան և կ'ուրսիսանան, ու-  
 սուցիչներուն կը հարցնեն ու կը խօսին դասացոցակներուն  
 ու քննուքեանց վրայ: Ի՞նչ գեղեցիկ է այս ամենը, ինչպէս  
 մեծ է, և ի՞նչ աննուն խոստում է աշխարհի համար:

ՀԱՅՐԻ

ԽՈՒՂ ՈՒ ՀԱՄԻ ԱՂԶԻԿԸ

28. Կիրակի

Ուրիշ աւելի լաւագոյն կերպով չէի կրնար վերջա-  
 ցնել մայիս ամիսը, եթէ ոչ այս առաւօտեան այցելու-  
 թեամբ: Զանգակի ուժով զարնուածք մը կը լսենք,  
 ամենքնիս կը վագենք: Հօրս ձայնը կը լսեմ որ գար-  
 մացական շեշտով մը կ'ըսէ. — Դժև հոս, Գէորգ: —  
 Գէորգն էր, մեր Բիէրիի պարտիզպանը, որուն ընտա-

նիքն այժմ Քոնստովէ է. ճիշդ այն վայրկենին ճենովայէն հասած էր, ուր նախորդ օրը նաւէն ելած էր Յունաստանէն վերադառնալով՝ յետ երեք տարի հոն երկաթուղիներու վրայ աշխատելու: Զեռքին մէջ խոշոր կապոյ մ'ունէր: Քիչ մը ծերացած էր, բայց միշտ կարմիրերես և գուարթաբարոյ:

Հայրս կ'ուզէր որ ներս մտնէ. բայց նա, ո՛չ, ըսաւ, և իսկոյն հարցուց, լուրջ դէմք մ'առնելով. — Ի՞նչ պէս է ընտանիքս: Ի՞նչպէս է ձիւնիս:

Գեռ քանի մ'օր առաջ լաւ էր, — պատասխանեց մայրս:

Գէորգ մեծ շունչ մը քաշեց. — Ո՛հ: Օրհնեալ ըլլայ Աստուած: Սիրտ չէի ընէր խուլ-համբերուն երթալ՝ առանց քեզմէ տեղեկութիւն առնելու: Հո՛ս կը ձգեմ ծրարս և շուտով անոր քով կ'երթամ: Երեք տարի է որ խեղճ աղջիկս չեմ տեսած: Երեք տարի՝ որ իմին ներէս մէկը չեմ տեսած:

Մայրս ըսաւ ինծի. — Ընկերէ՛ իրեն:

— Խօսք մ'ալ, կը ներես, — ըսաւ պարտիզպանը սանդուղի զլխուն վրայ:

Սակայն հայրս զայն ընդմիջեց. — Եւ ի՞նչպէս կ'երթան գործերդ:

— Լաւ, — պատասխանեց, — փառք Աստուծոյ: Քանի մը դահեկան բերի: Բայց կ'ուզէի հարցնել: Ի՞նչ պէս կ'երթայ մունջ աղջկանս կրթութիւնը, ըսէ՛ քիչ մը: Զինք խեղճ անասնիկի մը պէս ձգեցի, թշուառ պղտիկը: Քիչ հաւատք ունիմ արդէն այս դպրոցներուն վրայ: Սովորած է նշաններն ընել: Կինս ինծի կը գրէր միշտ. — Խօսիլ կը սովորի, կը յառաջագիմէ: — Բայց, կ'ըսէի ես, ի՞նչ կ'արժէ որ խօսիլ սովորի, եթէ ես չգիտ-

նամ իրեն նշանները: Ի՞նչպէս զիրար պիտի հասկնանք, խեղճ պղտիկ: Այդ լաւ է որ իրենք զիրար կը հասկնան, մէկ դժբաղդը միւսը: Ի՞նչպէս է, ուրեմն: Ի՞նչպէս կ'երթայ:

Հայրս ժպտեցաւ, և պատասխանեց. — Ես քեզի բնաւ բան մը չեմ ըսեր. դու կը տեսնես. գնա՛, գնա՛. վայրկեան մ'ալ մի՛ կորսնցնէր:

Գուրս ելանք. վարժարանը մօտ է: Խոշոր քայլերով ճամբան գնալու ժամանակ, պարտիզպանը տիրութեամբ ինծի կը խօսէր. — Ո՛հ, խեղճ ձիւնիս: Այն դժբաղդութեամբ ծնանիլ: Ըսել թէ երբեք լսած չեմ՝ որ ինծի հայրիկ կանչէ, թէ ինք երբեք լսած չէ՛ որ ես իրեն աղջիկս ըսեմ, թէ աշխարհի վրայ ոչ մէկ բառ լսած կամ խօսած է: Եւ երանի՛ որ բարերար պարոն մը գտնուած և վարժարանին ծախսերն հոգացեր է: Բայց այնչափ... մինչև ութ տարեկան՝ չկրցաւ հոն երթալ: Երեք տարի է որ տունը չէ: Հիմա տասներեքի կը մօտենայ: Ըսէ՛ թէ մեծցե՞ր է արդեօք: Ուրախ է:

— Հիմա պիտի տեսնէք, հիմա պիտի տեսնէք, — պատասխանեցի, քայլերս երագելով:

— Բայց ո՛ւր է այս վարժարանը, — հարցուց: — Մեկնելէս առաջ կինս զիս տարաւ հոն: Ինծի կ'երևնայ որ այս կողմերս ըլլալու է:

Եւ յիրաւի հասեր էինք: Իսկոյն խօսարան մտանք: Պահապան մ'առջևնիս ելաւ. — ձիւնիս վօճճիի հայրն եմ, — ըսաւ պարտիզպանը. — շուտ, շուտ իմ աղջիկս: — Զրօսանք կ'ընեն, — պատասխանեց պահապանը, — երթամ վարժուհիին իմացնեմ: — Եւ մեկնեցաւ:

Պարտիզպանն այլ ևս չէր կրնար ո՛չ խօսիլ, ո՛չ անշարժ կենալ. որմերուն պատկերները կը նայէր՝ առանց բան մը տեսնելու:

Դուռը բացուեցաւ. վարժուհի մը ներս մտաւ, սևա-  
զգեստ՝ և աղջկան մը ձեռքէն բռնած:

Հայր և աղջիկ վայրկեան մ'իրարու նայեցան և ապա  
գիրկընդխառնեցան՝ ճիչ մ'արձակելով:

Աղջիկը սպիտակ ու կարմիր շերտերով զգեստ մը  
հագուեր էր, ճերմակ գոգնոցով մը: Ինձմէ աւելի բարձր  
է: Կուլար և երկու թևերով հայրն իր վզին սեղ-  
մած էր:

Հայրը բաժնուեցաւ, և սկսաւ անոր ոտքէն գլուխը  
զննել, փայլուն աչքերով, հեւալով՝ իբրև թէ երկար  
վազած ըլլար. և բացագանչեց. — Ո՛հ, ի՛նչպէս մեծ-  
ցեր է: Ի՛նչպէս գեղեցկացեր է: Ո՛հ իմ սիրուն, իմ  
խնդճ ձիճիաս: Իմ խնդճ համբիկս: Դո՛ւ ես, տիկին,  
վարժուհին: Ըսէ՛ որ քիչ մը նշաններով խօսի հետս,  
որ բան մը հասկնամ, և յետոյ քիչ քիչ կը սովորիմ:  
Ըսէ՛, որ շարժուձևերով ինձի բաներ մը բացատրէ:

Վարժուհին ժպտեցաւ և ցած ձայնով աղջկան ըսաւ.  
— Ո՛վ է այս մարդս որ զքեզ գտնելու եկած է:

Աղջիկը, միը լեզուն առաջին անգամ խօսող վայ-  
րենիի մը պէս՝ նորօրինակ, հաստ, աններդաշնակ ձայ-  
նով մը, բայց որոշ արտասանութեամբ և ժպտելով  
պատասխանեց. Հայ — ըրս — է:

Պարտիզպանը քայլ մ'ետև զնաց և խենթի մը պէս  
պոռաց. — Կը խօսի՛, բայց կարելի՛ է: Բայց կարելի՛  
է: Կը խօսի՛: Բայց կը խօսի՛ս, աղջիկս, կը խօսի՛ս,  
ըսէ՛ տեսնեմ, կը խօսի՛ս: — Եւ կրկին զայն գրկեց և  
երեք անգամ ճակատն համբուրեց: — Ձևերով չէ՞ որ  
կը խօսին, տիկին վարժուհի, այսպէս մատներով չէ՞:  
Բայց ի՛նչ է ասիկայ:

— Ո՛չ, պարոն Վօճճի, — պատասխանեց վարժու-

հին, — ձևերով չէ: Անիկայ հին ոճն էր: Հո՛ս նոր  
ոճով կը սովորեցուի, ձայնական ոճով: Ի՛նչպէս, չե՛ս  
զիտեր:

— Բայց ես բնա՛ւ չէի գիտեր, — պատասխանեց  
պարտիզպանը, շուարած: — Երե՛ք տարի է որ զուրան  
եմ: Կամ ինձի գրեցին և ես չհասկցայ: Փայտէ գլուխ  
ունիմ: Ո՛հ, աղջիկս, ըսածս կը հասկնամ, ուրեմն:  
Ձայնս կը լսե՛ս: Պատասխան տո՛ւր կ'աղաչեմ. կը լսե՛ս:  
Կը լսե՛ս ի՛նչ որ քեզի կ'ըսեմ:

Բայց ո՛չ, բարի՛ մարդ, — ըսաւ վարժուհին. —  
ձայն չլսեր, վասն զի խուլ է: Փու բերնիդ շար-  
ժումներէն կը հասկնայ թէ ի՛նչ բառ կ'ըսես, ահա իրա-  
կանը. բայց չլսեր քու խօսքերդ և ոչ ալ այն բառերը  
զորս ինք քեզի կ'ըսէ. զանոնք կը հնչէ՛ վասն զի սո-  
վորեցուցեր ենք, տառ առ տառ, ի՛նչպէս պէտք է բռնել  
շրթունքն ու շարժել լեզուն, և ի՛նչ ջանք պէտք է ընել  
կուրծքով և կոկորդով՝ ձայնն արտաբերելու համար:

Պարտիզպանը չըմբռնեց, և բերանարաց կեցաւ: Դեռ  
չէր հաւատար:

— Ըսէ՛ ինձի, ձիճիաս, — հարցուց աղջկան ական-  
ջէն վար խօսելով. — գո՛հ ես որ հայրդ վերադարձեր  
է: — Եւ երեսը վեր բռնած, պատասխանի կը սպասէր:

Աղջիկն իրեն նայեցաւ, մտածկոտ, և բան մը չըսաւ:  
Հայրը խոտվեցաւ:

Վարժուհին խնդաց: Յետոյ ըսաւ. — Բարի՛ մարդ,  
քեզի չպատասխաներ՝ որովհետև շրթունքներուդ շար-  
ժումները չէ տեսած. ականջէն վա՛ր խօսեցար: Դէմքդ  
իբր դէմքին բռնած կրկնէ հարցումդ:

Հայրը, ուղղակի անոր երեսը նայելով, կրկնեց. —  
Դո՛հ ես որ հայրդ վերադարձեր է, և այլ ևս չերթայ:

Աղջիկը, որ ուշադրութեամբ շրթունքը զիտեր էր, ջանալով մինչև իսկ իր բերնին մէջը տեսնել, պատասխանեց համարձակ.

— Այո՛, ուրախ եմ, որ դու վե-րա-դար-ձեր ես, որ բը-նաւ չեր-թաս... այլ ես:

Հայրը բռնան թափով մը զինք գրկեց, և յետոյ ուժգին անապարանքով՝ աւելի ապահով ըլլալու համար՝ շատ հարցումներ ուղղեց անոր:

— Ի՞նչ է մօրդ անունը:

— Ան-թո-նիս:

— Ի՞նչ է փոքր բրոջդ անունը:

— Ա-տէ-լաի-տէ:

— Իսկ այս դպրոցի՞ն անունը:

— Խուլ-համ-բերու վար-ժա-րան:

— Քանի՞ կ'ընէ երկու անգամ տասն:

— Քսան:

Մինչդեռ կը կարծէինք թէ ուրախութենէն պիտի խնդար, յանկարծ սկսաւ լալ: Բայց ուրախութեան կաց էր:

— Հայկա, — ըսաւ իրեն վարժուհին, — պէտք ես ուրախանալ, ո՛չ թէ լալ: Տես, աղջիկդ ալ կը լացնես: Գո՞հ ես, ուրեմն:

Պարտիզպանը վարժուհիին ձեռքը բռնեց և երկու կամ երեք անգամ համբուրեց ըսելով. — Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, հարիւր անգամ շնորհակալ եմ, հազար շնորհակալութիւն սիրելի՛ վարժուհի տիկին: Եւ կը ներես որ ուրիշ բան չեմ կրնար ըսել:

— Բայց ո՛չ միայն կը խօսի, — ըսաւ իրեն վարժուհին. — քու աղջիկդ գրել ալ գիտէ: Հաշիւ ալ կ'ընէ: Բոլոր գործածական առարկաներուն անունները

գիտէ: Քիչ շատ պատմութիւն և աշխարհագրութիւն ալ սովորեր է: Հիմա միջին դասարանին մէջ է: Երբ միւս երկու դասարաններն ալ աւարտէ, շատ, շատ աւելի բան պիտի գիտնայ: Ասկից մեկնած ժամանակ պաշտօն մ'ընդունելու աստիճանի մէջ պիտի ըլլայ: Արդէն շատ համը-խուլեր ունինք որոնք կրպակներու մէջ յաճախորդներու կը ծառայեն և իրենց գործերն ուրիշներուն հաւասար կ'ընեն:

Պարտիզպանը դարձեալ ապշած մտաց: Կարծես թէ նորէն գաղափարները կը շփոթուէին: Աղջկան նայեցաւ և ճակատը քերեց: Եւ իր զէմըը դեռ մեկնութիւն մը կ'ուզէր:

Այն ժամանակ վարժուհին պահապանին դարձաւ ու ըսաւ.

— Նախակրթարանէն ինծի փոքր աղջիկ մը կանչէ:

Քիչ վերջը պահապանն ութէն տասն տարեկան խուլ-համբի մը հետ՝ որ քանի մ'օրէ ի վեր վարժարան մտեր էր՝ վերադարձաւ:

— Այս աղջիկը, — ըսաւ վարժուհին, — անոնցմէ մին է, որոնք նախատարերը կը սովորեցնենք: Ահա թէ ինչպէս կ'ընենք: Կ'ուզեմ իրեն (ե) ըսել տալ: Ուշադրութիւն դի՛ր: — վարժուհին բերանը բացաւ ինչպէս կը բացուի (ե) ձայնաւորը հնչելու համար և նշան ըրաւ աղջկան՝ որ ինք ալ նոյն կերպով բերանը բանայ: Նա հնազանդեցաւ: Այն ատեն վարժուհին կրկին նշան ըրաւ՝ որ ձայնը դուրս հանէ: Նա ձայնը հանեց, բայց փոխանակ (ե) ի (օ) արտասանեց: — Ո՛չ, — ըսաւ վարժուհին, — ասիկայ չէ: — Եւ աղջկան երկու ձեռքերէն բռնելով, մէկը բաց՝ իր կոկորդին և միւսը՝ կուրծքին վրայ դրաւ և կրկնեց. — Է: — Աղջիկը,



ձեռքերով զգալով վարժուհիին կոկորդին և կուրծքին շարժումը, առաջինին պէս բերանը բացաւ և լաւ (ե) արտասանեց: — Մի և նոյն ոճով վարժուհիին անոր (չ) և (ա) ըսելուաւ, միշտ երկու փոքրիկ ձեռքերը կուրծքին ու կոկորդին վրայ բռնելով: — Հասկցա՞ր հիմա, հարցուց:

Հայրը հասկցեր էր. բայց չհասկցած ժամանակէն աւելի զարմացած կը տեսնուէր: — Եւ այդ ոճով խօսիլ կը սովորեցնէր, — հարցուց բիշ մը խորհրդածելէ վերջ՝ վարժուհիին նայելով. — Այդպէս բիշ բիշ ամենուն խօսիլ սովորեցնելու համբերութիւնն ունի՞ր, մի առ մի... տարիներով...: Բայց դուք սո՛ւրբ էր, սո՛ւրբ:



Բայց արքայու թեան հրեշտակներ էր: Բայց աշխարհի վրայ ձեզի արժանաւոր վարձատրութիւն չգտնուիր: Ի՞նչ պիտի ըսէի...: Մհ, հիմա բիշ մը զիս աղջկանս

հետ մինակ թողուցէր: Հինգ վայրկեան բաւական է ինձի:

Եւ զայն մէկ կողմ տանելով նստեցուց ու սկսաւ հարցումներ ընել, նա կը պատասխանէր, և ինք փայլուն աչքերով կը հրճուէր, բունցըր ծնկերուն վրայ

զարնելով, և աղջկան ձեռքերէն կը բռնէր, անոր կը նայէր, խօսիլը լսելով ինքնիրմէ դուրս ելած, իբրև թէ երկինքէն եկած ձայն մ'ըլլար. յետոյ հարցուց վարժուհիին. — Կրնամ արդեօք տեսչին ելնել շնորհակալ ըլլալու համար:

— Տեսուչը չկայ, — պատասխանեց վարժուհին. — Բայց ուրիշ մէկը կայ՝ որուն պէտք ես շնորհակալ ըլլալ: Հո՞ս ամէն պզտիկ աղջիկ իրմէ մեծագոյն ընկերոջ մը ինամբին յանձնուած է, որ իրեն քոյրութիւն, մայրութիւն կ'ընէ: Քու աղջիկդ ալ հացագործի մը տան և եօթն տարեկան խուլ-համրի մը յանձնուած է, որ բարի է և զինք շատ կը սիրէ. ամէն առտու կ'երթայ զինք հագուեցնելու, սանտրելու, իրեն կարել կը սովորեցնէ, զգեստեղէնները կարգի կը դնէ, հետն անուշ ընկերութիւն կ'ընէ: — Լուիճիս, վարժարանի մօրդ անունն ի՞նչ է:

Աղջիկը ժպտեցաւ և պատասխանեց. — Կա-տա-րինէ ձիոռ-տանոյ: — Յետոյ ըսաւ հօրը. — Շատ, շատ բարի է:

Պահապանը, վարժուհիին մէկ ակնարկին վրայ դուրս ելաւ, և զրեթէ իսկոյն խարտեաշ, զուարթ ու առողջ խուլ-համր աղջկան մը հետ վերադարձաւ, նա ևս կարմրորակ շերտաւոր զգեստ մը հագուած էր՝ գորշ գոգնոցով. որ կանգ առաւ սեմին վրայ և շիկնեցաւ, յետոյ գլուխը ծոց, ժպտելով: Կնոջ մ'իրանն ունէր և աղջկան մը կը նմանէր:

Գէորգին աղջիկը՝ իսկոյն ընդառաջ գնաց, փոքր աղջկան մը պէս անոր մէկ թեկն բռնեց ու հօր առջև քաշեց բերաւ, ըսելով իր խոշոր ձայնով. — Կա-տա-րինէ ձիոռտանոյ:

— Ա՛հ, պատուական աղջիկ, — բացազանչեց հայրը, և ձեռքն երկնցուց զայն շոյելու համար, բայց ետև քաշեց ու կրկնեց. — Ա՛հ, սիրո՛ւն աղջիկ, Աստուած օրհնէ զքեզ, ամէն բաղդ, ամէն մխիթարութիւն պագեւէ քեզի, միշտ զքեզ ու բուկիններդ երջանկացնէ. այսպիսի բարի աղջիկ մը, խեղճ ճիճիաս. այս է համեստ բանւորի մը, ընտանեաց խեղճ հօր մը մաղթանքներն որ ի սրտէ քեզի կ'ընէ:

Մեծ աղջիկը կը շոյէր փոքրը, միշտ երեսը կախած և ժպտելով. և պարտիզպանը շարունակ անոր կը նայէր իբրև տիրամօր մը:

— Այսօր կրնաս հետդ տանիլ աղջիկդ, — ըսաւ վարժուհին:

— Հէտս տանիլ, — պատասխանեց պարտիզպանը: — Հէտս Քօնտովէ կը տանիմ և վազն առտու կը վերադարձնեմ: Երեակայէ՛ քիչ մը, եթէ հետս չտանիմ: — Աղջիկը վազեց հագուելու: — Երե՛ք տարի կ'ընէ որ զինք չեմ տեսներ, — շարունակեց պարտիզպանը: — Հիմա որ կը խօսի: Անմիջապէս Քօնտովէ կը տանիմ: Սակայն նախ կ'ուզեմ թօրինոյէն անցնիլ՝ համրիկիս թևը մտած, որպէս զի ամէնքը զինք տեսնեն, և քանի մը ծանօթներուս տանիլ՝ որ խօսիլը լսեն: Ո՛հ, գեղեցիկ օր: Ո՛հ, ինչ մխիթարութիւն ինծի: Թևդ տօ՛ւր, սիրո՛ւն ճիճիաս: — Աղջիկն որ կրկնցով ու քողով մը վերադարձեր էր, թևն իրեն տուաւ:

— Շնորհակալ եմ, ուրեմն, ամենուդ, — ըսաւ հայրը դուրս ելնելով. — ի սրտէ՛ շնորհակալ կ'ըլլամ ամենուդ: Դեռ ուրիշ անգամ մ'ալ կու գամ շնորհակալ ըլլալու համար ամենո՛ւդ:

Վայրկեան մը մտածկոտ կեցաւ, յետոյ բիրտ կեր-

պով աղջկան թևը թողուց, ետև դարձաւ, մէկ ձեռքով ներքին գրպանը խառնեց և կատաղիի մը պէս գոչեց. — Այո՛, խեղճուկ մարդ մ'եմ, բայց ահա կրթարանին համար քսան ֆրանք կը թողում, գեղեցիկ ու նոր ոսկի մը:

Եւ ուժգին հարուած մը տալով սեղանին՝ հոն թողուց ոսկեղբամբ:

— Ո՛չ, ո՛չ, բարի՛ մարդ, — ըսաւ վարժուհին յուզուած: — Ա՛ն դրամդ: Չեմ կրնար ընդունիլ: Ետև ան: Ինծի չիյնար: Երբ տեսուչը գայ՝ այն ատեն կու գաս: Բայց և ոչ իսկ ինք կ'ընդունի, ապահով եղիր: Այնչափ աշխատեր ես ատոնք շահելու համար, խեղճ մարդ: Հաւասարապէս շնորհակալ ենք ամենքնիս:

— Ո՛չ, ես կու տամ, — պատասխանեց պարտիզպանը, յամառարար. — և յետոյ... կը տեսնենք:

Սակայն վարժուհին դրամն անոր գրպանը ձգեց՝ առանց ժամանակ թողուլու որ մերժէ:

Այն ատեն նա համակամեցաւ՝ գլուխը շարժելով. և ապա երագարար ձեռքով համբոյր մ'ուղղելով վարժուհիին և մեծ աղջկան, և իր աղջկան թևը մտած՝ շուտով դէպ ի դուրս դիմեց ըսելով. — Եկո՛ւր, եկո՛ւր, աղջիկս, խեղճ համրիկս, գանձս:

Եւ աղջիկն իր խոշոր ձայնով բացազանչեց. — Ո՛հ, ինչ գեղեցիկ-ա-րև:



Յ Ո Ի Ն Ի Ս

ԿԱՐԻՊՍԼՏԻ

3. Յունիս, վաղմ ազգային տօն է



ՅՍՕԲ ազգային տոց մ'է: Երեկ իրիկուն մե-  
նաւ Կարիսթաթիս: Գիտե՛ս ո՛վ էր: Այն է,  
որ Պորպոններու բունկարոշրեկե՛ն տասն մի-  
շիսն Իտալացիներ ազատեց: Եօթանասունն և  
նիկց տարուան մեռաւ: Նիցցա ծնած էր, նա-  
շերու հրանանատարի մ'որդին: Ոչք տարեկան էր՝ կեղծ  
մը կեանքը փրկեց. տասներեք տարեկան՝ իր ընկերներով  
չեցուն նաւ մը որ կը նաւարկէր՝ դեպ ի ցամաք քաշեց.  
քան և եօթն տարեկան՝ Մարսիոյ ջրերն խորշուղ և  
րիտասարդ մը փրկեց. քառասունն և մէկ տարեկան՝ Ով-  
կիանոսի վրայ նաւ մը հրդեհէ ազատեց: Նա տասն տարի  
Ամերիկայի մէջ օտար ժողովրդեան մ'ազատորեան համար  
կռուցաւ, երեք պատերազմ մընց Աշտարիացոց դեմ՝ Լօւ-

պարտիոյ, Թրեկերոյի ազատորեան համար, 1840 ին Հը-  
ռափեր պաշտպանեց Գաղղիացոց դեմ, 1860 ին ազատեց  
Փալերմոն և Նափոյին, դարձեալ պատերազմեցաւ Հոմփի  
համար 67 ին, 1870 ին կռուցաւ Գերմանացոց դեմ ի  
պաշտպանորիսն Գաղղիոյ: Նա դիւցազնորեան բոցն ու  
պատերազմի հանձարն ունէր: Քառասունն պատերազմներ  
մընց, և սենեցմէ երեսուն և եօթն յաղթեց: Երբ չկռու-  
ցաւ՝ սպրռուտի համար աշխատեցաւ, կամ մեկնակեաց կըղ-  
ղի մը քաշուցաւ՝ երկիր մշակերու համար: Նա ուսուցիչ,  
նաշատի, գործաւոր, վաճառական, զինուոր, զօրավար, տե-  
տաչ, եղաւ: Մեծ էր, պարզ և բարի: Կ'ատեր բոլոր հա-  
րրատանարողները, կը սիրեր բոլոր ժողովուրդները, կը  
պաշտպաներ ամէն տկար. միայն բարեոյն կը բաղձար,  
պատիւներէն կը հրաժարեր, մանր կ'արհամարհեր, իտա-  
լիան կը պաշտէր: Երբ պատերազմի կողմ' ընէր, ամէն  
կողմանէ քաջամարտիկ լեգեոններ իր քով կը վագէին.  
հարուստները՝ իրենց պարստները կը ձգէին, բանուորներն՝  
իրենց արձնատանոցը, պատանիներ՝ դպրոցները, երբարու  
և կռուերու համար իր փառքին արեւին մէջ: Պատե-  
րազմի մէջ կարմիր շապիկ մը կը հագներ: Ոճեղ, խար-  
տանաչ և գեղեցիկ էր: Ռազմի դաշտերուն վրայ՝ շանք մ'էր,  
սիրոյ մէջ՝ մանուկ մը, ցաւոց մէջ՝ սուրբ մը: Հազար ի-  
տալացիներ մեռած են հայրենիքի համար, մեռելնու ժա-  
մանակ երջանիկ՝ նեռուէն իր յաղթական սեցքը տեսնելով.  
հազարաւորներ պատրաստ էին իրեն համար մեռնելու.  
միլիոններ զինք օրնեցին ու պիտի օրնենէ: Մեռաւ: Բո-  
լոր աշխարհ զինք կու ըսէ: Դու դեռ զինք չես կրնար  
ձանկնալ: Բայց պիտի կարդաս իր շահատակորիսները,  
կեանքիդ մէջ յարստե պիտի ըսես իր վրայ իօտուիլը.  
և ո՛րչափ սաւեյի մեծնաս, եղբայր իր պատկերն ալ բու-

առջևդ պիտի մեծնայ. երբ չափանաս շրջա՝ զիևք հսկայ  
պիտի տեսնես. և երբ այլ ևս այս աշխարհիս վրայ չի  
գտնուիս, երբ չսպրիև այլ ևս քոս որդոց որդիները, և  
անոնք որ անոնցմէ պիտի ծնանիև՝ դեռ շատ սերունդներ  
պիտի տեսնեն բարձրը՝ ժողովուրդներուս ազատարար անոր  
բուսառոր գրոխը՝ իբր աստղերուս շրջանակով մը՝ իր յաղ-  
րանակներուն անուններով պատկուած, և անէև խոսարացոյ  
ձակատև ու հոգիև պիտի փայլի՝ անոր անունև հեշերով:

ՀԱՅՐԴ

## ԲԱՆԱԿԸ

11, Կիրակի. Ազգային տօն. Կարիպալտիի  
մահուան համար եօթն օր յետածգուած:

Քասթէլոյ հրապարակը գնացինը զօրահանդէսը զի-  
տելու, որ բանակի Հրամանատարին առջև կ'ըլլար,  
երկու կարգ ժողովրդեան մէջ: Երբ հետգհետէ կու գային  
զինուորները շարուելու՝ երաժշտախմբերուն և փողերգ-  
ներուն ձայնով, հայրս ինծի Գունդերն ու դրօշակներու  
փառքերը ցոյց կու տար: Առաջին եկան ճեմարանական  
աշակերտները, անոնք՝ որ Զինուորական Երկրաչափ-  
ներու և Թնդանօթածիգներու սպայ պիտի ըլլան, շուրջ  
երեքհարիւր հոգի, սև հագուած, անցան հիանալի շքով՝  
զինուորներով և ուսանողներով խառն: Անոնցմէ վերջ  
հետևակազօրքն եկաւ. Աօսթայի խումբը, որ Կոյիթոյի  
և Սան Մարթինոյի մէջ կուուեցաւ, և Պերկամոյի խում-

բը, որ Քասթէլֆիտարտոյի մէջ կուուեցաւ, չորս զօրա-  
գունդեր, գումարտակ գումարտակի ետեւէ, հազարաւոր  
կարմիր ծոպերով, որ արիւնագոյն ծաղիկներու այնչափ  
կրկին ամենաերկայն դրասանգներու կը նմանէին, որոնք  
երկու ծայրերէն քաշուելով ու ցնցուելով՝ կը տարուէին  
ամբոխին մէջէն: Հետևակազօրէն վերջ Երկրաչափ զի-  
նուորները, պատերազմին բանուորները, յառաջ եկան  
սև ձիու մագէ ցցունքներով և մութ կարմիր ժապա-  
ւէններով. և մինչդեռ ասոնք կը շարուէին, իրենց ետևէն  
հարիւրաւոր ուղիղ երկայն փետրաւորներու գալը կը  
տեսնուէր, որոնք հանդիսականաց զլուխներէն վեր կը  
բարձրանային. ալպեան զինուորներն էին, իտալիոյ  
դներուն պահապանները, ամէնքն ալ բարձրահասակ,  
վարդագոյն և ուժեղ, գալպարեան զխարկներով և  
իրենց լերան խոտին գոյնով՝ գեղեցիկ վառ կանաչ ծո-  
պերով: Գեռ ասոնք կը շարուէին, երբ յանկարծ շշնկոց  
մը լսուեցաւ ամբոխին մէջ, և արձակամարտները՝ հին  
երկոտասաներով վաշտը, որոնք առաջին անգամ Փօրթա  
Փիայի պատուուածքէն Հոովմ մտան, գորշ, թեթեա-  
շարժ, աշխոյժ, հողմածածան ցցունքներով, սև հեղեղի  
մ'ալիքներուն պէս անցան՝ հրապարակը թնդացնելով  
սրածայն փողերով որ ուրախութեան աղաղակներու կը  
նմանէին: Բայց իրենց փողերգը խուլ ոտնատրոփով մը  
խափանուեցաւ, որ դաշտային թնդանօթածիգներու գա-  
լուստն աւետեց. և այն ժամանակ խորխտարար ան-  
ցան՝ երեք հարիւր գոյգ ուժեղ ձիերով լծուած խոշոր  
արկղներու վրայ նստած դեղին ժապաւէններով գեղե-  
ցիկ զինուորներն, և պղնձէ ու պողպատէ երկայն թըն-  
դանօթները՝ փալիլուն իրենց թեթև սայլակներուն վը-  
րայ, որ կ'ոստնուին ու կը հնչէին՝ ուսկից երկիրը կը

դողար: Եւ յետոյ յառաջ եկաւ, դանդաղ, ծանր, գեղեցիկ՝ իր արտաքին յոգնեցուցիչ ու խիստ երևոյթով, իր բարձրահասակ զինուորներով, իր զօրաւոր ջորիներով՝ լեռնային հրետանիներու գունդը, որ արհաւիրք և մահ կը սփռէ մինչև հոն՝ ուր մարդուն ոտքը կը բարձրանայ: Եւ վերջապէս քառասորակ անցաւ, սաղաւարտներն արևու մէջ, ցցուած նիզակներով, հողմածածան դրօշներով, ոսկեշող ու արծաթափայլ, լեցնելով օդը հնչիւններով ու վրնջիւններով՝ ճեկույտ հեծերագոր գեղեցիկ վաշտը, որ տասն ռազմադաշտերու վրայ մըրբիկ սփռեց, Սանթա Լուչիայէն մինչև Վիլլա Ֆրանքա: — Ինչպէս գեղեցիկ է, — բացազանչեցի ես: Սակայն հայրս այն խօսքին վրայ գրեթէ յանդիմանեց զիս, ու ըսաւ. — Բանակը պէտք է նկատել իբրև գեղեցիկ տեսարան մը: Բոլոր այս կարճնեղ և յոյսերով լեցուն երիտասարդութիւնը կրնայ մէկ օրէն միւսը կանչուիլ՝ հայրենիքը պաշտպանելու համար, և քանի մը ժամուան մէջ գնդակներէն ու ռումբներէն բոլոր ջաղդուփշուր ըլլալ: Ամէն անգամ որ հանդիսի մ'առթիւ կը լսես պոռալ, կեցցէ՛ բանակը, կեցցէ՛ իտալիան, աչքիդ առջև բեր՝ այն անցնող վաշտերէն անդին՝ դիակներով ծածկուած և արիւնով ողողուած դաշտ մը, և այն ատեն սրտիդ աւելի խորէն պիտի գոչես « կեցցէ՛ բանակը », և իտալիոյ պատկերը քեզի աւելի խիստ ու աւելի մեծ պիտի երևնայ:

## ԻՏԱԼԻԱ


14. Երեքշաբթի

Այսպէս ողորմեալ հայրենիքդ իր տօներուն մէջ. — Իտալիան, հայրենիքս, ազնուակա՛ն և սիրելի երկիր, ոչ հայրս ոչ մայրս ծնան ոչ պիտի քաղաքիս, ոչ կը յուսամ ևս ալ ապրիլ ոչ մեռելի, ոչ իմ որդիներս պիտի մեծնան ոչ պիտի մեռնին. գեղեցիկ իտալիա, մեծ և փառապանծ դարերէ ի վեր, միացած և ազատ քիչ տարիներէ ի վեր. որ այնչափ երկնային մտաց յոյս սփռեցիր աշխարհի վրայ, և որուն համար այնքան քաջեր մեռան ռազմադաշտերուն վրայ և այնքան դիպցազներ կախադաններու վրայ ելան. մեծաշուք մայր երեքհարիւր քաղաքներու և երեսուն միլիոն որդոց. ևս, մանուկ, որ զքեզ դեռ չեմ ըմբռներ և ամբողջ չեմ ձանկար, իմ բոլոր նոցուփս կը սիրեմ ոչ կը պաշտեմ զքեզ, և կը պարծիմ քեզմէ ծնած ըլլալուս և քո որդիդ կոչուելուս համար: Կը սիրեմ քո հրաշալի ծովերդ ու հիանալի Ալպեաններդ, կը սիրեմ քո շքեղ յուշարձաններդ և անմահ յիշատակներդ, կը սիրեմ քո փառքդ ու գեղեցկութիւնդ. զքեզ բոլոր կը սիրեմ ոչ կը յարգեմ՝ ինչպէս քո այն սիրելի մասդ, ոչ սառչիս անգամ տեսայ արեգակն ու յսեցի քո անուշդ: Բոլորը մէկ սիրով ու հաշտար երախտագիտութեամբ կը սիրեմ, քաջ Թորինոն, հպարտ Ճեկույտն, իմատուն Պարմեան, դիպրիչ Վենետիկը, հօր Միլանը. կը սիրեմ որդիական հաշտար յարգանքով, ազնուական Ֆրիեցիս և անառոր Փաչերմոն,



ՌԻՄՏԿ

մեծ ու գեղեցիկ Նախորդին, գարնանայի և յաշխենական  
 Հռովմը: Կը սիրեմ գրեզ, հայրենիք սուրբ: Եւ կ'երդնում  
 որ բոլոր քոչ որդիքդ երբօր պէս պիտի սիրեմ. պիտի  
 յարգեմ միշտ իմ սրտիս մէջ քոչ սպրոյղ մեծերդ ու մե-  
 ծանուն մեռելայնեդ. գործունեայ և համետ քաղաքացի  
 մը պիտի ըլլամ, ջանալով յարատև ազնուացնել ինքզինքս,  
 քեզի արժանաւոր ըլլալու համար, և իմ փոքրիկ ուժե-  
 թովս աշխատեմ գործելու՝ որ փարատին օր մը քոչ երեսեղ  
 սղոթատարիներ, սգիտարիներ, անիրաւոյններ, ոճիրը, և  
 դոչ կարենաս սպրիչ և զարգանալ հանդարտիկ՝ քոչ գե-  
 ղիշխան իրաւանցդ և ուժիդ մէջ: Կ'երդնում որ քեզի  
 պիտի ծառայեմ, ինչպէս որ կարելի ըլլայ ինձի, հանձա-  
 թով, ձեռքով, սրտով, խոնարհութեամբ և արիւտքեամբ.  
 և երբ հասնի օրը՝ որ պետք ըլլայ քեզի համար արիւնս  
 ու կեանքս տալ, պիտի տամ արիւնս ու պիտի մեռնիմ,  
 գոչելով չեպ ի երկինք քոչ սուրբ անունդ և վերջին համ-  
 բոյրս տարով քոչ օրնեայ դրօշիդ:



## 32 ԱՍՏԻՃԱՆ

Ուրբաթ, 16.

Ազգային տօնին վրայ հինգ օր անցաւ և ջերմութիւնն երեք աստիճան աւելցած է: Հիմա բուն ամրան մէջն ենք, ամէնքը կը սկսին յոգնիլ, ամէնքն ալ կորսնցուցեր են իրենց գարնանային գեղեցիկ վարդի գոյները: Վիզերն ու սրունքները կը նրբանան, գլուխները կ'երերան և աչքերը կը փակուին: Խեղճ Նէլլին որ տաքէն շատ կը նեղուի և երեսը մեղրամոմ դարձեր է, երբեմն գլուխը տետրակին վրայ՝ խոր կը քնանայ. սա կայն կարրօնէն միշտ ուշադիր է իր առջև բաց ու կանգուն զիրը մը դնելու՝ որպէս զի ուսուցիչը զայն չտեսնէ: Քրօսսին՝ իր կարմիր դրուսն այնպիսի կերպով մը զրասեղանին կը կոթնցնէ, որ կարծես իրանէն կը տրուած ու հոն դրուած է: Նօպիսը կը գանգաթի թէ չափազանց շատ ենք և թէ իր օդը կ'ապականենք: Ո՛հ, այժմ՝ որչափ ջանք պէտք է ընել սովորելու համար: Ես տան պատուհանէն կը տեսնեմ այն գեղեցիկ ծառերն՝ որ այնպիսի մութ շուք մը կ'ընեն, ուր յօժաբուծեամբ պիտի երթայի վազվզելու, և վրաս տխրութիւն ու կատաղութիւն կու գայ՝ երբ ստիպուած եմ երթալու գրասեղաններուն մէջ փակուելու: Բայց յետոյ սիրտ կ'առնեմ՝ տեսնելով իմ բարի մայրս՝ որ միշտ ինծի կը նայի երբ դպրոցէն դուրս կ'ելնեմ, տեսնելու համար թէ գունատ եմ, և ամէն էջ աշխատելուս ինծի

կ'ըսէ, — Ինչպէս ես, — և ամէն առտու ժամը վեցին զիս արթնցնելով դասերուս համար, — Քեզ տեսնեմ, քաջ եղիր: Այսչափ օր մնաց, յետոյ կ'ազատիս ու կը հանգչիս, ծառուղոյն ստուերներուն տակ կ'երթաս: — Այո՛, ինք իրաւունք ունի ինծի յիշեցնելու այն տղաքը, որ արտերուն մէջ կ'աշխատին կիզիչ արեգական տակ, կամ գետերու սպիտակ խճերուն մէջ, որ կը կուրացնեն ու կը խաշեն, և այն ապակիի գործարաններուն աշխատատեղերը, որ բոլոր օրը դէմքերնին կազի բոցի մը վրայ ծածկ՝ անշարժ կը կենան. և ամէնքը մեզմէ կանուխ կ'ելնեն առտուն ու հանգիստ չունին: Քաջ եղիր, ուրեմն: Ասոր մէջ ալ Տէրօսսին ամենէն առաջինն է, որ ո՛չ տաքէն, ո՛չ քունէն կը նեղուի, միշտ արթուն, գուարթ՝ իր խարտեաշ գանգուրներով, ինչպէս էր ձմեռը, և առանց յոգնելու կը սովորի և իր շուրջը գտնուողներն արթուն կը բռնէ, իբրև թէ իր ձայնով օդը զովացնէր: Եւ ուրիշ երկու հատ ևս կան՝ միշտ արթուն և ուշադիր, այն պնդագուրի Սթարտին, որ իր դունչը կը խթէ չքնանալու համար, և որչափ աւելի յոգնած ըլլայ ու տաք ընէ, այնչափ աւելի ախանաբը կը սեղմէ և աչքերը կը լայնցնէ, որ կարծես թէ վարժապետն ուսել կ'ուզէ. և այն շահասէր կարօֆֆին՝ բոլորովին զբաղած լուցկիի տուփերու պատկերներով զարդարուած կարմիր թուղթերով հողմահարներ շինելու, որուն հատը՝ երկու հարիւրորդի կը վաճառէ: Բայց ամենէն քաջը Քօրէթթին է. խեղճ Քօրէթթին՝ որ ժամը հինգին կ'ելնէ օգնելու հօրը՝ փայտ կրելու: Ժամը տասնութէկին, դպրոցի մէջ, չկրնար այլ ևս աչքերը բաց բռնել, և գլուխը կուրծքին վրայ կ'էյնայ: Եւ այսուհանդերձ կը զգաստանայ, ծոծրակը կը

շօշափէ, հրաման կը խնդրէ դուրս երթալու և երեսը լուալու համար, քովինները զինք կը ցնցեն ու կը կամթեն: Սակայն այս առտու այնչափ չկըցաւ ինքզինք բռնել, որ կապարի պէս քնացաւ: Ուսուցիչը բարձրաձայն զինք կանչեց. — Քօրէթթի: — Չլսեց: Ուսուցիչը զայրացած՝ կրկնեց. — Քօրէթթի: — Այն ատեն ածխավաճառի որդին՝ որ անոր տան քով կը բընակի, ոտքի ելաւ ու ըսաւ. — Ժամը հինգէն մինչև եօթն աշխատեցաւ փայտի խուրձեր կրելու: — Ուսուցիչը թողուց որ նա քնանայ, և կէս ժամ մը դասախօսութիւնը շարունակեց: Յետոյ Քօրէթթիի գրասեղանին քով գնաց և մեղմով երեսը փչելով զայն արթնցուց: Նա իր առջև տեսնելով ուսուցիչը՝ սարսափած ետև քաշուեցաւ: Բայց ուսուցիչն անոր զլուխն իր ձեռքերուն մէջ բռնելով ու մազերը համբուրելով ըսաւ. — Չքեզ չեմ յանդիմաներ, որդեակ իմ: Քու քունդ բնաւ ծուլութեան քուն չէ. յոգնածութեան քուն է:

## ՀԱՅՐՍ

Շաբաթ, 17.

Անտարակոյս ո՛չ քո Քօրէթթի ընկերոյ, ո՛չ աչ կարրօնէն, իրենց հօրը պիտի չպատասխանեի՞ն ինչպէս դո՞ւ պատասխանեցիր քո՞ հօրոյ այս իրիկուն: Հեկրիկո՛ւ: Ի՛նչպէս կարելի է: Դո՞ւ ինձի պէտք ևս կրողընեայ՝ որ այս բանս ուրիշ անգամ ա՛յ պիտի չպատահի, քանի որ ևս կ'ապ-

քիս: Ա՛նկէ անգամ որ հօրոյ մէկ յանդիմանութենէն՝ տղեղ պատասխան մը գայ յորտէրներուդ վրայ, մտածե այն օրը՝ որ անպատճառ պիտի գայ, յորում գրեզ իր անկողինի քով պիտի կանչէ քեզի բերու համար. — Հեկրիկո՛ւ, ևս գրեզ կը բողբու: — Ո՛վ որդեակ իմ, կրք իր ձայնը վերջիս անգամ պիտի լսես, և շատ ժամանակ վերջն աչ, կրք բարձր ըլլաւ իր բողբու սենեկին մէջ, այն գրքերուն մէջ տեղ՝ զորս ևս այլ ևս պիտի չբանայ, այն ժամանակ յիշելով որ կրքեմն իրեն հանդեպ յարգանաց մէջ պակսեր ևս, դո՞ւ քեզի պիտի հարցնես. — Ի՛նչպէս կարելի է: — Այն ատեն պիտի ընդունես՝ թէ ևս միշտ քո բաւարոյն բարեկամդ կրած է, որ կրք ստիպում էր գրեզ պատմելու, քեզմէ աւելի ինք կը կրէր, և թէ կրքեք ուրիշ բանի համար բացուցած չէ գրեզ բայց միայն քո բարոյոյ համար. և այն ժամանակ պիտի զոչսուս և բարով պիտի համբարես այն փոքր գրասեղանը՝ որուն վրայ այնչափ աշխատեր է, որուն վրայ իր կեանքը մաշեր է իր զաւակներուն համար: Հիմա չես ընդուներ. անիկայ իր ամեն բաները քեզմէ կը ծածկէ բաց ի իր բարոյութենէն ու սերէն: Դո՞ւ չես գիտեր կրքեք թէ կրքեմն այնպիսի յոգնած վայրկեաններ կ'ունենայ, որ կը կարծէ թէ բանի մ'օր միայն ունի ապրելու, և այն վայրկեաններուն մէջ՝ միայն քո վրայ կը խօսի, և ուրիշ սրտի ցաւ չունի՝ բայց միայն գրեզ ապրուստ ու անպաշտպան բողբու: Ե՛ւ քանի՞ անգամներ, այս բանիս վրայ մտածելով, քո՞ սենեակդ կը մտնէ՝ միևնչեռն քունի մէջ ևս, և ձրագը ձեռքը կը կենայ հո՛ն քեզի կայերու, և յետոյ բուն չաւք մը կ'ընէ, և այնպէս յոգնած ու տխուր վիճակով կը վերադառնայ աշխատելու: Ե՛ւ կոյն իսկ կ'անցիտանաւ թէ յաճախ ևս գրեզ կը փնտռէ ու հետոյ կը կենայ, վասն զի սրտին մէջ դառն




վիշտ մը, տնտեսաբան մ'ունի զոր ամեն մարդ կ'ունենայ աշխարհի վրայ, և զբեզ կը փնտռէ՝ իբրև բարեկամ մը՝ մխիթարուելու և մոռնարու համար, և պետք կը զգայ քո ախրոյդ սպառնելուն՝ իր սրտին խաղաղութիւնն ու արիւնքիւնը գտնելու համար։ Մտածէ՝ ուրեմն ի՛նչ ցաւ պիտի ըլլայ իրեն, երբ փոխանակ քո մէջ գոռ և գորով զըտնելու, ցրտութիւն ու սեպտիկառութիւն գտնէ։ Երբեք մի՛ ունենար վրայ այս տակաւի սպերախտութեան արատը։ Մտածէ՝ որ երէ կոյն իսկ տարբի մը պէս բարի ըլլաս, պիտի չկարենաս ըստ բառականխի վարձատրել զինք՝ իր բոլոր քեզի ըրածներուն ու ընկերներուն փոխարեւ։ Եւ մտածե՛ համ, որ կեանքին վրայ չխտանացոյժիր, դժբաղդութիւն մը կրնայ հայրդ քեզմէ աւելոյ՝ մի՛կնչես տրայ ևս, երկու տարիէն, երեք ամիսէն, վաղը։ Ո՛հ, խեղճ Հեկտորիս, ի՛նչպէս շուրջ ամեն բան փոխուած պիտի տեսնես այն ժամանակ. ի՛նչպէս տուրք քեզի ամայի ու դատարկ պիտի երևնայ՝ քո սրագգեստ մօրդ նկատմամբ։ Գնա՛, որդեա՛կ. հօրդ քով վազէ՛. ևս իր սենեկին մէջ կ'աշխատի. ոտքիդ մատներուն վրայ քայի՛ որ մտնելոյ չսէ, զնա՛ մակատդ իր աշտերուն վրայ դնելու և ըսելու՝ որ քեզի ներք ու զբեզ օրնեկ։

ՄԱՅՐԴ

ԳԻՒՂԱՅԻՆ ՊՏՈՅՏ ՄԸ


19, Երկուշաբթի

Հայրս այս անգամ ալ ինծի ներեց, և հրաման տուաւ զեղային պտոյտի մ'երթալու, ինչպէս որոշուած էր չորեքշաբթի՝ Քօրէթթիին հօրը՝ փայտավաճառին հետ։ Ամէնքս ալ կտոր մը բլրան օդի պէտք ունէինք։ Գեղեցիկ զբօսանք մ'եղաւ։ Երէկ Սահմանադրութեան հրապարակը գտնուեցանք՝ Տէրօսսին, Կարբօնէն, Կարօֆֆին, Փրէքօսսին, Քօրէթթի հայր և որդին, և ես՝ պտուղի, երշիկներու ու խաշած հաւկիթներու պաշարներով. ունէինք նաև կաշիէ նաւակիկներ ու թիթեղէ գաւաթներ. Կարբօնէն դղումի անօթ մ'ունէր՝ ճերմակ գինիով լեցուն. Քօրէթթիին՝ իր հօր զինուորական սրուակիկը՝ սև գինիով լեցուն. և փոքրիկ Փրէքօսսին՝ իր երկաթագործի բաճկոնակով, թեին տակ երկու քիլօնոց նկանակ մ'ունէր։ Հանրակառքով գնացինք մինչև Մեծ Աստուածամայր եկեղեցին, և յետոյ թեթևաքայլ ելանք դէպ ի վեր բլուրները։ Կանաչ մը, ստուեր մը, զովութիւն մը կար։ Արօտներու վրայ կը տապալկէինք, երեսնիս առուակներու մէջ կը խոթէինք, մացառներէն կը ցատկէինք։ Քօրէթթի հայրը հեռուէն մեզի կը հետևէր՝ թիկնոցակն ուսերուն վրայ, գաճէ ծխափողը ծխելով, և մերթ ընդ մերթ ձեռքով մեզի կ'սպառնար որ տաքատնիս չձակծկենք։ Փրէքօսսին կը սուլէր. բռնաւ իր սուլելը լսած չէի։ Քօրէթթի որդին՝ քալելու



Աղվախտոսի ցլխառճուսի և ցլխառճուսի

ժամանակ ամէն տեսակ բան կը շինէր. ամէն բան ընել զիտէ այն մարդուկը՝ իր մատի չափ երկայն դանակիկով, ջաղացքի անուակներ, պատառաքաղներ, ցնցուղիկներ. և կ'ուզէր ուրիշին բաներն ալ ինք տանիլ, այնչափ բեռնաւորուած էր որ քրտինքը կը թափէր. սակայն միշտ այժեամբ պէս թեթեւութաց: Տէրօսսի ամէն վայրկեան կը կենար մեզի բոյսերուն և միջտուներուն անուններն ըսելու. ես չեմ գիտեր, ինչպէս կ'ընէ որ այնչափ բան զիտէ: Եւ կարօնէն լուռ ու մունջ հաց կ'ուտէր. բայց մօր մահէն վերջ այլ ևս ատենուան մը պէս այն զուարթ կատակները չընէր մեզի խեղճ կարրօնէն: Միշտ ինքն է, սակայն, հացի պէս անուշ. երբ մեզմէ մէկը վազել կը սկսէր փոսէ մը ցատկելու համար, ինք միւս կողմը կ'անցնէր ձեռք տալու համար. և որովհետեւ Փրէքօսսին կովերէն կը վախնար, վասն զի պզտիկ եղած ժամանակ եղջիւրով խեթկուած էր, ամէն անգամ որ անոնցմէ մէկը կ'անցնէր, կարրօնէն առջևը կեցած զինք կը պաշտպանէր: Մինչև Սանթա Մարգարիտա գնացինք, և յետոյ ոստնլով, զլորտկելով, սկըթուելով... դէպ ի վար սահեցանք: Փրէքօսսին, թփի մը զարնուելով, բաճկոնակը պատռեց, և իր երեքուն կտորներով ամօթահար մնաց. բայց կարօֆֆին, որ միշտ թիկնոցակին մէջ գնդասեղունի, անոնց ծայրերը միացուց որ չէր տեսնուեր, մինչ զեռ նա կը կրկնէր իրեն. — Ներէ՛, ներէ՛. — և յետոյ սկսաւ դարձեալ վազել: Կարօֆֆի իր ժամանակը չէր կորսնցնէր ճամբուն մէջ. աղցանի խոտեր, խղունջներ կը ժողվէր, և ամէն քար որ քիչ մը կը փայլէր՝ զրպանը կը դնէր՝ կարծելով թէ մէջն ոսկի կամ արծաթ կար: Եւ դարձեալ յառաջ վազել, զլորիւ,



Գիւղարկի գոտափայտի քլիման

մազլցել, արևուն ու շուքին տակ, վեր վար ամէն բարձրութիւններէ և համառօտ ճամբաներէ, մինչև որ ուժասպառ և շնչասպառ բլրան մը գագաթը հասանք, ուր խտտին վրայ նստանք ճաշելու: Անձայր դաշտագետին մ'ու բոլոր սպիտակ գագաթներով կապոյտ Ալպեանները կը տեսնուէին: Ամէնքնիս անօթութիւնէ կը մեռնէինք, հացը կարծես կը հալէր: Քօրէթթի հայրը՝ երշիկի բաժինները զգուժի տերեւներու վրայ մեզի կուտար: Եւ այն ժամանակ ամենքնիս միասին սկսանք մեր ուսուցիչներուն և ընկերներուն վրայ խօսիլ որ չէին կրցած գալ և քննութիւններու վրայ: Փրէքօսսի քիչ մը կ'ամչնար ուտելու, և կարրօնէ իր բաժնին լաւագոյն մասը բռնի անոր բերանը կը խօթէր: Քօրէթթի, ծալապատիկ իր հօր քով նստած էր. աւելի երկու եղբարց կը նմանէին՝ քան հայր և որդի՝ այնպէս քովէ քով տեսնելով զիրենք, երկուքն ալ կարմիր ու ժպտադէմ, այն սպիտակ աղւաններով: Հայրն ախորժակով կը կոնծէր, մեր կէս ձգած նաւակիկներն ու գաւաթներն ալ կը դատարկէր, և կ'ըսէր. — Դուք որ դեռ ուսանող էք՝ զինն գէշ կ'ընէ ձեզի. փայտավաճառներն են որ անոր պէտք ունին: — Յետոյ որդւոյն քթէն բռնած կը շարժէր, ըսելով մեզի. — Տղան, սիրեցէ՛ք ասիկայ, որ ազնուութեան ծաղիկ մ'է, ես ինքս կը վկայեմ: — Եւ բաց ի կարրօնէն ամէնքը կը ծիծաղէին: Եւ ինք կը շարունակէր, կոնծելով. — Կը ցաւիմ, ո՛հ: Հիմա ամէնքդ միասին էք, բարի ընկերներ. և քանի մը տարիէն, ո՛վ գիտէ, Հենրիկոս և Տէքօսսի փաստաբաններ կամ ուսուցիչներ պիտի ըլլան, կամ ինչ զիտնամ ես, և միւս չորսերդ խանութի մէջ կամ արուեստի մը յարած, կամ ո՛վ գիտէ ո՛ւր: Եւ այն

ատեն ամէն բան կը վերջանայ, ընկերներ: — Ինչպէս, — պատասխանեց Տէրօսի, — ինձի համար, կարրօնէն միշտ կարրօնէ պիտի մնայ, Փրէքօսին միշտ Փրէքօսի պիտի ըլլայ, միւսներն ալ նոյնպէս, եթէ նոյն իսկ Ռուսաստանի կայսր ըլլամ. իրենք ուր որ ըլլան, հոն պիտի երթամ ես ալ: — Օրհնեալ ըլլաս, — բացազանչեց Քօրէթթի հայրը, սրուակը բարձրացնելով, — այսպէս կ'ըլլայ խօսիլը, բերանդ սիբեմ: Ասոր բախեցէք: Կեցցեն ազնիւ ընկերները, կեցցէ



նաև դպրոցը, որ գծեց մէկ ընտանիք կ'ընէ, թէ ունեցողը և թէ չունեցողը: — Մենք ամենքս իր սրուակին բախեցինք նաւակիկներով ու գաւաթներով և վերջին բաժակը խմեցինք: Եւ նա. — Կեցցէ 49ի զօրախումբը, — գոչեց ոտքի ելնելով և վերջին կաթիլն ալ ձծելով. — և եթէ ձեզի ալ պատահի զօրախումբեր կազմել, ուշ դրէք մեզի պէս պինդ մնալ, տղաք: — Արդէն ժամանակն ուշ էր. վազելով ու երգելով վարիջանք, և երկայն ատեն թև թևի տուած քալեցինք և

երբ Փոյի եզերքն հասանք, կը մթնէր ու հազարաւոր կայծոռիկներ կը թռչտէին: Եւ իրարմէ չբաժնուեցանք մինչև որ Սահմանադրութեան հրապարակը հասանք, յետ մէջերնիս յարմարցնելու՝ որ կիրակի օր միասին գանուինք Վիթթօրիոյ Էմմանուէլէ թատրոնն երթալու՝ և գիշերային դպրոցներու աշակերտաց մրցանակարաշխութիւնը տեսնելու: Ինչ գեղեցիկ օրագուարձ: Ինչպէս ուրախ տուն պիտի մտնէի, եթէ խեղճ վարժուհիս չհանդիպէի: Իրեն հանդիպեցայ՝ երբ մեր տան սանդուղներէն կ'իջնէր, գրեթէ մութ էր, և հազիւ զիս ճանչցաւ, երկու ձեռքերս ալ բռնեց, և ախանջէս ըսաւ. — Մնաս բարեաւ, Հենրիկոս, յիշէ՛ զիս: Տեսայ որ կու լար: Վեր ելայ, և մօրս ըսի. — Վարժուհիս հանդիպեցայ: — Անկողին մտնելու կ'երթար, — պատասխանեց ինձի մայրս, որուն աչքերը կարմրած էին: Յետոյ խոր տիրութեամբ աւելցուց, պիշ ինձի նայելով. — Քու խեղճ վարժուհիդ... ծանր հիւանդ է:

## ԳՈՐԾԱՒՈՐԱՅ ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆԸ

25. Կիրակի

Ինչպէս ժամադրեր էինք, ամենքնիս միասին Վիթթօրիոյ Էմմանուէլէ թատրոնը գնացինք, գործաւորաց մրցանակարաշխութիւնը տեսնելու: Թատրոնը մարտի 14ին պէս զարդարուած ու խոնուած էր. բայց գրեթէ բոլոր գործաւորաց ընտանիքներով, և գետնայարկը

խմբերգական դպրոցի աշակերտներ ու աշակերտուհիներ բռնած էին. որոնք Խրիմի մէջ մեռած գինուորացի պատիւ նուազ մ'երգեցին, այնպէս գեղեցիկ՝ որ երբ լմնցաւ, ամէնքը ծափ զարնելով և գոչելով ոտքի ելան, և ստիպուեցան զայն կրկնել: Եւ անմիջապէս յետոյ սկսան մըրցանակաւորները շարուիլ Քաղաքապետին, Գաւառապետին և ուրիշ շատերուն առջև, որոնք Խնայողութեան արկղին տետրներ, գրքոյկներ, վկայագրեր և մետալներ կը բաշխէին: Գետնայարկի մէկ անկեան մէջ փոքրիկ որմնաղիբը տեսայ, մօրը քով նստած, և ուրիշ տեղ մը Տեսուչը կար, և անոր ետև՝ իմ երկրորդ դասարանիս ուսուցչին կարմիր զլուխը: Առաջին անգամ կարգաւ անցան, զծագրութեան գիշերային դպրոցի աշակերտները, ոսկերիչներ, քանդակագործներ, վիմագրողներ, և նոյնպէս հիւսեր ու որմնաղիբներ. յետոյ վաճառականական դպրոցիները, ապա երաժշտական Լիկէոնի աշակերտները, որոնց մէջ բազմաթիւ աղջիկներ, բանուորուհիներ, ամէնքն ալ մարուր հագուած՝ որոնք մեծ ծափահարութեամբ ողջունուեցան, և կը ծիծաղէին: Ի վերջոյ եկան գիշերային նախակրթարանի աշակերտները, և այն ժամանակ սկսաւ տեսարանը գեղեցկանալ: Ամէն հասակէ կ'անցնէին, ամէն արուեստէ և ամէն զգեստ հագուած. գորշ մազերով մարդիկ, արուեստանոցներու տղաքներ, սև խոշոր մօրուքներով բանուորներ: Փոքրներն աշխուժ էին, մարդիկ քիչ մը շփոթած. բազմութիւնը՝ ամենէն ծերերն ու ամենէն երիտասարդները կը ծափահարէր: Հանդիսատեսներէն ո՛չ ոք կը ծիծաղէր, ինչպէս կ'ընէին մեր հանդիսին ժամանակ. ամէն դէմք՝ ուշադիր և լուրջ էր: Մրցանակաւորներէն շատերուն կլինն ու որդիքը թատրոնի գետնայարկն էին,

և մանուկներ կային՝ որ երբ իրենց հօր թատերարեմի վրայէն անցնելը կը տեսնէին՝ բարձրաձայն ծիծաղով զիրենք անունով կը կանչէին ու ձեռքով կը ցուցնէին: Անցան զիւզացիներ, բեռնակիրներ. վերջիններս Պուօն-բօմփանյի դպրոցէն էին: Չիթթատէլլայի դպրոցէն կօշիկ մաքրող մ'անցաւ, զոր հայրս կը ճանչնայ, որուն վկայագիր մը տուաւ Գաւառապետը: Իրմէ վերջ հսկայի պէս մեծ մարդու մը գալը տեսայ, զոր կարծես ուրիշ անգամ տեսած էի...: Փոքրիկ որմնաղիբն հայրն էր, որ երկրորդ մրցանակը կ'ընդունէր: Յիշեցի թէ զինք ձեղունին մէջ տեսած էի՝ իր հիւանդ որդւոյն անկողնոյն քով, և իսկոյն որդին գետնայարկին մէջ փնտուցելիս ինձ որմնաղիբի: Նա փախելուն աչքերով իր հօր կը նայէր, և յուզումը ծածկելու համար՝ ընչապտուկ կ'ընէր: Այն բոլորէն սաստիկ ծափահարութիւն մը լսեցի, բեմին նայեցայ, փոքր ծխնելոյց մաքրող մը կար, լուացուած երեսով, բայց իր աշխատութեան զգեստով, և Քաղաքապետը մէկ ձեռքէն բռնած հետը կը խօսակցէր: Ծխնելոյց մաքրողէն վերջ՝ խոհարար մ'եկաւ: Յետոյ, թաղապետական ծխնելոյց մաքրող մ'անցաւ մետալն առնելու, Ռայինէրի դպրոցէն: Չեմ գիտեր ի՛նչ բան կը զգայի սրտիս մէջ, տեսակ մը մեծ սէր ու յարգանք, մտածելով թէ ո՛րչափ արժամ էին այն մըրցանակները՝ բոլոր այն աշխատաւորներուն, ընտանեաց հայրերուն, որոնք լի մտածութիւններով, ո՛րչափ ջանք ու աշխատութիւններ բարդած են իրենց յոգնութեանց վրայ, ո՛րչափ ժամեր զողցած իրենց քունէն՝ որուն այնչափ պէտք ունին, և դարձեալ ո՛րչափ ճիգեր իրենց ուսման անվարժ մտքերուն և աշխատութենէ կորդացած թանձր ձեռքերուն: Արուեստանոցի տղայ մ'անցաւ, ու

րուն վրայէն կը տեսնուէր՝ որ հայրն իր զգեստը փոխ տուած էր այն պարագային համար, և որուն թեզանիքն այնքան կախուած էին, որ բեմին վրայ ստիպուեցաւ զանոնք վեր ծալլել՝ իր մրցանակը կարենալ առնելու համար, և շատերը ծիծաղեցան. բայց ծիծաղն իսկոյն խղճուեցաւ ծափահարութիւններէն: Յետոյ ճաղատ ու սպիտակ մօրուքով ձերունի մ'եկաւ: Ռմբածիգ զինուորներ անցան, անոնցմէ՝ որ մեր Բաժնին մէջ գիշերային դասախօսութեան կու գային. ապա մաքսային պաշտօնեաներ, քաղաքապետական պահապաններ, անոնցմէ՝ որ մեր դպրոցներուն պահպանութիւն կ'ընեն: Ի վերջոյ գիշերային դպրոցի աշակերտները դարձեալ նուազեցին ի պատիւ Խրիմու մեռեալներուն շինուած երգը. բայց այս անգամ այնչափ եռանդով, որ բազմութիւնը գրեթէ այլ ևս չծափահարեց, և ամէնքը յուզուած դուրս ելան հանդարտ ու առանց աղմուկի: Քանի մը վայրկեանէն բոլոր ճամբան բազմութեամբ լեցուեցաւ: Թատրոնի դրան առջև ծխնելոյզ մաքրողը կար իր կարմրակազմ մրցանակի գրքովը, և շուրջը պարոններ՝ որ իր հետ կը խօսակցէին: Շատերը ճամբուն այս ու այն կողմերէն կ'ողջունուէին, բանուորներ, տղաք, պահապաններ, ուսուցիչներ: Իմ երկրորդ դասարանի ուսուցիչս՝ թնդանօթածիգ երկու զինուորներու հետ դուրս ելաւ: Եւ գործաւորներու կիներ կը տեսնուէին՝ մանուկներն զրկերնին, որոնք իրենց հօր վկայագրերը փոքրիկ ձեռքերնուն մէջ բռնած՝ հպարտութեամբ բազմութեան ցոյց կու տային:

## ՎԱՐԺՈՒՀԻՍ ՄԵՌԱԾ

Երեքշաբթի, 27.

Մինչդեռ մենք՝ վիթթօրիոյ Էմմանուէլէ Թատրոնն էինք, իմ խեղճ վարժուհիս կը մեռնէր: Իմ մօրս այցելութեան գալէն եօթն օր վերջը, ժամս երկուրին մե-



տաւ: Տեսուչն երէկ առտու դպրոց եկաւ տխուր լուրը գումեկու: Եւ ըսաւ. — Չեզմէ անոնք որ իրեն աշակերտեցան, գիտեն թէ որչափ բարի էր, ինչպէս կը սիրէր տղաքը. մայր մ'էր՝ անոնց համար: Հիմա չկայ այլ ևս: Ահաւոր հիւանդութիւն մ'երկար ժամանակէ

ի վեր զինք կը սպառէր: Եթէ օրապահիկը շահելու պէտքն ունեցած չըլլար, կրնար ինքզինք խնամել, և գուցէ առողջանալ. գոնէ կեանքը քանի մ'ամիս կ'երկարէր, եթէ արձակուրդի հրաման առնէր: Բայց ինք, մինչև վերջին օրը՝ ուզեց իր աշակերտաց մէջ մնալ: Ամսոյս 17ին, շաբաթ իրիկունը, անոնց հրաժեշտ տուաւ, ապահով ըլլալով որ այլ ևս զանոնք պիտի չտեսնէր, վերջին անգամ մ'ևս անոնց բարի խրատներ տուաւ, զամէնքը համբուրեց, ու հեծկտալով մեկնեցաւ: Այժմ ոչ ոք այլ ևս զինք պիտի տեսնէ: Յիշեցէք զինք, որդեակք: — Փոքրիկ Փրէքօսսին որ նախակրթարանին մէջ իրեն աշակերտած էր, զլուիւր ծոցը գրասեղանին վրայ ու սկսաւ լալ:

Երէկ իրիկուն, դպրոցէն վերջ, ամենքնիս միասին ննջեցեալին տունը գնացինք, դազադին հետ դէպ ի եկեղեցի երթալու համար: Արդէն ճամբուն մէջ երկու ձիով մեռելակառք մը կար, և բազմութիւն մը՝ որ կը սպասէր ցած ձայնով խօսելով: Հոն էին Տեսուչը, մեր դպրոցի բոլոր ուսուցիչներն ու վարժուհիները, ինչպէս նաև ուրիշ բաժիններունը, ուր մեռեալը տարիներ անաջ դասախօսած էր. իր դասարանին մանկունք գրեթէ բոլոր հոն էին, մօրերնուն հետ եկած, և մոմեր բերած. և ուրիշ դասարաններու շատեր՝ և Պարէթթիի բաժնէն յիսունի չափ աղջիկներ, ոմանք՝ պսակ մը ձեռքերնին, ուրիշներ՝ ծաղկանց փունջ մը: Արդէն բազմաթիւ ծաղկեփունջեր մահակառքին վրայ դրած էին, ուսկից կակժիրակէ խոշոր պսակ մը կախուած էր՝ վրան սև տառերով գրուած. Նախորդ յորրորդ դասարանի աշակերտուհիները՝ իրենց վարժուհիին. — և այդ պսակին տակ՝ փոքր մ'ալ կախուած կար, զոր իր մանուկները

բերած էին: Ամբոխին մէջ բազմաթիւ աղախիններ կը տեսնուէին, տանտիկիներէ զրկուած, մոմ ի ձեռին, ինչպէս նաև նշանազգեստով երկու սպասաւորներ՝ ջահեր ձեռքերնին. և հարուստ պարոն մը, վարժուհիին աշակերտաց միոյն հայրը, իր կառքը բերել տուած էր՝ կապոյտ մետաքսով պատած: Ամէնքը դրան առջև խմբուած էին: Մէկէն աւելի աղջիկներ՝ արցունքնին կը սրբէին: Բաւական ատեն լուս սպասեցինք: Վերջապէս վար բերին դազադը: Երբ մեծ ու պզտիկ աշակերտներ դազադին կառքին մէջ զրուիլը տեսան՝ սկսան բարձրաձայն լալ, և մէկը սկսաւ պոռալ իբր թէ միայն այն ատեն հասկցած ըլլար՝ թէ իր վարժուհին մեռած էր, և այնպիսի ջղածիգ հեծկտուր մը բռնեց զինք, զոր հեռացնել ստիպուեցան: Թափօրը հանդարտօրէն կարգի դրուեցաւ և շարժեցաւ: Առջևէն կ'երթային Յիւրթեան Մենարանի աղջկունք, կանաչ հագուած. յետոյ Տիրամօր աղջկունք, բոլորովին սպիտակ, կապոյտ ժապաւէնով. ապա քահանայը. և կառքին ետևէն ուսուցիչներն ու ուսուցչուհիները, և նախակրթարանին մանուկներն ու բոլոր միւսները, և ի վերջոյ ժողովուրդը: Մարդիկ պատուհաններուն առջև և դրանց սեմերուն վրայ կ'ելնէին, և տեսնելով բոլոր այն աղաքն ու պսակը, կ'ըսէին. — Վարժուհի մ'է: — Նոյն իսկ պզտիկներն առաջնորդող կանանցմէ ոմանք կու լային: Եկեղեցի հասնելով, դազադը կառքէն հանեցին, և եկեղեցւոյն մէջ տեղ՝ աւագ խորանին առջև դրին. վարժուհիները պրսակները վրան զետեղեցին, մանուկները զայն ծաղիկներով պատեցին, և բազմութիւնը շուրջ բոլորած, վառուած մոմը ձեռքերնին, մեծ և մթին եկեղեցւոյ մէջ հոգեհանգիստն սկսաւ: Յետոյ, յանկարծ, երբ քահա-

նայն վերջին Ամենն ըսաւ, մոմերը մարեցին և ամէնքը շտապով դուրս ելան ու վարժուհին միայնակ մնաց: Խեղճ վարժուհի, այնչափ բարի էր ինձի հետ, և այնչափ համբերութիւն ունէր, որ տարիներով վաստակած էր: Նա իր սակաւաթիւ գրքերն իր աշակերտներուն թողուց, մէկուն՝ կաղամար մը, ուրիշի մը՝ տետրակ մը, բոլոր՝ ինչ որ ունէր, և մեռնելէն երկու օր առաջ Տեսչին ըսաւ՝ ամենէն փոքրները չթողուլ որ իր դագաղին ընկերեն, վասն զի չէր ուզեր որ լային: Բարիք ըրաւ, կրեց, մեռաւ: Խեղճ վարժուհի, մինակ մնաց մութ եկեղեցւոյն մէջ: Երթաս բարեան: Երթաս բարեան ընդ միշտ, սիրելի՛ բարեկամուհիս, իմ մանկութեանս քաղցր ու տխուր յիշատակ:



Երթաս բարեան ընդ միշտ.

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

28. Չորեքշաբթի

Խեղճ վարժուհիս ուզեց իր դպրոցական տարին աւարտել. դասերը վերջանալէն երեք օր առաջ մեկնեցաւ: Վաղը չէ միւս օր անգամ մ'ալ դասարան պիտի երթանք՝ վերջին ամսօրեայ պատմութեան ընթերցումը լսելու. Նաւարեկուրիանը. և ապա... կը լրանայ: Յուլիս մէկ, շաբաթ օրը քննութիւնները կը սկսին: Տարի մ'ես սահեցաւ և չորրորդն ալ վերջացաւ: Եթէ վարժուհիս մեռած չըլլար, լաւ անցած պիտի ըլլար: — Ես միտքս կը բերեմ այն՝ զոր անցեալ հոկտեմբերին գիտէի, և ինձի կ'երևնայ թէ շատ աւելի բան գիտեմ այժմ. շատ նոր բաներ կան մտքիս մէջ. հիմա լաւագոյն կերպով կրնամ ըսել ու գրով բացատրել միտքս. շատ մեծերու հաշիւն ալ կրնամ բռնել՝ զոր իրենք չեն գիտեր, և անոնց գործին մէջ կրնամ իրենց օգնել, և շատ աւելի կը հասկնամ, գրեթէ ինչ որ կը կարգամ՝ կը հասկնամ: Ուրախ եմ...: Բայց որչափներ զիս զրոյսած ու ինձի օգնած են սովորելու համար, ոմն այս և ոմն այն կերպով, տունը, դպրոցին մէջ, ճամբուն վրայ, ամէն տեղ ուր գնացեր եմ և ուր ո՛ր և է բան մը տեսեր եմ: Եւ ես հիմակ շնորհակալ եմ ամենուն: Նախ շնորհակալ կ'ըլլամ քեզի, ազնիւ ուսուցիչս, որ այնչափ երկայնամիտ և գորովասիրտ եղեր ես ինձի, և որուն յոգնութիւն մ'արժեք է այն ամէն նոր ծանօթութիւն, որուն



համար հիմակ ուրախ եմ ու կը պարծիմ: Ենորհակալ եմ քեզի, Տէրօսսի, իմ հրաշալի ընկերս, որ քու յօժարակամ և ազնիւ բացատրութիւններովդ շատ անգամ ինծի հասկցնել տուիր այնչափ զժուարին բաներ և յաղթել՝ քննութեանց զժուարութիւններուն. և միանգամայն քեզի, քաջ և ուժեղ Սթարտի, որ ինծի ցոյց տուիր ինչպէս երկաթէ կամք մը՝ ամէն բանի մէջ կը յաջողի. և քեզի, ազնիւ և վեհանձնդ կարբօնէ՛, որ վեհանձն և ազնիւ կ'ընես այն ամէնքը՝ որ զքեզ կը ճանչնան. նոյնպէս ձեզի, Փրէքօսսի և Քօրէթթի, որ միշտ ինծի օրինակ տուած էք, վշտերու մէջ՝ քաջասուրտութեան, իսկ աշխատութեան մէջ՝ զուարթութեան. շնորհակալ եմ, կ'ըսեմ ձեզի, շնորհակալ եմ ամենուր: Սակայն մասնաւորապէս շնորհակալ եմ քեզի, հայր իմ, իմ առաջին ուսուցիչս, առաջին բարեկամս, որ ինծի այնչափ բարի խրատներ տուիր և այնչափ բաներ սովորեցուցիր, մինչդեռ ինծի համար կ'աշխատէիր, ծածկելով միշտ ինծմէ քու վիշտերդ, և ամէն կերպով ջանալով ուսումն արտօրժելի ընել ինծի, իսկ կեանքը գեղեցիկ. քեզի, ո՛վ իմ անուշիկ մայրս, սիրելի և օրհնեալ պահապան հրեշտակս, որ հրճուեր ես բոլոր իմ ուրախութիւններովս, և կրեր ես բոլոր իմ ցաւերս, որ ինծի հետ սովրած, վաստակած ու լացած ես, մէկ ձեռքովդ ճակատս շոյելով և միւսով ինծի երկինք ցոյց տալով: Ես կը ծնրադրեմ ձեք առջև, ինչպէս երբ մանուկ էի, և շնորհակալ կ'ըլլամ ձեզի, շնորհակալ կ'ըլլամ բոլոր խանդաղատանքով՝ զոր տասներկու տարիներու մէջ սրտիս վրայ դրոշմած էք զոհողութիւններով և սիրով:

## ՆԱԽԱԲԵԿՈՒԹԻՒՆ

(Վերջին ամսօրեայ պատմութիւն)

Ես տարի առաջ, զեկտեմբեր ամսոյն աւաւօտ մը, Լիվրփուլի նաւահանգստէն մեծ շուգենաւ մը խարխալը կը վերցնէր, որ իր վրայ երկու հարիւրէ աւելի ուղևոր ունէր, որոնցմէ եօթանասունը նաւաղ: Նաւապետն ու գրեթէ բոլոր նաւաստիք անդդիացի էին: Ճանապարհորդներուն մէջ կը գտնուէին բազմաթիւ իտալացիներ ալ. երեք տիկին, քահանայ մը, երաժիշտներու խումբ մը: Ծոզենաւը դէպ ի Մալթա կղզին պիտի երթար: Օղն ամպամած էր: Երբորդ կարգի ուղևորներուն մէջ, առաջակողմը, տասներկու տարեկանի մօտ իտալացի տղայ մը կար, տարիքին համեմատ փոքրահասակ բայց կայտառ. սիկիլիացի խիտ և քաջասիրտ զեղեցիկ դէմք մը: Միայնակ նստած էր առաջակայմին քով չուաններու զէզի մը վրայ, հինցած պայուսակի մը մօտ որ իր զգեստեղէնները կը պարունակէր, և որուն վրայ մէկ ձեռքը դրած էր: Դէմքը թուխ էր, մաղերը սև և գանգրաւոր, որ գրեթէ ուսերուն վրայ կ'իջնէին: Խեղճուկ հագուեր էր, պարուսած ծածկոյթ մ'ուսերուն վրայ, և կաշիէ

պայուսակ մ'ուսընդանու թ: Մտած կոտ, կը դիտէր շուրջը գտնուող ուղեորները, շողենաւը, նաւաստիները՝ որ վազերով կ'անցնէին, և անհանդարտ ծովուն կը նայէր: Գեռ նոր ընտանեկան մեծ դըժբաղդութենէ մը հարուածեալ տղու մ'երևոյթն ունէր. դէմքը՝ մանուկի մը, իսկ արտայայտութիւնը՝ մարդու մը:

Մեկնումէն քիչ յետոյ, նաւաստիներէն մին, իտալացի մը, մոխրագոյն մազերով, նաւին յառաջակողմն երեցաւ՝

փոքր ազլկան մը ձեռքէն բռնած, և փոքր սիկիլիացիին առջև կենարով, ըսաւ. — Ահաւասիկ, Մարիոյ, քեզի ուղևորութեան ընկեր մը:

Յետոյ ինք հեռացաւ:

Ազլիկը, տղուն մօտ՝ չուաններու կողմին վրայ նստաւ:

Իրարու նայեցան:

— Ո՛ր կ'երթար:



— Հարցուց անոր սիկիլիացին:

Ազլիկը պատասխանեց. — Գէպ ի Մալթա, Նափուլիի ճամբով:

Յետոյ աւելցուց. — Կ'երթամ հայրս ու մայրս գտնելու, որ ինձի կը սպասեն: Անունս Ճիուլիէթթա Ֆաճճիանի է:

Տղան բան մը չըսաւ:

Քանի մը վայրկեան վերջ՝ պայուսակէն հայ ու չոր միրգեր հանեց. ազլիկը պաքսիմատներ ունէր. կերան:

— Զուարթ եղէք, — գոչեց իտալացի նաւաստին երագարար անցնելով: — Հիմա փոքր պար մը կը սկսի:

Հոյն երթալով կ'աճէր, շողենաւը տաստիկ կը տատանէր: Բայց երկու տղաքը, որ ծովախտէ չէին բռնուեր, կարևորութիւն չուուն: Ազլիկը կը ժպտէր: Գրեթէ իր ընկերոջ տարեկից էր, բայց աւելի բարձրահասակ. թխադէմ, նուրբ, քիչ մը տանջուած, և ամենախեղճ հագուած: Մազերը կարճ ու գանգրաւոր կտրուած էր, կարմիր թաշկինակ մը գլխուն շուրջը, և երկու արծաթէ օղակներ ականջներէն կախուած:

Ուտելու ժամանակ, իրենց գլխէն անցածներն իրարու պատմեցին: Տղան այլ ևս ոչ հայր ունէր, ոչ մայր: Հայրը գործաւոր էր, քիչ առաջ Ղիվըրփուլի մէջ մեռած՝ զինք մինակ թողլով, և իտալական հիւպատոսը զինք իր հայրենիքը փախըմնի կը վերադարձնէր, ուր իր հեռաւոր ազգականներ մնացեր էին միայն: Ազլիկը, նախորդ տարին Լոնտրոն տարուած էր, իր մէկ մօրաքրոջ ձեռքով՝ որ զինք շատ կը սիրէր և որուն յանձներ էին իր — աղքատ — ծնողքը, զինք քիչ մը ժամանակի համար վստահացած՝ խոստացուած ժառանգութեան մը վրայ, բայց քիչ ամիս վերջ, մօրաքոյրը հանրակառքէ մը ջախջախուած մեռած էր, առանց դրամ մը թողլու. այն ժամանակ ինք ալ

Հիւպատոսին դիմեր էր, որ զինք դէպ ի Խտալիա նաւ դրած էր: Երկուքն ալ խտալացի նաւաստիին յանձնուած էին: — Այսպէս, — եղբակացուց ազլիկը, — հայրս ու մայրս կը կարծէին թէ հարուստ պիտի վերադառնայի, ընդհակառակն ազբատ կը վերադառնամ: Սակայն հաւատարագէս զիս շատ կը սիրեն: Ինչպէս նաև եղբայրներս: Չորս հաս ունիմ, ամէնքը փոքր: Ես տան առաջինն եմ: Զիրենք կը հագուեցնեմ: Զիս տեսնելով շատ պիտի ուրախանան: Ոտքիս մատներուն վրայ ներս պիտի մտնեմ...: Ծովը լաւ չէ:

Յետոյ հարցուց տղուն. — Դու ալ քու ծնողացըդ քով կ'երթաս:

— Այո... եթէ զիս ուզեն, — պատասխանեց:

— Զքեզ չե՞ն սիրեր:

— Չեմ գիտեր:

— Ես Ծննդեան տասներեք տարիս կը լրացընեմ, — ըսաւ ազլիկը:

Յետոյ սկսան իրենց շուրջը գտնուող մարդկան և ծովուն վրայ խօսիլ: Բոլոր օրը քով քովի կեցան, երբեմն երբեմն քանի մը բառ փոխանակելով: Ուղևորները զիրենք քոյր եղբայր կը կարծէին: Ազլիկը գուրպայ կը հիւսէր, տղան կը մըտածէր, ծովն երթալով կ'ուռէր: Իրիկունը, երբ ննջելու պիտի երթային, իրարմէ բաժնուելու ժամանակ ազլիկն ըսաւ Մարիոյի. — Բարի հանգիստ: — Ոչ ոք պիտի կարենայ հանգիստ քուն ըլլալ, զաւակներս, — ըսաւ խտալացի նաւաստիին երագաքայլ անցնելով, նաւապետէն կանչուած: Տըզան իր բարեկամուհայն, — Գիշեր բարի, —

ըսելու վրայ էր, երբ անակընկալ ջրոյ սրակում մը՝ ուժգին թափով վրան եկաւ ու զինք նստարանի մը դարկաւ: — Վախ մայրիկ, արիւն կը վազէ, — գոչեց ազլիկը՝ անոր վրայ նետուելով: Ուղևորներն որ ծածքին ստորոտը կը վազէին, ու շագրութիւն չբարձուցին: Ազլիկը Մարիոյի քով ծնրադրեց, որ հարուածէն թմրած էր, անոր աւրիւնտա ճակառը մաքրեց, և կարմիր թաշկինակն իր մազերէն քակելով անոր գլուխը փաթթեց, յետոյ դայն իր կուրծքին վրայ սեղմեց՝ թաշկինակին երկու ծայրերը հանգոյց ընելու համար, և այսպէս իր դեղին զգեստին ու մէջքի կամարին վրայ արեան բիծ մը մնաց: Մարիոյ սթափեցաւ, ոտքի ելաւ: — Լաւ կը զգաս, — հարցուց ազլիկը: — Բան չունիմ՝ այլ ևս, — պատասխանեց: — Բարի հանգիստ, — ըսաւ ծիւղիէթթա: — Գիշեր բարի, — պատասխանեց Մարիոյ: Եւ երկու մծաիկ սանդուղներով իրենց ննջարաններն իջան:

Նաւաստին ճիշդ գուշակած էր: Դեռ քնացած չէին, և ահա սոսկալի փոթորիկ մ'եկաւ: Կատաղի ալիքներու անակընկալ յարձակում մը քանի մը վայրկեանի մէջ մէկ կայմը ջախջախեց, և նաւուն շրթունքներէն կախուած երեք մակոյկներն ու առաջակողմը գտնուած չորս եզները՝ տերևներու պէս քշեց տարաւ: Շոգենաւին մէջ շփոթութիւն մը, սարսափ մը, դղրդիւն մը, աղաղակներու՝ լացերու և աղօթքներու ժխոր մը ծագեցաւ, որ մազերը ցցուիլ կու տար: Փոթորիկը բոլոր գիշերը կատաղորէն երթալով սաստկացաւ: Առաւօ

տեան դէմ դեռ աւելի զայրացաւ: Բարձրակուտակ ալիքները, շոգենաւին կողերուն բախերով, ծածքին վրայ կը խորտակուէին, կը փշրէին, կ'աւլէին, ամէն բան ծովու մէջ կը տապալէին: Մեքենային վրայի ծածքը կործանեցաւ, և ջուրը սոսկալի շառաչիւնով մը ներս խուժեց, կրակները մարեցան, մեքենագործները փախան. խոշոր առուակներ՝ բուռն կերպով ամէն կողմանէ ներս հոսեցան: Որտացող ձայն մը գոչեց. — Զրհանները. — Նաւապետին ձայնն էր: Նաւաստիները ջրհաններուն վրայ յարձակեցան: Բայց ծովու յանկարծական հարուած մը՝ շոգենաւին ետեի կողմը զարնելով, եզերքներն ու դռնակները քայքայեց և հեղեղ մը ներս խուժեց:

Բոլոր ուղևորները, աւելի մեռեալ քան կենդանի, մեծ սրահին մէջ ապաստանած էին:

Վայրկեան մը յանկարծ նաւապետն երեցաւ:

— Նաւապետ: Նաւապետ, — գոչեցին բոլորը միասին: — Ի՞նչ կ'ըլլայ: Ի՞նչ վիճակի մէջ ե՞նք: Յոյս կայ: Փրկէ՛ զմեզ:

Նաւապետն սպասեց որ ամէնքը լռեն, և ըսաւ պազարիւնութեամբ. — Համակամինք:

Կին մը միայն ճիշ մ'արձակեց. — Գլխութիւն: — Ուրիշ ոչ ոք կրցաւ ձայն հանել: Սարսափը՝ ամէնքը սառեցուցեր էր: Երկար ժամանակ այսպիսի գերեզմանական լռութեամբ մ'անցաւ: Ամէնքը գունաթափ դէմքով իրարու նայեցան: Ծովը միշտ աւելի կը կատողէր, սոսկալի կերպով: Շոգենաւը ծանրապէս կը տատանէր: Յարմար վայրկենի մը նաւապետը փորձեց փրկութեան նա-

ւակ մ'իջեցնել ծովը. սակայն ալիքը զայն չըջեց, և երկու նաւաստիներ խողզուեցան, որոնց մէջ նաև խտալացին. միւսները հազիւ կրցան չուաններուն կառչիլ ու վեր ելնել:

Ասկից վերջ մի և նոյն նաւազներն իրենց քաջաւարտութիւնը կորուսին: Երկու ժամ՝ յետոյ, արդէն շոգենաւը մինչև առագաստակալ չուանները ջրոյ մէջ ընկզմած էր:

Այս պահուս ահաւոր տեսարան մը կը ներկայանար նաւուն վերնայարկը: Մայրեր՝ յուսահտուր իրենց որդիները կուրծքերնուն վրայ կը սեղմէին, բարեկամներ կը գիւրկընդխառնէին և իրարու հրաժեշտի ողջոյն կու տային. ոմանք վարը սենեակնին կ'իջնէին՝ առանց ծովը տեսնելու մեռնելու համար: Ճանապարհորդ մը, ատրճանակի հարուած մը քաշեց գլխուն, և ննջարանի սանդուղին վրայ գեաին ինկաւ, ուր հոգին փչեց: Շատերը մոլեգնաբար իրարու կը փաթթուէին, կիներ սոսկալի ջրածգութեամբ կը գայարուէին: Բազմութիւն մը՝ քահանային շուրջը ծնրազրած կը կենային: Հեծկտուքներու խմբերդ մը, մանկական ողբեր, սուր ու անհէթեթ ձայներ կը լսուէին, և հոս ու հոն արձանի պէս անշարժ, ապշահար մարդիկ կը տեսնուէին, աչքերնին խոշոր բացած՝ բայց առանց տեսնելու, դիակներու և խենթերու դէմքեր: Երկու տղաքը, Մարիոն և Ճիուլիթթան, շոգենաւի մէկ կայմին փաթթութեամբ՝ իբրև անզգայ՝ սևեռուն աչքերով ծովուն կը նայէին:

Ծովը քիչ մը խաղաղած էր. բայց շոգենաւը

կը շարունակէր ընկզմիլ, դանդաղօրէն: Հազիւ քանի մը բոպէ մնացեր էր:

— Մակոյկը դէպ ի ծնի, — գոչեց նաւապետը: Վերջին մակոյկը ջուրը նետուեցաւ, և տասն և չորս նաւազներ, երեք ուղևորներով մէջն իջան: Նաւապետը շոգենաւին վրայ մնաց:

— Մեզի հետ իջիր, — գոչեցին վարէն:

— Ես իմ տեղոյս վրայ պէտք եմ մեռնիլ, — պատասխանեց նաւապետը:

— Շոգենաւի մը կրնանք հանդիպիլ, — պռուացին իրեն նաւաստիները, — կ'ազատինք: Իջիր: Դու կորսուած ես:

— Ես կը մնամ:

— Դեռ տեղ մ'ալ կայ, — գոչեցին այն ժամանակ նաւաստիները, միւս ուղևորներուն դառնարով: — Կին մը:

Կին մը յառաջ եկաւ նաւապետին օգնութեամբ. բայց մակոյկին ունեցած հեռաւորութիւնը տեսնելով, սիրտ չըրաւ ցատկել, և դարձեալ նաւուն ծածքին վրայ ինկաւ: Միւս կիները գրեթէ ամէնքն ալ արգէն մարած և մահամերձ էին:

— Տղայ մը, — գոչեցին նաւաստիները:

Այդ ազազակէն, սիկիլիացի տղան և իր ընկերուհին, որ մինչև այն ժամանակ կարծես գերմարդկային սարսափով մը գրեթէ քարոյցած էին, կեանքի բուռն բնազդէն յանկարծակի արթննալով, այն կէտին միայն բաժնուեցան կայմէն և շոգենաւին եզերքը վազեցին, միաձայն ճչելով. — Զիս — և ջանալով զիրար ետ մղել՝ երկու վայրի գազաններու պէս:

— Ամենէն փոքրը, — պռուացին նաւաստիները: — Նաւակը սաստիկ ծանր է: Ամենէն փոքրը:

Այն խօսքը լսելուն պէս, աղջկան թևերը կայծակնահարի նման թօթափեցան, և անշարժ մնաց՝ մեռելական աչքերով Մարիոյին նայելով:

Մարիոյ ևս իրեն նայեցաւ վայրկեան մը, — անոր կուրծքին վրայի արեան հեռքը տեսաւ, — յիշեց, — երկնային դադափարի փայլակ մ'անցաւ իր դէմքի վրայէն:

— Ամենէն փոքրը, — գոչեցին նաւաստիները միասին, բուռն անհամբերութեամբ մը: — Մենք կը մեկնինք:

Եւ այն ժամանակ Մարիոյ, այնպիսի ձայնով մ'որ իրենը չէր այլ ևս, գոչեց. — Աղջիկն աւելի թեթև է: Դո՛ւ, ճիւղիէթթայի: Դու հայր ու մայր ունիս: Ես միայնակ եմ: Իմ տեղս քեզի կու տամ: Վար իջիր:

— Ծովը նեղ է զինք, — պռուացին նաւաստիները:

Մարիոյ բռնեց ճիւղիէթթայի մէջքէն ու ծովը ձգեց:

Աղջիկը ճիշ մ'արձակեց ու ջուրին մէջ ինկաւ. նաւաստի մը թևէն բռնեց ու վեր նաւակին մէջ քաշեց:

Տղան շոգենաւին եզերքը կանգուն կեցաւ, ճակատը բարձր բռնած, մազերը հովուն տուած, անշարժ, անդորր, վսեմ:

Մարիոյկը շարժեցաւ, և հազիւ ժամանակ ունեցաւ պրծելու՝ ընկզմող շոգենաւին առաջ բերած



Յոյս

ջրերու յորձանագոտոյտ շարժումէն, որ կը սպառ-  
նար զայն շրջել:

Այն ատեն ազլիկը, գրեթէ մինչև այն վայր-  
կեանը զգայազուրկ մնացած՝ աչքերը դէպ ի տղան  
վերցուց և սկսաւ կականաբարձ լալ:

— Մնաս բարեաւ, Մարիոյ, — գոչեց հեծ-  
կըլտուքով, ձեռքերը դէպ ի նա կարկառած: —  
Մնաս բարեաւ: Մնաս բարեաւ: Մնաս բարեաւ:

— Երթաս բարեաւ, — պատասխանեց տղան,  
ձեռքերը վեր բարձրացնելով:

Մակոյլին արագաբար կը հեռանար մրրկածուփ  
ծովուն վրայ, տխուր երկնքին տակ: Ոչ ոք այլ  
ևս կը պտտար շոգենաւին վրայ: Զուրն արդէն  
շոգենաւի ծածքին երեսները կը լզէր:

Յանկարծ տղան ծունկի եկաւ ձեռնամած և աչ-  
քերը դէպ ի երկինք:

Ազլիկն երեսը գոցեց:

Երբ գլուխը վեր առաւ, ականարկ մը շրջեցուց  
ծովուն վրայ, շոգենաւը չկար այլ ևս:





# Յ Ո Ւ Լ Ի Ս

## ՄՕՐՍ ՎԵՐՁԻՆ ԷՁԸ

1. Շարաթ



ՍՐԻՆ վերջացաւ ուրեմն, Հեկրիկո՛ւ. և գեղեցիկ է որ իբրև վերջին օրուան յիշատակ միտքոյ մնայ վսեմ տղուև պատկերը, որ իր բարեկամունչոյն համար կեանքը տրւաւ: Հիմա դու պիտի բամբուկս բուռնացիչներեղ ու ընկերներեղ, և ես տխուր լուր մը պիտի տամ քեզի: Բամբուկու միայն երեք ամիս պիտի չտես, այլ միշտ: Հայրոյ, իր պաշտօնին պատճառաւ թորիկոյն պիտի մեկնի և ամեկքս իրեն հետ պիտի կրթանք: Յառաջիկայ աշնան պիտի մեկնիք: Երբ դպրոց մը պիտի մտնես: Ասիկայ քեզի ցաւ կը պատճառէ, այն պէս չէ՞, վասն զի ապահով եմ որ հին դպրոցը կը սիրես, ուր չորս տարի, օրն երկու անգամ աշխատած ըլլալուդ վրայ ուրախացեր ես. ուր սյնչափ ժամանակ, այս ինչ որոշեալ ժամերուն տեսեր ես մի և եղև տղաքը, մի և եղև ուսուցիչները, եղև ծնողները, և բոլոր հայրոց կամ



Տարիմ վերջացաւ ուրեմն

մայրոց որ ժպտելով քեզի կը սպասէին. քո հին դպրոցոյ՝  
 ուր միտքդ բացուել է, ուր այնչափ բարի ընկերներ  
 գտեր ես, ուր ի՛նչ խօսք որ ըսեր ես՝ բոլոր քո բարոյոց  
 համար բռնած է, և տեսածորիչն մը չես ունեցած՝ որ  
 քեզի օգտակար եղած չլլայ: Միասին տար ուրեմն այս  
 սերը, և ի սրտե հրամեշտի ողջոյն մը տուր բոլոր այն  
 տղոց: Ունանք դժբաղդորիւններ պիտի ունենան, շոտով  
 պիտի կորսնցնեն հայր ու մայր, ուրիշներ ծաղկատի պի-  
 տի մեռնին, ունանք գոչք դիւցազնաբար իրենց արիւնը  
 պիտի հեղուկ պատերազմներու մէջ. շատեր քաջ և հա-  
 մետ գործաւորներ, իրենց պէս աշխատասեր ու համեստ  
 ընտանեաց հայրեր պիտի ըլլան. և ո՛վ գիտէ նոյն իսկ  
 քե քանի մը հատ ալ չլլան որ մեծամեծ ծառայորիւն-  
 ներ մատուցանեն իրենց հայրենիքի և իրենց անունները  
 փառաւորեն: Ուրեմն, խանդադրատակօք բաժնու՛՛ իրենցմէ.  
 քո հոգեւոյ մաս մը քո՛ղ այն մեծ ընտանեաց մէջ, յո-  
 յում մանուկ մտար, և ուսկից պատանի դուրս կու գաս,  
 և գոր քո հայրոց ու մայրոց այնչափ կը սիրեն՝ վասն զի  
 դո՛ւ մեզի ա՛յնչափ սիրելի եղար: Դպրոցը մայր մ՛ի: Մի-  
 ղելի՛ Հէնրիկոս, ես գրեց իմ գրիկս առաջ՝ կըր հագիւր կը  
 խօսէիր, և այժմ ինծի մեծցած, ուժեղ, բարի, ուսում-  
 նասեր կը յանձնէ. օրնեւա՛յ ըլլայ, և երբե՛ք ընտանս  
 զիկք, որդեակ: Ո՛հ, անկարելի է որ դո՛ւ զիկք մոռնաս:  
 Դո՛ւ յարբունս պիտի հասնիս, պիտի շրջիս աշխարհիս մէջ,  
 և մեծդի քաղաքներ և հրաշալի յուշարձաններ պիտի տես-  
 նես, և անոնցմէ շատերը պիտի մոռնաս. սակայն այն  
 համեստ սպիտակ շէնքը, այն փակ վանդակափեղկերով,  
 և այն փոքր պարտեզը, ուր առաջին անգամ քո մտքիդ  
 առաջին ծաղիկը բացուեցաւ, դո՛ւ զանկիւայ կեանքիդ միւնչե-  
 վերջին օրը պիտի տեսնես, ինչպէս ես պիտի տեսնեմ  
 այն տուր՝ յորում առաջին անգամ քո ձայնդ ըսցիս:

ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

4. Երեքշաբթի

Ահաւասիկ վերջապէս քննութիւնները: Դպրոցին շըր-  
 ջակայ ճամբաներուն մէջ տղոց, հայրերու, մայրերու,  
 նոյն իսկ աղախիններու բերնէն ուրիշ բան չլսուիր,  
 բայց միայն քննութիւններ, նիշեր, հրահանգներ, մի-  
 ջիններ, քննութիւնէ ինկած, յաջողած. ամէնը մի և  
 նոյն բառերը կ'ըսեն: Երէկ առտու շարադրութիւն ու-  
 նէինք, այս առտու թուարանութիւն: Սրտաշարժ էր  
 տեսնել բոլոր ծնողքներն՝ որոնք տղաքը դպրոց կը բե-  
 ըէին, ճամբուն մէջ վերջին խրատները տալով անոնց,  
 և շատ մայրեր՝ որոնք իրենց որդիքը մինչև գրասեղան-  
 ներուն առջև կ'առաջնորդէին, տեսնելու համար թէ  
 կաղամարին մէջ մեւան կ'ա՛ր, և գրիչը փորձելու հա-  
 մար, և դրան սեմին վրայէն դարձեալ ետև կը դառ-  
 նային ըսելու. — Չվախնա՛ս: Ուշադրութիւն ըրէ: Կը  
 յանձնարարեմ: — Մեր ընթերակայ ուսուցիչը Քօաթ-  
 թին էր, այն սև թաւամբուսը՝ որ առիւծի պէս կը  
 մոնչէ և բնաւ մէկը չպատժեր: Տղաքներ կային՝ որ  
 վախէն ճերմկած էին: Երբ ուսուցիչը Քաղաքապետու-  
 թեան նամակին կնիքը բացաւ, և խնդիրը դուրս հանեց,  
 ճիկ մը չէր լսուեր: Խնդիրը բարձրաձայն գրել տուաւ,  
 սոսկալի աչքով մը մերթ մէկուն մերթ միւսին նայե-  
 լով. բայց կը հասկցուէր՝ որ եթէ կարենար անոր լու-  
 ծումն ալ մեզի թելադրել, որ ամէնքս ալ յաջողէինք,



մեծ հաճոյք մ'ունեցած պիտի ըլլար: Ժամ մ'աշխատութենէ վերջ, շատեր սկսան տագնապիլ, վասն զի առաջարկութիւնը դժուարին էր: Մէկը կու լար: Քրօսսի իր զուլը բռունցքով կը հարուածէր: Շատեր իրենց չզիտնալուն մէջ բնաւ յանցանք չունին, խեղճ տղաքը, վասն զի շատ ժամանակ ունեցած չեն սովբելու, և ծնողքներէն երեսի վրայ թողուած են: Բայց նախախնամութիւնը կար: Պէտք էր Տէրօսսին տեսնել ինչ ջանքեր կ'ընէր անոնց օգնելու, ինչ ճարտարութիւն կը մրտածէր առանց տեսնուելու թիւ մը ուրիշի մ'անցընելու և գործողութիւն մը թելադրելու համար, և փութկոտ՝ ամենուն նկատմամբ, որ կարծես ինք էր մեր ուսուցիչը: Կարրօնէն ևս, որ թուարանութեան մէջ քաջ է, կրցած ընկերներուն կ'օգնէր, և նոյն իսկ Նօպիսին օգնեց, որ իր այն տագնապալից վիճակին մէջ՝ չափազանց ազնիւ էր: Սթարտին ժամէ մ'աւելի անշարժ կեցաւ, աչքերը խնդրոյն վրայ և բռունցքը բռունցքերուն դրած, և յետոյ բոլորը հինգ վայրկենի մէջ լուծեց: Ուսուցիչը գրասեղաններուն մէջտեղ կը շրջէր ըսելով. — Հանդարտ, հանդարտ: Խնդրեմ, մի՛ ալլայլիբ: — Եւ երբ մէկը վհատած կը տեսնէր, զայն զուարթացնելու և սիրտ տալու համար՝ առիւծի պէս լափելու նման բերանը լայն կը բանար: Տասնումէկին մօտերը, վանդակափեղկերէն վար նայելով, շատ ծնողքներ տեսայ, որ անհանգիստ՝ ճամբուն մէջ կը շրջագայէին. Փրէքօսսիի հայրը կար, իր կապտագոյն բաճկոնակով, անմիջապէս արուեստանոցէն դեռ նոր դուրս ելած, երեսը բոլոր սև: Քրօսսիի մայրը կար, բանջարավաճառ կինը. Նէլլիի մայրը, սև զգեստով, որ հանդարտ չէր կրնար կենալ: Կէս օրէն քիչ առաջ հայրս

հասաւ և դէպ ի իմ պատուհանս նայեցաւ. սիրելի՛ հայրս: Կէս օրին ամէնքս աւարտեր էինք: Տեսնելու բան էր մեր դուրս ելնելը: Ամէնքը տղաքը բռնած կը հարցնէին, տետրակները կը խառնէին՝ դասընկերաց աշխատութիւններուն հետ բաղդատելու համար: — Քանի՞ գործողութիւն: — Ինչ է ամբողջ գումարը: — Եւ բարձնումը: — Իսկ պատասխանը: — Եւ տասնորդականներու ստորակէտը: — Բոլոր ուսուցիչները՝ հոս ու հոն հարիւրաւոր կանչողներուն կը վազէին: Հայրս իսկոյն առաջին օրինակս ձեռքէս առաւ, նայեցաւ ու ըսաւ. — Շատ լաւ: — Մեր ըով Փրէքօսսի դարբինը կար, ինք ալ իր որդւոյն աշխատութիւնը կը նայէր, քիչ մ'անհանգիստ, և չէր հասկնար: Հօրս դարձաւ. — Կը հաճէ՞ր ամբողջական գումարն ըսելու: — Հայրս թիւը կարդաց: Անիկայ նայեցաւ. մի և նոյն էր: — Ապրի՛ս պզտիկս, — բացազանչեց ուրախութեամբ. և հայրս ու ինք անուշ ժպտով մը վայրկեան մ'իրարու նայեցան՝ իրը և երկու բարեկամներ. հայրս ձեռքը կարկառեց, զոր նա սեղմեց: Եւ բաժնուեցան ըսելով. — Բերանացիին: — Բերանացիին: Քանի մը քայլ առած, սուր ձայն մը լսեցինք որ զմեզ ստիպեց զուխնիս շրջելու. — դարբինն էր որ կ'երգէր:

## ՎԵՐՋԻՆ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

7. Ուրբաթ

Այս առտու մեր բերանացի ըննութիւններն սկսան։ Ժամն ութին ամէնքս դասարանի մէջ էինք, և ութը քառորդ անցած՝ սկսան զմեզ չորսական հոգի մեծ սեւեռակը կանչել, ուր կանաչ ծածկոցով մեծ սեղան մը կար և շուրջը բոլորած էին Տեսուչն ու չորս ուսուցիչներ, որոնց մէջ նաև մերը։ Ես առաջին կանչուողներէն մին եղայ։ Խեղճ ուսուցիչ։ Ինչպէս նշմարեցի այս առտու՝ թէ յիրաւի զմեզ շատ կը սիրէ։ Մինչդեռ միւսներն զմեզ կը հարցաքննէին, ինք աչքերը մեր վրայէն չէր բաժներ։ Կայլայլէր՝ երբ պատասխանելու կը տատամսէինք, կը զուարթանար՝ երբ լաւ պատասխան մը կու տայինք, ամէն բան կը լսէր, և ձեռքով ու զլիսով հազար ու մէկ նշաններ կ'ընէր ըսելու համար։ — Լաւ է, — ո՛չ, — ուշ դիւր, — աւելի կամաց, — քաջութիւն։ — Ամէն բան մեզի պիտի թելադրէր, եթէ կարենար խօսիլ։ Եթէ իրեն տեղ մի առ մի բոլոր տղոց հայրերն ու մայրերը գային, աւելի բան մը պիտի չկարենային ընել։ Կ'ուզէի իրեն տասն անգամ պողալ ամենուն ներկայութեան։ — Շնորհակալ եմ։ — Եւ երբ միւս վարժապետներն ինծի ըսին. — Շատ լաւ է. կրնաս երթալ, — ուրախութեանէն իր աչքերը կը փայլէին։ Ես իսկոյն դասարան վերադարձայ հօրս սպասելու համար։ Դեռ զրեթէ բոլորն ալ հոն



էին։ Ես կարրօնէի քով նստայ։ Բնաւ ուրախ չէի։ Կը մտածէի թէ վերջին անգամն էր, որ ժամ մ'իրարու քով կը նըստէինք։ Դեռ կարրօնէի իմացուցած չէի թէ այլ ևս չորրորդն իրեն հետ պիտի չկարենայի ընել, թէ հօրս հետ թորինոյէն պիտի մեկնէինք. ինք ընաւ տեղեկութիւն չունէր։ Եւ հոն իր խոշոր զուկսը զը-

րասեղանին վրայ ծռած կեցեր էր, իր հօր մեքենագործի զգեստով մէկ լուսանկարը զարդանկարելու զբաղած, որ բարձրահասակ, հաստամէջ և ցլավիզ մարդ մ'է, և իրեն պէս լուրջ ու համեստ դէմք մ'ունի։ Եւ մինչդեռ այսպէս ծռած կեցեր էր, քիչ մը կիսաբաց շապկով, իր մերկ ու զօրաւոր կուրծքին վրայ տեսայ այն փոքր ոսկի խաչը՝ զոր նէլլի մայրն իրեն պարգևեց, երբ իմացաւ թէ իր որդին կը պաշտպանէր։ Սակայն վերջապէս պէտք էի ըսել իրեն՝ թէ պիտի մեկնիմ։ Եւ ըսի. — Կարրօնէ, հայրս թորինոյէն պիտի մեկնի, ընդ միշտ։ — Նա հարցուց թէ ես ալ միասին կ'երթայի.

այո՛, պատասխանեցի իրեն: — Այլ ևս չորրորդը մեզի հետ պիտի չընե՞ս, — ըսաւ ինծի: Պատասխանեցի թէ ո՛չ: Եւ այն ատեն անիկայ քիչ մը լուռ կեցաւ, շարունակելով իր գծագրութիւնը: Յետոյ առանց գլուխը վեր առնելու հարցուց. — Արդեօք քու երրորդ շրջանի դասընկերներդ պիտի յիշե՞ս: — Այո՛, — ըսի իրեն, — ամէնքը. բայց ամենէն աւելի... զքեզ: Ո՞վ կրնայ զքեզ մոռնալ: — Դա ինծի նայեցաւ լուրջ և պիշ ակնարկով մը՝ որ հազար բան ըսել կ'ուզէր. և բան մը չըսաւ. միայն ձախ ձեռքն ինծի կարկառեց՝ միւսով նկարել կեղծելով, և ես իմիններու մէջ սեղմեցի այն հզօր ու անկեղծ ձեռքը: Այն վայրկենին ուսուցիչը շտապով ներս մտաւ կարմրած երեսով, և երազ, ցած և ուրախ ձայնով ըսաւ. — Ապրի՛ր, մինչև հիմա բոլոր լաւ գնաց, մնացողներն ալ թո՛ղ այսպէս շարունակեն. կեցցէ՛ք, տղաք: Քաջասիրտ եղի՛ր: Շատ զոհ եմ: — Եւ իր գոհութիւնը ցոյց տալու և զմեզ զուարճացնելու համար, աճապարանօք դուրս ելնելու ժամանակ, սահիլ ձևացուց, և չիյնալու համար պատը բռնեց. ինք, որուն խնդալը բնաւ տեսած չէինք: Այս մեզի այնչափ տարօրինակ երեցաւ, որ փոխանակ ծիծաղելու՝ ամէնքն ապշած մնացին. ամէնքը ժպտեցան, և ո՛չ որ ծիծաղեցաւ: Շատ լաւ, բայց չեմ գիտեր ինչո՞ւ, այդ մանկական կատակն ու զուարթութիւնը ցաւ և միանգամայն գորով պատճառեց ինծի: Այդ ուրախութեան վայրկեանը բոլոր իր մրցանակն էր. ինն ամսուան բարութեան, համբերութեան և կրած դառնութիւններուն վարձատրութիւնն էր: Ատոր համար այնչափ ատեն վաստակեր էր, և այնչափ անգամ հիւանդագին դաս ընելու եկած էր, խեղճ ուսուցիչը: Այն կը խնդրէր մեզմէ, և

ոչ ուրիշ բան, փոխարէն իր այնքան գութին ու գորովին: Եւ արդ ինծի կը թուի՝ թէ զինք միշտ այն ձևին մէջ պիտի տեսնեմ, երբ զինք յիշեմ, շատ տարիներով ևս. և մինչև չափահաս ըլլամ, նա պիտի ապրի դեռ, և պիտի հանդիպինք իրարու, պիտի ըսեմ իրեն թէ այն գործողութիւնն իմ սրտիս դպաւ. և իր սպիտակ գըլխուն վրայ համբոյր մը պիտի դրոշմեմ:

## ՄՆԱՍ ԲԱՐԵԱԻ

10. Երեքշաբթի

Ժամը մէկին, վերջին անգամ մ'ալ ամենքնիս դպրոց հաւաքուեցանք քննութիւններուն արդիւնքը լսելու և յաջողութեանց վկայագրերն ստանալու համար: Ճամբան ծնողքներով լեցուած էր, որոնք մինչև մեծ սենեակը զացած էին, և շատերը դասարանները մտած, մինչև ուսուցչին գրասեղանին քով մօտեցած էին. մեր դասարանին մէջ ալ պատէն մինչև գրասեղաններուն առաջին գծին միջոցը գրաւուած էր: Կարթօնէի հայրը կար, Տէրօսսիին մայրը, Փրէքօսսի դարբինը, Քօրէթթին, տիկին Նէլլի, բանջարավաճառուհին, փոքրիկ որմնաղբին հայրը, Սթարտիին հայրը, ուրիշ շատեր՝ զորս երբեք տեսած չէի. և ամէն կողմանէ շշնջիւն մը, բզզիւն մը կը լսուէր՝ որ կարծես հրապարակի մը մէջ կը գրտնուէինք: Ուսուցիչը ներս մտաւ, խոր լուութիւն մը տիրեց: Չեռքին մէջ ցուցակն ունէր և սկսաւ իսկոյն կար-

գալ: — Ապաթուշչի, յաջողած, վաթսուն վաթսնե-  
րորդ. Առքինի, յաջողած, յիսուն և հինգ եօթանաս-  
ներորդ: — Փոքրիկ որմնաղիրը յաջողած, Գրօսսի յա-  
ջողած: Յետոյ բարձրաձայն կարգաց. — Էրնէսթոյ  
Տէրօսսի, յաջողած, եօթանասուն եօթանասներորդ, և  
առաջին մրցանակ: — Բոլոր հոն եղող ծնողը որ զինք  
կը ճանչնային, ըսին. — Կեցցես, կեցցես, Տէրօսսի,  
— և նա իր խարտեաշ գանգուրներուն ցնցում մը  
տուաւ, ժիր և գեղեցիկ ժպտով՝ իր մօրը նայելով, որ  
ձեռքով զինք ողջունեց: Կարօֆֆի, Կարլօնէ, գալա-  
պրիացին, յաջողած: Յետոյ երեք կամ չորս հաս ետեէ  
ետե ըննութենէ ինկած, և մէկը սկսաւ լալ՝ վասն զի  
հայրը՝ որ դրան սեմին վրայ կեցեր էր՝ իրեն սպառ-  
նական նշան մ'ըրաւ: Բայց ուսուցիչն ըսաւ հօրը. —  
Ո՛չ, պարոն, կը ներես. միշտ յանցանք չէ, շատ ան-  
գամ անբաղդութիւն է: Ինչպէս է նաև այս պարա-  
գան: — Յետոյ կարգաց. — Նէլլի, յաջողած, վաթ-  
սուներկու եօթանասներորդ: — Մայրը հովանարով  
իրեն համրոյր մ'ուղարկեց: Սթարտի յաջողած, վաթ-  
սուն և եօթն եօթանասներորդով. բայց այս գեղեցիկ  
նիշը լսելով, ինք և ո՛չ իսկ ժպտեցաւ, և ձեռքերը  
ըունքերէն չբաժնեց: Վերջինը Վօթինին եղաւ, որ բո-  
լորովին սպրկիկ հագուած և սանտրուած եկեր էր.  
յաջողած: Վերջինը կարդալէ յետոյ, ուսուցիչն ոտքի  
ելաւ և ըսաւ. — Տղան, ասիկայ վերջին անգամն է  
որ համախմբուած ենք: Տարի մը միասին կեցանք, և  
հիմա իբր լաւ բարեկամներ զիրար կը թողունք, այն-  
պէս չէ: Կը ցաւիմ ձեզմէ բաժնուելուս վրայ, սիրելի  
որդեակը: — Լոց. յետոյ կրկին խօսք առաւ. — Եթէ  
երբեմն համբերութիւնս պակսեր է, եթէ երբեմն, ահա

մայ, անիրաւ գտնուեր եմ, չափազանց խիստ, ներու-  
ղամիտ եղէք ինծի: — Ո՛չ, ո՛չ, — ըսին ծնողը և  
շատ աշակերտներ, — ո՛չ, պարոն ուսուցիչ, եր-  
բէք: — Ներեցէք ինծի, — կրկնեց ուսուցիչը, — ու  
սիրեցէք զիս: Գալ տարի, այլ ևս ինծի հետ պիտի  
չըլլաք, բայց զձեզ նորէն պիտի տեսնեմ, և միշտ իմ  
սրտիս մէջ պիտի մնաք: Յտեսութիւն, տղանք: — Այս  
ըսելով մեր մէջը մտաւ, և ամէնքն իրեն ձեռք տուին,  
գրասեղաններուն վրայ ելնելով, իր թևերէն ու զգեստի  
ըղանցքէն բռնեցին. շատերը գայն համբուրեցին. յի-  
սուն ձայն միարեբան գոչեցին. — Յտեսութիւն, ու-  
սուցիչ: — Ծնորհալուութիւն, պարոն ուսուցիչ: —  
Առողջութիւն կը մաղթենք: — Յիշեցէք զմեզ: — Երբ  
դուրս ելաւ, յուզումէն ընկճուած կը տեսնուէր: Ամէնքս  
խառն ի խուռն դուրս ելանք: Նոյնպէս բոլոր միւս գա-  
սարաններէն դուրս կը թափէին: Իրարանցում մ'էր,  
տղոց ու ծնողաց մեծ աղմուկ մը՝ որ ուսուցիչներուն և  
վարժուհիներուն բարի երթ կը մաղթէին և զիրար կ'ող-  
ջունէին: Կարմրափետուր վարժուհին, չորս, հինգ հատ  
կոնակն ունէր և քսանի չափ շուրջը, որ իր շունչը  
բերանը կը բերէին. և «մարապետիկ» ին զլխարկը կէս  
մը փետտած էին, և երկվեցեակ մը ծաղկէ փունջեր՝  
կոճակներուն, սև զգեստին և գրպաններուն մէջ խոթած  
էին: Ծատերը Ռօպէթթի ուրախակցութիւն կը յայտ-  
նէին, որ ճիշտ նոյն օրն առաջին անգամ անթացու-  
պիւրը թողած էր: Ամէն կողմանէ կը լսուէր որ կ'ը-  
սէին: — Նոր տարեշրջանին: — Հոկտեմբերի քսա-  
նին, — Յտեսութիւն Ամենայն Սրբոց տօնին: — Մենք  
ալ զիրար ողջունեցինք: Ո՛հ, ինչպէս այն վայրկենին  
կը մոոցուին բոլոր գժտութիւնները: Վօթինին որ միշտ

աստիկ նախանձորդ եղեր էր Տէրօսիին, առաջինն եղաւ որ թեւարաց ողջագուրեց զինք: Ես փոքրիկ որ- մնաղիւրն ողջունեցի և զինք համբուրեցի ճիշտ այն վայրկենին՝ յորում իր վերջին ընչապատուկը կ'ընէր ին- ծի, սիրուն տղայ: Փրէքօսսին ողջունեցի, Կարօֆֆին ողջունեցի, որ աւետեց ինձի իր վերջին վիճակահանու- թեան մէջ շահիւս, և մէկ անկիւնը կոտրած փոքր գու- նաւոր ապակեայ ծանրոց մը տուաւ ինձի. մնաք բա- րեաւ ըսի միւս ամենուն: Տեսնելու բան էր ինչպէս խեղճ Նէլլին փաթթուեցաւ Կարրօնէին, որ չէին կրնար այլ ևս զայն բաժնել: Ամէնը Կարրօնէի շուրջը հաւա- քուեցան, և երթաւ բարեաւ Կարրօնէ՛, երթաւ բարեաւ, ցտեսութիւն, և իրեն կը դպչէին, կը սեղմէին, այն քաջ ու սուրբ տղուն վրայ կ'ուրախանային. և իր հայրը կար, բոլորովին զարմացած, որ կը նայէր ու կը ժպտ- տէր: Կարրօնէն վերջինն եղաւ, զոր ճամբուն մէջ զըր- կեցի, և հեծկտուք մը խղզեցի անոր կուրծքին վրայ, նա իմ ճակատս համբուրեց: Յետոյ հօրս ու մօրս քով վազեցի: Հայրս ինձի հարցուց. — Բոլոր ընկերներդ բարեցի՞ր անշուշտ: — Այո՛, ըսի: — Եթէ ո՛ր և է մէկը վշտացուցեր ես, զնա՛ ըսելու որ քեզի ներէ ու մոռնայ: Կա՛յ մէկը: — Ո՛չ որ, — պատասխանեցի: — Եւ այն ժամանակ մնաս բարեաւ, — ըսաւ հայրս, յու- զուած ձայնով, վերջին ակնարկ մ'եւ տալով դպրոցին: Եւ մայրս կրկնեց. — մնաս բարեաւ: — Իսկ ես չկըր- ցայ բան մ'ըսել:

Վ Ե Ր Զ



# Յ Ա Ն Կ

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

Գպրոցի առաջին օրը . . . . .	8
Մեր ուսուցիչը . . . . .	9
Դժբաղդութիւն մը . . . . .	12
Գաւազրիացի տղան . . . . .	15
Գասընկերներս . . . . .	17
Ազնուական վարժուէր մը . . . . .	20
Մանկապարտիզի վարժուէիս . . . . .	22
Զեղունի մը մէջ . . . . .	25
Գպրոցը . . . . .	27
ՓՍՏՈՒԱՅԻ ՓՈՒՔՐԻԿ ՀԱՅՐԵՆԱ- ՍԷՐԸ . . . . .	30
Ծրան մաքրողը . . . . .	32
Մեռելոց օրը . . . . .	36

## ՆՈՅՏԵՄԲԵՐ

Կարրօնէ բարեկամս . . . . .	42
Աձխավաճառն ու հարուստ պա- րոնը . . . . .	44
Եղբորս վարժուէին . . . . .	47
Մայրս . . . . .	49
Քորէթթի գասընկերս . . . . .	51
Տեսուչը . . . . .	56
Զինուորները . . . . .	59
Նէլլիի պաշտպանը . . . . .	61
Գոսին առաջինը . . . . .	64
ԼՍՄՊԱՐՏԱՅԻ ՓՈՒՔՐԻԿ ՊԵՏԸ . . . . .	67
Աղբատերը . . . . .	75

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

Առուտոր ընողը . . . . .	78
Մնապարձութիւն . . . . .	81
Փռալին միւսը . . . . .	84
Փոքրիկ որմնաղբը . . . . .	86
Զինագնդակ մը . . . . .	88

Վարժուէիները . . . . .	88
Վերաւորեալին տունը . . . . .	91
ՓԼՈՐԵՆՏԱՅԻ ՓՈՒՔՐԻԿ ԳՐԱԴԱՐԱՐԸ . . . . .	96
Կամքը . . . . .	108
Երախտագիտութիւն . . . . .	110

## ՅՈՒՆՈՒՍԱՐ

Փոխ - ուսուցիչը . . . . .	113
Սթարտիի զրատունը . . . . .	116
Գարբիին որդին . . . . .	118
Գեղեցիկ այցելութիւն մը . . . . .	120
Վիթթօրիոյ էմմանուէլէի յու- զարկաւորութեան հանդէսը . . . . .	123
Ֆրանթի դպրոցէն արտաքու- րէն . . . . .	125
ՍԱՐՏԵՆԱՅԻ ԹՄԲԱՀԱՆՈՐԸ . . . . .	128
Հայրենիքի սերը . . . . .	140
Նախանձ . . . . .	142
Ֆրանթիի մայրը . . . . .	144
Յոյս . . . . .	147

## ՓԵՏՐՈՒՍԱՐ

Լաւ տրուած շքադրամ մը . . . . .	151
Բարի առաջագրութիւններ . . . . .	155
Փոքրիկ շոգեշարժը . . . . .	157
Հպարտութիւն . . . . .	160
Աշխատութեան զոհերը . . . . .	162
Բանտարկեալը . . . . .	164
ԹԱԹԱՅԻՆ ՀԻՒԱՆԳԱՊԱՀԸ . . . . .	170
Արուստանոցը . . . . .	182
Փոքրիկ հայկուր . . . . .	185
Բարեկենդանի վերջին օրը . . . . .	190
Կոյր տղաքը . . . . .	193
Հիւանդ ուսուցիչը . . . . .	203
Ճանապարհը . . . . .	205

**ՄԱՐՏ**

	Էջ
Գիշերային զարոյցները . . .	209
Կտիւր . . . . .	214
Տղայ ծնողքը . . . . .	216
78 թիւը . . . . .	218
Փոքրիկ մեռեալ մը . . . . .	221
Մարտ 14ին նախօրեակը . . .	224
Մրցանակներու բաշխումը . . .	226
Վէճը . . . . .	233
Բոյրս . . . . .	235
ՌՕՄԱՆԵՍՅԻ ԱՐԻՆ . . . . .	239
Փոքրիկ օրմնագիրը՝ օրհասա- կան . . . . .	250
Քառորդ կումը . . . . .	253

**ԱՊՐԻԼ**

Գարուն . . . . .	256
Ումպերթոյ թագաւորը . . . . .	259
Մանկանց պատապարանը . . .	265
Դէպ ի մարմնամարդ . . . . .	272
Հօրս ուսուցիչը . . . . .	276
Ապաքինում . . . . .	289
Բարեկամ զործաշորները . . . .	292
Կարրօնէի մայրը . . . . .	295
Յովսէփ Մածձինի . . . . .	298
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՐՃԱՆԻՔ . . . . .	301

**ՄԱՅԻՍ**


	Էջ
Ողնաթիւր մանուկները . . . . .	309
Չըհողութիւն . . . . .	312
Հրդեհը . . . . .	315
ԱՊԵՆԻՆԵԱՆՆԵՐԷՆ ՄԻՆ ԶԵՒ ԱՆԳԵԱՆՆԵՐԸ . . . . .	320
Ամսոն . . . . .	369
Բանաստեղծութիւն . . . . .	371
Խուլ ու համր աղջիկը . . . . .	373

**ՅՈՒՆԻՍ**

Կարիպուտի . . . . .	384
Բանակը . . . . .	386
Իտալիա . . . . .	389
32 աստիճան . . . . .	392
Հարս . . . . .	394
Գիւղային պտոյտ մը . . . . .	397
Գործաւորաց մրցանակարաշ- խութիւնը . . . . .	403
Վարժաւիտ մեռած . . . . .	407
Շնորհակալութիւն . . . . .	411
ՆԱԻՍԲԵԿՈՒԹԻՒՆ . . . . .	413

**ՅՈՒԼԻՍ**

Մօրս վերջին էջը . . . . .	424
Քննութիւնները . . . . .	427
Վերջին քննութիւնը . . . . .	430
Մնաս բարեաւ . . . . .	433



767

1973000

2013

ԳԲ Ազգային գրադարան



NL0004761



